

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XI  
2008

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Գ յ ու մ ք ի 2008

ԴՏՀ 008+902 / 904+800  
ԳՄՂ 71+63. 4+80  
Գ 602

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:**

**Խմբագրական խորհուրդ**

Արամ Բալանթարյան, Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղդիկյան, Արամ Բոսյան,  
Սարգիս Հարությունյան, Սարգիս Պետրոսյան, Լարիսա Եզանյան,  
Համազասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան, Կարինե Բազեյան,  
Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

**Խմբագրությամբ բան. գիտ. դոկտոր  
պրոֆեսոր Մերգո Հայրապետյանի**

Գ - 602 Գիտական աշխատություններ, 11  
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,  
2008, 198 էջ:

Գ  $\frac{4400000000}{703 (02) - 2008}$  2008

ԳՄՂ 71+ 63,4+80

ISBN 5- 8080 - 0504 - 3

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2009

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

XI

EDITION

# RESEARCH PAPERS

Shirak Centre of Armenian Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

---

ԴՅՄՐԻ 2008 GYUMRI

Публикуется по решению Ученого совета  
Ширакского центра арменоведческих исследований НАН РА.

Редакционная коллегия:

Саргис Арутюнян, Арам Калантарян, Ашот Мелконян, Хачик Бадикян, Арам  
Косян, Саргис Петросян, Лариса Еганян, Амазасп Хачатрян, Армен Айрапетян,  
Карине Базеян, Карине Саакян, Асмик Арутюнян

Под редакцией доктора фил. наук,  
профессора Серго Айрапетяна

Published by arrangement of the Scientific Council  
of Shirak's Research Centre NAS RA.

Editing stuff:

Sargis Harutunyan, Aram Qalantaryan, Ashot Melkonyan, Khachik Badikyan,  
Aram Qosyan, Sargis Petrosyan, Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen  
Hairapetyan, Karine Bazeyan, Karine Sahakyan, Asmik Harutunyan

Edited by Doctor of Philology, professor Sergo Hayrapetyan

*Հարուրդը նվիրվում է 1988-ի երկրաշարժի  
հազարավոր անենեղ պոետների երչարակիև*

**Յոթնագմբեթ քաղաք, դու դեմք ես,**

**որը հնարավոր չէ փոխել որևէ ներկով ու դիմածեփով:**

**Դու քո բնակիչների ինքնագիտակցությունն ես,**

**ավելի ճիշտ, դու քո ժողովուրդն ես...**

**Ինչից էլ սկսենք, միևնույնն է, մեր խելքամաղը քեզնից է սկսվում...**

**Քեզ հետ, քո ներսում ինքնախորացման փտանգն ընտրյալ լինելու գին է:**

**Դու ուժեղի ընտրությունն ես:**

**Քո պատկերով արժե ոսկեդրամ կտրել:**

**Եղավ, որ տարերքը քեզ իր ծոցն առավ.**

**դու ճայնակցեցիր ավեր Անիին, բայց չասացիր գուլումի խոսքեր.**

**-Ես քաղաք եմ, բնակիչ եմ փնտրում:**

**Որովհետև քո որդիները երբեք չհեռացան`**

**բախտիդ անիվը տարաշխարհում պտտեցնելու...**

**Դու կոլորիտ ես: Քո անունն ավանդույթ է, ժառանգություն, վստահություն**

**նրանց համար, ովքեր սիրում են քեզ, ովքեր կորցրել են, բայց վերադառնում են**

**դեպի քեզ, որովհետև ի սկզբանե դու ես, քաղաք...**

**Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ,  
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ԽԱՉԸ՝ ԹԻԿՈՒՆՔԻՍ, ՅՈԹՎԵՐՔԸ՝ ՍՐՏԻՍ**

Շիրակի, մասնավորապես Գյումրու բանահյուսության յուրաքանչյուր նմուշ ժողովրդական բանավոր ստեղծագործության ինքնատիպ վերարտադրություն է:

Անդրադառնալով Գյումրի քաղաքի բանահյուսական պատկերի ընդհանուր ուրվագծմանը՝ մեր նպատակն է ժողովրդի իմաստությունը վերստին դարձնելու ժողովրդին. այն, ինչ խտացել ու բյուրեղացել է մեծ ժամանակի մեջ՝ իբրև նրա աշխարհատեսության և կենսափորձի անգիր գրականություն: Տարիների ընթացքում գրառել ենք բազմաժանր նյութ, որը կներկայացնի այս էթնիկական շրջանի բանահյուսական հանգամանակի պատկերը՝ բանասացների կենսագրական տվյալներով, ծանոթագրություններով և այլն: Նման հետազոտության անհրաժեշտությունը կլրացնի այն բացը, որ առկա է Աղեքսանդր Մխիթարյանի\* «Փշրանք Շիրակի ամբարներից» աշխատության և Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» ժողովածուի տպագրությունից հետո:

«Մտալը՝ քիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս» իմաստությամբ ապրող ժողովրդի համար Գյումրու բանահյուսության ամեն մի նմուշ, շնորհիվ եզակիության ու ինքնատիպության, բառ ու բանի մասնատուփն ամբողջացնող արժեք է: Բաց նյարդերով ապրող ու զգայող այս ժողովրդի խոսքն ըստ իրադրության բանաձևային է, պատկերավոր ու դիպուկ, «սրտի գդալին խփող»:

Գյումրու բանահյուսության դրոշմը բացատրվում է այն կրողների երգատեսելության ու ասերգելու շնորհով: Մինչև իսկ վշտի ու կորստի հոգեպարագայում գյումրեցին վիպերգեց իր ապրածն ու տեսածը, շարունակական վերապատմումների մեջ խոնարհված քաղաքը նորից կերտեց՝ արթնացնելով իր մեջ հարալեզին: Վիրավոր հարսնացու քաղաքի համար «ղեղ ու դարման» դարձրեց իր բանահյուսությունը:

Ազգագրական նյութերին անդրադարձել ենք այնքանով, որքանով դրանք միջավայր են բանահյուսական նյութի ներկայացման համար՝ պատկերի և ֆոնի հարերությամբ:

\* Շիրակի բանասիրության պատմության մեջ իր որոշակի տեղն ունի բանահավաք-բանասեր Աղեքսանդր Մխիթարյանը, որը շուրջ կես դար հավաքել ու գրի է առել Շիրակի ու Վանանդի ժողովրդական բանավոր ստեղծագործություններ՝ հեքիաթներ, առակներ, առածներ, ավանդություններ, երգեր ու պարերգեր: Այս ամենն ամփոփված է «Տաղեր ու խաղեր» և «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուների մեջ:

«Տաղեր ու խաղերը» (յուս է տեսել 1900թ. Ալեքսանդրապոլում՝ Գևորգ Սանոյանի տպարանում) նախնական տարբերակով կոչվել է «Հարուստ ժողովածու կրոնական տաղերի, այլ և այլ բանահյուսությանց, ժողովրդական երգերի և պարերգերի» (չորս մասով):

Հետագայում ժողովածուի 1-ին և 2-րդ բաժինները հանվել են, քանի որ գործերից շատերի հեղինակները հայտնի, անհատ ստեղծագործողներ էին. 2-րդ մասում մնացել են միայն մի քանի ժողովրդական երգեր, ինչպես «Կռունկ», «Քաջ Արարոյի երգը» և այլն: 3-րդ և 4-րդ մասերն ամբողջությամբ և անփոփոխ տեղ են գտել հիշյալ հատորի մեջ՝ «Ժողովրդական երգեր և հայկական պարերգեր» վերնագրով:

«Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուն կազմում է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ների 1-ին հատորը (յուս է տեսել 1901թ. Լազարյան ճեմարանի գիտական խորհրդի որոշմամբ, խմբագրել է Գրիգոր Խալաթյանը): Գրքի մի մասը (շապիկը, տիտղոսաթերթը, խմբագրության առաջաբանը՝ ռուսերեն և հայերեն, նյութերի ցանկը) տպագրվել է Մոսկվայում՝ Վ. Գատցուկի տպարանում, իսկ մյուս մասը (1-333 էջ)՝ Ալեքսանդրապոլում՝ Գ. Սանոյանի տպարանում: Այս ժողովածուն հրատարակվել է նույնությամբ՝ համեմատվելով ձեռագրերի հետ, ուղղումներով և լրացումներով: Առաջին մասի «Հեքիաթներ» բաժնում գետնելված են Աղ. Մխիթարյանի գրառած երկու հեքիաթները միայն՝ «Ռանչպարի տղան» և «Բախտավոր տղա»: Մնացած չորս հեքիաթները, որ գրի է առել Ալեքսանդրապոլցի Ալ. Ափիկյանը, գետնելվել են «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի չորրորդ հատորում (ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1963):

Ավանդական գյումրեցու տան պատուհանները խլափեղկով են, դարպասները՝ կռչնակ-չաքուջակով, երկաթե միզով: Տունը նրա ներքին տիեզերքն է, որն սկսվում է շեմի պաշտամունքով: Ներսի ու դրսի աշխարհների կապը պայմանական է: Դուրսն ավելի ներս է, դուրսը քաղաքն է՝ կյանքի զարկերակով, որն այնքա՛ն պինդ բռնել է գյումրեցին... Մեփական կյանքը թամաշա դարձնող ամեն մեկը կարծում է՝ քաղաքն սկսվում է իրենից, սրտի բարախագրով ապրող ու դիմակայող քաղաքը, որն, անշուշտ, իր ստեղծած հոգևոր և նյութական աշխարհներով պահում է էթնոսի հպարտության նշանոցը:

Ինչպե՞ս հասկանալ Գյումրու կերպարային տիեզերքը, ինչպե՞ս թափանցել նրա՝ սև ու վարդագույն տուֆե պատերից ներս, այն պատերի, որտեղ քարերն իրար դեմ *ենպես կուգան, որ կթվա՝ իրար կսիրեն...*

Գուցե նախասահմանության հրաշքն այստեղ է՝ որպես հիշողության դարձ՝ Յոխուշից՝ դարից, դեպի Յոթվերք եկեղեցի բերվող մատաղացու գառան և կենաց ծառի պատկերով՝ կարմիր ժապավեններով ու շողակն քարերով զարդարում:

Ծառ ծաղկեցավ, ծառ կայնեցավ

Կանաչ ու կարմիր,

Ծառ ծաղկեցավ, ծառ կայնեցավ,

Մուրք պսակին արժանացավ:

«Կարմիր բինիշով ու կանաչ արևով թագվորի» համար առատության եղջյուրից թափվում են շնորհավորանքները.

Ասենք շնորհավոր, մեր թագվորի շորերը շնորհավոր,

Կտորը Պարսկաստանից բերած է,

Ասենք շնորհավոր, ասենք շնորհավոր,

Ֆանտազի Արտաշի ձևածն է,

Պարտմո Մեխակի կարածն է,

Ղանավուզը վրեն քաշած է,

Ասենք շնորհավոր, մեր թագվորի շորերը շնորհավոր:

Իսկ երբ հարսանիքի թունդը բռնում է ամբողջ քաղաքը, ասես հազարան հավքի թևերով ծեսը, սովորույթը, ավանդույթն իրենց շուրջն են հավաքում ժողովրդին թաղեթաղ, մայից մայլա (Չորի մայից Բոշոց մայլա, Ումնոց, Թուրքի թաղ, Սլաբողկա, Ժամի մայլա և այլուր): Նորափեսայի հայրը այլախոսիկ տեքստով ազդարարում է.

*Ես խմել եմ, գառ եմ առել,*

*Գառս տվել, ձագ եմ առել.*

*Մոռտուրս շնորհավոր:*

Փեսամայրը հարսին նվիրում է «մաղադանոս» բիլագով՝ բարեմաղթանքի խոսքեր հղելով նորապսակներին,

*Ոտքերիդ տակին թող վարդեր բացվին,*

*Չորս կողմդ՝ մանուշակ,*

*Բարով հասնիք ձեր մուրազին,*

*Բարով տեսնիմ թագ-պսակ:*

Ի թիվս շատ բարեմաղթանքների լավում էին.

- Մե բարձի ծերանաք, ծիլք, ծաղկիք, փրփնջոտիք:

- Ջուխտ ծաղիկ մնաք, ջուխտ ապրիք:

- Հողդ ու ջուրդ պտղի:

- Նուռ ու ջուր լցվի գլխներիդ:

- Տուտու դուշը իջնի թևերիդ:

- Թագդ ջուխտ ձեռքով պահե Աստված:

Անհմար է պատկերացնել գյումրեցու հարսանիքն առանց թավորի, որին պատվում էին երկու արծաթե փոքրիկ ըմպանակներով՝ *ռյումկաներով*՝ վրան դրոշմված նախնական պարզությամբ մի ծաղիկ, քանի որ թավորի դերակատարությունը երկու ծաղիկների միացումն էր: Չկար մի տուն, որի տանտերը եթե թավոր է եղել, հարգանիշ – ըմպանակ չունենար: Քավորը տոհմական էր: Հարս ու փեսային այդ օրը տալիս էին գուրբիա՝ ընկույզով ու մեղրով շաղախված՝ ի նշան հետագա կյանքի քաղցրության (ցախօր էր գործում է *գուրբիա չղատավ* արտահայտությունը): Հարսանիքի հաջորդ օրը հարսին հագցնում էին բենգալյան՝ կարմիր կտորից շոր, թավորը նորապսակների

ձեռքն էր տալիս ոսկեգօծ զույգ կերոն, որը պետք է վառվեր մեկ էլ առաջնեկի ծնունդին: Պարուն էին «Առավոտ լուստ»-ի հնչյունների տակ՝ դանդաղ ու հանդիսավոր: Պարին մասնակցում էին բացառապես բախտավոր զույգերը:

Հարսանիքի գլխավոր բաղադրատարրը վենգելն էր. կանվայի վրա նարտի գույներով ասեղնագործությամբ միմյանց էին ազուցվում երիտասարդ ամուլի՝ հարսի ու փեսայի անվան սկզբնատառերը: Վենգելը՝ իբրև ամուսնության խորհրդի նշան- վավերագիր, ցկյանս պիտի կախվեր նրանց առագաստի սենյակում՝ սնարի վերևում:

Գլուխը հայտնի էին Վեքիլովների, Կոստանովների, Տեր-Մարտիրոսովների, Զիթողյոնց բաղնիքները, իսկ Գևորգի բաղնիքը հարսնբաղնիք էր՝ կենդանի հերթով, մեջը սալաքար (սեղանքար) կար, որի վրա բաղնիքից դուրս գալիս հաց էին ուտում. կենտրոնում Միմնի ֆոյի բերած կարմրացրած գառն էր՝ կանաչը բերանին՝ զարդարված խնձորներով ու մոմերով: Մինչև այսօր էլ հարսի օժիտի պարտադիր բաղադրամաս է բաղնոց բոխչեն: Ընդհանուր (օպչի) բաղնիքում հատուկ փակ տեղ կար՝ հուջուրա կոչվող, որտեղ լողանում էր նորահարսը՝ հագին սպիտակ բատիստե շապիկ, սրտանոցը՝ ասեղնագործած բուսանախշերով՝ իբրև չարի մուտքն արգելող և բեղմնավորումն ապահովող պահպանակ: Մնացած բոլոր կանայք *փեշտըմպներով* ու սպիտակ *չեպչիկներով* էին: Լողանալուց հետո ուղեկից կանայք հարսին դուրս էին բերում հուջուրայից և պղծե եղակներն իրար խփելով՝ երգում էին՝ «Բացվիր, նազելիս»:

Առաջնեկի ծնունդից հետո՝ կնուների ժամանակ, եկեղեցում սանամայրը քավորի թևերին փռում էր խաչածև բուսանախշերով տղաբերքի ու կնուների նշանակ մետաքսյա սրբիչ, որի երկու ծայրերին էգ ու արու թռչնի պատկերներ էին: Սրբիչի վրա դնում էին նորածնին՝ ասելով. «Կանաչ մեռնը օգնական պահապան լինի», «Քաղցր մնա քավորը», «Մուրը մեռնը բարեխոս լինի»: Քավորը սանիկին պետք է խաչ նվիրեր, շապիկներ, սանամորը՝ մատանի, սինիների մեջ փախլավա, շաքարլոխումի, սահանչորակի:

Իսկ ուլբե՞ր էին քաղաքի տատմերերը. Դայեկ Նոյեմը, Հեղնարը, ինչպես նաև մանկատանություն արվեստի մեջ հայտնի Ջնգոն: Նրա անվանն են առնչվում մինչև այսօր էլ քաղաքում կենցաղավարող *Ջնգոյի վարտիք* արտահայտությունը, նաև անգիր, քողարեծ մի պատմություն, որը շատ տարբերակներով է հայտնի: Վկայաբերենք ամենատպալվորիչը. Ավդալենց Թաթոսի կինը Ջնգոյի թեթև ձեռամբ ցանկանում է ընդհատել հղիությունը: Իբրև շնորհակալագին՝ Ջնգոյին է նվիրում կապույտ քարով իր նշանի մատանին: Վերջինս էլ այդ մատանին տալիս է իր սիրելեկին: Մի օր հայտնի դայֆախսաններից մեկում Ավդալենց Թաթոսը կնոջ մատանին նկատում է ուրիշ տղամարդու մատին, «թասիքին կեր չէնող» գլուխեցին անխոս դուրս է գալիս, գնում է տուն և առանց բացատրություն պահանջելու կնոջը սպանում: Որոշ ժամանակ անց՝ Թաթոսը ճշտում է իրողության մանրամասները. մեղքից թմրում է և անձնասպան լինում (ի դեպ, Պեչնիկ Ավդալենց Թաթոսի՝ որպես օջախի պատվախնդրություն մարմնացնողի յուզաներկ կտավն այսօր էլ պահվում է Կումայրի արգելոց-թանգարանի ֆոնդերում):

Քաղաքի բոլոր լուրջ խոսակցությունները տեղի էին ունենում միկիտաններում և դայֆախսաններում, որոնք սոսկ հանդիպավայրեր չէին: Կանանց շուրթերի ցերեկվա խոսակցությունը պտտվելով երեկոյան տեղափոխվում և վավերացվում էր այստեղ՝ տղամարդկանց շրջանում: Այսպես՝ քաղաքում խիստ հարգի Տիրատուրենց Մարգարի դայֆախսանում, որտեղ հավաքվում էին *առաջին գիլդի* տղամարդիկ, Միրուն Մեթոն խոստանում է իր աղջկան կնության տալ ինչ-որ մեկին, որոշվում է մինչև իսկ նշանադիր օրը, բայց աղջիկը չի համաձայնվում: Հաջորդ օրը Մեթոն գալիս է դայֆախսան, գլխարկը հանում, դնում է հատակին և ասում՝ թո՛ւք վրայից:

Մովորության կենցաղում գլխարկ զցելը համագոր էր պատվազուրկ լինելուն, բայց Գլուխը պարադոքսների քաղաք է, նաև նորակերպությունների, գլուխեցին՝ որքան պատվախնդիր, այնքան՝ առաջադեմ:

Քաղաքն ամեն օր արթնանում էր մի նոր մտախփով: Ու մի օր էլ քաղաքի լոթի-փոթիների, դարաչուլսայի տղերքի մեջ հայտնի Իզրիտով Արշալույսի խանչալի քարն ընկավ. Մարալենց տղերքը, Բուխարաջոնց Համբոն ու Ջանգուկենց Մեթոն փախցրին Արշալույսի քրոջ աղջկան, մորը հրեցին զցեցին ձյունների մեջ ու տարան սիրուն Մայային: Այս առիթով էլ քաղաքը չուշացրեց իր երգը. Դաֆչի Թաթոսը խփում էր դափը ու սազանդարների հետ երգում.

*Ես Թաթուն եմ Մուրադենցեն,  
Աղջիկ ուզի Փլավենցեն,  
Պատգամ դրկի Ջամուշենցեն,  
Տարա՛ն Մայայիս, տարա՛ն:\**

Իսկ ովքե՞ր էին քաղաքի երևելիները, ո՞րն էր նրանց ֆանտազմն այս աշխարհում, հասցեատե՞ր էին այս մարդիկ՝ Չիթողյանները, Ծաղիկյանները, Տեր-Ավագենք, Քյանդարովեք, Խոյեցոնք, Քեշիշյանները, Դրամփյանները, Մանոյանները, Կարայանները, Սեյլանովները, էլի՛ բոլորը: Որքա՛ն պատվական տոհմածառեր՝ հրաշալի արարմունքներով ու պտուղներով: Պատմում են՝ ինչպես մեծահարուստ Պետրոս Չիթողյանն առավոտյան շրջում էր քաղաքի շուկաներում՝ վերի ու վարի չարսուններում՝ ձգտելով ի մոտո ծանոթանալ բնակիչների կացությանն ու ապրելակերպի հոգեբանությանը: Ծուկան նրա համար կյանքի ուսումնասիրության յուրօրինակ կենտրոն էր: Հաջորդ օրն աննպաստ վիճակում գտնվող գյումրեցիները վայելում էին նրա ուղարկած բարիքները՝ օրհնելով անանուն բարերարին:

Գեղեցիկ արարմունքներով հռչակված այս մարդն ուներ նույնքան գեղեցիկ մի դուստր: Նա միակն էր քաղաքում, որի *ճակտնոցը* զարդարված էր ադամանդե քարով, բախտի ցոլուն քարով, որը հավելում էր աղջկա գեղն ու հմայքը: Մոֆիկին երազող-սիրասածողները շատ էին և նրա գեղեցկությանը վայել երգեր էին հյուսում, անհնարինի սահմանը հատող երգեր.

- Օլոր-մոլոր ծուռ ճամփեքով ման եկա,  
Քո նշանի տեղը իսկը ես գտա.  
Լայ-լայ, Մոֆիկ, լայ-լայ,  
Լայ-լայ, սիրուն, լայ-լայ:  
Աչքով էրի, դուրս կանչեցի Մոֆիկիս,  
Թուշը պագի, տուն ճամփեցի Մոֆիկիս,  
Լայ-լայ, Մոֆիկ, լայ-լայ,  
Լայ-լայ, սիրուն, լայ-լայ...

Ահա և *Ներսի ու զրսի* անուն ունեցող տղերքը՝ Պոլոզ Մուկուչն ու Ծիարո Ալեքը (հայտնի զվարճախոս-կատակաբաններ. Պոլոզ Մուկուչին մի առիթով հարցնում են՝ ընչի՞ բոլոր գյումրեցիները էրկու անուն ունեն, կպատասխանե՞ մենք բացի մարդու դուրսը նայելուց, ներսն էլ կնայենք), Արդար Մանուկը, որն իր մականունն ստացել էր Ամենափրկիչ եկեղեցու խաչն ի գագաթ հանելու համար, Գյուման Կարոն (հույս էր բոլորի համար), Չանգի Խաչոն (Ալեքսանդրովսկու անկյունում խանութ ուներ), Յառի Մարգարը, Կախեթի Մուկուչը (զինու *սկյառ* ուներ), Այհայը՝ Խաչատուրը (սարթ մարդ էր, փողոցով անցնելիս կանայք ոտքի էին կանգնում: Մի անգամ հարսներից մեկը տեղից չի բարձրանում, զարմանքով ասում է՝ այ-հա՛յ, էս ո՞ւմ հարսն է, որ ոտքի չի կանգնի: 14 փողոցը նրա անունով ցայսօր էր ժողովուրդը կոչում է Այհայի դար): Սելավի Ակոն. ապրում էր Չորի քաղում. մի օր Գյումրիում սելավ է ելել, Ակոյի կնկան ու էրեխին ջուրը օրոցքով քշել տարել է: Պատմում են՝ գուլար, կպտսովիր ու կսեր՝ թուխսը ձագով են կորցրել: Գերեզմանի քարին էլ գրած է՝ Մելավի Ակո: Գաթաճի Կարոն. ֆուռ են ունեցել, կպատմեին՝ ընկես գաթա են թխել, արբեշումի մման բերնիդ մեջը կհալիր: Դասաբ Համոն (Պիճիկյան). կովը հեռվից տեսնիր, ճիշտ կսեր՝ քանի կիր կեղնի: Դարիք Կարոն. ոսկերիչ էր, ծնվել էր Էրզրումում, տեղափոխվել Կարս, ապա՝ Ալեքսանդրապոլ: Քանի որ ուրիշ քաղաքից էր եկել, ըդպես էլ դարիք մնաց, չձուլվեց էս քաղքին: Մոմճի Աբրահամը, պատվախնդիր ու հպարտ Երկան Ալեքը, Կոնկի Գիրքորը (կառապան), խանութպան Ճերմակ Համոն՝ ճերմակ երեսով ու ճերմակ խալաթով, և էլի շատ ուրիշներ: Նրանց շուրջ ամեն պահի ու ակնթարթի իմաստավորումով ոտաց վրա ստեղծվում էին տեղական գրույցներ, չափածո երգեր, երբեմն էլ հեքիաթի սկսվածքով.

*Էղել է, օր էղել է,  
Ճերմակ Համոն խելլոտել է,  
Ես ի՞նչ էնեն խելլոտել է,  
Դու ի՞նչ էնես խելլոտել է,*

\* Հեղինակի անձնական արխիվ, ֆոնդ 4, տետր 2:

*Կնիկը տունը մտրդել է...*

Կան մականուններ, որոնք տրվում էին ամբողջ տոհմին ու գերդաստանին. տիպական մի անձի տրվող բնութագրումն ընդհանրական էր դառնում գերդաստանի համար, այսպես, Անարժան Հարուստենք (ըստ ժողովրդի՝ էր հարատւոյանն արժանի չէին, քանի որ քրտիկնով չէին աշխատել. գտել էին), Միլիոն Մանեթենք (մե մանեթով հաց են ծախել. մանեթ-մանեթ՝ միլիոն մանեթ), Բորիկենք (պապս իր հարսանիքին սարքած սեղանների վրա ուրախությունից բորիկ ոտներով էնպէ՛ս է պարել, որ ոչ մի ափսե տեղից չի շարժվել. դրա համար էլ մերոնց *Բորիկենք* են ասել):

Թափանիվի պես օրը ցերեկով Գյումրի քաղաքում պտտվում է բանավոր ասքը, առտնին հարաբերությունները գեղարվեստական միջավայր են դառնում, սովորական մարդիկ՝ ֆիզուրներ, բանավոր հյուսվածքն իր մեջ է առնում մինչև իսկ քաղքի հրապարակ դուրս եկած պարզ ու շիտակ խենթախոսներին, որովհետև գյումրեցին զիտն սիրել ու փայփայել մաս իր... խելառին. հոգու փշուրն անգամ իր համար արժեք ունի...

Գյումրին մաս անսովոր ճակատագրերի ծանրաբեռն ուղեղ է: Պատմում են, որ Տայոնց Արտաշ աղեն տոմետի գործարան ուներ և տոմետի գաղտնիքը այդպես էլ ոչ մեկին չհայտնեց: Իրականում ոչ մի գաղտնիք էլ չկար, այլ պատրաստման եղանակն էր կատարյալ: Ինչպես եղավ, թե չեղավ՝ Արտաշ աղի աղջկան սիրահարվեց տան նոքարը: Արտաշ աղեն իմացավ ու նոքարին «սրտի հանդգնության համար» դաժանորեն պատժեց: Քաղաքն արմանք-գարմանք կտրեց: Նվազածուները երգ կապեցին.

-Անաստված էր Արտաշ աղեն.

Չխնայեց իր նոքարին,

Կյանքը կախեց դռան մխեն,

Աստված չունիիր Արտաշ աղեն:

տարբերակ՝

Ես Տաքոն եմ փերգիտլարցի,

Արտաշ աղի տունը նոքար գնացի,

Էս սև երգը ես կապեցի,

Անաստված էր Արտաշ աղեն:

Մարդկանց կյանքն այս քաղաքում նման է նովելի դիպաշարի՝ սրընթաց ու անսպասելի ավարտով: Մինչև էսօր էլ, բերնեբերան՝ հազարբերան, ժողովրդի հիշողության մեջ Մրբը Ավոյի սուտ ու ճիշտ կերպարն է: Երբորը հանիրավի կդատեն: Մրբը Ավոն կմոտենա դատավորին, կըսե՝ դատավոր ջան, քու էրածդ դատը ընձի դուր չէկավ: Ես էլ իմ դատս պիտի էնեմ: Ու դանակը դատավորի փորը կը կոխե:

Կան տեղական գրույցներ, որոնք ժամանակի հոլովություն ստացել են դարձվածքային արժեք՝ վկայաբերվելով իբրև վերաիմաստավորված արտահայտություն, ինչպես *Քոչակենց քյամարը*: Քոչակենք վեց ախպեր էին. վեց ախպերով մե քընաղ քյամար՝ ունեին: Ամեն մեկը փորձում էր առավոտ մյուսներից ավելի վաղ արթնանալ, որպեսզի այդ օրն ինքը վայելեր արծաթե գոտու հմայքը: Գուցե հմայքի գաղտնիքը գոտին պատրաստողի՝ Մաշտի Գուրգենի հոր՝ Տարախչյան Մարտիրոսի վարպետության մե՞ջ էր: Ժողովուրդը կըսեր՝ ըդպես մարդ ո՛չ ծնվել է, ո՛չ էլ կծնվի. էդ մատները հողը չպտի մտնեին:

Իսկ ովքե՞ր էին քաղաքը քաղաք դարձնող ձեռքերը. դերձակ Ֆանտազի Արտաշը, որն իր մականունն ստացել էր երագում շորերի ֆանտաստիկ մոդելներ տեսնելով: Շյապա կարող Նանիկը, տակավին պահպանվում են նրան կարած շյապաների ձևվածքներն ու կաղապարները: Օսկի կարող Ֆյորը. ոսկեթել բուսանախշերով զոզոնցի երկու ծայրերին կլապիտոն էր ասեղնագործում, վարդակներով քանթանա, գոտի՝ *ի վայելումն* մակագրությամբ: Փափախչի Գարեգինը. թող լույս իջնի, խունկ ու մոմ ծաղկի նրա հիշատակին. իր տեսակի մեջ մտավորական մի մարդ, որ կարն ու գիրքը կողք կողքի փափախ էր կարում: Այսօր էլ ընտանեկան մատուցքի պես պահպանվում է նրա և խորոտ ու կոլոտ Աշխենի հարսանյաց հրավերը: Իսկ երբ Գարեգինի քեֆը քոք էր լինում, ինքնամոռաց ու ունզոզ երգում էր.

- *Երթանք կալը, բռնենք պարը, խանրաջի՛,*

*Դու սիրուն ես քան քո տալը, խանրաջի՛:*

Իսկ ո՞վ էր քաղաքին վերարկու հագցնում. Դրագոն Կարոն՝ մեծդի մի արարած, զրբով ու զարզընդով մարդ, որ դռներն ներս չէր մտնի. իր փառահեղ մարմնի համար Դրագոն էին ասում: Քաղաքն ուներ նաև թարգիներ՝ տեղական տարազներ կարողներ: Եվ բնավ պատահական չէ, որ Ալեքսանդրապոլում բազմաթիվ էին արհեստներով, զբաղմունքով, բնավորությամբ ու արտաքին հատկանիշներով պայմանավորված թե՛ մականունները և թե՛ անուն-ազգանունները (Տարախչյան, Դուրգարյան, Փալանջյան, Դարբինյան, Ալանակյան և այլք):

Ալեքսանդրապոլ-Գյումրու հնայատիպերի մեջ ահա բարձրանում է մարմնի և հոգու *դեղ ու մահյամ* պատրաստողի՝ Իգիթենց Սոֆոյի (1883, Ալեքսանդրապոլ) կերպարը: Պապերը գաղթել են Մուշից, ծնողները ծնվել են Ալեքսանդրապոլում: Ներքնատեսությամբ օժտված իմաստուն կին էր, ունեցել է ինը զավակ: Տիրապետում էր ժողովրդական դեղամիջոցներով բժշկելու արվեստին. բուժում էր *յաման յարա, բկացավ, կարմիր քամի, քարխեց, էզ ու որձ դժվարբուժելի ցավեր, կերցավ, սզու, դոլինջ (մեջքացավ), վարամացավ* և այլն: Հայտնի ոսկրաբույժ էր (սնխչի), գիտեր հնայություններ, գուշակություններ, վախ բռնել: Եղել է թաղի տատները: Իգիթենց Սոֆոյի առեղծվածն ու տատներության մոգականությունն առավելապես առնչվում էր Աստվածածնա կաթքարի հետ, որը՝ իբրև սրբություն, նրան բերել էին Երուսաղեմ ուխտ գնացողները. սալիտակ ու փխրուն այս քարը, ջրի մեջ զցելով, մասամբ լուծվում էր, և ջուրը կաթնագույն էր դառնում: Հետո տալիս էր սակավակաթ կանանց՝ հաղորդելով կաթնածխության, կաթնառատության շնորհ:

Պատմում են, որ նա ծննդկանի ցավերը թեթևացնելու համար իբրև նմանակման հնայություն բացում էր աղբյուրը ու հոսող ջուրը մկրատով երեք անգամ կտրում: Ապա մրմնջում էր հետևյալ աղոթքը.

Հիսուս Տեր ջան, զորությանդ մեռնիմ,

Մարիամ Աստվածածին,

Մայրական գութիդ մեռնիմ,

Գրկիդ զրկանոցին մեռնիմ,

Գերենյալ խաչիդ մեռնիմ,

Պաշտոն- պատարագիդ մեռնիմ.

Քու կապած բարուդ դու քանդես:

Նա նաև երազադատք էր. երազի միջոցով դատում և կանխատեսում էր մարդկանց կյանքի ու ճակատագրի անակնկալները: Պատմում են, որ երազում տեսնում է, թե ինչպես ամպերը հետ գնացին, և երևաց Փութքի զորավոր Ս. Մարգիսը: Հարցնում է՝ տղաս ե՞րբ պիտի պատերազմից վերադառնաս: Մուրբը պատասխանում է՝ այսօր՝ լուսաբացին, կգա Հարությունը: Նույն օրը ծեփին լսվում է պատուհանի ապակու մատնահարում: Մութուլուսի մեջ Սոֆոն մոտենում է պատուհանին, և աչքերի առաջ տեսվանում է որդու ցանկալի պատկերը (իրականում վերադարձել էր Հարությունը՝ հարևանի տղան): Գերիբական լարվածությունից նա կորցնում է տեսողությունը՝ որպես մայր դառնալով սպասման չամչած ողկույզ:

Նույնքան միֆական էր նրա հեռացումն այս աշխարհից. հարյուրամյա իմաստությունն ուսած, սևերի մեջ կարմիր նարտոր կրծքին, հոսող ջրերի հեքիաթին ունկնդիր՝ Մեծ մայրը սեփական ձեռքերով փակեց աչքերը և ամփոփվեց՝ ասելով՝ օլումս (մահս) գտա: Այնքա՛ն իմաստուն էր, որ մինչև իսկ խախտեց ժողովրդական մտածողության կարծրատիպը՝ ասելով, որ մահվանս օրն էլ գիտեմ:

Գյումրին նաև կանխասացների ու գուշակների քաղաք է. եղունգ նայող Պողոյենց Շողոն, երկու բութ մատներն իրար միացնելով՝ ապագայի իմացության *էկրան* էր ստեղծում և գուշակություններ անում. եղունգի մեջ պատկեր էր տեսնում, նույնիսկ ցորենի հատիկ: Գարի զցող Եվդոսը. երեք անգամ տալիս էր Աստծո անունը և գարիների դասավորությամբ գուշակում էր սրտի նպատակը: Մաղ զցող Արաքը. հոգու աչքերով էր տեսնում, օգնության էր կանչում Ղալիչվա Կարմիր Ավետրանին: Թիզ չափող Երանյակը, իսկ նյութական կորուստի դեպքում դիմում էին ռամ զցողի օգնությանը:

Այս քաղաքում անեկդոտն ու զվարճախոսությունը գիրկընդխառն են. նրանց սյուժեներում թիրախը երբեք հիմարությունը չէ, այլ խելացի խորամանկությունը, մտքի անպարարությունը՝ խորքում միշտ մնալով ազնիվ: Երբեմն անեկդոտը կառուցում էին

տրամաբանական խախտման վրա: Տեղի է ունենում պատահական հատկանիշներով սխալական ճանաչում կամ պատահական հասցեագրումով գործողություններ: Չափազանցություններն ու խոսքի ուռճացումը, ինքն իր շուրջ անեկդոտային միջավայր ու գրույց հյուսելը մնում են գյումրեցու նախասիրությունների դաշտում: Խոսքն այնպես է կառուցում, որ տեքստը նույնիսկ իր համար անսպասելի է: Փոքր սյուժեների մեջ անզամ գտնում է զարմանալին՝ թվացյալ աննշան իրողությունները դարձնելով *մազալուրան*: Այսպես՝ *Գմփրո Օնիկը /Ղարագոյզյան/, որը շատ գեր մարդ էր, մեռնելուց առաջ ըսել է. «Ղարդս մեռնելը չէ, ըսա քաղաքը ֆորմից չընկնի»:* Հորինումի տարերքով բռնված՝ նույն գրույցը, անեկդոտը ամեն անգամ գյումրեցիները կարող են պատմել նոր տարբերակով: Այսպես՝ Բաթում Մարտիրոսը կյանքի մեջ մենակ Բաթում է գնացել: Ով ինչ կխոսեր, ինքը Բաթումից կպատմեր:

Գյումրեցին երբեմն սնամպարծության հովեր ունի, աշխարհի տերը լինելու շքեղ երազանք. ըստ *նրա՝ Գյումրին աշխարհի պորտն է, գյումրեցու խմած ջուրը որձ է, իր որդիների թևին ոսկե բիլազուկ կա, երեսին՝ մեռոն, իր ձեռքը Աստծուն ավելի շուտ կհասնի, իր օջախը պունախ չէ:*

Գյումրեցու հանկարծաստեղծ տեքստերում շարունակ բացահայտվում է նրա մտքի հոգևոր տարածությունը: Մինչև իսկ սահմանային իրավիճակներում նա դրսևորեց անհնարին պահերի լավատեսություն: Ինքն իրեն ձաղկեց ու ինքն իրենից բարձրացավ ծիծաղով՝ սեփական կյանքը դարձնելով թիրախ:

Ըստ էության, գյումրեցին ապրում է երդումն ու աղոթքը շուրթերին: Երդվում է այն ամենով, ինչ իր համար թանկ է ու նվիրական:

- *Էս բարի լույսը վկա:*
- *Էս աղոթքանը վկա:*
- *Թուփատլվա սուրբը վկա. արդարն ու մեղավորը կջուկե:*
- *Ս. Հովհաննեսը վկա. անմեղի հավարին հասնող է:*
- *Խաչ, ժամ, պատարագ վկա:*
- *Կազմած, դադրած արեգակ Աստված վկա:*
- *Էս աղն ու հացը վկա:*

Աղոթքանը, բարի լույսը, օրվա բարի ժամերը, երկինք-գետին քննողը վկայակոչումների մեջ դառնում են երդմնեցուցական խոսքային ասույթներ:

Եկեղեցաստեղծ ու ժամասեր այս ժողովրդի համար ամենաթանկը հավատքի վեմն է.

*Աստվածածին, տո՛ւր մուրագս,  
 Բալքի կարոտս առնեի,  
 Քաղեի թուղի մանուշակ,  
 Թերը հետը խառնեի:  
 Կամ՝  
 Ուստա՛, ջերդ գյուվազ է,  
 Վանքիդ բոլորն ավազ է:  
 Վանքդ շինե՛, գո՛խ բեր,  
 Ըղիգ քեզի մուրագ է:*

Աղոթքը գյումրեցու համար հոգու սպեղանի է և ունի հմայական գորություն: Ժողովրդական աղոթքը պայմանականորեն տարանջատվում է հմայությունից, թեև որոշ տեքստեր ավելի նման են հմայությունների: Հմայական աղոթքները երդման բանաձևեր են՝ ուղղված բարի ոգիներին, նրանցում մշտապես վկայակոչվում են սրբերի անուններ, քրիստոնեացված աշխարհապատկեր: Տեքստերը մեծ մասամբ ուղեկցվում են ծիսական արարողակարգով: Այսպես՝ երբ երեխան հիվանդանում էր նորենց հիվանդությանը (լուսինը կզարկեր), հիշյալ աղոթքը գրում էին թղթին, դնում կապույտ կտորով կարված եռանկյունաձև ծրարի մեջ և կարում նրա շապկի աջ կողմին.

*Լուսին՝ ախպեր, դու՛ տղա, ես՝ տղա,  
 Տղեն տղից չի վախենա:  
 /տ. Ես քեզնեն չեմ վախենա/:*

Այս աղոթքն ասում էին իրիկունը երեխային դուրս հանելիս լուսնյակի երեսին, որ չսփեր:

Բոլոր աղոթքների թագն ու բանալին «Հայր մեր»-ն է, որով էլ կ' սկսում, կ' ավարտում են աղոթքները: Յուրաքանչյուրը, առանց բացառության, պետք է կրկնել երեք անգամ: Կան աղոթքներ, որոնք որոշակի շեմի են տրված, *տվածուրիկ* են միայն տվյալ տոհմի արական ճյուղին:

Հայտնի են տարաբնույթ աղոթքներ. գորտնուկի աղոթք՝ *նոր, նոր նորե գիս, նորը ելե կուտե գիս, կտրե, քարլե՝ յուտե գիս*. շան բերանը կապող աղոթք՝ *շունը կա, գոխը չկա*, մրմնջուկի աղոթք, աչքի հատի աղոթք, գելկապի աղոթք, ինչ-որ մեկի սիրտը գրավելու աղոթք և այլն: Վկայաբերենք չար աչքի դեմ աղոթք.

*Չար նիսթ, չար սիսթ, սև սալի տակին*

*Օձի պես սողա, ուռի պես դողա,*

*Խախալով խախալվի, մաղով մաղվի.*

*Չար աչքը դուս գա:*

Ի դեպ, ժողովրդական աղոթքները, որոնք բացառապես կիրառվում են հմայիլների, չարխափանների գործառույթով, գրառել ենք Գյումրու կաթոլիկ համայնքից (մասնավորապես Ավգոնց թաղամասում ապրող Անախազից, որն ուներ աղոթատուն):

Ուշագրավ է, որ գյումրեցու լեզվամտածողությունը բանաձևային է. նա առավելապես վկայաբերում է այնպիսի առած-ասացվածքներ, որոնք բխում են իր կենսափորձից ու գոյափիլիսոփայությունից: Հակված է իր խոսքը կառուցելու նշանների և սիմվոլների լեզվով իբրև խոհափիլիսոփայական բանաձևեր: Առած-ասացվածքներում տեքստը նվազագույնի է հասցված: Օրինակ՝ *Մահը դավա է, ամեն մարդու դուս կչոքի: Դոխը խոսի, որ մատաղ է, հա՛վ, դու ընչի՞ կխոսիս: Չյուն է եկել, որ ձեռ ու ոտ մրսի: Չառի դաղըր գառգարը գիտե: Մազից մանանեխ կհանե: Բերնով դուշ բուն՝ չեմ հավատա: Մա՛գ էրա, մի՛ կտրե: Բուրդ էր՝ ընկավ գզողի ձեռք: Դույնի (արտի) չափ մալ մի՛ ունեցի, սոխի գարի չափ բախտ ունեցի* և այլն: Բոլոր դեպքերում առածների իմաստաբանական հիմքը մարդու ենթագիտակցական արքետիպի մեջ է (այսպես՝ ամեն մարդ իր փոքր կցնի): Յուրաքանչյուր առած-ասացվածք անփոփոխ ու քարացած խոսքային ասույթ չէ, քանի որ հարաճուն ապրում է մեր գիտակցության մեջ՝ համապատասխանելով կյանքի տարբեր իրադարձություններին: Այսինքն՝ տարածաժամանակային ներփակվածություն չի ապրում և բոլոր ժամանակների մտածողության համար ունի յուրահատուկ իմաստ: Յուրաքանչյուր ժամանակ բերում է ասացվածքի իր ըմբռումը:

Մրանով հանդերձ առած-ասացվածքների նախանշան-մեկնությունների մեջ այնքան է խտացված մարդկային փորձը, որ երբեմն դրանք միտված են դառնալու մտածողության կաղապարատիպեր, օրինակ, *Դարդ կա՝ գուկա ու կերթա, դարդ կա՝ վառե ու կերթա: Բախտ կա համամ է, բախտ կա շամամ է, բախտ էլ կա՝ շան լակաման է: Ով տեսել է ջիզրի մրմուռ, նա թափել է նախշուն փետուր:*

Հաճախ ժողովուրդը կրճատում է բանաձևի առաջին մասը, քանի որ երկրորդն արդեն դրոշմավորված է նրա ենթագիտակցության մեջ, օրինակ, *Խունկ ու մոմ էինք սրբերին* (ձուք ու ծամոն էղանք լրբերին): *Աստված թող ընձի յար էղնի* (բովանդակ աշխարհը չար):

Բանահյուսական փոքր ժանրերի որոշ տեքստեր մարդկային մտածողության երկխոսությունը վկայող տրամաբանություն են արտահայտում և ընկալվում են միայն փոխաբերական իմաստով: Այսպես՝ *Աչքը ո՞վ է հանել: - Իրավորս: - Ըղոր համա՞ր է էղքան խորը հանել: Դառդառին հարցրին դշերի մեջ ո՞րն է սիրուն, ըսավ՝ իմ ձագս (տ. դա՛, դա՛, դա՛, իմ ձագեն անուշը չկա):*

Գյումրեցու խոսքը հակիրճ է, հյութեղ, լեզվի պատկերավորման բոլոր միջոցներով հագեցած, ինքնակա և ինքնաբուխ. *ընպես կխոսան, ինչխոր ձեքը կաթե ճրագը: Մինչև իսկ հիշոց-հայեռյանքները բանաստեղծական փոքրիկ հորինումներ են հիշեցնում՝ շատ հաճախ բարձրացող աստիճանավորումով: Օրինակ՝ ես քեզի վարող-վաստկողի գլխու քարին, դռչի վարդին, սրտի սալին, խունկ-խեծակին, ճարպ-ճրագին...:*

Փաղաքշանքի խոսքերում *սիրտ-հոգի-կյանք* բառային սիմվոլներով գաղտնագրվում են մարդու կյանքի ամենակարևոր պահերը: Այս խոսքերը հիշեցնում են յուրօրինակ ըղձական բանաձևեր, բոլորապատու սիրո, նվիրումի և գոհաբերման գաղափարի արտահայտություններ: Այսպես՝ *Մազ էղնի, ոտքերիդ տակն էղնի: Դարդը*

*տանին: Գլխիդ մեռնին: Արևիդ մեռնին: Կյանքիդ թելերին մեռնին, սրտիդ՝ սներին: Թևավոր դու՛ էղնիս, գլխիս վերևը պտտվիս:*

Ժողովրդի իմաստությունը անեծքը երկրերնանի սուր է. եթե անիծում են անմեղին, վերադառնում է անիծողին նույն ուժգնությամբ, հետևաբար անեծքի բանաձևային սկզբվածքը որոշակի պայմանախոսք է՝ *հեռի խողաց...*

*Տասը մատեղ մե մատդ մնա, էն էլ մատնշունչ էղնի: Գետնեն գերի էղնիս: Մեջքդ գետինը մաշե, աչքդ՝ երկինքը: Օձի բնին նստիս, փումփուլի ձագեր հանես: Նստիմ լենքդ, լամ երկենքդ և այլն:*

Հետադեպյան շրջանում կենցաղավարող դարձան երագը, ողբ ու ողբերգերը, լալիքի երգերը, ժողովրդական խաղիկներ, սեփական հորինումները, գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրությունները: Քանի որ իրականությունը խաթարված էր, գյուրեցին իրեն տեղափոխեց հեքիաթների ու երազների աշխարհ: Հեքիաթի սյուժե ներմուծեց իր կյանքին մոտ, բայց ոչ իր կյանքի նման դաժան մետամոդել: Մեր գրառած հեքիաթներն արտահայտում են ոչ միայն մարդկային ճակատագրի անակնկալն ու զարմանալին, այլև սահմանագծին հայտնված մարդկանց մասին չլաված ու չտեսնված իրադարձություններ:

Ժողովրդական խաղիկների ենթատեքստային բովանդակությունը հետադեպյան շրջանում ձեռք է բերում բացառիկ ինքնատիպություն՝ բովանդակային ներքին ուղղությամբ դառնալով լալիքի երգ.

*Ի՞նչդ չլամ, ի՞նչդ չողբամ, բալե՞ք ջան,  
Արմատախիլ եղավ բալես,  
Ծաղկեցի, փնջեցի, աչք մեծացրի բալիս վրա:  
Ծառերի պես բացվեիք, բալե՞ք ջան,  
Ես ծառս տնկեցի, բարը չտեսա:  
/Բանասացը կորցրել է երեք գավակներին/:*

Նորագույն խաղիկների մեծ մասն ստեղծվել է ավանդական մշակման ճանապարհով, երկուսի փոխներթափանցմամբ: Վշտի անմիջական ազդեցությամբ ստեղծված հորինվածքները ժանրային առումով դուրս են գալիս խաղիկի շրջանակներից.

Գնացի ջրի, սառավ,  
Գնացի շաքարի, աղ դառավ:  
Գնացի կանաչի, փուշ ու տատասկ դառավ:  
տ. Գնացի չայը, սառուց դառավ,  
Մե դարդս հարուր դառավ,  
Էս ինչ սև դարդի տեր էի,  
Շաքար առա, աղ դառավ:

Գյուրեցու ավարտված կյանքի պատմությունը շարունակվում է տապանաքարերին: Բանահյուսական նյութի նորօրյա գրառումների մեջ կարևորել ենք հայ վիմագիր չափածո ստեղծագործություններն ու գերեզմանաքարերի մակագրությունները, որոնք ժողովրդի գեղարվեստական մտածողության ու աշխարհատեսության քարտեղեն վկայություններն են՝ արտահայտելով չապրած օրերի ամսոսանք:

Գերեզմանաքարերի ավանդական մակագրությունները կառուցվածքով տարբերվում են նորօրյա գրառումներից, թեև վերջիններիս մեջ պահպանվում են ավանդական հորինվածքի բնորոշ գծերը: Հորինվածքի ավանդական ձևին հատուկ է բանաձևային սահմանումը՝

*Կանգնեցի գխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց:  
Աստ հանգզի խաղաղությամբ Մարիամ Ավիրյանց (ծնեալ 1783, վախճ.1831թթ.):  
Աստ հանգզի ոսկերք Վարդիթեր Թովչյանցի, ով հանդիպի՝ տա ողորմի:*

Ի տարբերություն հին տապանագրերի՝ նորօրյա վիմագիր ստեղծագործությունները հորինված են գերազանցապես երկու եղանակով. մի մասի մեջ քնարական հերոսը կյանքին հրաժեշտ տվող անձն է, մյուս մասում՝ նորահայտ հորինողը (առավել հաճախ պատումը մտերիմ հարազատի անունից է):

Վիմագիր ստեղծագործություններից կարելի է առանձնացնել այն տողերը, որոնք բանաձևային արժեք ունեն և պայմանավորում են հորինվածքի յուրահատկությունը. «Ո՛վ անցավոր... Ո՛վ անգութ մահ...», «Հիշի՛ր, անցո՛րդ /ես իմ տանն եմ, իսկ դու հյուր

ես աշխարհում/», «Անցո՛րդ, կա՛նգ առ, մի՛ անցիր...», «Անցո՛րդ, մորս պես հիշիր... Խոնարհի՛ր գլուխդ, անցո՛րդ իմ բարի...», «Կարեկի՛ց անցորդ, թե զիս հարցնես...» և այլն:

Հետադեպի շրջանի գրառումներից շատերն սկսվում են «Երկրաշարժը տունս քանդեց», «Ա՛խ, երկրաշարժ, ի՞նչ արեցիր», «Երկրաշարժը կյանքս խլեց», «Ա՛խ, բալա», «Ծաղկած արև էիր, բալա» և այլ տողերով: Տապանագրերում ամեն ինչ պատվում է հիշատակի շուրջը, որ զրահ է ժամանակի ու մոռացության դեմ: Պարզ, անպաճույճ, բառ ու բանով հորինված վիճագիր մակագրությունները հուզիչ են ժողովրդական մտածողության տարերքով:

Գնա, արի, ընձի տես,  
Ես էլ մարդ եմ քեզի պես,  
Դու չես էղնի ընձի պես,  
Բայց ես կեղնիմ քեզի պես:

Ի դեպ, աղետի բանահյուսությունը բացառապես արտահայտվեց վիճագիր արձանագրությունների ձևով: Գյումրին հիշեց իր հին ճոճքը, երբ կրկին տարուբերվեց երկրի ու երկնքի միջև:

*1926 թվին մեծ վնաս հասավ Գյումրի քաղաքին,*

*Մերը մոռացավ իրա զավակին:*

*Ժամը յոթին ժաշկը ելավ՝ Գյումրին ավիրեց,*

*Աղաներին Բոշի սաղը նես հրավիրեց,*

*Չբլաղ, չբլաղ դուրս են գալիս բաղնեստանիցը,*

*Դու մի ըսա՝ ժաշկն է գալիս գետնի տակիցը:*

Բայց սգատոների խոսքից բարձրացավ քաղաքը՝ հավատալով, որ տխուր զգեստներից մի օր կմերկանա ու ոսկեթել պատմունճանով ընդառաջ կգնա իր կանաչ ու կարմիր կիրակիներին:

Ամփոփելով ասեմք, որ այս տարածքի բանահյուսությունն ամենևին նման չէ Գյումրու հարևանությամբ ապրող գյուղերի բանահյուսական նկարագրին, քանի որ իր խառնարանում ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունը:

Մեր հավաքած նյութի շրջանակներում բանահյուսական ատաղձը դրսևորվում է վիպականության հենքով ծեսի, սովորույթի, ավանդույթի համակարգում, պատումի տարաբնույթ ձևերով և ազգաբանական շերտերի ընդլայնումով: Գյումրու բանահյուսության նմուշների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այստեղ անխառն քնարերգություն՝ որպես այդպիսին, հազվադեպ է: Մարդկային փորձն ու իմաստությունն առավելապես խտացված են բանահյուսական կարճ ձևերի մեջ, քանի որ գյումրեցու բանավոր խոսքը հատու է, ավարտուն: Այն վավերացվում է նրա ենթագիտակցության մեջ մշտապես գործող ինքնակա հին, առասպելաբանական մեխանիզմի շնորհիվ:

Այսօր էլ Գյումրին կենսունակ բառ ու բանի, մտքի ճկունության ու կենդանի բանահյուսության քաղաք է: Անհնար է երբևէ ամփոփ խոսք ասել այս քաղաքի բանահյուսության մասին, որովհետև այն անսպառ է:

## КРЕСТ ЗА СПИНОЙ, СЕМЬ РАН В СЕРДЦЕ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ К. Саакян, Р. Оганисян \_\_\_

В статье обобщена этнографическая картина города Гюмри. Устное литературное наследие здесь представлено в качестве уникального свидетельства о мировоззрении и жизненном опыте народа. Рассмотренные этнографические материалы как бы восстанавливают ту уникальную среду городской культуры, где преобладают образцы из обрядов с эпической основой, из систем традиций и обычаев, из сказаний разных форм и расширенных этнологических слоев, а так же песенного фольклора.

## Աշոտ ՄԻՐՉՈՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆ. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾ

Քաղաքի այն հատվածը, որը մենք կոչում ենք պատմական, հին կամ «Կումայրի արգելոց», ձևավորվել է 1834-1914թթ. ընթացքում: Հենց այդ ժամանակահատվածում կառուցվեցին ժողովրդական ճարտարապետության հարյուրավոր նմուշներ, որոնք մեր պարծանքի առիթն են դարձել: Ռուսական կայսրության մեծապետական քաղաքականության, մտավորականության լուսավորչական մտածողության, մասնագիտական՝ ճարտարապետական և ինժեներական մտքի և ժողովրդական արհեստագործական մշակույթի բացառիկ համադրման շնորհիվ ստեղծվեց մի յուրատիպ պատմական բնակավայր, որի անունն էր Ալեքսանդրապոլ:

Ալեքսանդրապոլը կամ Ալեքպոլը (այսպես էին նրան սիրով անվանում բնակիչները), որ Թուրքիայի և Պարսկաստանի սահմանի մոտ գտնվող երբեմնի փոքրիկ գյուղ էր՝ Գյումրի անունով, 1804-ից դառնում է առաջավոր հենակետ ռուսական զորքերի համար և այս կարգավիճակում մնում մոտ երկու տասնամյակ՝ 1800-1820 թվականները, մինչև որ ժամանակավոր դադարից հետո Ռուսաստանը կրկին ակտիվորեն առաջանում է դեպի արևմուտք: Գյումրի բնակչությունն սկսում է կտրուկ աճել: Սակայն բնակավայրի կառուցապատումն ընթանում էր անկանոն կամ, ավելի ճիշտ, բնական գործոնների համաձայն, որոնք էին գոյություն ունեցող ճանապարհների և գետակների ուղղությունը, տեղանքը, կառույցի ուղղվածությունը ըստ աշխարհագրական կողմերի:

Քաղաքի առաջին՝ 1837թ. կազմված հատակագիծը, որը կոչվում էր «Գյումրի քաղաքի հեռանկարային զարգացման հատակագիծ», վկայում է, որ այդ ժամանակահատվածում բնակավայրում կառուցված էին հին ամրոցն իր հենակետերով (տեսքը չի պահպանվել, ամենայն հավանականությամբ՝ ներկայիս Մարգայան, Կամո, Խաչատրյան և Շիրակացի փողոցների միջև ընկած հատվածը), եկեղեցին (տեսքը չի պահպանվել, հավանաբար գտնվել է հետագայում կառուցված Մր Նշան եկեղեցու տեղում), մոտ հազար տնատիրություններ, գերեզմանոց և մի քանի հարյուր բնակելի տներ: Տները տեղակայված էին ոլորապատույտ փողոցների երկայնքով անկանոն և բավականին խիտ: Հետաքրքրական է, որ գյումրեցիներն ամեն կերպ խուսափել են տները կառուցել գետերի հունների և ճահճուտների մոտ՝ թողնելով այդ հողակտորները բանջարանոցների համար:

Բացի գոյություն ունեցող օբյեկտներից՝ այնտեղ պատկերված էր նաև այն քաղաքի ուրվագիծը, որը շուտով՝ մի քանի տասնամյակների ընթացքում պիտի աճեր ու ծաղկեր՝ դառնալով հայ ժողովրդի նորագույն քաղաքաշինության գլուխգործոցներից մեկը:

Հարյուրավոր այլ գյուղերից ոչնչով չտարբերվող փոքրիկ ու անհրապույր Գյումրու պատմությունը 1837թ. հոկտեմբերի 3-ից միանգամայն այլ ուղով գնաց. ժամանեց ռուսական հզոր ինքնակալը՝ Նիկոլայ Առաջին կայսրը, և այս այցելությունը Գյումրու նոր՝ Ալեքսանդրապոլյան ժամանակաշրջանի սկիզբը հանդիսացավ:

Ենթադրվում է, որ այցելության ժամանակ Նիկոլայ Առաջինին ներկայացվել է քաղաքի առաջին հեռանկարային զարգացման հատակագիծը, քանի որ այն վիթխարի քաղաքաշինական և ֆորտիֆիկացիոն ծրագիրը, որը մոտ 70 տարվա ընթացքում անձանաչելիորեն փոխեց բնակավայրը՝ դարձնելով այն տարածաշրջանի կարևորագույն քաղաքներից մեկը, չէր կարող իրականանալ առանց կայսերական գերագույն հովանավորության:

«Ալեքսանդրապոլ» բերդը. Կառուցվեց XIX դարի համաշխարհային ֆորտիֆիկացիոն (ռազմական) արվեստի բոլոր կանոններով: Այն նախատեսված էր 15հազարանոց կայազոր տեղավորելու համար: Ուներ պարենի և հանդերձանքի, վառողի և զինամթերքի պահեստներ, տնտեսական և ինժեներական կառույցներ, զինվորական հիվանդանոցներ, ախոռներ և զորանոցներ: Բերդը հյուսիսից հարավ տեղադրված մի շարք պաշտպանական կառույցների համալիր էր, որոնցից ամենախոշորը՝ Ամրոցը,

գրադեցնում էր մոտ 60 հեկտար հողատարածք: Նրա կենտրոնական մասում գտնվում էր Սբ Ալեքսանդրա եկեղեցին, որը կիսաքանդ վիճակում պահպանվել է մինչ այժմ: Այն խաչաձև, կենտրոնագմբեթ եկեղեցի է: Օծվել է 1842 թ.: Այստեղ գտնվել է Բոյուլովի վրձնած Հայր Աստծո սրբապատկերը, որը Նիկոլայ Առաջինի նվիրատվությունն էր եկեղեցուն: Ամրոցի անմատչելիությունը լրացնում են նրան երեք կողմից շրջապատող պաշտպանական կառույցներ՝ Հարավային և Արևմտյան աշտարակները և Հյուսիսային ֆորտը: Ամրոցի արևելյան կողմում գտնվող Չերքեզի ձորը պաշտպանում էր նրան թիկունքից:

Ալեքսանդրապոլ քաղաքը տեղակայված է Արաքսի վտակ Ախուրյան (Արփաչայ) գետից մոտ 2 կմ դեպի արևելք՝ հյուսիսից հարավ հոսող երեք գետակների միջև գտնվող բլրաքմբերի վրա: 1840թ. հետո քաղաքն ընդլայնվեց դեպի արևմուտք (ներկայիս Պլեխանով փողոց) և արևելք (ներկայիս Դուկասյան փողոց): Վերջինս՝ արևելյանը, դարձավ Ալեքսանդրապոլի կառուցապատման հիմնական ուղղությունը (ներկայիս Հաղթանակի պողոտայից մինչև Դուկասյան փողոց), քանի որ հարթ էր և ազատ կառուցապատումից: Այս տարածքը կառուցապատվեց XIX դարի վերջին տասնամյակներից սկսած մինչև XX դարասկիզբը: Հատկանշական է, որ ավելի ուշ կառուցված այս հատվածը որևէ անվանում չստացավ որպես թաղամաս (մահլա)՝ վկայելով, որ այն կառուցող բնակիչները որևէ ընդգծված դավանաբանական, էթնիկ կամ սոցիալական ընդհանրություն չեն ունեցել: Այս փաստը հանգեցնում է նաև այն կարծիքին, որ քաղաքը աճում էր եվրոպական արժեքներին համահունչ. այն բաց էր, համայնքային կառավարման սկզբունքով, տնտեսական նոր հարաբերություններին համահունչ:

Ալեքսանդրապոլի հիմնական մասը կառուցապատվում էր փոխուղղահայաց փողոցային ցանցում տեղադրված ուղղանկյունաձև թաղամասերի տեսքով, այսպես կոչված, կամոնալոր կամ հիպոդամային հատակագծային սկզբունքով:

XIX դարի երկրորդ կեսից սկսվեց առևտրա-հասարակական կենտրոնի ձևավորումը: Այն գտնվում էր կենտրոնական հրապարակի և կից կվարտալների տեղում՝ Գյումրի գետակի հունի երկայնքով, կառուցապատումից ազատ մնացած հատվածում, ինչպես որ նախանշված էր 1837 թ. գլխավոր հատակագծում: Մա հնարավոր դարձավ գետակի միջին հունը ստորգետնյա անցուղի ուղղորդելու շնորհիվ: Այստեղ կառուցվեցին եկեղեցիներ, առևտրական շարքեր, հյուրանոցներ, իջևանատներ, պանդոկներ, արհեստանոցներ և շուկաներ: Կենտրոնից դեպի արևմուտք գտնվող կոնսերվացված քաղաքային գերեզմանոցի տեղում կազմավորվեց քաղաքային զբոսայգին:

Քաղաքի հյուսիսային սահմանին (ներկայիս Գուլյանասկեղենի ֆաբրիկայի տեղում) գտնվում էր «Չիթոցոնց զաբոռ» ջրհավաք գլխամասային կառույցը (капитаж), որտեղ կուտակվում էր արտադրական օբյեկտներին մատակարարող ջուրը: Քաղաքի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Չիթոցյանը տարածքն օգտագործելու դիմաց պարտավորվում էր այն ծառապատել, խնամել և ծառայեցնել ալեքսանդրապոլիների հանգստի համար:

Կանաչապատ և բարեկարգ տարածք էր նաև «Պատվո բլուր» զինվորական գերեզմանոցը, որը մինչև 1853 թ. ուղղափառ քրիստոնեական գերեզման էր, իսկ 1853 թվականից հետո դարձավ Կովկասում մղված ճակատամարտերում զոհվածների պանթեոն: Տարվա մեջ երեք անգամ Ալեքսանդրապոլի կայազորն այստեղ անցկացնում էր հոգեհանգստյան հանդիսություններ: Պանթեոնի մոտ կառուցված Սբ Միքայելի եկեղեցի-ժամատունը տեղացիները թիթեղյա արծաթափայլ կտուրի պատճառով անվանում են Պլպլան ժամ (օծվել է 1886թ.):

XIX դարավերջին Ալեքսանդրապոլ այցելողները ճամփորդական գրառումներում քաղաքը նկարագրում են իբրև նոր և բարեկարգ: Անկասկած, սրան նպաստել են քաղաքաշինական բնույթի բազմաթիվ կամոնակարգող փաստաթղթեր՝ ընդունված ինչպես ցարական կառավարության, այնպես էլ քաղաքային իշխանությունների մակարդակով:

Ալեքսանդրապոլը Կովկասի այն բնակավայրերից է, որտեղ քարիզներ են կառուցվել: Քարիզների՝ մինչ օրս պահպանված մի հատվածն անցնում է Ջիվանու փողոցով՝ հավելով Գարեջրի գործարանի հիմնապատերին: Քարաչեն այս ջրանցքը սնել է Ծաղիկյաններին պատկանող Գարեջրի գործարանը և կից տները:

Քաղաքում կառուցվել են աղբյուրներ, մարդաշատ վայրերում տեղադրված են եղել հասարակական զուգարաններ: Փողոցները բարեկարգվել և լուսավորվել են նախ՝ նավթային, հետո՝ էլեկտրական լամպերով: Այս ժամանակաշրջանում կառուցված կամուրջներից քաղաքում պահպանվել է միայն մեկը: Այն կառուցված է Չերքեզի ձորում՝ ամրոց քաղաքի հետ կապող ճանապարհի վրա:

Արտադրական օբյեկտները (գարեջրի, կրի, աղյուսի, օճառի, տոմետի, կաշվի մշակման) տեղադրված են եղել քաղաքի հյուսիսային և հարավային հատվածներում, մի փոքր առանձնացված բնակելի թաղամասերից: Քաղաքի ջրերի մաքրությունը պահպանելու համար դրանցից առավել վնասակարները (օճառի, կաշվեզործության) կառուցվել են գետակների ստորին հատվածում՝ քաղաքից դուրս: Ավելի ուշ՝ XX դարասկզբին, քաղաքի արևմտյան հատվածում կառուցվեցին Ծաղիկյանների Գարեջրի և Մետաղամշակման (Մեխզործարան) գործարանները:

Ալեքսանդրապոլի ժամանակաշրջանը հայկական ժողովրդական տան զարգացման մի ամբողջ հաջորդականություն է: Այն սկսվում է դարերի խորքից մեզ հասած գլխատնով և հասնում մինչև իր ժամանակի համաշխարհային ճարտարապետության ոգով կերտված առանձնատները:

Մինչև 1830-ական թվականները գլխատունը հանդիսացել է Գյումրու հիմնական տան տիպը: Քարաշեն, երբեմն կիսազետոնափոր, փայտյա գերաններով ծածկված ժողովրդական այս տները քաղկացած են եղել մեկ կամ երկու հարակից սենյակներից, որտեղ բնակիչների հետ կողք կողքի գտնվում էին նաև ընտանի կենդանիները:

1830-ականներից հետո Կարսից, Կարինից, Բասենից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից այստեղ գաղթած բազմաթիվ քաղաքաբնակ ընտանիքներ իրենց հետ բերում են բնակարանի նոր՝ քաղաքատիպ բնակելի տան գաղափարը: Գոյություն ունեցող գյուղատիպ բնակելի տները ձևափոխվում են, լրակառուցվում նոր նշանակության սենյակներով: Առաջին հերթին դա վերաբերում է բնակելի սենյակի (չայի օդա) և ննջարանների առաջացմանը: Փոփոխվում է նաև տնտեսական հատվածը: Կրճատվում կամ հեռացվում են գյուղական ապրելակերպին բնորոշ կենցաղային սենյակներ՝ անասնագոմը, մարագը, դրանց փոխարեն կառուցվում են բնակելի սենյակներ կամ ընդլայնվում է բակը, որը նույնպես ստանում է նոր տիպի՝ քաղաքային տարածությանը բնորոշ հատկանիշներ: Փոփոխության են ենթարկվում ոչ միայն տների ներքին կառուցվածքը, այլև արտաքին տեսքը, հարդարանքը, համաչափությունները: 1860-80-ական թթ. կառուցված բնակելի տները այնքան են տարբերվում նախորդ (և հաջորդող) ժամանակներում կառուցվածներից, որ արժանիորեն կարող են դասվել ճարտարապետական նոր ոճի նմուշների շարժում:

1872 թ. սեպտեմբերին Կովկասի փոխարքան հաստատում է Ալեքսանդրապոլի նոր հատակագիծը, որի համաձայն, պահպանելով գոյություն ունեցող փողոցների ցանցը, նախատեսվում է ընդլայնել քաղաքի թաղամասերը: Կառուցվում են «Ֆրանսիա» հյուրանոցը, Չիթոցյանների, Խալաթյանների, Ղասաբովների, Ախսախայանների և այլոց առանձնատները: Քաղաքն իր ճարտարապետական շինություններով այնքան զրավիչ էր, որ Կովկասյան հնագիտական ընկերությունը նրա տեսարաններով փոստային բացիկներ է թողարկում: Կառուցապատվում են նոր փողոցներ՝ Ալեքսանդրովսկայա (այժմյան՝ Աբովյան), Բոլշայա Սլոբոդսկայա (այժմյան Ջիվանու), Բեյրութսկայա (այժմյան Գորկու), Պուշկինսկայա (այժմյան՝ Գայի), Միխայլովսկայա (այժմյան՝ Շահումյան) և այլն:

Հաջորդ ժամանակահատվածը՝ 1880-1910 թվականները, Ալեքսանդրապոլի «ուկեղարն» է: Կայսրությունում տիրում էր լուսավորչության ոգին: Ռուսաստանը ապրում էր քաղաքական և տնտեսական վերելք: Սկսվել էր տեխնիկական վերափոխումների մրցավազքը: Եվրոպական արժեքները և մտածելակերպը ներխուժում էին Կովկաս, կյանքի բոլոր ոլորտներում՝ ավանդականի կողքին առաջանում էր նորը, ժամանակակիցը: Պահպանված փաստաթղթերը վկայում են, որ ալեքսանդրապոլցի արտադրողները հոսքագծեր և սարքավորումներ էին պատվիրում նույնիսկ Գերմանիայում, նրանց արտադրանքը ցուցադրվում էր Մոսկվայի, Փարիզի և այլ միջազգային արդյունաբերական տոնավաճառներում:

Ինչ վերաբերում է ճարտարապետական ոճին, այն միանշանակ ընթացավ Եվրոպայում և Ռուսաստանում իշխող արդի միտումներին համահունչ: XIX դարը հատկանշական էր կլասիցիզմի նահանջով, դրա փոխարեն էկլեկտիզմի ի հայտ գալով և, արդեն դարավերջին՝ մոդեռնի ծնունդով: Այս բոլոր ոճական փոխակերպումները, որոնք տեղի էին ունենում Եվրոպայում ու Ռուսաստանում, իրենց արտահայտությունն են գտել Ալեքսանդրապոլի ճարտարապետական համերանգության մեջ: Եվրոպական ճաշակի այդպիսի անմիջական և ակնհայտ ներխուժումն այստեղ հնարավոր դարձավ քաղաքի՝ արտաքին աշխարհի հետ անմիջադեպ կապվածության շնորհիվ: Բազմաթիվ և բազմալեզու տպագրական հրատարակությունները, հեռագրային և հեռախոսային կապը և, որ ամենակարևորն է, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղագծերը մեծապես նպաստում էին քաղաքային անկրկնելի պատկերի ձևավորմանը:

Պահպանվել է քաղաքի շինարարությունը կանոնակարգող և վերահսկող համակարգին վերաբերող փաստաթղթերից մեկը՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանցի «Շինութեանց վերաբերյալ պարտավորական որոշումներ»-ը, որտեղ մանրամասնորեն մշակված են տների կառուցման և փողոցների բարեկարգման կանոնները: Այս ամենի հետ մեկտեղ համաքաղաքայինների շնորհիվ Ալեքսանդրապոլում է կառուցողական բարձր մշակույթ, որը հնարավորություն էր տալիս իրականացնելու ցանկացած բարձրաճաշակ մտահղացում:

XX դարի նախաշեմին քաղաքի զարգացման համար անհրաժեշտ եղավ նոր հատակագիծ, որը կազմվեց 1905 թ.: Այս փաստաթուղթը կոչվում էր «Երևանյան նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքի ներկայիս, ինչպես նաև կարգավորման ու ընդլայնման հատակագիծ»: Եթե 1837 թ. հատակագծի վրա նոր «շախմատաձև» փողոցային ցանցը նշված է թեթև եզրագծերով՝ որպես ապագայում ենթադրվող, ապա այստեղ մենք տեսնում ենք արդեն մեծմասամբ իրականացված կանոնավոր փողոցային ցանց և ուղղանկյուն բնակելի թաղամասեր՝ կվարտալներ: Այս գծագրի վրա պատկերված էր 30 հազարից ավելի բնակչություն ունեցող արհեստավորական և առևտրական կենտրոն, վարպետների քաղաք Ալեքսանդրապոլը՝ իր նոր փողոցներով (Արտիլերիյսկայա, Չավոդսկայա, Վոկզալնայա, Տարգովայա, Թիֆլիսկայա), կանաչապատման նոր գոտիներով:

Քաղաքի գեղեցկությունն անհնար է պատկերացնել առանց եկեղեցիների, որոնք կարծես քաղաքի հյուսվածքը զարդարող գոհարներ լինեն: Ալեքսանդրապոլյան ժամանակահատվածում կառուցվել են ռուսական գործառնասային 5 եկեղեցիներ, 1 ժամատուն -եկեղեցի, 4 հայ առաքելական և հայ կաթոլիկ և 1 հունական եկեղեցիներ: Սրանց մի մասը անվերադարձ կորսված է, մի քանիսի գոյությունը՝ լրջորեն վտանգված: Հայ կաթոլիկ եկեղեցին (կառուցված 1843-1855 թթ.) և Սուրբ Գրիգորը (Գեղոցն ժամ) մասամբ խոնարհված են: 1988 թվականի երկրաշարժից խոնարհվեց նաև Ամենափրկիչ եկեղեցին: Անվերադարձ կորսված է հունական եկեղեցին, որը քանդվել է դեռևս վաղ խորհրդային տարիներին:

*Սբ Նշան եկեղեցի* (նախապես՝ Սբ Աստվածածին). Կառուցվել է 1859-1864 թթ. իշխան Դահրաման Երկայնաբազուկ Արդոթյանցի և քաղաքացիների հանգանակած գումարներով: 1988 թ. երկրաշարժից եկեղեցու գմբեթը և զանգակատունը խոնարհվեցին: Եկեղեցին վերականգնվել և կահավորվել է Գյումրու ներկայիս քաղաքապետ Վ. Դուկասյանի անձնական միջոցներով: Այժմ գործում է:

*Սբ Ամենափրկիչ եկեղեցի*. Ալեքսանդրապոլի խոշորագույն եկեղեցին է, կառուցվեց քաղաքացիների հանգանակություններով 1858-1873 թթ.: Շինարարությունը ղեկավարել է Թադևոս Անտիկյանը: Ակնհայտ է, որ Ամենափրկիչը, ինչպես և շատ ուրիշ կառույցներ, կրում է Անի քաղաքի միջնադարյան կոթողների քաղաքաշինական ազդեցությունը: Սակայն այն Անիի Մայր տաճարի կրկնությունը չէ, ինչպես ընդունված է կարծել: Այն օժտված է իր ժամանակին բնորոշ ուրույն և անկրկնելի ճարտարապետական և շինարարական հատկանիշներով: Եկեղեցին ունի այս տիպի կառույցներում հազվագյուտ հանդիպող նկուղային հարկ: Սև և կարմիր տուֆի համադրությամբ շարված պատերը մշակված են բազմաթիվ հարթաքանդակներով, որոնք պատկերում են հատվածներ Աստվածաշնչի դրվագներից: Չանգակատան կարմիր և սև քարերով հա-

վաքված հարթ առաստաղը այլքայուցի վարպետների կողմից կիրառված հետաքրքիր ճարտարապետական լուծումների օրինակ է: Եկեղեցում կիրառելուց առաջ այս տիպի կոնստրուկցիայով Թադևոս Անտիկյանը ծածկել էր իր տան նկուղային սենյակներից մեկը (տունը չի պահպանվել, բայց հնաբնակները հիշում են այն որպես «նավթի պաղ-վալի տունը»): Եկեղեցու ներքին պատերը և առաստաղը սվաղված էին հատուկ շաղախով, որտեղ կրից բացի օգտագործվում էր ուղտի բուրդ: Այժմ եկեղեցին վերականգնվում է:

*Մր Աստվածածին* եկեղեցին (ժողովուրդը անվանում է «Յոթվերք»): Կառուցվել է ավելի ուշ, հավանաբար 1880-90 թվականներին: Ալեքսպոլի եկեղեցիների մեջ ամենաերիտասարդ այս կառույցը իր ամբողջ նկարագրով առանձնանում է նախորդներից: Հայ ավանդական եկեղեցիներից այն տարբերվում է իր լայն, զանգվածեղ և ձգված ճակտոնով (ֆրոնտոն), որը ձգվում է երկայնական ճակատների ծայրից ծայր, շենքի ծավալից առաջացող չորսանկյուն խորանների ծավալներով, լոտոսաձև սյունագլուխ ունեցող գույզացված սյուներով, գույզ «կեղծ» գմբեթներով: Վերջիններս տեղադրված են արևելյան կողմում և կարծես հավասարակշռում են հակառակ՝ արևմտյան կողմում գտնվող զանգակատան գմբեթը՝ ստեղծելով ճարտարապետական ձևերի մի հրաշալի ներդաշնակություն: Բացառիկ է արտաքին շարվածքի քարերի մշակումը. հատուկ մուրճով (սանրտարաղ) վարպետները մշակել են դրանց մակերեսները այնպես, որ առաջանան եղևնաձև ակոսիկներ: Շնորհիվ այսպիսի մշակման շարքի քարերը անդրադարձնում են արևի լույսը տարբեր ուղղություններով՝ ստեղծելով լույսի և ստվերի անկրկնելի խաղ: Այսպիսով, եկեղեցու ճարտարապետական լուծումները բխում են դարաշրջանին բնորոշ դասական և էկլեկտիկ, ինչպես նաև հայկական եկեղեցաշինության ոճակագրությունից, իսկ շինարարական արվեստը՝ տեղական, ազգային ավանդույթներից: Եկեղեցում է գտնվում քաղաքի հնագույն «Յոթ վիրաց» սրբապատկերը:

Եկեղեցու վեղարը (գմբեթի տանիքը) փայտից է եղել: 1988 թվականին՝ երկրաշարժից առաջ, այն փոխարինվեց քարե կոնստրուկցիայով: 1988թ. երկրաշարժը զանգակատան և երկու փոքրիկ գմբեթների ավերման պատճառ հանդիսացավ: Երկրաշարժից վնասված այս հատվածները վերականգնվեցին: Քանդված գմբեթները տեղադրվեցին եկեղեցու բակում որպես հուշակոթող:

Բացի Ալեքսանդրապոլի բերդում գտնվող Մր Ալեքսանդրայի եկեղեցուց և Ժամատնից՝ Ալեքսանդրապոլում կառուցվել են 7-րդ և 8-րդ Կովկասյան հրաձգային գնդերի, 18-րդ դրագունական Սևերսկի գնդի, 153-րդ և 154-րդ Բաքվի հետևազորային գնդերի եկեղեցիները: Սրանցից բավականին լավ է պահպանվել միայն 153-րդ Բաքվի հետևազորային գնդի եկեղեցին՝ «Կազաչի պոստ» ռազմական թաղամասում:

Ալեքսանդրապոլում գործում էին բազմաթիվ կրթօջախներ՝ տարրական, մեծահասակների և ծխական դպրոցներ, մասնագիտական ուսումնարաններ, պրոգիմնագիա: Ծարտարապետական տեսանկյունից առանձնահատուկ են Օլգինյան պրոգիմնագիայի և Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի շենքերը:

Մր Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործել է Խրիմյան դպրոցը: Այն կառուցվել է քաղաքացիների նվիրատվություններով:

Եվանգուլովայի դպրոցը տեղակայված է եղել ներկայիս «Արաքս» հյուրանոցի հյուսիսային մասնաշենքի տեղում:

Ներկայիս իրավաբանական խորհրդատվության շենքում տեղակայված է եղել ռուսական չորսդասյա դպրոցը, որտեղ սովորել են նաև Ավետիք Իսահակյանն ու Մերգեյ Մերկուրովը: Այստեղ կրթական ծրագիրը հիմնված էր ամերիկյան Դեյթոն Փլեն ուսուցման համակարգի վրա: Այս պատճառով քաղաքի բնակիչները շենքն անվանել են Դալտոն պլանի շենք:

Մյուս կրթօջախներից հարկ է նշել Մր Նշան եկեղեցուն կից գործող Սահակյանուշյան օրիորդաց դպրոցը (Աբովյան 121), Մր Աստվածածին եկեղեցուն կից գործող Արղության օրիորդաց դպրոցը (Կեցխովելի 16), Արաքսյանի մասնավոր դպրոցը (Ռուսթավելի 24):

*Հասարակական կառույցներ.* Ժողովրդական տուն (народный дом). Այս կառույցը, բազմաթիվ վերակառուցումներ կրելով, «ծառայեց» իբրև քաղաքային թատրոն, հետո՝ շինարարների պալատ, «Շիրակ» հեռուստաստուդիա և այլն: Շենքի նախնական տես-

քի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Դատելով փաստաթղթերից՝ այստեղ կազմակերպվել են գավառի և քաղաքի վերաբերող հասարակական միջոցառումներ, քատերական բեմադրություններ, ինչպես հայ թատրոնի հիսնամյակին նվիրված համադիտությունը՝ 1900թ. կամ 1912թ. Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի առաջնախաղը:

Հասարակական մյուս կառույցներից կարելի է նշել Քաղաքային ակումբի (Արովյան 135), բանկի և զանապետարանի (казна), Սպայական ակումբի շենքերը՝ կառուցված 1912թ. (Աճեմյան 4), փոստի գրասենյակը (Շչոբսի 2), քաղաքային բանտը: Քաղաքային ակումբի (Արովյան 135) առաջին հարկում գտնվող դեղատունը՝ բացված դեռևս Ալեքսանդրի ժամանակներից, գործում է առայսօր:

Յուրահատուկ են եղել քաղաքում կառուցված բաղնիքները՝ Վեքիլովների, Կոստանովների (Գևորգյան), Տեր-Մարտիրոսովների, «ցենտրալի» (կենտրոնական), Զիթոցոնց, ուռումների (հունական) և այլ: Պահպանվել են Կոստանովների (Գորկու 28, վերակառուցված է որպես ռեստորան-հարսանյաց սրահ) և Տեր-Մարտիրոսովների (Արովյան 133) բաղնիքների շենքերը:

Ալեքսանդրապոլը աղբյուրների քաղաք է եղել: Նրա «քառասուն ախարներից» մեծ մասի միայն անվանումներն են մնացել՝ Մոսոյի, Քյափանակցոնց, Մակարենց, Չաքեյենց, Քյալ Նիկոլի, Կարմիր: Մինչև օրս պահպանված միակ աղբյուրը Խալաթովների սեփական տան բակում է, ներկայումս՝ անօգտագործելի:

Արդյունաբերական օբյեկտներից կանգուն են Ծաղիկյանների Գարեջրի գործարանը, որը 2006 թ. վերականգնումից հետո շարունակում է աշխատել որպես գարեջրի գործարան, և մեխանիկական գործարանի (մեխգործարան) որոշ հատվածներ:

Առաջին համաշխարհային պատերազմը, Առաջին հանրապետության կայացման հյուծիչ ճիգերը և Հայաստանի խորհրդայնացումը լիովին փոխեցին Ալեքսանդրի կյանքը: Քաղաքի համար սկսվեց մի նոր, նախորդից բոլորովին տարբերվող ժամանակաշրջան: Փոխվեցին քաղաքի կերպարը, դիմագիծը և կրկին՝ անունը:

*Լենինական.* 1914-1921թթ. ընթացքում քաղաքական ելևէջների և բնական աղետների պատճառով Ալեքսանդրապոլի սոցիալական և տնտեսական կյանքը կտրուկ անկում ապրեց: Թուրքական ներխուժումները, հազարավոր զաղթականների առկայությունը, բազմաթիվ ռազմական ընդհարումները և վերջապես բոլշևիկյան Ռուսաստանի առաջին տարիների վարած քաղաքականությունը քաղաքը հասցրին ծայրահեղ վիճակի: Խորհրդայնացման գործընթացը լուրջ փորձություն եղավ քաղաքի բնակելի և արտադրական շենքերի համար:

Առաջին հարվածը քաղաքի կառույցներին հասցվեց անշարժ սեփականության բռնի վերաբաշխմամբ: Հոկտեմբերյան հեղափոխությունից ընդամենը մեկ ամիս հետո Լենինի նախաձեռնությամբ ընդունվեց «Աղքատների կարիքների թեթևացման համար հարուստների բնակարանների բռնագրավման մասին» օրենքը, չէրյալ համարվեց անշարժ գույքի նկատմամբ մասնավոր սեփականությունը: Շատ շուտով քաղաքում պետականացվեցին Ծատուրյանների օճառի, Ծաղիկյանների գարեջրի գործարանները և շատ ուրիշ արտադրական շենքեր: Տներում տեղավորում էին ռազմական և պետական գրասենյակներ: Գորկու 30 բնակելի շենքի նկուղներում (ներկայումս՝ «Գյումրի» ռեստորան) տեղավորվեց Էնկավեդեի (Ներքին գործերի ժողկոմ) ստորաբաժանումը. մասին ու սարսափի խորհրդանիշի վերածված այս կառույցի մասին դառն ու ծանր հիշողություններն առայսօր կենդանի են քաղաքում: Մեծ հարված հասցվեց ոչ միայն շենքերի ֆիզիկական վիճակին, այլև մարդկանց քաղաքացիական մտածելակերպին: Ահաբեկված հնարավոր հետապնդումներից՝ մարդիկ ոչնչացնում էին անցյալի հետ կապված փաստաթղթերը՝ լուսանկարներ, իրավական թղթեր, նամակներ և այլն:

Քաղաքական և տնտեսական քիչ թե շատ կայուն իրավիճակ հաստատվեց միայն 1924 թվականից հետո, երբ սկսեցին աշխատել խորհրդային տնտեսավարման մեխանիզմները: 1922թ. Լենինականում հիմնադրվեց տեքստիլ արդյունաբերությունը: Քաղաքի հյուսիսային՝ կառուցապատումից ազատ տարածքում կառուցվեցին առաջին տեքստիլ արտադրամասերը:

1926թ. հոկտեմբերի 22-ին քաղաքը ցնցեց հերթական երկրաշարժը, որը բավականին մեծ ավերածությունների պատճառ դարձավ: Այն հաստատեց նոր, հակասեյսմիկ շինարարական մեթոդների կիրառման անհրաժեշտությունը: Երկրաշարժից հետո

հանրապետությունում հայտարարվեց հակասեյսմիկ կառույցների իրականացման համար նախագծերի, կոնստրուկցիաների և հաշվարկների մրցույթ: Շինարարական կոնստրուկցիաների կատարելագործման, բետոնի և երկաթբետոնի կիրառման շնորհիվ հնարավոր դարձավ կառուցել երկու հարկը գերազանցող տներ: Այնուամենայնիվ շենքերի որոշ կոնստրուկցիաների, այդ թվում միջհարկային ծածկերի համար դեռևս երկար ժամանակ (մինչև 50-ական թվականները) կիրառվեց փայտը: Այդ տարիներին Հայաստանի գիտնականներն սկսեցին մշակել տուֆի կիրառման հնարավորությունները՝ պատերի շարքի, հատակների սալերի և նույնիսկ միջնորմների համար:

Ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև նոր քաղաքաշինական դոկտրինան՝ քաղաքի զարգացման ժամանակակից և իրատեսական առաջարկություններով: 1932-1936թթ. ճարտարապետ Մ.Մազմանյանը կազմեց Լենինականի գլխավոր հատակագիծը: Մինչ այդ քաղաքի կառուցապատումը իրականացվում էր Ա. Թամանյանի էսքիզային նախագծերով (ցավոք, չեն պահպանվել), որոնք 1927-28 թթ. լրամշակվել էին ճարտարապետ Գ. Չիսլիևի կողմից:

Հատակագծի գլխավոր գաղափարը խոշորացված բնակելի քաղամասերի ստեղծումն էր: Նախագծի համաձայն վերջնական փուլում ենթադրվում էր կառուցել մինչև 200 000 բնակչությամբ քաղաք: Այն կազմելու պահին քաղաքի կենտրոնը հիմնականում արդեն ձևավորված էր: Պետբանկի շենքը, «Հոկտեմբեր» կինոթատրոնը, Տեքստիլ կոմբինատի առաջին փուլը, մի քանի սեյսմակայուն բնակելի շենքեր արդեն կառուցված էին, ընթացքի մեջ էր քաղխորհրդի շենքի կառուցումը: Այս նախագծով կառուցապատվեց կենտրոնական հրապարակի մի հատվածը, Կիրովի և Արագածի փողոցները: Քաղաքը զարգանում էր դեպի հյուսիս՝ ստանալով սեպածև ձգված տեսք: Արդյունաբերությունը տեղավորվում էր քաղաքի կենտրոնական հատվածում:

1940-ական թվականներին կազմվեց նոր գլխավոր հատակագիծ (Գ. Դավթյան, Պ.Մանուկյան, Ս. Կարապետյան և Գ.Մուրզա, խորհրդատու՝ պրոֆեսոր Լ. Իլյին): Այս նախագծով քաղաքի գլխավոր կենտրոնի դիրքը պահպանվում էր: Հիմնական խնդիր էր դրվում՝ կապել կենտրոնը արդյունաբերական հատվածի և երկաթուղային հանգույցի հետ, քաղաքի միջին հատվածում կատարել որոշ վերակառուցումներ և այլն: Այս նախագծի համաձայն՝ կառուցվեցին Հաղթանակի պողոտան, Խաղաղության օղակը, կայարանամերձ հրապարակը, Թբիլիսյան խճուղին (Խրիմյան Հայրիկի փողոց), Ինտերնացիոնալի փողոցը (Տիգրան Մեծի պողոտա), Լենինի (Անկախության) հրապարակը, Կալինինի (Գ. Նժդեհի) պողոտան: Նախագծով հատակեցվեցին քաղաքի կանաչ գոտիները՝ քաղաքային այգին, Չերքեզի ձորն ամբողջությամբ և Գյումրի գետակի հունը:

Լենինականի զարգացման առաջին քայլերից էր մի շարք արդյունաբերական օբյեկտների կառուցումը: Լենինականում կառուցված Մանվածքային ֆաբրիկան (1924թ., ճարտարապետ՝ Գ. Սարգսյան) այդ տարիներին հանրապետությունում իրականացված նշանավոր կառույցներից մեկն էր ոչ միայն թեև արդյունաբերության զարգացման հեռանկարի, այլև կառուցողական-շինարարական նորույթի կիրառման առումով: Արդյունաբերական շենքերից այն առաջինն է, որտեղ մոնոլիտ երկաթբետոնից իրականացվեցին անհեծան ծածկեր:

30-ական թվականների սկզբին սկսվեց Հայաստանի խոշորագույն արտադրական կառույցներից մեկի՝ Տեքստիլ կոմբինատի կառուցումը: Այստեղ նույնպես կիրառվեց նորարական՝ շեղային տիպի ծածկի կոնստրուկցիա, որտեղ ծածկի սալերի թեք սղոցածև տեղադրման շնորհիվ արտադրամասի ամբողջ տարածքը ապահովվում էր արևային լուսավորությունով:

1926թ. երկրաշարժից հետո սուր էր դրված նոր պահանջներին համապատասխանող բնակելի տների կիրառման հարցը: Նպատակ էր դրված մշակել ոչ միայն սեյսմակայուն, այլև ճարտարապետական նոր հորինվածք ունեցող շենքեր քաղաքներում կառուցելու համար: Եթե 20-ական թվականների սկզբներին կառուցվում էին 1-2 բնակարանոց միահարկ բնակելի տներ, ապա նույն տասնամյակի վերջին նախագծվեցին նոր, բազմաբնակարան, երկու և ավելի հարկ ունեցող քաղաքային տիպի բնակելի տներ: Այս կարգի առաջին տները Լենինականում կառուցվեցին 1926թ. (ճարտարապետ՝ Չիսլիև): Հետաքրքիրն այն է, որ բաց աստիճանավանդակներով, սլաքածև պա-

տուհաններով երկհարկանի այս տները մեծ հաջողությամբ ներգրավվեցին Ալեքսանդրապոլի պատմական միջավայր (Գայի 2-4):

Բնակարանաշինությունը Լենինականում բոլորովին նոր մակարդակի հասավ տեքստիլագործների համար կառուցված բնակելի տների շնորհիվ (ճարտարապետ՝ Գ.Սարգսյան): Խոշոր, ուղղանկյուն կվարտալների պարագծով կառուցված եռահարկ բնակելիները, հանդիսանալով նոր՝ բազմաբնակարանոց տան տիպ, զարմանալի ներդաշնակությամբ կապվեցին քաղաքի ավանդական ճարտարապետական ոճի հետ:

30-ական թվականների բնակարանաշինության իրական գլուխգործոցը դարձավ ներկայիս Ռիժկովի 6 հասցեում գտնվող բնակելի տունը (ճարտարապետ՝ Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետ Հ. Տեր-Հովհաննիսյան-Քաջազունի): Կառույցը զարմացնում է ճարտարապետական լուծումների արտակարգ բարձր որակով, այն գեղեցիկ է թե՛ իր ամբողջության, թե՛ առանձին մանրամասների մեջ: Հասարակական կառույցներ

Հասարակական կառույցներից կարևորագույնները՝ «Հոկտեմբեր» կինոթատրոնը, «Կումայրի» հյուրանոցը և Պետրանկի շենքը իրականացվել են ճարտարապետ Գ. Սարգսյանի նախագծերով: Գարտարապետական հետաքրքիր հորինվածք ունեցող այս շենքերը համալրեցին կենտրոնական հրապարակի ճարտարապետական անսամբլը: Իր ծավալային լուծումներով առանձնացավ նաև քաղխորհրդի շենքը (ճարտարապետ Գ.Քոչար): Արժանի են հիշատակման նաև կենտրոնական այգում գտնվող, նախկին դրամատիկ թատրոնի վերակառուցումը, տեքստիլագործների պալատը, ինՖեկցիոն հիվանդանոցի ներկայումս կիսավեր շենքը և 30-ականների վերջին կառուցված երկաթուղայինների ակումբը:

Մեծ հայրենական ընդհատեց Խորհրդային Հայաստանում լայնածավալ շինարարական աշխատանքները, և քաղաքաշինական ակտիվ գործընթացը վերականգնվեց միայն 50-ական թվականներին: Այս տարիներին որպես քաղաքաշինության զարգացման հիմնական հեռանկարային ուղղություն ընտրվել էր շինարարության ինդուստրացումը, իսկ քաղաքաշինական գիտության կողմից առաջ էր քաշվել նոր, այսպես կոչված, «ազատ» կառուցապատման տեսակետը: Լենինականի կառուցապատումն ընթացավ համաձայն մանրամասն հատակագծման նախագծերի, որոնց համար հիմք եղավ քաղաքի 1940թ. գլխավոր հատակագիծը: 1947թ. վերակառուցվեց Կալինինի պողոտան (Գարեգին Նժդեհ), որը կապում է կենտրոնը Տեքստիլ կոմբինատի թաղամասի հետ: Կառուցապատվեց և բարեկարգվեց Խաղաղության օղակը: Կարգավորվեց օղակի ներսում գտնվող կիսաշրջանաձև այգին: Կառուցապատվեց Լենինի պողոտան (Տիգրան Մեծ), որը կապում է երկաթուղային կայարանը Լենինի (Անկախության) հրապարակի հետ: Լայնացվեց Գորկու փողոցը: Այս շրջանի առավել նշանակալից քաղաքաշինական ծրագիրը Ստալինի (Հաղթանակի) պողոտայի իրականացումն էր: Մրա միջին հատվածով անցնող գետակի հոսքն ուղղվեց ստորգետնյա ջրատարի մեջ: Պողոտայի կենտրոնական գոտում կառուցվեց 30մ լայնությամբ ծառուղի՝ պարսպապատված թուջից ճաղաշարով: Ծառուղու հյուսիսային կողմում տեղադրվեցին քարե վեհաշունչ սյուներ, որոնք հենարան էին թուջից ձուլած ջահերի համար:

Լենինի (Անկախության) հրապարակի միջին հատվածում 1954 թ. տեղադրվեց Լենինի արձանը (քանդակագործ՝ Մ.Մերկուրով, ճարտարապետ՝ Մ.Գրիգորյան): Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ կատարվեցին Ս. Շահումյանի անվան զբոսայգում՝ նրա պարագծով կառուցվեց թուջե ձուլած դարպասներով և ներկառուցված աղբյուրներով քարից պարիսպը: Ծառատնկումներ իրականացվեցին Տեքստիլ կոմբինատի անտառակում: Սակավածառ քաղաքի պայմաններում այս միջոցառումների կարևորությունն անհնար է գերազանահատել: Այս շրջանում Լենինի (Տիգրան Մեծ) պողոտայի վրա կառուցվեցին Տրիկոտաժի ֆաբրիկայի և Տեքստիլ կոմբինատի հանրակացարանները, քաղխորհրդի գործկոմի կոմունալ բաժնի և Տեքստիլ կոմբինատի նոր բնակելի շենքերը:

50-ական թվականների վերջերին շինարարությունը հիմնականում իրականացվում էր ամբողջական բնակելի շրջանների (մասիվների) համալիր կառուցապատման եղանակով: Մա նշանակում էր, որ բացի բնակելիներից թաղամասերում կառուցվում էին նաև առևտրի և կենցաղսպասարկման, կրթական, մշակույթի և այլ նշանակու-

թյան շենքեր: Լենինականի հետագա զարգացումը կարգավորելու համար 1959թ. կազմվեց նոր գլխավոր հատակագիծը, որը գործեց մինչև 1988թ.: Այս փաստաթուղթը ապահովում էր քաղաքի հետագա աճը դեպի հյուսիս և հարավ ընկած նոր տարածքների հաշվին: Այն նախատեսում է բնակելի, հասարակական և արդյունաբերական նշանակության կառուցապատում, հանգստի և կանաչ նոր գոտիների ստեղծում: Ծնունդ առան Անտառային, Նորավան, Կազաչի պոստի բնակելի թաղամասերը, հյուսիսարևմտյան, հարավային արդյունաբերական համալիրները, Կոմերիտմիության այգին և այլն:

60-ական թվականների վերջին սկզբից Երևանում, շուտով նաև Լենինականում սկսվեց բարձրահարկ՝ 9-14-հարկանի շենքերի կառուցումը: Սրանք իրականացվում էին տարբեր կոնստրուկտիվ լուծումներով՝ հավաքովի երկաթբետոնե կմախքով և կախովի պատերով, տարածական հավաքովի և մոնոլիտ կմախքով, հարկերի բարձրացման մեթոդով, խոշորապանել:

1970-ական թվականներին, երբ մասսայական շինարարությունը հասել էր իր զագաթնակետին, բացահայտ դարձան քաղաքաշինական գործընթացի մի շարք լուրջ թերություններ: Սրանցից էին՝ կառուցապատման միջավայրի ցածր գեղագիտական մակարդակը, շենքերի նույնատիպությունը, ինժեներական ապահովման և բարեկարգման անբավարարությունը և այլ խնդիրներ: Նորակառույցներն իրականացվում էին ընդամենը մի քանի տիպի շենքերով՝ ստեղծելով բոլորովին անդեմ, միջակացված, տվյալ բնակավայրի հետ ոչնչով չկապվող միջավայր: Սա առավել վտանգավոր էր պատմական քաղաքների ուրույն դիմագիծը կորցնելու առումով: Տիպային շենքերը մխրճվում էին պատմական դարավոր ժամանակահատվածում ստեղծված կառուցապատման մեջ: Շատ դեպքերում սրանց կառուցումը զուգորդված էր դրանց տեղափոխելու համար պատմական արժեքավոր շինությունների իրացման հետ: Առանց բավարար հիմնավորման՝ այս տարիներին քանդվեցին XIX-XX դդ. ժողովրդական տների, պաշտամունքային, արտադրական և կենցաղային կառույցների լավագույն նմուշներ:

Մասսայական շինարարության պայմաններում Լենինականում հաջողվեց ստեղծել մի քանի նշանակալից քաղաքաշինական հանգույցներ. Արագած փողոցի համալիր կառուցապատումը (ճարտարապետ՝ Գ. Մուշեղյան), որ իրացվեց մի կողմից՝ սղոցած և բազմանկյուն բնակելի, իսկ մյուս կողմից՝ ազատ կանգնած ուղղանկյուն բլոկ-տներով:

Հաջողված էր նաև զույգ կոռպերատիվ բնակելի տների տեղադրումը Մայաթ-Նովա փողոցի սկզբնամասում (ճարտարապետ՝ Գ. Մուշեղյան): Սրանք առանձնահատուկ էին իրենց հաջողված դիրքով և բնակարանների հորինվածքով (շենքերը չեն պահպանվել): Հաջողված կարելի է համարել Կիրովի (Ռիժկովի) փողոցի 1979 թ. իրականացված վերակառուցումը (ճարտարապետ՝ Ս. Քալաշյան):

1960-ական թվականներից հետո Լենինականում կառուցվեցին մի շարք հասարակական շենքեր: Սրանցից էր դրամատիկական թատրոնի շենքը (ճարտարապետներ՝ Ս.Սաֆարյան, Ռ. Բաղդասարյան): Այս տարիներին Լենինականում կառուցված հուշակոթողներ են «Հայաստան» հուշահամալիրը (քանդակագործներ՝ Ա.Սարգսյան, Ե.Վարդանյան, ճարտարապետ՝ Ռ.Եղոյան), Անի հազարամյակին նվիրված հուշակոթողը (ճարտարապետներ՝ Ռ.Եղոյան, Հ.Ջիվանյան): Տրանսպորտային կարևոր և ճարտարապետական հետաքրքիր լուծումներ ունեցող շենքերից հարկ է նշել նոր երկաթուղային կայարանը (ճարտարապետ՝ Ռ.Եղոյան) և օդանավակայանը (Գ.Մուշեղյան, Ռ. Հասրաթյան, Լ. Խրիստաֆորյան):

1980-ականների մախօրեին Խորհրդային իշխանության մշակութային քաղաքականության մեջ ձևավորվեցին ազգային մշակույթի, այդ թվում պատմաճարտարապետական ժառանգության հետ կապված նոր, առաջավոր միտումներ: 1980 թ. Հայաստանի կառավարության որոշումով ստեղծվեց «Կուռայրի» պետական արգելոց-թանգարանը: Հաստատվեցին արգելոցի սահմանները, պահպանման ենթակա կառույցների ցանկը և կառավարման համակարգը:

Իր շուրջը միավորելով կառավարման, գիտական, արվեստի, նախագծային և շինարարական ոլորտների մտավորականությանը՝ այս կառույցը կարողացավ իրականացնել քաղաքի մեծաքանակ հուշարձանների պահպանումը, աղապտացիան (հարմարումը) և վերականգնումը: Արգելոցի կարևորագույն խնդիրներից էր նաև կրթական

և դաստիարակչական առաքելությունը, որի արդյունքում քաղաքի բնակչությունն իր արժեքային համակարգում ընդունեց և պահպանեց պատմական, մշակված և հարդարված միջավայրում բնակվելու դեպքում հատուկ սահմանափակումների ենթարկվելու անհրաժեշտությունը:

Քաղաքաշինական, վերականգնողական, բնակլիմայական, բարեկարգման, տեխնիկական վերագինման և շատ ու շատ այլ խնդիրներ անավարտ մնացին 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի պատճառով:

1987թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտը (ճարտարապետներ՝ Ա.Միրզոյան-յան, Ս.Քալաշյան) սկսել էր մշակել Լենինական քաղաքի նոր գլխավոր հատակագիծը: Ըստ նախագծի՝ նոր կառուցապատումը պետք է ընթանար քաղաքից որոշակի հեռավորության վրա գտնվող նոր քաղաք-արբանյակներում: Վերջիններս մայրուղիների ցանցով կապված պիտի լինեին միմյանց և քաղաքի կենտրոնի հետ: Ընտրվեց առաջին արբանյակային քաղաքի՝ «Նարեկ» թաղամասի դիրքը: Այս նախագիծը, ցավոք, ընդհատվեց Սախտակի երկրաշարժի հետևանքով և այլևս չիրականացավ:

Գյումրին՝ որպես ամբողջական բնակավայր, 88-ի Աղետից հետո հայտնվեց քաղաքաշինական լրջագույն խնդիրների առջև:

## АЛЕКСАНДРОПОЛЬ-ЛЕНИНАКАН: ГРАДОСТРОИТЕЛЬНЫЙ ОБЛИК

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Мирзоян* \_\_\_

В статье описываются градостроительные и архитектурные особенности города Гюмри, возникшие в течение двух важнейших исторических периодов городского становления: Александрополь и Ленинанкан.

Рассматривается влияние европейской/русской системы ценностей на становление Александрополя и особенности Ленинанкана как советского индустриального города.

## Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ԳՅՈՒՄՐԻ-ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX-ի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Գարսակզբին ռուսների տիրապետության տակ անցնելն էական ազդեցություն ունեցավ բնակավայրի էթնոժողովրդագրական պատկերի ձևավորման վրա: Ռուսական զորային ուժի ներկայության շնորհիվ հուսարի դառնալով՝ Գյումրին սկսեց դեպի իրեն ձգել պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող մի անվանացանկի համաձայն՝ միայն Կարսի փաշայությունից 60-ից ավելի ընտանիքներ հաստատվեցին Գյումրիում 1807-1814թթ. ընթացքում:<sup>1</sup> Դեպի ռուսական տիրույթներ և մասնավորապես Գյումրի արտագաղթի ուժեղացումից անհանգստացած՝ 1814թ. Կարսի Մահմադ փաշան, հիմք ընդունելով 1812թ. Բուխարեստի ռուս-թուրքական պայմանագիրը, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը, գեներալ Ռադիշչևից պահանջեց իր փաշայության բնակիչներին հետ ուղարկել նախկին բնակության վայրերը: Մակայն հետ վերադառնալու ցանկություն հայտնեցին Գյումրիում հաստատված ընտանիքներից միայն յոթը:<sup>2</sup>

Թուրքիայից, հատկապես Կարսի փաշայությունից դեպի Գյումրի հայերի ներգաղթը նոր թափ ստացավ 1822թ., երբ պարսկական 12000-ոց բանակը պաշարեց Կարսը: Այդ օրերին ավելի քան 500 ընտանիք արևմտահայեր անցան ռուսական տարածքներ և հաստատվեցին Գյումրիում:<sup>3</sup>

1823 թ. միառժամանակ վերջ դրվեց հայերի զանգվածային գաղթին դեպի ռուսական տիրույթներ: Շուրջ քառորդ դար տևած ներհոսքի շնորհիվ Գյումրու ազգաբնակչությունը զգալի համարում ստացավ և 1824-1825թթ. արդեն ուներ 503 ընտանիք կամ ավելի քան 3000 մարդ:<sup>4</sup> Մակայն, բնակավայրի բնակչության թվի վերելքը երկարատև չեղավ: 1826թ. սկզբներին ռուս-պարսկական հարաբերությունների ծայրաստիճան արմը հանգեցրեց նոր պատերազմի, որի արդյունքում (խաղաղ բնակչության շրջանում գերեվարություններ, թալան, բնակչության զանգվածային արտագաղթ) Գյումրու բնակչության թիվը 1825թ. համեմատությամբ նվազեց գրեթե 5 անգամ՝ հասնելով 100 ընտանիքի:

Բնակավայրը նորից աշխուժացավ միայն 1826-1829թթ. հետո, երբ օգտվելով ցարական կառավարության ընձեռած արտոնություններից ու ստեղծված հնարավորությունից, շուրջ 1250 ընտանիք գաղթական արևմտահայեր հաստատվեցին այստեղ՝ Գյումրու բնակչության թիվը հասցնելով 1350 ընտանիքի կամ 7250 մարդու, որոնցից հայեր էին 96%-ը, պարսիկներ՝ 3%-ը, հույներ՝ 1%-ը:<sup>5</sup> Համեմատության համար նշենք, որ Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքում՝ Երևանում, 1829-1832թթ. բնակչության թվից (2751 ընտանիք) հայեր էին միայն 34%-ը, իսկ մահմեդականներ՝ 66%-ը:<sup>6</sup>

Հայահավաքման գործընթացը Գյումրիում շարունակվեց մաս հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ հարյուրավոր պարսկահայ և արևմտահայ գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, տեղափոխվեցին Գյումրի:<sup>7</sup> XIXդ. 30-ական թվականների վերջին Գյումրու բնակչու-

<sup>1</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22 ա, վավ. 86:

<sup>2</sup> АКАК, т. 5, Тифлис, 1873, стр. 816.

<sup>3</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, թթ. 2-3:

<sup>4</sup> Коцебу М. Е., Описание вторжения персиян в Грузию в 1826г., Кавказский сборник, т. XXII, Тифлис, 1901, стр. 19.

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, թթ. 1-274, գործ 84, թթ. 1-380:

<sup>6</sup> С. З е л и н с к и й, Город Эривань, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 1, отд. 1, Тифлис, 1881, стр. 40-41.

<sup>7</sup> ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 447, թթ. 32-33: Քաջբերունի, Ղարաքիլիսա, «Մեղու Հայաստանի», 27 հունվարի, N 3, Թիֆլիս, 1873, էջ 3-4:

թյան թիվը հասավ 1810 ընտանիքի, որից հայեր էին 1730 ընտանիքը (9000 մարդ) կամ 95.6%-ը, պարսիկներ՝ 48 ընտանիքը (350 մարդ) կամ 2.7%-ը և հույներ՝ 32 ընտանիքը (150 մարդ) կամ 1.7%-ը:<sup>8</sup>

Քաղաք հռչակվելը, ապա կարճ ժամանակ անց գավառակներուն դառնալը էական դեր խաղացին Գյումրի-Ալեքսանդրապոլի բնակչության թվաքանակի հետագա համաչափ և անընդհատ աճի գործում: Նրա XIX դարի 40-ական թթ. էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերի վրա ինչ-որ չափով ազդեցություն կարող էր ունենալ նաև ժամտախտի համաճարակը, որ դեռ 30-ական թվականների վերջերին մոլեզմուն էր Վրաստանի հարավային սահմաններձ շրջաններում, ապա տեղափոխվեց Արևելյան Հայաստանի տարածք և ընդգրկեց նաև Ալեքսանդրապոլի գավառն ու հատկապես գավառակներունը: 1840թ. աշնան կեսերին համաճարակն այստեղ ընդունել էր բավականին մեծ մասշտաբներ, և նահանջեց ու դադարեց միայն ցուրտ ձմեռան գալստյան հետ՝ պատճառելով հարյուրից ավելի զոհեր: Հայտնի է, որ այն Ալեքսանդրապոլում գերազանցապես տարածված է եղել ռուսական զինվորականության շրջանում, և զոհերի մասին տվյալները մեծամասամբ վերաբերում են Ալեքսանդրապոլում կանգնած ռուսական զորքերին և ոչ թե քաղաքային բնակչությանը:<sup>9</sup> Ընդհակառակը, XIX դարի ամբողջ 40-ական թվականների ընթացքում քաղաքային բնակչության թվաքանակը համաչափորեն աճում էր: Այսպես, եթե համաճարակի նախօրեին քաղաքն ուներ 1810 ընտանիք բնակչություն, ապա արդեն 1848թ. Ալեքսանդրապոլի բնակչության թիվը հասավ 1984 ընտանիքի կամ 11000 մարդու, որից հայեր էին 1896 ընտանիքը (10540 մարդ) կամ 95.5% (այդ թվում՝ 25 ընտանիք կամ 140 մարդ հայ կաթոլիկներ), պարսիկներ՝ 59 ընտանիքը (340 մարդ) կամ 3%-ը, իսկ հույներ՝ 29 ընտանիքը (120 մարդ) կամ 1.5%-ը: Այսինքն՝ 8-9 տարիների ընթացքում քաղաքի բնակչության թիվն ավելացել էր 1650 մարդով, որից 1300-ը բնական աճի արդյունք էր, 120 մարդ Ալեքսանդրապոլ էր տեղափոխվել համանուն գավառի գյուղերից, 100 մարդ՝ Ռուսական կայսրության տարբեր շրջաններից և 130-ը՝ Թուրքիայից:<sup>10</sup>

Քաղաքի բնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ խախտվեց միայն XIX դարի 50-ական թթ. կեսերին, երբ ցարական կառավարությունը մի քանի հետաձգումներից ու անհաջող փորձերից հետո վերջապես իրագործեց Անդրկովկասում մեծաթիվ ռուս զաղթականների՝ հիմնականում աղանդավորների վերաբնակեցնելու նախօրոք մշակած ծրագիրը, որով Սևանա լճի ավազանի, Ալեքսանդրապոլի գավառի և Լոռվա դաշտի գյուղական շրջաններից բացի, փոքր թվով աղանդավորների՝ գերազանցապես արհեստավորների տեղավորեցին նաև Ալեքսանդրապոլում: Իհարկե, դա որևէ էական ազդեցություն չունեցավ քաղաքի էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերի վրա: Ալեքսանդրապոլը պահպանեց իր նախկին հայեցի դեմքը, իսկ բնակչության թիվը շարունակեց աճել համաչափորեն: Արդյունքում, եթե 1848թ. Ալեքսանդրապոլի գավառը ռուսներով վերաբնակեցնելու նախագիծը կազմելու նախօրեին Ալեքսանդրապոլը նորաստեղծ Երևանի նահանգում իր մարդաշատությամբ Երևանից հետո երկրորդն էր և առաջինն իր բնակչության միատարրությամբ (հայեր էին 95,5%-ը)<sup>11</sup>, ապա 1859-1860թթ.՝ վերոհիշյալ ծրագրի իրագործման առաջին տասնամյակի վերջին, քաղաքի բնակչության թիվը հասավ 2600 ընտանիքի կամ 13000 մարդու: Մրա համեմատությամբ Ալեքսանդրապոլում հայտնված առաջին ռուս վերաբնակները՝ ընդամենը 16 ընտանիք (93 մարդ), չնչին թիվ էր, որ կազմում էր քաղաքի ընդհանուր բնակչության 0,06%-ը: 1860թ. հայեր էին քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 12290 մարդ (94,4%-ը), պարսիկներ՝ 3,7%-ը, հույներ՝ 1%-ը, հրեաներ՝

<sup>8</sup> ՀՄԱ Ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, թթ. 1-274, գործ 84, թթ. 1-380:

<sup>9</sup> Մինչև XIX դարի 50-ական թվականներն Անդրկովկասում բռնկված ժամտախտի և խոլերայի համաճարակների մասին մանրամասն տե՛ս Ա. Երիցով, *Чума в Закавказьи, (Исторический очерк)*, Тифлис, 1879; Նոյնի, *История холерных эпидемий в Закавказьи*, Тифлис, 1872; АКАК, т. 7, Тифлис, 1878, стр. 85-88.

<sup>10</sup> ՀՄԱ Ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97, թթ. 1-282:

<sup>11</sup> "Кавказский календарь на 1850 год", Тифлис, 1849, отд. III 33-34.

0.3%-ը: Այսինքն՝ 10-11 տարիների ընթացքում քաղաքային բնակչության թիվն ավելացել էր 2000 մարդով:<sup>12</sup>

Քաղաքային բնակչության թվաքանակի համաչափ աճը շարունակվեց նաև դարի երկրորդ կեսին: Այսպես, 1873թ. անցկացված կամերալ ցուցակագրման համաձայն՝ Ալեքսանդրապոլում ապրում էր 3526 ընտանիք կամ 19980 մարդ, որից հայեր էին 19000-ը կամ 94.6%-ը, իսկ քաղաքի բնակչության թիվը 1859-1860թթ. համեմատությամբ ավելացել էր 941 ընտանիքով (6970 մարդով):<sup>13</sup>

1877թ. սկսած ռուս-թուրքական նոր պատերազմը (1877-1878թթ.) թվով 4-րդն էր XIX դարի ընթացքում: Պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանը տեր դարձավ Բաթումի, Արդահանի և Կարսի շրջաններին (Կովկասյան փոխարքայության մեջ իբրև առանձին վարչական միավոր կազմվեց Կարսի մարզը՝ իր Կարսի, Արդահանի, Կադզվանի և Օթթիի շրջաններով): Ալեքսանդրապոլի գավառը այլևս դադարեց սահմանամերձ շրջան լինելուց, բնականաբար նվազեց նաև քաղաքի երբեմնի ստրատեգիական կարևորագույն նշանակությունը, ինչն ուղղակիորեն իր ազդեցությունը թողեց նաև Ալեքսանդրապոլի էթնիկ կազմի և ժողովրդագրական վիճակի վրա: Դա պարզ երևում է 1886թ. Անդրկովկասում անցկացված նոր աշխարհագրի տվյալներից, համաձայն որոնց՝ Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ ընդամենը 3825 ընտանիք կամ 24230 մարդ, որից 22910-ը կամ 95.5%-ը՝ հայեր էին, 80-ը կամ 0.4%-ը՝ ռուսներ, 290-ը կամ 1.6%-ը՝ հույներ, 22-ը կամ 0.04%-ը՝ լեհեր, 880-ը կամ 2.3%-ը՝ պարսիկներ, 33-ը կամ 0.1%-ը՝ վրացիներ և 13-ը կամ 0.06%-ը՝ հրեաներ: Քաղաքի բնակչությունը նախորդ 13 տարիների ընթացքում չնայած ավելացել էր 4254 մարդով, սակայն այդ տարիներին քիչ չէին նաև Ալեքսանդրապոլից (հիմնականում Կարսի մարզի ուղղությամբ) հեռացողները՝ ավելի քան 1000 մարդ (մոտավորապես 200 ընտանիքներ):<sup>14</sup>

1897թ. համառուսաստանյան մարդահամարն արձանագրեց, որ Ալեքսանդրապոլ քաղաքը իր 30616 բնակչով և կազմի միատարրությամբ առաջինն էր Երևանի նահանգի քաղաքների մեջ:<sup>15</sup> 1892թ. համեմատությամբ (25990 մարդ) քաղաքի բնակչությունն ավելացել էր ավելի քան 20%-ով: Հայերը կրկին բնակչության ճնշող մեծամասնությունն էին՝ 21771 մարդ կամ 71% (Նահանգային կենտրոն Երևանն ուներ 29006 մարդ բնակչություն, որից հայեր էին միայն 43.2%-ը): Քաղաքային բնակչության մնացած 29%-ը բաժանվում էր հետևյալ կերպ. 13.2%-ը ռուսներ էին (վերջիններիս թվի ավելացումը գերազանցապես պայմանավորված էր մարդահամարում ռուսական բանակային ստորաբաժանումների հաշվառմամբ, նաև Թիֆլիս-Կարս երկաթգծի կառուցմամբ), 15.8%-ը՝ այլազգիներ (մոտ 20 ազգությունների ներկայացուցիչներ):

1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարը մանրամասն տեղեկություններ էր ընդգրկում նաև Ալեքսանդրապոլի ազգաբնակչության կրթական մակարդակի և գրագիտության վերաբերյալ: Այսպես, քաղաքում կար 10144 գրագետ մարդ, որից 29-ը ստացել էր համալսարանական, 6-ը՝ բարձրագույն տեխնիկական, 30-ը՝ հատուկ միջնակարգ, 126-ը բարձրագույն զինվորական և 689-ը՝ ուսումնարանական: Վերջապես մարդահամարը հետաքրքիր տեղեկություններ էր պարունակում նաև քաղաքային բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ. ազնվականական դաս՝ 1111 մարդ, հոգևորական դաս՝ 302, վաճառականների դաս՝ 363, արհեստավորներ և մանր առևտրականներ՝ 20240, գյուղացիներ՝ 7999, այլապատասխաններ՝ 462 և այլ դասերի ներկայացուցիչներ՝ 139 մարդ:

Փաստորեն, XIX դարի 30-ական թվականների կեսերից, չնայած իր նորաստեղծ քաղաք լինելու հանգամանքին, Գյումրի-Ալեքսանդրապոլը դարձավ ամենահայեցի ու միատարր բնակչությամբ քաղաքն ամբողջ Անդրկովկասում, իսկ դարավերջին՝ նաև ամենամարդաշատը Երևանի նահանգում:

<sup>12</sup> ՀՄՍ Ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 120, թթ. 1-520:

<sup>13</sup> Նույն տեղում, գործ 184, թթ. 1-760:

<sup>14</sup> Նույն տեղում, գործ 241, թթ. 1-1668:

<sup>15</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., Эриванская губерния, кн. 71, СПб., 1905.

Քաղաքային բնակչության թվաքանակի համաչափ և անընդհատ աճը շարունակվեց նաև XX դարի առաջին տասնամյակում տարիների ընթացքում: Վիճակը չփոխվեց մոլորակ 1908-1914թթ., երբ մեծ թվով շիրակցիներ և հատկապես արևմտահայերը տեղափոխվեցին Ամերիկա:<sup>16</sup> Ավելին, մոլորակ 1908-14թթ., համեմատած մախորդ ժամանակաշրջանների հետ, նկատվեց բնակչության թվի կտրուկ աճ (հիմնականում ի հաշիվ գյուղերից տեղափոխվածների): Եթե 1897թ. Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ 30616 բնակիչ, ապա 1911թ. քաղաքի բնակչության թիվը հասավ 33723 մարդու, 1914թ.՝ 51300 մարդու, իսկ արդեն 1916թ.՝ նաև 51871 մարդու:

1914թ. օգոստոսի 1-ին բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքական իշխանությունները պատերազմական իրավիճակը համարելով «Մեծ Թուրանի» ճանապարհին ընկած հայկական խոչընդոտն անաղմուկ վերացնելու հարմար առիթ, անցան մի ողջ ժողովուրդ իսպառ բնաջնջելու հրեշավոր ծրագրի իրագործմանը, մասնավոր, որ դրա համար նախապատրաստել էր և՛ ծրագիր, և՛ մարդասպանների ջոկատներ, և՛ աշխարհի հասարակական կարծիքի առջև արդարանալու հնարքներ:

Ոճրի ծրագիրը գործողության մեջ դրվեց 1915թ. գարնանից: Օգտագործելով պատերազմական իրադրությունը՝ իթթիհատական դահիճները նախ հաշվեհարդար տեսան թուրքական բանակ զորակոչված 18-45 տարեկան հայ տղամարդկանց հետ: Ապա հոշոտվեց արևմտահայ մտավորականությունը, իսկ հրեշավոր ծրագրի երրորդ փուլն եղավ անգն ու անպաշտպան հայ բնակչության (հիմնականում կանանց, երեխաների ու ծերերի) տեղահանումն ու բնաջնջումը:

Հսկայական էին արևմտահայության մարդկային կորուստները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Թուրքական զարդարարական քաղաքականությանը զոհ գնաց ավելի քան 1500000 մարդ: Աննախադեպ ծավալներ ստացավ արտագաղթը (միայն Կովկաս անցածների թիվը հասավ 300-350000):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ալեքսանդրապոլի գավառը և հատկապես Ալեքսանդրապոլ քաղաքը ապաստան դարձան տասնյակ հազարավոր եղեռնապուրծ հայերի համար: Նրանց մի մասը տեղակորվեց գավառի գյուղերում, իսկ մեծ մասը՝ Ալեքսանդրապոլում: Թեմական առաջնորդ Արտակ վարդապետի Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ներկայացրած տվյալների համաձայն՝ 1915թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ քաղաքում արդեն հաստատվել էր 6844 գաղթական, որից 2604-ը (այդ թվում 435 տղամարդ, 968 կին և 1201 երեխա)՝ «Եղբայրական օգնության» 12 հանրակացարաններում, իսկ 4240-ը (այդ թվում 701 տղամարդ, 1582 կին և 1957 երեխա)՝ մասնավոր տներում:<sup>17</sup> Եվս 3600 մարդ Ալեքսանդրապոլ գաղթեց (այդ թվում 600 հույներ) մինչև տարեվերջ: Հաջորդ մեկ-երկու տարիների ընթացքում քաղաքում գաղթականների թիվը հասավ 25754 մարդու:

Ընդհանուր առմամբ 1915-1918թթ ընթացքում Ալեքսանդրապոլն ընդունեց ու ճանապարհեց ավելի քան 95000 գաղթականների: Քաղաքի հասարակությունը սատար կանգնեց եղեռնից մազապուրծ իր հայրենակիցներին և հնարավորության սահմաններում փորձեց մեղմել նրանց վիճակը, մինչև որ ինքը ևս բռնեց գաղթի ճամփան:

1918թ. մայիսին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլ քաղաքն ու համանուն գավառի մեծ մասը: Շարունակելով արևմտահայության նկատմամբ արդեն իրականացրած թալանի ու կոտորածի քաղաքականությունը, թուրքերը հատկապես կազմակերպված ծրագրով իրականացրին երիտասարդ, կարող ուժի ոչնչացումը՝ չմոռանալով նաև իրենց հանցագործությունները կոծկելու համար՝ թաքցնել դիակները:<sup>18</sup> Թուրքական զորքերի հեռանալուց հետո քաղաքի տարբեր հատվածներում, ինչպես նաև մարքագի, կայագորի պետի, քաղաքի պարետի և միլիցիայետի ապրած տների նկուղներում մեծ թվով սպանված մարդիկ գտնվեցին: «Այդ տների նկուղներում, - ասված է Քաղաքային Դումայի զեկուցագրերից մեկում, - գտնվել են այնպիսի տանջալից մահի նշաններով մարդկանց դիակներ, որոնց միայն տեսնելուց մարդու

<sup>16</sup> Վ. Միքայելյան, Հայկական արտագաղթերը 6-19-րդ դարում, Էջեր հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1996, էջ 21:

<sup>17</sup> ՀԱՍ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, ք.3-5:

<sup>18</sup> ՀԱՍ ֆոնդ 131, ցուցակ 1, գործ 18, ք. 16:

արյունը կսառչեր».<sup>19</sup> Թուրքերի աստելությունը առանձնակի դրսևորում ուներ Ալեքսանդրապոլում գտնվող գաղթականների նկատմամբ, որոնց արհամարհական «նշեցի աղամ» (նշեցի մարդ) էին անվանում:

1918 թվականի թուրքական օկուպացիայի արդյունքում ոչ միայն նվազեց Ալեքսանդրապոլի բնիկ ազգաբնակչության թիվը, այլև փոխվեց բնակչության էթնիկ կազմը: Փորձելով փրկվել թուրքական սարսափներից՝ քաղաքային բնակչության մի ստվար զանգված փախավ, իսկ սրանց փոխարեն հայտնվեցին ուրիշները, ընդ որում ոչ միշտ հայեր (Ըստ ՀՀ արտգործնախարարության ունեցած տվյալների՝ 1918թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ Ալեքսանդրապոլ քաղաքից և համանուն գավառից փախածների ընդհանուր թիվը անցնում էր 45000-ը)<sup>20</sup>: 1918թ. դեկտեմբերին ՀՀ արտգործնախարարությանն ուղղված զեկուցագրում վերոբերյալի մասին Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Գ.Խոյեցյանը գրում էր. «Թուրքական օկուպացիայի շրջանում նկատվում է բնակչության հոսք գյուղերից քաղաք: Դա բացատրվում է գյուղերում մեծ չափերի հասած կամայականությամբ և քաղաքում կտրոնով հաց ստանալու հույսով: Իսկ քաղաքից նկատվում է հոսք դեպի Թիֆլիս: Ընդ որում Թիֆլիս են փախչում բարձր, միջին և նույնիսկ չունևոր դասի ներկայացուցիչները».<sup>21</sup> Շատ ավելի վտանգավոր էր Գ.Խոյեցյանի մեկ այլ դիտարկում. «Քաղաքը կորցրել է իր զուտ հայկական բնույթը: Թաթար գաղթականները գրավել են քաղաքի համարյա կեսը՝ ռուսական թաղամասը և հատկապես ամենահարմար և գեղեցիկ շենքերը, որոնց տերերը՝ քաղաքի երևելի դասը փախել է»:<sup>22</sup>

1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարով Թուրքիան առաջին աշխարհամարտում իրեն ճանաչեց պարտված և պարտավորվեց իր զորքերը հետ քաշել մինչև նախապատերազմյան՝ 1914թ. սահմանները: Սակայն, մինչև Անդրկովկասից հեռանալը թուրքերը հրահրեցին հայ-վրացական մոր պատերազմ՝ միաժամանակ միմյանցից գաղտնի Վրաստանի և Հայաստանի կառավարություններին տեղեկացնելով վիճելի տարածքները՝ Լոռին և Ախալքալաքի գավառը նրանց հանձնելու մասին:<sup>23</sup>

Սկսված պատերազմն ուղղակի աղետ էր Ալեքսանդրապոլի համար: Բանակի կարիքների համար բնակչությունից խլվեցին թուրքերից թաքցրած այլուրի վերջին պաշարները, բանակ զորակոչվեցին թուրքական բռնություններից մի կերպ խույս տված երիտասարդները: 1918թ. դեկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլի Քաղաքային Դումայի արտակարգ նիստը, ՀՀ կառավարությանը տեղեկացնելով պատերազմի հետևանքով Ալեքսանդրապոլի գավառի սովից մեռնող բնակչության վիճակի մասին, խնդրեց ժամանակավորեալ և ծայրահեղ անցանկալի համարել պատերազմը և հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, ինչպես նաև դադարեցնել Ալեքսանդրապոլում բռնի ձեռք բնակչությունից հացի վերջին պաշարները խլելը և բնակչության մոբիլիզացիան: Սակայն, արդյունքի չհասավ.<sup>24</sup> Արդյունքում, 1919թ. հունվարից Ալեքսանդրապոլ քաղաքն ու համանուն գավառը հայտնվեցին սովի ճիրաններում, և չնայած կառավարության ձեռնարկված միջոցառումներին, մինչև 1920 թվականի վերջերը շարունակեցին մնալ սոցիալ-տնտեսական ծանր պայմանների մեջ:

Դրությունն էլ ավելի բարդացավ, երբ 1919թ. Ալեքսանդրապոլ քաղաք և համանուն գավառ գաղթեցին ևս 100000 հայեր Բաքվից և Թիֆլիսից.<sup>25</sup>

Սովն իր հետ բերեց համաճարակային հիվանդություններ: Թե ե՞րբ երևան եկան առաջին հիվանդները, հայտնի չէ, սակայն, 1919թ. տվյալներով Ալեքսանդրապոլ-

<sup>19</sup> ՀԱԱ ֆոնդ 144, ցուցակ 3, գործ 45, ք. 7:

<sup>20</sup> ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, ք. 85:

<sup>21</sup> Նույն տեղում, գործ 125, ք. 27:

<sup>22</sup> Նույնը:

<sup>23</sup> Ա. Մեյրիսյան, Չավախքը XIX դարում և XX դարի I քառորդին, Եր., 2002, էջ 298:

<sup>24</sup> ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 3003, ք.3:

<sup>25</sup> Նույն տեղում, գործ 2976, ք. 8:

լում մահացածների ավելի քան 50.6%-ը՝ համաճարակներից էր, իսկ մոտ 21 %-ը՝ մանկական հիվանդություններից:<sup>26</sup>

1920թ. նոյեմբերին թուրքական զորքերը, ռազմական գործողությունները զուգակցելով դիվանագիտական խարդավանքներով, երկրորդ անգամ գրավեցին Ալեքսանդրապոլն ու համանուն գավառը և վարպետորեն օգտվելով թուրք-բոլշևիկյան դաշինքից՝ վեց ամիս այն պահելով օկուպացիոն դաժան ռեժիմի պայմաններում, այստեղից հեռացան միայն 1921թ. ապրիլի 22-ին:

1918-1920թթ. թուրքական արշավանքները աղետալի հետևանքներ ունեցան Ալեքսանդրապոլի համար: Խորհրդային Հայաստանի Ժողովրդների նախագահ Ա. Մյասնիկյանի 1921թ. հունիսին ՌԽՖՍՀ արտաքին գործերի Ժողկոմ Գ. Չիչերինին հաղորդած տվյալների համաձայն միայն գավառում սպանվել էր 60000 մարդ, սովից մեռել՝ 32000 մարդ: Եվս 30000 մարդ վիրավորվել էր, 26000-ը՝ զերեվարվել, իսկ 50000 կին և աղջիկներ՝ բռնաբարվել: Թուրքերի հասցրած նյութական վնասը կազմել էր 19743680 ռուբլի ոսկի:<sup>27</sup>

Թե 1918-1920թթ. իրադարձությունները (թուրքական երկու արշավանքներ, հայ-վրացական պատերազմ, սով, համաճարակային հիվանդություններ) ինչ հետևանքներ ունեցան Ալեքսանդրապոլ քաղաքի բնիկ կազմի և ժողովրդագրական դրության վրա, արխիվային նյութի բացակայության պատճառով ստույգ նշելն անհնար է: 1917-1919թթ. Արևելյան Հայաստանում աշխարհագրեր անցկացվեցին, սակայն Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքների բնիկ և գաղթական ազգաբնակչությունը ինչ-ինչ պատճառներով հաշվառման չենթարկվեց:

Այս հարցում որոշակի պարզաբանում կարելի է մտցնել 1916-1922թթ. աշխարհագրերի համեմատության միջոցով: Այսպես, 1916թ. Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ 51871 բնակիչ (հաշվառվել է միայն բնիկ ազգաբնակչությունը), որից 45646 մարդը կամ 87.9%-ը՝ հայեր էին, 1000 մարդը կամ 1.9%-ը՝ թաթարներ, 71 մարդը կամ 0.2%-ը՝ քրդեր, 229 մարդը կամ 0.5%-ը՝ եզդիներ և 4925 մարդը կամ 9.5%-ը՝ հույներ, ռուսներ, ասորիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ:<sup>28</sup> 1922թ. անցկացված գյուղատնտեսական վիճակագրության նյութերի համաձայն՝ Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ միայն 44656 մարդ բնակչություն, որից հայեր էին 43658-ը կամ 97.7%-ը, թուրք-թաթարներ՝ 47-ը կամ 0.1%-ը, ռուսներ՝ 677-ը կամ 1.5%-ը, եզդիներ՝ 22-ը կամ 0.05%-ը, ասորիներ՝ 8-ը կամ 0.02%-ը, հույներ՝ 81-ը կամ 0.2%-ը, քրդեր՝ 1-ը կամ 0.002%-ը և այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 162-ը կամ 0.4%-ը:<sup>29</sup> Փաստորեն 6 տարում քաղաքային բնակչության թիվը նվազել էր առնվազն 7000 մարդով: Եվ սա այն դեպքում, երբ 1921 վերջերին Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած 3000 հայերի զգալի մասը հաստատվել էր հենց Ալեքսանդրապոլում:<sup>30</sup> Հատկապես նվազել էր երիտասարդների (արական սեռի) թիվը. 44656 բնակչից 0-9 տարեկաններ էին 10903-ը, 10-19 տարեկաններ՝ 17839, 20-29 տարեկաններ՝ 4827-ը, 30-39 տարեկաններ՝ 4428, 40-49 տարեկաններ՝ 2444-ը և այլն: Փաստորեն ամենաքիչը 20-40 տարեկաններն էին:

Այսպիսով՝ XX դարի առաջին երկու տասնամյակներին տեղի ունեցած իրադարձություններն (արևմտահայ գաղթականություն, թուրքական երկու արշավանքներ, հայ-վրացական պատերազմ, սով, համաճարակային հիվանդություններ և այլն) աղետալի հետևանքներ ունեցան Ալեքսանդրապոլ քաղաքի ժողովրդագրական դրության վրա. փոխվեց ազգաբնակչության կազմը, քաղաքը զրկվեց երիտասարդ, կարող ուժից, մեծ մասշտաբներ ընդունեցին արտագաղթը դեպի Թիֆլիս և գյուղական բնակչության ներգաղթը: Ուժ թեև քաղաքն այլևս ամենամարդաշատը չէր Արևելյան Հայաստանի տարածքում, այնուամենայնիվ պահպանեց իր միատարրությունն ու հայեցի դեմքը:

<sup>26</sup> Վ. Խ ռ ջ ա բ ե կ յ ա ն, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 138:

<sup>27</sup> ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 131, ք. 1:

<sup>28</sup> ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆոնդ 1022, գործ 65, ք. 6:

<sup>29</sup> Հայաստանի ազգաբնակչությունը ըստ սեռի, տարիքի, գրագիտության և ազգության, 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր, Եր., 1924, էջ 4-5:

<sup>30</sup> Հ. Մ ե լ ի ք ս ե ք յ ա ն, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 83:

ЭТНОДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ГЮМРИ –  
АЛЕКСАНДРОПОЛЯ XIX ВЕКА И ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XX ВЕКА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Айрапетян \_\_\_

В начале XIX в Гюмри-маленький поселок с 50 домами. И только в 1828-1829гг. местность стала оживать, когда около 1250 семей западных армян обосновались здесь и стали ядром города Александрополя. В последующем росте населения города Гюмри-Александрополя большую и существенную роль сыграл факт его становления уездным центром в 1840. В результате, с половины 30-ых годов 19-ого века город превратился самым армянским центром в Закавказье, а уже к концу века-он стал самым большим населенным пунктом в Ереванском уезде.

Ситуация изменилась в первой четверти 20-ого века- беженцы из Западной Армении, два турецких вторжения, армяно-грузинская война, голод и эпидемические болезни оставили свои трагические следы на демографии города: изменился состав населения, город лишился молодой потенциальной силы, эмиграция и урбанизация (переселение сельского населения в город). И несмотря на то, что Александрополь больше не был самым большим населенным пунктом в Восточной Армении, он сохранил моноэтничность и свое глубоко армянская сущность.

## Կարինե ԲԱՉԵՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՆ ՈՒ ՀԱՅԿԵՐՈՒՅԹԸ

Ուտեստը ցանկացած էթնոսի կենսապահովման համակարգի կարևորագույն բաղադրիչն է: Ի տարբերություն նյութական մշակույթի այլ ոլորտների (հագուստ, բնակարան, հաղորդակցության ու կապի միջոցներ և այլն)՝ այն առավել պահպանողական է, քանի որ սննդի տեսակները, դրանց պատրաստման եղանակներն ու սննդային ռեժիմը ավելի կայուն են և համեմատաբար անաղարտ են պահում ազգային հնագույն ավանդույթները:<sup>1</sup> Դա պայմանավորված է էթնոսի հոգեբանական մախատրամադրվածությամբ, որն առաջացել է դարեր շարունակ սննդի որոշակի տեսակներ ընդունելու սովորույթի, կամ հնագույն սննդային արժեքների հետևանքով:<sup>2</sup>

Ինչպես ողջ ժողովրդին, այնպես էլ նրա առանձին հատվածին բնորոշ սննդամթերքի, դրա մշակման եղանակների, ճաշատեսակների տիպերի, հացկերույթի սովորույթումների ու մշակույթի այլ ոլորտների մեջ են դրսևորվում նրանց էթնոմշակութային և պատմական առանձնահատկությունները: Սննդի մասին չի կարելի խոսել առանց հացկերույթի արարողության, քանի որ ուտեստի համակարգում առկա ազգագրական տարբերությունները արտահայտվում են նաև հացկերույթում՝ ուտելու հաճախականության ու կարգի, մատուցվող ուտելիքների քանակի ու հերթականության մեջ և այլ տարրերում:<sup>3</sup>

Սնունդը ոչ միայն բավարարում է մարդու կենսաբանական պահանջը, այլև նպաստում է մարդկանց մեջ սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Խորհրդային նշանավոր ազգագրագետ Ս. Տոկարևը գրում է. «Միասին ուտելն ու խմելը մարդկանց մեջ բարեկամության ու ազգակցության արտահայտություն չէ միայն: Միասին ուտելն ու խմելը հաճախ նպաստում է ընկերական ու բարեկամական հարաբերությունների հաստատմանը»:<sup>4</sup> Աղ ու հացով հյուրին (հյուրերին) դիմավորելը հարգանքի, մեծարման, բարեկամության արտահայտություն է աշխարհի շատ ժողովուրդների մշակույթում: Սոցիալական հարաբերությունների հաստատումից բացի ուտեստը կատարում է նաև հակառակ՝ սոցիալական տարանջատման գործառույթ: Խոսքը վերաբերում է ուտելու ժամանակ սեռատարիքային շերտադասության դրսևորմանը, որը բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ավանդական մշակույթին:

Պատմաազգագրական տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ամենօրյա կերակուրներից տարբերվող, տոնական կամ ծիսական նշանակություն ունեցող, կոնկրետ տոնին, ծեսին կամ արարողությանը բնորոշ ուտելիքի տեսակները: Ազգագրական առումով նույնքան կարևոր է ոչ միայն այն, թե ինչ են ուտում մարդիկ, այլև, թե ինչպես են ուտում, ինչ սպասք են օգտագործում, օրը քանի՞ անգամ են ուտում, ովքեր և ինչպես են մասնակցում հացկերույթին և այլն:<sup>5</sup> Այս և նմանատիպ այլ երևույթների մեջ են արտահայտվում նաև քաղաքային ուտեստի համակարգի առանձնահատկությունները, որին կանոնադաշտնանք ստորև:

Խնդիր չունենալով տալ խոր և համակողմանի վերլուծություն՝ մեր ցանկությունն է ամբողջական, թեև ոչ ծավալուն ձևով ներկայացնել Ալեքսանդրապոլի ուտեստն ու հացկերույթը, նկատի ունենալով, որ առայժմ այդպիսի ամփոփ ուսումնասիրություն չկա: Հայ ազգագրության մեջ Շիրակի ուտեստը տիպաբանվել ու համակարգվել է հետա-

<sup>1</sup> Н. Григулевич, Этническая экология питания, М., 1996, стр. 7.

<sup>2</sup> Н. Волкова, Г. Джавахили, Бытовая культура Грузии XIX-XX веков; традиции и инновации, М., 1982, стр. 80.

<sup>3</sup> Культура жизнеобеспечения и этнос, Ер., 1983, стр. 189-190.

<sup>4</sup> С. Токарев, К методике этнографического изучения материальной культуры, "Советская этнография" 1974, №4, стр. 5.

<sup>5</sup> Культура жизнеобеспечения и этнос, стр. 190.

գոտողների խմբի կողմից (Ս.Հարությունով, Յու.Մկրտումյան, Ի.Բարսեղյան, Ս.Ենգիբարյան)<sup>6</sup>, սակայն Ալեքսանդրապոլի ուսեստի մասին միայն մի քանի զեկուցումներ են եղել, որոնց թեզերը բավարար չեն քաղաքային կենցաղամշակութային համալիրի այդ կարևոր հատվածը լիարժեք ներկայացնելու համար:<sup>7</sup>

Ալեքսանդրապոլը XIX դարավերջին արդեն ձևավորված, յուրօրինակ կենցաղամշակութային համալիրով քաղաք էր, որի բնակիչներն իրենց խստորեն տարբերում էին ինչպես քաղաքի տեղաբնակ, այնպես էլ հարևան գյուղերից վերաբնակվածներից՝ «գեղ-ցոնցից»։ Ալեքապոլցին սիրում էր իր քաղաքը, նրա ավանդույթները, բարբառը, միատուկացը՝ աշխատելով սրբությամբ պահպանել այն, հարազատ մնալ դրանց։ Դա արտահայտվում էր և՛ ամբողջությամբ վերցրած կենցաղավարության մեջ, և՛ դրա առանձին տարրերում, որոնցից է ուսեստը։

Ալեքսանդրապոլցիների կերակրացանկը հարուստ էր։ Բացի ավանդական գեղջկական համարվող կերակուրներից, որոնք մեծ տեղ էին գրավում սննդի համակարգում, կային զուտ քաղաքային և հատկապես Ալեքսանդրապոլին բնորոշ ուսեստներ, որոնք պատրաստմամբ աչքի էին ընկնում և պարծենում էին կանայք։ Սնունդը չափազանց բազմազան էր և կազմված էր հացահատիկային մթերքներից, մսեղենից (այդ թվում՝ ոչխար, տավար, այծ, հավ, ձուկ), կաթնեղենից, բանջարեղենից, լոբազգիներից, վայրի բույսերից, մրգերից ու դրանց չրերից և այլն։<sup>8</sup> Կերակուրները տարբերվում էին ըստ «պաս» և «ուտիս» օրերի, ամենօրյա, տոնական և ծիսական կերակուրների։

Ուսելիքի պատրաստությունը կնոջ այն կարևորագույն գործերից էր, որտեղ դրսևորվում էր նրա տնարարությունն ու տնտեսվարությունը։ Խստաշունչ ու երկարատև ձմռանը, երբ փակվում էին բոլոր ճանապարհները, և այլ տեղերից մթերք չէր բերվում, ալեքապոլցին ստիպված էր սնունդը նախապես պաշարել։ Բացի այդ, գյումրեցիները հիմնականում արհեստավորներ էին և հատկապես շինարարներ, որոնք աշխատում էին գարնանից մինչև ուշ աշուն, ուստի աշխատած փողով ողջ տարվա պարենի ու վառելիքի պատրաստությունը, ինչպես ժողովուրդն է ասում «ձմեռվա թաղարուքը», նախօրոք էին տեսնում։<sup>9</sup> Կանայք գարնանից զբաղվում էին դրանով։ Առնում էին դադձ, եղինջ, սիբեխ, սինձ, էրիժնակ, ժախ, ավելուկ, թելուկ, դմի, դանդուռ, թրթնջուկ, խավրժիլ, ծներեկ, դանձիլ, ձնճըլճ, ճնճղպաշար, շրեշ, պատատուկ, փիփերթ, քեղ, ողորմակոթ կամ վարդապետի ժախ, որոնց մի մասը ուտում էին թարմ վիճակում, մի մասը չորացնում էին, մյուսը՝ թթու դնում։<sup>10</sup>

Մայիսի վերջերից յուր ու պանրի «թաղարուքի» ժամանակն էր։ Տանտիկիները այնքան յուղ էին հալում, որը պիտի բավականացներ ողջ ընտանիքի պահանջմունքը մինչև նոր յուղի հալելը։ Մտացված յուղը լցնում էին կավե գնդանների մեջ և բերանը փակում սերեկով։ Սերեկը ստանում էին ոչխարի ստամոքսը լավ վերամշակելով։ Այն խոնավ վիճակում քաշվում էր յուղի ամանի բերանին ու ամուր կապվում։ Չորանալուց հետո սերեկը կծկվում, հերմետիկ փակում էր գնդանի բերանը ու չէր թողնում օդ անցնի ներս։ Նույն ձևով պահում էին նաև տարբեր տեսակի պանիրները։

Ամռանը չորացնում էին կանաչ լոբին, պատրաստում մուրաբաները (ընկույզի, վարդի, բալի, հոնի, խնձորի և այլն)։ Չմռան համար մեծ քանակությամբ գնում էին գլուխ (քյալլա) սոխ և ծլակ-կանաչ սոխ։ Ուշ աշնանը բանջարեղենի պաշարի հավաքումն էր՝

<sup>6</sup> *Культура жизнеобеспечения и этнос*, стр. 190.

<sup>7</sup> Տե՛ս Հ. Աղաբեկյան, Հացի պատրաստման արարողակարգը Ալեքսանդրապոլում. հացի պաշտամունք, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետ՝ ՇՊՄԺ) հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 63: Նույնի՝ Ակնարկ Ալեքսանդրապոլում կերակրացանկից, ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42-43:

<sup>8</sup> *Культура жизнеобеспечения и этнос*, стр. 208-234.

<sup>9</sup> Հ. Գ. յ ա լ ե ց յ ա ն, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվ, տետր 1, 1976, էջ 20-27:

<sup>10</sup> Ն. Նի կ ո ղ ո ս յ ա ն, Լենինական, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության արխիվ, FF II, էջ 7229-7252:

գազար, բողկ, շաղգամ, կարմիր բագուկ, դդում, կաղամբ, արդեն մուտք գործած կարտոֆիլ, լոլիկ և այլն: Կաղամբը, կարմիր ու սպիտակ բագուկը, շաղգամը, բացի թարմ վիճակում պահելուց, նաև թթու էին դնում: Հատկապես թթու կաղամբով շատ կերակրատեսակներ էին պատրաստում՝ մսով ու պասուց տոլմաներ, քոչիկ, կոնջոլ: Կաղամբի հետ թթու էին դնում գազար, սոխ, կանաչ լոլիկ, կանաչ պղպեղ: Շատ էին սիրում ծիծակի թթուն: Կարմիր պոմիդորն աղ էին դնում կամ չորացնում: Չորացնում էին դդումը, որը օղակաձև կտրտում ու կախում էին: Չորացնում էին նաև ոչխարի տոտիկները, որոնք լավ մաքրում, ապա կախում էին, ձմռանը «տոտոխ» տոտիկներով խաշ դնելու համար: Ուշ աշնանը պատրաստվում էր դավուրման՝ մեկ ոչխարով կամ երկուցով՝ նայած ընտանիքի կարողության:

Վերը թվարկած բոլոր ուտելիքներն ունեին պատրաստման իրենց հատուկ եղանակները և պահելու համար նախատեսված համապատասխան կարասին: Գլուխների կինը երբեք յուղի, պանրի կամ թթուների ամանները մեկը մյուսի փոխարեն չէր օգտագործում, որովհետև դրանցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ համն ու հոտն ուներ, որը կպնում էր ամանին ու կարող էր փչացնել այլ մթերքի համը: Ընդունված չէր նաև ամանները օճառով լվանալը, քանի որ օճառը համարվում էր անմաքուր: Լվանում էին տաք ջրով մի քանի անգամ, ապա պարզաջրում զոլ ջրով:

Հարկ ենք համարում թվարկել այն ամանները, որոնք տարածված էին գլուխների կենցաղում մինչև XX դարի սկիզբը: Լայն գործածություն ունեին կավե և պղնձյա ամանները, ավելի քիչ՝ փայտից պատրաստվածները: *Կավե ամաններն էին.*

*բղողներ*- 1մ 10սմ բարձրությամբ, ներսը ձթած կարասներ՝ թթու դնելու համար.

*բուլուլ /բղիկ/-*կես մետր բարձրությամբ, դարձյալ ներսից ձթած՝ աղցանի համար.

*զնդան-1,5-2* փուֆ յուղի տարողությամբ, ներսը ջնարակված/ապակեներկ/,

գործածվում էր յուղ կամ պանիր պահելու համար.

*պուտուկ /կճուճ/* - երկու կողմից կանթերով աման՝ ջրալի կերակուրների համար.

*ծափ* - կարճ, լայն փորով աման ապուրի, հարխաչի, խաշի, քյաշկաչի համար.

*քյասա /քարսանք/* - բռնելու համար ունկերով լայն, հաստ, մեծ չանախ, որի մեջ լցնում էին ալյուր, հացահատիկ, կամ ամաններն էին լվանում.

*չանախ* – քյասաից փոքր աման՝ 4-5 մարդու կերակուրի համար, որը փուռն էին ուղարկում .

*չինի* – չանախից փոքր, բարակ, ներսից ջնարակած աման.

*կուտիկ* – մի մարդու համար նախատեսված աման.

*պուլիկ* – թթմոր պահելու աման.

*փարչ /կուժ/* - տարբեր մեծության, բռնելու կանթով ջրի կամ գինու աման:

*Պղնձե ամաններ՝*

*մատաղի մեծ կաթսա*, որ 8-10 փուֆ միս էր տանում. տրվում էր եկեղեցուն նվեր, որից օգտվում էին բոլորը.

*պղինձ* – սովորական կաթսա 2-3 փուֆ տարողությամբ, որի մեջ ջուր էին տաքացնում և յուղ հալում.

*լազան* – բերանի մասում նեղ ու երկար, մեծ պղինձ, որն օգտագործվում էր բաղնիքում.

*եղակ* – լազանի ձևով, բայց նրա կեսից փոքր աման, որով բաղնիքում գոհց ջուր էին վերցնում.

*փարխաջներ*- բռնելու կանթերով տարբեր չափերի ջրի ամաններ. դրանց մեծ չափերովը գործածվում էր յուղ հալելու կամ դավուրմա պատրաստելու համար.

*դարբա* - լայն փորով, կանթերով պղինձ՝ յուղի աման.

*գլուխում* - փարչի նման պղինձ՝ ջրաման.

*խարտուղ* – տարբեր մեծության, կանթով, կողքից ծորակով ջրաման, որի դեղինից փոքր չափինը օգտագործվում էր եկեղեցի ջուր տանելու ու օրհներու համար.

*թավա* - երկաթե կոթով լայն, տափակ աման՝ խավիժի կամ տապակելու համար. շերեփի - կերակուր խառնելու համար.

*քավկիր* – ծակտոսիներով, երկար բռնակով տափակ շերտի՝ կերակուրի քափը քաշելու համար.

*փլավքամիչ* – կլոր, լայն, ծակտոսիներով, առանց կանթի.

*թասեր* - կերակուրի զանազան մեծության ամաններ.

*բաղիա* - թասից մեծ, կերակուրի կամ մածնի աման.

*սինի* - կլոր մատուցարան՝ փուռը խմորեղեն տանելու համար.

*մուշուրբա* - դեղին պղնձից ջուր խմելու աման.

*դուշխանա* - տարբեր մեծության ամաններ կերակուր եփելու համար.

*յամաղ* – սոխառածի փոքր աման.

*գառֆ* - փոքր սրճաման:

Փայտե իրերից օգտագործում էին դուլերը՝ կաթի ու ջրի համար, կերակրամանները /գուլ/, կաթի և լվացքի տաշտերը, հացի կլոր մատուցարանը /տեփուր/, հացի կլոր, միակտոր տաշտերը, մեծ ու փոքր տակառները, շերտիներն ու գրավները և այլն: Պղնձե ամանները տարվա մեջ երկու մեծ տոներին անագապատվում էին ու մեծության կարգով շաք-շաք դարավում թարեքներում: XXդ. սկզբներից պղնձե ու կավե ամաններին փոխարինեցին էմալե ու ալյումինե ամանները, թիթեղյա տապակներն ու չուգունե կերակրամանները:<sup>11</sup> Հախճապակյա և ապակյա ամաններն ու բաժակները, որոնք մեծահարուստների կենցաղին բնորոշ սպասք էին՝ լայն գործածություն չունեին, իրենց թանկության պատճառով դանդաղ էին մուտք գործում միջին եկամուտներ ունեցող ալեքսպոլիցիների կենցաղ՝ հաճախ ոչ թե գործածության նպատակով, այլ միայն ցուցադրության:

Հացն ու հացամթերքները (ձավար, բլրուր, փոխինդ, երիշտա և այլն) ալեքսանդրապոլցու կերակրացանկի հիմնական բաղադրիչներն էին, ուստի դրանց մշակումը, պատրաստումն ու թխելը ևս մեծ արարողակարգ էր: Պատրաստությունն սկսվում էր ցորենի վերամշակումից: Ցորենը խաշվում, չորացվում էր, ապա տարվում ջրաղաց, որտեղ կեղևահանվում ու դրանից ձավար էր ծեծվում: Ուշ աշնանը թխում էին ձմռան հացը, որը հետո չորացնում ու շարում էին հացի համար նախատեսված հատուկ պահարանում կամ ջաֆարիկի վրա: Ալեքսանդրապոլում թխում էին տարբեր հացատեսակներ՝ լավաշ, բոքոն, թափթափա, լոխում (վերջինս շաղախվում էր կարագով և խմորեղենի պարզունակ ձևն էր):

Բավականին աշխատատար էր երիշտայի պատրաստումը, որի ժամանակ դրկից կամ ազգական կանայք ու աղջիկները միմյանց օգնում էին: Գյումրիում հաճախ փոխինդով խաշիլ են պատրաստել, որը գյուղական ուտեստ էր, սակայն շատ սիրված էր, քանի որ թե՛ սննդարար էր, թե՛ արագ պատրաստվող (թաթարյա ճաշ):<sup>12</sup> Ցորենից պատրաստում էին նաև միշաստա (ածիկ)՝ խիստ սննդարար կերակրի հավելուկ էր, որը օգտագործվում էր բուժիչ նպատակներով:

Ամենօրյա կերակրատեսակները շատ բազմազան էին՝ տարբեր տեսակի շիլաները, փլավներն ու ապուրները, որոնք կոչվում էին բաղկացուցիչ հիմնական մասի անունով՝ ոսպով փլավ, բլրուրով փլավ, բրնձով փլավ, չորթանով փլավ, չրով թիթիթ, շաղգամով յայնի, կորկոտապուր, պոչով ապուր, թանով ապուր, հատլապուր և այլն:

Առանձին խումբ են կազմում պասուց կերակուրները: Տապակած սիթեխի զոխը պասի օրերի ամենաընդունված կերակուրն էր. 4-5 զոխը թաթախում էին ալյուրի խյուսի մեջ, ապա տապակում ձեթով՝ ուժեղ կրակի վրա այնպես, որ երկու կողմերն էլ լավ կարմրեն: Այս կերակուրը գյումրեցիների մեջ հայտնի էր «պասուց ձուկ» անունով: Պատահական չէր, որ թթվի կարասները բացում էին Նոր տարուն և ուտում մինչև Չատիկ: Ժողովուրդն ասում էր «Էլի էկավ վեճձ պասը, բացեք զոխի կարասը»:<sup>13</sup> Ծննդյան և Չատիկի թաթախմանը բրնձով փլավի հետ անպայման տապակում էին կանաչ լոբի՝ վրան պաստեղով ձվածեղ: Ալեքսանդրապոլում, ի տարբերություն գյուղացիների, պասին ձավարով տոլմա-

<sup>11</sup> Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, *Լեռնական*, էջ 7364-7369:

<sup>12</sup> Հ. Գ յ ո լ ե ճ յ ա ն, *Գյումրի*, էջ 38:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 24:

յից բացի պատրաստում էին բրնձով տոլմա. սոխառածի հետ խառնում էին բրինձ, քիչմիշ, ծիրանի քաղցր չիր, լավ խառնելուց հետո փաթաթում թթու կաղամբի թերթերով, շարում պուտուկի մեջ, կրկնակի ծավալով ջուր լցնում և դնում բոցն անցած թոնրի մեջ: Պատուց կերակուրներ էին պոչով ապուրը (եփվում էր Մեծ պասի երկուշաբթի օրը, որը ուտելու համար հրավիրում էին մոտ հարազատներին), ավելուկով ու թելուկով աղցանները, խաշած կարտոֆիլը, կարմիր լոբին, բակլան, սիսեռը, որոնք մատուցում էին աղով, պղպեղով ու ծեփոնով (ծխորոն) համեմված:

Տոնական օրերին ալեքսուրցու հարզի կերակրատեսակներից էին թաթար բորակին, տոլման, սաթրի քյուֆթան, քարի քյուֆթան, դազան խորովածը, թավա քիֆթասին, չանաղը, թավան, քյալլան և այլք: Վերջին երեքը փռում էին պատրաստում և արհեստավորների շրջանում հարզի կերակուրներ էին: Ալեքսանդրապոլի տանտիկիները փռում էին եփել տալիս գաթան, փախլավան, շաքարոխումին, սհանչորակին (բիսկվիթ): Փռում պատրաստվում ու տաք վիճակում վաճառվում էր գյումրվա յաղլին՝ արդար յուղով պատրաստված ու երեսին շաքարի փոշի ցանած խմորաթերթիկը: Վաճառքի համար թխում էին մաև սայիտակ ալյուրով չորուկ:

Ծիսական կերակուրներն էին՝ Ամանորի պատուց տոլման, կաղանդի գաթան (տարեհացը), տարբեր պատկերներով կարկանդակները, Ծննդյան տոնի հարիսան, Տերնդեզի խեճախը (աղանձ), Սբ. Մարգարի փոխհնդով խաշիլն ու կարկանդակները, Չատկի ջեյեգով փլավը, Սբ. Խաչի քյաշքյան, Համբարձման կաթնապուրը, մատաղը, հոգեհացի խաշլաման, ատմահատիկը և այլն:

Գյումրու քաղաքային կերակուրները տարբերվում էին որոշակի նրբաթիմբ առանձնահատկություններով ու քաղցր ուտելիքների առատությամբ: Այդպիսիք էին քիշմիշով տուաը, դոմով, քիշմիշով, մեղրով (կամ շաքարով) ճաշը, տապակած ծիրանի չիրը, ջեյեգով փլավը (քիշմիշով, ծիրանի, սև սալորի չրերով ու նշով), չորացրած սայիտակ թթով ձվածեղը, խուրմով ձվածեղը, պաստեղով ձվածեղը, դայմաղը (մեղրուտեր), հասութան, գուրբիան: Խաղողի թփով տոլման մույնիսկ կերել են շաքարի փոշով ու դարչինով: Պայմանավորված քաղցր ճաշատեսակների առատությամբ ու հարգիությամբ՝ Ալեքսանդրապոլում կային հատուկ մոլորեղենի խանութներ (Չանկի Խաչոյի, Զյանդարովենց), որտեղ բացառապես անուշեղեն և համեմունքներ էին վաճառվում:<sup>14</sup>

Ալեքսանդրապոլում ուտում էին օրը երեք անգամ՝ նախաճաշ, ճաշ և ընթրիք: Առավոտյան նախաճաշին անպայման թեյ էին խմում, ուտում հաց, պանիր, կարագ, խաշած ձու, եփում էին հասութա կամ փոխհնդով խաշիլ, իսկ պաս օրերին՝ խաշած կարտոֆիլ, լոբի, երբեմն հալվա կամ գաթա: Թեյը մեծ մասամբ խմում էին կծովի, միայն շատ փոքր երեխայի և մեծ մամի թեյն էին քաղցր անում, որ «պզտիկը վենձնա, մամն էլ դվաթից, ուժից չընկնի»:<sup>15</sup> Ծաշին ուտում էին վերը թվարկած բազմազան կերակուրները՝ փլավներ, շիլաներ, ապուրներ և այլն: Ընդ որում տղամարդիկ հաճախ ճաշում էին աշխատավայրում: Ընթրիքին ուտում էին ճաշի ավելցուկը, կամ պատրաստում էին սպաս, կաթնով: Սովորաբար ամռանը սննդի մեջ մեծ մաս էր կազմում կաթնամթերքը՝ կաթը, մածուցը, սպասը և այլն:

Մինչև XIXդ. վերջ խիստ պահպանվում էր սեռատարիքային հստակ բաժանումը հացկերույթի ժամանակ: Նախ ուտում էին տղամարդիկ, սպա նոր՝ կանայք ու երեխաները: Ընդ որում երիտասարդ հարսները նախ կերակրում էին երեխաներին, հետո իրենք ուտում: Նորահարսը մույնիսկ սկեսրոջ հետ հացի չէր նստում: XX դարասկզբից, փոքր ընտանիքների թվի աճման հետ կապված, նկատվում է միմյանցից առանձին հաց ուտելու սովորույթի վերացում: Խոսքը ամենօրյա ընտանեկան հացկերույթի մասին է: Կանանց ու տղամարդկանց առանձին հաց ուտելու սովորույթը պահպանվեց ընդհուպ մինչև XXդ. վերջ, ծիսական հացկերույթների ժամանակ՝ հոգեհացի, մատաղի արարողություններում:

<sup>14</sup> Հ. Ա դ ա բ ե կ յ ա ն, Ակնարկ Ալեքսանդրապոլցու կերակրացանկից, ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42-43:

<sup>15</sup> Հ. Գ յ ո լ ե ց յ ա ն, Գյումրի, էջ 54:

Հատկանշական է, որ մինչև եվրոպական տիպի կահույքի մուտքը, նույնիսկ դրանից հետո, ուտում էին գետնին նստած՝ ընդհանուր մի ամանից: Պահպանվել է նման հացկերույթի նկարագրություն. «Հացկերույթը նահապետական էր և հետաքրքիր: Հինգ կամ վեց մարդ միասին մեկ ամանից էին կերակուր ուտում և ավելի հետաքրքիր էր նրանց փլավ ուտելը. մի մեծ պղնձյա սինիով դնում էին առաջները, ուտում էին առանց հացի, ձեռքերը որքան վերցնում էր, տրորում էին սինիի վրա, լավ ամրացնում, որ հատիկները չթափի, թաթառոշ արած՝ քաշում էին բերանները»:<sup>16</sup>

Ինչպես ամենօրյա, այնպես էլ տոնածիսական հացկերույթի պարտադիր մասն էր կազմում խմիչքը: Ամանորի սիրված ըմպելիքը չրի կոմպոստն էր, որը մինչ օրս պահպանվել է գյումրեցիների կենցաղում: Ալեքսանդրապոլցի տղամարդկանց սիրած ավելի ալկոհոլային խմիչքը օղիներն (ռախի) էին, որոնցից առավել տարածված էին Ջավախքից բերված «հացի ռախին» և Արարատյան դաշտավայրից ներմուծվող թրմօղիները՝ «խուժան արաղ», առանց որի սեղան չէին նստում, ընդ որում, դրանք օգտագործվում էին ոչ միայն տանը, այլև դրսում: XIX դ. կեսերից լայն տարածում ստացավ գարեջուրը և շատ շուտով այն իր հատուկ տեղը գրավեց ավեքապոլցի տղամարդկանց սննդակարգում: Քաղաքում մեծ թիվ էին կազմում պանդոկները, գինետները (միկիտան) և գարեջրատներն ու կրպակները, որտեղ արհեստավորները՝ աշխատանքից հետո կամ ընդմիջմանը և տարբեր գործերով քաղաք եկած հյուրերը, մի կտոր հաց էին ուտում, որը ուղեկցվում էր թունդ խմիչքների տարբեր չափաբաժիններով: Գինին այնքան էլ տարածված չէր, չնայած այն ևս դրվում էր սեղանին տարբեր տոների կամ ծիսական արարողությունների ժամանակ:

Քաղաքային կենցաղում լայնորեն տարածված էին սուրճը (սև սուրճին զուգահեռ օգտագործում էին բոված-աղացած գարուց պատրաստված ըմպելիքը՝ «ղայֆան») և թեյը, որոնցով հյուրասիրում էին հյուրերին ընտանեկան տոների ու արարողությունների ժամանակ: Տղամարդիկ սիրում էին սուրճ խմել նաև սրճարաններում (ղայֆախանա) և համքարական ակումբներում (կլուբներ), որտեղ գրուցում էին քաղաքականությունից, քաղաքի անցուղարձից, գործարքներ էին կնքվում, կամ, որն ավելի ընդունված էր՝ ունկնդրում էին հայտնի աշուղների երգերը:

Քաղաքային կենցաղի առանձնահատկությունը հատկապես վառ էր դրսևորվում հարսանեկան հացկերույթի ժամանակ ինչպես մատուցվող կերակրատեսակների բազմազանությամբ, այնպես էլ սպասքով, արարողակարգով և այլ տարրերով, որոնց հնարավոր չէրավ անդրադառնալ:

## ТРАДИЦИОННАЯ ПИЩА И ТРАПЕЗА АЛЕКСАНДРОПОЛЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ К. Базеян \_\_\_

В статье рассматривается традиционная система питания александропольцев. Пицца, как и вся система питания, относится к числу наиболее стойких культурно-бытовых традиций. В наборах пищевых продуктов, способах их обработки, типах блюд, в традициях трапезы отражается специфика городского быта Александрополя. Исходя из этого в статье представлен основной пищевой рацион городского населения, некоторые способы приготовления, периодичность приема пищи, способы заготовок. При этом выделяется повседневная, праздничная и ритуальная пища, а также предпочитаемые прохладительные и алкогольные напитки. Особое внимание уделено не только тому что люди едят, но и какой утварью и посудой пользуются и как их используют.

<sup>16</sup> Խ ա յ ա ք Ձ ա հ ր ի յ ա ն, Հիշողություններ հին Գյումրիից, ԳՄԱ ՀՄԻ բանահյուսության բաժնի արխիվ, FF I, էջ 8156:

## Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Շիրակը պատմական Հայաստանի մաս երաժշտական մշակույթի շտեմարաններից մեկն է: Հնագիտական հարուստ նյութը թույլ է տալիս ենթադրել, որ սկսած հայկական ցեղախմբերի ձևավորման ժամանակաշրջանից, այստեղ բյուրեղացել են մաս հայկական մոնոթիսիայի նախնական երգատեսակներն ու նվագարանային արվեստի ինքնօրինակ ոճը: Շիրակում պեղածո ամենահին նվագարանը սպիտակ կրաքարից պատրաստված, մ.թ.ա. V դարին վերաբերող բազմալիող սրինգն է՝ իր ծիսական և կենցաղային գործառույթներով:<sup>1</sup> Շիրակում ստեղծված հնագույն ծիսական երգերի մեջ տեղ են գտել մաս Շատակեր Շարայի առասպելին առնչվողները:

Ավելի շոշափելի են ուրվագծվում միջնադարյան Շիրակի երաժշտական ավանդույթները: Վաղ ավատատիրականը ինչպես ժողովրդական, այնպես էլ գուսանական երգատեսակների, նվագարանային երաժշտության ամենատարբեր դրսևորումների զարգացման շրջան էր: Այդ զարգացման բարձրակետը Անիի քաղաքային մշակույթն էր: Հայ և օտար պատմիչները հիացմունքով են նկարագրել Բագրատունյաց մայրաքաղաքի բազմալիսի հանդեսներն ու տոնախմբությունները: Դրանց վկան ու մասնակիցն է եղել մաս մեծահամբավ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որի բազմաթիվ թղթերում բառացիորեն հնչում են այդ երգերի առանձին պատառիկներ:<sup>2</sup>

Բացի վիպերգերից՝ այս երաժշտական կենցաղի կարևոր քաղադրամասն են եղել *հագներգություն*, *տաղ* և *տիկնչ* կոչվող երգերը, ամենատարբեր պարերգերն ու պարերը և դրանց մեջ մաս՝ հինավուրց հուղարկավորության ծեսից պահպանված սգո պարեր: Միջնադարի պատմիչներ Արիստակես Լաստիվերոցին,<sup>3</sup> Հովհաննես Դրասխանակերոցին,<sup>4</sup> Մամուել Անեցին,<sup>5</sup> Մմբատ Սպարապետը<sup>6</sup> բազմիցս են վկայել գուսանական նվագախմբերում հնչած քնարների ու ջնարների, տավիղների ու վիների, սրինգների, շեփորների, ծնծղանների, քաղաքապահ գորբում գործածված ռազմական տարբեր փողերի, թմբուկների և այլ նվագարանների մասին:

Անիում՝ հազար ու մեկ եկեղեցիների քաղաքում, մի նոր աստիճանի բարձրացավ մաս հայոց պաշտոներգությունը, և ոչ միայն Անիում: Շիրակի Դպրեվանքում էր, որտեղ VII դարում՝ Ներսես Գ կաթողիկոսի կարգադրությամբ կազմվեց հայ ինքնուրույն հոգևոր երգերի առաջին ժողովածուն՝ «Ճոնընտիր»-ը, որում հնուտ երաժիշտ և երգահան, Շիրակի Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Ճոնը ի մի բերեց և դասդասեց մեծաթիվ այն երգերը, որոնք մինչ այդ տարերայնորեն էին կատարվում և այդ պատճառով երբեմն խառնաշփոթ էին առաջացնում պաշտոներգության մեջ: Այդ երգերի հեղինակներից էր մաս նրա նշանավոր ժամանակակիցը՝ Իմաստասեր Անանիա Շիրակացին՝ նույն Դպրեվանքի նախկին սանը: Հոգևոր երաժշտության կենսական ուժի մասին են վկայում մաս հայ պատմիչների կողմից Անիի Տերունական հանդեսների բազմաթիվ նկարագրությունները: Այդ հանդեսներում են առաջին անգամ հնչել այնպիսի բարձրարժեք երաժշտական կոթողներ, ինչպիսիք են Պետրոս Գետադարձ կաթողիկոսի, Հովհաննես Մարկավազ Իմաստասերի շարականներն ու ծորուն տաղերը: Պատմական տեղեկություններ կան մաս Դանիել Երաժշտի, Մարգիս վարդապետ Անեցու մասին:<sup>7</sup>

<sup>1</sup> Փ. Թեր – Մարտիրոսով, *Каменная свирель Пана V века до Р.Х. из Драсханакерта, Ераժշտական Հայաստան*, թիվ 2, Եր., 2004, էջ 12:

<sup>2</sup> Գրիգոր Մագիստրոս, *Թղթեր, քնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով, խմբագիր Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910:*

<sup>3</sup> Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերոցույ, *Թիֆլիս, 1912:*

<sup>4</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերոցույ, *Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912:*

<sup>5</sup> Մամուել Անեցի, *Հավաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:*

<sup>6</sup> Տարեգիրք արարեալ Մմբատայ Սպարապետի հայոց, *Փարիզ, 1859:*

<sup>7</sup> Հ. Մ տ ե փ ա ն յ ա ն, Հ. Ա փ ի ն յ ա ն, *Երաժշտությունը միջնադարյան Անիում, Ը-Հ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 137:* Հ. Հարությունյան, *Անիի հանդեսներում կատարվող հագներգությունները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» (այսուհետև՝ ԸՊՄԺ) VII գիտական մատաշրջանի նյութեր, 2007, էջ 208:*

Հոգևոր բարձրագույն դպրոցներում դասավանդվող հիմնական յոթ գիտություններից մեկը երաժշտությունն էր: Գրիգոր Մագիստրոսի թղթերն ուղղակիորեն ակնարկում են այստեղ սովորողների փայլուն գիտելիքների ու երաժշտական հմտությունների մասին: Անին ոչ միայն գրչության կենտրոն էր՝ խազավոր մատյանների շտեմարան, այլև հայ հոգևոր երգի մի նոր որակի՝ ճոխ-գարդուրում մեղեդիակերտ հորինվածք կրող ժանրի՝ հոգևոր տաղի ծաղկման նպաստավոր միջավայրերից մեկը: Այդ ազատ ու անկաշկանդ շարադրանքով, կանոնական կաղապար-մեղեդիներից ձերբազատված, վիպական վեհաշունչ կերպարներից ներշնչված տաղերը հետագայում մի նոր բարձրակետի հասան Կիլիկյան Հայաստանում: Օրինակ՝ այսօր էլ մեծ ժողովրդականություն վայելող Ավագ ուրբաթ օրվա «Տիրամայրն» տաղը: Երաժշտագետները համոզված են, որ այս գլուխգործոցը նաև որոշակի պատկերացում է տալիս X-XI դդ. աշխարհիկ, գուսանական տաղերի հնչյունային կերտվածքի մասին:<sup>8</sup>

Անիի անկումից հետո նրա բնակիչները տարագրվեցին՝ իրենց հոգու մեջ անթեղված տանելով երբեմնի պերճաշուք քաղաքի անմոռանալի երգերը: Մեծ Հայքի Շիրակ աշխարհը կորցրեց իր նշանավոր մայրաքաղաքը և մինչև XIX դ. սպասեց ազգային մշակույթի նոր զարթոնքին՝ իր մեկ այլ քաղաքում, աշխարհաքաղաքական նոր խնդրումների հոլովույթում: Անիի մերձակայքում գտնվող Կումայրի-Ալեքսանդրապոլում էր դարեր անց ծաղկելու նոր հայկական մշակույթը:

Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթը, որը ձևավորվեց XIX դ. առաջին կեսին, սկզբում հիշեցնում էր բազմազույն մի խճանկար: Բնակիչները գերազանցապես հայեր էին՝ պատերազմական հայտնի իրադարձություններից հետո սկսված արևմտահայերի մեծ ներգաղթով Կարսից, Էրզրումից, Բայազետից, ինչպես նաև՝ Բասենից, Մուշից, Ալաշկերտից այստեղ հանգրվանած:

Մի կողմից՝ հայ բազմատարր ազգային դիմագծի բացարձակ գերիշխանությունը, մյուս կողմից՝ ազգային փոքրամասնությունների ինքնատիպ մշակութային դրսևորումներն ու դրանց փոխհարաբերությունները աստիճանաբար ձևավորեցին մի նոր հայկական քաղաքային ինքնատիպ մշակութային կյանք, որն արդեն XIX դ. վերջին բնութագրվում էր իր կայուն ու ինքնատիպ ավանդույթներով: Աստիճանաբար քաղաքային կենցաղում կայունացավ երգ-երաժշտության բազմաժանր համակարգ՝ XX դ. սկզբում ձեռք բերելով երաժշտաճանկան տեղային հատկանիշներ: Ընդհանուր առմամբ, Ալեքսանդրապոլում ապրել է հազեցած երաժշտական կյանքով: Այստեղ հասարակական բոլոր խավերն ունեցել են երաժշտագեղագիտական հատուկ պահանջներ, որոնք էլ խթանել են այդ արվեստի զարգացումը:

*Ժողովրդական երգն* իր ամենատարբեր ժանրային դրսևորումներով անչափ սիրված էր քաղաքում: Արևմտյան Հայաստանից ներգաղթածները, որ երգի խորը ավանդույթներ կրողներ էին, իրենց կենցաղում պահպանում էին այդ ժառանգությունը: «Խնուս գեղի մեջտեղը», «Ես Կոստոն եմ Բայազետցի», «Գնաց աշուն՝ էկավ գյարուն», «Բյանքախ Բուլանըխ» երգերը ասվածի լավագույն վկայություններից են:<sup>9</sup>

Աստիճանաբար այստեղ կայունացավ Կարևո քարբառի Գյումրու խոսվածքը, որը եղանակավորվեց քնարական, հայրենասիրական, պատմական, օրորոցային, կատակային, ինչպես նաև ծիսական երգերում: Ալեքսանդրապոլցիները հետզհետե ձևավորեցին իրենց երաժշտական նոր միջավայրը, որտեղ ազատ ու անմիջական էին հնչում սիրված մեղեդիները. «Տույ-տույ»-ը, «Տոտիկ»-ը, «Աշուղ է եկել մեր մայլեն», «Հեյ, օհ, դափամա»-ն, «Արփա չայի քյանարը»: Այս և մնանատիպ երգերը անցել են ժամանակային պատմեղը և մինչև այսօր էլ սիրված են Գյումրու կենցաղում:

Այս նույն միջավայրում հատուկ տեղ են գրավել հերոսական, ազգային-հայրենասիրական երգերը, որոնցից էին՝ «Զաջ Արաբոյի երգը», «Բայազետցի Կոստոյի երգը», «Էկավ հասավ Վանա ծովուն» (գովեստ՝ ձոնված գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանին), «Չայնը հնչեց Էրզրումեն» և այլն:<sup>10</sup> Դրանք ժամանակին գրառել և հրատարակել են բանագետ Ալ.Մխիթարյանցն ու երաժիշտ-ուսուցիչ Ա.Բրուտյանը:

<sup>8</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985, էջ 94:

<sup>9</sup> Ա. Բ ր ու տ յ ա ն, «Մանկական նրմունքներ», Եր., 1985:

<sup>10</sup> Նույնը:

Իհարկե, քաղաքային ժողովրդական երաժշտության համապատկերը ներառում է նաև հարևան ժողովուրդների (վրացիներ, թուրքեր, պարսիկներ, արաբներ, ռուսներ), ինչպես նաև հեղինակային, աշուղական, կոմպոզիտորական ամենատարբեր ստեղծագործությունների կատարումներ: Սակայն դրանք իրենց կատարողական-ռճական առանձնահատկություններով հանդերձ՝ կրում էին խիստ որոշակի տեղային՝ ալեքսանդրապոլյան դրոշմ:

Ալեքսանդրապոլի ժողովրդական երգ-երաժշտությունը պարարտ հող նախապատրաստեց բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության՝ *աշուղական ու սազանդարական* արվեստի զարգացման համար: Աշուղները քաղաքի երաժշտական կյանքի անբաժան մասն էին: Նրանք մշտական մասնակիցներն էին ընտանեկան հավաքույթների՝ խնջույթների, հարսանիքների և այլ հանդիսությունների: Առավել համբավվոր աշուղներից էին Չահրին, Ղեյրաթին, Բավեն, Հավեսը, Մալուլը, Չուլալ-օղլին, Շիրինը: Նրանց բազմաթիվ երգերը հնչում էին նաև սրճարաններում: Այստեղ էլ տեղի էին ունենում ավանդական մրցույթները, որոնք երբեմն մի յուրահատուկ ներկայացման էին վերածվում: Սակայն, պատահում էր, որ աշուղները մրցում էին նաև ինքնաբույս հանգամանքների պայմաններում: Այսպես, Կ.Կոստանյանը հիշում է աշուղ Խրթըզի ու նրա մրցակցի անմոռանալի ելույթը, որը տեղի էր ունեցել ճորի տարբեր մասերում գտնվող տների մեջ, և նրանց փոխտեփոխ երգեցողությունը լցրել էր գիշերային քաղաքի անդորրը:<sup>11</sup> Քաղաքում ելույթներ են ունեցել նաև շրջիկ աշուղները: Նրանց հրավիրել են մասնավոր տներ, որտեղ հնչել են աշուղական սիրավեպեր ու հեքիաթներ՝ սազի, սանթուրի, պարկապուկի նվագակցությամբ:

Ալեքսանդրապոլի հայտնի սրճարաններից մեկը Հովհաննես ու Կարապետ Տայաններիին էր: Նրանք Կարսից գաղթած աշուղ Քյամալիի որդիներն էին և շուտով իրենց սրճարանը դարձրին աշուղական համերգների նշանավոր վայր: Աստիճանաբար այստեղ են հավաքվում տարածաշրջանում հայտնի աշուղներ Մալուլը, Սազային, Չամալին, Ֆիզահին, Ֆահրատը, Պայծառեն և այլք: Շուտով նրանց է միանում նաև աշուղ Ջիվանին, որին էլ մոտ երեք տասնյակ աշուղներ շուտով պիտի ընտրեին իրենց համար վարպետաց վարպետ (ուստաբաշի): Այդ մասին վկայող արձանագրությունը պահպանվել է մինչև այսօր:

1880-ական թթ.-ից Ալեքսանդրապոլում գործող աշուղական համքարության հովանավորը Սուրբ Կարապետն էր:

Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը ի վերջո վերաճեց յուրահատուկ դպրոցի և կատարեց պատմական իր առաքելությունը: Աշուղական երգարվեստն իր ուրույն ավանդույթներն ուներ. դրանք ստիպում էին հայ աշուղներին ստեղծագործել զերազանցապես թուրքերեն և պարսկերեն լեզուներով: Ալեքալի մշակութային մթնոլորտում, սակայն այդ ավանդույթը փոխակերպվեց: Արդեն 1850-ականներին աշուղ Շիրինը այստեղ հայերեն երգեր էր հորինում: Վճռական քայլը, այնուամենայնիվ, Ջիվանում էր վերապահված: Նա բոլոր աշուղներին հորդորում էր հորինել նաև հայերեն երգեր: Ժամանակակիցները վկայում են, որ այդ գործում Ջիվանում աջակցել է հայ մեծանուն գրող Ղ. Աղայանը, որն այդ տարիներին ուսուցչություն էր անում քաղաքում:

Բացի երգերի լեզվական քաղադրիչից, Ջիվանին աստիճանաբար ուշադրությունը սևեռեց նաև մեղեդիակերտմանը: Ավանդական աշուղական մեղեդիները յուրահատուկ կաղապարների դեր էին կատարում: Օրինակ՝ նրա հանրահայտ «Խելքի աշեցեք»-ը աշուղական մեղեդու դասական նմուշ է: Մինչդեռ «Ես մի ծառ եմ ծիրանի»-ն ինքնօրինակ եղանակավորում ունի: Ջավախքից Ալեքսանդրապոլ եկած Ջիվանիկի համար Ալեքսանդրապոլն այն բարեբեր ստեղծագործական ասպարեզն էր, որին և վիճակված էր դառնալ հայ ազգային աշուղական երգարվեստի նորացված դպրոցը՝ քաղաքային երգարվեստի իր բարձր թռիչքներով, որոնց յուրահատուկ բարձրակետը աշուղ Շերամի երգը եղավ:

«Բավական ժամանակ, - գրում է աշուղը իր ինքնակենսագրության մեջ, - երգում էի պարսկերեն, հետո ժողովրդի թելադրությամբ սկսեցի հայերեն երգել և բանաս-

<sup>11</sup> Մ. Հ ա ղ ա ն, *Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Կ. Կոստանյանի «Ինչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրությունում, ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 219:*

տեղծություններ անել: ... Հետո քաղաքային ակումբում ասիական երեկոներ էր լինում, մոտիկ քաղաքներից շատերը գալիս էին, որպեսզի Գոգոթին լսեն, թե՛ նվագը, թե՛ երգը»:<sup>12</sup> Նրա յուրաքանչյուր երգը անկրկնելի էր իր մեղեդային կերտվածքով՝ ուղղակի ներծծված քաղաքային ժողովրդական երգերի ոգով ու արտահայտչականությամբ: Այս հատկանիշների շնորհիվ աշուղի երգարվեստը բարձր գնահատեց նաև մեծն Կոմիտասը և նրան հրավիրեց հանդես գալու Գևորգյան ճեմարանի ուսանողների համար:

Ալեքսանդրապոլիցի աշուղներից շատերը մեծ համբավ էին վայելում Կովկասում: Դա էր նաև պատճառը, որ քաղաք էին գալիս հարևան ժողովուրդների մեջ հանրաճանաչ աշուղներ, հաճախ՝ ոչ միայն համերգ-մրցույթներով, այլև երկարատև, փոխազդեցիկ շփումների համար:

Աշուղների մշտական ուղեկիցները նվագածուների խմբերն էին, որոնց նաև *սազանդարներ* էին անվանում: Սրանք պրոֆեսիոնալ երաժշտախմբեր էին՝ նվագարանների ավանդական կազմերով և հարուստ նվագացանկով: Ալեքսանդրապոլիցի սազանդարների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը, որը նաև հիշյալ արվեստի փայլուն գիտակներից էր: Մովսրսկան նվագախմբերը կազմված էին երկու զուռնայից և մեկ դիոլից: Մազից, քամանչայից, սանթուրից և դահիրայից կազմված խմբերում նաև երգել ու նվագել են միասնաձայն: Թառից, չոնգուրից, դափից կամ դյումբյուկից կազմված խմբերում երգել է միայն մենակատար երգիչը՝ ընդհատելով դափին գլաֆ կատարելու ժամանակ:

Աշուղական արվեստն այն կենսական ոլորտն էր, որը շարունակեց զարգանալ նաև նոր՝ խորհրդային շրջանի երաժշտական կյանքում: Շերամի ավանդույթների հետևորդն աշուղ Շահենն էր, որը մի նոր դպրոց հիմնեց Լենինականում և իր շուրջը համախմբեց շնորհաշատ երաժիշտների: Շահենի դպրոցի աշուղական համերգների մասնակիցներից էին Իգիթը, Դվալի Մուկուչը /Դվալ-Օղլի/, Դուշիկը, Համիկը, Կոշտուն և այլ աշուղներ ու երգիչներ: Նրանք նաև շարունակեցին մեծ աշուղի գործը:

XIX դարի կեսերից Ալեքսանդրապոլի կենցաղում *տոներն* ու *ծեսերը* առանձնահատուկ կարևորություն են ստանում, ընդ որում, ոչ միայն արարողակարգն է կանոնացվել, այլև հատակեցվել է ծեսի ընթացքում հնչող ողջ երաժշտական նյութը: Այսպես, հանրաճանաչ շատ երգեր, պարբերաբար հնչելով տարբեր արարողությունների ժամանակ, ծիսականացվել են և ամրակայվելով վերածվել բուն ծիսական երգերի: Օրինակ՝ դժվար է պատկերացնել գյումրեցու որևէ հարսանիք, որի ժամանակ իբրև գովք չի հնչել աշուղ Շերամի «Պարտեզում վարդեր բացված»-ը, կամ Ջիվանու «Բե՛ր ձեռքդ համբուրեմ, մայրիկ» երգը՝ իբրև հարսի հրաժեշտի լացերգ: Նշենք նաև ավանդական հարսնապարը, որի համար ալեքսպոլիցի երաժիշտները ընտրել էին «Ծաղիկըմ ունիմ՝ ալա է» հայտնի պարերգը՝ թե՛ գործիքային և թե՛ երգային կատարման տարբերակներով: Կամ հարսանիքը լուսուղեմին եզրափակող «Առավոտ լուստ»-ն... Հետաքրքրական է, որ քաղաքային միջավայրում սիրված հեքիաթներից ու այլ ստեղծագործություններից վերցված առանձին կտորներ էլ են եղանակավորվել, մեղեդային հարագատ կերպավորում ստացել ու վերածվելով ծիսական երգերի՝ դարձել հարսանեկան արարողակարգի անբաժան մաս: Նման երգերից հիշատակենք «Ոտքիդ տակին վարդեր բացվին» երգը, որի տեքստը վերցված է Ղ. Աղայանի «Արեգնագան» հեքիաթից:

Ալեքսանդրապոլիցի սազանդարներն ու զուռնաչիները ոչ միայն տեղի ու հարակից գյուղերի, այլև Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող ուրիշ շատ քաղաքների տոնախմբություններում պատվավոր և ցանկալի մասնակիցներ էին: Ինչպես լանդացի հայտնի ճանապարհորդ և հայագետ Հենրի Լինչը 1893թ. Հայաստան կատարած ճամփորդության մասին իր նոթերում գրում է, որ ալեքսանդրապոլիցի սազանդարների հաճելի նվագը կարելի է լսել ոչ միայն իրենց քաղաքում, այլև Վաղարշապատում, Թիֆլիսում և այլուր:

Կատարողական արվեստի ավանդույթները շատ խոր արմատներ ձգեցին: Այդ է պատճառը, որ հետագայում էլ ալեքսպոլիցի երաժիշտների հետևորդները հռչակվեցին որպես անկրկնելի կատարողներ, և այսօր էլ նրանց գործը շարունակողներ կան:

<sup>12</sup> Շ է ր ա մ, *Ինքնակենսագրություն, Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի քանդաքան (այսուհետև՝ ԳԱԹ), Շերամի ֆոնդ, N 21:*

Նրանք XX դարասկզբին հիմնականում հանդես էին գալիս «Արևելյան երաժիշտների կոլեկտիվում»: Հիշատակենք այն երաժիշտներին, որոնք առավել համբավված էին. դուդուկահարներ՝ Արամ և Մարտին Մնդոյաններ, Կարապետ Եղոյան (ուստա Փանչո), դեղափայտ թափափահարներ՝ Թադևոս Հակոբյան (դավուջի կամ դաֆչի Թաթոս), քառահար-ջութակահար՝ Արծրուն Հովսեփյան, մանդոլինահար-ջութակահար՝ Արտուշ Արաքսյան, կլարնետահար՝ Կարո Չարչոլյան, դուդուկահարներ՝ Լևոն Մադոյան, Կարո Մնդոյան: Նրանց հետևորդներից էին՝ դուդուկահարներ Մերգեյ Սիմոնյանը (Կռենկեյ), Մկրտիչ Մալխասյանը (վարպետ Մրկրյ), Ժորա Սիմոնյանը (Չախալ Ժորա), Սուրեն Գրիգորյանը (Կիտայ Սուրիկ): Այսօր նրանց շառավիղն են շարունակում Գագիկ Մալխասյանն և Կարապետ Շաբոյանը՝ փայլելով ներկայիս Գյումրու նույնքան բեղուն ու հարուստ երաժշտական- մշակութային համայնապատկերի վրա:

XX դարասկզբին Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի համապատկերը լրացնում ու համալրում էին նաև այլ կարևոր գործոններ: Առավել ազդեցիկներից մեկը *ռուսական* մշակութային արժեքների հետ փոխազդեցությունն էր: Անշուշտ, իր պատմաքաղաքական դերակատարումով, ռուսական մշակութային տարրը՝ մյուս արտագային դրսևորումների կողքին ուներ առանձնահատուկ շեշտադրումներ, որոնք գալիս էին ոչ միայն այստեղ ռուսների գործունեության բնույթից, այլև այն մշակութային համակարգից, որն էականորեն տարբերվում էր տեղային ասիական, մերձավորարևելյան համատեքստից: Հայ-ռուսական միջմշակութային առնչակցությունների համալիրում երաժշտությունը փայլուն դրսևորումներ ունեցավ: Անշուշտ, դրան նպաստող կարևոր գործոնը երաժշտության առավել հաղորդակցականությունն էր, որը մերձեցնում է նույնիսկ հեռավոր մշակույթներ կրող հանրություններին:<sup>13</sup>

Հայ-ռուսական երաժշտական առնչությունների ալեքսանդրապոլյան համապատկերն ընդհանուր ուրվագծերով այսպիսին էր.

Քաղաքային ժողովրդական, աշուղական և հոգևոր երգ-երաժշտության բոլոր ավանդական դրսևորումները սրբորեն պահող ու զարգացնող Ալեքսանդրապոլում մախ մուտք գործեցին *ռուսական զինվորական նվագախմբերը*: Դրանց նվագացանկում ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների քայլերգեր էին, որոնք կատարվում էին ոչ միայն զորամասերում, այլ նաև քաղաքի փողոցներում, հրապարակներում՝ տարբեր քաղաքային հանդիսությունների ժամանակ: Աստիճանաբար փողային երաժշտությունը ալեքսպոլցու ականջի համար դարձավ ոչ միայն ընդունելի, այլև ցանկալի այն աստիճան, որ ի վերջո քաղաքում ձևավորվեցին սեփական փողային նվագարանների կատարողական այնպիսի ավանդույթներ, որոնք լավագույն ձևով դրսևորվեցին ու զարգացան մանավանդ խորհրդային շրջանում՝ բազմաթիվ ակումբներում, Պիոներների պալատում, ուսումնական հաստատություններում:

Զինվորական նվագախմբերի գեղարվեստական ղեկավարներն սկզբնական շրջանում ժամանում էին Ռուսաստանից (Ն. Բուրկովիչ, Ս. Պերվոխին): Այդ նվագախմբերում հետագայում սկսեցին ընդգրկվել նաև հայ երաժիշտներ (մեծմասամբ՝ ինքնուսույն): Հիշատակենք Սուրեն և Վազգեն Կարապետյաններին, Օնիկ Մաֆարյանին:

1920թ. Կազաչի պոստի որբանոցում հիմնված փողային նվագախմբը նոր ավանդույթի հիմք դրեց: Մոտ 3 տասնյակ երաժիշտներ ընդգրկող այս նվագախմբի ղեկավարը բազմահմուտ երաժիշտ Նիկոլայ Կուզուտովսկին էր: Շուտով՝ 1922թ., նրա ղեկավարությամբ ստեղծվեց նաև Պիոներների պալատի փողային նվագախմբը, որի կազմը շատ արագ համարվեց՝ հասնելով շուրջ 150 մարդու: Խմբի նոր ղեկավարի՝ ազգությամբ գերմանացի, տրոմբոնահար Ի. Բախտերի հմտության ու խմբի կատարողական բարձր հատկանիշների շնորհիվ շատ շուտով նվագախմբը դառնում է քաղաքի նշանակալի իրադարձությունների ու հանդիսությունների, տոնական ու հանգստյան զբոսանքների անփոխարինելի մասնակիցը: Սհա այդ երաժիշտներից մի քանի նվիրական անուն՝ Աշոտ Կարապետյան (շեփոր), Բաբկեն Մողոյան, Աղասի Չարչոլյան (կլարնետ), Գուրգեն Չոլախյան (տեմոր), Արմենակ Շեկոյան (բարիտոն): Նվագա-

<sup>13</sup> Այս մասին ավելի հանգամանորեն անդրադարձել ենք «Ալեքսանդրապոլը հայ-ռուսական մշակույթների խաչմերուկ» հոդվածում, «Հայ-ռուսական մշակութային կապեր» միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 204:

խումբը մասնակցել է բազմաթիվ մրցույթների ու փառատոների, արժանացել բարձրագույն պարգևների ու դիպլոմների:

Այսպիսով, փողային նվագախումբն աստիճանաբար դարձավ Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղի կարևոր բաղկացուցիչը: Որպես տիպական օրինակ՝ հիշենք մեծանուն կոմպոզիտոր Ն.Տիգրանյանի ստեղծագործական գործունեության 25-ամյակի հանդիսության ժամանակ ռուսական կայսրոջի ամենամեծ ու բարձրակարգ նվագախմբի հատուկ ելույթ-ուջույնը և հանդիսավոր ուղեկցությունը կոմպոզիտորի տնից մինչև հանդիսության սրահ:<sup>14</sup>

Մակայն ռուսական փողային նվագախմբերի ելույթները միայն ծառայողական գործառույթով չէին սահմանափակվում: Դրանք կարևոր դեր էին կատարում նաև ռուս սպաների ընտանիքների ժամանցային հանգիստը կազմակերպելու գործում՝ հատկապես զբոսայգիներում պարբերաբար կազմակերպվող բացօթյա համերգների ժամանակ՝ ճանաչված ռուս երաժիշտներ Անդրեևի և Կոզաչենկոյի ղեկավարությամբ: Այստեղ հնչում էին եվրոպական պարահանդեսային պարեր, սալոնային վալսեր, ինչպես նաև ռուսական ժողովրդական երգեր ու ռոմանսներ: Այս նոր երգացանկը չէր կարող չգրավել տեղացի երաժշտասերների ու նաև վարպետ կատարողների ուշադրությունը և շատ շուտով արժանի տեղ գրավել սազանդարների ու երգիչ-աշուղների ելույթներում: Օրինակ՝ «Соловей» և «Старый друг», երգերը պարտադիր երգացանկի մեջ էին և սիրված՝ ժողովրդի կողմից: Աստիճանաբար հայկական երաժշտական կենցաղ ներմուծվեցին նաև եվրոպական պարերը, որոնց ուսուցումը հետագայում հատուկ կարևորվեց: Քաղաքային մեկ տասնյակի հասնող սրճարաններն ու ճաշարանները այլևս միայն աշուղական մրցույթների հարթակներ չէին: Դրանք համերգային ինքնատիպ դահլիճներ էին հիշեցնում: Հայտնի էին հատկապես «Չաշկի չայը» կամ «Երեմի կյուրը» (քաղաքային զբոսայգու ճաշարանը), «Դամրջի Ալեքի ճաշարանը» երկաթուղայինների կայարանում:

Հետագայում բազմաթիվ փողային նվագախմբեր կազմակերպվեցին Լենինականի գործարաններին կից մշակույթի տներում, ակումբներում, կրթօջախներում: Քաղաքում փողային նվագախմբային հարյուրամյա բարձր մշակույթի ու հզոր ավանդույթների մասին է վկայում նաև այն, որ նույնիսկ 1988թ. կործանաբար երկրաշարժից հետո Գյումրու փողային նվագախումբը կարողացավ բարձրագույն մրցանակի արժանանալ Փարիզում:

Ռուսական գործոնը մեծապես նպաստեց նաև Ալեքսանդրապոլի *համերգային կյանքի* աշխուժացմանը: Տեղացիների հրավերով սկսեցին հյուրախաղերով հանդես գալ կամերային երաժիշտները՝ հիմնականում երգիչ-երգչուհիներ: Հետաքրքիրն այն է, որ կատարողների գերակշիռ մասը հայազգի ներկայացուցիչներ էին, որոնք կան ուսանում, կան էլ բնակվում էին արտասահմանում. Մարգարիտ Բաբայան, Մարիա Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյան, Ներսես Շահլամյան, Եկատերինա Կիրիևա-Տիգրանյան և այլք: Վերջինիս համերգի մասին պահպանվել է փոքրիկ հուշագրություն, որը ալեքսպոլյան համերգային մի երեկոյի գողտրիկ նկարագրություն է. «1886թ. հուլիս ամսին Պետերբուրգից Ալեքսանդրապոլ եկավ երգչուհի Ե.Կիրիևա-Տիգրանյանը և տվեց մի կոնցերտ զինվորական ակումբի ամառային շենքում, “Крепостной сад” անվանված պարտեզում: Երգչուհին ստացել է երաժշտական լուրջ կրթություն և ուներ խիստ անուշ և հուզող ձայն. նա կողորատուր սուպրանո է: Կոնցերտում երգեց մի քանի արիաներ «Ռիզոլետտո» և «Տրավիատա» օպերաներից: Երգեց նա և այն ժամանակներում շատ տարածված և ռուս հասարակության կողմից սիրված հայկական «Վա՛յ, ինչ անուշ» և «Ծիծեռնակ» երգերը: Հասարակության մեծամասնությունը երաժշտասեր ռուսներ էին, կային նաև բավական քիչ հայեր, որոնք և արժանավորապես զնահատեցին շնորհալի հայ երգչուհուն: ... Եվ ահա այս տեսակ ... համերգներն էին, որ մեզ ծանոթացնում էին եվրոպական երաժշտությանը, մեր հոգու առջև բաց էին անում այդ հոգեզմայլ երաժշտական գաղտնիքները և ծառայում էին որպես հաջորդական

<sup>14</sup> Տե՛ս Պ.Մոճոռյան, *Գեղարվեստի զարգացման պատմությունը (ձեռագիր, Լենինական, 1937)*, ԳԱԹ, Պ. Մոճոռյանի ֆոնդ, էջ 187:

էտապներ՝ մեզ դեպի Պառնասի գագաթը տանող ճանապարհի վրա», - գրում է ժամանակակիցը՝ Պետրոս Մոճոռյանը:<sup>15</sup>

Նմանատիպ բազմաթիվ հուշագրություններում կարևորվում են մի կողմից այդ համերգներում ներկայացված եվրոպական դասական երաժշտության նկատմամբ ավանդապահ քաղաքի երաժշտասեր հանրության իրական ջերմ վերաբերմունքը, մյուս կողմից՝ քաղաքի ռուս հասարակության կողմից հայ երաժշտության հանդեպ ցուցաբերած անկեղծ համակրանքն ու հետաքրքրությունը:

Մշակութային երկխոսության վառ դրսևորումներից մեկն էլ 1892թ. հունվարի 1-ին «Հօգուտ Ռուսաստանի սովյալների» բարեգործական համերգն էր, որին մասնակցել են քաղաքում հայտնի երաժիշտ-կատարողներ՝ Նիկողայոս Տիգրանյանը, Գրիգոր Տայյանը, Համբարձում Ադամյանը, Պարույր Բաբայանը, Ներսես Տեր-Վարդանյանը, օրիորդներ՝ Ադամյանն ու Հայրումյանը: Նրանց միացել են նաև ռուս երաժիշտներ՝ երգչուհի Գալինա Գորևան և ֆլեյտահար Գ. Աֆանասևը: Վերջինս կատարել է ռուսական ժողովրդական երգեր, իսկ երգչուհին՝ ռուս հասարակության մեջ տարածված ու սիրված «Ծիծեռնակ» և «Կիլիկիա» երգերը: Կարևորելով համերգի նպատակը՝ ժամանակակիցը գրել է. «Այս համերգի վրա մենք առանձնապես կանգ առանք նրա համար, որ ցույց տված լինենք, թե մեր փոքրիկ Ալեքսանդրապոլն էլ իր լուծման է նվիրել անդրանիկ եղբորը՝ մեծ Ռուսաստանին, նրա սովի ու թշվառության օրերին: Իսկ այսպիսի բարեգործական նպատակներով մեզ մոտ *անթիվ ներկայացումներ ու համերգներ* են կազմակերպվել մի շարք տարիների ընթացքում»:<sup>16</sup>

Անդրադառնալով տեղի կատարողական արվեստին և քաղաքային համերգային կյանքին՝ նշենք, որ շրջադարձային նշանակություն ունեցավ 1891թ. Քրիստափոր Կարա-Մուրզայի այցելությունը Ալեքսանդրապոլ: Այդ նա էր, որ առաջին անգամ տեղի ուժերով 50 հոգուց կազմված երգչախումբ ստեղծեց, և Ալեքսանդրապոլում առաջին անգամ հնչեց բազմաձայն խմբերգային երաժշտություն: Այս իրադարձությունը նմանատիպ համերգների անցկացման և քաղաքային երաժշտական կյանքում իր արժանի տեղը գրավելու նախադեպ հանդիսացավ: Արդեն 1892թ. հունվարի 8-ին դպիր Բրդյան վարժապետը (Արշակ Բրուտյան) կազմակերպում է մի նոր համերգ, որին մասնակցում էին նաև կոմպոզիտոր Ն.Տիգրանյանը, քաղաքի ճանաչված սազանդարներ, ինչպես նաև երգեցիկ խառը խումբը՝ նրա խմբապետությամբ: Համերգի մասին տեղի մամուլը գրեց. «Դա մի նորություն էր Ալեքսանդրապոլի համար, ուստի ժողովուրդը մի առանձին հետաքրքրությամբ լցրել էր քաղաքային կլուբի դահլիճը»:<sup>17</sup>

Քաղաքի երաժիշտների թվում այդ համերգների մշտական մասնակիցներից էին Պարույր Բաբայանը, Հեղինե և Հայկանուշ Բաբայանները, աշուղներ՝ Ջիվանին ու Շերամը, երգիչներ՝ Եփրեմ Գյաղուկյանը, Սամսոն Կարապետյանը: Երաժիշտ-կատարողների այս համաստեղությունը հետագայում համալրվեց նոր անուններով, որոնք երբեմն գենետիկորեն, երբեմն էլ զուտ ավանդակակառուցում ժառանգեցին ու ապագային փոխանցեցին ալեքսպոլյան երգչային-կատարողական արվեստի ոճական առանձնահատկություններն ու ոգին: Այդ թանկ ու նվիրական անուններից են՝ Մարգարիտ Բաբայան, Չարուհի Դոլուխանյան (Բաբայան), Շարա Տայյան, Արաքսի Գյուլգադյան, Ծովիկ Դազարյան, Վաղարշակ Մահակյան, Լուսիկ Քոչյան, Ալբերտ Մարգարյան, Մահակ Մահակյան, Ֆլորա Մարտիրոսյան և շատ ուրիշներ:

XXդ. սկզբում Ալեքսանդրապոլն արդեն հայտնի էր որպես նշանավոր երաժիշտների ու համերգային հարուստ կյանքով ապրող քաղաք: Դա չվրիպեց նաև ձայնագրության՝ դեռևս նոր-նոր քայլեր կատարող եվրոպացի և ռուս գործակալների ուղարկությունից: 1901-1902թթ. այստեղ, ֆոնոգրաֆի օգնությամբ ձայնագրություններ են իրականացնում, որոնցից հետագայում թողարկվում են ձայնապնակներ: Դրանք աշուղ Ջիվանու, Գոթորի (Շերամի), ալեքսպոլցի գուռնաչիների՝ քաղաքի թանգարաններում այսօր սրբությամբ պահվող բացառիկ արժեքավոր ձայնագրություններ են:

<sup>15</sup> Պ.Մոճոռյան, *նշվ. աշխ.*, էջ 195:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>17</sup> «Նոր դար», 1892թ., N9:

Երաժշտական տարբեր ավանդույթների համադրումը Ալեքսանդրապոլում հանգեցրեց մի նոր որակի, այն է՝ *կոմպոզիտորական* արվեստի ծնունդին: Վերջինիս կարկառուն ներկայացուցիչը եղավ մեծանուն կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ Նիկողայոս Տիգրանյանը: Նա քաջատեղյակ էր քաղաքային երաժշտական կենցաղում հայտնի լավագույն ստեղծագործություններին, արևելյան բանավոր ավանդույթի նվագարանային ժանրերին, ինչպես նաև մուղամաթի կատարողական առանձնահատկություններին: Կրթություն ստանալով Ավստրիայում, ապա շփվելով ռուս երաժիշտ կատարողների ու տարբեր գործիչների հետ՝ նա որոշեց նախ՝ երաժշտական կրթությունը կատարելագործել Պետերբուրգում, ապա՝ հնչեցնել արևելյան մուղամները եվրոպական նվագարաններով, եվրոպական կոմպոզիտորական արվեստի համատեքստում:

Շատ շուտով կոմպոզիտորը Պետերբուրգում հրատարակեց, ապա նաև այնտեղ փայլուն կատարեց իր կողմից բժախնդրորեն գրառված արևելյան պարերն ու դասական մուղամները՝ դաշնամուրային մշակումներով: Բնական է, որ ռուսական երաժշտական հասարակայնության մեջ այդ ստեղծագործություններն առաջ բերեցին ոչ միայն մեծ հետաքրքրություն, այլև, որ ամենաշահեկանն էր կոմպոզիտորի համար, բարձր գնահատեցին արևելյան և արևմտյան երաժշտական ավանդույթների մերձեցման նրա ջանքերը: «Տիգրանովը դաշնամուրով շատ արտահայտիչ ու մեծ զգացմունքայնությամբ է վերարտադրում արևելյան մոտիվները, զգացվում է, որ նա լավագույնս մերձեցել է լիովին զգում է դրանց յուրահատուկ ոգին», - գրել է այդ օրերի ռուսական մամուլը: Հաջորդեցին կոմպոզիտորի՝ եվրոպական տարբեր նվագարանների ու անասանքների համար մուղամների մշակումները, շարունակվեցին նրա համերգային ելույթները Ալեքսանդրապոլում, Երևանում, Թիֆլիսում ու Ռուսաստանում: Ավելին, նրա ստեղծագործություններն անմիջապես տեղ գտան ժամանակի նշանավոր կատարողների երկացանկում: Կոմպոզիտորի խորհրդային տարիների կենսագրությունը կապվեց հիմնականում Լենինգրադի հետ, որտեղ նրան ջերմորեն ընդունում և բարձր էին գնահատում հայ և ռուս երաժիշտներն ու արվեստագետները:

Ալեքսանդրապոլի ազգային պրոֆեսիոնալ երաժշտության նոր բարձրակետ եղավ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ստեղծագործությունը: «Առաջին հայկական օպերան ստեղծելու գաղափարը գրավել է ինձ դեռ պատանեկության տարիներին, երբ աշակերտում էի Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում: Երկար տարիներ եմ կրել այս միտքը իմ հոգում և շարունակ անհանգստությամբ մտածել այն մասին, թե ինչպես պետք է լինի հայկական օպերան, ի՞նչ սյուժե և ինչպիսի՞ դրամատուրգիական կառուցվածք է ունենալու ... Իսկ երաժշտության բնույթը, իսկ նվագախումբը: Ինձ համար մի բան պարզ էր, որ հայկական օպերան չպետք է կրկնի եվրոպականը, պետք է լինի ինքնատիպ, ազգային, ժողովրդին հասկանալի և սիրվի նրա կողմից, - հիշում է կոմպոզիտորը, - Հ. Թումանյանի «Անուշ»-ի թեման ինձ ամբողջովին կլանեց: Չխոսելով պոեմի գեղարվեստականության մասին, ինքը կառուցվածքը, նրա սքանչելի նախերգանքը, փերիների վիշտը, սիրահարների անձնվեր սերը, Սարոյի սիրերգը (լուսաբացին) և այլն, այս ամենը պահանջում էին հիանալի պոեմը մարմնավորել երաժշտության մեջ: Տարված այս թեմայով, ես գրեցի օպերան»:

Առաջինը ծնվեց «Աղջի անաստված»-ը: Հետո աստիճանաբար ծնունդ առան մինչև օրս ունկնդրին խորապես հուզող, հոգեպարար այն երգերն ու եղանակները, որոնց հենքը, անտարակույս, ալեքսպոլյան նորագույն մելոսն էր: Կատարողների փնտրտուքն ու նրանց համապատասխան նվագամասերի վերջնական խմբագրումը կոմպոզիտորից տիտանական ջանքեր խլեցին: Ի վերջո, թիֆլիսյան կատարողական ուժերի հետ համատեղ, 1912թ. օգոստոսի 4-ին, Ալեքսանդրապոլի քաղաքային ժողովրդական տանը տեղի ունեցավ օպերայի բեմերը: Այսօր առաջին դերակատարներին հիշում են որպես բանկ ու միլիարական անուններ. Անուշ՝ Աստղիկ Մարիկյան, Սարո՝ Շարա Տալյան, Մոսի՝ Վարդան Մարտիրոսյան, Անուշի մայրը՝ Արևհատ Տալյան (աշուղ Շերամի աղջիկը): Լեփ-լեցուն դահլիճում հավաքված հանդիսականների հուշերում անջնջելի են մնացել առաջին տպավորությունները՝ շաղախված անմոռաց մեղեդիներով: Հետո «Անուշ»-ը բեմադրվեց Կարսում, Դիլիջանում, Երևանում, Բաքվում, սակայն ալեքսպոլյան բեմերը դարձավ հայ մշակույթի պատմական իրադարձություններից մեկը՝

հետագայում մեծ բարձունքներ նվաճած հայ ազգային օպերային արվեստի առաջին մարգարիտը:

Կոմպոզիտորական արվեստի հետագա զարգացումը քաղաքում կայացավ խորհրդային մշակույթի տարիներին: XX դարասկզբին այստեղ ստեղծագործեցին Ն. Տիգրանյանը, Դ. Ղազարյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Այվազյանը, Մ. Մազմանյանը, Վ. Ումր-Շատը, այնուհետև՝ Ե. Սահառունին, Վլ. Բայլանը: Սակայն ամենատևականն ու բեղունը կոմպոզիտոր Ազատ Շիշյանի գործունեությունն էր: Նա ոչ միայն բազմաժանր կոմպոզիտոր էր, այլև նվիրյալ երաժշտահասարակական գործիչ, վաստակաշատ մանկավարժ: Սկզբում նա երաժշտական ստեղծագործություններ հեղինակեց քատերական ներկայացումների համար, ապա անցավ մեծակերտ սիմֆոնիկ, կամերային բազմաթիվ ստեղծագործությունների հորինմանը: Մինչև 1988-ի չարաքաստիկ երկրաշարժը այդ վեհ ու զգայուն արվեստագետը գրիչը վայր չդրեց, շարունակեց իր անգնահատելի մանկավարժական գործունեությունը: Եվ այսօր նրա բոլոր ուսանողները՝ թե՛ աշխարհահռչակ և թե՛ պակաս հայտնի, հպարտության խորը զգացումով են խոսում կոմպոզիտորական արվեստում կայացման ճանապարհին Ազատ Շիշյանից ստացած անդրանիկ գիտելիքների անուրանալի դերի մասին: Հիշենք կոմպոզիտորի նվիրյալ աշակերտներին՝ Տիգրան Մանսուրյան, Մարտուն Իսրայելյան, Երվանդ Երկանյան, Անդրանիկ Ներսիսյան, Աշոտ Մինասյան, Տիգրան Ղուկասյան, Հայկուհի Հակոբյան, Արմեն Հարությունյան և շատ ուրիշներ:

XX դարասկզբին Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքում եվրոպական պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթների հիմքի վրա սկիզբ առավ հայ երաժշտության մի նոր մայրուղի, որը խորհրդային տարիներին էլ ավելի զորեղացավ Լենինականի երաժշտական կենսագրության մեջ: Ալեքսանդրապոլում ստեղծվեց այն պարարտ հողը, որտեղ մերձեցան լիովին տարբեր երաժշտական-կատարողական կերտվածքներ ու ավանդույթներ: Քաղաքային նպաստավոր միջավայրում հայ և ռուս մշակույթները խաչվեցին՝ տեղի տալով միջմշակութային արժեքների այն բարեբեր կուտակումին, որից սերում է նորը: Այս առումով Ալեքսանդրապոլը մշակույթների փոխճանաչման ու փոխհարստացման դասական օրինակ է:

## МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ АЛЕКСАНДРОПОЛЯ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Арутюнян* \_\_\_

В контексте динамично развивающейся городской культуры Александрополя музыка играла особую, жизненно важную роль. В жизни горожан сочетались уникальные проявления фольклорного музыкального творчества и многочисленные жанры профессионального творчества устной традиции-произведения сазандаров и ашугов. Эта же среда способствовала расцвету композиторского творчества. В городской среде бурно развивались межкультурные связи, которые способствовали взаимообогащению и, что очень важно, расцвету концертной жизни города.

Благодаря традиционности, многие проявления музыкальной жизни Александрополя сохраняют свои жизненные функции до сих пор в культурной жизни современного Гюмри.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԷՄՆԱՖՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ  
(համքարական ծխակարգ)

Դեռևս միջնադարում հայկական արհեստավորաառևտրական խոշոր կենտրոններում (Անի, Դվին, Կարին, Վան և այլն) և գաղթօջախներում (Կ.Պոլիս, Թիֆլիս, Լվով, Նոր Ջուղա և այլք) ձևավորված արհեստավորական եղբայրությունների՝ համքարությունների հիմնական խնդիրն էր կարգավորել քաղաքի բնակչության սոցիալական, տնտեսական և կենցաղային փոխհարաբերությունների ներդաշնակությունը: XIXդ. հայ խոշոր հետազոտողներից մեկը՝ Կազանի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Սողոմոն Եղիազարյանցը (С.Егизаров)<sup>1</sup> ուսումնասիրելով Անդրկովկասի և ի մասնավորի հայկական քաղաքների համքարական կառուցվածքը հետաքրքիր գուգահեռներ է անցկացնում միջնադարյան եվրոպական ցեխերի և վերջիններիս միջև: Եղիազարյանցի կարծիքով, թե՛ արևմտյան և թե՛ արևելյան տիպի կորպորատիվ կառույցները, տնտեսական բնույթի խնդիրներ լուծելուց զատ, ունեին սոցիալ-կարգավորող գործառույթներ, որոնք իրենց իրավական ձևակերպումն էին ստանում իշխանության բարձրագույն մարմինների կողմից հաստատված «Կանոնադրություններում»: Եղիազարյանցն իրավամբ համքարությունները դիտում է որպես քաղաքային համայնքի հասարակական-սոցիալական կառուցվածքի ատաղձ, որի վրա կառուցվում են բոլոր ներքին և արտաքին կապերը: Այստեղ հարկ է նշել, որ հիշյալ կորպորատիվ կառույցների արտաքին կապերի (իշխանություն-համայնք) միջև կան էական տարբերություններ, որոնք Արևմուտքում և Արևելքում հողի սեփականության միմյանցից տարբեր ձևերի գոյության արդյունք են: Եթե միջնադարյան եվրոպական արհեստավորաառևտրական նշանավոր քաղաքները որևէ մեծատունի՝ խոշոր ֆեոդալի սեփականությունն էին և դրա բնակիչները համարվում էին սյուզերենի հպատակները, ապա Արևելքում դրությունն այլ էր: Այստեղ քաղաքները պետական այսինքն՝ միապետի սեփականություն էին, իսկ բնակիչները պետության հպատակներ էին և հարկատու էին պետական գանձարանին: Եվրոպական ցեխերը, ելնելով իրենց համայնքի անդամների ենթակայությունից, հարաբերությունները կարգավորում էին ֆեոդալ-սյուզերենի հետ, իսկ արևելյան համքարականները նույն իրավահարաբերությունների մեջ էին քաղաք-պետության հետ: Ուշ միջնադարյան և նոր դարաշրջանի սկզբի հայ համքարությունների դեպքում գործ ունենք ոչ թե սեփական, այլ օտար (օսմանյան, պարսկական, լեհական, ռուսական և այլք) պետական կառույցներ-հայ համայնք փոխհարաբերությունների հետ: Վերը նշված բոլոր գործառույթներին հայ համքարությունների պարագայում ավելանում է մեկ այլ կարևոր «պարտականություն»՝ համայնքի պաշտպանությունը և նրա կենսապահովման երաշխավորումը:

Ձևավորվելով արևմտահայ արհեստավորաառևտրական կենտրոններից սերված գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց դեռևս միջնադարից եկող այն բոլոր համքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին և Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և հասարակական կառույցների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին՝ ներքին լայն ինքնավարություն, պետություն-հանրույթ միջնորդավորված կապեր, ինքնապաշտպանական ավանդական կառույցների վերապրուկներ (նկատի ունենք միջնադարում համքարություններին կից ձևավորված կիսառազմականացված «Կտրիճվորաց եղբայրությունների» հասակային խմբերը): Ելնելով արևմտահայ ավանդույթից՝ Ալեքսանդրապոլում արհեստավորական եղբայրությունները կոչվում էին Էսնաֆություն, իսկ նրա անդամները՝ Էսնաֆներ:

<sup>1</sup> С. Е г и з а р о в, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи. Организация и внутреннее управление закавказских амкарств, Казань, 1891.

Բոլոր ներքին իրավական և այլ կենսական կարևոր հասարակական խնդիրները կարգավորվում էին էսնաֆությունների Կանոնադրությամբ և սովորությանի իրավունքի նորմերով: Սկզբնական շրջանում նույնիսկ ռուսական իշխանությունները ձեռնպահ էին մնում քաղաքի բնակչության ներհամայնքային գործերին խառնվելուց (XIX դ. վերջերին կապված Ռուսական կայսրությունում մունիցիպալ բարեփոխումների հետ իրադրությունը փոքր-ինչ փոխվեց): Համքարությունների ղեկավար կառույցներն ու համքարական ավագանին հանդես էին գալիս յուրահատուկ բուֆերի դերում համայնքի և պետական-իշխանական կառույցների միջև: Էսնաֆությունները փորձում էին «մոտիկ չթողնել» իշխանական կառույցներին իրենց հանրության ներքին կյանքին և ամեն կերպ հետ էին պահում իրենց անդամներին պետական մարմինների հետ ավելորդ «շփումներից»: Կորպորատիվ (մասնագիտական) և համայնքային շահերը դրվում էին ամեն ինչից վեր և էսնաֆական ավագանին փորձում էր բոլոր ներքին հարցերն ու ծագած խնդիրները լուծել իրենց հանրության գրավոր և բանավոր իրավական նորմերից ելնելով: Գլխավոր վարպետները (ուստաբաշի) և վարպետաց վարպետները (ուստալար-ուստասի) կարող էին պատժել վարպետներին և ենթավարպետներին այս կամ այն զանցանքի համար կամ էլ լուծել էսնաֆների միջև վեճերը առանց պետական կառույցների միջամտության: Հասարակական կարգի և բարոյական նորմերի պահպանումը ևս այս կամ այն չափով առնչվում էին համքարություններին, որոնք դրանով ինչ-որ տեղ «թեթևացնում էին պետական մարմինների հոգսը»: Այսպես, XIX դ. վերջին և XX դ. սկզբին այն ժամանակների համար բավական մեծ քաղաք հանդիսացող, 30 հազարանոց Ալեքսանդրապոլում ծառայում և հասարակական կարգն էին պահպանում մեկ տասնյակից մի փոքր ավել ժանդարմներ և ոստիկաններ:

Ալեքսանդրապոլի էսնաֆություններն իրականացնում էին համատեղ տնտեսավարման (մեծածախ գներով հումքի համատեղ հայթայթում, գնային քաղաքականության համատեղ կարգավորում և այլն), փոխօգնության և համայնքին զանազան նուսնակներով օգտակար լինելու բազմաթիվ գործառնություններ: Յուրաքանչյուր էսնաֆ պետք է հոգ տաներ իր արհեստակցի մասին, եթե նա որևէ հանգամանքի բերումով ծանր վիճակի մեջ էր ընկել (արհեստավորին կարող էին արամադրել հումք, դրամական օգնություն, պատվեր և այլն, և բնավ էլ պարտադիր չէր, որ օգնողի կամ օգնողների անունը բացահայտվեր): Էսնաֆների խնդիրն էր նաև բարոյական և ավանդությանի նորմերից շեղված արհեստակցներին «դուզ» (ուղիղ) ճանապարհին վերադարձնելը: Եթե որևէ էսնաֆ չարաշահում էր խմիչքը, բացահայտվում էր ընտանեկան դավաճանության մեջ, իր եկամուտներին ոչ հարիր շվայտություն էր անում, կովարար էր ու խառնակիչ կամ էլ ցածրորակ ապրանք էր տալիս գնորդին, ապա արհեստակցի ընկերները սկզբում նրան հանդիմանում էին, եղբայրական խորհուրդներ էին տալիս, և եթե դա էլ չէր օգնում, դիմում էին ամենախիստ միջոցի՝ էսնաֆին «յոլ սուզ» էին անում (գրկում էին վարպետի պատվաշնորհից): Ճյուղային էսնաֆության իզիթբաշին (կատարածուն), կատարելով համքարային ժողովի կամ ուստաբաշու իրահանգը, հանրության ներկայությամբ հանում էր «յոլ սուզ» արված արհեստավորի գոգնոցը և կախում նրա կրպակի դռանը: Այս վարպետի կյանքը քաղաքում այնուհետ վերածվում էր դժոխքի, և նա նույնիսկ կարող էր հեռանալ համայնքից:

Քաղաքի համար կենսական և հոգևոր-մշակութային նշանակություն ունեցող բոլոր ձեռնարկումներում մինչև XIX դ. վերջը-XX դ. սկիզբը որպես հիմնական ղեկավար հանդես էին գալիս էսնաֆությունները: Դրանք եկեղեցիների, հասարակական շինությունների կառուցումն էր, որտեղ էսնաֆներն առանց բացառության աշխատում էին անվճար, քանի որ այս աշխատանքներին մասնակցելը դիտվում էր որպես մի տեսակ մատաղ կամ զոհաբերություն (հին քաղաքային ավանդույթներ ունեցող շատ երկրներում ևս այս աշխատանքները հանրային կեցության ձևերից էին, որոնք, օրինակ, հին հույների մոտ հայտնի էին «լիտուրգիա» անվամբ, որը հայերեն թարգմանվում է «պատարագ»՝ զոհաբերություն):

Համքարությունների սոցիոնորմատիվ գործառնությունները հատկապես հստակ են արտահայտվում քաղաքային համայնքի ներսում սեռատարիքային հարաբերությունների մակարդակում: Համաձայն համքարային Կանոնադրության՝ այդ կազմակերպությունների լիիրավ անդամներ էին տղամարդ վարպետներն ու ենթավարպետները,

սակայն իրականում, սովորութային բանավոր իրավունքի մակարդակում դրանց մեջ ներգրավված էին մաև նրանց կանայք և երեխաները: Քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթում հատուկ տեղ էր հատկացվում կնոջը: Վարպետի կինը ամուսնու մահից հետո և անչափահաս զավակների առկայության դեպքում լիակատար իրավունք ուներ տնօրինելու ամուսնու արհեստանոցը կամ կրպակը (վաճառել, վարձով տալ և այլն)՝ նախապես ստանալով ճյուղային համքարության գլխավոր վարպետի համաձայնությունը: Հանգուցյալ վարպետների երեխաները շրջապատված էին հատուկ հոգատարությամբ և ճյուղային համքարությունները, ի հաշիվ իրենց զանձարանի, հոգում էին որբերի կրթության և հետագա ճակատագրի մասին: Համքարական զանձարանից միջոցներ էին տրամադրվում որբ աղջիկների օժիտը պատրաստելու համար: XXդ. սկզբին Ալեքսանդրապոլում համքարությունների միջոցներով կառուցվեցին և պահվում էին երկու սեռերի համար ուսումնական հաստատություններ, որտեղ ոչ լրիվ միջնակարգ կրթության հետ պատանիներն ու աղջիկները հմտանում էին արհեստների մեջ: Հարկ է նշել, որ այս ուսումնական հաստատություններում սովորողների գերակշիռ մասը քաղաքային համայնքի քիչ ապահով ընտանիքներից էին, և այս հարցում ևս համքարությունները ամբողջովին իրականացնում էին իրենց սոցիոնորմավորող գործառույթները: Նրանց միջոցներով 1860-1896 թթ. ընթացքում քաղաքում գործում էր մաև «աղքատանոց», որը հետագայում անցավ քաղաքային Դումայի հոգածության տակ:

XIXդ. վերջի և XXդ. սկզբի համառուսաստանյան լիբերալ բարեփոխումների արդյունքում համքարությունների սոցիոնորմատիվ և կարգավորող գործառույթները զգալիորեն նվազեցին, սակայն մեծ թվով կորպորատիվ ավանդույթներ շարունակեցին կենցաղավարել ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը և դրանից քիչ հետո: Նոր իշխանությունների ջանքերի շնորհիվ՝ ալեքսանդրապոլյան համքարային ավանդույթներն ու համայնքի կառավարման ավանդական միջոցները XXդ. 30-ական թթ. սկզբներին համարյա ամբողջովին արմատախիլ արվեցին:

*Էսնաֆուբյունների կառուցվածքը, համքարական ծխակարգ*

Ալեքսանդրապոլի էսնաֆուբյունների թիվը XIXդ. անցնում էր երեսուցից, իսկ համքարային հարաբերությունների շրջանակում ներառված էր արհեստավորաառևտրական քաղաքի համարյա ողջ բնակչությունը:

N	Համքարության անվանումը	անդամների թիվը (վարպետ, ենթավարպետ, աշակերտ)
1	Ատթարներ (մանրավաճառներ)	150
2	Մրգավաճառներ	120
3	Մաշկակարներ	218
4	Խանութպաններ	100
5	Պարանագործներ	45
6	Տրեզագործներ	46
7	Կառապաններ (ֆայտոնցի)	19
8	Քարտաշ-որմնադիրներ (յավուցի)	100
9	Կղմինդրագործներ	12
10	Կաշեգործներ	46
11	Կտոր և թել ներկողներ (շիլաջի)	18
12	Դարբիններ (դամրջի)	247
13	Մագործներ (դասար)	116
14	Պղնձագործներ և կլայեկողներ (դալայջի)	124
15	Զինագործներ	40
16	Հյուսներ (դուրգյար)	23
17	Ատաղձագործներ	150
18	Մոդցարարներ (խզարջի)	44
19	Պայտարներ (մայրանդ)	117
20	Ասիական և եվրոպական դերձակներ	222

21	Կոշկակարներ	100
22	Ոսկերիչ-արծաթագործներ (դույումջի)	63
23	Փականագործներ (շիլինգար)	45
24	Բամբակագործներ և սանձ պատրաստողներ	59
25	Ծխախոտագործներ (թութունջի)	168
26	Ղայթան գործողներ (ղայթանջի)	218
27	Ջուլիակներ	90
28	Գլխարկ կարողներ	65
29	Գզրարներ (հալաջի)	9
30	Հացթուխներ (աքմակջի)	71
31	Բաղնիսպաններ	16
32	Չուռնաջիներ (չալոջի)	23
33	Վառարանագործներ	11
34	Կապույտ գույնով ներկողներ (բոյաջի)	58
35	Մարկիտաններ	89
36	Վարսավիրներ (ղալլաք)	120

Էսնաֆությունները նորաստեղծ Ալեքսանդրապոլում պահպանեցին իրենց ավանդական ներքին կառուցվածքը և ողջ ծիսակարգը, որոնք ձևավորվել և սրբագործվել էին դարերի ընթացքում: 1840-ական թթ. սկզբին Թիֆլիսի գլխավոր վարչությունը հաստատեց Ալեքսանդրապոլի էսնաֆական օրինակելի «Կանոնադրությունը» (սրանից էլ ներքո՝ տարբեր ճյուղային եղբայրություններ ստեղծեցին սեփական կանոնադրական փաստաթղթերը) և մինչև երկրի խորհրդայնացումը այն չնչին փոփոխություններով կիրառվեց որպես իրավական նորմատիվ փաստաթուղթ:

Էսնաֆական աստիճանակարգն ուներ հետևյալ պատկերը. աշակերտ (տեղական բարբառով՝ աշկերտ), ենթավարպետ (խալֆա), վարպետ (ուստա), արհեստավորական որոշակի շարքի (չարսուի) ավագ վարպետ (քեշա կամ քոշա ուստասի), գլխավոր վարպետ (ուստաբաշի) և վերջապես՝ վարպետաց վարպետ (ուստալար-ուստասի): Էսնաֆների միջև խստորեն պահպանվում էին ավագության սկզբունքը և փոխադարձ հարգանքի մթնոլորտը: Մեկ աստիճանից մյուսին անցումը ինիցիացիոն (ճոնման) ծեսերի կիսաթատերականացված շարք էր, որտեղ յուրաքանչյուր մասնակից ուներ իր դերակատարումը և մասնակցության աստիճանը: Քաղաքային կենսաձևին բնորոշ այս ծիսաշարքում վերապրուկի տեսքով պահպանվել են հնուց եկող հասակային և սոցիալ-մասնագիտական խմբերի անցումային ձևերն ու դրանց սոցիալիզացիայի եղանակները: Էսնաֆական աստիճանակարգի յուրաքանչյուր փուլի հաղթահարումը նշանակում էր նաև հասնել քաղաքային համայնքում որոշակի սոցիալական սանդղակի: Բոլոր ենթավարպետների ու վարպետների շրջանում տարածված էր «եղբար» դիմելաձևը, որը ևս միջնադարյան եղբայրություններից մնացած ավանդույթ և կորպորացիայի անդամության հստակ ցուցիչ էր:

Արհեստավորական եղբայրության առաջին աստիճանը աշակերտության համակարգն էր: Ճյուղային յուրաքանչյուր էսնաֆություն սահմանում էր աշակերտության որոշակի ժամանակահատված՝ էլնելով արհեստին տիրապետելու դժվարության աստիճանից: Երբ ծնողը պատանուն բերում էր վարպետի մոտ աշակերտության, ասում էր. «Օսկոռը քեզի, միսը ընձի, դուն իրան նայե քու զավակի պես», և վարպետը, համաձայն Կանոնական նորմի, պարտավոր էր խոստանալ, որ աշակերտին չի տարբերի իր հարազատ զավակներից և նրան «փեշակ» (արհեստ) կտվորեցնի: Վարպետը սկզբում ստուգում էր, թե որքան ուշիմ (ֆայմով) էր ապագա աշակերտը, և եթե հետագայում նա սովորելու ձգտում չէր ցուցաբերում, ապա հեռացվում էր արհեստանոցից:՝ Աշկերտնե-

\* Աշակերտի ուշիմության ստուգման հետաքրքիր եղանակ էին կիրառում դարբինները. Հացի սեղանի մոտ նստած վարպետը ուղարկում էր նորաթուխ աշակերտին ջուր բերելու, և երբ սա վերադառնում էր երկաթյա բաժակի ունկը (կանթը) բռնած, ապա վարպետը լուռ ու մունջ վերցնում էր բաժակը «անֆայմի» (ոչ ուշիմի) ձեռքից, թափում էր ջուրը և բաժակին ամրացնում էր նոր կանթ՝

ընդ սկզբնական տարիներին ոչ միայն արհեստ էին սովորում, այլև վարպետի տանը զանազան կենցաղային հանձնարարություններ էին կատարում (օրինակ՝ վարպետի երեխաներին ամեն շաբաթ ուղեկցում էին բաղնիք): Վարպետը պարտավոր էր աշակերտին «շազիրդանե» (աշակերտավարձ) վճարել, որը կուտակվում էր հետագայում ենթավարպետ ձեռնադրվելիս զանազան ծախսերը հոգալու համար: Աշակերտի համար վարպետը նաև դաստիարակ էր, որը խրատներ էր տալիս, մատնանշում էր քրիստոնեին վայել ճշմարիտ ուղին, սովորեցնում էր պապերի նիստ ու կացը և ծանոթացնում էսնաֆական ավանդույթներին: Կարգազանց աշակերտներին վարպետը կարող էր հանդիմանել, «ուստի սիլա» (ապտակ) տալ (հարկ է նշել, որ էսնաֆական շրջանակներում չէին խրախուսվում մարմնական պատիժները, և հին վարպետները համոզված էին, որ «Մէ լեղի խոսքը հազար հատ սիլա արժէ») կամ վռնդել արհեստանոցից: Դաստիարակության յուրօրինակ ձև էր հիշոց-հայեցողությունը, որն աշակերտը պետք է ընդուներ որպես «օրշնանք» (օրհնանք):

Էսնաֆական հաջորդ աստիճանը ենթավարպետն էր, որին անվանում էին խալֆա կամ կես ուստա: Երբ աշակերտության շրջանն ավարտվում էր, վարպետի առաջարկով տվյալ էսնաֆության մի քանի վարպետ և ուստաբաշին որոշակի ծիսական արարողություններ իրականացնելուց հետո նախկին աշակերտին խալֆայության աստիճան էին տալիս: Ապագա ենթավարպետը կամ նրա ծնողները պարտավոր էին «խալֆայացու հախ» (վճար) տալ վարպետին, սեղան գցել և թաշկինակներ նվիրել ուստաբաշուն, իզիթբաշուն և իր վարպետին: Ձնելուց հետո խալֆայի կատարած ինքնուրույն աշխատանքը ուստաբաշին դիմում էր հավաքված վարպետներին. «Ուստեք, իսիզ կռնա՞ խալֆա էղնի» և ստանալով դրական պատասխան՝ ասում էր. «Էս տղի մեղքը ձեր վիզը»: Մրանից հետո խալֆան մի երկու «ուստի սիլա» էր ստանում իր վարպետից և լսում էր հետևյալ ուսանելի բարենախոսանքը. «Չտեսածդ չվկայես, չսածդ չխոսիս, չդրածդ չվերցնես, մեր փիրի անեծքին ենթարկվիս, թե էս պատվիրանները չկատարես»: Նորընծա ենթավարպետներից շատերը շարունակում էին աշխատել իրենց վարպետի արհեստանոցում կամ էլ, եթե վարպետը ցանկություն և օգնություն էր ցուցաբերում կարող էր բացել սեփական կրպակը: Այսպիսի օգնություն ցուցաբերած վարպետները մեծ հարգանք էին վայելում քաղաքում, և վարպետն ինչքան շատ խալֆա էր պատրաստել, այնքան մեծ էր նրա հեղինակությունը: Օգնություն ստացած խալֆաներին Ալեքսանդրապոլում անվանում էին «չրադ» (ճրագ), քանի որ արհեստանոց և գործիքներ տրամադրած վարպետը, մտնելով նորաբաց կրպակը, մոմ կամ ճրագ էր վառում օջախին: Խալֆաները կամ կես ուստաները մասնակցում էին էսնաֆական ժողովներին և նրանց կողմից իրականացվող միջոցառումներին, սակայն մինչև վարպետ դառնալը չէին համարվում էսնաֆության լիիրավ անդամներ:

Վարպետները էսնաֆության լիիրավ անդամ էին և քաղաքում մեծ հարգանք էին վայելում: Խալֆայից ուստա դառնալու գործընթացը ևս ուղեկցվում էր հատուկ ծիսական արարողություններով և պարտադիր գործողություններով: Վարպետացուի ուսուցիչ ուստան էսնաֆության վարչական մարմնին կամ ժողովին էր ներկայացնում թեկնածուին՝ թվելով նրա բոլոր արժանիքները: Վարպետացուի աշխատանքին հավանություն տալուց հետո ուստաբաշին նշանակում էր ձեռնադրության օրը և տեղը: Վարպետ ձեռնադրելու համար կարևոր պայման էր համարվում նաև թեկնածուի տարիքը, քանի որ հարիք ու վայել չէր անբեղ-անմորուս մեկին հավասարների շարքը դասելը: Բնության գրկում որևէ տեղ՝ դաշտում, ավանդական կերուխումի վայրերում (XIXդ. երկրորդ կեսից հիմնականում հավաքվում էին Քյանդարովենց այգում) տվյալ էսնաֆության ուստաբաշու գլխավորությամբ հավաքվում էին վարպետները և նստում ըստ կարգի: Ուսուցիչ հարցին թե՛ «Դու ի՞նչ կըսես», վարպետացուն, ցույց տալով վարպետներին, պատասխանում էր. «Կամքը ինձնցն է»: Վարպետների համաձայնությունը ստանալուց հետո ուստաբաշին թաշկինակ կամ փուշի (քող) էր քցում վարպետացուի գլխին, իսկ ուսուցիչ-վարպետը ի նշան «օրթաղության» (գործակցության, հավասար

*նորից նրան ջրի ուղարկելով: Երբ «անֆայն»-ը վերադառնում էր՝ արդեն երկու կանթը բռնած, վարպետը սրան վռնդում էր՝ բացատրելով, որ կանթն իր համար է խփված, քանզի իր ձեռքերը մաքուր չեն և կարող են մրտնել բաժակի շուրթը:*

իրավունքներ ստանալու) ձախ ձեռքով գրկում է նրա պարանոցը: Ծեսին ներկա գտնվող քահանան «Մաշտոց»-ի աշակերտ ձեռնադրվելու հատվածն էր կարդում: Ուստաբաշին, նախօրոք հեռացնելով երիտասարդ էսնաֆներին, օձյալ վարպետի ականջին շշմշում էր հետևյալ ծածկագիր-բանաձևը. «Օր կհարցնեն՝ ուրտեղ ես օձվել, կսես օր ձեռնադրվել եմ քաղաքը, կապուտ գմբեթի տակ, կանանչ խալու վրա»: Այնուհետև ուստաբաշին հայրական խրատ էր կարդում, ուսուցիչ-վարպետը «ուստա սիլասի» էր տալիս, վարպետացուն որպես «հախ» ներկաներին նվիրում էր խալաթ, փուշի արխալուղ, քաշկինակ, և սկսվում էր խնջույքը: Ձեռնադրված նորաթուխ վարպետը կարող էր «օրթախությամբ» (կիսովի) աշխատել իր ուսուցիչ-վարպետի հետ կամ էլ բացել սեփական գործը: Վարպետը էսնաֆության լիիրավ անդամ էր. մինչ իր մահը օգտվում էր այն արտոնություններից և իրավունքներից, որոնք բխում էին իր բարձր կարգավիճակից:

Ալեքսանդրապոլում անընդհատ ընդլայնվում էր քաղաքի գործարար հատվածն ու շուկան, ուստի նոր առաջացած արհեստավորական շարքերը կառավարելու համար ստեղծվում է «քոշա ուստասիի» պաշտոնը (այն բացակայում է արևելահայ մյուս համքարություններում), որը հաշվետու էր ճյուղային էսնաֆության ղեկավարության առջև և կարգավորում էր տվյալ տարածքում աշխատող արհեստավորների միջև հարաբերությունները:

Ճյուղային համքարության գլուխ կանգնած էր ուստաբաշին, որը պետք է լիներ հմուտ, առաքինի և պատվարժան վարպետ: Ուստաբաշու հեղինակությունը չափազանց մեծ էր էսնաֆների և քաղաքային հասարակության շրջանում: Նա էր հարթում էսնաֆների միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները, պատժում կարգազանցներին, կազմակերպում կարիքավորների օգնությունը, հոգ տանում որբերի և այրիների մասին, կապող օղակ էր իշխանությունների և իրեն ենթակա էսնաֆների միջև:

Ալեքսանդրապոլի ուստաբաշիներն իրենց շրջանից ընտրում էին վարպետաց վարպետին, որի գործառույթներն ավելի շատ ներկայացուցչական էին:

Էսնաֆական կառավարման կառույցը ներկայացնում էին մի քանի պաշտոնյա՝ ուստաբաշին, աղսախկալները (օգնականները), խազնադարը (գանձապահ) և իզիթբաշին (կատարածու): Այս պաշտոնյաներին ընտրում էր ճյուղային էսնաֆության ժողովը և վարչական մարմինը ստանում էր լայն լիազորություններ:

Ալեքսանդրապոլի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր հովանավոր սուրբը կամ սուրբ նախահայրը («փիրը»), որի պատկերը նկարված էր էսնաֆական դրոշմին: Հայր Հովսեփը հյուսների հովանավորն էր, Դավիթ մարգարեն՝ դարբինների, Աբելը՝ քարտաշ որմնադիրների, Հաբեթի որդի Թորելը՝ պայտագործների, Սր Հովհան Օձնեցին՝ զինագործների և այլն: Փիրերի անվանակոչության և տաղավար տոների օրերին էսնաֆության անդամները խաչվառներով և դրոշմերով հանդիսավոր ծիսական երթեր էին կազմակերպում, համայնական մատաղ էին մատուցում, ուխտի էին գնում համապատասխան սուրբ նախահայրերին նվիրված սրբավայրերը: Ալեքսանդրապոլցի արհեստավորները երթվում կամ էլ նգովում էին «փիրաց-վարպետաց» անունով:

## ГОРОДСКИЕ ЦЕХА АЛЕКСАНДРОПОЛЯ В XIX ВЕКЕ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Г. Аганян \_\_\_

Александрополь XIX в. унаследовал цеховые традиции, которые еще в средние века развивались в городах Карин, Карс и Баязет. На их основе сформировались взаимоотношения ремесленных объединений и обществ, которые были присущи западноармянской классической городской общине. В статье рассматриваются основные принципы функционирования городских цехов – эснафств.

## Լատրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼ - ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1850-1988թթ.)

Գյումրու, ընդհանրապես Շիրակի գեղարվեստի ու արվեստագետների թիկունքում հայկական մշակույթի հսկայական կենսափորձն է, որ չափվում է դարերի պատմությամբ՝ կապվելով վաղ միջնադարի հետ: Փաստերը վկայում են, որ դեռևս VII-VIIIդդ. Շիրակում գործել է Կամսարականների մանրանկարչության դպրոցը: Իսկ հայկական որմնանկարչության առաջին նմուշները կապում են VII դ. Շիրակի ճարտարապետության հետ, վկա՝ Լմբատավանքի Սբ Ստեփանոսի որմնանկարները (661-666թթ):

Եթե VIIIդ. կերպարվեստից մեզ աղոտ տեղեկություններ են հասել, ապա միջնադարյան Անիի մանրանկարչական դպրոցի մասին (X-XI և XIIIդդ.) շատ բան է հայտնի: Անիում հայ գրչության ու արվեստի խոշորագույն կենտրոններից մեկում են աշխատել հայ միջնադարյան մանրանկարչության փառքը հանդիսացող Մարգարեն, Իզնատիոսը, Գրիգոր Ծաղկողը: Այստեղից են մեզ հասել բազմաթիվ նկարազարդ ավետարաններ, որմնանկարչության ու որմնաքանդակի փայլուն հուշարձաններ՝ Սբ Աստվածածին տաճարի հարթաքանդակներն ու որմնանկարները, Աբուղամրեց Սբ Գրիգոր և Սբ Փրկիչ եկեղեցիների որմնանկարները: Այսպիսի հարուստ մշակութային անցյալ ունեցող Անիի հարևանությամբ ձևավորվող Գյումրին չէր կարող չկրել այդ հրաշակերտ մշակույթի ազդեցությունը, ուրեմն մաս չդառնալ այդ ձեռակերտ արարչագործության յուրովի ժառանգորդն ու զարգացնողը:

Անիի անկմամբ Շիրակի ընդհատված մշակութային կյանքը դարեր անց վերստին սկսում է աշխուժանալ: Եվ դա՝ բազմաթիվ դարերի ճանապարհ կտրած մի բնակավայրում, ինչպիսին Գյումրի-Ալեքսանդրապոլն էր: Քաղաք, որ արդեն մեր ամենամոտիկ անցյալի՝ XX դարաշեմին մեր կերպարվեստի հայաստանյան կենտրոնատեղին դարձավ՝ իր տեղաբնակ արվեստագետներով, արվեստասեր հասարակայնությամբ ու գեղարվեստի գործերով: Այդ երևույթի հիմքում, անշուշտ, այն սոցիալ-քաղաքական նպաստավոր պայմաններն էին, որում հայտնվել էին Շիրակն ու զավառակենտրոն Ալեքսանդրապոլը Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելուց հետո:

XIXդ. Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքը համեմատաբար հանգիստ էր, առանց ակնառու դրսևորումների: Բայց XXդ. առաջին տարիներից սկսած՝ Ալեքսանդրապոլի գեղարվեստի զարգացման ընթացքը թափ առավ: Գրական, թատերական և երաժշտական կյանքի աշխուժացման հետ զարգացման իր հունը գտավ մաս կերպարվեստը՝ որմնանկարչության, դեկորատիվ, կիրառական, մանրանկարչության, հաստոցային գեղանկարչության տարբեր ժանրերի՝ կենցաղային թեմայի, դիմանկարի, բնանկարի առանձին նմուշները: Դարասկզբին Ալեքսանդրապոլում ապրած ու ստեղծագործած դիմանկարային արվեստի ամենափայլուն վարպետներից մեկը պուսահայ Ենոք Նազարյանն էր՝ իր ողջ ստեղծագործական կյանքը Ալեքսանդրապոլին ու նրա մարդկանց նվիրած մի արվեստագետ: Նրա կավճանկար «Հ. Հեքիմյանի», «Մ. Հեքիմյանի», «Կարապետ Կուզիկյանի» դիմանկարները լուրջ ներդրում են այդ ժանրում: Ե. Նազարյանի ժամանակակիցն էր տեղացի նկարիչ-ազգագրագետ Արշակ Բրուտյանը (1866-1936): Նրան են վերագրվում Յոթվերջ եկեղեցու որմնանկարները, Ալ. Մխիթարյանցի, տեր Խորեն քահանա Արզարյանի դիմանկարները, որոնք վկայում են նկարչի մասնագիտական պատրաստվածության մասին: 1912թ. նկարչական ասպարեզ է իջնում մաս նրա որդին՝ Գ. Բրուտյանը, որի անվան հետ էին կապվելու Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքում տեղի ունեցած գրեթե բոլոր դրական տեղաշարժերը: Նրա նախաձեռնությամբ էլ 1913թ. քաղաքում կազմակերպվում է մեր իրականության մեջ առաջին նկարչական ցուցահանդեսը, իսկ 1916թ.՝ նկարիչների առաջին միությունը: 1915-20-ական թթ. ծանր իրադարձությունների տարիներին Ե. Նազարյանը կարճ ժամանակով լքում է Ալեքսանդրապոլը, իսկ Գ. Բրուտյանը նախ մասնակցում է Մայիսյան ապստամբությանը, ապա՝ խորհրդային կարգերի հաստատմանը:

1921թ. քաղվում է Անդրկովկասում առաջին նկարչական դպրոցը (այժմ Ս.Մերկուրովի անվան), որն առաջին լուրջ մշակութային իրադարձությունն էր քաղաքում: Դպրոցում սկսում են դասավանդել այդ ժամանակի շնորհալի նկարիչներ Եղիսարեթ Պատկանյանը, Աշոտ Սաֆարյանը, Ստեփան Ալթունյանը, Մամիկոն Փանոսյանը, Յուլյա Վերթիցկայան, Հնայակ Ավետիսյանը՝ մանկավարժական աշխատանքը զուգակցելով ստեղծագործելու հետ: Անգնահատելի է այս դպրոցի ներդրումը նկարիչների պատրաստման գործում: Խորհրդային արվեստի առաջին քայլերը կատարվեցին այդ ժամանակի համար ամենաարդիական քաղաքական գրաֆիկայի և ծաղրանկարի ոլորտներում (Գ. Բրուտյան, Հ. Ռուխլյան, Կ. Տիրատուրյան): Նկարիչների ուշադրության կենտրոնում են հայտնվում նաև քաղաքի և նրա մարդկանց կյանքում տեղի ունեցող վերափոխությունները: Ստեղծվում են աշխատանքի առաջավորների և քաղաքի երևելիների դիմանկարներ: Դիմանկարը դառնում է ժամանակի պահանջված ժանրերից մեկը: Այդ ժանրում աչքի ընկնող գործեր էին Գ. Բրուտյանի լինոփորագրություններն ու գրչանկարները (Պայկովսկու, Արշակ Բրուտյանի, Լենինի, Պեչնիկ Թաթոսի) և Ե. Նազարյանի մի շարք կավճանկար-դիմանկարները:

Առանձին ստեղծագործությունների նյութ են դառնում քաղաքի խորհրդային վերակառուցումն ու «բուլձևիկ» Շիրկանայի շինարարությունը: 1929-1934թթ. քաղաքում քաղվում է երեք նկարչական ցուցահանդես: Լենինականում սկսվում է գեղարվեստի իսկական վերածնության շրջան: Երևան են գալիս նաև քանդակագործության առաջին նմուշները: Կերպարվեստի այս տեսակը, ի տարբերություն գեղանկարչության, քաղաքում մեծ ավանդույթներ չունեցավ: Քանդակագործության ոլորտում ևս զարկ է տրվում դիմաքանդակ-հուշարձաններին: Մոնումենտալ պլաստիկայում մեծ հաջողությամբ հանդես է գալիս «օխտը պորտով գյումրեցի» Սերգեյ Մերկուրովը (1881-1952) և գյումրեցի, բայց իր ողջ ստեղծագործական կյանքը Երևանում անցկացրած Մուրեն Ստեփանյանը: Սերգեյ Մերկուրովի՝ Ս. Շահումյանի, Վ.Լենինի և Ս. Ստեփանյանի՝ Մայիսյան ասպատամբության հերոսների հուշարձանները Լենինականում, Վ. Դուկասյանի արձանը Երևանում քանդակագործական արվեստի անկրկնելի նմուշներ են: Իր հուշերում մեծանուն քանդակագործը առանձնահատուկ սիրով ու գորովանքով է խոսել գյումրեցի քարտաշ վարպետների մասին՝ խոստովանելով, որ իր հրաշք քանդակագործական արվեստի այբուբենը յուրացրել է քաղաքային աղմուկից հեռու՝ գերեզմանոցում՝ շիրմաքարերի վրա, հարթաքանդակներ ու նախշեր անող այդ զարմանալի իմաստուն մարդկանցից: Ամբողջ կյանքում, «ականջին օդ արած», հիշել է նրանցից մեկի խոսքերը, որ իր առաջին և երբեք չմոռացվող գործնական դասն են եղել. «Տես, որ քո քանդակած բլբուլը չնմանվի պոչխաղուկի: Այնպես աշխատիր, որ վարդերը քո կտրիչի տակ բուրեմ ավելի լավ, քան իսկականը, և բլբուլն իր երգով իսկականից հազար տարով ավել դիմավորի արևածագը և ուրախացնի հանգուցյալի հոգին: Լավ վարպետի ձեռքում քարը կենդանանում է, իսկ վատի ձեռքում՝ դառնում փոշի: Երբ մեծանաս, չթողնես մեր արհեստը... Սպասի՛ր համբերությամբ և աշխատի՛ր»: Իսկ արդեն տարիների բեռից իմաստնացած քանդակագործն այսպիսի տողեր է թողել սերունդներին՝ իբրև իր ծննդավայրի նկատմամբ որդիական անախի սիրո ու երախտապարտության առհավատչյա. «Մեջս ինչ հունար կա, Գյումրվա հող ու ջրեն է: Ախր մեր էլ օրհնված քաղաքը խուրդժնիկ քաղաք է, ինտել առանց հունարի մարդ չես գտնի»:

XXդ. 30-ական թվականներին քաղաքի արվեստասեր հասարակության հոգևոր կենտրոն էր դարձել Լենինականի թատրոնը: Մինչ այդ դերասանական առանձին խմբերի ներկայացումները քաղաքում չունեին նկարչական ձևավորում, չկային համապատասխան դեկորներ, դերակատարների համար անհրաժեշտ հագուստներ, օգտագործվող ստանդարտ դեկորներն էլ անում էին ոչ թե նկարիչները, այլ վարպետ ներկարարները: Միայն 30-ական թվականներից ներկայացումների ձևավորման աշխատանքներում սկսեցին ներգրավվել արվեստավարժ նկարիչներ, և սկիզբ դրվեց թատերական արվեստի նոր ոլորտի՝ բեմանկարչությանը:

Լենինականում աշխատած առաջին բեմանկարիչը մոսկվացի էր՝ Վ. Շերիշևը: Վ. Աճեմյանի և այլոց կարծիքով՝ նա գերազանց նկարիչ-ձևավորող էր՝ իր սեփական աշխարհով, կյանքի իր զգացողությամբ: Շերիշևի դեկորները պատկերավոր էին և միաժամանակ անչափ թատերային: «Մարոկո», «Հատակում», «Շահնամե», «Գոշ»

ներկայացումների նրա ձևավորումները անմոռաց տպավորություն էին թողնում քատերասեր հասարակության վրա:

1935թ. Լենինականում սկսում է գործել Ն. Կրուպսկայայի (այժմ՝ Ստեփան Ալիխանյան) անվան տիկնիկային թատրոնը: Թատրոնում երկար տարիներ որպես նկարիչներ աշխատեցին Մուրեն Ստեփանյանը, Արաքսյա Աբրահամյանը, որոնց գունազեղ ձևավորումներն ու զարմանահրաշ տիկնիկները մանուկների կյանքը դարձնում էին հեքիաթ («Գառնիկ ախպերը», «Կարմիր գլխարկը», «Արեգնազանը», «Անահիտը»):

Հայրենական Մեծ պատերազմն իր ուրույն ուղղումները մտցրեց քաղաքի գեղարվեստական կյանքի ընթացքի մեջ: Գյուրնեցու ազգային բնավորությանն ու հոգեկերտվածքին մշտապես հատուկ հավատը ճշմարտության, բարու, լուսավոր սկզբի, մարդասիրության վերջնական հաղթանակի նկատմամբ օգնեցին նրան՝ դաժան փորձության այդ տարիներին: Այդ հավատի շնորհիվ գյուրնեցին դիմագրավեց պատերազմի արհավիրքներին ու թեև պատերազմի անմիջական մասնակիցը չէր, սակայն հսկայական զոհեր ու ողբերգություններ ունեցավ:

Լենինականի նկարիչներն իրենց վրձնով էին խրախուսում ճակատայիններին, իրենց ստեղծագործություններով խոսում հայրենասիրության, հավատարմության ու մոտավորտ հաղթանակի մասին: Պարադոքսային կարող է թվալ, սակայն պատերազմը ոչ միայն չկարողացավ խոչընդոտել արվեստի զարգացումը, այլև խթանեց այն. գեղարվեստական կյանքը քաղաքում երբեք այնպիսի հետևողական զարգացում չէր ունեցել, ինչպես այդ դժնդակ տարիներին: Առանձնակի աշխուժություն կար հատկապես ծաղրանկարչության, քաղաքական պլակատի ժանրերում, նաև պատմական թեմաներով գեղանկարչության մեջ: Արդեն 1941թվականի դեկտեմբերին Երևանում բացվում է պատերազմական շրջանի առաջին «Հայ նկարիչները Հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսը, հետո՝ 1942-ի ցուցահանդեսը, որոնց ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև լենինականցի նկարիչները՝ Խ. Շալայանը, Գ. Բրուտյանը, Մ. Ասլամազյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Ռուխկյանը: Ասլամազյանի ցուցադրած «Հերոսի վերադարձը», «Հերոսի երգը», «Լուրեր ռազմաճակատից» սյուժետային աշխատանքները պատերազմական տարիներին երկրում ստեղծված լավագույն աշխատանքներից են: Այս տարիներին քանդակագործության առաջնահերթ խնդիրը՝ մոնումենտալ քարոզչությունը լավագույնս դրսևորվեց Ս. Ստեփանյանի՝ Գ. Գեմիրճյանի և Ա. Իսահակյանի դիմաքանդակներով, բազմաֆիգուր «Հոկտեմբեր» քանդակով: Պատերազմն իր արտացոլումն է գտնում նաև 1944թ. Լենինականում Շանթ Մարգարյանի կազմակերպած ցուցահանդեսում: 1942թ. Մոսկվայից նոր վերադարձած այս շնորհալի նկարիչը շուտով իր ձեռքն է վերցնում քաղաքի գեղարվեստական կյանքի կազմակերպումը: Նա ստանձնում է նաև նկարչական դպրոցի տնօրինությունն ու իր շուրջը համախմբում այդ տարիներին քաղաքում ստեղծագործող մյուս երիտասարդ նկարիչներին (Հ. Մահակյան, Հ. Անանիկյան, Գ. Կարապետյան) և դպրոցի հիմքի վրա էլ ստեղծում Նկարիչների միության Լենինականի բաժանմունքը:

Անհնար է պատկերացնել 40-ական թվականների Լենինականի թատրոնն առանց նկարիչ Մելիքսեթ Մվախչյանի: Թատրոնի նկարչի իր կարճատև գործունեության՝ 1941-46թթ. ընթացքում, նրան հաջողվում է նոր քայլ անել քաղաքում քատերական նկարչության բարձր մակարդակը պահելու համար: Իր կարճ, բայց բեղմնավոր կյանքի ընթացքում նկարիչը ձևավորել է տասնյակից ավելի ներկայացումներ: Մվախչյանի արվեստը դեկորատիվ էր, լակոնիկ, բայց նրան հաջողվում էր վրձնել դրամատիկական գործողությունների հաջողված բեմական իրադրություններ: Գույնը Մվախչյանի պատկերավոր մտածողության արտահայտման ամենակարևոր տարրերից էր: Նա ձևավորել է «Երկիր հայրենի» դրաման, «12-րդ գիշեր»-ը, «Ժայռը», «Կրեչինսկու հարսանիքը», «Արա Գեղեցիկ»-ը: Անհեթեթ մահը թույլ չտվեց նկարչին ավարտել «Արա Գեղեցիկ» ներկայացման ձևավորումը, որն ավարտին հասցրեց Կարո Միմասյանը: Վերջինս Լենինականում ձևավորել է մի շարք ներկայացումներ՝ «Իրկուտսկյան պատմություն», «Թմբկահարուհին», համեմատաբար հաջողվածը Լ. Ջաբարով «1905թ.» ներկայացումն էր: 40-ական թվականներին մի կարճ պահ թատրոնի հետ է աշխատել նաև Շ.Մարգարյանը: Նա է իրականացրել «12-րդ գիշերը» ներկայացման

համար Մ. Մվախչյանի արած էսքիզները և ձևավորել «Երիտասարդ գվարդիան», «Ամուսնություն», «Արջը» ներկայացումները:

Հետպատերազմյան առաջին տարիներին արվեստագետների ստեղծագործական առաջնահերթ խնդիրը հաղթանակած ժողովրդի կյանքի նոր շրջանի կերպարային արտացոլումն էր: Հետպատերազմյան արվեստը միանգամից չգտավ նոր հերոսներ ու նոր տպավորություններ. այն դեռ հազեցած էր պատերազմական տարիների հիշողություններով: Ռեալիզմի վերադարձած Հ.Անանիկյանը 1947թ. նկարում է «Հայածվածները» մեծածավալ կտավը, իսկ 1950թ.՝ «Հայ կնոջ պատիվը» աշխատանքը, Շանթ Սարգսյանի 50-ական թվականների գաղափարակերպարային որոնումներն արտացոլվեցին ժամանակակից թեմաներով «Հին Լենինականում», «Մանթալ», «Լեն-Հե-Կը», «Բանվորի դիմանկարը», դերասան «Ա. Արմենյանի դիմանկարը» կոմպոզիցիաներում: Այս տարիներին Լենինականում էին նաև նկարիչներ Գուրգեն Կարապետյանը («Ուստա Հարութը», «Կայֆաչի Սեթոն»), «Վարսավիր Վասիլը», «Ուստա Սերգոն» և բնանկարների շարք), Հարություն Սահակյանը, Սերյոժա Միրզոյանը, արդեն Երևանում էին Մ. Ասլամազյանը, Խ. Եսայանը, Ա. Աբրահամյանը, Կ. Տիրատուրյանը, Հ. Ռուսկյանը, Գ. Բրուտյանը: Վերջինս Հայրենական պատերազմին նվիրված իր «Մարշալ Ժուկովը ձիու վրա», «Օդաչուն», «Հայրենական պատերազմ», «Պարտիզաններ» լինոփորագրություններին ավելացնում է նաև «Հին Գյումրի» գրաֆիկական և «Սոցիալիստական Լենինական» լինոփորագրությունների շարքերը: Խ.Եսայանի տարերքը քաղաքի փողոցների աղմկոտ կյանքի, հրապարակների քաղաքի մտերմիկ, անաղմուկ անկյունների գունագեղ պատկերումն էր («Ապրիլ», «Մայիս», «Արտավազդի եկեղեցին»): Հյուսիսում հազեցած երփնագիր ունեին Արտաշես Աբրահամյանի բնապատկերները («Ոսկեվազի առավոտ», «Վարդավառը», «Ծերունին ու ծառը»): Իսկ «Գառնիի կիրճը», «Հայկական նատյուրմորտ», «Հայաստանի մրգերը», «Դեղձերը», «Հեռացող Լենինական» աշխատանքներում բացահայտվում է Մ. Ասլամազյանի ինքնատիպ ազգային ստեղծագործական ելությունը: Արվեստի օգնությամբ մարդու մեջ կեցության ուրախություն, կյանքի և բնության նկատմամբ սեր արարելու նպատակ ունեն նաև նրա փոքր քրոջ՝ Ե. Ասլամազյանի այդ շրջանի գործերը՝ «Հարագատ գյուղում», «Լավաշ են թխում», «Ապարանցի աղջիկը» և այլն: Իրենց արվեստով նրանք դեկորատիվ գեղանկարչության մույն սկզբունքների, աշխարհի, իրականության ընկալման ու արտահայտման տիպիկ ազգային գծերի կրող նկարչուհիներ էին:

50-ական թվականներին ավագ սերնդի կողքին հասունանում էր լենինականյան նկարիչների հաջորդ սերունդը՝ իր թարմ թեմատիկայով, ուրույն գեղարվեստական աշխարհագրություններով, կյանքի իր նորովի ընկալումներով՝ Մ. Ավետիսյան, Ն. Գյուլիքեխյան, Ա. Հովհաննիսյան, Զ. Գրիգորյան, Ա. Պապիկյան, Հ. Մինասյան, Ա. Մեքունյան, Մ. Գրիգորյան, Ռ. Աթոյան, Գ. Հովսեփյան, Է. Արծրունյան, Հ. Թարգյան, Խ. Վարդպարունյան, Մ. Թորմաշյան, Ալ. Գրիգորյան, Շ. Հերթեցյան և էլի շատ ուրիշներ: Թեև կերպարվեստի առաջատար բնագավառը դարձյալ գեղանկարչությունն էր, բայց ճարտարապետության, քանդակագործության և գեղանկարչության սինթեզի հիմքի վրա քաղաքում սկսում են զարգացում ապրել նաև դեկորատիվ քանդակագործությունն ու մոնումենտալ գեղանկարչությունը:

Հայ կերպարվեստի 60-ական թվականների նոր վերելքի խորհրդանիշը Շիրակ աշխարհի որդին՝ Մինաս Ավետիսյանը դարձավ: Նրա հայտնությունը ջերմորեն ողջունեց Մ. Սարյանը: Մինասը բազմաստեղծ նկարիչ էր. բնանկարներ, դիմանկարներ, թեմատիկ սյուժետային պատկերներ, քնարական ու լուսավոր որոնանկարներ Լենինականում, Ազատանում, Մարմաշենում: Մոնումենտալ գեղանկարչության ասպարեզում ժամանակակից գեղանկարչության ձևերի և ազգային ավանդույթների խորքային իմացության համադրումից ծնվեցին որոնանկարի միմասյան գլուխգործոցները Լենինականում: Դրանք «Անալիտիկ սարքեր», «Էլեկտրասարք», «Գավառամետր» և «Ստրոմնաշինա» գործարաններում արված «Թորոս Ռոսլինի ծնունդը», «Երկանք», «Գորգ են գործում», «Խաչքարի մոտ», «Հայաստանի լեռներում» որոնանկարներն են, որոնց մի մասը երկրաշարժն ավերեց, իսկ համեմատաբար լավ վիճակում հայտնվածների պահպանվածության օրախնդիր հարցն այսօր հրատապ լուծում է պահանջում: Ի դեպ, «Ստրոմնաշինա» գործարանի նախկին ճաշարանի պատերին են նաև Ռ. Աթո-

յանի և Հ. Հակոբյանի բարձրարժեք որմնանկարները: Հիշարժան են նաև որմնանկարչության մեկ այլ վարպետի՝ Հ. Մինասյանի Հղկող հաստոցների գործարանի բանվորական ճաշարանի պատի դեկորատիվ ձևավորումն ու Ա. Մելքոնյանի «Մրինգր» որմնանկարը (որոնք ոչնչացան երկրաշարժից՝ շենքի փլուզման պատճառով): Հիացմունքի է արժանի «Գյումրի» ռեստորանի «Ձուտնաչիներ» որմնանկարը, որը հեղինակել էին Խ. Վարդպարոնյանն ու Ֆ. Մանուկյանը: Վերջինիս էր պատկանում նաև երկաթուղայինների ակումբի պատի «Մասունցիները» դեկորատիվ պաննոն:

Այդ շրջանում գեղանկարի ու գրաֆիկայի գյումրեցի փայլուն վարպետներից էր նաև Ալեքսանդր Գրիգորյանը՝ գեղարվեստի Մարյանական դպրոցի ամենահավատարմորդ ներկայացուցիչը: Նույն գեղարվեստական ակունքներից է սերվել նաև մեկ այլ տոհմիկ գյումրեցի՝ Հովհաննես (Օնիկ) Մինասյանը: Ստեղծագործական աշխարհ մտնելով հաստոցային գեղանկարչությանը՝ նա կյանքի վերջին տարիները նվիրեց ճարտարապետության և գեղանկարչության սինթեզի խնդիրներին: Որմնանկարչությունը, այն էլ իր պաշտելի ծննդավայր Գյումրիում, նկարչի ստեղծագործությունների լավագույն մասն է:

Երևանաբնակ գյումրեցի նկարիչներից էր նաև հազվագյուտ գրագետ, արտիստիկ, հիանալի դիմանկարիչ և բնանկարիչ Աշոտ Մելքոնյանը, որը մեծ թարմություն ու նուրբ քնարականություն բերեց այդ տարիների գեղանկարչության մեջ: Իսկ մեկ այլ շիրակցու՝ Ռաֆայել Աթոյանի ստեղծագործությունների ակունքը իր մանկությունն էր, լենինականյան փողոցներն էին՝ իրենց առօրյա եռուզեռով: Ռ. Աթոյանն իրավամբ Շիրակի ինքնատիպ գեղանկարչական դպրոցի բարձրաճաշակ, նուրբ ու զգացմունքային ներկայացուցիչն էր:

Այս աստղաբույլն անշուշտ կաղքատանար առանց Աշոտ Հովհաննիսյանի (Դեղձ Աշոտ) և Հին Գյումրին մոռացությունից փրկող Հակոբ Անանիկյանի անունների: Ա. Հովհաննիսյանի պայծառ ինտելեկտն ընկալում էր միայն ազնիվն ու լուսավորը, նրա լուսատես երևակայության աշխարհը տրոփում է կյանքի զգացողությանը և առողջ կենսասիրությանը: Կտավները գուսպ են, ժլատ արտահայտչամիջոցներով, բայց իմաստալից, խորքային, ի գորու վեհացնելու, հուզելու մարդու հոգին («Մայրը երեխայի հետ», «Հանդիպում», «Գյուղական մտփով», «Մարդը ավանակի հետ»):

Հ. Անանիկյանի արվեստը սիրո ու բարության արտահայտություն է Գյումրու ու նրա մարդկանց նկատմամբ, որովհետև Անանիկյանն ինքը հունցած էր նույն խնդրից, ինչ իր հերոսները՝ հին գյումրեցիները («Պոլոզ Մուկուչը», «Օնեսի սերը», «Ղաֆա Միմոնը», «Թոքմաջենց Սերոբը», «Ֆոնջի Միմոնը»): Լենինականը նաև բազմակողմանի օժտված, ճոխ երևակայության տեր նկարչի՝ Սուրեն Ստեփանյանի ծննդավայրն ու ստեղծագործական բնօրրանն է: Նրա մի շարք աշխատանքներ («Բակ Լենինականում», «Հին Լենինականում», «Բռշի թաղը») իր հարազատ քաղաքի նկատմամբ նկարչի անթաքայց սիրո ու նվիրվածության հիմն են: 60-ական թվականների երևանաբնակ գյումրեցի նկարիչների շարքը թերևս կամբողջանա Էդուարդ Արծրունյանի, Գարուշ Հովսեփյանի, Ջուլյուն Գրիգորյանի, Մասիս Գրիգորյանի, Մարտին Պետրոսյանի, Քնարիկ Վարդանյանի, Վարդիթեր Կարապետյանի և այլոց անուններով:

Գետևա 1945թ. ստեղծված Նկարիչների միության Լենինականի բաժանմունքը նկարիչների ստեղծագործական կյանքի գործուն կազմակերպիչն էր քաղաքում: Ամենամյա գեղարվեստական ցուցահանդեսների կազմակերպումը քաղաքում խոշոր ու անգնահատելի դեր է խաղացել ինչպես բարձրարժեք ստեղծագործությունների արարման, այնպես էլ բազմաթիվ ու, հիրավի, տաղանդավոր արվեստագետների պրոպագանդան գործում: Ցուցասրահի բացակայության պատճառով դրանք այդ տարիներին սովորաբար կազմակերպվում էին նկարչական դպրոցում: Անվանի նկարիչներ Ս.Միրզոյանի, Խ.Վարդպարոնյանի, Ա.Շատուրյանի, նկարչուհիներ Ա.Աբրահամյանի, Ն. Մաֆյանի, Ն.Նալբանդյանի, համեմատաբար երիտասարդ նկարիչներ Ֆ. Մանուկյանի, Է.Եղիզարյանի, քանդակագործ Ջ.Կոշտոյանի ցուցահանդեսները երևելի մշակութային իրադարձություններ էին քաղաքում, որը չէր մոռանում ցուցադրել նաև իր երևանաբնակ զավակներին՝ Խ. Եսայանի, Ա.Աբրահամյանի, նաև այլ նկարիչների աշխատանքներ (Ս. Մաֆայրյան, Գառզու): Քաղաքի մշակութային կյանքում երևույթ եղան Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոցի 50 և 60-ամյակների առիթով կազմա-

կերպված ցուցահանդեսները՝ նրա համարյա բոլոր տարիների շրջանավարտների գործերի ցուցադրմամբ: 1981թ. Լենինականում բացվում է Հայաստանի պատկերասրահի լենինականյան մասնաճյուղը, որը քաղաքի արվեստասեր հանրությանը հնարավորություն է ընձեռում հետալսու ի մտոտ հիանալու հայ և համաշխարհային շատ վարպետների գործերով:

Այդ տարիներից սկսած՝ քաղաքի «գեղեցկացման» գործում սկսեցին գործունեորդում ունենալ նաև գեղարվեստի մարդիկ: 1962թ. Մոսկվայից եկավ և քաղաքի գեղարվեստական կյանքի կազմակերպմանը նվիրվեց վաստակավոր նկարիչ Խաչատուր Վարդպարյանը: «Հայռեկամի» տնօրենն ու նկարիչների միության նախագահը (Շ.Սարգսյանից հետո) ուղղակի մեծ նվիրումով էր մասնակցում թե՛ հայրենի քաղաքի գեղեցկացման և թե՛ նրա գեղանկարչական ավանդույթների հարստացման գործին, որին հետագա տարիներին առանձնահատուկ խնամքով ու լրջությամբ վերաբերվեցին նաև շատ ուրիշ նկարիչներ ու քանդակագործներ՝ իրենց տաղանդն ու աստվածատուր շնորհքը նվիրաբերելով հարազատ քաղաքի ինքնատիպ դիմագծի կերտմանը: Գյումրեցի արձանագործների՝ Ջ.Կոչտոյանի, Ա.Պապոյանի, Ֆ.Մոդոյանի, Ա.Վարդանյանի, նաև Ա.Շիրազի, Կ.Սարիկյանի, Կ.Նիկողոսյանի և այլոց ողջ վարպետությունն է խտացված Մեծ գյումրեցիների՝ Ա.Իսահակյանի, Հ.Շիրազի, Ա.Տիգրանյանի, Մ.Սկրտչյանի, Շերամի, Ատրպետի հուշաքանդակներում, մի շարք արձանախմբերում, որոնք առանձնահատուկ շուք ու հմայք են տալիս մեր հրապարակներին ու պուրակներին: Այս շրջանից սկսած՝ քաղաքի ներքին հարդարման կարևոր բաղկացուցիչներ դարձան նաև հրապարակների ճարտարապետական պատկերն ամբողջացնող «Հայտնի», «Վարդանանք» (Ա.Պապոյան), «Աշոտ Ողորմած» (Ֆ.Առաքելյան), «Գուդուկահար» (Ֆ. Մոդոյան), «Ջրահարս» (Կ. Սարիկյան), «Իսուգի» շատրվանախումբը զարդարող «Նանե» (Ա.Վարդանյան) պլաստիկ պատկերները: Իսկ Ջ.Կոչտոյանի «Հույս»-ը և Մայաթ-Նովա պուրակի խաչքարը քանդակագործի և ողջ Գյումրու խոնարհումն է 1988թ. երկրաշարժի և Մումգայիթյան զոհերի հիշատակի առջև:

Տեղաբնակ նկարիչների կողքին Լենինականում ապրել ու ստեղծագործել են նաև օտարությունից հայրենիք վերադարձած Հակոբ Հակոբյանն ու Պետրոս Կոնտուրաջյանը: Եզիպտոսից հայրենադարձվելուց հետո Հ.Հակոբյանը մի քանի տարի ապրեց Լենինականում ու ջերմորեն սիրեց քաղաքը: Նրա բնանկարներից շատերը վրձնած են այստեղ՝ «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն», «Վաղ գարուն»: Լենինականին նվիրված նկարչի աշխատանքները մտերմիկ գրույց են քաղաքի ու նրա մարդկանց մասին: Պ. Կոնտուրաջյանի արվեստում միաձուլվել են ֆրանսիական նկարչական դպրոցի բարձր մշակույթն ու հայկական կենսասեր ու երազկոտ խառնվածքը: Նրա՝ Շիրակին նվիրված բնանկարների շարքը՝ «Լնբատավանք», «Մարմաշենի վանքը», ուրույն խոսք են մեր արդի կերպարվեստում:

1960-90-ական թվականների Գյումրու գեղարվեստական կյանքի բեմահարթակում հանդես եկող նկարիչներից էին նաև Անատոլի Գրիգորյանը, Ֆերդինանտ Մանուկյանը, Էդուարդ Եղիազարյանը, Հմայակ Մաթևոսյանը, Նվեր Մաֆյանը, Նինել Նալբանդյանը, Մուսաննա Սկրտչյանը, որն արդեն 30-տարի է դեկավարում է Մանկական գեղագիտական կենտրոնը, քանդակագործներ Չավեն Կոչտոյանը, Արկադի Գրիգորյանը, Կամո Սարիկյանը, Ֆրիդ Մոդոյանը: Նրանք բոլորն էլ ավարտել են Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի համապատասխան բաժինները, վերադարձել Գյումրի և լրացրել քաղաքում ստեղծագործող նկարիչների շարքերը: Նրանցից ոմանք (Ա. Գրիգորյան, Ֆ. Մանուկյան, Հ. Մաթևոսյան) հետո տեղափոխվեցին Երևան, իսկ Է. Եղիազարյանը՝ Չեխիա (Պրահայում ազատ նկարիչ է), Ֆ. Մանուկյանը և Ֆ. Մոդոյանը՝ Մոսկվա: Ֆ. Մանուկյանի դեկորատիվ պաննոն հավաքված տարբեր երանգների բնական քարերից՝ Սևյանի անվան մշակույթի տան պատին, նկարչի լավագույն գործերից է, որի ապագան անհայտ է՝ շենքի ավերման պատճառով: Նկարիչը երկրաշարժի զոհերի հիշատակի հավերժացման նպատակով ստեղծել է «Երկրաշարժ և վերածնունդ» որմնանկարի աշխատանքը և ցանկություն ունի տեսնել այն իրագործված:

Այս սերնդի քանդակագործների մեջ ուժեղանում է հետաքրքրությունը դիմաքանդակի նկատմամբ: Նրանք անդրադառնում էին իրենց ժամանակակիցներին՝ մտա-

վոր ու ֆիզիկական աշխատանքի մարդկանց, փորձում էին զնահատել մարդու ներաշխարհը, տալ նրա կերպարը լայն ընդհանրացված պլաստիկական ձևերում:

Չ. Կոչտոյանի «Երաժշտություն», «Շերամ», «Ալեք Մանուկյան», «Վ. Սարգսյան» աշխատանքները քանդակագործի մասնագիտական վարպետության լավագույն գրավականներն են: Չ. Կոչտոյանի նվիրումը քաղաքին չի ավարտվում միայն ստեղծագործական աշխատանքով: Նա զբաղվում է նաև մանկավարժությամբ՝ օժանդակելով շնորհալի նկարիչների պատրաստման գործին (Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում):

Չկտրվելով իր հարազատ արմատներից՝ Մոսկվայում է ապրել ու ստեղծագործել անվանի քանդակագործ Ֆրիդ Մոդոյանը, որը քաղաքին է նվիրելու իր «Գթասրություն» հուշաքանդակը ի խոնարհումն 1988թ. երկրաշարժի զոհերին:

Բոլորին են հայտնի ծնունդով ոչ գյումրեցի Կամո Սարիկյանի Լուկաշինի, Շիրազի, Ատրպետի դիմաքանդակները: Իսկ նրա «Ջրահարս» ու «Եղնիկներ» քնարական աշխատանքները պարկա-պուրակային քանդակագործության լավագույն նմուշներ են:

60-80-ական թվականների թատրոնը նույնպես կարիք ուներ նշանակալի գեղարվեստական իրադարձությունների և թատերական նոր սերնդի, սերունդ, որը պետք է բնորոշեր արդի ժամանակների դեկորատիվ արվեստի զարգացման միտումները: Նրանք համարձակորեն բեմահարթակն ազատում են ավելորդ իրերից, ծավալային դեկորացիաների փոխարեն օգտագործում են պայմանական վարագույրներ, առանձնահատուկ գեղանկարչական հնարներ և հատկապես լուսավորության հնարավորություններ: Լուսավորությունը դառնում է ձևավորման կարևոր տարրերից մեկը: 60-80-ականների թատրոնի նկարիչներին հատուկ էր դեկորատիվ մտածողության հարստությունն ու թարմությունը, գեղանկարչության լակոնիզմն ու բեմահարթակի մաքսիմալ տնօրինությունը: Այս շրջանի թատերական նկարիչների շարքը համարվում է երիտասարդ ուժերով: Նրանց ընդհանուր առանձնահատկությունն այն էր, որ նրանք թատրոն էին եկել կերպարվեստի տարբեր բնագավառներից: Իրադարձություն էր Մինասի հայտնությունը թատրոնում: Տաղանդավոր նկարչի թատերական ձևավորումները զարմացնում էին իրենց լուծումների համարձակությամբ ու արտահայտչամիջոցների հարստությամբ («Ալմաստ», «Գայանե», «Բոլերո», «Տիկնիկների աշխարհում», «Նեգրական քաղամաս»): «Գայանե»-ի և «Ալմաստ»-ի ձևավորումները Մինասի թատերանկարչի նվաճումներն են: Թատերական կյանքն իր բարձրության վրա էր գտնվում նաև Գյումրիում: Բեմանկարչության ոլորտում իրենց խոսքն ասացին նկարիչներ Ա. Ծատուրյանը, Հ. Սահակյանը, Է. Եղիզարյանը, Եվ. Սոֆրոնովը: Նրանց ձևավորած «Ռոմեոն, Ջուլիետը և խավարը», «Փանոսը, Կիկոսը և մյուսները», «Գիքորը», «Բուք», «Զենոնի Միշան», «Մոմբրերո», «Թմբկահարուհին», «Փորձադաշտ», «Տիտոս Անդրոնիկոս», «Ռևիզոր», «Կուրաժ մայրիկը և նրա երեխաները», «Կորրադո», «Անավարտ մենախություն» ներկայացումները գոհունակությամբ ընդունվեցին հանդիսատեսի կողմից:

Քաղաքի ստեղծագործական կյանքն ընդհատեց հանկարծահաս երկրաշարժը (1988թ.), որն իր անդառնալի կործանարար ազդեցությունը թողեց գյումրեցիների թե՛ հոգեբանության, թե՛ մտածողության և հետևաբար նաև կենսակերպի վրա: Սակայն գյումրեցու արարման բնատուր ոգին չընկճել չկարողացավ:

## ИЗ ИСТОРИИ ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА АЛЕКСАНДРОПОЛЯ – ЛЕНИНАКАНА (1850-1988гг.)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Л. Атанесян \_\_\_

В статье представлено развитие изобразительного искусства (живопись, скульптура и т.д.) Александрополя со II-ой половины 19-ого века до 1988 года. Автор в своей статье отобразил жизнь и творчество не только проживающих в нем художников (Г.Брутян, Ш.Вержбицкая, Е.Назарян, Э.Саргсян, С.Степанян и др.), но и художников, уроженцев города, проживающих и творящих в других республиках бывшего СССР (Р.Атоян, А.Мелконян, Е. и М. Асламазяны, Ш.Есян).

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ,  
Մեսրոպ ՂԱԼԱՉՅԱՆ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ  
(1919թ. մայիսի 4)**

1918թ. վերջերին, թուրքերի հեռանալուց հետո Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ են լինում թուրքական բռնազավթումից ազատված տարածքներում տեղական իշխանության մարմինների ձևավորմանը: Դեռևս 1918 թվականի նոյեմբերի 28-ին Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի կողմից Ալեքսանդրապոլի գավառային կոմիսար էր նշանակվել Արամ Նոհրատյանը, օգնական՝ Թալալյանը:<sup>1</sup> Նշանակվել էին նաև գավառաձևասային կոմիսարներ:<sup>2</sup> Հունվարի 25-ից Ալեքսանդրապոլում Հայաստանի ներկայացուցչությունը դադարեցնում է իր գործունեությունը, իսկ փետրվարի 1-ից՝ վերացվում: Ավելի ուշ՝ 1919թ. մայիսին տեղի ունեցան ընտրություններ, որի արդյունքում կազմավորվեցին տեղական իշխանության մարմինները:

Ընտրությունների կազմակերպման գործում առանձնակի ակտիվություն է ցուցաբերում հատկապես դաշնակցություն կուսակցությունը: Դեռևս 1919թ. փետրվարի 25-ին Ալեքսանդրապոլի ՀՀԴ տեղական կոմիտեն դիմել էր Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանը, առաջարկելով արագացնել Քաղաքային Դումայի ընտրությունները. «Մենք,- ասված է այդ գրության մեջ,- պնդում ենք, քանի որ ներկայ դուման և վարչութիւնը ժողովրդի ընտրական քելով չէ որ բռնել են իրենց տեղերը և հետևապես այնտեղ չեն ներկայացած միւս կուսակցութիւններն ու խմբակները, ուստի ներկայ վարչութիւնը իրաւունք չպիտի ունենայ ընտրութեան գործն առանց միւս հոսանքների տանելու: Մենք առաջարկում ենք քաղաքային վարչութեան կից կազմել մի ընտրական միջկուսակցական յանձնաժողով, որ ղեկավարելու է ընտրութեան գործը, հակառակ դեպքում մենք այդ բանը անելը կը խնդրենք պատշաճաւոր վերին իշխանութեան»:<sup>3</sup> Քաղաքային վարչությունը, որն առաջնորդվելով 1917 ապրիլի 15-ի քաղաքային ընտրությունների վերաբերյալ Անդրկովկասյան կառավարության ժամանակավոր օրենքով, 1919թ. փետրվարի 26-ին սկսել էր ցուցակագրել ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին,<sup>4</sup> պատասխանում է, որ համաձայն վերը նշված օրենքի, ընտրական ցուցակների կազմելու իրավունքը պատկանում է քաղաքային վարչությանը, որն արդեն ձեռնարկել է դա:<sup>5</sup>

1919թ. փետրվարի 26-ին Ալեքսանդրապոլի քաղաքացիներին ուղղված հայտարարության մեջ Քաղաքային վարչությունը հրավիրում էր առանց սեռի, ազգի և դավանանքի խտրության 20 տարին լրացած Ալեքսանդրապոլի բոլոր քաղաքացիներին ցուցակագրվել ընտրություններին մասնակցելու համար:<sup>6</sup> Ցուցակները կազմելուց հետո մեկ այլ հայտարարությամբ վարչությունը առաջարկում է քաղաքացիներին ստուգել կազմած ցուցակները և ներկայացնել բողոքները, միաժամանակ ավելացնելով, որ հիշյալ ժամանակամիջոցում դրանք չներկայացնողները զրկվում են ընտրության իրավունքից:<sup>7</sup> Քաղաքային վարչությունը ցուցակագրությունը ավարտելու մասին տեղեկացնում է նաև Հայ հեղափոխական դաշնակցությանը, առաջարկելով նկատվող թերությունների մասին տեղեկացնել: Վերջինս ներկայացնում է չցուցակագրվածների ցանկը և խնդրում լրացուցիչ ցուցակագրություն կատարել:<sup>8</sup> Ընտրությունները նշանակվում են 1919թ. մայիսի 4-ին: Ընտրությանը մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները սկսած ապրիլի 29-ից կարող էին ստանալ իրենց

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 201, ց. 2, գ. 366, ք. 2:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 2, ք. 15:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2799, ք. 9:

<sup>4</sup> Նույն տեղում, ք. 13:

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 12:

<sup>6</sup> Նույն տեղում, ք. 16:

<sup>7</sup> Նույն տեղում, ք. 47:

<sup>8</sup> Նույն տեղում, ք. 66:

ընտրողական քարտերը, տոմսերն ու ծրարները ընտրական շրջանների համար որոշված շենքերից: Ալեքսանդրապոլ քաղաքում ստեղծվել էր ընտրական 10 հետևյալ շրջանները.

«1-ին շրջան - Մելիք Սարգսեանի տանը Խրիմեան դպրոցի մօտ-այս շրջանի մեջ մտնում է Թիֆլիսի խճուղու և Էսպլանատեան փողոցի մեջ ընկած տարածութիւնը մինչև քաղաքի արտատեղիները:

2-րդ շրջան - Հաջիպասա Թմաճեանի տանը-Բեհբութեան փողոց, այս շրջանի մեջ մտնում է Թիֆլիսի խճուղու և Էսպլանատեան փողոցի և երկաթուղագծի մեջ ընկած տարածութիւնը:

3-րդ շրջան - Զաղաքային Վարչութեան շենքում- այս շրջանը պարփակում է Էսպլանատեան և Պուշկինեան փողոցների, Թիֆլիսի խճուղու և Բոշաների հրապարակի մեջ ընկած տարածութիւնը մինչև Սպիտակ չայը:

4-րդ շրջան - Ղուլթուխչեանի տանը-Պալեվայա փողոցում, սահմաններն են Էսպլանատեան փողոց, Պուշկինեան, Թիֆլիսի խճուղի, Բոշաների հրապարակ և Փանահերեան փողոց մինչև երկաթուղու գիծը:

5-րդ շրջան - Ժողովրդական տանը-այս շրջանի սահմաններն են Պուշկինեան, Սապեօրնայա և Փանահերեան փողոցները մինչև Սպիտակ չայ:

6-րդ շրջան - Խօջայեանի տանը (արհեստաւորական դպրոց) Լորիս-Մելիքեան փողոց, շրջանի սահմաններն են Պուշկինեան, Սապեօրնայա և Փանահերեան փողոցները մինչև երկաթուղագիծը:

7-րդ շրջան - Տէր Ղազարեանի տանը. Մալօ-սլաբոդսկայա փողոցի վրայ. սահմանները՝ Սապեօրնայա և Փանահերեանի փողոցները մինչև բանջարանոցներն ու Կարանեանների զօրանոցները:

8-րդ շրջան - Կալաչեանի տանը՝ Սապեօրնայա և Պալեվայա փողոցների անկիւնում, սահմաններն են Սապեօրնայա և Փանահերեան փողոցներն ու երկաթուղագիծը մինչև քաղաքային բանջարանոցները:

9-րդ շրջան - Կայարանը և նրա շրջանը:

10-րդ շրջան - Բերդը իր շրջանով».<sup>9</sup>

Ընտրություններին մասնակցում էին երեք հիմնական քաղաքական ուժեր: Սոցիալիստական կուսակցությունները հանդես էին գալիս ընդհանուր ցուցակով: Դեռևս 1919թ. մարտի 25-ի ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության ընդհանուր ժողովը քննելով Ալեքսանդրապոլի միջկուսակցական բյուրոյի առաջարկը հանդես գալ միասնական բլոկով, պատասխանում է, որ դա կլինի միայն այն դեպքում, երբ սոցիալիստական ուղղության բոլոր կուսակցությունները ընդունեն «Խորհուրդների իշխանությունը»:<sup>10</sup> 1919թ. ապրիլի 14-ին Ալեքսանդրապոլի սոցիալիստական բլոկի կոմիտեն խնդրում է Երևանի ՌՄԴԲԿ կոմիտեից ներկայացուցիչ ուղարկել նախընտրական պայքար մղելու համար.<sup>11</sup>

Սոցիալիստական միության կողմից առաջարկված թեկնածուները՝ թվով 52 հոգի, ներկայացված էին առաջին ցուցակով: Ցուցակը գլխավորում էր քաղաքագլուխ Լևոն Սարգսյանը:<sup>12</sup> Մրանցից 13-ը Սոցիալիստ հեղափոխականներն էին,<sup>13</sup> 13-ը՝ Անկախ սոցիալիստներ:<sup>14</sup> Երկրորդ ցուցակով հանդես էին գալիս դաշնակցականները, որոնք ունեին 60 թեկնածու:<sup>15</sup> Երրորդ ցուցակով հանդես էին գալիս ժողովրդականները:<sup>16</sup> Նշված թեկնածուները Ալեքսանդրապոլի քաղաքագլխին ուղղված դիմումով պետք է տային իրենց գրավոր համաձայնությունը այս կամ այն ցուցակում ընդրգկվելու վերաբերյալ:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, գ. 2799, թ. 75:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1022 գ. 2, գ. 120, թ. 1:

<sup>11</sup> Նույն տեղում, թ. 2:

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, գ. 2799, թ. 76:

<sup>13</sup> Նույն տեղում, թ. 79:

<sup>14</sup> Նույն տեղում, թ. 81:

<sup>15</sup> Նույն տեղում, թ. 82:

<sup>16</sup> Նույն տեղում, թ. 8:

Դաշնակցականները կարողանում են բացարձակ մեծամասնություն ապահովել նախ 1919թ. մայիսի 4-ի Ալեքսանդրապոլի Քաղաքային Դումայի, ապա հունիսի 21-23-ին տեղի ունեցած Հայաստանի պառլամենտի ընտրություններում:

Դաշնակցությանը հաջողվում է բացարձակ մեծամասնություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Ընդհանուր վիճակը պատկերացնելու համար բավական է բերենք միայն մի տեղամասի ընտրությունների արդյունքները: Այսպես՝ 1-ին տեղամասում սոցիալիստ-հեղափոխականները ստացել էին 19 ձայն, դաշնակցականները՝ 339, ժողովրդականները ընդամենը՝ 39:<sup>17</sup>

Երևանի Շրջանային դատարանին ուղղված դիմումում մի խումբ քաղաքացիներ Ալեքսանդրապոլի քաղաքային Դումայի մայիսի 4-ի ընտրությունները համարում են կեղծ և առաջարկում նոր ընտրություններ անցկացնել: Նրանք դաշնակցությանը մեղադրում են հիմնականում նրա համար, որ քաղաքացիներին խաբել է խստամարյվ իշխանության գալուց հետո փոխհատուցել թուրքական օկուպացիայի ընթացքում կորցրածը: Ընտրությունները ճիշտ չի համարել նաև Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը՝ 1919 թվականի մայիսի 24-ին ՆԳՆ-ին ուղղված դիմումում:<sup>18</sup> Նույն օրը ՀՀ Նախարարների խորհրդին ուղղված գրությունում նա գրում է, որ չնայած բազմաթիվ բողոքներ են եղել մայիսի 4-ի ընտրությունների հետ կապված, որոնք տրված են Շրջանային դատարան, սակայն այդ ընթացքում նախարար Յաղջյանը և Մանասյանը առաջարկել են նոր վարչությանը անցնել աշխատանքի: «Յարգելով քաղաքացիների բողոքարկելու իրավունքը և բարձր գնահատելով կարգուկանոնը հանրապետությունում,- ասվում է գրությունում,- ես չեմ կարող իրականացնել նախարարների պահանջը»:<sup>19</sup>

1919թ. հունիսի 1-ին Երևանի Շրջանային դատարանը Պիգուրենկոյի նախագահությամբ լսելով Ալեքսանդրապոլի բնակիչների (Մնբատ Բաստրամջյան, Բագրատ Կորկոտյան, Ալ. Կորկոտյան և ուրիշներ) բողոքները և ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ չարաշահումները չեն հաստատվել՝ բողոքը համարել է չհիմնավորված:<sup>20</sup>

Չնայած քաղաքացիների՝ արդարադատության նախարարին ուղղված բազմաթիվ բողոքներին, ընտրությունները համարվում են կայացած: Մայիսի 4-ի Քաղաքային Խորհրդի ընտրությունների արդյունքում վերակազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինները: 1919 հունիսի 4-ին Ալեքսանդրապոլի խորհուրդը գաղտնի քվեարկությամբ Խորհրդի նախագահ է ընտրում Բուդաղյանին, խորհրդի քարտուղար՝ Սկրտիչ Միմոնյանին:<sup>21</sup> Հունիսի 6-ին Խորհուրդը գաղտնի քվեարկությամբ Վարչության անդամներ է ընտրվում Պարույր Գյոնջյանին (22 ձայն կողմ և մեկ դեմ) և Ալեքսանդր Մարգարյանին (22 կողմ, 2 դեմ): Սրանցից առաջինը օրենքի համաձայն ճանաչվում է քաղաքագլխի պաշտոնակատար:<sup>22</sup> Հունիսի 6-ին Խորհուրդը միաձայն որոշում է հետաձգել քաղաքագլխի ընտրությունները, իսկ վարչության անդամներ ունենալ երեք հոգի:<sup>23</sup> Ավելի ուշ՝ 1919թ. հոկտեմբերի 3-ին վարչության երրորդ անդամ է ընտրում Մուշեղ Աբիյանը:<sup>24</sup> 1920թ. ապրիլի 3-ի նիստում Քաղաքային Խորհուրդը որոշում է ունենալ վարչության չորրորդ անդամը, սակայն ընտրությունները հետաձգելով հետագային:<sup>25</sup> Հունիսի 10-ին Քաղաքային Խորհուրդը ստեղծում է հանձնաժողովներ, որոշում դրանց կազմն ու քանակը: Մասնավորապես ստեղծվում են պարենավորման, ֆինանսա-բյուջետային, բժշկա-սանիտարական, ոստիկանության, պառլամենտական քաղաքային ընտրությունների, ժողովրդական տան հանձնաժողովներ: Խորհուրդը միաձայն որոշում է հանձնաժողովի անդամներ նշանակել ա) պարենավորման՝ Հ. Չոլախյանին, Ս. Մանուկոյլյանին, Ս. Տեր-Արթա-

<sup>17</sup> ՀՄԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2799, թ. 220:

<sup>18</sup> Նույն տեղում, գ. 2783, թ. 236:

<sup>19</sup> Նույն տեղում, թ. 245:

<sup>20</sup> Նույն տեղում, թ. 260:

<sup>21</sup> Նույն տեղում, գ. 2807, թ. 1:

<sup>22</sup> Նույն տեղում, թ. 2:

<sup>23</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>24</sup> Նույն տեղում, թ. 6:

<sup>25</sup> Նույն տեղում, թ. 9:

համյանին, Հ. Սամվելյանին, Հ. Աղաբալյանին. ք) ֆինանսա-բյուջետային՝ Կ. Քեշիշյանին, Գ. Խաչատրյանին, Տ. Տիրոսյանին, Ռ. Վանեցյանին, Հ. Աղաբաբյանին. գ) Բժշկա-սանիտարական՝ Բ. Բաղդասարյանին, Մ. Պապիկյանին, Ե. Տեր Գևորգյանին, Գյանջեպյանին, Փ. Տեր Հակոբյանին. ղ) միլիցիայի՝ Լոռեցյանին, Լ. Գեորգյանին, Հ. Մարաբյանին, Շ. Շիրակունուն, Հ. Առաքելյանին. ե) պատվամենտական քաղաքային ընտրությունների՝ Մ. Տեր-Աբրահամյանին, Կ. Աղաբաբյանին, Հ. Աղաբալյանին. գ) Ժողովրդական տան՝ Ս. Մանուկոյանին, Կ. Աղաբաբյանին, Շ. Շիրակունուն, Հ. Գինոյանին, Հ. Ղազարյանին:<sup>26</sup>

Միայն սեպտեմբերի 23-ին Քաղաքային Խորհրդի կողմից քաղաքագլուխ է ընտրվում բժիշկ Հայկ Մելքոնյանը:<sup>27</sup>

Այսպիսով 1919թ. մայիս 4-ին անցկացրած տեղական իշխանության մարմինների ընտրությունների արդյունքում իշխանությունն անցնում է դաշնակցական կուսակցությանը, ապահովելով վերջինիս հաղթանակը մաև 1919թ. հունիսին կայացած պատվամենտական ընտրություններում: Հայոց պետականության պատմության մեջ լինելով առաջինը, այդ ընտրությունները, բնականաբար, գերծ չէին կարող լինել թերություններից, որի մասին վկայում են բազմաթիվ բողոքները: Սակայն հարկ է նշել, որ այս ընտրությունները շատ կարևոր էին մեր ժողովրդի քաղաքական հասունացման առումով:

## ВЫБОРЫ ОРГАНОВ САМОУПРАВЛЕНИЯ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ (4 мая 1919г.)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ К. Алексанян, М. Калачян \_\_\_

В конце 1918 года, после ухода турок, правительство Армении приступило к формированию местных органов власти. В результате выборов, проведенных в мае 1919 года, были реконструированы местные органы власти Александрополя. В выборах участвовали три основные политические силы: социал-демократы, дашнаки и народники. Несмотря на то, что социалисты были представлены общим списком, подавляющее большинство голосов получила партия Дашнакцутюн.

Эти выборы, будучи первыми в истории армянского государства, были не безупречными, о чем свидетельствуют многочисленные факты нарушений, упоминаемые в источниках. Но одновременно они были важным шагом на пути к политической зрелости и становлению государственности.

<sup>26</sup> ՀԱՍ, ֆ. 105, ց. 1, գ. 2807, ք. 5:

<sup>27</sup> Նույն տեղում, ք. 7:



գարյանը, Հայրապետ Ղուկասյանը, Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջրերունի), Արաբաջյան եղբայրները, Սարիբեկ Տեր-Մելքիսեդեկյանը, Աղաբեկ Արշակունին, Մակար Տեր-Սարգսյանը, Պետրոս Հայկազունին և այլք: Վերջիններին արդյունավետ աշխատանքի համար արդեն նախադրյալներ ստեղծել էին 1860-ական թվականների ընթացքում այստեղ կազմավորված տարբեր կամավորական ընկերությունները («Արմատ սիրո», «Ընթերցասիրական ընկերություն», «Որբախնամ ընկերություն», «Բարենպաստակ ընկերություն» և այլն), որոնցում իրենց մասնակցությունն էին բերում նաև կանայք:<sup>6</sup> Թեև այդ ընկերություններն ունեին նպատակային տարողոված բևեռներ, այնուամենայնիվ, բոլորն էլ ձգտում էին ինչ-որ կերպ օգտակար լինել հասարակությանը: Փաստորեն, դպրոցը դարձել էր հասարակության նախաձեռնող տարրերի դրսևորման միջավայր. այստեղ էին կյանքի կոչվում թարմ ու նորովի գաղափարները, բախվում հասարակական տարբեր խնդիրների լուծման ուղիների որոնման վերաբերյալ մտահոգ մարդկանց կարծիքները:

Ինչպես հայտնի է, հայ իրականության մեջ 19-րդ դարի 50-70-ական թվականներին գերիշխող էին մի քանի հասարակական-քաղաքական հոսանքներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ գործունեության իր գաղափարական ասպարեզն ու շահերի արտահայտիչ լրագիրը: Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում բավական հիմնավոր դեր էին կատարում պահպանողական գործիչները:<sup>7</sup> Մա, իհարկե, պատահական երևույթ չէր, քանի որ վաճառականական մեծագումար միջոցներն ու մեծաթիվ արհեստավորությունը դեպի իրենց էին ձգում ազգի հոգևոր-մշակութային խնդիրներով մտահոգ մարդկանց՝ նրանց համար ծառայելով նյութական սնուցման անհրաժեշտ աղբյուր: Բացի դրանից՝ հայ հասարակական-քաղաքական մտքի պահպանողական ուղղությունն այստեղ հասկանալիորեն ավելի ընդգրկում էր ներկայացված այն պատճառով, որ, ինչպես իրավացիորեն նշում են մի շարք պատմաբաններ, ազգային-պահպանողական հոսանքն արտահայտում էր Անդրկովկասի քաղաքային արհեստավորության և խոշոր առևտրականների շահերը,<sup>8</sup> իսկ Ալեքսանդրապոլն առևտրաարհեստավորական քաղաք էր: Պահպանողականների գործունեությունն անհրաժեշտ էր հանգամանքը քաղաքի հայաշունչ ոգին էր:

Պահպանողական գործիչների մեջ միմյանց հետ հարաբերություններում ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում, և երբեմն զգալի սրությամբ բախվում էին նրանց տեսակետները՝ այս կամ այն հարցի հետ կապված: Նրանցից քչերն էին, որոնք լինելով ավանդականի կողմնակիցներ, այնուամենայնիվ, նրբորեն առանձնանում էին իրենց առաջադեմ հայացքներով: Միանգամայն համամիտ ենք հետազոտող Մ.Մխիթարյանի այն պնդման հետ, թե հանձինս ազգային-պահպանողականների ցարիզմը տեսնում էր առավել վտանգավոր գործիչների:<sup>9</sup> Հարցի ման դիտարկման տեսանկյունից հաջող օրինակ կարող է լինել հովսեփական ու սուքիասական (մեր կարծիքով, եկեղեցական և իշխանական) թևերի միջև ընթացող և հասարակական մեծ հնչեղություն ստացած պայքարն Ալեքսանդրապոլում: Այն դրսևորվեց հնարավորինս սուր, օգտագործվեց ժամանակի մամուլը՝ որպես ժողովրդի վրա ազդեցության հզոր գործոն: Եկեղեցի-պետություն լուռ հակադրման պարագայում, երբ ցարական կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր միջամտել եկեղեցու ներքին գործերին, այս դեպքը կարող էր լրացուցիչ հատթաթուղթ լինել պետության ձեռքին:

<sup>6</sup> «Արարատ», Էջմիածին (Վաղարշապատ), 1869, թիվ 6, սեպտեմբեր, էջ 112-118: «Հայկական աշխարհի կոունկ», Թիֆլիս, 1865, N 8-9, էջ 351-355: Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 224, վ 3, թ. 1-13: Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ Գ.Ա.Թ): Կ. Կոստանյանի ֆոնդ, թիվ 450: «Մերու Հայաստանի», Թիֆլիս, 1872, N 43, 23 դեկտեմբերի, էջ 3-4; 1873, N 5, էջ 3:

<sup>7</sup> Հ. Գեղամյանի բնութագրմամբ՝ քաղաքը գլխավորապես «մեղվական», ասել է թե՛ ազգային - պահպանողական ուղղություն ուներ (տե՛ս նշվ. աշխ., էջ 75):

<sup>8</sup> Ա. Հ ա մ ր յ ա ն, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայ ազատագրության ուղիների մասին (ՄԱԿ.Վերջ- XXդ.սկիզբ), Եր., 1990, էջ 7: Մ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., 1976, էջ 26:

<sup>9</sup> Մ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 30:

Ալեքսանդրապոլի խոշոր առևտրականներն ու պետական պաշտոնյաների մի մասը բաժանվել էին երկու հակառակ թևերի: Իհարկե, հասարակական նման երկ-փեղկ-վածությունը չէր խոսում հոգուտ գերակա նպատակի՝ եկեղեցու, միևնույն է թե՛ կրթամշակութային կյանքի հաջող ընթացքի: Հովսեփականները (Թադևոս Տիգրանյան, Ավետիք Բաբայան և այլն) Հովսեփ ավագ քահանա Կոստանյանի, իսկ սուրբհասակականները (Կարապետ Անանիկյան, Աբրահամ Ունջյան, Հարություն Վանեցյան և այլն)՝ Սուրբհաս վարդապետ (հետագայում՝ եպիսկոպոս, ապա՝ արքեպիսկոպոս) Պարզյանի կողմնակիցներն էին: Ըստ էության, երկուսն էլ ազգային - պահպանողական ուղղության ներկայացուցիչներ էին: Հ. Կոստանյանը գրեթե երկու տասնամյակ պատասխանատու պաշտոններ էր վարում Ալեքսանդրապոլում. նա «Հառիճի վանական ընկերության» հիմնադիր-նախագահն էր, 1862-1872թթ. զբաղեցնում էր Հոգևոր վիճակային դպրոցի հոգաբարձուի պաշտոնը և միաժամանակ հոգևոր կառավարության անդամ էր, մեծ ներդրում ուներ Արդուսյան օրիորդական դպրոցի բացման ու նրա հետագա լինելիությունն ապահովելու գործում, ընդհանրապես ծանրակշիռ ավանդ ուներ քաղաքի հոգևոր-մշակութային կյանքի ակտիվացման մեջ: Ահա թե ինչպիսի խտացրած գույներով է վերջինիս ներկայացնում այդ տարիներին Ալեքսանդրապոլում ուսուցչություն արած մեծ գրող Դ. Աղայանը. «Աղաներին կարողացել էր ձեռքն առնել Տեր - Յովսեփ Կոստանյանը և դառնալ մի անհաշի և անսահման իշխան: Սրա դիկտատորութեան ժամանակ վարժապետներն էլ միևնույն խալիֆաներն էին, ինչ որ Ախալցխայում. բոլորն էլ իր տան սպասաւորներն էին»:<sup>10</sup>

Սուրբհասակականները ներկայացնում էին Սուրբհաս Պարզյանի շահերը: Վերջինս 1872-1877թթ. ընդմիջումներով զբաղեցնում էր Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդական փոխանորդի պաշտոնը, մինչ այդ եղել էր Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ, ապա՝ Ախալցխայի հոգևոր առաջնորդ, որտեղ բարի համբավ էր վայելում տեղի ժողովրդի շրջանում: Այս երկու թևերի միջև ընթացող պայքարը շուրջ հինգ և ավելի տարիներ զբաղեցրեց Ալեքսանդրապոլի բնակչության ուշադրությունը: Չուտ հասարակական խնդիր լինելուց բացի, այն ուներ նաև քաղաքական որոշակի նրբերանգներ, այսինքն՝ ավելին էր իր նշանակությանը, քան աշխարհիկ և կուսակրոն հոգևորականների միջև ծագած սովորական վեճը:

1857-1875թթ. հիշյալ հոգևորականների հարաբերությունները շատ ջերմ էին. «(Սուրբհաս Պարզյանը)... համակրում էր ընկերութեան նախագահի (Հ. Կոստանյանի - Գ.Ա.) բոլոր հասարակական գործողութիւններին և պարծենում էր նորա բարեկամութեամբ»:<sup>11</sup> Այդ մտերմությունը սկիզբ էր առնում 1857թ. և ավելի սերտացավ 1870թ., երբ Էջմիածնի սինոդի կողմից Հ. Կոստանյանը որպես քննիչ ուղարկվեց Ախալցխա՝ Ս. Պարզյանի և քաղաքի ունևոր վերնախավի (աղաների) միջև ծագած անհամաձայնության պատճառները պարզելու նպատակով: Արդյունքում՝ Ս. Պարզյանը տեղափոխվում է Ալեքսանդրապոլ և 1872թ. հոկտեմբերի 13-ին նշանակվում Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ:<sup>12</sup> Ս. Պարզյանը Ախալցխայում ճանաչվել էր իր ուսումնաշահ գործունեությամբ և այնտեղ սկսած հոգևոր-հասարակական բարեփոխումները շարունակեց Ալեքսանդրապոլում՝ արժանանալով քաղաքացիների անկեղծ համակրանքին: Օգտակար կարգադրություններից կարելի է հիշատակել մի քանիսը, օրինակ՝ նա արգելում է եկեղեցում ֆես դնել,<sup>13</sup> գերեզմանատանը ննջեցյալների համար հացկերույթ տալ,<sup>14</sup> անվանակոչության և տոնական օրերի մատաղի փոխարեն կոչ է

<sup>10</sup> Դ. Աղայան, Իմ կեանքի գլխատր դէպքերը, Թիֆ., 1893, էջ 140 :

<sup>11</sup> Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը 1850-1882թ., յտելուած 1882-1898թ., Աղեքսանդրապոլ, 1909, էջ 108: Նաև՝ մինչև 1875թ. նրանց նամակագրությունը (տես Հայաստանի ազգային արխիվ (այրուհետև՝ ՀԱԱ) ֆ.779, ց. 1, գ. 27):

<sup>12</sup> Տ. Գ ա ը ի Ե ճ յ ա ն յ ա ն, Деятели армянской церкви (XIX-XXвв.), биографические очерки, Ер., 2005, стр. 112: Մեկ այլ տեղ (Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը, էջ 108)՝ 1872թ. սեպտեմբեր:

<sup>13</sup> «Մտրու Հայաստանի», 1875, N5, 8 փետրվարի, էջ 2:

<sup>14</sup> Յուսիկ վարդապետ Մովսիսեան, Իմ նկատողութիւնները. Ալեքսանդրապոլից Դարս, «Արարատ», 1883, թիվ Ա-Բ, էջ 41:

անում դրանց վրա ծախսվող գումարները տալ աղքատանոցին,<sup>15</sup> խստորեն պարտադրում, որ քահանաներն անպայմանորեն ներկա գտնվեն ժամերգությանը և այլն:

Նախքան Հ. Կոստանյանի հետ ունեցած ընդհարումը, 1874 թվականից արդեն Ս. Պարզյանի գործողություններում նկատվում են հոգևոր բարձրագույն իշխանությանը հակադրման երևույթներ, որոնք իրենց արտացոլումը գտան Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում:<sup>16</sup>

Վերոհիշյալ երկու հոգևորականների փոխհարաբերություններում ականա փոփոխություններ մտան 1876 թվականից՝ Ալեքսանդրապոլում նորաշեն Ամենափրկիչ եկեղեցու օծումից յետոյ 1876-ին:<sup>17</sup> Ս. Պարզյանը գտնվում էր Մակար արքեպիսկոպոսի ուժեղ ազդեցության տակ և յուրաքանչյուր փոփոխություն, որ կապված էր վերջինիս հետ, արտացոլվում էր նաև Սուքիասի գործողություններում: 1876թ. Մակար արքեպիսկոպոսն ազատվում է Թիֆլիսի հոգևոր առաջնորդի պաշտոնից ու նշանակվում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ:<sup>18</sup> Պաշտոնազրկումից հետո Մակարն անօրինակ հարձակում է սկսում կաթողիկոսի դեմ՝ մասնավորապես, իր շա-

<sup>15</sup> «Մեղու Հայաստանի», 1873, N25, 7 հուլիսի, էջ 3: 1874, N8, 23 փետրվարի, էջ 4:

<sup>16</sup> Հայտնի է, որ 1874թ. բացվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Սուք. Պարզյանը Ալեքսանդրապոլի հաջորդությանը զուգահեռ զբաղեցնում էր նաև ճեմարանի տեսչի օգնականի պաշտոնը (Հատիճայի վանական ընկերության յիշատակարանն ու հաշիւը, էջ 109): Երբ տեսուչ նշանակվեց Գ.աբ. Այվազյանը, նա ազատվեց իր այդ պաշտոնից ու, հավանաբար, լուրջ հավակնություններ ուներ տեսուչ դառնալու: Նրա այդ ձգտումը պարզորոշ երևում է քաղաքի Հոգևոր վիճակային դպրոցի տեսուչ Ս. Բեզմազարյանի հետ ունեցած հարաբերությունների վատանալու հանգամանքից, որը դրսևորվեց նախ՝ Արդուքյանի իգական դպրոցի հոգաբարձության ընտրությունների ժամանակ (Հարաբերությունների վատացման դրսևորման մյուս դեպքերի մասին՝ «Մեղու Հայաստանի», 1873, N 50, դեկտեմբերի 3, էջ 29; 1874, N3, 19 հունվարի, էջ 2-3; N 4, 26 հունվարի, էջ 2-3). Հոգաբարձու ընտրվելու համար մյուսների թվում առաջադրվել էր նաև Ս.Բեզմազարյանը, սակայն Սուք. Պարզյանը, իբրև նախագահ հոգաբարձության, չհաստատեց վերջինիս թեկնածությունը նշելով, թե նույնիսկ նրա ընտրվելու դեպքում էլ չի ներկայացնի հաստատության («Մշակ», Թիֆլիս, 1874, N23, 13 հունիսի, էջ 2-3; «Մեղու Հայաստանի», 1874, N26, էջ 2): Միջադեպի պատճառը, թերևս, Ս.Բեզմազարյանին Վահրամ վարդ. Մանդլունո հարցադրումն էր ճեմարանի տեսչի համար, թե ինքը ում կուզենար տեսնել տեսչության պաշտոնում, և Բեզմազարյանը, հավանաբար, Ս. Պարզյանի թեկնածության առիթով դրական պատասխան չէր տվել: Ընդհանրապես այս առաջադեմ ուսուցչի գործունեությունն Ալեքսանդրապոլում հենց սկզբից արժանանում էր ոչ պատշաճ վերաբերմունքի, այդ են վկայում Արդուքյան դպրոցում գերմաներենի դասավանդման նպատակահարմարության («Մեղու Հայաստանի», 1871, N14, 27 մարտի, էջ 86; N32, օգոստոսի 28, էջ 252-253; 1872, N12, 20 մայիսի, էջ 47-48: «Հայկական աշխարհ», 1871, N 4-5, ապրիլ-մայիս, էջ 97-98) և Հոգևոր վիճակային դպրոցում ուսուցչին հրելու և ցած զցելու (իրականում միայն հրելու) («Մեղու Հայաստանի», 1872, N34, 21 հոկտեմբերի, էջ 135-136) հետ կապված դեպքերը (Նույն տեղում, N30, էջ 119; N31, 30 սեպտեմբերի, էջ 122-123): Վերջին դեպքն ազգային-պահպանողական ուղղվածություն ունեցող «Մեղու Հայաստանի» թերթի թղթակիցը բնորոշում է որպես սակավաթիվ «կուսակցության» ներկայացուցիչների կողմից տարածած տեղեկություն, որն աշխատում է ամեն կերպ վատարանել Բեզմազարյանին («Մեղու Հայաստանի», 1874, N3, էջ 2-3): Այս հարցում բացառված չէր կարող լինել պաշտոնական իշխանությունների մասնակցությունը, քանի որ նրանց համար անցանկալի էր դպրոցների չափից ավելի բարգավաճումն ու ընդարձակումը (Վ.Երկանյան, Պայքար նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Եր., 1970, էջ 48):

Որոշ խնդիրների պատճառով մոտ մեկ տարի Ս. Պարզյանը գտնվում էր Էջմիածնում: Այս ընթացքում Ալեքսանդրապոլի հասարակությունը երկու խնդրագիր է տալիս Վեհափառին՝ ցանկանալով իր հաջորդի վերադարձը («Մեղու Հայաստանի», 1875, N 48, 13 դեկտեմբերի, էջ 1), քանի որ խոսակցություն կար, թե նա կարող է նշանակվել Շամախու վիճակի հաջորդ: Ի վերջո 1875թ. վերջին Սուք. Պարզյանը երկրորդ անգամ է ստանձնում Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդությունը արդեն որպես եպիսկոպոս («Մեղու Հայաստանի», 1875, N 45, 22 նոյեմբերի, էջ 2-3; Հատիճայի վանական ընկերության յիշատակարանն ու հաշիւը, էջ 109: Ст. Гариб-Джаниян, *ՈՂՎ. աշխ.*, էջ 112):

<sup>17</sup> Հատիճայի վանական ընկերության յիշատակարանն ու հաշիւը, էջ 110:

<sup>18</sup> Վառերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ժգ. Կարապետ եպիսկոպոս Տեր Սկրուչեան (1866-1915), Եր., 2006, էջ 495:

հերին ծառայեցնելով «Մեղու Հայաստանի» թերթը,<sup>19</sup> որի խմբագրից 1876 թվականից ազգային-պահպանողականները երես են թերում:<sup>20</sup> Նույն թվականի օգոստոսի 2-ին Ալեքսանդրապոլի փոխանորդը կաթողիկոսից պահանջում է 500 ռուբլով ավելացնել իր տարեկան աշխատավարձը:<sup>21</sup> Տարբեր ճանապարհներով Մակարը փորձում էր սասնեցնել հավատարիմ մարդկանց վերաբերմունքը դեպի կաթողիկոսն ու առ էջմիածին, պահանջում վերջիններիս դարձնել հաշվետու:<sup>22</sup> Իհարկե, հաշվետվություն պահանջելու գաղափարը առաջադիմական էր, սակայն դա չպետք է ունենար «կուսակցական» դրդապատճառ: Նմանատիպ պահանջով արշավ սկսվեց նաև Հովսեփ Կոստանյանի հոգածության ներքո գտնվող «Հառիճի վանական ընկերության» և դպրոցի դեմ:<sup>23</sup>

Հովսեփ քահ. Կոստանյանը հովանավորվում էր կաթողիկոսի մտերիմ, վատահամբավ Վ. Մանկունու կողմից, որը վեհափառի հիվանդության պատճառով փաստորեն իրականացնում էր նրա գործառույթները, իսկ Մուքիաս Պարզյանը վայելում էր Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի (հետագայում՝ կաթողիկոս) հովանավորությունը, որի նկատմամբ ցարական իշխանություններն ընդգծված բարյացկամ վերաբերմունք ունեին: Ենթադրելի է, որ Ս. Պարզյանի և Հ. Կոստանյանի միջև վեճի հետևում թաքնված էր Մակար արքեպիսկոպոսի՝ որպես օրինական իշխանությունների շահերի արտահայտչի և կաթողիկոս Գևորգ IV-ի ու նրա բարեկամ Վ. Մանկունու միջև ընթացող պայքարը: Այսինքն՝ Ալեքսանդրապոլը հայտնվել էր պետություն-եկեղեցի հարաբերությունների տիրույթում, մինչդեռ խորհրդահայ պատմաբան Վ. Պարսամյանը այս պայքարը բնորոշել է որպես հետադիմական ուժերի դեմ ժողովրդավարական ուժերի մղած պայքար:<sup>24</sup>

Ազատագրական խմբակի գոյության և բացահայտման փաստը ցարական կառավարության շրջանում առանձնակի վերաբերմունք էր ձևավորել Ալեքսանդրապոլի հասարակության քաղաքական կողմնորոշման հանդեպ: Բնական է, որ կառավարությունը ցանկանում էր, հասարակության ուշադրությունը շեղելով, «սպառնալից» իրեն հնարավոր վնասակար զարգացումներից և այդ մտադրությունը խորամանկորեն իրականացրեց նշված հոգևորականների միջոցով: Թեև Ս. եպիսկոպոս Պարզյանը կարճ ժամանակով ազդեցության տակ ընկավ, այնուամենայնիվ մնաց իբրև եկեղեցուն մվիրյալ ու նրա բարեկարգության ջերմ պաշտպան: Այդ է վկայում ցարական իշխանությունների կողմից նրա երկու անգամ աքսորվելը:<sup>25</sup>

Վեճը բորբոքվում էր, ամենայն հավանականությամբ, պետական իշխանությունների «ծրագրի» համաձայն՝ նախապատերազմական շրջանում վտանգավոր զարգացումներից խուսափելու նպատակով, որը նաև ազգային ինքնագիտակցության զարթոնքի վերելքը կանխելու միտում ուներ: Ժամանակի հայկական մամուլը սկսեց ողողվել Ալեքսանդրապոլից տեղացող «կրիտիկներով», որոնց մի մասը հանդես էր գալիս ի պաշտպանություն Հովսեփ Կոստանյանի, իսկ մյուսները՝ Մուքիաս Պարզյանի: 1870-ական թվականները համընկնում էին ընդդեմ «մշակական» ուղղության «մեղավական» կուսակցության ձևավորման հետ,<sup>26</sup> և այդ հանգամանքը չէր կարող չազդել լարվածությանը վերաբերող Ալեքսանդրապոլից ստացված թղթակցությունների մեկնաբանման վրա: Լիբերալ «Մշակը» այս պայքարի ներկայացման գործում հանդես էր գալիս չեզոք դիրքերից (որոշ շեղումներ, այնուամենայնիվ, եղան) գիտակցելով Ալեք-

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 779, ց. 1, գ. 55, թ. 20:

<sup>20</sup> Մ. Մխիթարյան, *նշվ. աշխ.*, էջ 89-90:

<sup>21</sup> Մ ա տ ե ն ա դ ր ա ն, *Կաթողիկոսական դիվան, թղթ. 201, վվ. 229, 255:*

<sup>22</sup> ՀԱԱ, ֆ. 779, ց. 1, գ. 55, թ. 20:

<sup>23</sup> «Մեղու Հայաստանի», 1873, N 33, 1 սեպտեմբերի, էջ 2-3: 1877, N 3, 22 հունվարի, էջ 3: 1878, N 44, 11 նոյեմբերի, էջ 1-2: N 45, 18 նոյեմբերի, էջ 2: N 47, 2 դեկտեմբերի, էջ 3: «Փորձ», 1879, N 1, հունվար, էջ 214-226: «Նոր դար», Թիֆլիս, 1886, N 68, 9 մայիսի, էջ 2:

<sup>24</sup> Վ. Պ ա ղ ա մ յ ա ն, *Առաջին ժանդարմական գործը Ալեքսանդրապոլում, Եր., 1936, էջ 77:* «Մեղու Հայաստանի» 1877թ. N 10-ում (12 մարտի, էջ 1-2) մեղադրվում է էջմիածինը, որն աչք է փակում հոգևորականների կողմից ժողովրդի կրած նեղությունների վրա:

<sup>25</sup> Տր. Գ ա ղ ա ղ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 113:

<sup>26</sup> Մ. Մխիթարյան, *նշվ. աշխ.*, էջ 67:

սանդրասպյուրում երկու «կուսակցութեան» գոյության փաստը,<sup>27</sup> միևնույն ժամանակ բնակչությանը հորդորելով չհետևել հոգևորականների «ինտրիգաներին», հեռու մնալ այդ տեսակ երկպառակություններից, որոնց արդյունքում հասարակությունը բաժանվել էր երկու անհաշտ բանակների:<sup>28</sup>

Ալեքսանդրասպյուրի հասարակությունը, որի «հասարակական նախաձեռնությունն ու հետաքրքրությունը կազմավորված ավանդույթներ ունեն»,<sup>29</sup> դեպքերի լոկ դիտող չէր, այլ գործուն մասնակից ու ծանրակշիռ գործոն, որի կարծիքն ամեն դեպքում հաշվի էր առնվում: Հակասություններն այնքան էին սրվել, որ Էջմիածնի սինոդը վեճի կապակցությամբ Սուքիաս Պարզյանի դիմումների համաձայն՝ հատուկ քննիչներ է ուղարկում Ալեքսանդրասպյուր (Անդրեաս եպիսկոպոս և կոնսիստորիայի անդամ Աստվածատուր ավագ քահանա Իսահակյան), որպեսզի պարզեն Հովսեփի «վնասակար գործողութիւնները» ընթացքը:<sup>30</sup> Սակայն, սրանք Հովսեփ Կոստանյանի օգտին իրենց կողմնապահ մոտեցումով ավելի են սրում իրավիճակը: Հասարակությունը պահանջեց դադարեցնել քննությունը, Սուքիասը հրաժարվեց պատասխանել քննիչների հարցերին:<sup>31</sup> Հասարակության անունից սուքիասականներն ամեն կերպ ձգտում էին քննությանը մասնակից դարձնել առևտրականներ Հ. Չիթոցյանին, Հ. Վանեցյանին, Ա. Բաբայանին և Ա. Ունջյանին: Սակայն Էջմիածինը մերժում էր այդ՝ պատճառաբանելով, թե աշխարհականներն իրավունք չունեն մասնակցելու եկեղեցականների գործերին:<sup>32</sup> 1877թ. մարտի 19-ին տեղի ունեցած արհեստավորների և առևտրականների ներկայացուցիչների ժողովը որոշում է դիմել կաթողիկոսին՝ իրենց ներկայացուցիչներին մասնակցության իրավունք տալու խնդրանքով: Քաղաքացիները վեհափառին երկու խնդրագիր են ներկայացնում՝ 1877թ. մարտի 6-ի և մարտի 20-ի թվագրմամբ:<sup>33</sup> Այս վերջինն առանձնաձև է իր համարձակ բովանդակությամբ: Քաղաքացիները նշելով, որ պատգամավորներ ունենալու վերաբերյալ իրենց խնդրանքը հարգվելու կարիք ունի, կաթողիկոսին առաջարկում են փոփոխություն կատարել 1836թ. կարգադրության մեջ: Դրանում թեև չի ասվում, թե «ժողովրդից հոգևոր գործոց քննութեան մեջ ինքը՝ ժողովուրդը հարկը պահանջած միջոցին կարող է որպիսի և իցէ միջամտութիւն ունենալ, հասպա արգելք ևս չկայ դրուած ժողովրդեան առջև՝ արդարութիւնն անսխալաբար լոյս ածելու բաղձանքով և իրաւունքով գէթ անաչառ և անխարդախ վկայի մասնակցութիւնն ունենալ այնպիսի խնդիրների մեջ, որ չեն զուտ կրօնական, այլ հոգևոր հասարակական, այսինքն հասարակութեան իրաւանց կամ օգտին վերաբերեալ այնպիսի խնդիրներ, որոնց տեսչութիւնն հաւատացած է հոգևոր իշխանութեան»:<sup>34</sup> Խնդրագրում նաև կասկած է հայտնվում քննության ընթացքի վերաբերյալ և խնդրվում է վերադարձնել Սուքիաս եպիսկոպոսին, իսկ Հովսեփ Կոստանյանին, որը «իւր անձնաշահ արարմունքներով վերին աստիճանի զայթակղութեան և գրգռման առիթ է եղել վիճակիս Հայ ժողովրդեան», իր գործակիցներ Մարտիրոս քահ. Պողոսյանի և հոգևոր կառավարության քարտուղար Կարապետ Չանիրեկյանի հետ հեռացնել իրենց վարած «ազգային պաշտօններից»:<sup>35</sup> Մարտի 24-ին քննությունը տեղափոխվում է Էջմիածին: Հավանաբար, կրքերը հանդարտեցնելու համար կաթողիկոսը միտք է ունեցել Ս. եպս. Պարզյանին կրկին վերադարձնել իր պաշտոնին, քանի որ 1877թ. մարտի 29-ի հեռագրում հովսեփական մայր Թադևոս Տիգրանյանը վեհափառին խնդրում էր, դադարեցնել եպիսկոպոսի վերադարձի հետ կապված խնդրի կատարումը:<sup>36</sup> Ապրիլի 22-ի հեռագրից երևում է, որ ժողովուրդը դեռևս

<sup>27</sup> «Մշակ», 1877, N 10, 14 փետրվարի, էջ 4:

<sup>28</sup> Նույն տեղում, N 11, 17 փետրվարի, էջ 1-2; N14, 28 փետրվարի, էջ 3:

<sup>29</sup> Վ. Երկանյան, նշվ. աշխ., էջ 71:

<sup>30</sup> «Քննական գործը՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վ. 221:

<sup>31</sup> Նույն տեղում, վկ. 308-310:

<sup>32</sup> Սուքիասի կողմնակիցները փորձում էին մտնել նաև «Հառիճի վանական ընկերության» մեջ, բայց չէին ընդունվում («Մեղու Հայաստանի», 1877, N3, 22 հունվարի, էջ 3):

<sup>33</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վ. 221, թթ. 1-2, 18-19; ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 8, թ. 14-21:

<sup>34</sup> «Մեղու Հայաստանի», 1877, N14, 16 ապրիլի, էջ 3:

<sup>35</sup> Նույն տեղում: Նաև՝ N 11, 19 մարտի, էջ 2:

<sup>36</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վ. 311:

սպասում է իր խնդրագրի պահանջի բավարարմանը, մաս հուզված է այն լուրերից, որ Կոստանյանը պետք է վերադառնա, իսկ Սուքիաս եպիսկոպոսը մնալու է:<sup>37</sup>

Եկեղեցուն անհնազանդության համար Սուքիասն հեռացվում է պաշտոնից, կարճվում է նրա ռոճիկը, արգելվում է նրան մասնակցել եկեղեցական հանդեսներին, շուրջառ և փիլոն կրել և ուղարկվում է Գեղարդի վանքի միաբնակություն, իսկ Հ. Կոստանյանի նկատմամբ մեղմ մոտեցում է ցուցաբերվում. նա հեռացվում է միայն Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարության անդամությունից՝ պահպանելով քահանայագործության իրավունքը: Պարզյանին իր օգնությունն է առաջարկում Երևանի ցահանգապետը, սակայն, ի պատիվ իրեն, եպիսկոպոսը հրաժարվում է իշխանությունների առաջարկն ընդունելուց: Այս դիպվածը ասպացուցում է, որ, իրոք, այս ամենի մեջ անմասն չէին ցարական իշխանությունները, որոնք զգուշորեն վերահսկելով եկեղեցու գործունեությունը, առիթը բաց չէին թողնում միջամտելու նրա ներքին գործերին: «Մեղու Հայաստանի» թերթը չի շտապում այս իրողությունները վերագրել «Նորին Օծուքեանը»՝ կաթողիկոսին՝ չժխտելով Վ. Մանկունու մասնակցության հանգամանքը:<sup>38</sup>

Կարելի է ասել, որ ցարական վարչակազմը Թիֆլիսում Մակար արքեպիսկոպոսի և Ալեքսանդրապոլում<sup>39</sup> նրա գաղափարակիր Սուքիաս եպիսկոպոսի միջոցով հասավ իր նպատակին, այսինքն՝ ժողովրդին որքան հնարավոր է հեռու պահել հասարակական գործերից, թուլացնել նրա ջանքերը դեպի դպրոցն ու եկեղեցին. «Մեր քաղաքը տեղը կորցրած բոստան է դառնալ. վե՛վ ինչ ուզե՛ք, քաղե՛ կը»:<sup>40</sup>

1877-1878թթ. պատերազմական վիճակից պայմանավորված՝ առժամանակ դադարեցվում է գործի քննությունը, բայց չի մարում հասարակության հետաքրքրությունը նրա հանդեպ, և պատերազմը ավարտվելուց հետո նորից բորբոքվում են կրքերը: Սա ուրվագծվում է հետպատերազմյան Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի օրինակով, երբ «կուսակցական» խնդիրները շարունակում էին մեծ տեղ զբաղեցնել ժողովրդի գիտակցության մեջ:

1877թ. վերջերից վիրավորներին տեղավորելու նպատակով փակվում են թե՛ մասնավոր, թե՛ ծխական դպրոցները: Բայց քաղաքի հասարակությունը անտարբեր է մնում առ այս երևույթը, չնայած որ նույն թվականի նոյեմբերի սկզբին խնդրագիր էր տվել կառավարությանը դրանք ազատելու պահանջով, իսկ վերջինս էլ բավարարել էր նրանց խնդրանքը՝ կարգադրելով ազատել դպրոցները: «Մեղու Հայաստանի» լրագիրը դպրոցների փակման մեջ մեղադրում է Հովսեփ Կոստանյանին. «Տերտերը տեսաւ, որ էս բոլորի պատճառը վարժատներն էն, էսոնց առաջն օր չառնուի առաջվա պէս չի կարելի գործել, արթըր բան ու գործը էրավ վարժատներու ետևն ընկնի: Հերու վարժատներն օր հիւանդանոց էրին, մեկէն հոգևոր կառավարութիւնը (հիշենք, որ Հ. Կոստանյանը հոգևոր կառավարության անդամ էր-Գ.Ա.) կզրէ հոգաբարձուներուն, թէ վարժապետներ արձակեցէք, ուսումնարանը էս տարի հիւանդանոց պիտի էլնի»:<sup>41</sup>

«Սոդնի եպիսկոպոսի» և «Շիրակի Բիսմարկի» «ժականարտությունն» իր դրսևվորումը գտավ մաս արական և իզական դպրոցների հոգաբարձությունների ընտրության ժամանակ:

Արդության իզական դպրոցի հոգաբարձության գործունեության ժամկետները վաղուց լրացել էին: Անհրաժեշտ էր նոր հոգաբարձուներ ընտրել: Ըստ դպրոցական կանոնադրության՝ 1878թ. հունիսի 18-ին ընտրվում է 40 պատգամավոր, որոնք հուլիսի 2-ին պետք է ընտրեին հոգաբարձուներին: Մակայն հոգևոր կառավարությունն այդ ընտրությունը վավերական չի համարում, որի առթիվ մասնակիցների կողմից լինում են դժգոհություններ, և Էջմիածնի հոգևոր վերադասն ուղարկվում է Կարապետ Այվազյանին, որպեսզի նոր ընտրություններ անցկացնի: Նույն տարվա հուլիսի 31-ին Սբ Աստվածածին եկեղեցում նոր ժողով է հրավիրվում՝ 1500 հոգու մասնակցությամբ: Այս ժողովին ներկա էին մաս կանայք. ներկայություն, որը ժամանակի համար մի անօրինակ

<sup>37</sup> Նույն տեղում, վ. 315:

<sup>38</sup> «Մեղու Հայաստանի», 1877, N 17, 7 մայիսի, էջ 1-2:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 779, ց. 1, գ. 55, ք. 19-20:

<sup>40</sup> «Մեղու Հայաստանի», 1878, N 13, 1 ապրիլի, էջ 3:

<sup>41</sup> Նույն տեղում, N 37, 23 սեպտեմբերի, էջ 3:

երևույթ էր: Հոգևոր դպրոցի հոգաբարձուներ ընտրվում են Ա. Ամատունին, Պ. Չիթոցյանը, Ստ. Անանիկյանը, Հ. Վանեցյանը, Պ. Հովհաննիսյանը, Ա. Ունջյանը, իսկ Արդուբյան դպրոցի համար՝ Մարտ. քահ. Կարապետյանը, Ս. Միրզայանը, Կ. Անանիկյանը, Ն. Միրիմանյանը:<sup>42</sup> Ընտրություններում հաղթանակ տարան սուփասականները: Հակառակ թևի ներկայացուցիչները հեշտությամբ չընդունեցին ընտրությունների արդյունքները: Հովսեփի համախոհներից Ատոմ Ափոյանը փորձեց սավեր գցել ընտրությունների վրա՝ նշելով, թե դրանց ընթացքում իրեն փորձում էին ծեծել:<sup>43</sup> Այդ քայլով, ըստ «Մեղու Հայաստանի» թերթի Ալեքսանդրապոլի թղթակից Հուրիերի (Պետրոս Հայկազունի)՝ հովսեփականները ձգտում էին ապացուցել, թե Ալեքսանդրապոլում դեռևս «կուսակցություն» կա, որպեսզի Վեհափառը չվերադարձներ Սուփիասին:<sup>44</sup>

Վերջապես նոր հաջողից՝ Գ. Մուրենյանին հաջողվում է «հյր խոհեմ վարմունքով և կառավարչական հմտութեամբ» վերջ դնել տարածայնություններին, որի համար կաթողիկոսը նրան կնքել էր «խաղաղութան հրեշտակ» անվամբ:<sup>45</sup>

Այսպիսով, Ալեքսանդրապոլը նշված ժամանակահատվածում դարձել էր եկեղեցու և պետության հարաբերման ասպարեզ: Երկու հոգևորականների վեճում քողարկված էր եկեղեցու և պետության բարդ ու նրբին փոխհարաբերությունների ընթացքը:

Կովկասյան իշխանական մարմինները, կապված քաղաքում ազատագրական որոշակի գաղափարներ կրող խմբակի («Բարենպատակ ընկերություն») գործունեության բացահայտման հետ, առավել խստացրին իրենց վերաբերմունքը տեղի հայ բնակչության նկատմամբ: Սակայն, նախապատերազմական վիճակից դրդված՝ լրացուցիչ բարդություններից խուսափելու նպատակով չլիմեցին կտրուկ միջոցների, այլ տեղաբնակների հայրենասիրական մղումները զսպելու և նրանց ուշադրությունը դրանից շեղելու համար խելացիորեն օգտվեցին քաղաքում մեծ հեղինակություն վայելող վերոհիշյալ հոգևորականների ընձեռած առիթից՝ սկզբնավորելով և ամրնդհատ խորացնելով նրանց միջև լարվածությունը:

## АЛЕКСАНДРОПОЛЬ В СФЕРЕ ОТНОШЕНИЙ ГОСУДАРСТВО – ЦЕРКОВЬ В 1860-1870-ЫХ ГОДАХ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Г. Айвазян \_\_\_

Этот промежуток времени для города ознаменовался экономическим развитием, что дало возможность его жителям активно заниматься общественной деятельностью. Центром общественной жизни Александрополя являлись школы. Экономическое и общественное процветание способствовало тому, что население города начало осознавать необходимость освобождения армянского народа от чужеземного ига. Этому способствовала церковь, за деятельностью которой правительство вело бдительный надзор. В статье подчеркивается, что царское правительство в Александрополе старалось максимально ограничить распространение идей армянского освободительного движения среди горожан.

<sup>42</sup> Նշվածների գերակշիռ մասն առևտրականներ էին: «Մեղու Հայաստանի», 1878, N31, 12 օգոստոսի, էջ 2:

<sup>43</sup> «Մշակ», 1878, N 149: Հուր-հերը հաղորդում է («Մեղու Հայաստանի», 1878, N37, 23 սեպտեմբերի, էջ 2), որ նա վռնդվել է դահլիճից:

<sup>44</sup> «Մեղու Հայաստանի», 1878, N37, էջ 2:

<sup>45</sup> Կենսագրութիւն Գեորգ արք-եպիսկոպոս Մուրենեանցի, Տիփլիս, 1911, էջ 11: Չնայած այն հարորումներին, թե Տեր-Հովսեփյան և Պարզյան «կուսակցությունները» հաշտվել են («Մեղու Հայաստանի», 1879, N52, 11 հուլիսի, էջ 4: «Մշակ», 1879, N3, 18 հունվարի, էջ 3), լարվածությունը պահպանվում էր նաև 1879-1880թթ. ընթացքում («Մշակ», 1879, N 50, 12 ապրիլի, էջ 2: «Փորձ», 1880, N4, էջ 77), ընդ որում, ժողովրդի աչքում բավական ընկել էր հոգևորականների վարկը:

## Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ԳՅՈՒՄՐԻ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գյումրու տարածքը մարդու կողմից բնակեցվել է դեռևս հնագույն ժամանակաշրջաններից: Դրա մախապայմաններն են հանդիսացել քաղաքի տարածքում խմելու ջրի աղբյուրները, փոքրիկ գետակները, բնակավայրի՝ պաշտպանական նկատառումներով հարմար բլուրները և տեղում անհրաժեշտ շինանյութի՝ տուֆի առկայությունը: Ախուրյան գետով ոռոգվող քաղաքի ներկա տարածքը գոտևորող սևահողային դաշտերը նպաստում էին երկրագործության և անասնապահության զարգացմանը:

Գյումրու տարածքում հայտնաբերված և ուսումնասիրված վաղագույն բնակավայրերը վերաբերում են մ.թ.ա. երրորդ հազարամյակի սկզբներին և համապատասխանում են վաղ բրոնզի դարաշրջանին: Ճիշտ է, քաղաքի տարածքից կան նաև գտածոներ, որոնք վերաբերում են ավելի վաղ ժամանակաշրջանների, սակայն նորքարիդարյան կամ էնեոլիթյան բնակատեղիներ դեռևս ուսումնասիրված չեն:

Քաղաքի տարածքում հայտնաբերված վաղագույն բնակավայրերը և դամբարանադաշտերը գտնվում են Մսի կոմբինատի, Բուսաբանական այգու՝ Կումայրու, Ալեքսանդրապոլի ամրոցի, Սև բերդի և Վարդքաղի տարածքներում:

Մսի կոմբինատի և Կումայրի հնավայրերն առանձին համալիրներ են, որ գոյատևել են հազարամյակներ շարունակ: Գյումրու պատմության հնագույն ժամանակաշրջանի այս վկայագրերից իր տարածքով ամենամեծը և երկարակյացը Կումայրի հնավայրն է, որ սփռված է Չերքեզի ձորի երկու կողմերում և ընդգրկում է Ալեքսանդրապոլի ամրոցի, Սև բերդի, քաղաքային մարզադաշտի ու ներկայիս Բուսաբանական այգու տարածքները:

Մսի կոմբինատի բնակավայրն ու դամբարանադաշտերն ընդգրկում են բուն կոմբինատի, բանավանի հարավային հատվածի և դրանց հարավից հարող ավազահանքի ու դաշտերի տարածքները:

Մսի կոմբինատի բնակավայրն ու դամբարանադաշտը քաղաքի տարածքում թերևս ամենալավ ուսումնասիրված հուշարձաններն են: Ցավոք, այս հուշարձանի իրական չափերի, կենսագործունեության անընդհատականության, քաղաքաշինական սկզբունքների, տարբեր ժամանակաշրջանների ճարտարապետական առանձնահատկությունների մասին մեր պատկերացումները շատ սուղ են, քանի որ տոպոգրաֆիայի և ճարտարապետական դետալների ամրակայումը (ֆիքսացումը) կատարվել է միայն այն ժամանակ, երբ հուշարձանի զգալի մասն արդեն ավերված էր:

Գյումրու վաղբրոնզիդարյան հուշարձաններից հայտնաբերվել են մեծ քանակությամբ աշխատանքային գործիքներ, որոնց օգնությամբ ճշգրտվում են և վերականգնվում բնակիչների տնտեսական գործունեությունը, զբաղմունքներն ու հավատալիքները: Տնտեսության հիմնական ուղղություններն են եղել երկրագործությունը և անասնապահությունը: Շատ են ծակոտկեն բազալտից նավաձև աղորիքները, որ օգտագործվել են ցորենից այլուր ստանալու համար, կան նաև սանդեր, ծեծիչներ, կոկիչներ, տրորիչներ: Գտածոների մեջ կան գործիքներ, որոնք կարող էին օգտագործվել կաշի մշակելու համար, ինչպիսիք օբսիդիանից դանակները կամ քերիչներն են: Այդ գործիքները լայն տարածում ունեն բրոնզիդարյան հուշարձաններում և հատկանշվում են հազարամյակների ընթացքում օգտագործման շարունակականությամբ:

Հայտնաբերված խեցեղենը, որ Հայաստանի մ.թ.ա. III հազարամյակի մշակույթի ամենաբնորոշ տարրն է, բազմաթիվ զուգահեռներ ունի Հայաստանի համաժամանակյա բոլոր հուշարձաններում: Ամանները ամբողջությամբ պատրաստված են ձեռքով, լավ թրծված են, հիմնականում ունեն սև, հրաշալի փայլեցված արտաքին և կարմիր աստառ, ինքնատիպ ու հարուստ զարդանախշեր:<sup>1</sup> Վաղբրոնզիդարյան տնտեսության հիմնական ճյուղերի՝ անասնապահության և երկրագործության զարգացումը բնականաբար հանգեցրել է նաև արհեստների (քարագործություն, փայտագործու-

<sup>1</sup> Т. Х а ч а т р я н, Древняя культура Ширака, Ер., 1975, стр. 38.

թյուն, մանածագործություն, կաշեգործություն, ոսկրագործություն և այլն) ձևավորմանն ու վերելքին: Տեղում մանածագործության մասին կարելի է դատել իլիկի գլուխների բազմաթիվ գտածոներով:

Գյումրու տարածքի վաղագույն բնակիչները զբաղվել են նաև մետաղի մշակմամբ, ինչը փաստվում է ոչ միայն բրոնզյա կացիների, այլև կաղապարի գյուտերով: Այստեղից հայտնաբերված բրոնզե կացիները, որ օգտագործվել են և՛ որպես աշխատանքային գործիք, և՛ որպես զենք, վաղագույններից են ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում:

Երկրագործության մեջ ոռոգման թեկուզև խիստ պարզունակ ձևերի կիրառությունը, խոշոր եղջերավոր անասունների օգտագործումն ու անասնապահության զարգացումը, գյուղատնտեսական գործիքների կատարելագործումն էականորեն նպաստեցին արտադրության զգալի վերելքին, նախնադարյան համայնքի տնտեսական բարգավաճմանը և մշակութային զարգացմանը:

Մսի կոմբինատի վաղբրոնզիդարյան ժամանակաշրջանի բնակատեղիից բացի՝ համաժամանակյա շերտեր են հայտնաբերվել Կումայրի հնավայրում և Սև բերդի բլրի ստորոտում: Այստեղից հայտնաբերված գտածոների մեջ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում կացարանի կավածեփի հատակի վրայի օջախի մոտ գտնված ցլակերպ հենակը, որն ունի պաշտամունքային նշանակություն(նկ. 1):<sup>2</sup>



Նկ. 1

Վաղբրոնզիդարյան մշակույթից (մ.թ.ա. 36-25 դդ.) անցումը միջինբրոնզիդարյանին (մ.թ.ա. 25-16 դդ.) Հայաստանի տոհմացեղային հասարակության վերափոխման ժամանակաշրջան է: Չարգացման միջինբրոնզիդարյան մշակույթի ժամանակաշրջանը համապատասխանում է դասակարգային հարաբերությունների ձևավորման և պետականության սաղմերի ստեղծման ժամանակաշրջանին: Տնտեսության հիմնական ճյուղերի,

մասնավորապես երկրագործության, անասնապահության և մետաղամշակության առաջընթացն ու արտադրողական ուժերի զարգացումը նպաստում են սոցիալական ու տնտեսական նոր, անհավասար հարաբերությունների ստեղծմանը: Ստեղծված նոր իրադրության պայմաններում լեռնաշխարհի բնիկները մշակութային և տնտեսական նոր հարաբերությունների մեջ են մտնում Կենտրոնական Անատոլիայի, Ատրիքի և նրանցից արևմուտք գտնվող շրջանների հետ:

Գյումրու տարածքից հայտնաբերված մ.թ. ա. II հազարամյակի առաջին կեսին վերաբերող որոշ նյութեր հուշում են նաև միջագետքյան քաղաքակրթությունների հետ ունեցած առնչությունների մասին: Այս տեսակետից հատկանշական է Լենինականից գտնված ասիմետրիկ կացիներ, որն այլ հուշարձաններից հայտնի այսօրինակ սակրանման կացիների խմբում ամենահինն է: Նրա պատկերն է քանդակված աքքադական Նարամ Սուեն արքայի՝ Լուվրում պահպանվող կոթողի վրա (նկ. 2):<sup>3</sup>



Նկ. 2

Միջինբրոնզիդարյան մշակույթի զարգացումն ընթանում է օրինաչափ ինքնատիպությամբ: Այս ժամանակաշրջանում բուռն վերելք է ապրում անասնապահությունը: Սրա զերակայության պայմաններում որոշակի փոփոխություններ են տեղի ունենում կենսաձևի և կենցաղի մեջ: Յայլային անասնապահության պայմաններում աստիճանաբար անկում են ապրում բնակավայրերը: Մսի կոմբինատի բազմաշերտ հուշար-

<sup>2</sup> Ի. Ա վ ա գ յ ա ն, «Սև ամրոց» հուշարձանի դամբարանադաշտը, Հայաստանի հնագույն մշակույթը, հ. 3, Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2003, էջ 128:

<sup>3</sup> A. M a p t u p o c յ ա ն, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 32.

ձանում այս ժամանակաշրջանի շերտեր չեն հայտնաբերվել, սակայն կան թաղումներ: Միջին բրոնզի դարաշրջանում ամասունների և արտավայրերի համար մոլոր միջոց-դային անընդմեջ պայքարը հանգեցրել է բնամական հարաբերությունների և մշտական բախումների: Հոտերի պաշտպանությունն ապահովելու լավագույն միջոց է սկսում դառնալ ամրոցների կառուցումը, բնակավայրերից շատերը վերակառուցվում են որպես ամրոցներ: Նման մի ամրոցի ավերակներ բացվել են նաև Կումայրի բնակավայրի պեղումներով: Չի բացառվում, որ միջին բրոնզի ժամանակաշրջանում այդպիսի ամրոցը պատասպարան ծառայեր նաև հարևան բնակավայրի ցեղակիցների համար:

Տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումը և դուրգի անիվի գյուտը նպաստում են նաև խեցեգործության զարգացմանը: Այս շրջանի խեցեղենն աչքի է ընկնում կարմրափայլ մակերեսով և սև փայլաներկով կատարված զարդանուրբներով: Կարմիր դաշտի վրա սևով արված նախշազարդ խեցեղեն է գտնվել Մսի կոմբինատի պեղումներից, ինչը վկայում է այս բնակավայրի՝ նաև միջին բրոնզի դարաշրջանում շարունակական գոյատևման մասին:<sup>4</sup>

Մսի կոմբինատի բնակավայրը բազմաշերտ է. այն նոր վերելք է ապրել ուշ-բրոնզիդարյան (մ.թ.ա. XVI-XIII դդ.) և վաղ երկաթի (մ.թ.ա. XII-IX դդ.) ժամանակաշրջաններում, որոնց վերաբերող պեղված կացարանները քառանկյուն են, սենյակները՝ կիսազետոնափոր՝ շարված խոշոր, անմշակ քարերով: Կացարանների մեջ պահպանվել են սյուների՝ քարից պարզունակ խարիսխները:

Տնտեսության հիմնական ճյուղերին զուգընթաց՝ աննախադեպ վերելք է ունեցել մետաղների մշակումը: Ըստ հայտնաբերված նյութերի՝ կրկնակի ավելանում է բրոնզե իրերի արտադրանքը: Տեղում մետաղյա իրերի պատրաստումը փաստվում է պեղված արհեստանոց-ձուլարանով, որտեղ բացվել են կենտրոնական մասում մոխրի հաստ շերտով ձուլման վառարան, կողքին՝ կուտակված խարան: Գտնվել է նաև ձուլման կաղապար:

Գտածոների մեջ լայնորեն ներկայացված են քարից, մետաղից, ոսկորից աշխատանքային գործիքներ, տարատեսակ խեցանոթներ, բրոնզե նետալարքներ, նիզակներ և այլ զենքեր: (F3)

Նույն վերելքը տեսանելի է նաև Կումայրի բնակավայրում՝ փաստված բազմաթիվ գտածոներով:

Տնտեսական վերելքը, անասնապահության, երկրագործության, մետաղամշակության և սրանց հարակից արհեստների զարգացումը տեղաշարժեր առաջացրին տեղական ցեղերի սոցիալական կյանքում: Համայնքի ներսում գույքային և սոցիալական անհավասարությունը, հայրիշխանական ժառանգական իրավունքի կազմավորումը, մասնավոր սեփականության առաջացումը քայքայում են նախնադարյան արտադրական և հասարակական հարաբերությունները: Մ.թ.ա. XII դարից երկաթի գյուտով մարդկության քաղաքակրթությունը թևակոխում է զարգացման մի նոր դարաշրջան՝ երկաթի դարը, որ շարունակվում է առայսօր (նկ. 3):

Եվ Մսի կոմբինատի և Կումայրի բնակավայրերն իրենց կենսագործունեությունը շարունակում են նաև երկաթի լայն տարածման՝ մ.թ.ա. IX-XVI դդ.: Մսի կոմբինատի հնավայրում պեղվել են այս ժամանակաշրջանին վերաբերող մի քանի կացարան և 14 դամբարաններ: Բնակավայրի պեղումներով բացվել են կավածեփի հատակով երեք քառանկյուն կացարաններ: Հայտնաբերված նյութերը հիմնականում աշխատանքային գործիքներ են, խեցեղեն և երկաթե իրեր:<sup>5</sup>

Երկաթի լայն յուրացման ժամանակաշրջանը, երբ Շիրակում արդեն պետություն կար, ժամանակագրորեն համապատասխանում է քաղաքական պատմության ուրարտական ժամանակաշրջանին: Ուրարտական սեպագիր արձանագրությունները



Նկ. 3

<sup>4</sup> А. М а р т и р о с я н, *նշվ. աշխ.*, էջ 60-61:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 126-127:

պատմում են այստեղ ձևավորված Էրիախի անվամբ պետության հարստության և այդ թեոկրատական թագավորության հնամյա դինաստիայի մասին: Այդ արձանագրություններում Շիրակում հիշատակվում են վեց իշխանություններ և ցեղապետություններ, որոնք միավորված էին Էրիախի անվանվող թագավորության կազմում: Էրիախի թագավորությունը մասն էր Էթիունի կոչվող համադաշնության, որը Վանի թագավորության հյուսիսային ամենահզոր այսյանն էր:

Ուրարտա-Էրիախյան ընդհարումները սկսվել են թերևս Իշաուիների (մ.թ.ա. շուրջ 825-810թթ.) և Մենուայի (մ.թ.ա. շուրջ 810-786թթ.) համատեղ գահակալության տարիներից, երբ որոշվում էր, թե ում է պատկանելու գերիշխանությունը Հայկական լեռնաշխարհում՝ Վանի թագավորության<sup>6</sup>, թե՞ Էթիունիին: Հարցը լուծվեց մ.թ.ա. IX դ. վերջին քառորդին տեղի ունեցած Անաշեի (Ալաշկերտ) ճակատամարտում, երբ Լուշա-Քաթարգա-Վիթերուխե դաշնության և օգնության եկած Էթիունյան մյուս իշխանությունների ուժերը ծանր պարտություն կրեցին Վանի թագավորությունից:

Շիրակի համար ծանրագույն ժամանակաշրջան էր հատկապես մ.թ.ա. VIII դարը, երբ այս ուղղությամբ սկսվում են Վանի թագավորների (Արգիշտի, Սարգուրի և Ռուսա Բ) արշավանքները, որոնք ավարտվում են Շիրակի բնակչության մեծ մասի տեղահանմամբ ու այստեղ թագավորական իշխանության վերացմամբ:<sup>6</sup> Գյումրու տարածքում մեզ հայտնի հնագույն բնակավայրերը, գտնվելով Շիրակ-Էրիախի թագավորության կազմում, բնականաբար ունեցել են նույն ճակատագիրը:

Ուրարտական թագավորների կրկնվող արշավանքները, երկիրը հրի և սրի մատնելը հսկայական մարդկային և տնտեսական կորուստները չեն ընկճել տեղի բնակչության ազատատենչ ոգին, ազատ ապրելու ձգտումը: Միայն Սարգուրին Էրիախի է արշավել ութ անգամ, որոնցից երեքը՝ կայացած մ.թ.ա. 749-742 թթ. ընթացքում, արձանագրված են առավել հանգամանորեն: Ըստ այդ տվյալների՝ նա Շիրակից գերեվարել է 9661 պատանի և 20481 կին, տարել 115 ուղտ, 2025 ձի, 23194 խոշոր եղջերավոր և 63420 մանր եղջերավոր անասուն: Կողոպտել է երկրի գլխավոր պաշտամունքային կենտրոնում գտնվող 150 տաճարապատկան գանձատները, որտեղ հավաքված էր, ինչպես ինքն է վկայում, Էրիախիի արքայի, նրա հոր ու պապի կուտակած հարստությունը: Տաճարապատկան գանձատների ենթակայությունն աստծուն և արքային վկայությունն է Էրիախի երկրի աստվածապետական (թեոկրատական) կառավարման, իսկ Էրիախիի արքայի նախնիների՝ որպես տիրակալների հիշատակությունը փաստում է այն, որ մ.թ.ա. VIII դ. Շիրակը կառավարվել է ավանդական սկզբունքներով առաջնորդվող դինաստիայի կողմից: Այդ արշավանքները մարդաթափեցին Շիրակը՝ Էրիախիի թագավորությունը վերածելով մի թույլ գավառի Վանի թագավորության կազմում:<sup>7</sup> Մակայն կարճ ժամանակ անց Շիրակը վերականգնում է իր տնտեսական հզորությունը ու մ.թ.ա. VII դ. արդեն Վանի թագավորության ծաղկուն ծայրագավառներից էր: Սա փաստվում է Շիրակի, մասնավորապես Գյումրու տարածքում եղած համաժամանակյա 2 բնակավայրերի և դամբարանադաշտերի պեղումներով հայտնաբերված նյութերով:

Շիրակի տարածքում և Գյումրիում ուրարտական տևական մշակութային ներկայության նյութական վավերագրեր չկան, բացառությամբ 1929թ. քաղաքի տարածքում պատահական բացված դամբարանից հայտնաբերված երկու գտածոների՝ միակնոթ, փայլեցված կարմիր սափորի և թևավոր գրիֆոնի պատկերով ուրարտական բրոնզե գոտու բեկորի:

Գյումրու տարածքում եղած հնագույն բնակավայրերում չկան նաև անտիկ ժամանակաշրջանին (մ.թ.ա. V- մ.թ. -VI դարեր) վերաբերող տվյալներ, բացի Կումայրի բնակավայրի հարևանությամբ գտնվող Սև բերդի ստորոտում հայտնաբերված, առանց ուղեկցող նյութերի մի քանի դամբարանների:<sup>8</sup> Եթե Մսի կոմբինատի բնակավայրի գոյությունը այս շրջանում ընդհանրապես փաստված չէ, ապա Կումայրի հնավայրի հե-

<sup>6</sup> S. H m a y a k y a n, *Age du Fer Epoque ourartou. Dans les montagnes d' Armenie, 500000 ans d' histoire avant notre ere* ցուցահանդեսի կատալոգ, Ֆրանսիա, 2007, էջ 88:

<sup>7</sup> Նույնը:

<sup>8</sup> Ի. Ս վ ա զ յ ա ն, *նշվ. աշխ.*, 128:

տագա ուսումնասիրությամբ հնարավոր կլինի վերականգնել բնակավայրի կենսագործունեության պատկերը նաև այս ժամանակաշրջանում, առավել ևս, որ արդեն վաղ միջնադարում այն կա:

Ուշ անտիկ ժամանակաշրջանը (մ.թ. II-V դարեր) քաղաքի տարածքում լավագույնս արտահայտված է Գյումրու հյուսիս-արևմուտքում գտնվող Վարդբաղի դամբարանադաշտի նյութերով: Հնավայրը տարածված է բլուրների քարքարոտ լանջերին և գագաթներից: Առաջին նյութերը դեռևս 1974թ. Վարդբաղի տարածքում մարզահամալիրի շինարարության ժամանակ պատահականորեն բացված և III-IV դարերով թվագրվող սալարկղային թաղումներից են: Իսկ հուշարձանը հայտնաբերվեց 1988թ. երկրաշարժից հետո իրականացվող վերականգնողական-շինարարական աշխատանքների ժամանակ, որոնց պատճառով այն զգալիորեն ավերված էր: 1989-1990թթ. այստեղ պեղվեցին մոտ 100 կիսավեր և լավ պահպանված դամբարաններ:<sup>9</sup> Վարդբաղում թաղումները կատարվել են սալարկղերում, քարարկղերում, հողի շերտի մեջ և սարկոֆագներում: Դամբարանադաշտին վերաբերող բնակավայրը դեռևս ուսումնասիրված չէ, սակայն դամբարանադաշտի հարուստ գտածոները առատ նյութ են տալիս տեղի բնակչության այդ ժամանակաշրջանի կյանքի, սոցիալ-տնտեսական և մշակութային մակարդակի մասին պատկերացում կազմելու համար:

Գտածոները աշխատանքային գործիքներ, խեցեղեն, արդուզարդի առարկաներ են: Վերջիններիս առատությունը՝ ակնաջողեր, ուլունք-կնիքներ, ուլունքներ, մատանիներ և այլն, վկայում են տեղի բնակչության բարգավաճ կացութաձևի, կենցաղի և գեղարվեստական ճաշակի մասին: Առանձնահատուկ ուշադրության է արժանի բրոնզի թիթեղից պատրաստված խաչ-մատանին (թվագրվում է III-IV դարերով), որ փաստում է քրիստոնեության մուտքն ու զոյությունն այս տարածքում:<sup>10</sup> Այսպիսի մատանիների մասին հիշատակություններ կան մեր միջնադարյան ձեռագրերում: Լազար Փարպեցին Գրիգոր Լուսավորչի մատանու մասին գրում է. «Եւ դիր զմատանին զգծած խաչի քո ի մատին աջոյ մերոյ...»:<sup>11</sup>

Հայտնաբերված կնիքներից մեկը լեռնային բյուրեղից է՝ ցլի պատկերով, մյուսը՝ կարմիր ապակուց՝ ձիու պատկերով: Դրանք որոշակի իշխանության խորհրդանիշեր են և վկայում են մ. թ. III դ. այստեղ ազնվականության զոյությունը մասին: Սարկոֆագներից մեկում գտնված հռոմեական Տրայանոս կայսեր (103-111թթ.) արծաթյա դրահման փաստում է տեղում առևտրա-դրամական հարաբերությունների զոյությունը:<sup>12</sup>

Վարդբաղի անտիկ դամբարանադաշտից գտնվել են նաև մուգ կապույտ ապակուց երկու փոքրիկ սրվակ՝ պատրաստված ապակու հաստ զանգվածը ձողի վրա ոլորելու եղանակով, որոնք օգտագործել են անուշահոտ յուղեր, օծանելիք պահելու համար, կախել են պարանոցից(F3): Վարդբաղի դամբարանադաշտի նյութի քննությամբ նաև փաստվում է, որ մ. թ. առաջին դարերում վերելք սարող Շիրակով անցնող տարանցիկ ճանապարհները նպաստում էին նաև արտադրության զարգացմանը, որն էլ իր հերթին հարևան երկրների հետ տնտեսական փոխառնչությունների հնարավորություններ էր ընձեռում:

Տնտեսության ավանդական ճյուղերից բացի՝ փաստվում են բազմաթիվ արհեստներ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում խեցեգործությունը: Պահպանելով արտադրության ավանդական եղանակները՝ խեցեգործությունը հիշյալ դարերում նոր զարգացում է ապրում ջնարակի արտադրությամբ: Միջնադարյան բազմաթիվ

9 Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, Հնագիտական հետախուզություն Շիրակում, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 84: Ստ. Տեր - Մարգարյան, Կոմայրիի «Վարդբաղ» տարածքի անտիկ դամբարանադաշտի պեղումները, ԳԱԱ ՀԱԻ 1989-90թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, էջ 94-96:

10 Լ. Ե գ ա ն յ ա ն, Մատանիների և ակնաջողերի դերը անտիկ Շիրակի թաղման ծիսակարգում, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 77:

11 Ղ ա գ ա ր Փ ա ր պ ե ց ի, Հայոց պատմություն, Եր., 1982, Դրուագ Բ, ԼԲ:

12 Լ. Ե գ ա ն յ ա ն, Անտիկ Շիրակի թաղման ձևերը, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 55:

հնավայրերից հայտնաբերված տարաբնույթ և բազմազան ջնարակ խեցեղենը IX-X դարերի գիտության և տեխնոլոգիական պրոցեսների առաջադիմության արդյունք է՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանում մետաղական օքսիդների օգտագործման շնորհիվ տարբեր գույների և երանգների ստացման հնարավորությամբ: Կումայրի բնակավայրի պեղումներից հայտնաբերված ջնարակ ամանների մեծ մասը բաց ամանների՝ թասերի կամ քրեղանների բեկորներ են, որոնց վրա պահպանվել են կանաչ, դեղին և շագանակագույն ջնարակի տակ փորագիր դեկորատիվ նախշերը: Նմանօրինակ անոթները լայն տարածում ունեին և օգտագործվում էին նաև Սերձավոր Արևելքի այլ շրջաններում ևս: Խեցեղենի մասին եղած տվյալները հետազոտողներին իրավունք են տալիս խեցեգործությունը համարել տվյալ դարաշրջանի գեղարվեստական արհեստի առաջատար տեսակներից մեկը:

Խեցեղենի բազմազան դեկորատիվ ձևավորումը հազիվ թե հնարավոր լիներ առանց տվյալ ժամանակաշրջանի հայ մշակույթի այլ տեսակների ազդեցության: Առանց նրանց հետ սերտ կապի՝ նշանակալի չափով անհասկանալի կմնային արտադրանքի որոշ ձևեր և տեսակներ, գունային գամմայի տարրեր, նախշեր՝ մասնակի կամ ամբողջությամբ վերցված գեղարվեստական մետաղից, փայտե, ապակյա իրերից, գորգերից, գործվածքից և այլն: Խեցեգործները հաճախ վերցրել են բրոնզե, պղնձյա և արծաթյա ամանների ձևերը:

Կումայրուց հայտնաբերված գեղարվեստական խեցեղենի առանձին խումբ են X-XIIդդ. գոտեզարդ և դրոշմազարդ կարասները, որոնք բնորոշ են անհիական մշակույթին: Նախշազարդման թեման առավելապես կենդանական և բուսական պատկերներ են, հանդիպում են նաև մարդկանց պատկերներ: Դրոշմներն արվել են ուղիղ և զլանաձև կնիքներով: Կարմիր ներկված կարասների զարդագույները հիմնականում չեն ներկվել՝ հավանաբար պատկերներն ավելի ընդգծում և դիտարկելի դարձնելու համար: Թեև գտածոները շատ քիչ են՝ մոտ մեկ տասնյակ բեկոր, սակայն ոչ մի պատկեր չի կրկնվում: Դրանք ոչ միայն ավանդական-ծիսական են, այլ նաև ներկայացնում են առօրյա կյանքն ու կենցաղը:

Կումայրիի գտածոների մեջ կա նաև սնդկաման, որը բնորոշ է հայկական միջնադարյան մշակույթին (նկ. 4):<sup>13</sup>



Նկ. 4

Կումայրու պատմության ուշ միջնադարյան շրջանի նյութական վկայություններն են մի քանի զենքեր՝ մեկական վահան, սաղավարտ և մի քանի սակրեր: Շրջանաձև վահանը և սաղավարտը պատրաստված են պողպատից և փորագրման եղանակով զարդանախշված են կենցաղային պատկերներով, իսկ եզրագույներն ունեն արաբատառ արձանագրության տեսք: Ենթադրվում է, որ XVI-XVII դարերով թվագրվող այս զենքերը պատրաստված են տեղացի վարպետների կողմից, և նրանց վրա արաբատառ արձանագրությունների առկայությունը պարտադրված է մահմեդական տարրի գերիշխանությամբ:<sup>14</sup>



Նկ. 5

Հնագիտական ամենաուշ՝ XVII-XVIII դարերին վերաբերող գտածոները, որոնք հայտնի են Գյումրու տարածքից, մեկ տասնյակից ավելի ծխամորճերն են: Դրանք գտնվել են քաղաքի բերդի տարածքից, Մայակովսկի և Տերյան փողոցների միջակայքից, Բոշի մայրա և Պոլիգոն կոչվող թաղամասերից: Ծխամորճերը պատրաստված են մանրահատիկ, լավ հունցված կավից, հիմնականում պատված են կարմիր անգորով, ունեն լայն բացվող բերան և բարակ, նեղ փող: Մեծ

<sup>13</sup> Մ. Հարությունյանի պեղումների նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում (ծան. հեղինակի):

<sup>14</sup> Նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում (ծան. հեղինակի):

մասամբ զարդարված են կնքադրոշմով արված բուսական նախշերով, ունեն նաև վարպետի նշաններ, որոնցից մեկը՝ հայատառ՝ Ա. Տ. (նկ. 5):<sup>15</sup>

Այսպիսով, ինչպես վկայում է Գյումրու հնագիտական հուշարձանների պեղումների և տարրեր ժամանակներում այստեղ հայտնաբերված պատահական գտածոների քննությունը, քաղաքի տարածքը բնակեցված է եղել դեռևս մ.թ.ա. IV հազարամյակի վերջերից, և կյանքն այստեղ անընդհատ շարունակվում է մինչ մեր օրերը:

## ГЮМРИ: АРХЕОЛОГИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Хачатрян* \_\_\_

На территории нынешнего Гюмри первые поселения появляются уже в эпоху ранней бронзы (36-25 вв. до н.э.). Раскопки этих поселений и некрополей дали богатый материал для изучения развития социальных и экономических отношений, торговых связей, культа и религии... В поселениях Мясокомбината и Кумайри жизнь продолжается вплоть до античного периода (6-5 века до н.э.). Несмотря на богатый археологический материал, находки урартской культуры отсутствуют.

Античный период на территории города археологически засвидетельствован в северо-западной части города-в местности Вардбаг, у подножья холма южного форта крепости Александрополь.

В средневековье жизнь продолжается только в поселении Кумайри. В результате раскопок здесь обнаружены две церкви 5-ого и 7-ого веков. Последняя в 10-ом веке укрепляется крепостными стенами. Случайные находки разнообразного оружия (стальные щит, воинская каска, секиры и т.д.), глиняные табачные трубки доказывают продолжение жизни и в позднесредневековом периоде.

Богатое археологическое наследие Гюмри доказывает возникновение жизни на территории города более 5000 лет назад, жизнь которая непрерывно продолжается по сей день.

<sup>15</sup> Նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկագիտական քանգարանում (ծան. հեղինակի):

ՀԱՅԱՉԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ԲԱՐՇԱՄԻ  
ՊԱՇՏԱՄՈՒՆՔՈՒՄ

Հնագույն Բարշամ և հեթանոսական Բարշամին աստծու մասին տեղեկություններ քաղում ենք Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Անանիա Շիրակացու աշխատություններից: Տիգրան Միջինի (պատմական Տիգրան Մեծ) նվաճումների արդյունքներից է մեր պատմահայրը համարում նաև այն, որ «Ինքն իջան է Միջագետս, եւ գտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, գոր ի փղոսկրէ եւ ի բիրտել կազմեալ էր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան»:<sup>1</sup> Թորդանի հեթանոսական տաճարը, ըստ Ագաթանգեղոսի, կործանել էին Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ քազավորը. «Մեհեան անուանեալ սպիտակափառ դիցն Բարշամինայ. նախ զնա կործանելին. եւ զպատկեր նորին փշրէին»:<sup>2</sup> Այս աստծու վիպական զուգահեռ կերպարը ուղղակի *Բարշամ* է կոչվում: Բարշամի դեմ Արամ նահապետի տարած հաղթանակի առթիվ մեր պատմահայրը հաղորդում է հետևյալը. «Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ՝ մեռանի: Եւ զայս Բարշամ վասն իրոց արութեան բազում գործոց աստուածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յովս»:<sup>3</sup> Բարշամի մասին Անանիա Շիրակացին հաղորդում է հետևյալը. «Դարձեալ ոմանք յառաջնոցն Հայոց ասացին թէ՛ ի խիստ ճմբան Վահագն նախնի Հայոց գողացաւ զյարդ Բարշամայ ասորեստանեայց նախնոյ, գոր եւ մեք տվորեցաք բնախօսութեամբ Յարդագողի հետ անուանել»:<sup>4</sup>

Ինչպես տեսնում ենք, վերջին երկու հաղորդումներում պահպանված են Բարշամի աստվածային անցյալի վերհուշը և իր բուն անունը՝ *Բարշամ*: Մովսես Խորենացու առաջին հաղորդումից բխում է, որ Դարանաղի գավառի Թորդան բնակավայր է փոխադրված եղել քանաան-ամորեական Բաալ-շամեն/արամեաստորական Բել-շամին աստծու կուռքը: Ասորիք-Միջագետքում այս աստվածը նույնացված էր հունական Չևսի (սպա՝ հռոմեական Յուպիտերի) հետ:<sup>5</sup> Նրա *Բաալ-շամեն* անունը, որը «Տեր երկնից» է նշանակում, դրա վկայությունն է: Փաստորեն նա զուգահեռն էր Դարանաղիի Անի ամրոցում պաշտվող հայոց Արամագրի, որը նույնպես նույնացված էր հունական Չևսի հետ. հմմտ. «զբազինն Չեւս դիցն Արամագրայ», «զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն Անի»:<sup>6</sup> Այս դեպքում սպասելի էր, որ սեմական այդ աստծու կուռքը դրվեր Անիում, ոչ թե Թորդանում: Անիում չդրվելով հանդերձ՝ այն դրվել էր նույն Դարանաղի գավառում՝ Արամագրի պաշտամունքի կենտրոնական գավառում: Ինչի՞ մասին է խոսում սա: Կասկած լինել չի կարող, որ սեմական այդ աստվածը փոխարինել է «տեղական ինչ-որ աստվածության»:<sup>7</sup> Կասկած լինել չի կարող նաև, որ տեղական-հայկական այդ աստվածության պաշտամունքը սերտ կապի մեջ է եղել Արամագրի պաշտամունքի հետ: Ըստ երևույթին, նա համարվել է Արամագրի մեկ այլ դրսևորումը:<sup>8</sup>

<sup>1</sup> Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Բ, ժղ:

<sup>2</sup> Ագաթանգեղայ Պատմություն Հայոց (այսուհետև՝ Ագաթանգեղոս), Եր., 1983, ԳԹ, 784:

<sup>3</sup> Խ ո ռ է ն ա գ ի, Ա, ժղ:

<sup>4</sup> Ա ն ա ն ի ա Շ ի ռ ա կ ա ց ի, Տիգրեագիտություն եւ տոմար, Եր., 1940, էջ 37:

<sup>5</sup> И. Ш и ф м а н, А. Л у н д и н, Баалшамем, "Мифологический словарь", М., 1991, стр. 82.

<sup>6</sup> Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԳԹ, 785, Խորենացի, Բ, ժղ:

<sup>7</sup> Մ. Հ ա ռ ո թ յ ո ն յ ա ն, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 46:

<sup>8</sup> Ընչտ նույն կերպ Անահիտի մեկ այլ դրսևորումը պետք է համարվեր Նանեն, որի մեեյանը գտնվում էր Անահիտ մայր դիցուհու պաշտամունքի կենտրոնական գավառի՝ Եկեղիքի Թիլ ավանում (Ագաթանգեղոս, ԳԹ, 786): Մ. Հարությունյանի կարծիքով, Ասորիքից Հայաստան քափանցած դիցուհու պաշտամունքը ազդվել էր Անահիտի պաշտամունքից, իսկ նրա անունը «բաղարկվել մորը կամ մեծ մորը տրվող հայերեն Նանե (նան, նանի) բառի հետ» (Մ. Հարությունյան, նույնը):

Այս տեսանկյունից ուշագրավ են հետևյալ հանգամանքները: Խեթերը, Ամարո-պի աստծուց բացի, ունեին նաև «Հատիկի Ամարոպի աստված» (*U har-ši-har-ši-ia-aš*):<sup>9</sup> Հայոց նոր առասպելաբանության մեջ Մուրբ Սարգիսը՝ հին հողմ-ամարոպային բնույթի աստվածների շատ գծերի ժառանգորդը, սերտ կապ ունի հացահատիկի պաշտամունքի հետ:<sup>10</sup> Նույնպիսի բնույթ է ունեցել մեր Արամազդի դրսևորումներից մեկը՝ կունդ Արամազդը: Մովսես Խորենացին ասում է. «Ոչ Արամազդ որ, այլ ի կանոցողսն լսին լինել Արամազդ չորից ևս այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է եւ Կունդ ոմն Արամազդ»:<sup>11</sup> *Կունդ* բառին տարբեր բացատրություններ են տվել «քաջ»-ից մինչև «ճաղատ»:<sup>12</sup> Մեր կարծիքով, *կունդ*/*կունտ* բառը ռեզային տարբերակն է *կուտ* «հատ սերման, ունդ, ջամբ ի կերակուր թռչնոց», «կորիզ» բառի:<sup>13</sup> Նշելով, որ հայերենում միևնույն բառի ռեզային տարբերակով հանդես գալու հանգամանքը հետին շրջանի հայերենում հաճախ հանդիպող երևույթ է (հմմտ. *լինզ*, *կանանչ*, *մենծ*, *մենք*, *քինք* և այլն), Հ.Աճառյանը նկատել է տալիս, որ դա խորթ չէր նաև հին հայերենին (հմմտ. «\*մաչ, որից ռեզականի հավելմամբ՝ մանչ»):<sup>14</sup> Բուսաշխարհի առնչությամբ ուշագրավ է *կունդ*-ից առաջացած *կնդել* բայը, որը նշանակում է նաև «փետել, ծառի բոլոր տերևները փրցնել»:<sup>15</sup> Քանի որ կուտը, հունդը, կորիզը լեթ են, հասկանալի է, թե ինչու *կուտ*-ի *կունտ*/*կունդ* տարբերակը նշանակում է «հերաքափ, ճաղատ»:

*Բարշամին* դիցանվան մեջ պարզ նկատելի են *Բարշամ* և *Բելշամին* անունների բաղադրման հետքերը, որովհետև սեմական *շ*-ի դիմաց առկա է հայկական *բ*-ն, իսկ բառավերջին պահպանված է սեմական անվան *-ին* վերջավորությունը: Ինչպես որ բաղադրված անուններից մեկը՝ *Բելշամին*-ը, սեմական ստուգաբանություն ունի, այնպես էլ մյուսը՝ *Բարշամ*-ը, հայկական ստուգաբանություն է ունենալու: Մեր կարծիքով, այն կազմված է \**բարշ*- հիմքից և *-ամ* վերջածանցից: Հմմտ. *Արամ*, *Արզամ*, *Գեղամ*, *Կառնամ*, *Պասքամ* և այլն: Տեսնենք թե ինչ է նշանակում այս \**բարշ*-ը: Հայերենում գործած մի օրինակաբանության համաձայն, *-րշ*- հնչյունակապակցությունն ստացվել է հ.-ե.-*rs*- հնչյունակապակցությունից. հմմտ. հ.-ե. \**tors*->թորշ-ում, \**trs*->թարշ-ամ:<sup>16</sup> Ըստ այսմ, մեր \**բարշ*-ը ենթադրում է հ.-ե. \**bhrs*- նախածնը, որը ներկայացնում է ստորին ձայն-դարձը հ.-ե. \**bhers*-ի (վերին ձայնդարձ): Վերջինիս հիմքում հ.-ե. \**bher*- «սուր լինել» արմատն է, որով հնդեվրոպական հեռավոր անցյալում կազմվել են ընդդեմներ նշող բառեր (դրանց վայրի տեսակները ծակող քիստեր ունեին): Արմատի ստորին ձայն-դարձը «հացահատիկ» նշանակությամբ ժառանգ լեզուներում տվել է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ լատին. *far* «հաճար», հին իսլ. *barr* «ցորեն», հին իռլ. *bairen* «հաց», սերբախորվ. *bâr* «կորեկի տեսակ», բուլղար. *брашно* «այլուր», հին ռուս. *воропьно* «այլուրից պատրաստված ուտելիք», «սնունդ» (բարբ. ռուս. *воропьно* «աշորայի այլուր»):<sup>17</sup>

Բարշամի նախապես դրական կերպար լինելու մասին կարող են վկայել նույն \**բարշ* հիմնակազմ բաղադրիչով կազմված հետևյալ բառերը: 1. *Բարշոկ*. Գր. Մազիստրոսի հիշատակած այս բառի համար ենթադրվում է «մեղմ, անոյշ» նշանակությունը:<sup>18</sup> 2. «*Բարշոք* - գեղեցիկ» բառը վկայված է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում:<sup>19</sup> Հավանաբար, այս բառերը նախնական \**բարշուկ*-ի արտասանական տարբերակներն

<sup>9</sup> «Keilschriftkunden aus Boghazköi», Hf. 1-30, Berlin, 1923-1939 (XXV, 23, IV, 45).

<sup>10</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Եր., 1969, էջ 364-365:

<sup>11</sup> Խ ո ռ ե ն ա զ ի, Ա, լա:

<sup>12</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 659-660: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհարար թարգմ. և մեկնաբանությունները Մտ. Մալխասյանի, Եր., 1981, էջ 103, 475 ծան. 92:

<sup>13</sup> «Նոր բառգիրք հայկազնան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 1124:

<sup>14</sup> ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 256:

<sup>15</sup> ՀԱԲ, հ. II, էջ 659:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 156:

<sup>17</sup> «Этимологический словарь славянских языков», т. II, М., 1975, стр. 212-213; т. III, М., 1976, стр. 131, 134-135; Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 872-873.

<sup>18</sup> ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 428:

<sup>19</sup> «Բառգիրք հայոց», Քննական բնագիրք, առաջարկներ և ծանոթագրությունները՝ Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 52:

են (\*բարշուկ<բարշ-ուկ՝ նվազական-փաղաքշական –ուկ վերջածանցի հավելումով): Կարևորը հիմնականում \*բարշ-ին վերագրված «մեղմ, անուշ, գեղեցիկ» նշանակություններն են: Ըստ երևույթին, նախնական Բարշամը, լինելով հացահատիկի անձնավորում աստվածություն, ըմբռնվել է նաև այդպիսին: Առասպելաբանական մտածողությամբ բույսերը և, մասնավորապես, հացագգի բույսերը անձնավորվում էին գեղեցիկ պատանու կամ երիտասարդի տեսքով: Հիշենք, որ մեր Արան կրում էր *Գեղեցիկ* մականորը,<sup>20</sup> իսկ նա «հայոց մեռնող-հառնող աստվածությունն է՝ բուսաշխարհին, մասնավորապես հացահատիկներին ու հողին առնչվող»:<sup>21</sup> Այսպիսով, հաստատվում է, որ Բարշամը եղել է հայոց հնագույն աստվածներից մեկը, իսկ նրա անվան հիմքում ընկած է հ.-ե. \*bher- արմատը «հացահատիկ» է նշանակել: «Հացահատիկ» նշանակող բառից հացահատիկի անձնավորում աստվածության անվան առաջացման մեկ ուրիշ օրինակ է *Շարայ* դիցանունը: Հացառատ Շիրակի և նրա բնակչության անվանադիր համարված<sup>22</sup> Շարայի անունը ծագումնաբանական կապի մեջ է *աշարայ/աշորայ* (Արցախում՝ *շարա*) բառի հետ<sup>23</sup> (հմմտ. Շիրակի հետ Կամսարական նախարարական տոհմի տիրույթը կազմած հարևան գավառի *Աշարունիք* և *Աշորնէք* համահիմք անունները):

Հացահատիկն անձնավորող և բուսաշխարհի ներկայացուցիչ համարված աստվածը, բնականաբար, ի սկզբանե աստրեստանցի և թշնամի չէր կարող ըմբռնվել: Բարշամը հակառակորդ կարող էր ըմբռնվել միայն Արեգ/Վահագն աստծու երկրպագուների կողմից՝ վերջինիս հետ ունեցած բախման մասին պատմող առասպելաբանական դրվագի պատճառով: Այդ դրվագը ևս խոսում է Բարշամի ամպրոպային բնույթի մասին, որովհետև արտացոլում է հնդեվրոպական արևային և ամպրոպային երկու գլխավոր աստվածությունների հակամարտության առասպելը: «Ռ-իզվեդայում» այն արտացոլված է արևային Սուրյայի և ամպրոպային Ինդրայի բախման դրվագում:<sup>24</sup> Այդպիսի մի պայքարի վերհուշ է պահպանել ամպրոպային Մանասարի և արևային Բաղրասարի մեհամարտի դրվագը «Մասնա ծոեր»-ում: Անանիա Շիրակացու հաղորդած առասպելում Կաթնածիրի նաև *Հարդագողի հետք* անվանումը բացատրվում է Բարշամից Վահագնի գողացած հարդի թողած հետքով: Իսկ հարդը՝ ցորենի, գարու և այլնի կախելու ընթացքում առաջացած «ավելցուկը», կարող էր գտնվել միայն հացագգի բույսեր մշակողի մոտ, որպիսին էր Բարշամը: Իսկ արևաբնույթի աստվածների՝ երկնային հովիվների (հմմտ. Հելիոս և Ապոլոն),<sup>25</sup> եղջերավոր անասունները դրա կարիքը զգալու էին, մանավանդ, «ի խիստ ձմրան»: Ուրեմն, հայոց հնագույն այս առասպելում արտացոլված է նաև վաղ հողագործների և վաղ անասնապահների միջև ընթացած մրցապայքարը: Ի դեպ, այն արտացոլված է նաև շումերական «Ինաննա-Իումուզի» առասպելում: Համաձայն դրա՝ Ինաննա դիցուհին (մեր Աստղիկի համարժեքը) երկու թեկնածու-փեսացուներից նախապատվությունը տվել էր հողագործ Էնկիմդուին, բայց արևի աստված Ուտուի միջամտությունից հետո փոխել էր իր որոշումը՝ հօգուտ հովիվ Դումուզիի»<sup>26</sup> (հիշենք, որ Աստղիկի ընտրյալը Վահագնն էր):

Բարշամն, ըստ ամենայնի, եղել է ծագումնաբանական նախորդը Կունդ Արամազդի: Վերջինիս առիթով նշենք, որ նախքան մկրտվելը Տրդատ 3-րդը, հավանաբար, փորձ էր արել մեկ միասնական Արամազդի պաշտամունք սահմանելու, որովհետև *մեծ և արի, երկնքի և երկրի արարիչ, դիցահայր*<sup>27</sup> Արամազդի անունից իր ժողովրդին մաղթում էր «լիութիւն պարարտութեան»:<sup>28</sup> Բնականաբար, այս բարենաաղթությունն արվելու

<sup>20</sup> *Խ ն բ ն ա գ ի, Ա, Ժն:*

<sup>21</sup> *Ա. Հ ա բ ո թ յ ո ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 26-27:*

<sup>22</sup> *Խ ն բ ն ա գ ի, Ա, Ժբ, Բ, դ:*

<sup>23</sup> *Ա. Պ ե տ ռ ն ս յ ա ն, Հացագգիների մշակութային և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդաբանության, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1981, թիվ 3, էջ 187:*

<sup>24</sup> *Rgv. I, 175, 4; IV, 30, 4; X, 43, 5; "Ригведа. Мандаы I-IV", М., 1989, стр. 218, 393; В. Топоров, Сурья, "Мифы народов мира", т. II, М., 1988, стр. 478.*

<sup>25</sup> *А. Л о с е в, Аполлон, "Мифологический словарь", стр. 52, 53; А. Тахо-Годи, Гелиос, նույնը, էջ 145; М. Соколов, Пастух, "Мифы народов мира", т. II, стр. 292.*

<sup>26</sup> *В. А ф а н а с ь е в а, Инанна, "Мифологический словарь", стр. 244.*

<sup>27</sup> *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Ե, 53, 2, 68, ԺԲ, 127, ՃԹ, 785:*

<sup>28</sup> *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԺԲ, 127:*

էր Կունդ Արամագոյի անունից, որովհետև *պարարտ*-ը նաև «արգավանդ, բերրի, բարգավաճ» է նշանակում, իսկ բարբառներում նաև «տուճացած (կանաչեղեն, բույս)», «դալար, թարմ (ծաղիկ)»:<sup>29</sup> Բուսականության, մասնավորապես հացահատիկի առնչությամբ ուշադրության են արժանի ՆՀԲ-ում բերված հետևյալ օրինակները. «Դաշտ քո լցին պարարտութեամբ», «Կերակրեաց գնոսա ի պարարտութենէ ցորենոյ»:<sup>30</sup>

Վահագն (Արեգ) և Բարշամ (Կունդ Արամագոյ) առասպելաբանական առճակատման «պատմականացումը» սկսվել էր ավելի վաղ՝ նախքան Բել-շամինի կուռքի փոխադրումը Հայաստան: Պատահաբար չէ, որ Մովսես Խորենացու վերաբերյալ երկրորդ հաղորդման մեջ Բարշամի հակառակորդի դերում հանդես է գալիս ոչ թե «հայոց նախնի Վահագնը», այլ նախնի Արամը, որի անունը նույնական է Ուրարտուի (մեզ հայտնի) առաջին թագավորի Arame//Aramu անվան հետ:<sup>31</sup> Ընդ որում, Արամ նահապետի պատմական նախատիպերը ընդարձակ նվաճումներ իրագործած ուրարտական հզոր թագավորներն են (Իշպուիմիից մինչև Ռուսա II):<sup>32</sup> Հայտնի է, որ Արևի աստվածը (<sup>D</sup>UTU, <sup>D</sup>Siuini) ուրարտական թագավորների տոհմիկ աստվածներից էր, արքայատոհմի հովանավոր աստվածներից մեկը,<sup>33</sup> իսկ նախքան Խալդիի բարձրացումը՝ նաև պետության գերագույն աստվածը:<sup>34</sup> Նա Վահագնի նախորդ արևաբնույթ աստվածն էր, որով էլ իր բացատրությունն է ստանում Բարշամի հակառակորդի դերում Վահագնի փոխարինումը Արամ նահապետով՝ մի կերպարով, որի նախատիպ ուրարտական թագավորներն ըմբռնվել են որպես Արևաստծու երկրային մարմնավորումներ:<sup>35</sup> Նույն կերպ միջագետքյան-ասորիցյան Բել-շամինի երկրային մարմնավորումներն համարված ասորեստանցի թագավորները Բել-շամինի և Բարշամի նույնացումից հետո դարձել են պատմական նախատիպերը հայոց կողմից ասորեստանցի ըմբռնված Բարշամի կերպարի: Այսպես է հայ բանահյուսության մեջ Բարշամն ընկալվել որպես «ասորեստանեայց նախնի»:

Բարշամը բուսաշխարհի հետ սերտորեն կապված է ոչ միայն իր, այլև իր սրբատեղիի՝ Թորդան ավանի անվան միջոցով: Թորդան//Թորթան անունը կրող բնակավայրեր կային թե՛ Դարբանաղի գավառում, թե՛ Բասենան գավառում:<sup>36</sup> Դրանք կազմված են - *ան* տեղանվանակերտով (հմմտ. *Ագասան, Դերջան, Երեսան, Շաարշան* և այլն)՝ *թորդ* // *թորթ* հիմքից: Բուսաշխարհին վերաբերող այս հիմքը առկա է նաև հետևյալ բաներում. *թորթ*//*թորթն* «մի տեսակ վայրի բույս է. մարեմխտո, եզնալեզու, գլիքակ», «կոտեմի նման մի բույս»,<sup>37</sup> *թորթիկ* (<*թորթ-իկ*) «վայրի բանջար բույրածև տերևներով, որ առավելապես բուսում է արտերի մեջ և որից աղցան են շինում կամ յուղով ու ձվով տապակում»,<sup>38</sup> *թորթոշ* (<*թորթ-ոշ*. հմմտ. *դանդալ-ոշ, դող-ոշ, մոթ-ոշ* և այլն) «տուճացած, զարգացած (բույս)», «հոտոթի, ուռճացած, բերրի»:<sup>39</sup> Ըստ երևույթին, միջնաձայն - *ր*-ի անկումով է ստեղծվել *թորթոշ* (<\**թորթ-ոշ*) բառը, որը նշանակում է «շրեշ բույսը, մի տեսակ լեռնային ուտելի բույս»:<sup>40</sup> Այս բառերի հիմք *թորթ*-ը համարվում է հուսալի

<sup>29</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. II, Եր., 1981, էջ 630: ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 57-58:

<sup>30</sup> ՆՀԲ, հ. II, էջ 630:

<sup>31</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼ ՊՆԺ), Եր., 1987, էջ 441: Մ. Արեղյան, Երկեր, հ. I, Եր., 1966, էջ 54:

<sup>32</sup> Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 175-177:

<sup>33</sup> Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 44-46:

<sup>34</sup> Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն, Նախնական Ուրարտուի գլխավոր աստծու հարցի շուրջ, «Գ.ՊՄԻ գիտ. աշխ. ժողովածու», հ. II, Գյումրի, 1994, էջ 226-231, Նույնի, Արևի աստվածը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ, ՊԲՀ, 2005, թիվ 3, էջ 241-246:

<sup>35</sup> Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն, Արևի աստվածը..., էջ 237-240:

<sup>36</sup> Թ. Հ ա կ ո թ յ ա ն, Մտ. Մ ե լ ի թ - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ը ս ե ղ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ), հ. I, Եր., 1986, էջ 611, հ. II, 1988, էջ 475:

<sup>37</sup> ՀԲԲ, հ. II, էջ 120, ՀԱԲ, հ. II, էջ 200:

<sup>38</sup> ՀԲԲ, հ. II, էջ 120:

<sup>39</sup> ՀԱԲ, հ. II, էջ 200, ՀԲԲ, հ. II, էջ 120:

<sup>40</sup> ՀԱԲ, հ. II, էջ 193, հ. III, էջ 544:

ստուգաբանություն չունեցող բառ,<sup>41</sup> այսուհանդերձ, այն կարելի է ծագած համարել հ.ե. \*pter- արմատի միջին ձայնդարձից՝ -t- ածականով: Նույն արմատի վերին ձայնդարձը նույն -t- ածականով ներկայացված է ի դեմս *թերթ* բառի,<sup>42</sup> որը նշանակում է «ծաղկի, բույսի, տերևի, թղթի, որևէ բարակ թիթեղի թերթ»:<sup>43</sup> Նույն \*թորթ/\*թորդ հիմքն է առկա նաև Տայքի *Թորթում*//*Թորդում* (նաև *Թորթում*, *Թորդում*) կոչված բնակավայրի և նույնանուն գավառի անվան մեջ. *Թորթ-ում* հմմտ. սեպագրությամբ ավանդված Kalaruma, Tarkuma, zalpuma և այլ տեղանունների –um(a) բաղադրիչները:

\*Bars/\**Բարշ* բաղադրիչով հայտնի առաջին տեղանունը արձանագրված է Ասորեստանի Թիզլաթիալասար 1-ին թագավորի կողմից Նաիրի ցեղամիության դեմ մ.թ.ա. 1112թ. ձեռնարկած արշավանքի նկարագրության մեջ:<sup>44</sup> Նա պատմում է նաիրյան 23 երկրների «թագավորների» դեմ իր տարած հաղթանակի մասին:<sup>45</sup> Նաիրյան այդ երկրներից վերջինը հիշատակված *Daiāeni*-ն հստակ տեղադրություն ունի՝ դա հետագա Տայքն է ճորոխի միջին հոսանքի շրջանում:<sup>46</sup> Նախավերջինն հիշատակված նաիրյան երկիրը *Abarsiuni*-ն է, որը, ենթադրաբար, տեղորոշվում է *Daiāeni*//*Տայքից* անմիջապես հարավ,<sup>47</sup> այսինքն՝ հետագա Կարին և Բասեան գավառների տարածքում:<sup>48</sup> *Abarsiuni* երկրանունը տրոհելով *A-bars-iuni* բաղադրիչների, մենք նրա երկրորդ՝ -bars-, բաղադրիչը արձատակիցն ենք համարում *Բարշամ* դիցանվան: *A-bars-iuni* բաղադրիչների տրոհելիս, այս երկրանվան առաջին՝ a-, բաղադրիչը կարելի է համարել նախահավելվածական ձայնավոր, իսկ երրորդ՝ -iuni, բաղադրիչը նույնացնել հայերեն –իւն վերջածանցի հետ: Հնդեվրոպական ծագումով այս վերջածանցը<sup>49</sup> առկա է *աճիւն*, *աիւն*, *հերիւն*, *մրջիւն*<sup>50</sup> և այլ բառերում, սեպագրությամբ ավանդված հայկական *Danziun*, *Zanziuna* և այլ տեղանուններում:

Բասեան գավառը, Կարինի հետ միասին, հնագույն Արարսիունի երկրի մասը կազմելու մասին է խոսում նրա *Բասեան* անունը՝ բաղկացած *Բաս-* հիմքից և *-եան* վերջածանցից: Հայերեն *-եան* վերջածանցին վերագրելով տարբեր (հնդեվրոպական-իրանական և հնդեվրոպական-հայկական) ծագում՝ Գ. Ջահուկյանը ուշադրություն է հրավիրում հետևյալ հանգամանքի վրա. «ծագմամբ սրա հետ կապված<sup>51</sup> է արդյոք *-եան(-ք)* հավաքականը՝ *գործեան*, *գրեան(-ք)*, այլև *խոզեան*, *մոզեան* և այլն:»<sup>51</sup> *Բասեանը* տեղանվան կազմության տեսանկյունից հմմտ. *Հաշտեանը*, *Թառձեանը*, *Խորձեանը* տեղանունները:<sup>52</sup> *Բասեան* տեղանվան *Բասեանը* տարբերակը խոսում է իր ցեղանվանական ծագման մասին: *Բասեան* ցեղանուն-տեղանվան հիմնականում *բաս* բաղադրիչը կարող էր առաջանալ հնագույն \*bars-ից՝ -r-ի վաղ անկումով (հմմտ. նույնպիսի անկման դեպքերը հետագա հայերենի մի շարք բառերում. *մրսիլ*>*մսիլ*, *դուրս*>*դուս*, *ներս*>*նես*, *խարշել*>*խաշել* և այլն):<sup>53</sup> Իսկ այդ նույն \*bars- (<h.-ե. bhrs- «հացահատիկ») նախաձևն էր, ինչպես տեսանք, առկա *Abarsiuni* երկրանվան և *Բարշամ* դիցանվան մեջ:

<sup>41</sup> ՀԱԲ, հ. II, էջ 200:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 175, 185:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>44</sup> В. Яковсон, Месопотамия в XVI-XI вв. до н. э., «История древнего мира. Ранняя древность», М., 1989, стр. 208.

<sup>45</sup> И. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, 2, N 10, 11; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Եր., 1981, էջ 19-20:

<sup>46</sup> Н. Арутюнян, Бивальни (Урарту), Ер., 1970, стр. 145, 45, 48; Նույնի, Топонимика Урарту (այսուհետև՝ ТУ), Ер., 1985, стр. 70-71.

<sup>47</sup> ТУ, стр. 7.

<sup>48</sup> Ս.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 44, 58, 106, 110:

<sup>49</sup> ՀԼՊՆԺ, էջ 238-239:

<sup>50</sup> ՀԱԲ, հ. I, էջ 360, հ. III, էջ 86, 371:

<sup>51</sup> ՀԼՊՆԺ, էջ 355:

<sup>52</sup> Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, стр. 171.

<sup>53</sup> ՀԱԲ, հ. III, էջ 371, 444, հ. I, էջ 686, հ. II, էջ 347: Տայքի Սևեաց փոքր գավառանունը արձանագրել է և հնչյունի նախորդած *ր-ի* անկման մի վաղ օրինակ: Գավառի կենտրոնատեղի բնակավայրի Արսիս (այժմ՝ Էրսիս) անվան մեջ *ր-ն* դեռևս պահպանվում էր (Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 40, 110):

Բասեան տեղանունն ունէր *Բասան* (նույնպէս հին) և *Բասեն* (համեմատաբար նոր) տարբերակները և: Փավստոս Բուզանդի վկայութեամբ Խոսրով Կոտակ քաղաքի (330-338թթ.) հրամանով Վաչե սպարապետը սրածել էր այս գավառի խռովարար Որդունի նախարարական տոհմը, որի Որդորու բուն գյուղը «ամենայն սահմանօքն հանդերձ» հանձնել էին Բասեան//Բասանի եպիսկոպոսին, «որ ինքն իսկ է յերկրին Բասանու»: <sup>54</sup> *Բասան*-ը որպէս հասարակ անուն մեկ անգամ էլ հիշատակված է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում. «*Բասան*- տունկ հզօր, կամ տունկ աստուծոյ»: <sup>55</sup> *Տունկ* բառը դեռևս վաղ գրաբարում թե՛ «ծառ, թուփ, բույս» է նշանակել, թե՛ «սերմ, ցանք», որովհետև նրա *տնկել* բայական ձևը նշանակում էր նաև «սերմանել, ցանել»: <sup>56</sup> *Բասան* բառին տրված վերոբերյալ բացատրությունները անվարան կերպով կարող ենք վերագրել նաև *Բասան*//*Բասեան* տեղանվանը և համարել հետևանքը Բաս-ան//Բաս-եան (<\*bars-<h.-ե. \*bhrs-) լեզվաբանական կապի: Փոխանցման միջանկյալ օղակն է արտացոլում հին հույների կողմից Բասեանի բնակչությանը տրված *Փաստաու* <sup>57</sup> (*Փաս-տա-ու*//*Բաս-եան-ք*) անունը, որը վկայում է տեղանվան \*բաս- բաղադրիչի հ.-ե. \*bh-ով սկսվելու, ուրեմն, նաև \*բաս- <\*bars-<h.-ե. \*bhrs- անցման օրինաչափ լինելու օգտին (հ.-ե. \*bh- >հայ. բ, հուն. φ): <sup>58</sup> *A-bar-siuni* և *Բասեան* տեղանունները հ.-ե. \*bhrs- «հացահատիկ» նախածկին հանգող իրենց բաղադրիչներով, Բասեանի *Թորդան*//*Թորթան* տեղանվան հետ միասին խոսում են տեղում հացազգի բույսերի մշակութային, դրանց և Բարշամի պաշտամունքի խոր արմատների մասին: Մշակութային առթիվ հիշենք, որ հայ շինականի ջանադիր աշխատանքի շնորհիվ՝ ընդհուպ Մեծ եղեռնը, Բասեանը եղել է հացառատ և հացառաք գավառ: Իզուր չէր թուրքական առածն ասում. «Թորթումի պես մառան ունենամ, Բասենի պես՝ ամբար»:<sup>59</sup>

Բարշամ(ին)ի կրած *Սպիտակափառ* մակդիրը բացատրվել է նրա բազմը փղոսկրից, բյուրեղից և արծաթից պատրաստված լինելու հանգամանքով: <sup>60</sup> Կարծում ենք, որ, ընդհակառակը, նրա կրած *Սպիտակափառ* մակդիրն է պատճառ դարձել, որ նրա կոտորը («գայատկերն») պատրաստվեր «ի փղոսկրէ եւ ի բիրեղէ՝ կազմեալ արծաթով»: <sup>61</sup> Իսկ *Սպիտակափառ* նշանակում է «սպիտակաքաղանք», որովհետև *սպիտակա-փառ* բառի երրորդ բաղադրիչը՝ *փառ*-ը, նշանակում է «շապիկ, բարակ մաշկ, քաղանք»: <sup>62</sup> Կարծում ենք, որ խոսքը Բարշամ(ին)ի բուսական դրսևորումներից մեկի՝ քոփկ ցորենի մասին է: Քոփկ ցորենի հասկը, ի տարբերություն կարմրահատ ցորենի, քիստեր չունի, այն երկար ու սպիտակ է, ինչպէս սպիտակ էր նաև նրանից պատրաստված բասենյան քոփկ լավաշը: <sup>63</sup>

Արևմտյան Եփրատի վերնագավառը բռնած Կարին գավառը <sup>64</sup> նույնպէս հնագույն ժամանակներից հայտնի է եղել որպէս հացառաք կենտրոն: Այստեղ էր գտնվում խեթական արձանագրություններից հայտնի հայասական <sup>65</sup> *Arzija* քաղաքը, <sup>65</sup> որի անունով երբեմն նրա շրջանը ևս կոչվում էր «*Arzija* քաղաքի երկիր»:<sup>66</sup> Այստեղից,

<sup>54</sup> Փատստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1987, Գ, դ:

<sup>55</sup> Բառգիրք հայոց, էջ 50:

<sup>56</sup> ՆՎԲ, հ. II, Եր., 1981, էջ 885, 891:

<sup>57</sup> X e n., *Anabasis*, IV, VI, 5; VII, VIII, 25.

<sup>58</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 85:

<sup>59</sup> Գ. Հ ա կ ո թ յ ա ն, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 14: Հայտնի է, որ Թորթումի գավառում «Հացահատիկի մշակությունը քիչ տեղ էր գրավում, դրան հակառակ, ձորահովիտներում ու նախալեռնային վայրերում տարածված էր այգեգործությունն ու պտղաբուծությունը» (ՏԲ, հ. II, Եր., 1988, էջ 476):

<sup>60</sup> Н. Э м и н, *Очерк религии и верований языческих армян*, М., 1866, стр. 24; Ազաբանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհարար քարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1983, էջ 519, ծան. 441:

<sup>61</sup> Խ ո թ ե ն ա ճ ի, Բ, ժդ:

<sup>62</sup> ՆՎԲ, հ. II, էջ 932:

<sup>63</sup> Գ. Հ ա կ ո թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 77:

<sup>64</sup> Ա. Ե թ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 58:

<sup>65</sup> В. Х а ч а т р я н, *Восточные провинции Хеттской империи*, Ер., 1971, стр. 64-67, 139-141.

<sup>66</sup> Ա. Ք ո ս յ ա ն, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004, էջ 42, 43:

Արևմտյան Եփրատով հացահատիկ առաքելու վերաբերյալ խեթական արձանագրություններից մեկում պահպանված է հետևյալ տեղեկությունը. «Բիտիյարիզա քաղաքից նավերը Մամուխա քաղաք բերքը հասցրին առաջին ուղերթով հետևյալ կերպ... քանի որ ջուրը ծանծաղ էր, սպա Բիտիյարիզա քաղաքում նավերին բարձեցին հետևյալ քանակությամբ. [առաջին ուղերթով] 120 չափ գարի, իսկ երկրորդ ուղերթով՝ 130 չափ հաճար: Հազար հիսունչորս զինվոր նախապես լաստերը բեռնավորում են Արցիյա քաղաքում»:<sup>67</sup> Ուրեմն, Արցիյա քաղաքից գետի հոսանքն է վայր լաստերով (կամ մակույկներով) հացահատիկը հասցվում էր Բիտիյարիզա//Պիտիյարիզա՝ հետագա Բթառիճ, որտեղ այն բարձելով նավերին հասցնում էին Արևմտյան Եփրատի մեծ ոլորանի շրջանում գտնվող Մամուխա:<sup>68</sup>

Հայաստանյան Արցիյա//Arziia բնակավայրը հետագա Արծնն է, որի անունը՝ իր *արծ-* քաղաղրիչով նույնական է Arziia-ի *arz-* քաղաղրիչի հետ (մի դեպքում հավելված է *-ն* մասնիկը, մյուսում՝ *ii* ածականակերտ վերջածանցը):<sup>69</sup> *Arz-//Արծ-* արմատը նույնն է *արծաթ* բառի *արծ-* քաղաղրիչի հետ՝ ծագած հ.-ե. \**arg-*՝ «փայլել» արմատից. հմմտ. ազգակից լեզուների նույնարմատ բառերից հին հնդկ. *raṣatá-* «արծաթ, արծաթագույն», «սպիտակ», հին պարս. *Ardata*, թոխար. *arkjant*, հուն. *ἀργυρος*, լատին. *argentum* «արծաթ»:<sup>70</sup> Հ.-ե. \**arg-*ը առկա է նաև ազգակից լեզուների հետևյալ բառերում. խեթ. *harki*, թոխար. *U arki*, թոխար. *F arkwi*, հուն. *ἀργός*, հին հնդկ. *árjuna-*, որոնք նշանակում են «սպիտակ», «սպայծառ (գույնով)»:<sup>71</sup> Ընդ որում, «արծաթ»-ի և «սպիտակ»-ի լեզվաբանական-տրամաբանական կապի վկաները հին հնդկ. *rajatá-* և խեթերեն *harki* բառերն են, որոնք թե՛ «արծաթ» են նշանակում, թե՛ «սպիտակ»:<sup>72</sup> Քանի որ հետագա Կարին գավառը ևս ընդգրկած *Abarsiumi* հնագույն անվան մեջ առկա է \**bars-//Բարշ* «հացահատիկ» բառը, սպա գավառի և հնագույն կենտրոնի Arziia անվան մեջ էլ կարելի է տեսնել քռիկ ցորենի և նրա անձնավորում Բարշամ աստծու *սպիտակափառ*՝ «սպիտակաթաղանթ» մակդիրի համարժեքը (մանավանդ որ Arziia, *Արծն* տեղանունները և *արծաթ* բառը արմատակիցներ են, իսկ Բարշամի մի կտորը «կազմեալ էր արծաթով»):

Հնագույն աստվածությունները իրենց սրբատեղի բնակավայրերի հետ կապված էին ոչ միայն իրենց պաշտամունքի ծիսական կողմով, այլև հաճախ դրանց անունների մեջ իրենց էության կամ գործառույթի այս կամ այն կողմի դրսևորումով: Ապացուցված է, որ դեռևս Հայաստանում կային այնպիսի բնակավայրեր, որոնք լինելով հայաստանյան (հնագույն հայկական) այս կամ այն աստծու սրբատեղիները՝ կրում էին այդ աստվածների հայտնի մակդիրները: Այդպիսի բնակավայրերից էր, օրինակ, <sup>URU</sup> *Arniia*-ն, որը ամայրոպային բնույթի աստվածներից մեկի՝ <sup>d</sup>U-ի (գաղափարագիր է) պաշտամունքի կենտրոնատեղին էր:<sup>73</sup> *Arn-ii*ա քաղաղրիչներից կազմված տեղանվան մեջ *-ii*ա-ն հնդեվրոպական ծագումով վերոհիշյալ ածականակերտ-տեղանվանակերտ վերջածանց է, իսկ *Arn-* հիմքը հայերեն *ամն* բառն է:<sup>74</sup> Այս բառը հնդեվրոպական ծագումով *այր* «տղամարդ», «ամուսին», «արի, քաջ, կտրիճ» բառի ածանցյալն է. հմմտ. *ամն տալ* «ամուսնանալ», *ամնաբար* «արիաբար», *ամնացի* բառերը,<sup>75</sup> նաև նույնարմատ *ամն* «արու վայրի ոչխար» բառը:<sup>76</sup> Հեթանոսական Արամագդի (Արամագդ-Չևսի)

<sup>67</sup> KUB, XXXI, 79, I, 4-13, B. Хачатрян, նշվ. աշխ., էջ 64:

<sup>68</sup> B. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 65, 67, 139-140:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 67, ծան. 167: Հնդեվրոպական ծագումով այս վերջածանցը *-ii*ա և *-ia* տեսքով առկա է խեթական, ասորեստանյան, ուրարտական սեպագիր արձանագրություններից հայտնի Հայկական լեռնաշխարհի ուրիշ բազմաթիվ տեղանուններում ևս, իսկ *-ի* տեղանվանակերտի տեսքով պահպանված է *Լոռի*, *Կարբի*, *Կումայրի*, *Տրի*, *Փարսի* և այլ տեղանուններում:

<sup>70</sup> ՀԱԲ, հ. I, էջ 317-318:

<sup>71</sup> ИЯИ, т. II, стр. 713.

<sup>72</sup> Նույնը:

<sup>73</sup> KUB, XXVI, 39, IV, 29.

<sup>74</sup> U. Պ Ե տ ը ո ս յ ա ն, Գասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 336-337:

<sup>75</sup> ՀԱԲ, հ. I, էջ 172-173:

<sup>76</sup> ՀԱԲ, հ. I, էջ 261:

*արի* մակդիրը<sup>77</sup> նույնպիսի ծագում և նույնպիսի իմաստ ունի. *արի* <*այր-ի*: Ըստ երևույթին, հեթանոս հայերի ամպրոպային աստվածը (Արամագո-Չևաը) իր արի մակդիրը ժառանգել է հայասական նույնաբնույթ նախորդից, որի մակդիրը մեզ է հասել նրա սրբավայր քաղաքի Arniia անվան մեջ:

Խեթական նույն արձանագրության մեջ հիշատակված են նաև ամպրոպային բնույթի հայասական մեկ այլ աստված՝ <sup>d</sup>U.takšanna-ն, և նրա սրբազան քաղաքը՝ Arhita-ն:<sup>78</sup> Այս աստծու takšanna//\*taksana մակդիրի հիմքում *h.-ե. \*tek-* արմատն<sup>79</sup> է՝ հիմքը հայերեն *թեքել* «կռնով կոկել, շինել, սրել» բառի,<sup>80</sup> իսկ *-ana* վերջավորությունը նույնական է հայերեն *-ան* վերջածանցի հետ (հմմտ. *խցան, կռան, քացան, փական* և այլն): Անկասկած, ամպրոպային բնույթի այս աստվածը եղել է դարբին աստված՝ դարբնության և արհեստագործության հովանավոր աստված: Ուրեմն, նրա հիշյալ մակդիրի իմաստային կրկնորդն է նրա սրբավայր քաղաքի Arhita (<\*arh-ita) անունը: Մրա առաջին բաղադրիչը արմատակիցն է հայերեն *արհեստ* (<արհ-եստ) բառի,<sup>81</sup> իսկ երկրորդ բաղադրիչը նույնական է հայերեն *-իթ* վերջածանցի հետ:<sup>82</sup>

Ամենայն հավանականությամբ, աստծու կրած մակդիրով նրա պաշտամունքի կենտրոնատեղի բնակավայրի անվանադրման երևույթի պատճառը եղել է այդ բնակավայրում գտնված նույն աստծու սրբատեղիի կրած համապատասխան անունը: Այսինքն՝ աստծու մակդիրով նախ կոչվել է իր սրբատեղին, ապա՝ վերջինիս կից բնակավայրը: Այս առթիվ հիշենք, որ այդ օրինաչափությունը գործել է բազում դարեր՝ իրեն զգալ տալով անգամ մեր օրերում: Օրինակ, Վաղարշապատ քաղաքի *Էջմիածին* անվանակոչության համար հիմք է ծառայել Վաղարշապատում գտնվող Մայր տաճարի կրած Բրիատոսի *Էջմիածին* մակդիրը, իսկ Գյումրի քաղաքի նաև *Յոթվերքին քաղաքը* (ըստ ջավախեցիների) կոչվելու պատճառը տեղի Սուրբ Աստվածածին եկեղեցու *Յոթ վերք* ժողովրդական անունն է՝ Սուրբ Աստվածածնի համապատասխան մակդիրը:

Հայասական դիցարանի 14 աստվածություններից<sup>83</sup> երեքը ամպրոպային բնույթի աստվածություններ էին կամ նույն *Ամպրոպի* աստծու երեք տարբեր դրսևորումները:<sup>84</sup> Դրանցից երկուսին արդեն ծանոթ ենք: Ինչպես տեսանք, դրանցից <sup>d</sup>U գաղափարագրի տակ հանդես եկած աստվածը բացահայտ (անխառն) ամպրոպային բնույթ ունեցող աստվածություն էր՝ առնականությունը կրող ռազմիկ աստված, իսկ <sup>d</sup>U.takšanna-ն ամպրոպային գծերով օժտված դարբին աստված էր: Բայց հայասական դիցարանը զլխավորում էր ոչ թե սրանցից որևէ մեկը, այլ <sup>d</sup>U.GUR աստվածը: Ո՞վ էր այս գաղափարագրի տակ թաքնված և ամպրոպային (<sup>d</sup>U) գծերով օժտված աստվածը, ինչպիսի՞ լրացուցիչ գծեր ունեւր նա: Այս նույն գաղափարագրի տակ հանդես եկած աստվածություն կար նաև խոտիական դիցարանում, որտեղ այդ աստվածը նույնացվում էր ընդերքի/անդրշիրիմյան աշխարհի շումերական Ներգալ աստծու հետ:<sup>85</sup> Խոտիական Արապխայում նրան էր ձոնված հունձի ամիսը:<sup>86</sup> Ըստ այսմ, պատահական չէ,

<sup>77</sup> *U q a p w a n q e n u, Ե, 53, 2, 68, ԺԲ, 127:*

<sup>78</sup> *KUB, XXVI, 39, IV, 32.*

<sup>79</sup> *Ս. Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն, Մուրսիի I-ի արևելյան արշավանքի երթուղին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 55-56:*

<sup>80</sup> *ՀԱԲ, հ. II, էջ 178-179:*

<sup>81</sup> *Ս. Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն, նշվ. աշխ., էջ 56*

<sup>82</sup> *Հավանաբար, գալիթ, քիրիթ, կնճիթ, սամիթ բառերում, Արտիթ, Բրիթ, Գնիթ, Չուիթ և այլ անձնանուններում առկա -իթ վերջածանցը ծագում է հ.-ե. \*et-ից: Հ.-ե. \*-et/\*-ed- մասնիկների վերաբերյալ Հ.Աճառյանը գրում է. «Այս մասնիկները առանձին նշանակությունից զուրկ, ծառայում են ընդարձակելու բառի բունը» (Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 111): Արհեստ բառից բացի -եստ վերջածանցն առկա է նաև զովեստ, համեստ, ուտեստ, պահեստ բառերում (Նույնը, էջ 114: ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 671-672):*

<sup>83</sup> *KUB, XXVI, 39, IV, 26-34.*

<sup>84</sup> *Г. В а р д у м я н, Дохристианские культы армян, Հայ ազգագրություն և քննադատություն, 18, Եր., 1991, էջ 67:*

<sup>85</sup> *Н. Я н к о в с к а я, Ашшур, Митанни, Арранхэ, «История древнего мира. Ранняя древность», М., 1989, стр. 196.*

<sup>86</sup> *Н. Я н к о в с к а я, նշվ. աշխ., էջ 196:*

որ Ներգալը ներկայացվում էր մանգաղածև սրով:<sup>87</sup> Պատահական չէ նաև, որ «Վերխուռիական զոհաբերությունների ցուցակում Ներգալը նույնացվում էր Թեշուրին (Ամպրոպի աստծուն-U.Պ.) զոհաբերվող հացահատիկի հետ»:<sup>88</sup> Այսպիսով, խուռիական<sup>89</sup> U.GUR/Ներգալ աստծու նման ընդերքին և հացահատիկին առնչվող պաշտամունք էր ունենալու նաև U.GUR գաղափարագրի տակ հանդես եկած հայաստանյան աստվածությունը:

Գր. Ղափանցյանը հայաստանյան այս աստծուն համարում է անդրշիրիանյան աշխարհի, մահվան և հարության անձնավորում աստված՝ ենթադրաբար նույնացնելով Արա Գեղեցիկի հետ:<sup>89</sup> Քանի որ U.GUR անվան U քաղաղորդի խոսում է անվանակիր աստծու մասն և առաջ ամպրոպային բնույթ ունենալու մասին, ուստի նրան պետք է համարել ոչ միայն խուռիական U.GUR/Ներգալի, այլև խեթական «Հատիկի Ամպրոպի աստծու» զուգահեռը, հնագույն հայկական Բարշամի և, սրա հետ միասին, նախորդ հեթանոսական Կուռդ Արամագրի ու ժողովրդական քրիստոնեության Սր Սարգսի:

## ОТРАЖЕНИЕ КУЛЬТИВИРОВАНИЯ ЗЕРНОВЫХ В КУЛЬТЕ БАРШАМА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Петросян \_\_\_

По древнеармянским эпическим сказаниям, Баршам-противник солнечного бога Вахагна, а также предка армян Арама. По Мовсесу Хоренаци, сирийцы обожествили Баршама, а царь Тигран, найдя в Месопотамии идол бога Баршамина, повелел отвезти в Армению и установить в Тордане. Налицо религиозный синкретизм и его следствие-контаминация армянского теонима *Баршам* и семитского теонима *Баал-шамем* (Баал-шамин).

Теоним *Баршам*-индоевропейско-армянского происхождения. Он состоит из компонентов *Барш-ам* (ср. *Ар-ам*, *Арг-ам*, *Гел-ам*, *Паск-ам* и т.д.). В основе компонента *барш*- этого армянского теонима лежит и.-е. Прототип *\*bhǵs-* "зерно" (<и.-е. *\*bher-* >латин. *far* "полва, крупа", *farina* "мука", гот. *barizeins* "ячменный", русск. диал. Бóрошно "ржаная мука" и т.д.). По всей вероятности, бог громовержец Баршам являлся также олицетворением зерна (ср. хеттск. "бог Грозы зерна"). Известно, что пантеон Хайасы возглавлял бог U.GUR. По нашему мнению, под этой идеограммой выступает именно Баршам, наследником которого является бог языческих армян Кунд Арамазд (ср. эпитет *Кунд* и арм. слово *кут* "семья, зерно, косточка").

Наирийский топоним *Abarsiuni* состоит из компонентов *A-bars-iuni*, где *bars* идентичен с *барш* "зерно". Из того же региона и того же хозяйственно-культурного круга происходит и топоним *Басеан* ← *\*Барс-еан*.

<sup>87</sup> В. Афанасьева, Нергал, "Мифы народов мира", т. II, стр. 212.

<sup>88</sup> Н. Янковская, *Եզ՝. աշխ.*, էջ 196:

<sup>89</sup> Гр. Капанцян, Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия, Ер., 1956, стр. 88-90, 306.

ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ  
ԵՎ ՎԱԽՃԱՆԸ

Մ.թ.ա. 3-րդ դարի կեսից Մեծ Հայքը լարված փոխհարաբերությունների մեջ էր իր հարևանների հետ: Նրան հյուսիսից սպառնում էին վրացա-սարմատական դաշնակից ուժերը հյուսիս-արևմուտքից՝ արևելապոնտական շրջանների ցեղերը, հարավ-արևելքից ու արևելքից՝ Ատրպատականի թագավորությունն ու նրան ենթակա ցեղերը, իսկ հարավից՝ Մելիկյան աշխարհակալությունը: Մեծ Հայքի վիճակը սկսեց բարդանալ, երբ Մելիկյան թագավորությունում գահ բարձրացավ Անտիոքոս 3-րդը (մ.թ.ա. 223-187թթ.): Նրա գործադրած ջանքերի հետևանքով Մեծ Հայքի գերիշխանությունից դուրս եկան Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմագենեն: Մեծ Հայքում գահ բարձրացած Երվանդ Վերջինը (մ.թ.ա. 222-201թթ.)<sup>1</sup> թույլ էր տվել, որ Փոքր Հայքին անցնի նախկինում նրան պատկանած Սպերը՝ Բագրատունիների տիրույթը: Մովսես Խորենացու վկայությամբ, «բոլորը միաբանելով նրան թագավորեցրին, բայց առանց թագադրի Բագրատունիների ցեղից»:<sup>2</sup> Ըստ երևույթին, Բագրատունիներն իրենց հույսը դրած են եղել Փոքր Հայքի անջատմանն օգնած Մելիկյան թագավորության վրա: Մեր պատմահայրը վկայում է, որ նրանք առաջինն էին անցել գահի հավակնորդ Արտաշեսի կողմը:

Թե ե՞րբ էր սկսվել Երվանդ-Արտաշես առճակատումը, որը Անտիոքոս 3-րդի հրահրումով և միջամտությամբ վերածվելու էր պատերազմի, կարելի է ճշտել մեր պատմիչների հաղորդած տեղեկությունների և օտար հեղինակների վկայությունների համադրման միջոցով: Վերջիններիցս պարզվում է, որ Արտաշեսը՝ որպես Մեծ Հայքի սելևկյան ստրատեգոս, իշխանության գլուխ է անցել մ.թ.ա. 201թ., բայց թագավոր է դարձել մ.թ.ա. 189թ. և գահակալել մինչև մ.թ.ա. 160 թվականը: Անանուն պատմիչի համաձայն՝ նա թագավորել է 52 տարի, այսինքն՝ մ.թ.ա. 212-160թթ.:<sup>3</sup> Դա լինելու է Արտաշես 1-ինի օրոք ընդունված պաշտոնական տեսակետը: Իսկ ի՞նչ թվական է այդ մ.թ.ա. 212-ը: Անտիկ հեղինակների հաղորդումներից պարզվում է, որ հենց այդ թվականին էր Մելիկյան Անտիոքոս 3-րդը սկսել իր ռազմական ու դիվանագիտական միջոցառումները Հայաստանի դեմ՝ երկիրն իրեն ենթարկելու մտադրությամբ: Այս ժամանակ էլ Անտիոքոս 3-րդը ներխուժել էր Ծոփք: Ըստ Պոլիբիոսի՝ Ծոփքի Քսերքսես թագավորը «ուղարկեց դեսպաններ Անտիոքոսի մոտ և հայտնեց, որ ցանկանում է բանակցությունների մեջ մտնել նրա հետ... Նա վերցրեց Քսերքսեսից 300 տաղանդ, 1000 ձի և նույնքան ջորի իրենց լծասարքով, վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և ամուսնացրեց նրան իր Անտիոքիս քրոջ հետ»:<sup>4</sup> Այս քույրն էլ հետագայում կազմակերպեց Քսերքսեսի սպանությունը, որից հետո Ծոփքը վերածվեց սելևկյան ստրատեգիայի,<sup>5</sup> և այստեղ ստրատեգոս կարգվեց Չարեիը:<sup>6</sup> Նույն մ.թ.ա. 212թ. Անտիոքոս 3-րդի հրահրումով Երվանդի դեմ ելել էր Արտաշեսը: Եթե Անանունը Արտաշեսին վերագրում է 52 տարվա՝ մ.թ.ա. 212-160թթ. գահակալում, ապա, ըստ Խորենացու, նրա գահատարիների թիվը 41 է,<sup>7</sup> այսինքն՝ Արտաշես 1-ինի գահատարիները եղել են մ.թ.ա. 201-160 թթ.: Դիշտ 201թ.

<sup>1</sup> Մ. Խ ռ ե ն ա գ ի, Հայոց պատմություն, Աշխարհարար թարգմ. և մեկնաբանությունները Ստ.Մայխասյանի (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Բ, լէ-խզ: Մեքենսի եպիսկոպոսի պատմութիւն, Բարդատութեանը ձեռագրաց, հանդերձ առաջարանիւ եւ ծանօթութեանքք ի ձեռն Ստ.Մայխասեանց (այսուհետև՝ Մեքենս), Եր., 1939, գլ. Բ, էջ 11:

<sup>2</sup> Խ ռ ե ն ա գ ի, Բ, լէ:

<sup>3</sup> Մ ե բ ե ն ս, գլ. Բ, էջ 11:

<sup>4</sup> P o l y b i u s, *Historiae*, 1-6 Cambridge, Mass.-London, 1960 (The Loeb Classical Library), VIII, 25 (Հ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Եր., 1944, էջ 108):

<sup>5</sup> История древнего мира, II, Расцвет древних обществ, М., 1989, стр. 387.

<sup>6</sup> “The geography of Strabo, with an English transl. by H.L. Jones”, vol. I-VIII, London, 1949-1954 (The Loeb Classical Library), XI, XIV, 15 (Ստրաբոն, Քարեց և թարգմանեց Հ.Անանյան, Եր., 1940, էջ 65), Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 513, 693, 881:

<sup>7</sup> Խ ռ ե ն ա գ ի, Բ, կ:

եր Արտաշեսը տապալել էրվանդին և որպես սելևկյան ստրատեգոս սկսել էր իշխել Մեծ Հայքում: Ուրեմն, կասկած չի կարող, որ Երվանդ-Արտաշես առճակատումը սկսվել էր մ.թ.ա. 212թ. և ավարտվել 201թ. Երվանդի սպանությամբ:

Սպերի Բագրատունիների և Տայքի բնակչության ավագանու հակաերվանդյան դիրքորոշման և Սելևկյան Անտիոքոս 3-րդի ու Հայոց գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցած լինելու մասին է խոսում հետևյալ իրողությունը: Սպերը և Տայքը չէին ենթարկվել սելևկյանների հրահրումով Մեծ Հայք ներխուժած ցեղերի հարձակմանը և չէին գրավվել նրանց կողմից, երբ հարձակման ենթարկվել ու գրավվել էին նրանց հարևան շրջանները: Վերջիններիս թվում էին վրացիների գրաված «Պարիսպերես լեռան ստորոտի գավառները» (հետագա Գողերձականը) և Խորզենեն (հետագա Արտահան գավառը և Կոարջը), խալկոսների ու մոսինոյկների գրաված Կարենիտիսը և Դերքսենեն (հետագա Կարին և Դերջան գավառները) և կատաոնների գրաված Ալիլիսենեն (հետագա Ելեղիքը շրջակայքով):<sup>8</sup> Վրացիները գրավել էին նաև հայկական Գոգարենեն («Աշխարհացույցի» արևելյան Գուգարքը և Ջավախքը):<sup>9</sup>

Բագրատունի տոհմի հակաերվանդյան դիրքորոշումը ակնհայտ է արդեն նրանով, որ լինելով Հայոց թագադիրներ, Բագրատունիները չեն թագադրել Երվանդ Վերջինին՝ դրանով իսկ կասկածի տակ առնելով նրա թագավորության օրինակաբանությունը: Դրա հաջորդ քայլը եղել է գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցնելը: Ըստ Մովսես Խորենացու, «երբ Սմբատը Բյուրատի որդին լսում է Սանատրուկի (մահվան) և նրա որդիների կոտորածի գույժը, առնում է իր երկու դուստրերին՝ Սմբատանույչին և Սմբատուհուն, տանում նստեցնում է Բայրեղում, քաջ մարդիկ ամրոցին պահապան դնելով, իսկ ինքն իր մի կնոջ և սակավաթիվ մարդկանց հետ գնում է մանուկ Արտաշեսին որոնելու»:<sup>10</sup> Այդ մասին հայտնի է դառնում Երվանդ արքային: Պատմահայրը ցույց է տալիս, թե ինչպես Երվանդ-Բագրատունիներ հակասությունը հետզհետե վերածվում է քացահայտ առճակատման: Նա գրում է. «Այն ժամանակ Երվանդը մարդիկ է ուղարկում և կոտորել է տալիս Բայրեղում (պահապան դրված) քաջերին, իսկ Սմբատի դուստրերին գերի բռնելով պահում է Անի ամրոցում ոչ վատ պայմաններում»:<sup>11</sup> Այս Անին Դարանադի գավառի Անին լինել չէր կարող, որը Երվանդի հսկողությունից հեռու էր և ավելի մոտ էր Բագրատունիների Սպերին, քան Մեծ Հայքի միջուկը կազմող Այրարատին (հնարավոր է նույնիսկ, որ Փոքր Հայքի հետ միասին նախկինում նրան պատկանած Դարանադին ևս արդեն դուրս էր գտնվում Մեծ Հայքի կազմից): Սմբատի դուստրերի արգելափակման վայր Անին լինելու էր Շիրակ գավառի Անին, որն անհամեմատ ավելի մոտ էր գտնվում Երվանդի մայրաքաղաք Երվանդաշատին, քան Բագրատունիների տիրույթ Սպերին: Ըստ այսմ, Երվանդի համար դժվարություն չէր կարող ներկայացնել Սմբատի դուստրերի վրա հսկողություն սահմանելը:

Բերված դրվագներից պարզվում է, որ մ.թ.ա. 212թ. սկսված հակամարտության առաջին փուլն ավարտվել է Երվանդ Վերջինի օգտին: Արտաշեսը և Սմբատ Բագրատունին այնուհետև լքել էին Հայաստանի սահմանները և ապաստան գտել Սելևկյան Անտիոքոս 3-րդի մոտ: Այս դեպքերին հաջորդած ժամանակաշրջանին պետք է վերաբերի հյուսիսում՝ վրացա-սարմատական ուժերի դեմ, Երվանդ Վերջինի ունեցած հաջողությունները: «Քարթլիս ցխովրեբան» («Վրաց պատմությունը») տեղեկություններ է պահպանել այն մասին, թե ինչպես Հայոց Իարվանդ (Երվանդ) թագավորը «գրավեց Քարթլիի (Վիրքի-Լ.Պ) սահմանները՝ քաղաք Ծունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը, և բնակեցրեց Ծունդայում զազանաբարո մարդիկ՝ դևերին ազգակից, և կոչեց Ծունդան (նոր) անունով Քաջատուն, որ թարգմանաբար նշանակում է «Դևերի տուն»:<sup>12</sup> Նախ, Երվանդ Վերջինը Վիրքից չէր գրավել Ծունդայի և Արտահանի շրջանները: Դրանք հայկական տարածքներ էին՝ ժամանակավորապես զբաղեցրած վրացա-սար-

<sup>8</sup> *Strabo*, XI, XIV, 5; XI, 12, 3; XI, 14, 2; XII, 3, 28 (*Ստրաբոն*, էջ 57, 43, 55, 75), ՀԺՊ, հ. I, էջ 532, Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, Ер., 1971, стр. 54-55.

<sup>9</sup> *Strabo* XI, XIV, 5 (*Ստրաբոն*, էջ 57), Ա.Մերձնյան, *Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին*, Եր., 2003, էջ 37-38:

<sup>10</sup> *Խոսեցի*, Բ, լե:

<sup>11</sup> *Նույն տեղում*, Բ, լր:

<sup>12</sup> Լ. Մեղիքսեան, *Վրաց արքայությունը Հայաստանի և հայերի մասին*, հ. I, Եր., 1934, էջ 155:

մատական դաշնակից ուժերի կողմից: Խոսքը Ջավախք (Շունդա-Քաջատունով) և Արտասահան (նույնանուն քաղաքով) գավառների մասին է, որտեղից Երվանդը դուրս էր մղել թշնամական ուժերին: Շունդա բնակավայրի մոտ Երվանդի կառուցած Քաջատուն ամրոցը Մեծ Հայքի համար հենակետ էր ծառայելու Վիրքի և նրա հյուսիսկովկասյան դաշնակիցների դեմ:<sup>13</sup> Այն գտնվում էր ներկայիս Ախալքալաքի մոտերքում, իսկ, ինչպես կարելի է կռահել *Քաջատուն* անունը կրկնող իր *Քաջաց քաղաք* (վրաց. *Քաջբա-քալաքի*) անունից, Արտասահան գավառում գտնված անվանակիր ամրոցը<sup>14</sup> ևս կառուցած էր լինելու Երվանդ Վերջինը, Արտասահան գավառի ազատագրումից հետո: Այդ ամրոցը ևս հենակետ էր ծառայելու Վիրքի և նրա հյուսիսկովկասյան դաշնակիցների դեմ: Իսկ որ Քաջաց քաղաքը ամրոց է եղել, ցույց է տալիս նրա անվան *քաղաք* բաղադրիչը, որովհետև «քաղաք» նշանակող բառերը, ինչպես Հ.Աճառյանն է գրում, բուն «բարձունք կամ ամրություն» նշանակություն ունեն:<sup>15</sup> Իսկ դրանք խոսում են այս ամրոցների «անմիջական արքունիքի վերահսկողության տակ անցնելու և այնտեղ արքունական կայազոր հաստատելու մասին»:<sup>16</sup> Ըստ երևույթին, Կուր գետի վերնագավառի այս և այլ շրջանների հետ կապված հարցերը վերջնականապես լուծելու համար էր, որ Երվանդ Վերջինը ձեռնում էր ոչ թե Արարատյան դաշտում, այլ Կուրի աջափնյա Ուտիք գավառում: «Վրաց պատմությունը» («Քարթլիս ցխովրեբա») նրան Արտաշեսի եղբայրը, ուրեմն, նաև ժամանակակիցն է համարում:<sup>17</sup> Ընդ որում, Երվանդ Վերջինին Արտաշեսի՝ պատմական Արտաշես 1-ինի եղբայրն է համարում նաև մեր Անանուն պատմիչը:<sup>18</sup> Ուրեմն, կասկած լինել չի կարող, որ Քաջատունը, ինչպես նաև Քաջաց քաղաքը հիմնադրել է Երվանդ Վերջինը:

Նույն այդ ժամանակաշրջանում՝ մինչև մ.թ.ա. 201թվականը, Սելևկյան Անտիոքոս 3-րդը Փոքր Հայքը, Կոմագենեն և Շուփըը հասցրել էր նախ հպատակեցնել, ապա վերջինիս վերածել սելևկյան ստրատեգիայի: Դա տեղի էր ունեցել այն բանից հետո, երբ Անտիոքոսի արևելյան արշավանքների հետևանքով Սելևկյան այս թագավորի գերիշխանությունն էին ընդունել Ատրպատականն ու Պարթևական թագավորությունը և նա հաղթանակով էր ավարտել պատերազմը Եգիպտոսի Պտղոմեյան թագավորության դեմ:<sup>19</sup> Այժմ հասել էր Մեծ Հայքի հերթը:

Մովսես Խորենացու շարադրմամբ Երվանդ-Արտաշես հակամարտության երկրորդ փուլն սկսվել էր հետևյալ կերպ: «Երբ մանուկ Արտաշեսը զարգացավ... Արքայից արքան համաձայնելով՝ Սմբատի ձեռքն է տալիս մի մասը Ատրեստանի գորքերից և Ատրպատականի գորքերը, որպեսզի Արտաշեսին տանեն ու հայրենական գահի վրա հաստատեն»:<sup>20</sup> Խորենացին այդ գործողությունը և «արքայից արքա» տիտղոսը Պարսից թագավորին է վերագրում՝ ելնելով իր մշակած ժամանակագրությունից: Իրականում դա եղել է Անտիոքոս 3-րդը: Ի դեպ, Արևելքի երկրների հին միապետների մեծադորդ տիտղոսները սելևկյանները սկսել էին գործածել Անտիոքոս 1-ինից սկսած, որը մ.թ.ա. 268թ. թվագրվող սեպագիր մի տեքստում կոչվում է «թագավոր հզոր, թագավոր աշխարհի, թագավոր Բարեղունի, թագավոր երկրների»:<sup>21</sup> Այնպես որ «արքայից արքա» տիտղոսը կարող էր վերաբերել Անտիոքոս 3-րդին, որը նաև այդ տիտղոսը կրած Աքեմենյան արքաների բուն երկրի՝ Պարսի տերն էր: Նրա տրամադրած «Ատրեստանի գորքերը» ներկայացնելու էին սելևկյան գորամասերը, որովհետև Միջագետքը Սելևկոս 1-ինից սկսած նրա ստեղծած թագավորության կենտրոնական երկրամասն

<sup>13</sup> Լ. Պ ե տ ռ ո ս յ ա ն, *Երվանդ Վերջինի ռազմական բնույթի շինարարության մասին*, ԳՄԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 65-71:

<sup>14</sup> Մ. Ե Ր ե մ յ ա ն, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963, էջ 89:

<sup>15</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Հայերեն արմատական բառարան*, հ. IV, Եր., 1979, էջ 17:

<sup>16</sup> Բ. Հ ա ռ ո թ յ ո ն յ ա ն, *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի*, «Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ», 1977, թիվ 2, էջ 182:

<sup>17</sup> Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. I, Եր., 1981, էջ 212:

<sup>18</sup> Մ ե Ր ե ն ս, գլ. Բ, էջ 11:

<sup>19</sup> *История древнего мира. Расцвет древних обществ, т. II, стр. 387.*

<sup>20</sup> *Խ ը Ր ե ն ա ճ ի*, Բ, խց:

<sup>21</sup> *Э.Б и к е р м а н, Государство Селевкидов, М., 1985, стр. 8, пр. 26.*

էր (Սելևկոս 1-ինը կրում էր «քաբելոնցիների թագավոր» տիտղոսը):<sup>22</sup> Իսկ «Ատրպատակյանի զորքերը» կարող էին լինել Անտիոքոս 3-րդի գերիշխանությունն ընդունած Ատրպատակյանի զորամասերը: «Երվանդի իշխանությունը հաստատուն չէր: Խորենացին լավ է պատկերում այն շիկացած մթնոլորտը, որի մեջ թագավորը բոլորեց իր վերջին տարիները: Երվանդը վախենում էր իր շրջապատից, ինչպես նաև ժողովրդից... Դժգոհություն էր տիրում երկրի մեծամեծների, նախարարների մեջ: Մյուս կողմից, ելնելով Արմավիրի արձանագրությունների տվյալներից, Արմավիր քաղաքը, նրա քաղաքացիների կուլեկտիվը՝ հանձին իր քրմապետի, բարենաաղություններ էր անում թագավորին, դրանով զուգե արտահայտելով իր նվիրվածությունը նրան», - գրում է Գ.Տիրացյանը, ավելացնելով. «Այս պայմաններում է, որ սկսվեց Արտաշեսի պատերազմը Երվանդի դեմ»:<sup>23</sup>

Դարձյալ լսենք Մովսես Խորենացուն: «Երվանդին Ուտեացոց զավառում լուր է հասնում, թե Պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ, որպեսզի քեզ վրա զա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի: Երվանդը այս լսելով՝ այդ տեղում կողմնապահների է թողնում նախարարներից շատերին և ինքն շտապով գալիս է իր քաղաքը»:<sup>24</sup> Ապա՝ «Իսկ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ շտապում էր հասնել Ուտեացոց սահմանները: Այնտեղ նրան ընդառաջ եկան այն կողմի զորքերը, նաև այն նախարարները, որոնց Երվանդը թողել էր այնտեղ: Այս լսելով՝ Հայոց մյուս նախարարներն էլ լքվում, քայքայվում էին և մտածում էին Երվանդից բաժանվել»:<sup>25</sup> «Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը, Արագած լեռան թիկունքում. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին»:<sup>26</sup> Շիրակում՝ Երվանդաշատ մայրաքաղաքից երեք հարյուր ասպարեզ հյուսիս, Ախուրյանի ափին գտնվում էր Երվանդ արքայի բանակատեղին: Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության տպագիր տեքստում Երվանդաշատի և Երվանդի բանակատեղիի միջև եղած հեռավորությունը ցույց է տրված «ավելի քան հարյուր ասպարեզ»,<sup>27</sup> երբ գրաբար տեքստում «ավելի քան երեք հարիւր ասպարիսա» է:<sup>28</sup> Գ.Սարգսյանը ճշտում է բանակատեղիի հեռավորությունը. «Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին»:<sup>29</sup> Բանակատեղին կոչվում էր *Երվանդավան*: Նրա մոտ է տեղի ունեցել մ.թ.ա. 201թ. ճակատամարտը Հայոց թագավոր Երվանդ Վերջինի և գահի հավակնորդ Արտաշեսի բանակների միջև:

Մովսես Խորենացին Երվանդավանի անվանակոչությունը բացատրում է Արտաշեսի զորքի կողմից Երվանդին այդ վայրից *վանելու* հանգամանքով:<sup>30</sup> Բայց, ինչպես Գ.Սարգսյանն է ցույց տվել, բնակավայրը *Երուանդաւան* կոչվել է ավելի վաղ և կազմված է *Երուանդ* անվանը *աւան* բառի հավելումով. հմնտ. *Տիգրանաւան*, *Վարդգէսաւան*, *Արշակաւան*:<sup>31</sup> Ճիշտ է, բնակավայրը հետագայում *Երուանդաւան* անվամբ չի հիշատակվում, բայց Ս.Պետրոսյանի կարծիքով, դա նույն Անին է՝ Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին, Երվանդաշատի ավերակներից մոտավորապես նշված հեռավորության վրա:<sup>32</sup> Երվանդավանի ռազմավարական նշանակությամբ կարևոր բնակավայր լինելը երևում է թեկուզև նրանից, որ Երվանդավանի ու Երվանդաշատի միջև գո-

<sup>22</sup> Э. Б и к е р м а н, *նշվ. աշխ.*, էջ 8, սյր. 26:

<sup>23</sup> ՀԺՊ, հ. I, էջ 515:

<sup>24</sup> Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խդ:

<sup>25</sup> Նույն տեղում, Բ, խե:

<sup>26</sup> Նույն տեղում, Բ, խզ:

<sup>27</sup> Նույն տեղում էջ 203:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 202:

<sup>29</sup> Գ. Ս ա ռ գ ս յ ա ն, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մ. Խորենացին*, Եր., էջ 219:

<sup>30</sup> Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խզ:

<sup>31</sup> Գ. Ս ա ռ գ ս յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 217:

<sup>32</sup> Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն, *Եռյակ բնակավայրերի համակարգը Ախուրյանի ավազանում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 9: Նույն կերպ Երվանդավանը հետագայում հայտնի էր Մարմէտ անունով (նույն տեղում, էջ 10): Դա եղել էր «հավանորեն Արտաշեսի կամքով, որ Երվանդի անունը նրա վրայից վերանա» (Խորենացի, Բ, խզ):*

յություն ուներ մի շարք ճանապարհային կայաններով օժտված բանուկ ճանապարհ:<sup>33</sup> Անիի հին պարսպի առնչությամբ, Երվանդունի թագավորների այստեղ ծավալած պաշտպանական բնույթի շինարարական աշխատանքների վերաբերյալ Հ. Մանանդյանը գրում է. «...վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին... Բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից, նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացված կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին»:<sup>34</sup>

Մ. Խորենացու շարադրմամբ, մ.թ.ա. 201թ. Երվանդավանի ճակատամարտն ընթացել է հետևյալ կերպ: «Երբ Արտաշեսի նշանները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց: Իսկ Մմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով, սկսում էր ինչպես արծիվը կաքավների երամի վրա: Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միմյանում են նրա հետ... (Երվանդի) մնացած զորքերը փախուստի են դիմում: Իսկ Երվանդը ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից (Երվանդավանից-Լ.Պ.) մինչև քաղաքը (Երվանդաշատը-Լ.Պ.) հաստատած իջևաններում նոր-նոր ձիեր հեծնելով, փախչում է անընդհատաբար»:<sup>35</sup>

Արգամը, ըստ Խորենացու, թագավորության «երկրորդական գահին» զբաղեցրած պաշտոնյան էր,<sup>36</sup> և առաջիկա ճակատամարտում նա էր առաջնորդելու Երվանդի հետևակազորը:<sup>37</sup> Բայց հետատես Արտաշեսը կարողացել էր չեզոքացնել նրան, որով հետև ճակատամարտից առաջ «պատգամ էր ուղարկում հաստատուն երդումներով, որ կթողնի նրան, ինչ որ նա ստացել էր Երվանդից, և էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին թողնի, մի կողմ քաշվի»:<sup>38</sup> Արգամի պատմական անձնավորություն լինելու վերաբերյալ Գ.Սարգսյանը գրում է. «Արգամի կերպարը գալիս է, անձամբ իր (և ոչ Արգավանի) հետ կապված դրվագների հետ միասին, Խորենացու հիմնական գրավոր աղբյուրից, որպես Երվանդյանների բարձր պաշտոնյա, հետագայում անցած գահի հավակնորդի կողմը»:<sup>39</sup> Հենց նա էլ եղել է Երվանդավանի ճակատամարտում Երվանդ թագավորի պարտության գլխավոր պատճառը, որովհետև թագավորին, փաստորեն, առանց հետևակազորի էր թողել:

Եթե Երվանդավանի ճակատամարտից առաջ Սելևկյանների և Արտաշեսի ջանքերով Երվանդ Վերջինը մեկուսացվել էր միայն արտաքին աշխարհից, ապա ճակատամարտից հետո մեկուսացումը դարձել էր բացարձակ: Ճիշտ է, թագավորը դեռևս հույսեր էր կապում Երվանդաշատի միջնաբերդի անառիկության և նրա կայազորի արիության հետ, բայց շուտով պարզվեց, որ դրանք զուր հույսեր էին: Երվանդաշատի զբաղման նկարագրությունն ավարտվում է այս կերպ. «Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին: Չինվորներից մեկը մտնելով՝ վաղորով Երվանդի գլխին խփեց... այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո: Բայց Արտաշեսը հիշելով, թե Երվանդը Արշակունյաց (թագավորական – Լ.Պ.) ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել»:<sup>40</sup> Ըստ «Քարթլիս ցխովրեբայի», Երվանդ արքային սպանել էր Մումբատ Բիվրատիանը՝ Մմբատ Բյուրատյան Բագրատունին:<sup>41</sup> Երվանդի սպանությունից հետո միայն Երվանդաշատ մտած Արտաշեսը, երբ Երվանդի համար արքայավայել թաղում էր կազմակերպում և անգամ մահարձան կանգնեցնում, դրանով սուսկ հարգանքի տուրք չէր մատուցում իր ազգական թագավորին: Դրանով նա ավելի շատ ուզում էր

<sup>33</sup> Խորենացու, Բ, խմբ.:

<sup>34</sup> Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33-34:

<sup>35</sup> Խորենացու, Բ, խմբ.:

<sup>36</sup> Նույն տեղում, Բ, խմբ.:

<sup>37</sup> Նույն տեղում, Բ, խմբ.:

<sup>38</sup> Նույն տեղում, Բ, խմբ.:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>40</sup> Նույն տեղում, Բ, խմբ.:

<sup>41</sup> Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 212:

ցույց տալ, որ իր մտադրությունը Երվանդին սպանելը չի եղել, այլ զահրնկեց անելը: Միևնույն ժամանակ դա նշանակում էր, որ նախկին քաղաքի երկու ամենաբարձր պաշտոնյաները՝ քրմապետ Երվազը և «երկրորդական գահի» տեր Արգամը, կարող էին անհոգ լինել՝ իրենց անձի նկատմամբ որևէ ոտնձգություն չի լինելու, իրենք կարող են շարունակել իրենց գործունեությունը (շարունակեցին մինչև Արտաշեսի հրամանով և զիտությամբ սպանվելը):

## ПОЛИТИЧЕСКАЯ ИЗОЛЯЦИЯ И КОНЧИНА ЕРВАНДА ПОСЛЕДНЕГО

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Л. Петросян* \_\_\_

При Ерванде Последнем (222-201гг. до н.э.) селевкидско-армянские отношения стали в высшей степени напряженными. Участились набеги союзников Селевкида Антиоха III - иберов и северокавказских племен, атропатенцев и их вассалов-союзников, на пограничные районы Армении. Одновременно Арташес-претендент на царский трон-при помощи Антиоха III начал войну против царя Ерванда. Решающее сражение произошло в 201г. до н.э. в гаваре Ширак у Ервандавана, на расстоянии трехсот стадий (аспарез) к северу от столичного города Ервандашата. Во время битвы многие из воинов царя либо бежали, либо присоединились к противнику. Армия царя потерпела поражение. Ерванд Последний бежал в Ервандашат, где и был убит.

ԿԱՎԻՑ ՊԱՅՏԱԶԵՎ ԻՐԵՐ ԱՆԻԻ ԱՐՎԱՐՉԱՆԻՑ

Շիրակի մարզի Հայկաձոր գյուղի վարչական տարածքում՝ Ախուրյան գետի ափամերձ հրվանդանի դեպի գետն իջնող դարավանդի միջին հատվածում՝ տուֆի շերտի մեջ, Անի մայրաքաղաքի հյուսիսային արվարձանն է՝ իրար հետ հաղորդակցվող, ձեռակերտ բազմաթիվ քարանձավներով: Ինչպես ցույց են տալիս պեղումները, բնակավայրը կառուցապատվել է ժամանակի տնտեսական կյանքին և կենցաղին համապատասխան և բաղկացած է մեկ կամ երկհարկանի առանձին համալիրներից: Յուրաքանչյուր համալիրի մեջ կան տուֆի շերտի մեջ իջեցված տարբեր մեծության մեկ կամ մի քանի թոնիրներ: Այդպիսի երկու թոնիրների մեջ հայտնաբերվեց մեկական կավե իր, իսկ երրորդը՝ քարանձավի մեջ: Առաջին իրը գտնվեց թիվ 1 քարանձավի առաջին հարկում բացված թոնրի մեջ՝ ակին կիպ դրված դիրքով: Իրը պայտածն է (երկ. 20սմ, թևերի բացվածքը՝ 20սմ, բարձր.՝ 5սմ, թևերի բարձր.՝ 5սմ, հաստ.՝ 4սմ: Մի թևը, քիչ բարակ է և ծայրը սրացող, մյուս թևը՝ կլորացող (տախտակ I, նկ. 1): Աղեղի ամենաբարձր մասին դեպի ներս կլորավուն ելուստ ունի (լայն. հիմքի մոտ՝ 11սմ, զազաթին՝ 6սմ): Թևերն անհամաչափ են: Իրի մակերեսը զարդարված է 1-1,5սմ տրամագծով և 7մմ խորությամբ, անկանոն տեղաբախշված փոսիկներով: Իրի մի կողմում կրակի հետքեր են: Երկրորդը, որ գտնվեց թիվ 1 քարանձավում, նույնպես պայտածն է: Սա ավելի փոքր է (թևերի երկ.՝ 11սմ, լայն.՝ 12,5սմ), կտրվածքում շրջանաձև է, ծայրերը կլորավուն են (տրամ. 3,5-4սմ), մակերեսը՝ անհարթ: Կլորավուն ծայրերին կրակի փոքր հետքեր են, ինչը կրակի վրա ուղղահայաց դրված լինելու արդյունք է (տախտակ I, նկ. 2):


Հայկաձորում թոնիրներ բացվեցին նաև քարանձավների դիմացի հարթակներում՝ բնակավայրի գոյատևման ընթացքում այստեղ կուտակված մշակութային շերտի մեջ: Նման մի թոնիր պեղվեց թիվ 4 քարանձավի մուտքի մոտ: Այս թոնիրը փոքր է (բարձր. 31սմ, բերանի տրամ. 33սմ, հիմքի տրամ. 36սմ): Ի տարբերություն մյուս թոնիրների՝ սա ունի իրարից 90 աստիճան հեռու, փոքր բացվածքով երկու ակ (հիմքը 7սմ, բարձր. 4սմ): Թոնիրի շուրթը տափակ է, խորակոս սեղմված փոսիկներով բաժանված չորս դաշտի, որն, ըստ ամենայնի, արվել է վրան խաչերկաթ դնելու համար: Ի տարբերություն մյուս թոնիրների՝ այս վերջինը շատ փոքր է: Շնորհիվ երկու ակի՝ կրակն ավելի է բորբոքվել և եփման պրոցեսը՝ արագացվել: Նշված թոնրի մեջ գտնվեց պայտածն երրորդ իրը (տախտակ I, նկ. 3), որը կտրվածքում ուղղանկյուն է: Իրի մի կեսն է պահպանվել: Աղեղի բացվածքը և բարձրությունը նույնն են՝ 22սմ: Ի տարբերություն նախորդների՝ սրա թևն (լայն. 7սմ, հաստ. 4սմ) ավարտվում է ուղիղ հատումով: Եզրից մինչև զազաթ աստիճանաբար հաստանում է՝ 4սմ-ից հասնելով 6-6,5սմ: Մակերեսը նախազարդված է խորը մատնասեղմումով արված մոտ 1սմ խորությամբ, իրար զուգահեռ երեք շարք փոսիկներով: Փոսիկների երկու շարքը տափակ մակերեսին է, երրորդը՝ դրանց զուգահեռ շարքն անցնում է կողի վրայով: Ինչպես և նախորդ երկու իրերը, սրա հակառակ երեսին նույնպես կրակի հետքեր են: Այս գտածոյի բարձրությունը թոնրի կեսից ավելին է: Հստակ է, որ այն չէր կարող վերաբերել տվյալ թոնրին, նույնիսկ եթե նշված իրերը կիրառական նշանակություն են ունեցել:

Այսպիսով, ունենք կավե երեք իրեր, որոնք բոլորն էլ գտնվել են թոնիրների մեջ, պայտածն են և ունեն կրակի հետքեր: Թոնիրները տարածամասնակյա են, երկուսը վերաբերում են IX-X դարերին, իսկ երրորդը՝ XVI դարին: Առաջին իրը որոշակի տարբերություն ունի մյուս երկուսից, կամարի կենտրոնից ելնող ելուստը և աստիճանաբար բարակող երկու ծայրերը կարող են ընկալվել ինչպես կենդանու գլուխ՝ առաջ պարզած եղջյուրներով, այնպես էլ՝ գլուխը ներքև հակված և ձեռքերը պարզած դիրքով խիստ ոճավորված մարդկային ֆիգուր:<sup>1</sup> Իրերի մասնակի տարբերությունները ոչ թե տարածամասնակյա լինելու արդյունք են, այլ՝ պատրաստողի անհատական ձեռագրի: Ելնելով իրերի որակից՝ կարելի է պնդել, որ վերջիններս պատրաստվել են ոչ թե վարպետ

<sup>1</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, *Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 137:*

խեցեգործի, այլ, ինչպես հաճախ էր լինում, տանտիրուհիների ձեռքերով: Բնակավայրի մերձակայքը հարուստ է կավով, իրի ձևը պարզ էր, պատրաստելը՝ դյուրին և առանձին վարպետություն չէր էլ պահանջվում: Թրծումն էլ կարելի էր կատարել հենց թոնրի մեջ: Կարևորը և հիմնականը կամարի կամ պայտի ձևը պահպանելն էր:

Տախտակ 1



Ինչպես արդեն նշել ենք, իրերից մեկը գտնվել է ակին կիպ դրված դիրքով: Այդ թոնրի կրակը բորբոքելու համար նախատեսված օդամուղ է, որ ավարտվում էր թոնրից բավական հեռու: Թոնիրը վառելիս ակը բաց է լինում: Այն փակում են, երբ ապահովվում է հաց թխելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը: Թոնիրը վառելու համար աթարի երկու կտոր իրար հակված դիրքով դնում են ակի մոտ, որ Շիրակում կոչվում է շեքել: Այս ձևն օգտագործվում էր ակի անցքը չփակելու և կրակը բորբոքելու նպատակով օդի բավարար քանակի մուտքն ապահովելու համար: Կարելի էր ենթադրել, որ կամարածև այս գտածոներն օգտագործել են որպես հենարան՝ աթարը շեքելու համար: Մակայն այս դեպքում նախ հարց է ծագում, թե ինչու են նշված իրերը պահպանվել միայն Հայկաձորում, այն էլ՝ բազմաթիվ թոնիրներից միայն երկուսում: Բացի այդ, եթե նման հենարանի անհրաժեշտություն լիներ, նշված իրերը կպահպանվեին մինչև օրս: Առաջին իրի ակին կպած լինելը ենթադրում էր, թե այն ունեցել է անշարժ դիրք, գուցե նաև եղել է ամրացված: Մակայն կրակի հետքերը, ինչպես վերը նշեցինք, միայն մի կողմում են՝ հակառակ երեսին, այսինքն՝ իրի շփումը կրակի հետ եղել է միայն այդ կողմից և գտնելու պահին ունեցած դիրքն էլ բոլորովին չի նշանակում, թե այն իր մշտական տեղում է: Քանի որ իրերը գտնվել են թոնիրների մեջ, պիտի ենթադրել, որ անմիջական կապ ունեն կրակի հետ: Երկրորդ իրի վրա կրակի փոքրիկ հետքեր կան թևերի ծայրերին. ենթադրվում է, թե այն օգտագործվել է ուղղահայաց դիրքով: Մյուս երկուսի վրա կրակի հետքերը իրերի տակի մասում են, այսինքն՝ օգտագործվել են հորիզոնական դիրքով: Փոքր հետքերից կարելի է ենթադրել, որ կրակի հետ անմիջական շփում չի եղել, և իրերը դրվել են արդեն հանգած կրակի կամ տաք մոխրի վրա:

Հստակ է, որ Հայկաձորի գտածոները կիրառական նշանակություն չունեն: Թեև համաժամանակյա այլ հնագիտական հուշարձաններից, ինչպես նաև ազգագրական նյութերում որևէ զուգահեռ չունենք, սակայն կամարածև շարժական օջախների

բազում օրինակներ հայտնի են կուրարաքայան մշակույթի տարբեր հուշարձաններից: Բացառելով գտածոների կիրառական նշանակությունը և նկատի առնելով թոնիրների մեջ հայտնաբերվելը՝ կարծում ենք՝ իրերն ունեցել են ծխական իմաստ և կապված են կրակի պաշտամունքի հետ: Ըստ այդմ էլ գտածոների պաշտամունքային և ծխական դերի վերհանման համար անհրաժեշտ է դրանք քննարկել կրակի, վաղբրոնզիդարյան պաշտամունքային շարժական օջախների, «տուրք օջախների» և թոնրի պաշտամունքի հետ կապված հավատալիքների համատեքստում:

Հայաստանում տարբեր ժամանակներում օգտագործել են կրակարանների տարբեր ձևեր: Ամենապարզունակը և ամենավաղը մի քանի քարերի դեմ դիմաց կամ կլոր շարվածքն է, որի վրա դրվել է ամանը, իսկ տակը՝ վառվել կրակը: Կրակարանի այս ձևը բացօթյա տարածքում շարունակում է կենցաղավարել մինչև օրս: Կրակը պաշտպանելու և չհանգելու նպատակով կիրառվող նախնական և պարզ այս ձևը հավանաբար հիմք է ծառայել ավելի ուշ շրջանի կրակարան-վառարանների մեկ այլ ձևի՝ բուխարիների ստեղծման համար: Վերջիններիս վերին մասում պահպանել են իրար հակված և աստիճանաբար կորացող, այնուհետև միահյուսվող զույգ գծերից կազմված և կենտրոնում դեպի վեր քիչ սրացող ձևը, որը նաև կարելի է դիտել կրակի լեզվակ: Բուխարու վաղ օրինակ կարող է լինել Բենիամինի մ.թ.ա. 1-ին դարով թվագրվող բնակավայրից հայտնաբերված իրար հակված երկու տափակ սալերով կրակարանը:<sup>2</sup> Կրակը վառվել է երկու սալերի միջև: Նշված կրակարանի ձևը նույնն է, ինչ թոնիրը վառելու համար աքարների շեքելը: Քննարկվող իրերին համաժամանակյա և վերջնական ավարտուն տեսք ստացած բուխարիներ բացվել են նաև Հայկաձորում:

Հայկաձորի թիվ 3 քարանձավում թոնիրների կողքին կա նաև ուղղահայաց կանգնեցված չորս տափակ սալերով օջախ՝ քարերից մեկի տակի մասում ակի համար արված կիսաշրջանաձև փորվածքով: Քարանձավներում հաճախ թոնրի կողքին կան նաև քարի մեջ փորված շրջանաձև օջախներ՝ ակի համար արված նեղ և երկար փորվածքով: Ինչպես նշել ենք, հայտնաբերվել է նաև թոնրի ձև ունեցող, երկու ակով փոքր կրակարան: Նշված կրակարանների տարբերությունները ոչ միայն սոցիալական են, այլև արդյունք են գործառույթների առանձնացման:<sup>3</sup> Թեև քարանձավային բնակավայրում կողքկողքի կենցաղավարել են տարբեր վառարան-կրակարաններ, սակայն քննարկվող իրերը, ինչպես տեսանք, գտնվել են միայն թոնիրների մեջ կամ վերջիններիս կողքին: Գուցե դրանց ծխական գործառույթը կապվում է միայն թոնիրների հետ:

Գտածոներն իրենց ձևով մոտ են կուրարաքայան մշակույթի տարբեր հուշարձաններից բազմաթիվ օրինակներով հայտնի, քարերով շարված կրակարանների վրա կամ դրանց կողքին հայտնաբերված և պայտաձև շարժական օջախները անունը ստացած կավե իրերին, որոնց հենակները կենդանակերպ (խոյազլուխ կամ ցլազլուխ) կամ մարդակերպ են: Ծխական օջախների նշված ձևերը տարածված են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և Միդիայի վաղբրոնզիդարյան հուշարձաններում:<sup>4</sup>

<sup>2</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հեյլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մաս II), ԳՄԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 28:

<sup>3</sup> Միջնադարյան մեծ ընտանիքի համար նույնիսկ եթե ամեն օր էր թոնիրը վառվում, և եթե հաց թխելու համար արդեն բավարար էր պատերի տաքությունը, սնունդ պատրաստելու համար կրակը մինչև ամանի տակը հասցնելու համար վառելիքի ծախսն անհամեմատ ավելի շատ էր: Առավել նպատակային էր թոնիրը թողնել հաց թխելու համար, իսկ կենցաղային այլևայլ նպատակների համար՝ օգտագործել օջախը:

<sup>4</sup> Մ. Մ ա ր դ ա ր յ ա ն, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967: Է Խ ա ն-գաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Եր., 1967: Ա. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска (III-Итыс. до н.э.), Ер., 1989; Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975; С. Есаян, Культура племен Северо-Восточной Армении, Ер., 1976; Մ. Գևեջյան, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետում, Եր., 2001: Բ. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, ном. 100, 1961; Б. Куфтин, Археологические раскопки 1947г. в Цалкинском районе, Тбилиси, 1948; Մ. Գևեջյան, Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ, թիվ 1, 2004:

Վաղբրոնգիդարյան մշակույթում քարերով շարված օջախների կողքին կավից շարժական օջախների առկայությունը ենթադրում է դրանց ֆունկցիաների տարբերություն: Պայտաձև կամ, որ ավելի ճիշտ է, կամարաձև շարժական օջախներն օգտագործվել են միայն ծիսական նպատակներով: Ընդունված է այն տեսակետը, որ շարժական օջախները խորհրդանշել են արական սկիզբ և տղամարդու կողմից տնային օջախի արգասավորում:<sup>5</sup> Ինչպես ցույց է տալիս վաղբրոնգիդարյան տարբեր հուշարձաններից հայտնաբերված նման օջախների բազմաթիվ բեկորների քննությունը, վերջիններս դրվել են հանգած կրակի կամ մոխրի վրա, որի վկայությունը գտածոների վրա կրակի աննշան հետքերն են: Ինչպես վերը նշել ենք, Հայկաձորի գտածոներից երկուսի վրա կրակի հետքերը միայն տակի մասում են, իսկ երրորդի վրա՝ միայն ծայրերին, որը ուղղահայաց դիրքով օգտագործելու հետևանք է: Իսկ կրակի մեջ լինելու դեպքում բնականաբար այրվելու կամ առնվազն մրոտվելու էին նաև գտածոների կողերն ու արտաքին երեսը և:

Կարելի է ենթադրել, որ քննության առարկա գտածոները շարժական օջախներ են, որ դրվել են թոնրի հանգած կրակի կամ մոխրի վրա, այնուհետև պահվել թոնրի մեջ՝ ակնին կիս, ուղղահայաց դիրքով: Ի տարբերություն վաղբրոնգիդարյան օրինակների, որոնք գտնվել են մի քանի քարերով շարված կրակարանների վրա, Հայկաձորի գտածոները հայտնաբերվել են թոնիրների մեջ:

Իրերի շարժական օջախ լինելը հաստատելու համար, կարծում ենք, կարևոր է իրերի ձևի համադրումը վաղբրոնգիդարյան մշակույթին բնորոշ, գիտական գրականության մեջ «պաշտամունքային պայտաձև շարժական օջախ» անունով հայտնի իրերի ձևի (նկ. 1) և բովանդակության հետ: Հայկաձորյան գտածոների ձևը կարելի է համարել ինչպես կամար, այնպես էլ եղջյուր կամ լուսնի մահիկ: Չևի հիմքում կարող էր լինել թե՛ երկնքի ու ծիածանի, թե՛ լուսնի մահիկի և թե՛ խոյի կամ ցուլի եղջյուրների ձևը: Լուսնի մահիկը համարվել է աստեղային նշան և միշտ կապվել է ցլի կամ խոյի եղջյուրների հետ:<sup>6</sup> Խոյի կամ նրա եղջյուրի ոճավորված պատկերները, սկսած ժայռապատկերներից, տիրական են հայ մշակույթում և պահպանվել են նաև միջնադարում:<sup>7</sup> Գտածոների առաջին և երկրորդ իրերի ձևի ժամանակային ամենամոտ զուգահեռը Գլինի նախաուրարտական շերտից հանված կավե մեծ տախտակի ռելիեֆ պատ-

<sup>5</sup> К. Кушнарева, Т. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа (V-III тыс. до н.э.) Л., 1970. стр. 165.

<sup>6</sup> Նույնը:

<sup>7</sup> Մ.թ.ա. III հազարամյակի հուշարձաններում ոչ միայն հայտնաբերվել են հզոր խոյազուլիներով, մարմնով և վերջույթներով ձևավորված պաշտամունքային օջախ-կրակարանների պայտաձև հենակներ, այլ նաև խոյազուլի շքասեղներ, զարդեր: Նույն ժամանակաշրջանի ծիսական խեցեղենի մեջ ևս բազմաթիվ են ռելիեֆ խոշոր խոյազուլիները: Կավից խոյի գլխի քանդակներ հայտնաբերվել են Շենգավիթում: Է. Խանգալյան, Եր., 1967, ադ. XV: Խարբերդի հովտի Նորշունթեփե բնակավայրում: Hauptmann Harald, 1970, taf. 69:3, Ankara, 1972, ադ. I: Խոյազուլի կանթերով է զարդարված Քեթիի քրեղան-օրացույցը: Ա. Петросян, Раскопки Кети и Воскеаска, Ер., 1989, (տախտ. 33/6): Հ. Խաչատրյան, Հին հայկական օրացույցի մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 14-16: Վաղ բրոնզի դարաշրջանում լայն տարածում են գտել օջախի պայտաձև խոյազուլի հենակները: Նման հենակներ հայտնաբերվել են Շենգավիթում, Վանաձորի Քոսի Շոթեր բնակավայրում, նաև Կառնուտում, Հաթիճում, Ամասիայում: Ք. Бадалян, ВОН, 1985, ном. 8, стр. 94-97: Օջախի պատվանդանի խոյազուլիներ գտնվել են նաև Մեծ Մեպասարում: Լ. Եզանյան, Մեծ Մեպասարի 2006թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 69, տախ. II, նկ. 5: Խոյի պաշտամունքն իր արտահայտությունն է գտել ինչպես բրոնզի դարաշրջանի մշակույթի զարգացման հաջորդ փուլերում, այնպես էլ անտիկ ժամանակաշրջանում: Արվեստի լավագույն նմուշների շարքը կարելի է դասել Մեծամորի կաթսայի խոյազուլի կանթը: Է. Խանգալյան, Կ. Սկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Եր., 1973, էջ 128, նկ. 126: Խոյ համաստեղությունը խորհրդանշելու համար միջնադարում օգտագործում էին նրա պատկերն ու նշանը: Խոյը ըստ Շիրակացու համարվել է տասներկու կենդանակերպ համաստեղությունների գլուխը, որն արական է և արեգակի բարձրություն ունի: Խոյի համաստեղության մեջ մտնում են յոթ աստղեր: Շիրակացու մատենագրությունը տպագրության պատրաստեց Ա. Աբրահամյանը, Եր., 1944, էջ 327, 330:

կերներում է:<sup>8</sup> Տախտակի վերին հատվածում պատկերված են աղեղի բացվածքը դեպի վեր ուղղված երեք իրեր, որոնք նույն ձևն ունեն, ինչ Հայկաձորի գտածոները (նկ. 2):



Նկ. 1

Հ. Իսրայելյանը պատկերը դիտարկում է որպես մարդկային կամ, ավելի ճիշտ, մարդակերպ գլուխների երկու շարք և ենթադրում, որ ներկայացնում են երկնային լուսատուների մի համաստեղություն՝ տղամարդու և կանանց դեմքերով:<sup>9</sup> Պատկերման ռեալիստիկ ձևում դրանք կարող են ընկալվել նաև մարդկային դեմք, երբ երկու հարթությունները դիտվեն միասին: Եվ եթե հայկաձորյան գտածոները ևս դիտենք նույն ձևով, նույն ընկալումը կունենանք: Իսկ առանձին դիտված, վերջիններս՝ որպես երկրաչափական մարմին, աղեղ են: Անկախ արտահայտչաձևերից՝ Դվինի տախտակի ռեալիստիկ պատկերներում և Հայկաձորի գտածոներում խոյի պաշտամունքն արտահայտված է խորհրդանշական իմաստ արտահայտող աղեղի ձևով: Կարծում ենք քննարկվող իրերը պատրաստելիս գլխավորը եղել է պահպանել ձևը՝ կամար, մահիկ կամ եղջյուր, որոնց մեջ էլ ամփոփված է իմաստը: Ձևը ենթադրում է ժառանգական կապ վաղբրոնզիդարյան շարժական օջախների հետ: Ավելացնենք նաև, որ Հայկաձորի պեղումներով հայտնաբերվել է նաև կանացիակերպ, վերադիր պատկերներով մի աղաման, որը ժամանակակից է թոնիրների մեջ հայտնաբերված իրերին: Աղամանի վրա պատկերված մարդկային ֆիգուրներից յուրաքանչյուրի գլխից վեր արված է ծայրերը քիչ ներս հակված, սեղմված կամարի կամ խոյանեղջյուրի ձև ունեցող վերադիր պատկեր, որ կրկնում է թիվ 2 գտածոյի ձևը (նկ. 3): Նույն հուշարձանում համաժամանակյա երկու գտածոների՝ մի դեպքում իրի ձևի, մյուս դեպքում աղամանի վրա վերադիր պատկերները ենթադրում են բովանդակային ընդհանրություն: Հնագույն հավատալիքների և պաշտամունքի արձագանքները պահպանվել են Երեբունյի V դարի տաճարի վրա, որի արևմտյան մուտքի բարավորի կենտրոնում արևի սկավառակն է՝ աջ և ձախ կողմում կանգնած, գլուխները դեպի արևը մեկական խոյով (նկ. 4): Միջնադարյան նշանագրերում պահպանված աղ բառի նշանագրի պատկերազրույթունը խոյա-

<sup>8</sup> Հ. Ի սր ա յ ե լ յ ա ն, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 38, նկ. 11:

<sup>9</sup> Նույնը:

գլուխ է,<sup>10</sup> և հիշեցնում է վաղբրոնզիդարյան ոճավորված խոյազուխ կեղծ ունկերը: Արդյոք այն պատահական նմանությունն է, թե՞ պաշտամունքային կապի դրսևորում: Հայկաձորի գտածոներից երկուսը, ինչպես վերը տեսանք, նաև զարդարված են շրջանաձև կամ օղակաձև փոսիկներով, որոնք կարելի է ընկալել և՛ որպես արև, և՛ լուսին, որոնք պատկերվում էին շրջանի կամ օղակի ձևով և կարող էին նաև խորհրդանշել երկինքն ընդհանրապես՝ ելնելով լեռնային երկրում երկինքը շրջանի ձևով երևալուց:

Միջնադարյան գտածոների ձևի նմանությունը վաղբրոնզիդարյան շարժական պայտածև օջախների հետ ենթադրում է նաև բովանդակային կապ, մանավանդ երկու դեպքում էլ իրերը գտնվել են կրակի հետ կապվող միջավայրում՝ առաջինները՝ կրակի մոտ կամ կրակի վրա, երկրորդները՝ թոնրի մեջ:



Նկ. 3



Նկ. 4

Հնդեվրոպական ժողովուրդների հավատալիքներում առանձին տեղ էր հատկացված կրակի պաշտամունքին և մաքրագործող կրակի ծիսակարգը անհիշելի ժամանակներից գոյություն է ունեցել տարբեր ժողովուրդների մոտ: Կրակի՝ որպես ֆիզիկական երևույթի, լույս, ջերմություն, կյանք ապահովելու, միաժամանակ նաև հրո ճարակ դարձնելու, մոխրացնելու հատկություններն են ընկած դիցաբանական ընկալումներում վերջինիս հատկացված դերում՝ այն կապելով և՛ կյանքի, և՛ մահվան հետ: Ըստ այդմ էլ՝ հնդեվրոպական քաղման ծեսում կրակը կապվում է վերածնության հետ՝ կյանք-մահ-վերածնունդ շրջափուլի մեջ:

Հայ ժողովրդական հավատալիքներում պահպանված են կրակի հետ կապված տարբեր ծեսեր, հավատալիքներ և սովորույթներ: Կրակը կարելի է մարել միայն մոխիրով ծածկելով, իսկ որոշ ժողովուրդների մոտ ոճրագործություն է համարվել կրակը փչելով կամ ջրով հանգցնելը:<sup>11</sup> Նույն այդ հավատալիքի արդյունք է մինչ օրս հայոց մեջ մոնր նատների սեղմունով հանգցնելու սովորույթը: Կրակի հետ պաշտամունքի աստիճանի է բարձրացվել նաև օջախը: Խուռիտական պաշտամունքում օջախները երբեմն նաև աստվածացվել են, և նրանց զոհ էին մատուցում:<sup>12</sup> Չուգանեռաբար սուրբ է համարվել նաև մոխիրը: Տաճարների կամ սրբազան օջախների մոխիրը չէր թափվում, այլ կուտակվում էր հատուկ դրա համար հատկացված տեղում: Քրիստոնեության մուտքով հավատալիքները հարմարեցվեցին նոր գաղափարախոսությանը: Տեսնորնդառաջի մոմերը վառում էին եկեղեցու ջահից և երբ քահանայի կողմից օրհնված խարույկն այրվում վերջանում էր, տակավին վառվող սուրբ մոխրից կայցնում էին իրենց մոմերը և վառած տանում էին տուն:<sup>13</sup> Հայերի կողմից մոխրի պաշտամունքի վկայություն է Ագաթանգեղոսի տված բնորոշումը, - «...ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց»:<sup>14</sup> Պաշտամունքը ներառել է նաև օջախը լայն իմաստով՝ ընտանիքը: Հայոց ծեսերի նշանա-

<sup>10</sup> Հր. Ա ճ ա ն յ ա ն, Հայոց գրերը, Եր., 1984, հավելված «Ցուցակ հայկական հին նշանագրերի»:

<sup>11</sup> Մ. Ա թ է ղ յ ա ն, հ. Է, Եր., 1975, էջ 58:

<sup>12</sup> Н. Ш а н ш а ш в и л и, Происхождение и функции очажных подставок Куроракской культуры. Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции, Эчмиадзин, 2003, стр. 59:

<sup>13</sup> Մ. Ա թ է ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 63:

<sup>14</sup> Ա գ ա թ ա ն գ է ղ ո ս, Պատմութիւն հայոց (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, 89:

կալի մասը կապված է ընտանեկան օջախի հետ, որտեղ առանձնակի դեր է հասկացված թոնիրին: Թոնիրը տան սրբավայրն էր, եկեղեցուն հավասար է դասվել և երբեմն այդպես էլ կոչվել է: Թոնիրը շինելուց հետո կանչում էին քահանային՝ այն օրհնելու:<sup>15</sup> Հայոց հավատալիքների համաձայն՝ մախնիները բնակվում են թոնրի շրթին և կարող էին նաև երկյուղ ներշնչել:<sup>16</sup> Սովորույթ կար առանձինն ու եղունգները թաղել թոնրի շուրթի մոտ կամ նետել ակը՝ աղոթելով այնտեղ բնակվող ոգիներին, այդ արարողությունների կատարման մասին նրանց վկա կանչելով:<sup>17</sup> Այդ նույն ոգիներին արված զոհաբերությունն պիտի դիտել Հայկաձորի թիվ 3 քարանձավի թոնրի ակի մեջ 13-րդ դարի արծաթյա դրամի գյուտը:

Ըստ հայոց հավատալիքների՝ կային նաև «սուրբ օջախներ»: Այս տեսակը, ըստ Մ. Աբեղյանի, փոքրիկ բարձրություններով շրջափակված սովորական կրակատեղի է, որտեղ կաթսան եռոտանու վրա է դրվում, իսկ տակը վառվում է կրակը:<sup>18</sup> Ստ. Լիսիցյանի վկայությամբ Ղարաբաղի գրեթե ամեն գյուղում կար կիսավեր «սև տուն»՝ դարադամ, որի միայն պատերն էին պահպանված լինում, կամ էլ բնակելի դարադամ, որտեղ գտնվում էր ոչ միայն տվյալ գյուղի, այլ նաև հարևան գյուղերի համար սրբազան օջախ:<sup>19</sup> Օրհնված ու նվիրական օջախներ կային, որոնք սովորաբար իրենց տոհմային մահապետական օջախների կրակը տարին տասներկու ամիս, զիշեր-ցերեկ, սերնդից սերունդ՝ դարեր շարունակ վառ էին պահում:<sup>20</sup> Շատ օջախներ սուրբ էին ամբողջ գյուղի և գավառի համար, ինչպես, օրինակ, գյուղի հիմնադրի, այսինքն՝ մախսապապի օջախը:<sup>21</sup> Այստեղից էլ «օջախը հանգչի» արտահայտությունը տոհմի ընդհատման դատապարտող ծանրագույն անեծք էր, քանզի ամեն տան օջախն ընտանիքի կյանքի կենտրոնն էր:<sup>22</sup> Պատվավոր հյուրն օջախի մոտ էր նստում: Օջախով էին երդվում՝ «էն օջախը վկա», բարի և լավ ավանդույթները պահպանող այս կամ այն ընտանիքի բարոյական կերպը բնորոշվում էր «սա օջախ է», իսկ ամուսնացող աղջկա համար լավագույն բնորոշումը «օջախի աղջիկ» արտահայտությունն էր:<sup>23</sup> Հասարակության մեջ դիրքը, հարգանքն ու բարօրությունը ձեռք էին բերվում օջախում բնակվող բարի ոգու միջոցով: Ինչպես որ հայրական տնից բաժանված զոհուր տուն կրակ էր տարվում՝ հայրական զորությունից մաս տանելով, այնպես էլ գյուղի օջախի զորությունը կարելի էր տեղափոխել մեկ այլ գյուղ:<sup>24</sup> Օջախն ընտանիքի միաբանության խորհրդանիշն էր, այն կապված է տան կրակի և մախնիների պաշտամունքի հետ, և յուրաքանչյուր ընտանիքի համար իր օջախը սուրբ էր: Պատահական չէ, որ եկեղեցուն պսակադրությունն ավարտելուց հետո հարսն ու փեսան իրենց պարտքն էին համարում մի «սուրբ օջախի» հարգանքի տուրք մատուցել: Եթե գյուղում եկեղեցի չկար, զույգը դեմքով դեպի արևելք կանգնում էր օջախի կամ թոնրի մոտ վառվող մուների առաջ, ապա ծնկի էր գալիս, համբուրում օջախը և ամուսնական արարողությունը կատարված էր:<sup>25</sup> Օջախի պաշտամունքի վերաբերյալ նույն հավատալիքներն է բերում Ստ. Լիսիցյանը. «Թաքվերն ու թաքուհին չոքում և համբուրում էին տան օջախը, և ապա բուրբն էլ դիմում էին եկեղեցի: Այն դեպքերում, երբ որևէ պատճառով չէին գնում եկեղեցի, կամ գյուղում եկեղեցի չլիներու պատճառով, կամ երբ չհասությունը արգելք էր հանդիսանում, պսակը

<sup>15</sup> Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 59:

<sup>16</sup> Նույնը:

<sup>17</sup> Նույնը:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>19</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, Ստ. Լիսիցյան, *Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)*, Եր., 1981, էջ 59:

<sup>20</sup> Գ. Հ ա լ ա ջ յ ա ն, *Ղերսիսի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 5, Եր., 1973, էջ 213:

<sup>21</sup> Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 60:

<sup>22</sup> Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, 1981, էջ 59:

<sup>23</sup> Նույնը:

<sup>24</sup> Նույնը:

<sup>25</sup> Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 61:

կատարվում էր շրթին վառած մոմերով օջախի կամ թորեմի (թոնիրի-Լ.Ե.) մոտ»:<sup>26</sup> Աղջիկը հայրական տնից հեռանալուց առաջ շատ դեպքերում փեսան էլ համբուրում էին օջախի կամ թոնրի շուրթը և նորապսակներն ուղևորվում էին փեսայի տուն:<sup>27</sup>

Հայոց մեջ հարսանիքի ժամանակ մինչև հոր տունը թողնելը հարսի կողմից տան «օջախ-թոնիրը» երկրպագելու ծեսի մասին վկայում է նաև Ի. Պետրուշևսկին՝ ավելացնելով գյուղացիների վկայությունը, որ՝ «իրենց համար ոչ թե եկեղեցական պսակի մեջ է կայանում հարսանեկան ծեսի էությունը, այլ հենց թոնիրը երկրպագելու»:<sup>28</sup> Չորս քարերով մի «սուրբ օջախ» պեղվել է Արցախում՝ Քարաբլուրի միջնադարյան մատուռի մեջ:<sup>29</sup> Ըստ ազգագրական նյութերի՝ սուրբ է համարվել նաև բուխարին:<sup>30</sup> Ախուրյանի տարածաշրջանի Կասպ գյուղում սրբատեղի է կիսավեր տան մի հատված՝ հյուսիսային պատի մեջ դրված բուխարիով:<sup>31</sup> Վերջինս ցույց է տալիս, որ «սուրբ օջախը», ինչպես արդեն նկարագրել ենք, կարող էր լինել և՛ «փոքրիկ բարձրություններով շրջափակված սովորական կրակատեղին», և՛ թոնիրը, և՛ բուխարին: Իսկ օջախը կարող էր «սուրբ» դառնալ միայն հասարակության կողմից ընդունված բարոյական որոշակի չափանիշների նկատմամբ տվյալ ընտանիքի կամ տոհմի ունեցած վերաբերմունքի, այդ արժեքների պահպանման և վերջիններիս գնահատման արդյունքում:

Հայ ժողովուրդը, ապրելով իր բնօրրանում, նաև կերտել է հոգևորը, այնուհետև ժառանգորդմամբ փոխանցել սերունդներին: Հազարամյակների ընթացքում հավատալիքներն ու ծեսերը բնականաբար փոփոխություններ են կրել: Նոր շերտեր են ավելացել, նաև կորսվել, սակայն խորքում անթեղված է հավատալիքի բուն էությունը: Ծատ ծեսեր այսօր կարող են ընկալվել միայն որպես հեռավոր անցյալի վերապրուկներ: Սակայն վերապրուկային բնորոշվող յուրաքանչյուր ծեսի խորքում անթեղված է գաղափարը, որին միտված է եղել ծեսի նպատակն ու իմաստը: Հեթանոսականից քրիստոնեական կրոնին անցնելիս հավատալիքները, թեկուզ և վերահիմաստավորված, հաճախ պահպանվել են: Ծեսն այս դեպքում որպես ինչ-որ գաղափարի կրող, գուցեև արդեն կորցրել էր խորհրդանշական իմաստը և պահպանվել էր զուտ որպես սովորույթ: Ասածի վկայությունն են Հայկաձորի թոնիրների մեջ հայտնաբերված վաղբրոնզիդարյան կամարածև շարժական օջախների հետնագույն տարբերակները:

Վաղբրոնզիդարյան շարժական օջախները հավանաբար մտահղացվել են որպես կամար, որ կարող էր խորհրդանշել երկնականարը, իսկ կրակը՝ արևը: Ծարժական օջախների միջնադարյան տարբերակներն օգտագործվել են հանգած կրակի կամ մոխիրի վրա դնելու համար: Հայոց միջնադարյան կենցաղում թեև կար և բուխարին, և պահպանվում էր մի քանի քարով շարված օջախը, սակայն թոնիրին է փոխանցվել հավատալիքը գուցե նաև այն պատճառով, որ հացը թխվում էր թոնրի մեջ: Հայոց հարսանեկան ծեսի մեջ նորապսակների ուսերին լավաջ գցելու արարողությունը, կարծում ենք, ոչ միայն ամբողջ կյանքում հաց ունենալու, այլ նաև ընտա-

<sup>26</sup> Ստ. Լ ի ս ի ց յ ա ն, *Չանգեզուրի հայերը*, Եր., 1969, էջ 194:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 196:

<sup>28</sup> Հ. Պ ե տ ը ո ս յ ա ն, *Քարաբլուրի նորագյուտ սրբարանը և «Սուրբ օջախների» պաշտամունքը Արցախում, Հայոց սրբերը և սրբավայրերը*, Եր., 2001, էջ 349-350:

\* Ի. Պետրուշևսկու վկայությունը Հ. Պետրոսյանը համարում է «կանխակալ-նպատակային...» և արդյունք «ժամանակի հակաքրիստոնեական-աթեիստական հրամայականի»: Հ. Պետրոսյան, *նշվ. աշխ.*, էջ 349-350: Մ. Արեղյանը ևս պսակադրության ժամանակ կատարվող արարողությունների շրջայում օջախի պաշտամունքի հետ կապված նույն հավատալիքներն է բերում: Մ. Արեղյանի աշխատությունը հրատարակված է գիտնականի Երկերի Բ հատորում, «Հայ ժողովրդական հավատք» ենթավերնագիրն է կրում և թարգմանված է դեռևս 1899թ. Լայպցիգում հրատարակված «Der armenische Volksglaube» վերնագրով գերմաներեն բնագրից (Մ. Արեղյան, *Երկեր*, Կ. Ե., Եր., 1975, էջ 5):

<sup>29</sup> Հ. Պ ե տ ը ո ս յ ա ն, *նշվ. աշխ.* էջ 347:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>31</sup> Մոմավառությունը կատարվում է բուխարու կրակարանի վրա: Հաված մոմերից կաշուն դարձած բուխարու վերին հատվածում մի քանի մանրադրամներ են: Ուխտավորները մտքներում պահած նպատակը իրականանալի են համարում, երբ մանրադրամը կաշուն է քարին:

նեկան օջախի հարատևման հետ է կապվում: Իսկ օջախի պաշտամունքի հիմքում, ինչպես կրակի պաշտամունքն է:

Այսուրյանի ափին արդեն մի քանի հարյուրամյակ երկինք են հառնած Սբ Սինաս, Սբ Գևորգ եկեղեցիները և Հռոմնոսի հոյակերտ վանքային համալիրը: Իսկ դիմացի ափին՝ քարանձավային բնակավայրում, քրիստոնեական աղոթքը շուրթին՝ հայ մարդը երկրպագում և պահպանում էր նաև հազարամյակների խորքից եկող հավատալիքը:

Հայկաձորի քարանձավային բնակավայրի միջնադարյան շերտում՝ թոնիքների մեջ, հայտնաբերված երեք իրերը, հազարամյակների խորքից եկող պաշտամունքի արձագանքն են, որ ծայտումով պահպանվել են նաև միջնադարում: Ծայտում, որի տակ սքողված են կրակի և խոյի պաշտամունքի հետ կապված հավատալիքները:

Հազարամյակների երթում իրի խիստ ոճավորումը միայն բնականոն զարգացման արդյունք չէ: Կրոնի փոփոխությունը բնականաբար բերում է նաև ծեսերի և արարողակարգերի փոփոխություն: Երբ առասպելաբանական որևէ պատումն անցնում է մի կրոնից մյուսին, սկսվում է նրա տրոհումն ու մասնակի քայքայումը: Սակայն կա մի սահմանային վիճակ, երբ տրոհվելով և դիմագիծը կորցնելով, իսկ առասպելաբանության առանձին հատվածներ, նոր գաղափարախոսություն ներառվելով և փոխակերպվելով, մասնակիորեն դառնում են առավել հստակ: Այսպես եղավ նաև քրիստոնեությունն ընդունելիս: Նոր կրոնը ներառեց հայոց հնագույն հավատալիքներն ու հին կրոնի հերոսներին փոխարինեց նորերով: Ժխտվեց հին հավատքը, հեթանոսական աստվածները հռչակվեցին չաստվածներ, սակայն չկարողանալով հիմնովին արմատախիլ անել այն հավատալիքներն ու ծեսերը, որ ժողովուրդը պահպանում էր, եկեղեցին այլակերպեց նաև հավատալիքների բովանդակությունը: Այս դեպքում քրիստոնեական բնույթ տրվեց խոյի զոհաբերությանը՝ այն պահպանելով որպես մատաղ:

Այսպիսով, հայկաձորյան գտածոների նախօրինակները վաղբրոնզի դարյան մշակույթում են: Ասվածը հաստատվում է ոչ միայն ձևաձևական ընդհանրություններով, այլ նաև կիրառությամբ: Կուրարաքայան մշակույթում ստեղծված պայտածև շարժական օջախներն իրենց ձևն ու ծիսական գործառույթը պահպանել են նաև միջնադարյան Հայկաձորում: Կրակարան-վառարանի ձևափոխության ժամանակ պայտածև իրերի գործառույթը տեղափոխվել է թոնի մոխրի վրա: Հնագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ կամարածև շարժական օջախները Հայկաձորում պահպանվել են մինչև 16-րդ դար, այնուհետև վերջնականապես դուրս են մղվել՝ որպես հավատալիքի և պաշտամունքի ժառանգորդման ու պահպանման վկայություն՝ թոնրին փոխանցելով տան սրբավայրի դերը:

## ПОДКОВООБРАЗНЫЕ ГЛИНЯНЫЕ ПРЕДМЕТЫ ИЗ ПРИГОРОДА АНИ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Л. Еганян \_\_\_

При раскопках пригорода Ани пещерного поселения Айкадзор в тонаирах, датируемых 13 и 16 вв., найдены три глиняных предмета, которые по форме напоминают раннебронзовые передвижные очаги. Предметы имеют форму арки, но разные по исполнению. Два из них украшены солярными знаками в виде маленьких кружочек. На всех трех предметах следы частичного ожога.

На основе археологического материала, письменных свидетельств и анализа этнографических материалов выявляется ритуальная роль этих предметов: очажные подставки, восходящие к раннебронзовым передвижным ритуальным очагам, служили для почитания огня и домашнего очага вплоть до 16-ого века. С 16-ого века ритуал почитания домашнего очага и огня перешло тониру.

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵԲԻ  
ՔՅՈՍՈՒՐԾՅԱՆԻ (XVII դար)**

XVII դարի հայ մատենագրության նշանավոր դեմքերից է ժամանակի հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան ու գրող Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը (1637-1695), որի աշխատությունները հարուստ նյութ են պարունակում Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական կյանքի հիմնահարցերն ուսումնասիրելու համար: Հատկապես պատմագիտական գործերում նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել թուրքական պետության ներքին վիճակին, պալատական երկպառակություններին, կենտրոնախույս ձգտումներին, ինչպես նաև ներքաղաքական կացության հիմնախնդիրներին:<sup>1</sup>

Երեմիա Քյոմուրճյանի (1637-1695) մատենագիտական ժառանգությունը վկայում է, որ նա եղել է ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը: Կրոնական գիտելիքներից բացի, Քյոմուրճյանը տիրապետել է արևելյան ու արևմտյան մի քանի լեզուների, գրել է կրոնական, պատմական, աշխարհագրական բնույթի բազմաթիվ աշխատություններ, գրական ստեղծագործություններ, նամակներ, ուղերձներ և այլն:<sup>2</sup>

Մ. Չամչյանը, քվարկելով Քյոմուրճյանի աշխատությունները, նշում է նաև, որ «Գրեաց եւ ի խնդրոյ դեսպանին պամանաց ի վերայ աշխարհաց պարսից, հնդկաց եւ ամատոլիոյ, եւ ընդարձակ եւս ի վերայ Հայաստանու...»:<sup>3</sup>

Ն. Ալիմյանը այսպես է բնութագրել նրան. «Միակողմանի չէր իր կրթութիւնը, հմուտ էր եկեղեցական գիտութիւններու, ներհուն՝ պատմագիտութեան, ծանօթ՝ բազմաթիւ լեզուներու, յատկապէս հայերէնի, թուրքերէնի և յունարէնի, նաև երոսպական լեզուներու, հետաքրքիր՝ ներքին և արտաքին ազգային, միջազգային քաղաքական իրադարձութիւններու»:<sup>4</sup>

Քյոմուրճյանը թուրքերեն է թարգմանել նաև իր շարադրած «Հայոց պատմությունը», որի բնագիրը չի պահպանվել: Հ. Սահակյանը գտնում է, որ պատմագիրը օգտվելով առիթից, նպատակ է ունեցել թուրք մտավորականությանը ծանոթացնել հայոց պատմության առանցքային հարցերին:<sup>5</sup>

Լեոն Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը համարել է «մեծ հեղաշրջման սկիզբ ազդարարող մի բան. մի համոզմունք հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող բացերը վերացնելու»:<sup>6</sup>

Ժամանակագրական առումով Քյոմուրճյանի պատմագիտական երկերից առաջինը «Պատմութիւն համառօտ ԴՆ տարւոյ օսմանցոց թագաւորացն» աշխատությունն է: Նրանում տրված է Օսմանյան կայսրության 400 տարվա պատմությունը, սկսած հիմնադրման օրից մինչև պատմագրի ապրած ժամանակաշրջանը: Այն գրված է չափածո, սկսել է գրել 1675թ. և ավարտել է 1678թ., բաղկացած է 1810 քառյակից: Շուրջ 400 տարվա այդ պատմության 350 տարվա շրջանը գրված է աղբյուրների վկայությամբ, առանց որոնց պատմագիրը չէր կարող իրականացնել իր առջև դրված խնդիրը:

Քյոմուրճյանը ապրել է ստեղծագործել է Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, եղել ճանաչված գործիչ, պաշտոնավարել հայոց պատրիարքարանում, կապեր ունեցել թուրք մտավորականության շրջանում, հնարավոր է նաև, որ նրա թուրքերենի ուսուցիչը եղած լինի հայկական շրջաններին մոտ կանգնած թուրք որևէ գիտնական,

<sup>1</sup> Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. X, Թուրքիա, Հ. Փափազյան, Հայ պատմիչները սելջուկ-թուրքերի և Օսմանյան կայսրության մասին /XI-XVIII դդ./, Եր., 1979, էջ 235:  
<sup>2</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, Գրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., 1984, էջ 211:  
<sup>3</sup> Մ. Չ ա մ չ յ ա ն, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1784, էջ 723:  
<sup>4</sup> Ն. Ա լ ի մ յ ա ն, Երեմիա Չելեբի Քեոմուրճեան, կեանքն ու գործունեութիւնը, Վիեննա, 1933, էջ 59:  
<sup>5</sup> Հ. Ս ա հ ա կ յ ա ն, Երեմիա Քյոմուրճյան, Եր., 1964, էջ 42-43:  
<sup>6</sup> Լ է ո, Հայոց պատմություն, հ. 3, Եր., 1969, էջ 359:

որը միաժամանակ նրան տրամադրել է թուրքալեզու պատմական երկեր, որոնցից առատորեն օգտվելով՝ նա գրել է իր նշանավոր աշխատությունը:<sup>7</sup>

Սակայն միջնադարյան պատմագիրների սովորության համաձայն՝ Քյոմուրճյանը նույնպես չի հիշատակում իր աղբյուրները՝ բավարարվելով այդ մասին միայն ընդհանուր ակնարկներով:<sup>8</sup>

Աշխատությունը պատմագիրը գրել է հայկական և առավելապես թուրքական սկզբնաղբյուրների հիման վրա, իսկ 1648-1678թթ. պատմությունը նա շարադրել է որպես ականատես, որն էլ բնականաբար բարձրացնում է տեղեկությունների հավաստիության աստիճանը: Շարադրված է օսմանյան սուլթանների ու կարևոր իրադարձությունների պատմությունը, նկարագրված են կայսրության մղած պատերազմները Արևմուտքում և Արևելքում: Երկն արժեքավոր ու արժանահավատ նյութ է պարունակում XVI-XVII դարերում Թուրքիայում գոյություն ունեցող վարչակարգի, հարկային համակարգի, ներքին ու արտաքին քաղաքականության, կայսրությունում ապրող ժողովուրդների ու հատկապես արևմտահայության քաղաքական ու սոցիալական ծանր դրության, երկրում տիրող արատավոր բարքերի և այլ ուշագրավ իրադարձությունների մասին: Առանձնապես ընդգծված ձևով է տրված XVI-XVII դդ. պարբերաբար կրկնվող զինվորական խռովությունների ու ապստամբությունների ու դրանց պատճառների մասին: Պատմագիրը ներկայացրել է կայսրության քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պետական ամբողջ համակարգի ճգնաժամային վիճակը:

Սկսած XVI դարի սկզբից մինչև XVII դարի կեսը, շուրջ 125 տարի շարունակ Թուրքիայի և Պարսկաստանի միջև տեղի են ունեցել հաճախակի և երկարատև պատերազմներ, որոնք հիմնականում ընթացել են Անդրկովկասի և հատկապես Հայաստանի ու Միջագետքի տնտեսական ու ռազմավարական նշանակություն ունեցող տարածքները նվաճելու նպատակով:<sup>9</sup>

Քյոմուրճյանի աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է թուրք-պարսկական պատերազմների մասին: Հատկապես ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Շահ Աբասի արշավանքների մասին.

Հույ կրլայի Միհրիպանի  
գալ Շահ Ապաս զգօրս առաքեալ,  
Երկու հազար անձինք Պարսից  
յայն վայր ի մարտն կոտորեալ:<sup>10</sup>

Պատմագիրը քայլ առ քայլ իր ընթերցողին ծանոթացնում է Օսմանյան կայսրության պատմությանը, նրա անցյալին ու ներկային: Քյոմուրճյանը հիշատակում է թուրքերի մղած բոլոր պատերազմները արձանագրում նվաճված երկրներում նրանց գործած չարիքները, ջարդ, թալան, գերեվարություն. ժողովուրդներին հասած բազում արհավիրքներ, բռնի հավատափոխության փաստեր, որոնք թուրքական աղբյուրներում ներկայացվում են որպես թուրք զինվորի հերոսականության, քաջության ու սխրագործության օրինակներ:<sup>11</sup>

Փաստերը քննադատաբար իմաստավորելու և վերլուծելու կարողությունն օգնեցին նրան ներկայացնելու Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի վառ պատկերը՝ բոլոր դրսևորումներով: Նկարագրելով Թուրքիայի պետական կարգը, Քյոմուրճյանը հատկապես ընդգծում է երկրի սոցիալ-տնտեսական ու պետական ամբողջ համակարգի ճգնաժամային երևույթները:<sup>12</sup>

Քյոմուրճյանը յուրահատուկ կերպ է պատկերել ազգային ու կրոնական հալածանքները, դրանց կործանարար հետևանքները նվաճված ժողովուրդների, այդ թվում և հատկապես հայ ժողովրդի համար: Նրա համակրանքը, անկախ ազգային պատկանե-

<sup>7</sup> Երեմիա Աեօմիրճեան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, Եր., 1982, էջ 25:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>9</sup> Հ. Նաջարյան, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Եր., 1961, էջ 4:

<sup>10</sup> Երեմիա Աեօմիրճեան, նշվ. աշխ., էջ 212:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>12</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., 1972, էջ 498:

լությունից ու դավանանքից, աշխատավոր ժողովրդի, հասարակության ստորին խավերի կողմն է եղել: Իր Պատմության մեջ նա բերել է մի գավառի թուրք գյուղացիների զանգատը սուլթանին, ուր ասված է.

Օճաղ աղայք, գոր տիրեին  
Ընդ արքունեացն և նուաճեալ,  
Ռամիկք ի շատ հարկաց խոցեալ  
և գՄիաուշն՝ ընդ իրեանս առեալ  
Եւ մուծին առ թագաւորն,  
Ասեն «Վեզիրդ զմեզ վշտացուցեալ,  
Աղայից բանիք շարժի,  
Եւ առ համայնս անիրաւեալ»:<sup>13</sup>

Պատմագիրը պատմում է կայսրության սահմաններում տեղի ունեցած ընդվզումների, խռովությունների, ապստամբությունների, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի, Հայաստանի տարածքում ջելալիների ապստամբության հետևանքների, սուլթանական պալատական միջավայրի, հեղաշրջումների մասին: Պատմության չորրորդ մասում նա որպես ականջալուր և ակամատես հեղինակ, տեղեկություններ է հաղորդում XVII դարի երկրորդ կեսին Եվրոպայում թուրքերի մղած նվաճողական պատերազմների մասին, անդրադառնում ենիչերիների ու սիփահիների խռովություններին, կենտրոնական կառավարության քաղաքականությունից դժգոհ փաշաների՝ Հայդար օղլուի, Աբազա Հասան փաշայի, Ղաթրջի օղլի Ալիի ապստամբություններին, արտահայտում Մոլդավիայի և Վալախիայի հակաթուրքական ազատագրական տրամադրությունները.

Ապագա փաշայն լուսա  
գեէնիչէրիս ուր և գըտեալ,  
Կոտորել սկըսի սաստիկ՝  
իբր արքային ըզվրէժն առեալ:<sup>14</sup>

Աշխատության մեջ տեղեկություններ են պարփակված նաև կայսրության սահմաններում իրենց գոյության համար մաքառող հայ, հույն, հրեա և այլ ժողովուրդների վիճակի, պոլսահայության միասնությունը խանգարող երևույթների, քրիստոնյա ժողովուրդների և Օսմանյան պետության փոխհարաբերությունների մասին:

Պատմական իրադարձությունները Քյոնյուրճյանը ներկայացնում է որպես փաստերի շարք՝ առանց մեկնաբանությունների: Պատմության ընթացքը նա պայմանավորում է երկնային ուժով: Ըստ նրա, աստծուն է հայտնի անհմանալին ու ապագան, քաղաքին, երկրին, ժողովրդին վիճակված գալիքը.

Աստուծոյ է գիտելին, ի սկըզբանէ գոր կամեցեալ,  
Որպէս շարժէ և զարարածս, նոյնպէս արզղմունքն և հետևեալ:<sup>15</sup>  
/տ. 3613-3614/

Քյոնյուրճյանը միաժամանակ ցույց է տալիս, որ թուրքերը Եվրոպայում հաջողության հասան ոչ թե քրիստոնյաների գործած մեղքերի, այլ իրենց ռազմատենչության և հայրենիքի պաշտպանության գործում եվրոպական ժողովուրդների ցուցաբերած անտարբերության շնորհիվ: Պատմագիրն անդրադառնում է նաև այն պարտություններին, որ կրում էր Թուրքիան եվրոպական բանակների և նավատորմի հարվածներից:<sup>16</sup>

Աշխատության վերջաբանն ավելի է կարևորվում, քանզի ականատեսի և ականջալուրի հաղորդումների վերարատադրություն է: Այն կարևոր սկզբնաղբյուր է կայսրության ներքին ու արտաքին հարաբերությունների մասին: Հատկապես հետևողականորեն է ներկայացված կայսրության քաղաքական պատմությունը՝ Կանդիայի պատերազմը, Տրանսիլվանիայում հունգարների և նրանց աջակից ավստրիացիների դեմ թուրքերի ձեռնարկած ռազմական գործողությունները, ՌԻկրահնային տիրելու համար Լեհաստանի դեմ մղված պատերազմի մանրամասնությունները և այլն:

<sup>13</sup> Երեսմիա Քեօմիքեան, նշվ. աշխ., էջ 243:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 206:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>16</sup> Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 225-226:

Կանդիան /Կրետե/ Միջերկրականի հյուսիսարևելյան և Էգեյան ծովի հարավային շրջանում գտնվող այդ կղզին, ուներ տնտեսական ու ռազմավարական նշանակություն և, բավական մոտ լինելով Օսմանյան կայսրության սահմաններին՝ հսկում էր Ստամբուլ-Եգիպտոս տանող առևտրական ուղիների վրա: Սուլթանական Թուրքիան գիտակցում էր դրա կարևորությունը և ձգտում էր տիրանալ նրան: Սակայն պարբերաբար կրկնվող թուրք-իրանական պատերազմները խանգարում էին այդ ծրագրի իրականացմանը: Եվ ահա 1644թ. կայսրությունն անցավ իր վաղեմի մտադրության իրականացմանը:

Քյոմուրճյանն անդրադառնում է նաև այն միջադեպին, որն առիթ դարձավ Կանդիայի 25-ամյա պատերազմին: 1644թ. սուլթան Իբրահիմի ներքինապետ Սյունբյուլ ադան, սուլթանի հրամանով ուղևորվում է Եգիպտոս՝ այնտեղ անցկացնելու կյանքի վերջին շրջանը: Նրա նավը «մերձ ի Կրիտես» ենթարկվում է մայթյան ծովահենների գրոհին:

Յարքայէ հրաման առնու  
և յԵգիպտոս եղև երթալ:  
Մաթեզցիք ի ծով գըտին,  
Տաճկաց նախն վերայ հասեալ:<sup>17</sup>

Ծովահենները, բռնագրավելով նավը և գերելով թուրքերին, փոխադրում են Կրետե.

Մերձ ի Կրիտես եղև այս մարտ,  
գուրսանքն նաւաւ անդէն ելեալ,  
Յաւարիցն, յերիվարացն  
ճէնարալին ընծայ տուեալ:<sup>18</sup>

Սուլթան Իբրահիմը կարգադրում է նախապատրաստվել պատերազմի: Մեկ տարի անց թուրքական նավատորմը ուղղություն է վերցնում դեպի Կանդիա: Նախապատրաստական աշխատանքները կատարվում է գաղտնիության պայմաններում: Միայն Չուխա կղզու մոտ Յուսուֆ փաշան հայտնում է արշավանքի նպատակը: Թուրքերի առաջին գրոհին ենթարկվում է Հանիան, որը նրանք վերցնում են պաշարման 54-րդ օրը: Գրավում են նաև ցամաքային բերդերից մեկը՝ Ռեբիմն: Քյոմուրճյանը գրում է, որ մինչ Կանդիայում թուրքերը շարունակում են զարգացնել ռազմական հաջողությունները, սակայն նրանք ենթարկվում են Վենետիկյան հանրապետության ցամաքային ուժերի հարձակմանը, կորցնում մի շարք ամրություններ և կրում մեծ կորուստներ:

Ի սյն ամի Վենետիկցիք  
ընդ ցամաքաւ պատերազմեալ:<sup>19</sup>

Վենետիկցիներին հաջողվում է նաև շրջափակել Դարդանելի նեղուցը, որը մեծ իրարանցում է առաջացնում կայսրության մայրաքաղաքում: Մահապատժի են ենթարկվում բարձրաստիճան անձինք: Պաշտոնից զրկվում է անգամ մեծ վեզիրը:

Վեզիր Մուհամմեդ Քյոփրյուլուին հաջողվում է, ինչպես վկայում է Քյոմուրճյանը, բռնության արտակարգ միջոցներով վերականգնել կայսրության ռազմական ուժը և ծանր կորուստների գնով ճեղքել շրջափակումը: Կանդիայի պատերազմը հաղթական վախճանին է հասցնում մեծ վեզիր Ահմեդ Քյոփրյուլուն, որն անձամբ մեկնում է Կրետե: Թուրքերը գրոհ են կազմակերպում և Կրետեն անձնատուր է լինում: Թուրքերը հավատարիմ իրենց քաղաքականությանը սկսում են ավերել եկեղեցիներն ու պատմաճարտարապետական հուշարձանները:<sup>20</sup>

Քյոմուրճյանի նման տվյալները կրում են սահմանափակ բնույթ, քանզի նա այս ամենը նկարագրում է միջազգային իրադարձություններից կտրված, որը բնականաբար նվազեցնում է աշխատության պատմագիտական արժեքը: Նա քաջատեղյակ է, իհարկե, որ քրիստոնյա աշխարհը օգնել է Կանդիային, բայց թե ինչ եղանակով, դա պատմագրին չի հետաքրքրել: Նրա համար կարևոր է և ցավալի այն փաստը, որ քրիստոնյա Վենետիկը պարտվեց, ու Թուրքիան տիրեց Կանդիային:

<sup>17</sup> Եր է մ ի ա Ք է ն մ ի ռ ճ է ն ն, նշվ. աշխ., էջ 233:

<sup>18</sup> Նույնը:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 46:

1669թ. ավարտվեց Կանդիայի պատերազմը, և 1672թ. արդեն Թուրքիան ՌԻ-րաիմայի տարածքում պատերազմում էր Լեհական թագավորության դեմ՝ ՌԻ-րաիման զավթելու նպատակով: Լեհաստանն ամեն կերպ ձգտում էր պահպանել իր «փրավունքները»: 1654թ. Ռուսաստանը ձեռք էր բերել ՌԻ-րաիման իր կազմի մեջ մտցնելու իրավունքը, բայց դեռ անպատրաստ էր հակահարված տալու ուկրաինական հողի նկատմամբ թուրքերի ռազմատենչ ձգտումներին:<sup>21</sup>

Քյոնուրճյանն անտարբեր չէ ազատասեր ժողովուրդների տառապանքների նկատմամբ, որոնց պատճառը նվաճողական Թուրքիան էր: Իրական փաստերն արձանագրելով՝ նա կարծես լռելյայն ստիպում է այն եզրակացության հանգել, որ չարիքի արմատը սուլթանական Թուրքիայի անհազ ծարավն է՝ թալանելու, սպանելու, գերեվարելու և այդ ճանապարհով հոգալու երկրի սոցիալ-տնտեսական կարիքները:

XVII դ. Օսմանյան կայսրությունն այլևս ի վիճակի չէր շարունակելու «փառավոր» պատերազմների պատմությունը: Նա սկսել էր վայրէջք ապրել, որը հետևանք էր կայսրության սոցիալ-տնտեսական ծանր կացության: Ռազմական հարաճուն ծախսերը ծածկելու նպատակով կայսրությունն անցել էր հողի վարձակալման, պաշտոնների վաճառման, դրամի արժեզրկման և հարկային ծանր քաղաքականությանը:

Սակայն, ինչպես վկայում է Քյոնուրճյանը, հատկապես դրամի արժեզրկումը և բանակում տիրող վիճակը ստիպել են սուլթանին շարունակ փոխել մեծ վեզիրներին և պետական պաշտոնյաներին:

Երկրում բռնկվում է ամենամեծ խռովություններից մեկը, ապստամբները պահանջում են նույնիսկ սուլթանի մորն իրենց հանձնել: Սուլթանը, փրկելով մորը, ստիպված է լինում 30 պետական պաշտոնյաների հանձնել ապստամբներին, որոնք նրանց՝

Յոշուտեն պատառ պատառ, վերայ դանկաց զմարմինս առեալ,

Չփախուցեալսն մի՛ գըտին և խեղդամահ զնոսա առեալ:<sup>22</sup>

Ն՛ման մի խռովություն է ծագում նաև 1660թ.վականին:

Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական ճգնաժամն իր արտահայտությունն է գտնում XVII դարի երկրորդ կեսին երկրի ներքին քաղաքականությունից դժգոհ, կենտրոնախույս տրամադրություններ ունեցող խոշոր հողատիրության ներկայացուցիչների ապստամբություններում: Հատկապես մեծ վտանգ են ներկայացնում Նասուհ փաշայի որդի Հյուսեյն փաշայի (1644), Հայդար օղլիի (1648), Գաթթջի օղլի Ալիի (1648), Հալեբի բեկլերբեկի և Աբազա Հասան փաշայի (1658) խռովությունները:

Անկալում էր նաև մայրաքաղաքի կյանքը: Գահի շուրջ հակառակորդ խմբավորումների պայքարը թուլացրել է սուլթանի իշխանության հեղինակությունը: Սուլթան Իբրահիմը 1648թ. գահընկեց է լինում այդ խռովություններից և խեղդամահ արվում:

Քյոնուրճյանից տեղեկանում ենք, որ սուլթան Իբրահիմի արքունիքում մրցակցող խմբակցություններից մեկը գլխավորել է ումն ճիմնի, որը մեծապես խանգարել է կառավարման գործին և օգտվելով սուլթանի վրա ունեցած իր ազդեցությունից, մահվան է դատապարտել պետական շատ գործիչների և կուտակել անչափ մեծ հարստություն: Սուլթան Իբրահիմի գահընկեց լինելուց հետո նրան դատապարտել են մահվան և բռնագրավել հարստությունը:

Անսահման է եղել մեծ վեզիրների ընչաքաղցությունը: Սուլթան Իբրահիմի վերջին մեծ վեզիր Ահմեդ փաշայի<sup>23</sup> հրահրումով կայսրության մայրաքաղաքում 1648թ. բռնկվել է ենիչերական հզոր խռովություն, որին նախ՝ ինքը գոհ գնաց, ապա գահընկեց և խեղդամահ արվեց սուլթան Իբրահիմը: Սկսվում է ենիչերիների իշխանության շրջանը, սակայն ինչպես տեղեկանում ենք «Պատմութիւն համառօտ»-ից, նրանք ևս անկարող են լինում կարգավորել երկրի տնտեսական դրությունը:

Քյոնուրճյանի սույն աշխատությունը նրա պատմական երկերի և ընդհանրապես հայկական աղբյուրների շարքում ունի առանձնահատուկ տեղ: Ի տարբերություն հայկական մյուս աղբյուրների, որոնք, լինելով գերազանցապես հայոց պատմություններ, թուրքերին ու Թուրքիայի պատմությանը անդրադառնում են ամիթներով, այն, հայ

<sup>21</sup> Երեմիա Քենեի րճեան, նշվ. աշխ., էջ 49:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 51:

հեղինակի կողմից գրված մի գործ է, որն ամբողջությամբ նվիրված է Օսմանյան կայսրության պատմությանը: Քյոմուրճյանի աշխատության աղբյուրագիտական արժեքը պայմանավորված է նաև նրանով, որ օգտագործվել է մեծ թվով թուրքական աղբյուրներ, որոնց ուղղությամբ կատարած որոնումները հնարավորություն են տալիս պնդելու, որ, իրոք, պատմագիրն իր ձեռքի տակ ունեցել է զգալի թվով թուրքական աղբյուրներ, որոնցից օգտվել է՝ թարգմանելով ու համառոտագրելով:

Իհարկե, ճշգրիտ փաստերի և իրադարձությունների կողքին Քյոմուրճյանի մոտ կան նաև անհամապատասխանություններ և անճշտություններ: Օրինակ՝ Բրուսայի հարձակման իրադարձություններում հիշատակված Օրխանի զինակից Թուրքոբ բեկը «Պատմութիւն համառօտ...»-ի մեջ հիշատակվում է Թուրտեկիին ձևով, որն աղբյուրների մեծ մասում հանդիպող Թուրքոբ Ալի ձևի տարբերակն է: Այսպիսի տարբերություններ հանդես են գալիս նաև այլ կետերում:<sup>24</sup>

Պատմական իրադարձությունները Քյոմուրճյանը ներկայացնում է որպես փաստեր, փաստերի շարան՝ առանց մեկնաբանությունների: Այս ոճը, որ հատուկ է ընդհանրապես ժամանակագրություններին, դրսևորում է պատմական իրողությունների ճշմարտացի վերարտադրության խնդրում Քյոմուրճյանի անմիջականությունը և անկողմնակալությունը: Շատ հարցեր պատմագիրը մեկնաբանում է նախախնամության տեսանկյունից, որը բնականաբար հեռու է իրականությունից:

Քյոմուրճյանի պատմագիտական ժառանգությունը վստահելի ու կարևոր սկզբնաղբյուր է XVII դարի Թուրքիայի, Արևելյան Եվրոպայի երկրների և ընդհանրապես Սերձավոր Արևելքի երկրների պատմության ուսումնասիրության համար:

## СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ И ПОЛИТИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ПО ЕРЕМИИ КЕОМУРЧЯН (XVII в.)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Гаспарян \_\_\_

Еремия Кеомурчян-один из выдающихся летописцев 17в. Его исторические работы заключают в себе богатый источник для освещения основных вопросов социально-экономической и политической жизни Османской империи.

Летописец по особенному представил национальные и религиозные вопросы и попытался выяснить последствия экономической и общественной жизни завоеванных народов и, особенно, армян. Этот источник, насыщенный фактами и важными событиями, и в наши дни не потерял свое значение и продолжает оставаться в центре внимания армянских историков.

<sup>24</sup> Երեմիա Քեոմուրճյան, նշվ. աշխ., էջ 53:

ՄԱՍԱՆՑ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Հայաստանում մետաղի գեղարվեստական մշակման, մասնավորապես ոսկերչության ու արծաթագործության համար միշտ էլ եղել է հումքի հարուստ բազա, քանզի Հայկական լեռնաշխարհը դեռ անհիշելի ժամանակներից հայտնի է եղել իր ոսկու, ինչպես նաև այլ մետաղների հանքերով:

Կա տեսակետ, որ Հայկական լեռնաշխարհը մետաղամշակման ամենաանախնական կենտրոններից է: Մեր հեռավոր նախնիները մետաղի մշակմամբ զբաղվել են դեռևս մ.թ.ա. հինգերորդ հազարամյակում<sup>1</sup>: Այժմ աշխարհի տարբեր թանգարաններում պահվում են մետաղի գեղարվեստական մշակման հայկական օրինակներ, որոնց պատրաստման ժամանակաշրջանն ընդգրկում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակից մինչև մեր օրերը: Պահպանված առարկաներից զատ դեկորատիվ-կիրառական այդօրինակ այլ ստեղծագործությունների մասին բազմիցս հիշատակություններ կան ձեռագիր մատյաններում և ժողովրդական բանահյուսության մեջ:

Մետաղի գեղարվեստական մշակումը, այդ թվում նաև ոսկերչությունն ու արծաթագործությունը Հայաստանում բավականին լուրջ հաջողությունների էին հասել դեռևս հնագույն շրջանում: Սրա օգտին են խոսում հայ և օտար պատմիչների պնդումներն այն մասին, որ Հայկական լեռնաշխարհը հարուստ էր մետաղի հանքերով: Այդ մասին են վկայում նաև պեղումների արդյունքները: Վերջիններս հաստատում են Հայաստանում դարբնության զարգացած ու տարածված արհեստ լինելը:

Միջնադարյան Հայաստանում ոսկերչությունն ու արծաթագործությունը յուրահատուկ ուղղվածություն ստացան, քանի որ վերջիններիս արտադրանքն արդեն դարձել էր հասարակական անհրաժեշտություն: Ուստի պատահական չէր, որ արհեստավորները համախմբվում էին այնպիսի վայրերում, ուր նրանք կունենային սպառողների լայն զանգված: Այդպիսի վայրեր էին հիմնականում թագավորական պալատները, իշխանական դրյակները, ամրոցները, առևտրական կետերն ու վանքային համալիրները, որտեղ, որպես կանոն, համախմբվում էին մեծ թվով պետական պաշտոնյաներ, առևտրականներ, արհեստավորներ, և ուր գոյություն ուներ արտադրանքի սպառման բավականին լայն շուկա: Տրամաբանական է, որ ոսկերիչ ու արծաթագործ արհեստավորների աշխատանքի ամենատարածված արդյունքներից էին թագերը, գահերը, զանազան զենքեր ու զինատեսակներ: Պատրաստվում էին նաև բազմաթիվ ու բազմապիսի զարդեղեն, կենցաղային պարագաներ:

Միջնադարյան հայ ոսկերիչներն ու արծաթագործները կարողացել են բավարարել նաև եկեղեցու և հոգևորականության առաջադրած բավականին բարդ ու դժվարին պահանջները: Միջնադարյան հմուտ հայ արհեստավորները պատրաստում էին եկեղեցական սպասք, ոսկե ու արծաթե խաչեր, թագեր, սաղավարտներ, խորաններ, մեռոնի ամաններ, սկիհներ, բուրվառներ, քշոցներ, ձեռագրակազմեր, վակասներ, հոգևորականի հագուստի վրա եղած արծաթե ու ոսկե զարդեր և, իհարկե, մասանց տարբեր պահարաններ:

Հայկական արծաթագործության մեջ առկա մասունքարանները, չնայած տարբերություններին, կարելի է խմբավորել երկու տիպի.

ա) ուղղանկյունաձև (կամ խաչի տեսքով) մասանց պահարաններ,

բ) աջեր (դաստակի տեսքով և այլն):

Մասանց պահարանները հայ վարպետները սովորաբար պատրաստում էին դրվագման եղանակով, ոսկե և արծաթե շատ նուրբ թիթեղներից, ընդելուզում էին այն թանկարժեք քարերով և զարդարում գեղաքանդակ պատկերներով:

Ուղղանկյունաձև մասնատուփերի վրա վարպետներն ավելի հեշտությամբ են իրենց վարպետությունը ցուցադրել, քանի որ հարթ թիթեղի վրա անհամեմատ ավելի

<sup>1</sup> Robert P. Multharf, *The Origins of Chemistry, London, 1966, p. 22:*

դյուրին է դրվագել զանազան պատկերներ ու տեսարաններ: Փաստորեն աջ- մասնատուիերը գոգավորության պատճառով հնարավորություն չեն տալիս դրվագել ու պատկերել մեծ թվով սրբերի պատկերներ ու տեսարաններ: Ուստի սա է պատճառը, որ աջ-մասնատուների պատրաստման համար պետք էր ավելի մեծ վարպետություն:

Հայկական արծաթագործության լավագույն և առհասարակ մեզ հասած ամենահին քրիստոնեական ուղղվածություն ունեցող նմուշներից են մասանց պահարանները, որոնցից հնագույնները թվով չորսն են և վերաբերում են X-XIV դդ.: Մասնատուիերից առաջինը արծաթից է: Ի սկզբանե այն եղել է միադուռ, 1443թ.-ի վերանորոգումից հետո Դուրաթ անունով վարպետը մեկ դուռը փոխարինել է երկու չբացվող դռնակներով:<sup>2</sup>

Երկրորդը՝ Սբ Ստեփանոսի մասնատուիը, պատկերաքանդակների բովանդակության տեսակետից անհամեմատ ավելի հետաքրքրական է, քան մյուսները: Որոշ մասնագետների կարծիքով, քանի որ բավականին լուրջ ընդհանրություններ կան այս մասնատուիի պատկերագրական ոճի, տեխնիկական հնարների և Անիի բրոնզե բուրվառների, խնկանոցների, ինչպես նաև Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու պատկերաքանդակների միջև, հետևաբար, այն կարելի է թվագրել X – XI դդ.:

Մյուս մասնատուիը վերագրվում է XIII դարի վերջին (1293թ.) և հայտնի է Սկևռայի կամ Հեթում թագավորի մասնատուի անունով: Այս մասնատուիը երկար ժամանակ համարվել է կորած, սակայն ներկայումս այն գտնվում է Էրմիտաժում: Այս մասնատուին առանձնահատուկ է նրանով, որ վերջինիս վրա որպես անցյալի փառավոր սուրբ նահատակներ, պատկերված են Գրիգոր Լուսավորչի, Թադեոս առաքյալի, Վարդան Մամիկոնյանի և այլոց պատկերները:<sup>3</sup>

Չորրորդ մասնատուիը ներկայումս Սբ. Էջմիածնի վանքի թանգարանում պահվող «Խոտակերաց սուրբ նշան» մասանց պահարանն է: Այն պատրաստվել է 13-րդ դարում, եղել է Պռոշյանների տոհմական սեփականությունը և նվիրաբերվել է Խոտակերաց Սուրբ նշան վանքին: Վերջինս շատ արժեքավոր է հայ մանրարվեստի պատմության համար:<sup>4</sup> Այս մասնատուիում ամփոփված է Իրական խաչի մի մասնիկը այն խաչի, որի վրա խաչել են Քրիստոսին:

Գեղարվեստական յուրահատուկ արժեք են ներկայացնում հայկական արծաթագործության՝ աջի տեսքով նմուշները, որոնք ամփոփում են սրբերի մասունքներ:

Այն ձևը, որով պատրաստված է Հովհաննես Սկրտչի աջը, ամենայն հավանականությամբ միջանկյալ դիրք է գրավում խաչի տեսքով (կամ ուղղանկյունաձև) մասունքարանների և աջ - մասնատուիերի միջև:

Աջի ձևով մասնատուի ունենալը հայկական իրականության առանձնահատուկ սովորույթներից էր (չնայած որ աջի տեսքով մասնատուի հանդիպում ենք նաև եվրոպական մշակույթում). ամեն մի սրբի մասունք՝ լինել ամբողջական ոսկոր կամ լոկ բեկոր, զետեղվում էր աջաձև արծաթե պահպանակի մեջ: Եվ պահպանակն արդեն համարվում էր այս կամ այն սրբի աջը: Այսօր Հայ Առաքելական եկեղեցում՝ թե՛ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում և թե՛ Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թանգարանում, պահպանվում են մի շարք սրբերի մասնատուի աջեր:

Գրանցից ամենահայտնին, ինչ խոսք, Գրիգոր Լուսավորչի աջն է (գտնվում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանում), որը ինչ-որ տեղ հայ կաթողիկոսության լեզվաբանության խորհրդանիշն է համարվում: Հայ եկեղեցու կանոնակարգի համաձայն՝ մեռնոն եփելու արարողության ժամանակ նրա կաթսան նախ խառնում-օրհնում են Գրիգոր Լուսավորչի աջով, ապա նոր միայն մյուս սրբություններով (Սբ. Թադեոս առաքյալի աջը, Սբ. նշանը և Գեղարդը):

Աջ-մասնատուիերի մի շարք գեղարվեստական օրինակներ ուշագրավ են իրենց ինքնատիպությամբ և զարդամոտիվների նրբությամբ: Հատկանշական է հատ-

<sup>2</sup> Ն. Հ ա կ ո բ յ ա ն, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ., Միջնադարյան հուշարձաններ, պր. 3, Եր., 1981, էջ 42:

<sup>3</sup> Ա. Ժ ա մ կ ն չ յ ա ն, Ն. Հ ա կ ո բ յ ա ն, Սրբերի պատկերագրությունը գեղարվեստական մետաղի կերտվածքներում (մասանց պահարաններ), Հայոց սրբերը և սրբավայրերը: Ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001, էջ 316:

<sup>4</sup> Վ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Արհեստները Հայաստանում IV-XVIIIդդ., Եր., 1956, էջ 111:

կապես այն հանգամանքը, որ այստեղ օգտագործված են մետաղամշակման արվեստին բնորոշ հատիկավոր, հյուսածո, եռանկյունաձև և այլ զարդանախշեր:

Մետաղյա նմանատիպ իրերի հավաքածուի բնորոշ կողմերից մեկն էլ առարկաների վրա դրոշմված, փորագրված ու դրվագված թեմատիկ տեսարաններն են ու զարդանախշերը:

Աջերը պատրաստվել են հիմնականում դրվագման տեխնիկայով, որի միջոցով աջերի մեծ մասի վրա պատկերված թեմատիկ տեսարանները (քրիստոնեական թեմաներով, սրբերի կյանքից դրվագները և այլն), որպես կանոն լրացված են բուսական, կենդանական զարդանախշերով: Չարդամտոտիվներն ունեն բուսական և երկրաչափական ծագում, նաև՝ քրիստոնեական հավատալիքներ մարմնավորող խորհրդանիշեր:

Աջ-մասնատուփերի շարքում յուրօրինակ գեղարվեստական լուծում է ստացել Հովհաննես Սկրտչի աջը (XIV դ.): Այն իրենից ներկայացնում է յուրատեսակ խաչ, որի կենտրոնում ուղղանկյուն մասնատուփն է: Ամբողջ մասնատուփը զարդարված է վրադիր թանկարժեք և գունավոր քարերով (ռուբին, սարդիոն, փիրուզ, մարգարիտ, կվարց, մարջան, ապակի): Վրան դրվագված է Սկրտչի դաստակը, որը գուրկ է ճոխ զարդանախշերից (գտնվում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարանում):

Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում նաև Հովհաննու աջը, քանի որ այս մասունքապահարանը պատկերում է միայն սրբի դաստակը և նախաբազուկը: Պատրաստել է Սկրտչի Մահաեսի Կիկողոսը և նվիրել Մշո Սբ Կարապետ վանքին 1760թ.:<sup>5</sup>

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկավոր է ամրագրել, որ պահպանված և մեզ հասած մասնատուփերից առավել հին նմուշները վերագրվում են մոտավորապես 13-րդ դարին: Հնարավոր է, որ հայկական արծաթագործության մեջ նախկինում ևս իրենց տեղն են ունեցել մասնատուփերը, որոնք բուն Հայաստանի տարածքում հավանաբար չեն պահպանվել մոնղոլ-թաթարների և սելջուկ-թուրքերի արշավանքների ու թալանի պատճառով: Տրամաբանական է, որ հարաբերական ապահովության պայմաններում արծաթագործությունն ավելի է զարգացել, և արծաթագործության նմուշներն ավելի լավ են պահպանվել Կիլիկյան Հայաստանում: Սակայն պակաս հավանական չի թվում նաև այն վարկածը, որ Կիլիկյան Հայաստանի սերտ կապերը եվրոպական մշակույթի հետ բարենպաստ պայմաններ են ստեղծել հայ իրականության մեջ եվրոպական մշակույթի տարրերի ներթափանցման համար, ինչն իր արտահայտությունն է գտել նաև մասանց պահարանների դեպքում:

Այդուհանդերձ, մասունքարանները հայ արծաթագործության յուրօրինակ և անկրկնելի այն նմուշներն են, որոնք, բացի նրանից, որ ներկայացնում են գեղարվեստական մեծ արժեք, միևնույն ժամանակ նաև ամբողջացնում և արժեքավորում են հայ քրիստոնեական մշակույթի հարուստ ժառանգությունը:

## РЕЛИКВАРИИ КАК ЛУЧШИЕ ОБРАЗЦЫ АРМЯНСКОГО СЕРЕБРЯНОГО ДЕЛА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ В. Гамбарян \_\_\_

Еще в V тысячелетии до н.э. на территории Армянского нагорья люди занимались обработкой металлов. Художественная обработка металлов (в том числе золота и серебра) в Армении достигла серьезных высот еще в древние времена. Но особое внимание стоит обратить именно на искусство средневековой обработки металлов, так как обработка золота и серебра в это время получила особую направленность. Средневековые армянские мастера делали церковную утварь, золотые и серебряные кресты, шлемы, мирницы, алтари, оклады, потиры, бармы, опахала, реликварии.

<sup>5</sup> Վ. Արքաշահյան, Հայկական ոսկերչություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., 1983, էջ 182:

Реликварии, средневекового армянского ювелирного искусства, несмотря на их различия, можно разделить на два типа: а) прямоугольные или в виде креста; б) длани (в виде кисти руки, и т. д.)

Лучшими образцами армянского серебряного дела, христианского периода дошедшие до нас, являются складни. Старейшие среди них - 4 датируются X-XIV вв. Самым известным среди них является складень "Хотакерац сурб ншан". Реликварии в виде длани являются своеобразными обычаями армянской реальности. Самое известное-св. Григора Просветителя. Реликварии являются своеобразными неповторимыми образцами армянского серебряного дела, которые, кроме того, что имеют большую художественную ценность, в то же время дополняют и осмысливают богатое наследие армянской христианской культуры.

**Վ. ՏԵՐՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»  
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ՉԵՌԱԳՐԻ ՎՐԱ**

Խոսքի անվանի մշակների (Թումանյան, Պուշկին և ուրիշներ) ստեղծագործական աշխատանքի փորձը հիմք է տալիս ասելու, որ գրողին, բանաստեղծին վերուստ տրված շնորհն ընդամենը նախապայման է մեծ լինելու համար: Մեծությունը նվաճվում է ստեղծագործական տևական և մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ, աշխատանք, որ կատարվում է գեղարվեստական երկի կառուցվածքի, տողի, բառի վրա:

Միանգամայն իրավացի է Էդ. Ջրբաշյանը, երբ այն միտքն է ընդգծում, թե խոսքի անմահ մշակներն ընթերցողին հետաքրքրելու են ոչ միայն իրենց գրական ժառանգությամբ, այլև «ստեղծագործական աշխատանքի բուն ընթացքով (այսպես կոչված՝ լաբորատորիայով), վարպետության և արարման գաղտնիքներով»:<sup>1</sup> Եթե սովորական ընթերցողի համար գրողի ստեղծագործական լաբորատորիային ծանոթանալը կարևոր է այնքանով, որ շոշափելիորեն տեսնի ու հասկանա, թե ինչպես են կերտվել հիացմունք պատճառող էջերը, ապա մասնագետ հետազոտողը գրողի ստեղծագործական լաբորատորիայի ուսումնասիրության հիման վրա պատասխան պիտի տա այն կարևոր հարցին, թե ինչպիսի ընթացք են ունեցել նրա ստեղծագործական հասունացումը, գեղարվեստական վարպետության կատարելագործումը:

Վ. Տերյանն էլ այն անմահ մշակներից է, որոնք ստեղծագործական ջանք չեն խնայել գեղարվեստական խոսքի անթերի կատարելության հասնելու հարցում: Խորին ափսոսանք է առաջացնում այն իրողությունը, որ Տերյանը, ինչպես նրա ստեղծագործական կյանքին մոտիկից ծանոթ Պ. Մակինցյանն է նշում, անհրաժեշտ հոգածություն չի ցուցաբերել իր սևագիր ձեռագրերի պահպանման հարցում: «Վ. Տերյանը,- նշում է Մակինցյանը,- գրում էր առանձին- առանձին թերթիկների վրա: Ամեն անգամ այլի անձից ձեռքը իր ձեռագիրները, եթե նա կանգ էր առնում որևէ գրվածքի վրա ու փոփոխումներ մտցնում, անմիջապես այդ թերթիկը մաքուր արտագրում էր և, հինը պատռելով ու զամբյուղը նետելով, տեղը դնում էր նորը: Այսպիսով, նրա դարակում պահված ձեռագիրները միշտ մաքուր էին, իսկ թե քանի-քանի անգամ էին այդ ձեռագիրները ենթարկվել վերամշակումի-այդ գիտեր ինքը պետք է իր գրասեղանի տակի զամբյուղը»:<sup>2</sup>

Բարեբախտություն պետք է համարել, որ տպագրությունից հետո պահպանվել է Տերյանի «Բանաստեղծություններ» առաջին հատորի ձեռագիրը՝ բաղկացած 223 էջից: 1985թ. լույս տեսավ այդ ձեռագրի լուսապատճենը՝ Էդ. Ջրբաշյանի վերջաբանով: Այդ ձեռագիրը հրատարակությունում տեղ են գտել «Մթնշաղի անուրջների» վերամշակված և լրացված տարբերակը, «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ» շարքերը և «Վերադարձ» շարքի երկու բանաստեղծություն՝ ընդամենը 170 ստեղծագործություն:

Մույն հոդվածում մեր նպատակն է ուսումնասիրության առարկա դարձնել այդ ձեռագիր ժողովածուի վրա Տերյանի կատարած մանրակրկիտ, բազմաբնույթ աշխատանքը: Առանձին ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ անհասկանալի պատճառով առայժմ այդ ստեղծագործական աշխատանքը տերյանագիտության մեջ գրեթե անտեսված է մնում, թեև առհասարակ Տերյանի ստեղծագործական լաբորատորիան ներկայացնելու ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել են: Այդ առումով առանձին ուշադրության արժանի է Տերյանի՝ Վ. Պարտիզոնու կողմից կազմված ու ծանոթագրված քառասուներեք երկերի ժողովածուի առաջին հատորի «Ծանոթագրություններ» բաժինը: Քննադատական վերաբերմունքով օգտվելով տերյանագիտության մեջ ձեռք բերված նվաճումներից՝ Վ. Պարտիզոնին ծանոթագրությունները կազմելիս, ինչպես ինքն է իրավացիորեն նշում, որոշակի պարագանե-

<sup>1</sup> Վ. Տ ե Ր Յ Ա Ն, *Բանաստեղծություններ, հ. 1, Եր., 1985* (ձեռագրի լուսապատճենային հրատարակություն), Էդ. Ջրբաշյանի վերջաբանում, էջ 1: Այս ժողովածուից այսուհետև կատարված մեջբերումների միայն էջը կնշվի շարադրանքում՝ փակագծերի մեջ:

<sup>2</sup> Մեջբերումը կատարված է Վ. Պարտիզոնու «Վահան Տերյանի հետ» աշխատությունից, Եր., 1989, էջ 272:

րում մասամբ հեռացել է սուկ հատոր կազմողի պարտականություններից և գնացել է դեպի տեքստ պատրաստելու և «ինչ- որ չափով Տերյանի երկերի գիտական հրատարակությունը նախապատրաստելու դժվարին բնագավառը»:<sup>3</sup> Նա կարևոր քայլ է կատարել Տերյանի բանաստեղծությունների տեքստային տարբերությունները ներկայացնելու հարցում: Բայց այս ամենով հանդերձ մենք այն համոզման ենք, որ ամենևին էլ հավաստի չէ Պարտիզոնու այն պնդումը, թե Տերյանի հատորները կազմելիս և ծանոթագրելիս «համեմատված են բոլոր ինքնագրերն ու հրատարակությունները»:<sup>4</sup> Ինչպես մեր կողմից կատարված ուսումնասիրությունն է ցույց տալիս, Տերյանի «Բանաստեղծություններ» ժողովածուի առաջին հատորի (1912թ.) ձեռագրում տեղ գտած բազմաթիվ և բավական բազմաբնույթ լեզվատճական և այլ կարգի փոփոխություններ, կան ամենևին էլ արտացոլված չեն հեղինակի համապատասխան հատորի ծանոթագրություններում, կան հարևանցիորեն են ուշադրության արժանացել: Այսպես, օրինակ, «Միրահարվածը» բանաստեղծության ինքնագրի վրա (էջ 80) կատարված են մի քանի փոփոխություններ, որոնցից ոչ մեկը արտացոլված չէ ծանոթագրություններում: Բանաստեղծության առաջին տան 3-րդ և 4-րդ տողերն այսպես են ինքնագրում.

Արդեն թույլ եմ ես այս խենթ կարոտում

Երկաթե կամքը թույլ է և՛ ուժըս չնչին ... (80)

Ընդգծվածները ձեռագրում այսպիսի խմբագրման են ենթարկվել.

Անգոր եմ արդեն այս խենթ կարոտում

Եվ կամքըս թույլ է և ուժըս չնչին ...

Երեք փոփոխություն էլ կա բանաստեղծության 2-րդ քառատողում: Դժվար է ասել, թե դրա առաջին տողում ինչ բառ է ջնջված, որի վերևում գրված է «այս չար» կապակցությունը («Ժենթացած բեռից այս չար մենության ...»): Երրորդ տողում հետք բառն է փոխարինված ցուր-ով («Տեսնելու հետքը/ցուրը գեթ հեռվից հեռու ...»): Զորրորդ տողում բավական որոշակիորեն զգացվում է, որ և շարկապն է փոխարինված ու-ով («ՈՒ հսկելու քեզ սավերի նման ...»):

Գուցե նշված և այդպիսի բազմաթիվ այլ բանաստեղծություններում կատարված փոփոխությունները հատորի ծանոթագրություններում տեղ գտած չլինելը պատճառաբանվի Վ. Պարտիզոնու կողմից նշված այն բացատրությամբ, թե Տերյանի կողմից կատարված փոփոխություններից, այլընթեքումներից «բերել ենք կարևորները, ավելի մանրամասն թողնելով ակադեմիական հրատարակությանը»:<sup>5</sup> Բայց այս դեպքում բնականաբար այսպիսի հարց կառաջանա. ո՞ր փոփոխությունները կարելի է կարևոր համարել, որոնք՝ անկարևոր: Այսպես էլ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ, օրինակ, «Աշուն» բանաստեղծության «Անձրև, քամի, ցոր կամար» տողում ընդգծված բառը սև բառով փոխարինելը կարևոր է համարվել, ծանոթագրություններում նշվել է,<sup>6</sup> իսկ, ասենք, «Տխուր մեռան կապուտաչյա...» բանաստեղծության «Հայտնվիր մութ անապատում» տողում ընդգծված բառը ձեռագիր ժողովածուի մեջ սև բառով փոխարինելը (39) կարևոր չի համարվել և ծանոթագրություններում չի նշվել: Մի՞թե անկարևոր է այս փոփոխությունը, որը նույնպես արտացոլված չէ ծանոթագրություններում: Եղել է. «Մի մանկիկ է իմ հոգին մոլորում» դարձել է. «Մի որբ մանկիկ է հոգիս մոլորում» (104): Կամ մի՞թե անկարևոր են բանաստեղծություններից մեկում կատարված հետևյալ փոփոխությունները:

Նախապես եղել է.

Հողմ ու անձրև շարունակ

Դուռն են ծեծում ու հեծում ... (130)

Այս ընդգծված տողն ինքնագրում փոխարինվել է հետևյալով.

Իմ լուսամուտն է ծեծում ...

<sup>3</sup> Վ. Տ եր յ ա ն, *Երկերի ժողովածու, 4 հատորով, հ. 2, Եր., 1973, էջ 324:*

<sup>4</sup> Նույն տեղում, հ. 1, Եր., 1972, էջ 305:

<sup>\*</sup> Այս և հետագա բանաստեղծական տողերում պահպանված է ձեռագրերում սակայ կետադրությունը (ծանոթություն՝ Ս.Մ.):

<sup>5</sup> Նույնը:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 309:

Ինքնագրում կատարված է նաև շարադասական փոփոխություն, որը նույնպես կարևոր չի համարվել, ծանոթագրություններում չի արտացոլվել: «Դու հրաշքով այսօր եկ» տողում փոխվել է ընդգծված բառերի տեղը («Հրաշքով դու այսօր եկ»):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ բանաստեղծի, գրողի կողմից կատարված փոփոխությունները նախ պիտի բացահայտվեն, ներկայացվեն ուսումնասիրողների ուշադրությանը, ապա նոր միայն արժեքավորվեն: Պետք է ավելացնել նաև, որ բառի գործածության հարցում Տերյանի նման բժախնդիր բանաստեղծի կողմից կատարված փոփոխություններից հազարից մեկը հազիվ անկարևոր լինի: Ո՞վ կարող է ասել, թե վերը բերված տողերի խմբագրումներից որևէ մեկն անկարևոր է: Եթե Տերյանն անհրաժեշտ է համարել արդեն պատրաստի, հրատարակության ներկայացրած ժողովածուի վրա աշխատել, բառեր ու տողեր փոխել, դա արդեն իսկ խոսում է նույն վկայում է, որ բանաստեղծն առանձնակի կարևորություն է տվել այդ փոփոխություններին:

Որ ուսումնասիրողների կողմից Տերյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորի ձեռագիրը պատշաճ ուշադրության առարկա չի դարձել, այդ մասին է վկայում նաև հետևյալ՝ ամենևին էլ ոչ երկրորդական նշանակություն ունեցող իրողությունը: Այդ ձեռագրում «Աշնան գիշեր» բանաստեղծության երրորդ քառատողի քառային կազմն այնպիսին է, որի մեջ տեղ չունի հեկեկալ բայը.

Այնքան վիշտ կա անհույս այդ երգում  
 Այնքան դառը տանջանք ու թախիծ  
 Եվ անվերջ հավիտյան է երգում  
Հեկեկում այդ երգը այնտեղից... (106)

Մեր կողմից ընդգծված այս բառի փոխարեն Տերյանի՝ մեզ հայտնի բոլոր ժողովածուներում երևան է եկել հեկեկալ բայի ներկայի ժամանակաձևը՝ զեղչված օժանդակ բայով.

Հեկեկում այդ երգը այնտեղից<sup>7</sup>

Տերյանի ձեռագրում հեկեկում– ը որպես մակդիր է հանդես գալիս երգ բառի համար («հեկեկում երգ»): Ու՛ն անանցով կազմված անական կա Տերյանի նաև «Թափառումի երգ» բանաստեղծությունում. «Կրկանչեմ զվարթ ու արքուն երգով Անց ու դարձողին ...» (180): Եթե այս հարցով հետաքրքրվող որևէ մեկին այնպես թվա, թե հեկեկում բառի վերջին տառը ձեռագրում որոշ նմանություն ունի մ-ի հետ և կարող է որպես մ էլ ճանաչվել, խորհուրդ կտանք ուշադրության արժանացնել նաև արքուն բառը, որի կազմում էլ ուն անանցը բացարձակորեն նույն գրության ձևն ունի:

Ինչպիսի՞ն են խնդրո առարկա ձեռագիր ժողովածուի մեջ կատարված փոփոխությունները: Դրանք թեև բավական բազմազան դրսևորում ունեն, բայց հիմնական, բացարձակորեն զերակշիռ մասը լեզվաոճական բնույթի է:

Նախ համառոտակի նշենք որոշ բանաստեղծություններում կատարված տողերի, տների կրճատման, բանաստեղծությունների դասավորության մեջ կատարված փոփոխությունների մասին: Կրճատումներ կան մի քանի բանաստեղծություններում (տե՛ս էջեր 86, 126, 135 ևն): Կրճատումների հիմնական նպատակը խոսքի կատարյալ սեղմության ապահովումը կարելի է համարել: Այսպես օրինակ, «Դուրսը ցուրտ է հիմա» բանաստեղծությունում կրճատված է մի տուն, որի բովանդակությունը տարբեր դրսևորումներով արծարծվում է նաև այդ բանաստեղծության մյուս յոթ քառատողերում: Ահա այդ կրճատված տունը.

Չի փայլում ոչ մի լույս  
 Գիշերում ավելոծ  
 Ես ունեմ ուղեցույց  
 Հեռավոր մի փարոս ... (205)

«Ես չեմ հիշում երբ և ուր» երկու քառատողից բաղկացած բանաստեղծությունում կա նաև ջնջված 9-րդ տողը. «Մակայն սիրոս հավատաց...» (163): Բանաստեղծը հավանաբար մտադիր է եղել շարունակել բանաստեղծությունը, բայց զգալով, որ ասելիքն ասվել է, հրաժարվել է այդ մտադրությունից:

<sup>7</sup> Վ. Տ երյան, *Երկերի ժողովածու, 3 հատորով, հ. 1, Եր., 1960, էջ 103: Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 4 հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 118:*

Միանշանակ պատասխան չի կարելի տալ 24-րդ և 25-րդ էջերի կրճատմանը: Ձեռագիր ժողովածուն ներկայացնող իր վերջաբանում (էջ 4) Էդ. Ջրբաշյանն այդ էջերում գտնվող 33 տողերը միասին որպես մեկ բանաստեղծություն է դիտում. «...ջնջվել-հանվել է մի բանաստեղծություն («Հեռու լեռներում արծաթ կարկաչուն...»),- գրում է Ջրբաշյանը: Մենք այն կարծիքին ենք, որ 24-րդ էջի երեք տունն առանձին բանաստեղծություն է, 25-րդ էջի երեք տունը՝ առանձին: Յուրաքանչյուր էջում եղածը որոշակիորեն ամբողջական մտքի արտահայտություն է: Դրանց հատկապես առաջին տները բավական տարբեր բանաստեղծական ապրումի դրսևորում են: Ավելորդ չենք համարում վկայակոչել այդ տները.

<u>24-րդ էջին</u>	<u>25-րդ էջին</u>
Հեռու լեռներում	Յնորքներ ցոլում
Արծաթ կարկաչուն	Անուրջներ անուշ
Աղբյուրն է հնչում	Տխուր անցյալում
Ցայտերով խոսում	Հեռու և անհուշ
Հեռու լեռներում ...	Անհայտ անցյալում ...

Ուշագրավ է նաև այն, որ 24-րդ էջի երեք տներում միայն մեկ, այն էլ շարադասական բնույթի փոփոխություն է կատարված, իսկ 25-րդ էջի սկզբի երկու տները բավական հանգամանալի մշակման են ենթարկված. վերը բերած 5 տողի փոխարեն եղել է 6 տող: Վերջին «Անհայտ անցյալում» տողի փոխարեն եղել է երկու տող. «Անդարձ ու անհաս Տխուր անցյալում», 2-րդ տողում անուրջներ բառի փոխարեն նախապես եղել է երազներ բառը: Այնուամենայնիվ, 24-25-րդ էջերում եղածը մե՞կ թե՞ երկու բանաստեղծություն դիտելու հարցը կարիք ունի նաև հետագա ուսումնասիրման: Այդ հարցն այժմ ամփոփենք մույնիսկ անհավատալի թվացող այն իրողության արձանագրումով, որ ինչքան կարողացանք պարզել, այդ բանաստեղծություն/ները մինչև օրս տպագրության չեն արժանացել հեղինակի մույնիսկ սևագրությունների, անտիպ բանաստեղծությունների շարքում: Եվս մի ապացույց, որ այժմ քննվող ձեռագիր ժողովածուն պատշաճ ուշադրության չի արժանացել տեղյակագետների կողմից:

Առաջին խմբի փոփոխությունների հարցն ավարտելուց առաջ նշենք, որ ժողովածուի «Ոսկի հեքիաթ» շարքի վերջին երկու բանաստեղծությունների տեղն է փոխված ձեռագրում. շարքի վերջին բանաստեղծության («Դու կըզաս ու կրկին հեքիաթով կրդյութես») վերևում՝ ձախ կողմում, գրված է՝ առաջ, իսկ նախավերջին բանաստեղծության («Արևածագ») վերևում՝ հետո (էջեր 217, 218): Բանաստեղծն այդպես է կամեցել հավանաբար այն նկատառումով, որ նախորդ շարքն ավարտվի որոշակիորեն բարձր տրամադրություն արտահայտող «Արևածագ»-ով, և դրան անմիջապես հաջորդի «Վերադարձ» շարքը՝ ոգեշունչ «Մենության խավար գնդանից կրկին ես վերադարձա հզոր և հպարտ ...» ավետիսով:

Այժմ անցնենք այնպիսի փոփոխությունների քննությանը, որոնք բուն իմաստով վերաբերում են բանաստեղծությունների լեզվի և ոճի կատարելագործմանը:

Ինչքան էլ կարևորվի լեզվի, ոճի, առհասարակ խոսքի գեղարվեստական բարենասնությունների հարցը, պետք է նկատի առնվի, որ դա ինքնագո իրողություն չէ գրողի, բանաստեղծի համար: Գեղարվեստական ստեղծագործության մեջ խոսքի որակը, յուրահատկությունը, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքի բովանդակությունը պայմանավորված են այնպիսի կարևոր հանգամանքներով, ինչպիսիք են գրողի որդեգրած գրական ուղղությունը, նրա ստեղծագործական խառնվածքը, օգտագործած ժանրը և այլն:

Տեղյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորի ձեռագրի վրա կատարված փոփոխությունների հիմնական մասը վերաբերում է քնարական հերոսի հոգեկան աշխարհի պատկերմանը: Հայտնի իրողություն է, որ ընդհուպ մինչև այժմ ուսումնասիրության առարկա հանդիսացող ժողովածուի հրատարակելը, մարդու, հասարակական կյանքի կատարելության կարտան իր սրտում ունենալով հանդերձ, Տեղյանը՝ որպես հիմնականում խորհրդապաշտական ուղղությանը հարող բանաստեղծ, մտահոգ է եղել ոչ այնքան կյանքին ջերմություն հաղորդելու նպատակադրումով, ինչպիսին, ասենք, Թումանյանն էր, որքան քնարական հերոսի հոգեկան աշխարհի դառնությունների, թախծի, դժգոհության արտահայտումով: Բայց դա չի նշանակում, թե նրա ստեղծագոր-

ծական կյանքի այդ շրջանում չկան լավատեսական առկայծումներ, ցանկալի գալիքի երազանքներ: Այս կապակցությամբ ուշագրավն այն է, որ ձեռագիր ժողովածուի վրա աշխատելիս Տերյանը ձգտել է քնարական հերոսի հոգեկան աշխարհում ավելի նկատելի դարձնել լավատեսական ապրումները, հույսի շողարձակումները: Կարելի է ասել, որ հեղինակի կողմից գրեթե կատարված չէ այնպիսի նպատակադրումով սրբագրում, որ այն միտքն ընդգծվի, թե քնարական հերոսն իրեն զգում է «միշտ մթին, մենավոր» ուղու վրա՝ հուսաբեկ, «դժկամ ցավի մեջ»: Իսկ հակառակ բնույթի փոփոխությունները քիչ չեն: Այժմ մեզ հետաքրքրող խնդրի առումով ուշագրավ է «Առավոտ» բանաստեղծությունը: Այդ բանաստեղծության քնարական հերոսը, հաճելիորեն իր երախտապարտությունը հայտնելով առավոտին, որ այսօր քաղցր է նայում, դյութական է համբույրող նրա, և «լայն է բացված հեռուն արևոտ», բանն այնտեղ է հասցնում, որ սինվոլիստական «կարգ ու կանոնը խախտելով» նաև նշում է, թե

Միրտս վառված է մի նոր երագով ... (210)

Բայց անմիջապես սքափվելով՝ հրաժարվում է *վառվել* բայից.

Միրտս լիքն է մի նոր երագով ...

Հավանաբար զգուշանալով գրչակիցներից՝ ավելի է մեղմացնում իր հոգեկան աշխարհի լավատեսական բուն դրսևորումը, և երևան է գալիս սրտամոտ *զինով* բառը.

Միրտս զինով է մի նոր երագով ...

Եվ կարծես ամեն ինչ տեղն է ընկնում: Բայց ոչ: Հավանաբար վերը նշված փոփոխությունների ժամանակ կողմնորոշիչ նշանակություն ունեցող միտումն իրեն զգալ է տվել նաև հետագայում՝ տարիներ հետո, երբ բանաստեղծը կրկին անդրադարձել է այդ ստեղծագործությանը, և վերը նշված տողն այնպիսի վերջնական տեսքի է բերվել, որ սրտի հրճվանքը նկատելիորեն մեղմանա, զինովությունն առնչվի առհասարակ քնարական հերոսին.

Ու զինով եմ ես մի նոր երագով ...

Բայց պետք է նշել, որ, ի տարբերություն «Առավոտ» բանաստեղծության, մշակման ենթարկված մյուս բանաստեղծություններում հիմնական միտումն այն է, որ քնարական հերոսն ավելի հետևողականորեն է լավատեսական տրամադրությամբ հանդես գալիս: Անդրադառնանք այդպիսի բանաստեղծություններից մի երկուսին:

«Թափառական» բանաստեղծության մեջ բավական բարձր տրամադրությամբ է ներկայանում քնարական հերոսը, նա հաճույքով է նշում, որ թողնելու է քաղաքն աղմկոտ, կլիմի դաշտերում՝ կանաչ ծառի տակ, վառ աստղերի հետ անուշ կերագի: Այդ լավատեսական տրամադրության հետ որոշ չափով աններդաշնակության մեջ է գտնվել բանաստեղծության վերջին տան երրորդ տողը.

Անտուն անցորդից կխնդրեն ես հաց,

Պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ,

Երկինք կռհառեն աչքերս հոգնած

Զնքուշ ծաղկանց հետ խաղաղ կըքնեմ ... (22)

Ամենայն հավանականությամբ ընդգծված տողի վրա զիծ քաշելու հարցում կարևոր դեր է ունեցել «հոգնած աչքերից» ազատվելու նկատառումը, որպեսզի քնարական հերոսի հոգեկան վիճակն անխառն լավատեսությամբ ներկայացվի: Այդ տողին փոխարինել է հետևյալը. «Լայն երկնքի տակ հաշտ ու սրտաբաց»:

Այժմ քննվող խնդրի առումով ավելի ուշագրավ է մեկ այլ բանաստեղծությունում կատարված փոփոխությունը: Նախասպես այսպես է ներկայացված եղել «ցուրտ աշխարհի» ներգործությունը քնարական հերոսի հոգեկան աշխարհի վրա:

Ցուրտ է աշխարհն ու աղոտ

Աշնան անձրև ու մշուշ

Բազված է մի թունոտ խոց

Մի մութ շիրիմ իմ սրտում ... (110)

Ընդգծված տողերի խմբագրման շնորհիվ՝ նախ որ «ցուրտ աշխարհի» առնչությունը ներկայացվել է ոչ թե անմիջապես քնարական հերոսի հետ, այլ ընդհանրապես և, որ ավելի կարևոր է, այդ աշխարհի պատճառած հետևանքն այդպես մահազուրկ ձևով չի ներկայացվել.

... Սևավոր են ու ցավոտ

Եվ մտածում և վերհուշ ...

Քառատողի այս խմբագրված տարբերակն առավել չափով ժամանակի իրականության քննադատությունն է, քան թե քնարական հերոսի ներանձնական հոռետեսական տրամադրության արտահայտություն:

Քնարական հերոսի ներաշխարհը ճշտորեն բացահայտելու միտումն է կարևորվել նաև «Աշնան առավոտու երգը» բանաստեղծությունում, որի առաջին քառատողում մի քանի փոփոխություններ են կատարված: Միս այդ քառատողի սկզբնական տարբերակը.

Այնպես անլույս է այսօր

Առավոտըս լուսացել

Միտորս հոգնած ու անգոր

Մահացու վիշտ է լցրել ... (130)

Այս դեպքում էլ բանաստեղծի ուշադրությունը կենտրոնացած է եղել երրորդ և հատկապես չորրորդ տողի վրա, մասնավորապես կամեցել է «մահացու վշտի» հարցը լուծել: Չորրորդ տողը ներկայացվել է մի նոր տարբերակով, որը նույնպես չի բավարարել բանաստեղծին: Այդ նոր տարբերակն էլ է ջնջվել, որի առաջին երկու բառը, այնուամենայնիվ, կարելի է կարդալ («մահու թախիծ»), իսկ երրորդ բառն այնպես է ջնջված, որ չի կարդացվում: Մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ՝ այս դեպքում էլ քնարական հերոսն այնպիսի հոգեկան վիճակով է ներկայացվել, որ առաջին տարբերակի համեմատությամբ շատ է հեռու մահից, հոռետեսությունից:

Այնպես անլույս է այսօր

Առավոտըս լուսացել

Միտորս հիվանդ ու անգոր

Անլուսությամբ է լցրել ...

«Դու խոսում ես...» տողով սկսվող բանաստեղծության քնարական հերոսը ծովի երգ է լսում մշուշում, բայց այդ մշուշը եթե նախապես բնորոշված է եղել «ժավերժական» հատկանիշով («Հավերժական մշուշում ...»), ապա տողի վրա կատարված աշխատանքից հետո բնորոշվել է մի պայծառ հատկանիշով.

Ծովն է երգում լայն ու խոր

Ոսկեպայծառ մշուշում... (174)

Եվ ուշադիր ընթերցողի կողմից իրողությունն այնպես է ընկալվում, որ մշուշն օբյեկտիվ իրական աշխարհին է վերաբերում, իսկ դրա բանաստեղծական ընկալումն իր մեջ մշուշային ոչինչ չունի, միանգամայն պայծառ է:

Առանց վարանելու պետք է նշել, որ քնարական հերոսի հոգեկան աշխարհի բացահայտմանը վերաբերող վերը նշված և նույնաբնույթ այլ փոփոխությունները եթե ժամանակին և պատշաճ ձևով նկատված և ներկայացված լինեին, անվերապահորեն հնարավոր կլինեին ավելի ճիշտ և հիմնավոր պատկերացում ունենալ Տերյանի բանաստեղծական աշխարհի, մասնավորապես սիմվոլիստական ուղղության նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի մասին: Համենայնդեպս, հարցն այնպես չէր ներկայացվի, թե ոչ միայն «Մթնշաղի անուրջներում», այլև 1912թ. տպագրված ժողովածուի մեջ Տերյանն «անհուն անհուսությամբ» է անցել «սև գիշերվա միջով», միշտ իրեն զգալով «ցուրտ ձմռան բուրբ ու հողմի մեջ»: Վերը ուշադրության արժանացրած և նույնաբնույթ փոփոխությունները պայմանավորող ստեղծագործական տրամադրությունն առհասարակ «Բանաստեղծությունների» առաջին հատորում զարգացման միտումն է ցուցաբերում, որը սիմվոլիզմից որոշակիորեն սահմանազատվելու արտահայտություն է: Այդ մասին անդրադարձ կլինի նաև ստորև:

Միտքը, զգացմունքը ճշտորեն արտահայտելու, խոսքի ներգործման ուժն առավել չափով զորացնելու նպատակադրումով կատարված աշխատանքն առհասարակ ամենևին էլ միակողմանի դրսևորում չունի և Տերյանի ժողովածուի մեջ էլ չի սահմանափակվում միայն քնարական հերոսին վերաբերելով:

Տերյանի ինչպես «Մթնշաղի անուրջներում», այնպես էլ «Բանաստեղծությունների» առաջին հատորում կան այնպիսի քառագործածություններ, բառերի այնպիսի կապակցումներ, որոնք եթե զրական նորմայից կատարված շեղումներ էլ չհամարվեն,

ապա պիտի որակվեն որպես խոսքի կառուցման հարցում չափից ավելի ազատության դրսևորում: Որոշ բանաստեղծությունների ձեռագրերի վրա կատարված փոփոխությունների զգալի մասն այն բանի վկայությունն է, որ Տերյանը ձգտել է հնարավորինս ազատվել խոսքի կառուցման այդպիսի եղանակից: Բերենք համապատասխան մի գործածություն:

... Մանկական մի երգ հեռու օրերում,  
Նրբին մի համբույր որ չունի անուն ... (150)

Չեռագրում փոխվել է ընդգծված արտահայտությունների տեղը, որի շնորհիվ անուն չունենալու հարցն առնչվել է ոչ թե համբույրի, այլ մանկական երգի հետ.

Նրբին մի համբույր հեռու օրերում,  
Մանկական մի երգ, որ չունի անուն ...

Երգը կարող է անուն ունենալ կամ չունենալ, իսկ համբույրին անուն ունենալ-չունենալու հարցն առնչելը խոսքի կառուցման գործում չափից ավելի ազատություն ցուցաբերելու արտահայտություն է, որից էլ հրաժարվել է Տերյանը:

Խոսքի ճշգրտման ուշագրավ արտահայտություն է նաև հետևյալը, որ վերաբերում է քնարական հերոսի հոգեկան վիճակում տեղի ունեցած դրական փոփոխության հավաստմանը դրսևորվելով նուրբ բառը սովորական նոր բառով փոխարինելով: Եղել է՝

-Շուրջս վառված է մի անուշ տազնապ,  
Մի նուրբ հուզում է սիրտըս մրրկում... (74)

Այս տողերին անմիջապես հաջորդող քառատողով ներկայացվում է այդ «նուրբ հուզումի» դրսևորումը:

Անտես զանգերի կարկաչն եմ լսում  
Իմ բացված սրտում հնչում է մի երգ.  
- Կարծես թե մեկը ինձ է երագում  
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք ...

Անտես զանգերի կարկաչը լսելը, բացված սրտում երգ հնչելը և այն, իհարկե, պիտի ներկայացվեր որպես ոչ թե նուրբ, այլ նոր հուզում. քնարական հերոսը հոգեկան նոր վիճակով է հանդես գալիս:

Ինչպես կարելի է նկատել, վերը բերված օրինակում նուրբ-ը փոխարինելով նոր-ով՝ Տերյանը խոսքի ճշտությունը գերադասել է «բանաստեղծականությունից». մակդիրը փոխարինել է սովորական որոշիչով: Մակդիրին վերաբերող մյուս խմբագրումներում էլ Տերյանը մի առանձին նախասիրություն չի ցուցաբերել բանաստեղծաշունչ բառերի նկատմամբ: Նրան հետաքրքրողը հոգեկան վիճակը, երևույթը ավելի ճշգրիտ դրսևորումով արտահայտելն է: Ահա թե իր հոգում «աղոթքի պես ապրած» աղջկան բնութագրելիս ինչպիսի ընթացք է ունեցել բանաստեղծի կատարած աշխատանքը: Նախասպես այսպես է եղել.

Իմ հուշերի մեջ ամենից պայծառ  
Իմ լքված սրտի միակ հանգրվան ... (30)

Բանաստեղծության ինքնագրում միակ բառը ջնջված է և վրան գրված է՝ լուսն.

Իմ լքված սրտի լուսն հանգրվան...

Սա էլ չի բավարարել բանաստեղծին, թեև կարող է թվալ, թե լուսն մակդիրը խոսքի անհատականությանը նպաստելու առումով անփոփոխ պիտի մնար: Երևան է եկել վերջնական տարբերակը, որն առաջին հայացքից կարող է այնքան էլ բանաստեղծական չթվալ, բայց ավելի հաջող է բնութագրում սրտի սիրելիին, որի «ժպիտը մեղմ էր ու դողդոջ», որը «չուներ խոցող թովչանքը կնոջ», «մոտենում էր որպես քաղցր քույր».

Իմ լքված սրտի մաքուր հանգրվան...

Մակդիրի գործածության հարցում մյուս դեպքերում էլ նույնպիսի մոտեցում է ցուցաբերված: Իհարկե, ավելի ճիշտ է հաճելի անցկացրած երեկոն բնութագրել հեքիաթ, քան թե երազ բառով. «Յնորք ու երազ-պայծառ իրիկուն» տողը դարձել է «Հեքիաթ ու ցնորք-պայծառ իրիկուն»: Արեգակ տենչացող բանաստեղծի հոգում խավար սփռող այն օտարուհու կամքը, որի նույնիսկ զգվանքը չարություն է պարունակել, իհարկե, պիտի բնութագրվեր ոչ թե ախտավոր («Ո՞վ ես դու, որ անգոր եմ քո դեմ և գերի ախտավոր քո կամքին»), այլ դիվալին մակդիրով («... Եվ գերի դիվալին քո կամքին», 105):

Տերյանական խոսքի նրբությանը, գեղարվեստականությանը վնասող մի երկու տող է եղել ձեռագիր ժողովածուի մեջ, որոնց խմբագրումից շահել են ոչ միայն համապատասխան բանաստեղծությունները, այլև առհասարակ խոսքի տերյանականությունը:

Ջնարական հերոսի հոգեկան աշխարհում հրաշք աղջկա առաջացրած հեղափոխումը նախապես այսպես է արտահայտված եղել.

Հրաշք աղջիկ, գիշերների թագուհի  
Ճառագայթող քո աչքերով դու եկար  
Փաթաթեցիր ինձ մազերով քո երկար ... (34)

Չես կարող հավատալ, թե ընդգծված տողը տերյանական բանաստեղծական մտածողության արտահայտությունն է: Այս տողով արտահայտված բովանդակությունը, «փաստացիության» առումով չադերսվելով իրականին, գեղարվեստական տեսակետից էլ շատ է անբանաստեղծական և հեռու տերյանականից: Մշակումից հետո ընդգծվածի փոխարեն երևան է եկել մի տող, որի շնորհիվ ապահովվել է բերված բանատողերով արտահայտված բովանդակության միաձույլ դրսևորումը, մեծապես շահել է խոսքի գեղարվեստականությունը: Ահա այդ տողը.

Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար...

Հիմնականում բանաստեղծական մտքի արտահայտման մույն որակը և դրա նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքն ենք տեսնում մակ մեկ այլ բանաստեղծության ձեռագրում.

Ուրիշ ավերի թովիչ ձայնի պես  
Քո շարժումները ուրվականային  
Մովերապաճույն իրիկնաժամին  
Անտես օղակով կապեցին ինձ քեզ ... (59)

Սա նախնական տարբերակն է, որի ընդգծված տողը փոխարինվել է սրանով.

Շղթայեցին ինձ օղակով անտես ...

Ուշարժան որոշակի ճշգրտումներ են կատարված մակ բանաստեղծությունների վերնագրերում: Նախ նշենք, որ վերնագրերի զգալի մասը ավելացված է ձեռագիր ժողովածուն պատրաստ լինելուց հետո, գուցե և տպագրության ընթացքում: Ավելորդ է նշել, թե ինչ կարևորություն ունի վերնագրերի ավելացումը բանաստեղծությունների բովանդակությունը խտացված ձևով ներկայացնելու, ընթերցողին կողմնորոշելու գործում: Նկատվում է, որ ավելացված վերնագրերից մի քանիսը համապատասխան բանաստեղծությունից վերցված բառ է կամ բառակապակցություն, որը սովորաբար հանդես է գալիս մեկից ավելի գործածությամբ՝ ծառայելով բանաստեղծությունում արտահայտվող հիմնական տրամադրության ընդգծված դրսևորմանը: Այսպես օրինակ, «Իրիկնաժամ» վերնագրված բանաստեղծությունում (28) ցուրտ ցերեկից հավիտյան դժգոհ քնարական հերոսը դիմառնաբար խոսքն ուղղում է «նուրբ իրիկնաժամին» («Դու նորից կիջնես, նուրբ իրիկնաժամ...»), «քնքուշ երեկոյին» («Դու ինձ չես խաբում, քնքուշ երեկո...»): «Վիհի եզերքին» վերնագրված բանաստեղծության մեջ (32) «Կանգնած եմ մոայլ վիհի եզերքին» տողը գործածված է և՛ առաջին, և՛ երրորդ քառատողերում՝ խտացված ձևով ներկայացնելով բանաստեղծությունում արծարծվող մոայլ տրամադրությունը: Կան ավելացված վերնագրեր էլ, որ կան քնարական բանաստեղծության տեսակի անվանում են («Մոնետ», «Էլեգիա»), կան հոգեկան զանազան զգացումների արտահայտություն («Տխրություն», «Կարոտ», «Թախիծ»):

Անցնելով վերնագրերում կատարված փոփոխություններին՝ անհրաժեշտ է հետևյալը նշել: «Գիշեր և հուշեր» շարքը նախապես վերնագրված է եղել «Հսկումի գիշեր» (91): Դժվար է վերջնական պատասխան տալ այն հարցին, թե ինչու է Տերյանը հրաժարվել հսկում բառից: Գուցե այդ հարցում այն է դեր ունեցել, որ հսկում բառի արտահայտած նշանակության մեջ առկա է մակ գիշերվա, գիշերային պաշտամունքի, գիշերն անքուն անցկացնելու գաղափարը, և եթե այդ բառը որպես լրացում հանդես գար գիշեր բառի կողքին, անխուսափելի կլիներ մակ իմաստային կրկնությունը: Կամ գուցե և այն է դեր ունեցել, որ հսկում-ի հետ եկեղեցական նշանակությամբ առնչվում է նախատոնականի, տոնին նախորդելու գաղափարը,<sup>8</sup> որը բանաստեղծի կողմից ներ-

<sup>8</sup> Ս. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 141:

դաշնակ չի դիտվել իր հոգեկան աշխարհին: Բոլոր դեպքերում կարևորն այն է, որ հսկում-ից հրաժարվելու հետևանքով հուշեր-ի երևան գալու շնորհիվ համահնչություն է ստեղծվել գիշեր բառի հետ՝ Տերյանի համար նախընտրելի շ հնչյունի, ինչպես և բ-ի գործածության համախառնումով («Գիշեր և հուշեր»), ինչպես նաև ավելի բնորոշ դրսևորումով է ներկայացվել այդ շարքում տեղ գտած բանաստեղծություններով արտահայտված տրամադրությունների և ապրումների բովանդակությունը:

Ժողովածուի ձեռագրում այնպես է ստացվել, որ երկու բանաստեղծության նույն վերնագիրն է տրվել (էջեր 112 և 125): Դրանցից առաջին բանաստեղծության վերնագիրը փոխարինվել է «Մահ» բառով (112), մի փոփոխություն, որ սինվոլիստական հայեցումով ինչքան էլ ընդունելի համարվի, մեզ անհաջող է թվում: «Մահ» վերնագիրն այնպես է հարաբերում բանաստեղծության բովանդակության հետ, ինչպես որ էթե մարդու ատամի ցավի հետ հարաբերվի նրա մահվան անխուսափելիությունը:

Վերն ուշադրության արժանացրած փոփոխություններով չի սահմանափակվում ձեռագիր ժողովածուի վրա Տերյանի կատարած աշխատանքը, բայց առայժմ դեռևս չներկայացրած փոփոխություններն էլ այնքան շատ ու բազմաբնույթ չեն: Դրանք հիմնականում վերաբերում են բանատողերի, դրանցում եղած բառերի տեղաշարժին, խոսքի բազմազանության ապահովմանը և այլն: Հողվածի ընձեռած սահմանափակ հնարավորության պատճառով բավարարվենք նրանով, որ փոփոխությունը պայմանավորող յուրաքանչյուր նկատառումին վերաբերող մի երկու փոփոխություն ուշադրության արժանացնենք:

Ուշագրավ է բառերի շարադասությունը շրջուն դարձնելու նպատակով կատարված աշխատանքը, որը վերաբերում է ինչպես ստորոգյալի, այնպես էլ նախադասության այլ անդամների առաջադասմանը: Այդպիսի շարադասումը որոշակիորեն նպաստել է խոսքի արտահայտչականության գորեղացմանը: Բերենք օրինակներ. «Ինձ միշտ այրում է մի անհագ թախիծ», դարձել է «Ինձ այրում է մի անհագ թախիծ» (38), «Ուրիշ լույսեր կրվառեն քո հոգում», դարձել է «Կրվառեն ուրիշ լույսեր քո հոգում» (89), «Մի ցավ է անվերջ իմ սիրտը ճնշում», դարձել է «Անվերջ մի ցավ է իմ սիրտը ճնշում» (32), «Կրգտնեն ուղին քո մենավոր տան», դարձել է «Կրգտնեն ուղին մենավոր քո տան» (64), «Դու հրաշքով այսօր եկ», դարձել է «Հրաշքով դու այսօր եկ» (130):

Միայն մեկ դեպքում փոխված է ոչ թե բառերի, այլ տողերի շարադասումը:

Կյանքը լռում է, աղմուկը մեռնում  
 Մի անծանոթ ձեռք նուրբ մթնշաղում  
Իմ սրտում ոսկե անձրև է մաղում  
Անցյալն ու ներկան իրար է խառնում... (73)

Փոխվել է ընդգծված տողերի շարադասությունը, որի շնորհիվ քնարական հերոսի հոգեկան աշխարհում կատարվող փոփոխությունը («Իմ սրտում ոսկե անձրև է մաղում») ներկայացնում է որպես անցյալում և ներկայում կատարված փոփոխության հետևանք և դրանով էլ կարևորվում, ընդգծվում է:

Այժմ համառոտակի անդրադառմաք այն փոփոխություններին, որոնք կատարվել են որոշ բանաստեղծություններում տեղ գտած անհարկի կրկնությունները վերացնելու, խոսքն ավելի բազմազան դարձնելու նպատակով: «Մեղքի մթին քարայրից» բանաստեղծության մեջ երկու անգամ գործածված է եղել մուք բառը («մուք ցանկություն», «մուք խորշ»), և էթե ինքնագրում եղած «Սև գիշերով ինձ կանչիր Քո մուք խուցը և այնտեղ Հեզ մարմինըս չար տանջիր...» (125) տողում պահպանվեր ընդգծված բառը, անհարկի կրկնությունն ակնհայտ կլիներ: Բանաստեղծն ինքնագրում այսպիսի փոփոխություն է կատարել, որից շահել է խոսքի բազմազանությունը:

Սև գիշերով ինձ կանչիր  
 Ամայի խուց և այնտեղ... (125)

Այսպիսով ակնհայտ է «Բանաստեղծությունների» առաջին հատորի ձեռագրի վրա Վ. Տերյանի կատարած ստեղծագործական աշխատանքի ուսումնասիրման անհրաժեշտությունն այնպիսի կարևոր հարցերի մասին ավելի հավաստի և հիմնավոր պատկերացում ունենալու համար, ինչպիսիք են բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայում կատարված աշխատանքը հնարավորինս ամբողջական ձևով ներկայացնելը, քնարական հերոսի հոգեկան աշխարհում դրսևորվող տեղաշարժերը, գեղար-

վեստալկան խոսքն անթերի կատարելության հասցնելը, որոշ բանաստեղծությունների մասին գոյություն ունեցող կարծիքների ճշգրտումը և այլն:

**РАБОТА ВАГАНА ТЕРЬЯНА НАД РУКОПИСЬЮ I ТОМА  
"СТИХОТВОРЕНИЙ"**

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *С. Мелконян* \_\_\_

В статье впервые объектом исследования становится работа В.Терьяна над рукописью I тома "Стихотворений". Исследование дает более достоверные и обоснованные ответы на такие важные вопросы, как вопрос о творческой лаборатории автора, проблемы перемен в духовном мире лирического героя, доведение художественной речи до безупречного совершенства, уточнение бытующих мнений о некоторых стихотворениях и т.д.

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ  
ԿԱԴԱՊԱՐՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Հին հայերենն ունեցել է հարուստ և ճկուն բառապաշար, ինչը միաժամանակ բառակազմական կենսունակ հնարավորություններ է ընձեռել: Այդ հանգամանքը նպաստել է մեր լեզվի բառապաշարի հարստացմանը, այդ թվում և գիտական ոլորտի բառերի, մանավանդ երբ փոխառվում էին տերմինային բառերի նշանակությունները և սեփական լեզվական միջոցներով ստեղծվում համապատասխան բաղադրություններ:

Տերմինային բաղադրությունների քննությունը, դրանց բառակազմական կաղապարների առանձնացումը տերմինաբանության կարևոր խնդիրներից են: Իսկ «բառակազմական միավորների մեջ փոխառյալ տարրերի առկայությունը, բառակազմական կաղապարների պատճենումը, ոչ գործուն բառակազմական միավորների գիտակցված ակտիվացման և արհեստականորեն ստեղծված բառակազմական տարրերի ներմուծման փաստը, անհատական բառատեղծական լայն հնարավորությունները թույլ են տալիս ենթադրելու, որ բառային մակարդակը (այդ թվում բառակազմական համակարգը) լեզվական այլ մակարդակների համեմատ՝ աչքի է ընկնում առավել շարժունությամբ և «թափանցելիությամբ» արտալեզվական հանգամանքների հետ ավելի որոշակի կերպով»:<sup>1</sup> Այս փաստն ապացուցում են լեզվական իրողությունները, իսկ ստեղծված «բառակազմական նորամուծությունները թե՛ կաղապարների և թե՛ նյութական միավորների առումով մտան լեզվի մեջ և պահպանվեցին որպես նրա օրգանական մասը»:<sup>2</sup>

Բառակազմությունը՝ որպես լեզվական համակարգի միջակա մակարդակ, իրար է կապում բառապաշարը և քերականությունը: Մի կողմից այն նպաստում է բառակազմի համալրմանը, երբ լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի հիման վրա ստեղծվում են նոր բառեր, իսկ մյուս կողմից՝ բառակազմական ածանցները, ավելանալով բառին, նրան հարողում են որոշակի քերականական իմաստ՝ դրանով իսկ ընձեռելով անհրաժեշտ վերլուծություններ կատարելու հնարավորություն:

Բառակազմության հիմնական հասկացությունը բառն է: Այստեղ նույնացնում ենք բառ և տերմին հասկացությունները, քանի որ կառուցվածքային առումով նրանք դիտվում են նույն հարթության մեջ:

Այս դեպքում խոսքը վերաբերում է բաղադրյալ բառերին, որոնք, բաղկացած լինելով բառակազմական նվազագույն միավորներից, ենթարկվում են տրոհման:

Գրաբարում փիլիսոփայական տերմիններն արտահայտվում են պարզ կամ արմատական և բաղադրական կաղապարներով:

***Պարզ կամ արմատական կաղապարներ***

Պարզ կամ արմատական կաղապարներ ունեն այն բառերը, որոնք բաղկացած են մեկ հիմնական ձևային:

Մեր ընտրանքում եղած փիլիսոփայական տերմինների շարքում պարզ կամ արմատական կաղապարները շատ չեն: Ինչպես՝ *ազգ, աշխարհ, արմատ, բան, գոյ, է, հաստ, հոգի, մարմին, նիւթ, որակ, պատճառ, սկիզբ, տարր* և այլն: Պարզ տերմինները բառակազմական տեսակետից անտրոհելի են, թեպետ, ինչպես նշել է Գևորգ Չախուկյանը, «բառերը իմաստապես անվերլուծելի միավորներ չեն: Լեզվի զարգացման յուրաքանչյուր տվյալ փուլում լինում են՝ ա)բառեր, որոնք այդ լեզվով խոսողների գիտակցության մեջ հանդես են գալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմականորեն դրանք կարող են բաղադրի լինել»<sup>3</sup>: Սա նշանակում է, որ ծագմամբ և պատմականորեն բոլոր բառերը կազմությամբ պարզ չեն: Պարզ տերմիններին բնորոշ ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք բառակազմական բաղադրիչների այլևս չեն բաժանվում, բայց որպես այդպիսին մասնակցում են բաղադրյալ տերմինների ստեղծմանը: Ինչպես՝ *սկիզբ-անսկիզբ-սկզբնաւոր-նախասկիզբ-անսկզբնակից*,

<sup>1</sup> Լ. Հ ռ վ ս փ յ ա ն, *Գրաբարի բառակազմություն*, Եր., 1987, էջ 362-363:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 363:

<sup>3</sup> Գ. Չ ա հ ու կ յ ա ն, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Եր., 1974, էջ 150:

գոյ-գոյակ-ինքնագոյ-ինքնագոյակ-անգոյ-չգոյ, մարմին-մարմնատր-մարմնապէս, նիւթ-նիւթականք- աննիւթ-աննիւթական և այլն:

Ածանցական կաղապարներ

Տվյալ դեպքում մենք գործ ունենք հիմքի և ածանցի քննության հետ:

«Հիմք է կոչվում բառի յուրաքանչյուր իմաստակիր հատված, որից առանձնացվում է տվյալ եզրային՝ քերականական ձևությոնը, թեև այդ հատվածը ինքնին կարող է նույնպես քերականական ձևությոններ պարունակել»<sup>4</sup>, իսկ «ածանցման հիմնակաղապարն է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևությի բաղադրությունը»<sup>5</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հիմքը բառակազմական դասերի մեջ հանդես է գալիս որպես բառի հիմնական և անփոփոխ մաս և, միաժամանակ, հիմնական և երկրորդական ձևությոնների հետ զուգորդվելու դեպքում կարող է ստանալ հատուկ ձևավորում:

Փիլիսոփայական ածանցավոր տերմինները բավական մեծ թիվ են կազմում գրաբարում:

Արմատական տերմինները՝ որպես հիմնական ձևությոններ, ստանում են զանազան ածանցներ, որոնք որոշակի են դարձնում նրանց արտահայտած նշանակությունը: Այդ տերմինների բառակազմական նկարագիրը պատկերացնելու համար մենք խմբավորել ենք դրանք ըստ հիմքի կազմության:

Փիլիսոփայական տերմինների ձևավորման գործում կարևորվում է հունարան դպրոցի դերը, ուստի առաջին հերթին առանձնացնենք այն տերմինները, որոնք ստեղծվել են հենց հունարան դպրոցի կերտած նախածանցներով՝ առաջնորդվելով վերոնշյալ մոտեցմամբ: Այսպես՝

ա) Պարզ կամ արմատական հիմքեր. «սրանք միաձևությ են, համընկնում են արմատի հետ և բառակազմական տեսանկյունից անտարրալուծելի են. դրանք ածանց են ստանում կամ սկզբից կամ վերջից»<sup>6</sup> (տվյալ դեպքում միայն սկզբից), ինչպես՝ ապագայ, ապառնի, բացարձակ, ընդունակ, նախասկիզբ, ներկայ և այլն:

բ) «Ածանցող հիմքը ածանց է առնում սկզբից և վերջից»<sup>7</sup>. այսօրինակ կառույցները մեծ թիվ են կազմում փիլիսոփայական տերմինների շարքում, ինչպես՝

ապաբանութիւն	ընդհանրական	ներշնչական
առածգական	հակադրութիւն	ներշնչանք
առասացութիւն	հակակայութիւն	ստորադրութիւն
բաղադրութիւն	հակառակութիւն	ստորասացութիւն
բաղանունութիւն	հակասութիւն	ստորասութիւն
բաղդասութիւն	նախագիտութիւն	վերաբանական
բաղխոհական	նախախնամութիւն	վերաբերութիւն
բացատրութիւն	ներանձնական	տրամաբանութիւն
բացերևութիւն	ներգործական	տրամախոհութիւն
ենթակայութիւն	ներդաշնակութիւն	տրամախօսութիւն
ենթակացութիւն	ներհմտական	և այլն:

գ) Բաղադրական հիմքերն իրենց կազմությամբ լինում են սերող և բաղադրող:

Երբ բաղադրական հիմքին ավելանում է ածանց կամ այլ բաղադրական հիմք, հիմքը սերող է, իսկ բաղադրող հիմքն ավելանում է սերող հիմքին՝ կազմելով նոր բաղադրություն: «Նախածանցավոր բաղադրությունների մեջ հաճախ դժվար է լինում որոշել, թե որն է սերող հիմքը՝ նախածանցող՞, թե՞ առանց նախածանցի մասը, ըստ որում շատ դեպքերում հնարավոր է թե՛ մեկը, թե՛ մյուսը»<sup>8</sup>: Էդ. Աղայանն առաջարկում է իր լուծումը. «Այն բոլոր դեպքերում, երբ մեր արդի լեզվում առկա է նախածանցով

<sup>4</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 159:  
<sup>5</sup> Լ. Հ ն վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., էջ 158:  
<sup>\*</sup> Հունարան դպրոցի կերտած նախածանցներն են՝ ապ-, աւել-, առ-, ատր-, արդ-, արտ-, բակ-, բաղ-, բար-, բաց-, գաւ-, գեր-, դեր-, ենթ-, զկնի, զով-, ընդ-, ըստ-, թափ-, թեռ-, ին/ըն-, խուն-, կանուխ, կար, հակ-, հիւ-, մակ-, մատ-, մուշտ-, յաղագս, յար-, յետ-, նախ-, ներ-, նը-, շաղ-, շար-, պատ-, պար-, ջոկ-, ստոր-, վաղ-, վսան, վեր-, տար-, ունջ-, փար-, փոխ-, քան-, քող-:  
<sup>6</sup> Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 151:  
<sup>7</sup> Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 380:  
<sup>8</sup> Էդ. Ա դ ա յ ա ն, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 249:

կազմված բառի առանց նախածանցի ձևը, սերող հիմքը պետք է համարել նախածանցին հաջորդող մասը»,<sup>9</sup> իսկ «...նախածանցավոր մասը պետք է համարել սերող հիմք, եթե առանց նախածանցի կազմությունը գոյություն չունի»:<sup>10</sup> Ընդունելով Էդ. Աղայանի այս մոտեցումը՝ առանձնացնենք մի քանի տերմիններ՝ երևույթը տեսանելի դարձնելու համար, ինչպես՝ բաղխոհական, նախագիտություն տերմիններում խոհական և գիտութիւն բաղադրիչները լեզվում գոյություն ունեն որպես անկախ բառեր, իսկ ընդհանրական և հակադրութիւն տերմիններում սերող հիմքերն են ընդհանուրն ու հակադիրը:

Նախածանցներից առավել կենսունակ են նաև ան- ժխտական նախածանցով կազմված փիլիսոփայական տերմինները, ինչպես՝

- |               |                    |
|---------------|--------------------|
| ա) Պարզ հիմք՝ | բ) Ածանցող հիմքեր՝ |
| անարար        | անեղծական          |
| անարուեստ     | անիսկական          |
| անգոյ         | անիրատւթիւն        |
| անմարմին      | անլիութիւն         |
| անմիտ         | անկատարութիւն      |
| անսկիզբ       | անմահութիւն        |
| անստեղծ       | անմտութիւն         |
| անօգտակար     | աննիւթական         |

Զ- ժխտական նախածանցով տերմինները համեմատաբար սակավ են, ինչը պայմանավորված է այդ ածանցի բառակազմական անարտադրողականությամբ, ինչպես՝ չգոյ, չէական և այլն, որոնք պարզ հիմք ունեցող տերմիններ են:

Վերջածանցավոր տերմինները լայն տարածում ունեն ածանցավոր կազմությունների շարքում:

Հաճախադեպ են հատկապես -ութիւն, - սկան, - աւոր վերջածանցներով կազմված ձևերը, ինչպես՝

- |                   |                      |                         |
|-------------------|----------------------|-------------------------|
| ա) Պարզ հիմք՝     | բ) Ածանցող հիմք      | ե) Բայահիմք՝            |
| ազատութիւն        | ընդհանրական          | գոյացութիւն             |
| գոհութիւն         | գ) Ածանցական հիմք՝   | իմացութիւն              |
| ժամանակական       | ազատականութիւն       | զ) Դերբայական հիմք՝     |
| իմաստութիւն       | բանատրութիւն         | ազդողական(ն)            |
| ինքնութիւն        | դիտատրութիւն         | աճելութիւն              |
| խոհական           | խոհականութիւն        | ընտրողութիւն            |
| մասնական          | դ) Բարդ հիմք՝        | իրողութիւն              |
| մտաւոր            | երևակայութիւն        | կարողութիւն             |
| շնչաւոր           | ինքնիշխանութիւն      | է) Հնչյունավորված հիմք՝ |
| սկզբնաւոր         | ինքնագոյական         | կատարելութիւն           |
| ստեղծական և այլն: | խելամտութիւն և այլն: | ճշմարտութիւն և այլն:    |

**Բաղադրյալ կաղապարներ**

Բառաբարդումը կենսունակ բառակազմական եղանակ է: Այդ կաղապարով լեզվում կերտվում են բազմաթիվ նոր բարդություններ՝ բառային և տերմինային արժեքներով: Իհարկե, ածանցման համեմատությամբ բառաբարդումը, որպես տերմինակազմության միջոց, չի դրսևորում իր բոլոր հնարավորությունները, ինչպես, օրինակ, տերմինակազմությանը չեն մասնակցում կրկնավոր, կցական, հատվածական և հարադրական բարդությունները (եթե անգամ գոյություն ունեն, մեզ հանդիպած տերմինների մեջ այսօրինակ կառույցներ չեն հանդիպել):

Մեր ընտրանքում եղած փիլիսոփայական տերմինների շարքում գերակշռում են բուն կամ իսկական բարդությունները՝ հատկապես բարդ հիմք ունեցող հոդակապով կաղապարները:

Ինչպես արդեն նշել ենք, բաղադրական հիմքերը բաժանվում են երկու խմբի՝ սերող և բաղադրող. բարդ փիլիսոփայական տերմինների շարքում այս երկու տեսակներն էլ դրսևորվում են:

<sup>9</sup> Էդ. Աղայան, *նշվ. աշխ.*, էջ 249:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 250:

Առանց անհանգի բաղադրական հիմքեր քիչ են հանդիպում: Ինչպես՝  
*ինքնագոյ* (բաղադրող հիմք), *ողջախոհ* (սերող հիմք) և այլն:

Ածանցավոր տարբերակներն ավելի հաճախադեպ են՝

*անսկզբնակից* (բաղադրող հիմք), *զգաստասիրություն* (սերող հիմք), *ընդդիմակա-  
 յություն* (սերող հիմք), *իմաստասիրություն* (բաղադրող հիմք), *խելամտություն* (բաղադրող  
 հիմք), *հաւաքարանություն* (բաղադրող հիմք), *հետևաբանություն* (բաղադրող հիմք),  
*յարատևություն* (սերող հիմք), *յարակայություն* (սերող հիմք), *շարաբանություն* (բաղա-  
 դրող հիմք), *սնահառություն* (բաղադրող հիմք), *անձնիշխանություն* (անհողակապ կա-  
 ռույց, սերող հիմք) և այլն:

Եվ այսպես, ինչպես նկատեցինք, փիլիսոփայական տերմինները գրաբարում  
 հանդես են գալիս հետևյալ բառակազմական կաղապարներով՝

ա) Ածանցական կաղապարներ, որոնք ունեն պարզ, ածանցող և բաղադրող հիմ-  
 քերով բաղադրիչներ,

բ) Բաղադրյալ կաղապարներ, որոնց մեջ իշխում են հողակապով կառույցները:

Փիլիսոփայական տերմինների շարքում ածանցավոր կազմությունները էական  
 դեր ունեն և գերակշռող են: Նրանց մեջ որոշակի կշիռ ունեն հունարան նախաձանցնե-  
 րով կազմությունները: Մեր ընտրանքում եղած փիլիսոփայական տերմինների շարքում  
 հունարան դպրոցի ստեղծած բոլոր նախաձանցներով կառույցներ չհանդիպեցին. գոր-  
 ծուն էին հատկապես ապ-, բաղ-, բաց-, ենթ-, հակ-, նախ-, ներ-, վեր-, ստոր-, տրամ-  
 նախաձանցները:

Ան- նախաձանցը, -ություն, -ական, -աւոր վերջածանցներն իրենց կենսունակու-  
 քյունը դրսևորեցին մաս տերմինակազմության մեջ, սակավաթիվ էին չ- նախաձանցով  
 կազմությունները:

Կային մաս բայահիմք, դերբայական և հնչյունափոխված հիմքեր ունեցող տեր-  
 միններ, ինչպես մաս հանդիպեցին այնպիսի կառույցներ, որոնք բառակազմական ա-  
 ռումով տարբերվում են վերոնշյալներից, սակայն նրանց սակավությունը շարքեր կազ-  
 մելու հնարավորություն առանձնապես չի ընձեռում, ինչպես, օրինակ, -եալ վերջավո-  
 րությամբ ավարտվող տերմինները՝ գիտացեալ, էակացեալ, -ում(ն) վերջավորությամբ  
 տերմիններ՝ բաղիաւաքումն, տարորոշումն, -բար, -պէս, (ա)գոյն վերջածանցներով  
 տերմիններ՝ անմիջակաբար, մարմնապէս, ներհակապէս, ներհակագոյն և այլն:

Բարդ տերմինները հիմնականում հողակապով կառույցներ են՝ բաղադրող և սերող  
 հիմքերով:

Ներկայացնելով փիլիսոփայական տերմինների բառակազմական կաղապարնե-  
 րը՝ նպատակ ունեինք բացահայտելու վերջիններիս կառուցվածքային առանձնահատ-  
 կությունները և բառակազմական այս կամ այն միջոցի գործածականության հաճա-  
 խականությունն այս ոլորտում՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ  
 լեզվական օրինաչափություններով:

## СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФОРМЫ ФИЛОСОФСКИХ ТЕРМИНОВ В ГРАБАРЕ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_

\_\_\_\_ *Г. Мнацаканян* \_\_\_\_

Рассмотрение терминологического состава языка, разделение словообразо-  
 вательных форм-один из важнейших вопросов терминологии.

Анализ словообразования философских терминов дает возможность опреде-  
 лить их структурные особенности, частность того или иного словообразова-  
 тельного средства в этой сфере.

## Հրանուշ ՉԱԲՅԱՆ

### ԿՐԿՆԱՍՏԵՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քերականական կարգերի զարգացումն ու փոփոխությունները լեզուների պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցող երևույթներ են, որոնք ցայտուն կերպով դրսևորվում են նաև հայերենում: Բայական կարգերի թվում սեռը, լինելով կենդանի, գործուն կարգ, զարգացում է ապրում: Հայերենի բայը տարբերվում է թեքվող մյուս խոսքի մասերից իր բազմաձևությամբ և բազմիմաստությամբ: Նախադասության մեջ այն հանդես է գալիս տարբեր գործառույթներով, բայածանցների և դիմային վերջավորությունների միջոցով արտահայտում ժամանակային բազմազան նրբերանգներ, դեմքեր, կերպեր և այլ հատկանիշներ: Փաստերը վկայում են, որ ընդհանրապես հայերենի թեքման համակարգի զարգացման մեջ նկատվել է բառի քերականական իմաստի և ձևի համապատասխանության, թեքման համակարգի պարզեցման, ձևային բազմիմաստության վերացման ուժեղ միտում, որը զուգակցվել է խոսքն ավելի արտահայտիչ և գործուն դարձնելու մշտական պահանջին: Նոր միջոցների ու ձևերի ստեղծման ու տարածման բնագավառում մեծ դեր է կատարել համաբանությունը, որի առանձին դրսևորումները տարածվել կամ սահմանափակվել են համաձայն պատմական այն պայմանների, որոնց մեջ զարգացել է հայերենը:

Քերականական տարաբժեքությունից մենարժեքության անցումը ակնառու է ոչ միայն խոսքիմասային, այլև բայերի սեռային փոխանցումներում:

Այս անցումը, ըստ ընձեռված փաստերի ուսումնասիրության, պայմանավորված է երկու հանգամանքով՝ *իմաստափոխությամբ և մասնիկավորմամբ*:

Այս հանգամանքներն են գործել նաև բայական համակարգի պատմական զարգացման մեջ, ինչի հետևանքով գրաբարում կրկնասեռություն կամ սեռային զուգահեռություն ունեցող հարյուրավոր բայեր անցել են միասեռության:

Համապատասխան փաստական նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ գրաբարյան կրկնասեռ բայերի մեծամասնությունը արդի հայերենում կորցնում է քերականական տարաբժեքությունը և բնութեքով միասեռ է. հանդես է գալիս կամ որպես ներգործական սեռի, կամ որպես չեզոք սեռի բայ: Որոշ բայեր, սակայն, արդի հայերենում պահպանում են գրաբարյան կրկնասեռությունը. առանց ձևական փոփոխություն կրելու՝ հանդես են գալիս մերթ ներգործական, մերթ չեզոք սեռի հատկանիշներով:

Այդ բայերից շատերը արդի հայերենում պահպանել են նույն գրաբարյան իմաստները. ինչպես, օրինակ, անձրևել բայը ներգործական իմաստով գործածվելիս նշանակում է «իբրև անձրև տեղալ», չեզոք սեռի իմաստով գործածվելիս՝ «անձրև գալ» (ՆՀԲ, Ա, 197, ԳԲ, Ա, 117, ՀԲԲ, Ա, 149). *Ձցողն հայրաբուխ անձրևեցեր: Մի լիցի ինձ ամպել և ոչ արձրևել*: Արդի հայերենում նույն իմաստներով պահպանել է կրկնասեռությունը (ԱՀԲԲ, Ա, 71):

Աքացել (ՆՀԲ, Ա, 398, ԳԲ, Ա, 235, ՀԲԲ, Ա, 299, ԱՀԲԲ, Ա, 149), գորավարել (ՆՀԲ, Ա, 756, ԳԲ, Ա, 453, ԱՀԲԲ, Ա, 379), գեղապարել (ՆՀԲ, Ա, 535, ՀԲԲ, Ա, 420, ԱՀԲԲ, 225), ըղձալ (ՆՀԲ, Ա, 761, ԳԲ, Ա, 457, ՀԲԲ, Ա, 51, ԱՀԲԲ, Ա, 398), սուլել (ՆՀԲ, Բ, 731, ԳԲ, Բ, 466, ԱՀԲԲ, Բ, 1340), շնջալ, (ՆՀԲ, Բ, 487, ԳԲ, Բ, 320, ԱՀԲԲ, Բ, 1114), խոկալ (ՆՀԲ, Ա, 957, ԳԲ, Ա, 576, ՀԲԲ, Բ, 280, ԱՀԲԲ, Ա, 591), կքել (ՆՀԲ, Ա, 1140, ԳԲ, Ա, 683, ՀԲԲ, Բ, 511, ԱՀԲԲ, Ա, 786), դասակցել (ՆՀԲ, Ա, 598, ԳԲ, Ա, 352, ՀԲԲ, Ա, 491, ԱՀԲԲ, Ա, 277), կրճել (ՆՀԲ, Ա, 1137, ԳԲ, Ա, 681, ՀԲԲ, Բ, 508, ԱՀԲԲ, Ա, 778), խոտորել (ՆՀԲ, Ա, 970, ԳԲ, Ա, 583, ՀԲԲ, Բ, 288, ԱՀԲԲ, Ա, 601), տազնապել (ՆՀԲ, Բ, 837, ԳԲ, Բ, 535, ՀԲԲ, Դ, 360, ԱՀԲԲ, Բ, 1403), տաժանել (ՆՀԲ, Բ, 837, ԳԲ, Բ, 535, ՀԲԲ, Դ, 361, ԱՀԲԲ, Բ, 1404), ճարտարախոսել (ՆՀԲ, Բ, 176, ԳԲ, Բ, 125, ՀԲԲ, Գ, 204, ԱՀԲԲ, Բ, 939), մարգարեանալ (ՆՀԲ, Բ, 217, ԳԲ, Բ, 153, ՀԲԲ, Գ, 271,

ԱՀԲԲ,Բ,976), քահանայապետել (ՆՀԲ,Բ,968, ԳԲ,Բ,614, ՀԲԲ,Դ,535, ԱՀԲԲ, Բ,1545), ավագակել (ՆՀԲ,Ա,388, ԳԲ,Ա,229, ՀԲԲ,Ա,290, ԱՀԲԲ,Ա,118) և այլն:

Որոշ բայեր արդի հայերենում ձեռք են բերել նոր իմաստներ, որոնք չեն փոխել բայերի քերականական հատկանիշները, և նոր իմաստները բայերի սեռային պատկանելության մեջ տեղաշարժեր չեն կատարել:

Գրաբար	Արդի հայերեն
<p><b>Վկայել</b> – նր. չր.                      1. Վկա լինել, վկայություն տալ, հաստատել մի բանի ճշմարտությունը:                      2. Իբրև վկա նահատակվել:                       (ՆՀԲ,Բ,826,                      ԳԲ,Բ,527,                      ՀԲԲ,Դ,347)</p>	<p>նր. չր.                      1. Որպես ականատես հաստատել որևէ բան:                      2. Արտահայտել որևէ բան:                      3. (իրավք.) Որպես վկա դատարանում ցուցմունք տալ, իր տեսածները հայտնել:                      4. Հաստատել, վկայել:                      5. Որևէ բանի ապացույց լինել:                      6. փխք. Նահատակվել:                      7. (կրոն) Մարտիրոսանալ:                      (ԱՀԲԲ,Բ,1394)</p>
<p><b>Խարդախել</b> – նր. չր.                      1. Նենգել, խորամանկել, չարիք նյութել:                      1. Խարել:                       (ՆՀԲ,Ա,930,                      ԳԲ,Ա,560,                      ՀԲԲ,Բ,249)</p>	<p>նր. չր.                      1.Կաթին, գինուն և այլ նյութերի մեջ ուրիշ անարժեք նյութ խառնել:                      2.Կեղծել:                      3.Դավել:                      4.Ձեղծել, փչացնել:                      5.Խարդախ միջոցներ գործադրել:                      (ԱՀԲԲ,Ա,570)</p>
<p><b>Իշխել</b> – նր. չր.                      1.Իշխան լինել, իշխանությունը վարել:                      2.Տիրել, իր կամքին ենթարկել:                      3.Համարձակվել, իրավունք ունենալ:                       (ՆՀԲ,Ա,866,                      ԳԲ,Ա,521,                      ՀԲԲ,Բ,168)</p>	<p>նր. չր. –                      1. Իշխանությունը վարել:                      2. Տիրել, իր կամքին ենթարկել:                      3. Բռնություն գործադրել:                      4. փխք. Տոգորել:                      5. փխք. Չզացմունքներին տիրել:                      6. փխք. Կլանել, դավել:                      7. Առաջնակարգ դիրք գրավել:                      8. փխք. Բնորոշ, հատուկ լինել:                      9. փխք. Բարձր լինել, բարձրանալ:                      10. (հնց). Համարձակվել, կարողանալ:                      (ԱՀԲԲ,Ա, 502)</p>
<p><b>Տիրել</b> նր. չր. –                      1. Տեր դառնալ, տիրանալ:                      2. Իր տիրապետությանը ենթարկել, նվաճել:                      3. Չորանալ, սաստկանալ:                      4. Ազդել, վնասել:                       (ՆՀԲ,Բ,878,                      ԳԲ,Բ,561,                      ՀԲԲ,Դ,416)</p>	<p>նր. չր.-                      1. Գրավել, նվաճել:                      2. Իշխել, թագավորել:                      3. Շրջապատի նկատմամբ բարձր դիրք ունենալ:                      4. Որևէ բանի նկատմամբ ազդեցություն ունենալ:                      5. փխք. Տարածվել, իշխել:                      6. փխք. Գերիշխել:                      7. Իր կողմը գրավել:                      8. փխք. Չապել:                      9. Հրապուրել, գրավել:                      10. Ամբողջ էությունը պաշարել:                      11. փխք. Համակել, Որևէ վիճակ իշխել:                      12. Տեր դառնալ, գրավել:                      13.Որևէ բան որպես սեփականություն ունենալ:                      14 .Մովորել, յուրացնել:                      15. Գործել, գորել:                      (ԱՀԲԲ ,Բ,1444)</p>

<p><b>Կանխել</b> – նր. չբ.                  1.Առավոտը կանուխ ելնել:                  2.Աճապարել, փութով, արագ շարժվել:                  3.Շտապել՝ ուրիշից առաջ մի բան անել, առաջ անցնել:                  4.Շուտ կամ վաղ անել, շտապել ասել:                  (ՆՀԲ,Ա,1050,ԳԲ,Ա,630,ՀԲԲ,Բ,384)</p>	<p>չբ.                  1.Մի բան ուրիշից առաջ անել:                  2.Հարկ եղածից շուտ սկսվել:                  3.Շտապել մի բան անել:                  նր.- Նախօրոք ձեռնարկած միջոցառումների շնորհիվ վերացնել սպառնալիքը, որևէ բանի իրագործելուն խանգարել:                  (ԱՀԲԲ,Ա, 688)</p>
--	--

Կան բայեր, որոնք կորցրել են գրաբարյան այս կամ այն նշանակությունը, բայց ոչ կրկնաստեռությունը: Կարդալ կրկնաստեռ բայն արդի հայերենում չի պահպանել գրաբարյան «ձայնել, աղաղակել, օգնություն կանչել», «ձայն տալ, հրավիրել», «անունը տալ, անուն դնել» իմաստները (ՆՀԲ,Ա,1067,ԳԲ,Ա,639, ՀԲԲ ,Բ,404, ԱՀԲԲ,Ա,704): *Արի կարդալ գտեր աստուած քո: Չայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարավանին: Արդ ի ժամանակին յայնմիկ մի ոմն արդար գտեալ յարդարացեալ տոհմեն, որում անուն Նոյ անուն կարդացեալ: Կարդացին նորա զբահանայսն և տէրս: Աղաչել բայն արդի հայերենում չի պահպանել «աղոթել» (ՆՀԲ,Ա,34, ԳԲ,Ա,28), արգահատել բայը՝ «խնդրել» նշանակությունը (ՆՀԲ,Ա,343, ԳԲ,Ա,703), բայց գրաբարյան կրկնաստեռությունը պահպանել են երկուսն էլ:*

Արդի հայերենում գրաբարյան կրկնաստեռությունը պահպանած շատ բայեր իրենց հիմնական իմաստներով ներգործական են, բայց գործածվելով որևէ այլ իմաստով՝ հանդես են գալիս որպես չեզոք սեռի բայ, ինչպես, օրինակ, լուսավորել բայը՝ «լույս տալ, արձակել», «այրվելով՝ վառվելով լույս սփռել» (ԱՀԲԲ,Ա,548), շաղել բայը՝ «մանրամաղ անձրև գալ» (ԱՀԲԲ,Բ,1096), տոչորել բայը՝ «բուռն կարոտից տառապել» (ԱՀԲԲ,Բ,1456) իմաստներով և այլն:

Դիշտ այդպես էլ մի շարք չեզոք սեռի բայեր, փոխաբերաբար գործածվելով ընդունում են ուղիղ խնդիր, ինչպես, օրինակ, ակնարկել բայը «մի բան ցանկանալ» իմաստով գործածվելիս (ԱՀԲԲ,Ա,17), հոգալ բայը՝ «մեկին խնամել» (ԱՀԲԲ,Ա,883), «աղաղակել» բայը՝ «բարձր ձայնով մի բան ասել» (ԱՀԲԲ,Ա,21) իմաստով գործածելիս և այլն:

Կրկնաստեռությունը տարածամանկյա իրողություն է և դրսևորվում է նաև ժամանակակից հայերենում: Շատ բայեր, գրաբարում միասեռ լինելով, արդի հայերենում ձեռք են բերում նոր իմաստ (ներ), որոնք պայմանավորում են տվյալ բայի գործածությունը նաև երկրորդ քերականական սեռով: Գրաբարում ներգործական սեռի բայը կարող է ձեռք բերել չեզոք սեռի իմաստ, չեզոք սեռի իմաստ ունեցող բայը՝ ներգործական սեռի նշանակություն:

**Գեղզեղել** բայը գրաբարում ներգործական սեռի բայ է՝

1. Գեղզեղանքով երգել, դայլայլել:

2. Գեղեցիկ զարդարել իմաստներով (ՆՀԲ,Ա,536, ԳԲ,Ա,313): *Անդադար գեղզեղել զբարբառն առաել քան զերգս արուեստականաց:* Արդի հայերենում բայը կրկնասեռ է՝ 1 Կլկլացնելով, ձայնը խաղացնելով երգել, դայլայլել: 2. Գեղզեղանքով հնչել իմաստներով (ԱՀԲԲ,Ա,226):

**Չանգակել** բայը գրաբարում ներգործական սեռի բայ է, ունի 1.Չանգակներով, բոժոժներով զարդարել իմաստները (ՆՀԲ,Ա,712, ԳԲ,Ա,428): *Բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոսի փռնկալոյն մանեակս զանգակեայս:* Արդի հայերենում բայը կրկնասեռ է՝ 1.նր. Չանգակներով, բոժոժներով զարդարել: 2.չր. Չանգակի մաման հնչել իմաստներով (ԱՀԲԲ,Ա,361):

Համանման օրինակներ ներկայացնենք աղյուսակի ձևով:

	Գրաբար	Արդի հայերեն
<p><b>Առձայնել</b> – նր.                  (ՆՀԲ,Ա,307,</p>	<p>1. Չայն տալ, բարձր ձայնով կոչել, կանչել, վերաձայնել:                  2. Անուն տալ, անվանել,</p>	<p>նր. –                  1.Չայն տալ, բարձր ձայնով կանչել, արտասանել:</p>

ԳԲ,Ա,182, ՀԲԲ,Ա,229)	հորջորջել: 3. Ընծայել, նվիրել, վերագրել:	2.Անուն տալ, անվանել: 3.չբ. (գրկն.) Առձայնություն ստեղծել: (ԱՀԲԲ,Ա,108)
Արածել – նբ. (ՆՀԲ,Ա,338, ԳԲ,Ա,200, ՀԲԲ, Ա,253)	1. Արածեցնել, արածել տալ, հոտը կամ նախիրը արածելու տանել: 2. Դալար խտոր ուտել, ատամներով պոկել: 3. փխբ. Լափել, սպառել, ոչնչացնել:	նբ. չբ. – 1. Դալար խտոր ուտել՝ ճարակել: 2. Լափել, ուտել: 3. (փխբ.) Վնասակար խտերի հետամուտ լինել, կանանց հետևից ընկնել: 4. (հնց.) Արածեցնել: (ԱՀԲԲ,Ա,125)
Կոթողել- նբ. (ՆՀԲ,Ա,1108 ԳԲ,Ա,66, ՀԲԲ,Բ,455)	Կոթող կանգնեցնել, կառուցել	նբ. – 1.Կոթող կանգնեցնել, կառուցել: 2.փխբ. Նշանավորել: 3.չբ. Կոթողանալ: (ԱՀԲԲ,Ա,745)
Կոխել –նբ. (ՆՀԲ,Ա,1109 ԳԲ,Ա, 665)	1. Ոտքը դնել գետնին կամ մի բանի վրա: 2. Ոտնատակ տալ, արհամարհել: 3. Ընկճել, նվաճել, հաղթել:	նբ. – 1. Ոտքի տակ տրորել, կամ գետնին դնել: 2. Ոտքը մի բանի վրա դնել, կամ գետնին դնել: 3. Ուժով ճնշել, սեղմել: 4. Ուժով մի բան մի որևէ տեղ ներս տանել, խոթել, մտցնել: 5. Մի բանի մեջ իջեցնել, սուզել, ընկղմել: 6. Հագնել, դնել: 7. Մի բանի վրա հարձակվել: 8. չբ. Մի բանի վրա տարածել, պատել: 9. Վրա հասնել, լրանալ: 10. (ժղ) Հաշվի մեջ խաբել: 11. (գվռ) Հափշտակել, գողանալ, թոցնել: 12.(ժղ) Գոտնմարտության մեջ հաղթել: (ՀԲԲ,Բ,457, ԱՀԲԲ,Ա,747)
Հովել – նբ. (ՆՀԲ,Բ,122 ԳԲ,Բ, 87)	Հով փչել, հովահարել, զովացնել	նբ. – 1. Հովհարել, հով փչել, զովացնել: չբ. – 2. Հով դառնալ, հովն ընկնել՝ (իբրև դիմագուրկ): (ՀԲԲ, Գ,133, ԱՀԲԲ,Ա,894)
Տափել- նբ. (ՆՀԲ,Բ, 861 ԳԲ,Բ,551)	Տափանել, հարթել	նբ.(ժղ.) – 1.Տափանել: 2.Կոխկոտել, տրորել: 3.Հարթել, կոկել: Տափել չբ. (գվռ) - 1.Տափ կենալ, պահ մտնել, թաքնվել:

		2. Կռանալ, թեքվել: 3. Կուչ գալ, կծկվել: (Դ,392, ԱՀԲԲ,Բ,1426)
<i>Գերազանցել</i> -չք. (ՆՀԲ,Ա, 543, ԳԲ,Ա, 319)	Որևէ (սովորաբար լավ բաներում) մեկից կամ մի բանից անցնել, գերազանց գտնվել, լինել:	նք. չք. - 1. Որևէ բանով մեկից կամ մի բանից անցնել, գերազանց գտնվել: 2. Ենթադրվածից, սահմանվածից, նախատեսվածից ավելին լինել, անցնել: ՀԲԲ,Ա,426, ԱՀԲԲ,Ա,231)
<i>Անաստել</i> - չք. (ՆՀԲ,Ա, 235, ԳԲ,Ա,140, ՀԲԲ,Ա,175)	Անաստ լինել, չհնազանդվել, ըմբոստանալ, չլսել, հակառակել:	չք. Չհնազանդվել, չսաստվել: նք. (արևմ.) Անտեսել, արհամարհել: (ԱՀԲԲ,Ա,78)
<i>Չորանալ</i> ( <i>Չօրել</i> ) – չք. (ՆՀԲ,Ա, 757 ԳԲ,Ա,454, ՀԲԲ,Բ,44)	Հնարավորություն ունենալ մի բան անելու, ուժը պատել, կարողանալ, ձեռնահաս լինել, հնար գտնել, դիմանալ: <i>Չորանալ, ուժեղանալ:</i>	նք. Ուժը պատել, կարողանալ: չք. Հնարավորություն, ուժ ունենալ մի բան անելու: <i>Չորանալ:</i> (ԱՀԲԲ,Ա, 379)
<i>Թարթել</i> - չք. (ՆՀԲ,Ա,799 ԳԲ,Ա,480, ՀԲԲ,Բ,87)	Աչքի կուպերը արագությամբ խփել ու բացել, աչքը ճպել:	նք. – 1.Աչքի կուպերը արագությամբ խփել ու բացել: 2.Փխք. Շողացնել: 3.Հատել. 4.չք. - Թարթվել, կուպերը խփվել - բացվել: 5.փխք. Առկայծել: (ԱՀԲԲ,Ա, 423)
<i>Հովանավորել (հովանատրել)</i> -չք. (ՆՀԲ,Բ,121 ԳԲ,Բ,87, ՀԲԲ,Գ,132)	1. Հովանի լինել: 2. փխք. Հովանավոր՝ պաշտպան դառնալ, պաշտպանել:	նք. – 1.Մեկին պաշտպանել, օգնել: 2.Մեկին իր պաշտպանության տակ առնել, պատժից խուսափելու հնարավորություն տալ: 3.չք. (հնց) Ստվեր լինել: (ԱՀԲԲ,Ա,894)
<i>Տարածայնել</i> -չք. (ՆՀԲ,Բ,854, ԳԲ,Բ,547, ՀԲԲ,Դ,384)	Չհամաձայնել, անհամաձայն լինել, անմիաբան գտնվել:	1. չք. Չհամաձայնել, հակառակ կարծիք հայտնել: 2. նք. Տարփողել, տարածել, հռչակել (ԱՀԲԲ,Բ,1419)
<i>Տարափել</i> - չք. (ՆՀԲ,Բ,856, ՀԲԲ,Դ,385)	Տեղալ, անձրևել, ձյունել	նք. 1.Տարափ թափել: 2. փխք. Թափել, տարափի, հեղեղի նման վրա տալ: 3. Առատորեն տեղալ, տեղատարափ թափվել: (ԱՀԲԲ,Բ, 1420)

Մեծ թվով բայեր՝ ժամանակակից հայերենում կրկնասեռ, գրաբարում ընդհանրապես չեն հանդիպում, քանի որ ստեղծվել են հայերենի պատմական զարգացման ավելի ուշ շրջաններում: Դրանցից են մանամաձայնություններից կազմված պատճառական բայերը, ինչպես, օրինակ, *զլզլացնել, զմբզմբացնել, ծնզծնզացնել, քքքքացնել, տկտկացնել, վնզտացնել, վշվշացնել, շխխխկաց-*

նել, շնկշնկացնել և այլն, ժողովրդախոսակցական լեզվում գործածվող բայեր, ինչպես *ախել, ջղայնոտել, քջջել, քորվտել, տմտմալ, շշատել, ջխտել, հարսանքել, կվոտել* և այլն, գեղարվեստական գրականության մեջ գործածվող բայերը՝ *գարունել, արեգակել, արևել, ծիածանել, կայտառել, կոհակել, հանգերգել, ալեծփել, ցնցուղել, ալեվտել, տարփածել, հորդագեղել, հանկարծարանել* և այլն, գրաբարի համեմատ՝ նորաբանությունները, ինչպես *զանգահարել, ասմունքել, ծեփաթափել, հացամթերել, հուշարարել* բայերը և շատ այլ բայեր՝ *գերակայել, գերիշխել, գիշերել, ամպրոպել, ամրածածկել, ախտավորել, ահագնել, աղերսակցել, ամբարտակել, արմնկել, արյունել, արտածորել, արցունքոտել, ծերտոտել, ծեքարանել, ծլարձակել, կանխաբանել, կանխավճարել, արգելակել, տեսաբանել, տերևատրել, ջրփոխել, շրշալ, կնճռոտել* և այլն (բոլոր օրինակների աղբյուրը ԱՀԲԲ-ն է):

Մեր ուսումնասիրությունը թերի կլիներ, եթե ժամանակակից հայերենի բառապաշարի մասին խոսելիս սահմանափակվեինք միայն ԱՀԲԲ-ի բառամթերքով: Անվիճելի է, որ այդ բառարանի համեմատությամբ հայերենի բառապաշարը վերջին շրջանում հարստացել է հազարավոր նոր բառերով: Քերականական իմաստափոխությունների ամբողջական պատկերն ունենալու համար ուսումնասիրել ենք նաև Մ. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը»: Այստեղ ընդգրկված 7715 նորաբանությունից քերականական տարարժեքություն ունի ընդամենը 200 բառ: Գոյ./ած. ԽՏ ունեն և շատ այլ բառեր:

Հետաքրքրական է, բառարանում չկա նր./չբ. ունեցող և ոչ մի բայ:

Կարելի է ենթադրել, որ վերջին տասնամյակների մամուլի և նորագույն գեղարվեստական գրականության մեջ գործածված նորաբանությունների մեջ անհամեմատ փոքր թիվ են կազմում քերականական տարարժեքություն ունեցող բառերը, որոնցից, ինչպես նշեցինք, ի տարբերություն գրաբարի, քչերն են կազմությամբ պարզ:

#### Համառոտագրություններ

ԱՀԲԲ - Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ.հ. 1.2, Երևան, 1976:

ԳԲ - Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Երևան, 2000:

ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ.հ. Ա-Դ, Երևան, 1971-79

ՀԲԲ - Սո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1987:

ՆԲ - Ներգործական սեռի բայ:

ՆԲՀ - Նոր բառփոք հայկազեան լեզուի, հ. Ա, (1979), հ. Բ, Երևան 1981:

ՉԲ - Չեզոք սեռի բայ:

ԽՏ - Խոսքիմաստային տարարժեքություն:

ՔՏ - Քերականական տարարժեքություն:

## ДВУХЗАЛОГОВОСТЬ В ГЛАГОЛЬНОЙ СИСТЕМЕ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Г. Забян \_\_\_

В статье представлена сохранившаяся в современном армянском языке группа двухзалоговых глаголов грабара, которые без видовых изменений употребляются то в действительном залоге, то в среднем. В современном армянском языке часть глаголов сохранила древнеармянский смысл, некоторые глаголы приобрели новые значения, которые, однако, не изменили грамматических свойств последних.

Двухзалоговость проявляется и в современном армянском языке. В статье освещены те глаголы, которые в древнеармянском языке были однозалоговыми, но в современном языке приобрели новые значения, обусловили их употребление и во втором грамматическом залоге.

## Արմեն ՄԵԼՔՈՆՅԱՆ

### ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԹՈՒՐԶԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենի և թուրքերենի քերականական կառուցվածքների տիպաբանական-գուգադրական քննություն մինչ օրս չի կատարվել:

Հանրահայտ է, որ, ըստ լեզուների ձևաբանական դասակարգման, թուրքերենը դասվում է կցական լեզուների տիպին, որոնց համար բնութագրական են բառակազմական մասնիկավորումը, քերականական ձևային մեղմաստությունը, հոլովման և խոնարհման միասնական տիպը (միօրինակությունը), քերականական նշանակություն ունեցող հնչյունական հերթագայությունների բացակայությունը, մի շարք այլ առանձնահատկություններ: Ժամանակակից հայերենը նույնպես բնութագրվում է որպես առավելապես կցական տիպի լեզու, թեև այստեղ առկա են նաև վերլուծականության և թեքականության տիպի տարրեր:

Ներկայացվող հոդվածը նվիրված է երկու լեզուների հոլովական համակարգերի գուգադրական քննությանը՝ նրանում կցականության առանձնահատուկ դրսևորումների բացահայտման տեսակետից:

Հայագիտական թերևս ոչ մի հարց երբևէ այնքան մանրակրկիտ քննության չի ենթարկվել, ինչպես հոլովների խնդիրը: Զննվել-լուսաբանվելով բազմաթիվ լեզվաբանների ու քերականների կողմից՝ հայոց լեզվի հոլովները նշանավորվել են արժեքավոր ուսմունքներով:

Ունենալով հոլովական շատ մեծ ընդհանրություններ՝ հայերենը և թուրքերենը միաժամանակ երևան են հանում որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորվում են նրանց՝ իբրև առանձին լեզուների ներքին օրենքներով, բնությամբ ու առանձնահատկություններով:

Ժամանակակից հայերենի քերականություններում հիշատակվող հայցական հոլովը ձևաբանական մակարդակ չունի ուղղականից և տրականից տարբեր, իսկ սեռականն էլ՝ տրականից տարբեր բավարար ձևաբանական հատկանիշ: Հայցականի տարբերությունը ուղղականից և տրականից, իսկ սեռականի տարբերությունը տրականից հիմնականում ֆունկցիոնալ-շարահյուսական է: Ելնելով այս ամենից՝ ընդունված է, որ ժամանակակից հայերենն ունի հինգ հոլով՝ ուղղական, սեռական-տրական (կամ տրական), բացառական, գործիական, ներգոյական:

Ուսումնասիրելով հայերենի և թուրքերենի հոլովները, համեմատելով դրանք այլ լեզուներում առկա հոլովական համակարգի հետ՝ եկել ենք այն համոզման, որ թե՛ ժամանակակից հայերենի, առավել ևս ժամանակակից թուրքերենի հոլովները պետք է որոշել ոչ թե բառի փոփոխված սոսկ արտաքին ձևով, հոլովակերտ մասնիկով կամ վերջավորությամբ, այլ նրանց թե՛ ձևով, և թե՛ արտահայտած նշանակությամբ, կամ հարաբերությամբ՝ միասին վերցրած: Հոլովական ձևերը չեն կարող քննության ենթարկել սոսկ ձևաբանական մակարդակում, այլ նաև պետք է անդրադառնանք շարահյուսությանը: Այս փաստն ավելի վառ ընդգծվում է թուրքերենում, որտեղ պարզելու այս կամ այն բառի հոլովական ձևը՝ հոլովակերտը, աներկբայելիորեն անդրադարձ է կատարվում շարահյուսությանը:

Anneme bir yadigar verdim. - Մորս մի հուշանվեր ընծայեցի:

Տվյալ նախադասության մեջ *annem* (մայրս) բառը ստացել է տրական հոլովի “e” հնչյունը, որովհետև *verdim* (ընծայեցի, տվեցի) ստորոգյալը պահանջում է մատուցման և հաղորդման անտղղակի խնդիր, իսկ վերջինս էլ, ինչպես գիտենք, դրվում է տրական հոլովով, որի պաշտոնում հանդես է եկել *annem + e* (մորս) բառը:

Զննելով այս և բազմապիսի օրինակներ՝ համոզված կերպով կարող ենք ասել, համեմատվող երկու լեզուներում էլ հոլովական ձևերը որոշելիս պետք է անդրադարձ կատարել թե՛ ձևաբանությանը, թե՛ շարահյուսությանը: Այդ իսկ պատճառով սույն հոդվածում ավելի նպատակահարմար համարեցինք համեմատել հայերենի և թուրքերենի հոլովական համակարգերը՝ առաջնորդվելով հայերենի յոթ հոլովների տեսությամբ:

**Թուրքերենում ընդունված է վեց հոլովի տեսությունը՝** Yalın durum (Yalın hal)- Ուղղական հոլով, Tamlayan durumu -Մեռական հոլով, Yönelme/Yaklaşma durumu (-e hali)-Տրական հոլով, Belirtme/Yükleme durumu (-i hali)-Հայցական հոլով, Çıkma/Ayrılma durumu (-den hali)- Բացառական հոլով և Kalma/Bulunma durumu (-de hali)-Ներգոյական հոլով: Նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ ձևը: Հոլովական մասնիկները շեշտակիր են:

Ժամանակակից հայերենի և թուրքերենի հոլովներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ ձևը կամ ձևերը, որոնց բնորոշ հարացույցը հետևյալն է.

Հայերեն		Թուրքերեն		
Ուղղ.- <b>Ø</b>	տեսր + <b>Ø</b>	<b>Ուղղ.</b>	Yalın durum – <b>Ø</b>	defter + <b>Ø</b>
<b>Մեռ.</b> - <b>ի</b>	տեսր+ի	<b>Մեռ.</b>	Tamlayan durumu (-in hali)	defter + <b>in</b>
<b>Տր.</b> - <b>ի(ն)</b>	տեսր+ի(ն)	<b>Տր.</b>	Yönelme durumu (-e hali)	defter + <b>e</b>
<b>Հայց.</b> - <b>Ø(ր)</b>	տեսր+ <b>Ø(ր)</b>	<b>Հայց.</b>	Belirtme durumu (-i hali)	defter + <b>i</b>
<b>Բաց.</b> - <b>ից</b>	տեսր+ից	<b>Բաց.</b>	Çıkma durumu (-den hali)	defter + <b>den</b>
<b>Գործ.</b> - <b>ով</b>	տեսր+ով	<b>Գործ.</b>	-	
<b>Ներգոյ.</b> - <b>ում</b>	տեսր+ում	<b>Ներգ.</b>	Kalma durumu (-de hali)	defter + <b>de</b>

Դատելով վերոբերյալ աղյուսակից՝ դժվար չէ նկատել, որ հայերենի և թուրքերենի հոլովական համակարգում առկա են բազմաթիվ նմանություններ: Թուրքերենում գործիական հոլով որպես այդպիսին գոյություն չունի. այս հոլովի հարաբերություններն արտահայտվում են կապական կառույցների միջոցով:

Ի տարբերություն թուրքերենի, որտեղ հոլովաձևերը կազմվում են բացառապես հավելման ճանապարհով (*kitap+ta; kitap+tan*), հայերենում առկա է հոլովաձևեր կազմելու երեք ճանապարհ՝ վերջավորությունների փոփոխությամբ՝ հավելումով (*քար+ի, քար+ից*), արմատաձայնավորի փոփոխությամբ (*տուն/տան, մայր/մոր*) և այլ արմատից (*ես/ինձ, դու/քո*):

Թուրքերենում, համաձայն ձայնավորների ներդաշնակության օրենքի (տուրքերենն այն է, որ բառի մեջ առկա ձայնավորների բնույթը պայմանավորվում է սովորաբար արմատի ձայնավորի տեսակով), բառի վերջին վանկի ձայնավորից կախված՝ հոլովական մասնիկի ձայնավորը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ.

Գոյական անունների հոլովման աղյուսակներ.

**ա) Գոյական անուններ, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով.**

Անվան վերջին վանկի ձայնավորը	<b>Ուղղ.</b>	<b>Մեռ.</b>	<b>Տր.</b>	<b>Հայց.</b>	<b>Բաց.</b>	<b>Ներգ.</b>
<b>a/ı</b>	duvar	duvar+ın	duvar+a	duvar+ı	duvar+dan	duvar+da
	yıldız	yıldız+ın	yıldız+a	yıldız+ı	yıldız+dan	yıldız+da
<b>e/i</b>	el	el+in	el+e	el+i	el+den	el+de
	deniz	deniz+in	deniz+e	deniz+i	deniz+den	deniz+de
<b>o/u</b>	peron	peron+un	peron+a	peron+u	peron+dan	peron+da
	kum	kum+un	kum+a	kum+u	kum+dan	kum+da
<b>ö/ü</b>	göl	göl+ün	göl+e	göl+ü	göl+den	göl+de
	kostüm	kostüm+ün	kostüm+e	kostüm+ü	kostüm+den	kostüm+de

**բ) Գոյական անուններ, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով.**

	<b>Ուղղ.</b>	<b>Մեռ.</b>	<b>Տր.</b>	<b>Հայց.</b>	<b>Բաց.</b>	<b>Ներգ.</b>
<b>a/ı</b>	tarla	tarla+nın	tarla+ya	tarla+yı	tarla+dan	tarla+da
	yapı	yapı+nın	yapı+ya	yapı+yı	yapı+dan	yapı+da
<b>e/i</b>	gazete	gazete+nin	gazete+ye	gazete+yi	gazete+den	gazete+de
	gemi	gemi+nin	gemi+ye	gemi+yi	gemi+den	gemi+de
<b>o/u</b>	palto	palto+nun	palto+ya	palto+yu	palto+dan	palto+da
	kutu	kutu+nun	kutu+ya	kutu+yu	kutu+ dan	kutu+da
<b>ö/ü</b>	banliyö	banliyö +nün	banliyö +ye	banliyö+yü	banliyö +den	banliyö +de
	akü	akü+nün	akü+ye	akü+yü	akü+den	akü+de

Հայերենի հոլովական ձևերը կազմվում են երեք կերպ.

- ա) Բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ, օրինակ՝ *սար-սար+ից, կեսօր- կեսօր+վա*։
- բ) Բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ, օրինակ՝ *ոսկի-ոսկու (ի/ու)*։

Այս երկու տիպերը միասին կոչվում են *արտաքին թեքում*։

- գ) Բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ, օրինակ՝ *տուն-տան (ու/ա), մայր-մոր (այ/ո)*, այս տիպը կոչվում է *ներքին թեքում*։

Թուրքերենի հոլովական ձևերը կազմվում են միայն բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ, ասել է թե՛ այս լեզվին համապատասխանում է միայն արտաքին թեքումը, իսկ ներքին թեքումը բացակայում է։

*Ուղղական հոլով (գրո ձև)- Yalin Durum*

Լինելով բառի ուղիղ, անփոփոխ ձևը՝ այս հոլովը կոչվում է նաև ուղիղ հոլով, ի տարբերություն մյուս հոլովների, որոնք կազմվում են զանազան փոփոխություններով և կոչվում են *թեք հոլովներ*։ Վերջավորություններ կրող մնացած բոլոր հոլովները կրում են թեք հոլովներ անվանումը։<sup>1</sup> Թե՛ հայերենում, և թե՛ թուրքերենում եզակի ուղղականը ձևաբանական հատուկ ցուցիչ չունի և մյուս թեք հոլովներին ու հոգնակի ուղղականին հակադրվում է գրո ձևությամբ։ Գ. Ջահուկյանը առաջարկում է անվան այդ ձևը կոչել մաքուր անվանական հիմք՝ ի տարբերություն մյուս հոլովների, որոնք հաճախ ի հայտ են բերում հնչյունափոխված հիմքեր։ Այս իսկ տեսակետից ուղղական հոլովը և՛ հայերենում, և՛ թուրքերենում կարելի է դիտել որպես յուրատեսակ մեկնակետ, որից հիմքի ձևափոխումներով ու վերջավորությունների հավելումով կազմվում են եզակի թեք և հոգնակի բոլոր հոլովները, ընդ որում, երկու լեզուներում էլ որոշ ձևեր կազմվում են անմիջականորեն ուղղականից, և միայն հայերենում մյուսների համար հիմք է ծառայում սեռական-տրականը։ Ուղղական հոլովը սովորաբար որևէ վերջավորություն չունի (գրոյական վերջավորություն), թերևս պատահական չէ, որ թուրքերենում այն ունի *Yalin Durum*, այսինքն՝ «մաքուր, զուտ, անխառն» հոլով անվանումը։

Եթե հայերենում որոշ թեք հոլովներ կազմվում են ոչ միայն ուղղականի, այլև սեռական-տրականի ձևից, ապա թուրքերենում թեք հոլովները կազմվում են միայն ուղղական հոլովի հիմքից՝ համապատասխան մասնիկի ավելացումով.

Հայերենի հոլովների կազմությունը						
ուղղ.	սեռ.-տր.	բաց.		գործ.		ներգոյ.
	<i>ուղղ. ձևից</i>	<i>ուղղ. ձ</i>	<i>սեռ.-տր. ձևից</i>	<i>ուղղ. ձ</i>	<i>սեռ.-տր. ձ</i>	<i>ուղղ. ձ</i>
տուն+Յ	անտառի (ի)	տետրից	հայր-հոր-հորից օր-օրվա- օրվանից	մատիտով	քույր- քրոջ- քրոջով	գրքում

Թուրքերենի հոլովների կազմությունը					
ուղղ.	սեռ.	տր.	հայց.	բաց.	ներգոյ.
<i>ուղղականի ձևից</i>					
okul+Յ դպրոց+Յ	okulun դպրոցի	okula դպրոցի(ն)	okulu դպրոցը	okuldan դպրոցից	okulda դպրոցում

*Սեռական հոլով – Tamlayan durumu (-e hali)*

Հայերենում սեռական հոլովը հանդես է գալիս որպես գոյականի կամ գոյակա-նաբար գործածված բառի վերադիր։ Սեռական հոլովը ցույց է տալիս պատկանելու-թյուն բառի ամենալայն իմաստով։ Սեռական հոլովի ամենատարածական և հիմնական իմաստն է հատկացումը (ստացականությունը), որը ցույց է տալիս, թե առարկան ում կամ ինչին է պատկանում։<sup>2</sup> Թուրքերենում գոյություն ունի գոյականների կապակցու-թյան մի քանի ձև։ Այս լեզվում ճնշող մեծամասնությամբ սեռական հոլովին բնորոշ է

<sup>1</sup> Tahsin Banguoğlu, *Türkçenin grameri, Ankara, 2004, s. 324.*  
<sup>2</sup> Mehmet Hengirmen, *TÜRKÇE TEMEL DİL BİLGİSİ, Ankara, 2006, s. 125*

իզաֆթի՝ գոյականների կապակցության հատուկ ձևի ատրիբուտիվ կիրառումը, որտեղ հատկացուցիչը ստանում է սեռական հոլովի վերջամասնիկ. բաղաձայն հնչյունով վերջացող բառերից հետո դրվում են *-in, -in, -un, -ün*, իսկ ձայնավոր հնչյունով վերջացող բառերից հետո՝ *-nun, -nun -nin -nün*, շեշտակիր վերջավորությունները, իսկ հատկացյալը՝ համապատասխան դեմքի ու թվի երրորդ դեմքի պատկանելության մասնիկ.<sup>3</sup>

yıldız - աստղ	yıldızın - աստղի
gemi - նավ	geminin - նավի
dünya - աշխարհ	dünyanın - աշխարհի
depo - պահեստ	deponun - պահեստի

Ըստ սեռական հոլովի ձևավորման, ժամանակակից հայերենում տարբերում են *-ի, -ու, -ա, -ան, -ոջ, -վա, -ն, -ց* հոլովումներ: Հայերենում սեռական և տրական հոլովումները կազմվում են երկու կերպ՝ արտաքին և ներքին թեքմամբ: Հայերենում բացարձակորեն գերակշռում է արտաքին թեքումը, իսկ ներքին թեքումը քիչ թե շատ լայն տարածում չունի: Ի տարբերություն հայերենի՝ թուրքերենում բացակայում է ներքին թեքումը, այսինքն՝ հոլովաձևերը թուրքերենում կազմվում են միայն վերջավորությունների փոփոխությամբ՝ հավելումով, երբ հոլովիչը ավելանում է վերջից՝ առանց խախտելու բառի ամբողջականությունը: Այլ կերպ ասած, թուրքերենին բնորոշ է վերջամասնիկավոր հոլովումը՝ արտաքին թեքումը:

*Տրական հոլով – Yönelme/Yaklaşma durumu (-e hali)*

Թուրքերենում տրական հոլովը կազմվում է *-a, e-* թեքությունների միջոցով, եթե գոյականը վերջանում է բաղաձայն հնչյունով, եթե ձայնավոր հնչյունով, ապա բառի և հոլովական մասնիկի միջև դրվում է *-y-* տառը:

Çocuk kapıya yaklaşıyor. - Երեխան մոտենում է դռանը:

Ben size bakıyorum. - Ես ձեզ եմ նայում:

Հայերենում տրական հոլովը հանդես է գալիս որպես բայի, բայանվան կամ ածականի խնդիր: Ի տարբերություն ուսումնասիրվող երկու լեզվում էլ առկա սեռական հոլովի, որը հանդես է գալիս առարկայական հանգում (վերաբերություն, ստացականություն), տրական հոլովը հանդես է գալիս որպես գործողության հանգում (ուղղվածություն դեպի առարկան):

*Հայցական հոլով – Belirtme/Yükleme durumu (-i hali)*

Ի տարբերություն թուրքերենի՝ հայերենում հայցական հոլովը կազմության յուրահատուկ ձև չունի. իրանիշ գոյականների հայցականը նման է ուղղականին՝ ուղղականաձև է՝ անձնանիշ հայցականը՝ տրականին՝ տրականաձև է: Թուրքերենում պատկերն այլ է. այստեղ թե՛ տրական, թե՛ հայցական հոլովներն ունեն իրենց հատուկ հոլովակազմիչները: Ինչպես նշում է Բ. Ա. Մերերեննիկովը, թուրքերենում յուրաքանչյուր հոլով ունի իր ստանդարտ հոլովական վերջավորությունը:<sup>4</sup> Հայցական հոլովը կազմվում է *-ı, -i, -u, -ü* մասնիկների միջոցով.

kapı - դռոջ, pencereyi - պատուհանը, buzu – սառույցը, Gönül'ü - Գոյունուկի

Նախադասության մեջ հայցական հոլովով դրված գոյականը կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական դեր: Երբ առկա է որոշյալ առում, ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջամասնիկ.

Ben bu mektubu yazmadım. - Ես այս նամակը չեմ գրել:

Այս առումով առավել քան համամիտ ենք ռուս արևելագետ Բ. Ա. Մերերեննիկովի հետ, համաձայն որի, կցական լեզուների բացարձակ մեծամասնությունում, այդ թվում՝ թուրքերենում, հայցական հոլովի վերջավորությունն ունի հոդի նշանակություն: Այն սովորաբար ցույց է տալիս գործողության այլ օբյեկտը, որն արդեն հայտնի է խոսակցին, ասել է թե՛ հանդես է գալիս որոշյալ առման պաշտոնում:<sup>5</sup>

Անորոշ առման դեպքում ուղիղ խնդիրը հայցական հոլովի վերջավորություն չի ստանում.

<sup>3</sup> С. И в а н о в, Курс турецкой грамматики, ч. 1, Грамматические категории имени существительного, Л., 1975, стр. 28.

<sup>4</sup> Морфологическая типология и проблема классификации языков, М.-Л., 1965, стр. 9.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 15:

Bir roman okuyorum. -Մի (*ինչ-որ մի՝ անհայտ*) սիրավեպ եմ կարդում:

*Բացառական հոլով (ից և ուց ձևեր)*- *Çikma/Ayrılma durumu (-den hali)*

Բացառական հոլովի ընդհանուր հոլովական իմաստը երկու լեզուներում էլ էլակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման իմաստն է, որը շարահյուսական տարբեր կապակցությունների մեջ տարբեր մասնակի դրսևորումներ ու իմաստային երանգներ է ստանում: Հայերենում բացառական հոլովը կազմվում է ուղղականից կամ տրականից՝ *ից* և *ուց* վերջավորություններով. *ուց* են ստանում *ու* հոլովման բառերը՝ *կաղնի-կաղնու-կաղնուց*, *կարդալ-կարդալու-կարդալուց*, *սեր բառը՝ սիրուց*, *աստված՝ աստծուց*, իսկ *ից* են ստանում մյուս հոլովներին պատկանող բառերը՝ *պատ-պատի-պատից*, *իշխանություն-իշխանության-իշխանությունից* և այլն: Բացառականը սեռական-տրականից կազմող բառերի *ից* վերջավորությունից առաջ հավելում է *-ն* ենթաձևայինը, ինչպես՝ *օր-օրվա+ն+ից*, *ցերեկվա+ն+ից*: Այս *ն*-ն էր. Աղայանը կոչում է ներույթ. ըստ այդմ բացառականին հատկացնում է 2 կարգի կադասարումներ՝ ներույթավոր՝ *սոջկա+ն+ից* և աններույթ մի բանի՝ *ամս + Օ+ից*:<sup>6</sup>

Թուրքերենում բացառական հոլովը կազմվում է *-dan, den-* մասնիկների միջոցով, եթե գոյականը վերջանում է ձայնավորով կամ ձայնեղ բաղաձայնով և *-tan, ten-* մասնիկների միջոցով, եթե գոյականը վերջանում է խուլ բաղաձայնով.

okuldan -դպրոցից, evden - տնից, renkten - գույնից

*Գործիական հոլով*

Հայերենում այս հոլովը կազմվում է ուղղականի կամ սեռական – տրականի ձևից: Հոլովական վերջավորություններն են *ով* և *ք*. տետր + տետրով (ուղղականի ձևով), լավություն-լավությամբ// լավությունով, արյուն -արյամբ// արյունով (սեռական-տրականի ձևով):

Ի տարբերություն հայերենի, թուրքերենում գործիական հոլով որպես այդպիսին չկա. այս հոլովի հարաբերություններն արտահայտվում են “*ile*” հետադրության միջոցով: Այս հետադրությունը գտնվում է վերջածանցի վերածելու փուլում՝ ունենալով ինչպես առանձին, այնպես էլ միասին գրություն:<sup>7</sup> Միասին գրության դեպքում հետադրությունը ենթարկվում է ձայնավորների ներդաշնակության օրենքին, իսկ երբ հիմքը վերջանում է բաղաձայնով, *-ile* հետադրությունը կորցնում է առաջին ձայնավոր հնչյունը: Եթե գոյական անունը վերջանում է ձայնավորով կամ ստանում է երրորդ դեմքի պատկանելության մասնիկ, ապա *- ile* հետադրության *- i* հնչյունը փոխվում է *-y-i*: Խնդիրը, որն արտահայտվում է անվան և *-ile* հետադրության միջոցով, նշանակում է.

*ա) համատեղ գործող անձ*

Karine Arman ile (Armanla) okula gidiyor. -Կարինեն Արմանի *հետ* (միասին) դպրոց է գնում:

*բ) գործողության կատարման գործիք՝ ամենալայն իմաստով.*

Çizgiyi kurşunkalem ile (kurşunkalemle) çiziyorum. -Գիծը մատիտով եմ գծում:

*Ներգոյական հոլով (առ ձև) – Kalma/Bulunma durumu (-de hali)*

Ներգոյական հոլովի ընդհանուր իմաստը կարելի է համարել պարունակման իմաստը: Հայերենում ներգոյական հոլովաձևը կազմվում է *ում* թեքությով: Այն հիմնականում ավելանում է *ի, ու* և (որոշ բացառությամբ) վա հոլովումներին պատկանող գոյականների ուղիղ ձևին: Թուրքերենում ներգոյական հոլովը կազմվում է *-da, -de* և *-ta -te* (խուլ բաղաձայնով վերջացող գոյականներից հետո) վերջամասնիկների օգնությամբ.

mağaza – mağazada (խանութ-խանութում); dakika – dakikada (րոպե- րոպեին)

Թուրքերենին բնորոշ բաղաձայնների առաջընթաց առնմանման երևույթի համաձայն, բացառականի և ներգոյականի հոլովական մասնիկները ենթարկվում են դիրքային տարբերակման.<sup>8</sup> Եթե գոյականը վերջանում է խուլ բաղաձայնով, ապա այն, ազդելով կցվելիք բացառական հոլովի *-dan, den-* և ներգոյական հոլովի *-da, de-* հոլովակերտի սկզբի *-d* ձայնեղ հնչյունի որակի վրա, նմանեցնում է իրեն՝ փոխելով *-t* խուլ

<sup>6</sup> Էդ. Աղ ա յ ա ն, *Մասնականից հայերենի հոլովումը և խոնարհումը*, էջ 244:

<sup>7</sup> Ա. Ս ա Ֆ ա ը յ ա ն, *Թուրքերենի դասագիրք*, Եր., 2001, էջ 44:

<sup>8</sup> Mehmet Hengirmen, *TÜRKÇE TEMEL DİL BİLGİSİ*, Ankara, 2006, s. 128.

բաղաձայնի, այլ կերպ ասած՝ խուլ բաղաձայնով վերջացող հիմքերից հետո մասնիկների ձայնեղները խլանում են.

Ներգոյ. հոլ. kitap -գիրք; kitap + da = kitapta (գրքում)

Բացառ. հոլ. renk -գույն; renk + den = renkten (գույնից)

Արաբական մի շարք փոխառություններում, երբ բառը վերջանում է *-l, p, t-* խուլ բաղաձայններով, բառավերջում կցվող հոլովակերտների *-a, i, u-* ձայնավորները փափկանալով կարող են հնչյունափոխվել *-e, i, ü-* ձայնավորների: Այդ բառերի հոլովման բնորոշ հարացույցը հետևյալն է.

<i>Եզակի</i>				
	Ուղղ.	mahsul	harp	saat
	Մեռ.	mahsul+ün	harp+in	saat+in
	Տր.	mahsul+e	harp+e	saat+e
	Հայց.	mahsul+ü	harp+i	saat+i
	Բաց.	mahsul+den	harp+ten	saat+ten
	Ներգ.	mahsul+de	harp+te	saat+te
<i>Հոգնակի</i>				
	Ուղղ.	mahsul+ler	harp+ler	saat+ler
	Մեռ.	mahsul+ler+in	harp+ler+in	saat+in
	Տր.	mahsul+ler+e	harp+ler+e	saat+e
	Հայց.	mahsul+ler+i	harp+ler+i	saat+i
	Բաց.	mahsul+ler+den	harp+ler+den	saat+ten
	Ներգ.	mahsul+ler+de	harp+ler+de	saat+te

Արաբական փոխառությունները, որոնք վերջանում են «այն-ով» և «համզե»-ով, հոլովվում են բաղաձայնով վերջացող հիմքերի պես:<sup>9</sup>

Ուղղ.	içtima+Ø	menşe+Ø
Մեռ.	içtima+ın	menşe+in
Տր.	içtima+a	menşe+e
Հայց.	içtima+ı	menşe+i
Բաց.	içtima+dan	menşe+den
Ներգ.	içtima+da	menşe+de

Հոլովական վերջավորությունները, կցվելով ստացականության վերջավորություն ստացած գոյական անունների, կարող են առաջացնել քերականական համանունություն: Բաղաձայնով վերջացող գոյական անունները, ստանալով երկրորդ և երրորդ դեմքի ստացական մասնիկ, բոլոր թեք հոլովներում ունենում են հնչյունների միևնույն համակցությունը:<sup>10</sup>

Ուղղ.		<i>elin – pn գյուղը</i>	<i>eli – նրա գյուղը</i>
Մեռ.		elinin – (elin + in)	elinin – (eli + n <sup>11</sup> + in)
Տր.		eline – (elin + e)	eline – (eli + n + e)
Հայց.		elini – (elin + i)	elini – (eli + n + i)
Բաց.		elinden – (elin + den)	elinden – (eli + n + den)
Ներգ.		elinde – (elin + de)	elinde – (eli + n + de)

ev-in-in- , pn տան է (ev-in, pn տունը է)

ev-i+n-in- նրա տանը է (ev-I (+n), նրա տունը է)

<sup>9</sup> Բանն այն է, որ այս երկու հնչյունները, որոնք թուրքերի կողմից կամ չեն արտաբերվում, կամ էլ վերարտադրվում են որպես ձայնավոր հնչյուններ, ածանցման ժամանակ հանդես են գալիս որպես բաղաձայն հիմքեր:

<sup>10</sup> Ա. Մ ա ֆ ա ր յ ա ն, նշվ.աշխ., էջ 71:

<sup>11</sup> Տվյալ դեպքում –ն- հնչյունը հանդես է գալիս որպես ներույթավոր հնչյուն:

Ստացական դերանուն- հատկացուցչի առկայությունը կանխում է հնարավոր խառնաշփոթը.

senin elinden -քո ձեռքից; onun elinden - նրա ձեռքից

Թուրքերենում մի շարք երկվանկ բառեր հոլովական կամ ստացականության մասնիկներ ստանալիս (բացառությամբ բացառական և ներգոյական հոլովների վերջավորությունների) կորցնում են երկրորդ նեղ ձայնավորը.

Ուղղ.	ilim (ilmi)	vakit (-kti)
Մեռ.	ilm+in	vakt+in
Տր.	ilm+e	vakt+e
Հայց.	ilm +i	vakt+i
Բաց.	ilim+den	vakit+ten
Ներգ.	ilim+de	vakit+te

Հոգնակի հոլովումը՝ թե՛ ժամանակակից հայերենի, թե՛ ժամանակակից թուրքերենի հոլովման համակարգի մեջ հոգնակի թվի քերականական կարգն արտահայտվում է առանձին ձևայիններով, որոնք իբրև կանոն մենիմաստ են, այսինքն՝ բացի հոգնակի թվի իմաստից, որևէ այլ քերականական իմաստ չեն արտահայտում:

Ժամանակակից հայերենի հոգնակերտ ձևայիններն են *եր, ներ, ք, իկ, այք*: Գոյականի հոլովումը հոգնակի թվում գրեթե հասել է միօրինակության. բոլոր այն բառերը, որոնք հոգնակին կազմում են *եր* կամ *ներ* ենթաձևայիններով, հոգնակիում հոլովվում են *ի* հոլովման վերջավորություններում:

Հատուկ խումբ են կազմում *անք, ենք, ոնք, ունք* ածանցներով կազմված հավաքական անեզականները՝ *քեռանք, Կարենենք* և այլն:

Հոգնակի ուղղականը ուսումնասիրվող երկու լեզուներում էլ եզակիից տարբերվում է միայն թվանիշ ձևայինների առկայությամբ:

Ժամանակակից թուրքերենի հոգնակերտ ձևայիններն են *lar* և *ler* վերջավորությունները: Թուրքերենին բնորոշ ձայնավորների ներդաշնակության կանոնի համաձայն, բառի վերջին վանկի ձայնավորից կախված՝ հոգնակերտ վերջավորության ձայնավորը կարող է փոփոխվել: Հոլովական թեքույթը դրվում է հոգնակերտ վերջավորությունից հետո: Ժամանակակից թուրքերենում հոգնակի հոլովման ընդհանուր հարացույցը հետևյալն է.

Բառի վերջին վանկի ձայնավ.		Թվանիշ ձևայինը	Հոլովանիշ ձևայինը
a, ı, o, u	<i>duvar yıldız peron kum</i>	lar	Ուղղ. + Ø
			Մեռ. + in
			Տր. + a
			Հայց. + ı
			Բաց. + dan
			Ներգ. + da
e, i, ö, ü	<i>el deniz göl kostüm</i>	ler	Ուղղ. + Ø
			Մեռ. + in
			Տր. + e
			Հայց. + i
			Բաց. + den
			Ներգ. + de

Թուրքերենի հոգնակի հոլովման ընդհանուր հարացույցը

	-lar-	-ler-
Ուղղ.	okul+lar+ Ø	defter+ler+ Ø
Մեռ.	okul+lar+in	defter+ler+in
Տր.	okul+lar+a	defter+ler+e
Հայց.	okul+lar+ı	defter+ler+i
Բաց.	okul+lar+dan	defter+ler+den
Ներգ.	okul+lar+da	defter+ler+de

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք տալ հայերենի և թուրքերենի հոլովական հարացույցի զուգադրական պատկերը.

Թուրքերենի հոլովման հարացույցը						
Բառի վերջին վանկի ձայնավորը		a / ı	o / u	e / i	ö / ü	
Արտաքին թեքում	<b>Եզակի</b>					
		Ուղղ.	+Ø			
		Մեռ.	-(n)ın	-(n)nun	-(n)in	-(n)nün
		Տր.	-(y)a		-(y)e	
		Հայց.	-(y)ı	-(y)u	-(y)i	-(y)ü
		Բաց.	-dan/tan		-den/ten	
		Ներգ.	-da/ta		-de/te	
	<b>Հոգնակի</b>					
		Ուղղ.	-lar		-ler	
		Մեռ.	-ların		-lerin	
		Տր.	-lara		-lere	
		Հայց.	-ları		-leri	
		Բաց.	-lardan		-lerden	
		Ներգ.	-larda		-lerde	

Հայերենի հոլովման հարացույցը									
Հոլով	Արտաքին թեքում								
	1	2	3	4	5	6	7	8	9
Ուղղ.	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø
Մեռ.	ի	ու	ա	ն	ան	յան	ոջ	վա	վան
Տր.	ի(ն)	ու(ն)	ա(ն)	ուն/ին	ան(ը)	յան(ը)	ոջ(ը)	վա(ն)	վան(ը)
Հայց.	Ø/(ը)	Ø/ուն	Ø/ան	Ø(ը)/ուն	Ø/ա(ն)	Ø(ը)	Ø/ոջ(ը)	Ø(ը)	Ø(ը)
Բաց.	ից	ուց	անից	ուց/ից	(ան)ից	ից	ոջից	(վան)ից	վանից
Գործ.	ով	ով	անով	ով	(ան)ով/ամբ	ով	ոջով	ով	ով
Ներգ.	(ում)	(ում)	-	-	-	-	-	ում	-

Հայերենի հոլովման հարացույցը				
Հոլովներ	Ներքին թեքում			
	10	11	12	13
Ուղղ.	հայր	կայսր	բնություն	անուն
Մեռ.	հոր	կայսեր	բնության	անվան
Տր.	հոր(ը)	կայսեր(ը)	բնության(ը)	անվան(ը)
Հայց.	հայր(հորը)	կայսր(ին)	բնություն(ը)	անուն(ը)
Բաց.	հորից	կայսրից	բնությունից	անունից
Գործ.	հորով	կայսրով	բնությունով/բնությամբ	անունով/անվամբ
Ներգ.	-	-	-	-

Որպես ամփոփում կարելի է ասել, որ ուսումնասիրվող երկու լեզուներում հոլովանիշ ձևայինների կցականության առումով համեմատության տեսանկյունից առկա են միաժամանակ թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ: Հարկ ենք համարում նշել, որ թեև համեմատվող լեզուները պատկանում են տարբեր լեզվաընտանիքների (հայերենը Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու է, թուրքերենը՝ Ուրալ-Ալթայյան), այս երկու լեզուները հոլովական հարացույցում կցականության տեսանկյունից ցուցաբերում են ավելի շատ նմանություններ, քան տարբերություններ:

Թուրքերենին բնորոշ է ձայնավորների առնմանության տեսակներից մեկը՝ ձայնավորների ներդաշնակությունը. բառի մեջ առկա ձայնավորների բնույթը պայմանավորվում է արմատի ձայնավորի տեսակով, որի պատճառով էլ առաջանում են հոլովանիշ մեկ ձևային տարբերակներ՝ ենթաձևայիններ:

Եթե հայերենում անունների հոլովումն իրականացվում են թե՛ նյութական ձևայինների կցման մասնավորման, թե՛ հիմքի՝ ձևաբանական արժեք ունեցող հնչյունական հերթագայությունների միջոցով, ապա թուրքերենում իրականացվում է սոսկ մասնիկավորման միջոցով: Նշված երկու լեզուների համար բնորոշ է, որ հոլովակազմիչները կցվում են վերջից:

Կցական լեզուներում, որպիսին թուրքերենն է, հոլովման հարացույցն ունի վառ արտահայտված առանցքային կառուցվածք. եզակի թվի շարքի հոլովական բոլոր վերջավորությունները կցվում են ուղղական հոլովով, եզակի թվով դրված բառահիմքին, իսկ հոգնակի թվի շարքի բոլոր վերջավորությունները՝ ուղղական հոլովով, հոգնակի թվով դրված բառահիմքին: Սրանով ապահովվում է հոլովական հարացույցի ստանդարտությունը՝ անփոփոխությունը, որը բնորոշ է կցական լեզուներին:<sup>12</sup>

## СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СИСТЕМ СКЛОНЕНИЙ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В АРМЯНСКОМ И ТУРЕЦКОМ ЯЗЫКАХ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Мелконян \_\_\_

По настоящее время не имеется типологическо-сопоставительных исследований грамматических структур армянского и турецкого языков. Данная статья посвящена сопоставительному анализу падежных систем указанных языков с точки зрения проявления агглютинации, свойственной обоим языкам. Несмотря на то, что изучаемые языки относятся к разным семьям (армянский является индо-европейским языком, а турецкий-уральско-алтайским), они имеют много общего в технике склонения существительных, однако наблюдаются и значительные расхождения. В армянском языке существуют два типа склонения существительных: внешняя флексия (с присоединением падежных окончаний) и внутренняя флексия (с чередованием гласных основы), турецкий язык по структурному типу относится к агглютинативным языкам, для него характерен исключительно аффиксальный способ образования падежных форм. Одновременно в турецком языке отмечается большая регулярность и единообразие падежных окончаний по сравнению с армянскими.

<sup>12</sup> Морфологическая типология и проблема классификация языков, стр. 9.

## Միրանուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱԶԵՎՄԱՆ (ՏՐԱՆՍՖՈՐՄԱՅԻԱՅԻ) ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ Վ. ՄԱՐՈՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ նույնիսկ ազգակից տարբեր լեզուների հնչյունական, քերականական և իմաստային համակարգերում կան որոշակի տարբերություններ: Ամեն մի լեզու ունի արտաքին աշխարհը ճանաչելու հնարավորություն, բայց լեզվից լեզու տարբեր են հասկացությունների ու երևույթների արտահայտման ձևերը: Յուրաքանչյուր լեզու այն կրող հանրության մտածողության և աշխարհընկալման արտահայտությունն է, և միևնույն արտալեզվական իրավիճակը նկարագրելու համար տարբեր լեզուներում օգտագործվում են տարաբնույթ իմաստաբանական բաղադրիչներ, որոնք, առավել քան երբևէ, ակնհայտ են դառնում թարգմանության ժամանակ: Յուրաքանչյուր բառ, բացի բառարանային իմաստից, ունի նաև համատեքստային իմաստ, որն էլ հույժ կարևորվում է թարգմանությունների պարագայում, քանի որ վերջինս շատ հաճախ բխում է տվյալ լեզվի տրամաբանական և իմաստաբանական օրինաչափություններից: Որոշ, նույնիսկ շատ համազործածական բառերի իմաստներ կարելի է ըմբռնել միայն համատեքստի ուշադիր վերլուծության և իմաստային կապերի ստեղծման միջոցով:

Տրամաբանական անցումները, որոնք բացահայտում են օտար բառի իմաստը տվյալ համատեքստում և հստակեցնում նրա համարժեքը թարգմանության լեզվում, կոչվում են բառային փոխաձևումներ: Յա. Ռեցկերը առանձնացնում է փոխաձևման յոթ տեսակ՝ իմաստների տարբերացում (շերտավորում, դիֆերենցիացիա), իմաստների կոնկրետացում, իմաստների ընդհանրացում (գեներալիզացիա), իմաստային զարգացումներ, հակառակադասական թարգմանություն, ամբողջական փոխակերպում, կորուստների փոխհատուցում (կոմպենսացիա) թարգմանության ընթացքում:<sup>1</sup>

Անգլերենից հայերեն թարգմանելիս հատկապես շատ են հանդիպում իմաստի տարբերացման և կոնկրետացման դեպքեր, քանի որ այս լեզվում բազմաբանակ են լայնիմաստ բառերը, որոնց համապատասխան թարգմանությունը հայերենում շատ հաճախ դժվար է գտնել: Օրինակ՝ Վ. Մարոյանի “The Declaration of War” պատմվածքի մեջ “shop” բառն օգտագործվում է “barber shop” արտահայտության մեջ, որտեղ այն մասամբ կորցնում է իր բառարանային *խանութ, կրպակ* կամ *արհեստանոց, գործարան, արտադրամաս* իմաստները և ավելի շուտ պետք է թարգմանվի *վարսավիրանոց*, այսպիսով, ստանալով իմաստի տարբերացում: Մինչդեռ այս պատմվածքի Կ. Մուրենյանի թարգմանության մեջ գտնում ենք՝ On the 3<sup>rd</sup> of September a boy by name of John came running into *the barber shop* on Moraga Avenue where I *was getting a haircut*.

“War’s been declared in Europe,” he said.

Mr. Tagalavia dropped the comb from one hand and the scissors from the other.

“You get out of this *shop*,” he said. “I told you before.”<sup>2</sup>

1939-ի սեպտեմբերի 3-ին, Ջոն անունով մի տղա վազելով ներս մտավ Մորագա պողոտայի վրա գտնվող *սափրիչի խանութը*, որտեղ ես *իմ մազերն էի հարդարում*:

- Եվրոպայում պատերազմ է հայտարարվել, - ասաց նա:

Միստր Տագալավիան մի ձեռքից սանրը զցեց, մյուսից՝ մկրատը:

- Դուրս կորի՛ր այս *խանութից*, - ասաց նա: - Առաջ էլ ասել եմ քեզ: (Վ.Մարոյան, «Պատերազմ է հայտարարվել», թարգմ. Կ. Մուրենյան):<sup>3</sup>

Այս համատեքստում *shop* բառի *խանութ* թարգմանությունը չի նպաստում իմաստի լիարժեք փոխանցմանը: Եվ, մեր կարծիքով, նախընտրելի կլիներ բառային

<sup>1</sup> Я. Р е ц к е р, Теория перевода и переводческая практика, Лингвистические аспекты теории перевода. Хрестоматия. Сост. С. Золян, К. Абрамян, Ер., 2007, стр. 89.

<sup>2</sup> W. S a r o y a n, The declaration of war// The Kite Collection of Stories, Moscow, 1968, p. 67.

<sup>3</sup> Վ. Մ ա Ր Ո Յ Ա Ն, Ընդիր երկեր, հ 2, Եր., 1987, էջ 327:

փոխաձևան միջոցով թարգմանել այն որպես *վարսավիրանոց* նույնիսկ երկրորդ դեպքում, որտեղ *barber* բառը բացակայում է:

Այս նույն համատեքստում հանդիպում ենք իմաստի տարբերացման մեկ այլ դեպքի՝ *to get a haircut*, որը կարող է թարգմանվել *մազերը հարդարել*, ինչպես նաև *մազերը կտրել*: Նկատի ունենալով, որ հեղինակը տղամարդ է, ինչը պարզ է դառնում նաև *barber* բառի իմաստի կոնկրետացումից՝ *սափրիչ*, *տղամարդու վարսավիր*, մենք կնախընտրելինք *մազերը կտրել*, այլ ոչ թե *մազերը հարդարել* տարբերակը, որն օգտագործվել է թարգմանության մեջ:

Մեր ասածը հաստատելու համար մենք քննել ենք Վ.Սարոյանի մեկ այլ պատմվածքի թարգմանությունը, որտեղ հանդիպում են վերոհիշյալ բառերն ու արտահայտությունները՝ *There was an Armenian barber on Mariposa Street named Aram... I only knew he had a little shop on Mariposa Street...*

*I went to Aram's shop and woke him up.*<sup>4</sup>

Մարիպոզա փողոցում Արամ անունով մի վարսավիր կար... Գիտեի միայն, որ նա մի փոքրիկ *վարսավիրանոց* ուներ Մարիպոզա փողոցում...

Գնացի Մարիպոզա փողոց, Արամի *վարսավիրանոցը* և արթնացրի նրան (Վ. Սարոյան, «Վարսավիրը, որի քեռու զուխը կրծեց կրկեսի վագրը», թարգմ.՝ Ռ.Ղազարյան):<sup>5</sup>

Ինչպես տեսնում ենք, Ռ.Ղազարյանն օգտագործում է բառային փոխաձևում, այս դեպքում՝ իմաստի տարբերացում և թարգմանում *shop*-ը որպես *վարսավիրանոց*, նույնիսկ եթե այն օգտագործված է առանց *barber* բառի՝ հիմնվելով լայն համատեքստում արձանագրված փաստերի վրա:

Այս նույն պատմվածքի մեջ կան նաև *to need a hair cut, to get a haircut* կապակցությունները, որոնք, նորից նկատի ունենալով լայն համատեքստը, թարգմանվել են *մազերը կտրել*, այլ ոչ թե *հարդարել*: *Miss Gamma said I needed a haircut, my mother said I needed a haircut, my brother Krikor said I needed a haircut, the whole world wanted me to get haircut.*<sup>6</sup> Միսս Գեման ասում էր՝ *մազերդ պետք է կտրես*, մայրս ասում էր՝ *մազերդ պետք է կտրես*, եղբայրս՝ Գրիգորը, ասում էր՝ *մազերդ պետք է կտրես*, ողջ աշխարհը ուզում էր, որ *մազերս կտրես*: (Վ. Սարոյան, «Վարսավիրը...»):<sup>7</sup>

Վ. Սարոյանի պատմվածքների թարգմանությունները ուսումնասիրելիս հանդիպում ենք բառային փոխաձևան բազմաթիվ դեպքերի: Ահա ևս մի քանի առավել ուշագրավ օրինակ՝ *The shape of my head wasn't exactly what it might be, but I could always walk three or four blocks and have the job finished by an ordinary barber. I put on my tie and coat.*<sup>8</sup>

Գլուխս դեռ պատշաճ ձև չէր ստացել, բայց այդպես էլ կարող էի անցնել երեք կամ չորս թաղամաս և զնալ մի սովորական սափրիչի մոտ՝ գործը վերջացնելու: *Փողկապս կապեցի և բաճկոնս հագա* (Վ.Սարոյան, «Պատերազմ է հայտարարվել», թարգմ.՝ Կ. Մուրեյան):<sup>9</sup> *To put on* նախդրավոր բայը նշանակում է *հագնել*, բայց նրա բառային վալենտակառուցումն անգլերենում ավելի լայն է, քան հայերենում: Ուստի և թարգմանության ժամանակ իմաստի շերտավորման (դիֆերենցիացիայի) միջոցով այն թարգմանում է երկու առանձին բայերով՝ *կապել* և *հագնել*, քանի որ հայերենում չկա մեկ բառ այդ երկու իմաստը փոխանցելու համար:

Այս նույն պատմվածքի թարգմանության մեջ հանդիպում ենք վերը քննված *haircut* բառի մեկ այլ փոխաձևան՝ այս դեպքում իմաստի ընդհանրացման՝ *"I am sorry about that. I am a writer, you see, and I am always asking people questions. I apologize. Please, finish my haircut."*...I got out of the chair and examined my head. My *haircut* was less than half finished.<sup>10</sup>

<sup>4</sup> W. Saroyan, *Barber's Uncle// The Kite Collection of Stories, Moscow, 1968, p. 78.*

<sup>5</sup> Վ. Սարոյան, *Ընտիր երկեր*, հ 1, Եր., 1987, էջ 83:

<sup>6</sup> W. Saroyan, *Barber's Uncle...*, p. 76.

<sup>7</sup> Վ. Սարոյան, *h 1, էջ 83:*

<sup>8</sup> W. Saroyan, *The declaration of war...*, p 68.

<sup>9</sup> Վ. Սարոյան, *h 2, էջ 328:*

<sup>10</sup> W. Saroyan, *The declaration of war...*, p. 68.

- Կներեք դրա համար: Ես գրող եմ, գիտե՞ք, և միշտ հարցեր եմ տալիս մարդկանց: Խնդրում եմ վերջացրեք *մազերիս գործը...*

Ես աթոռից վեր կացա ու նայեցի գլխիս: Դեռ *գործի* կեսն անգամ չէր եղել (Վ.Սարոյան, «Պատերազմն է հայտարարվել», թարգմ.՝ Կ. Սուրենյան):<sup>11</sup>

Այս համատեքստում բավականին դժվար է գտնել *haircut* բառի հայերեն համարժեքը և թարգմանիչը դիմում է բառային փոխաձևմանը, այսպիսով *haircut* բառի փոխարենն օգտագործելով հայերեն *գործ* բառը՝ ընդհանրացված իմաստով:

Շատ հաճախ բավականին նեղ համատեքստում օգտագործվում են բառային փոխաձևման տարբեր տեսակներ: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ բառային փոխաձևումը համակցվում է քերականական փոխաձևման հետ: Այս առումով շատ հետաքրքիր է ներքոհիշյալ օրինակը՝ "You have lost your hair because you are a fool. Electric clippers. Comb. Scissors. You have got no hair to cut. *The whole thing is a trick.*"<sup>12</sup>

Չեղ մազերը թափվել է, որովհետև հիմար եք: Էլեկտրական մեքենա: Սանր: Սկրատ: Մա՛գ չունեք, որ կտրեն: Հնարված բան է այս ամբողջ աղմուկը (Վ.Սարոյան, «Պատերազմն է հայտարարվել», թարգմ.՝ Կ. Սուրենյան):<sup>13</sup>

Այս օրինակում, բացի բառային փոխաձևման երկու տեսակներից՝ իմաստի կոնկրետացումից և ընդհանրացումից, թարգմանիչը օգտագործում է նաև քերականական փոխադրման միջոցը (տրանսպոզիցիա)՝ փոխելով նախադասության ենթական և ստորոգելին տեղերով: Անգլերեն նախադասության մեջ *thing* բառն օգտագործված է ընդհանրացված իմաստով, որը դժվար է գտնել հայերենում, ուստի թարգմանության մեջ ստանում է իմաստի կոնկրետացում և լայն համատեքստից դուրս գալով՝ թարգմանվում որպես *աղմուկ*: *Trick* բառը թարգմանելիս իմաստի ընդհանրացում է տեղի ունենում, և, ինչն ավելի հետաքրքիր է, այն թարգմանվում է որպես *բան*, որը կարելի է համարել անգլերեն *thing* բառի համարժեքը: Չնայած պետք է նշել, որ այստեղ *trick* բառի իմաստը փոխանցվում է *հնարված բան* բառակապակցությամբ, որտեղ *հնարված* որոշիչը կրում է իր մեջ *trick* բառի հիմնական իմաստը, այն է՝ *խորամանկություն, խարդախություն, հնարք*: Օգտագործելով տարբեր՝ տրամաբանական և քերականական անցումներ, հիմնվելով լայն համատեքստի վրա՝ թարգմանիչը լիարժեքորեն է փոխանցում ելակետային լեզվի ինֆորմացիան՝ միևնույն ժամանակ հարազատ մնալով թարգմանության լեզվի իմաստաբանական և քերականական համակարգերին:

Այսպիսով, պետք է նշել, որ թարգմանության ժամանակ բառային փոխաձևումներն անխուսափելի են և արդարացված են այն դեպքում, եթե նպատակն է իմաստի լիարժեք փոխանցմանը: Վերջինս շատ հաճախ հնարավոր է միայն լայն համատեքստի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում:

## К ВОПРОСУ О ЛЕКСИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ В ПЕРЕВОДАХ РАССКАЗОВ В. САРОЯНА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Варданян \_\_\_

В статье рассматриваются вопросы лексической трансформации при на примере переводов рассказов В. Сарояна.

В процессе перевода на первый план выступают фонетические, грамматические и семантические различия, существующие в разных языках. Перевод многих, порой даже общеупотребительных слов, возможен только при глубоком анализе широкого контекста. Очень часто при переводе возникает необходимость лексических трансформаций, которые способствуют раскрытию контекстуального значения данного слова в исходном языке и передаче этого значения средствами языка перевода. Примеры лексической трансформации, рассматриваемые в статье, подтверждают вышеприведенные утверждения.

<sup>11</sup> Վ. Սարոյան, *h 2*, էջ 328:

<sup>12</sup> W. Saroyan, *The declaration of war...*, p. 69.

<sup>13</sup> Վ. Սարոյան, *h 2*, էջ 329:

Артур АВАНЕСОВ

## ЗАМЕТКИ ОБ АРМЯНСКОМ МУЗЫКАЛЬНОМ ИСКУССТВЕ ПОСТФОЛЬКЛОРНОЙ ЭПОХИ

История армянского профессионального композиторского творчества насчитывает не так уж много поколений. Сформировавшись лишь в позднеромантическую эпоху, оно как бы "подхватило" веяния и стилистические сдвиги, присущие музыке Запада, слившись с ней притоком, со временем окрепшим и приобретшим определенную значимость, не теряя при этом собственного облика. Думается, что основной составляющей этого неповторимого облика армянской профессиональной музыки является постоянное, но вместе с тем подверженное качественным модификациям обращение отечественных композиторов к обширному наследию армянского музыкального фольклора.

Разумеется, это в равной степени справедливо для любой национальной школы. Однако в то время, как гармонические и мелодические ресурсы западноевропейской музыки, эксплуатировавшиеся композиторами на протяжении столетий, если и не исчерпали себя, то по крайней мере, ассимилировались и перестали восприниматься как таковые, переродившись в феномен классической музыки и эволюционировав вместе с ним уже в отрыве от устной фольклорной практики, то традиционная музыка неевропейских культур (к коим можно причислить и армянскую) все еще представляет собой не до конца освоенное пространство. Другой вопрос, много ли поколений композиторов сможет продолжать эксплуатировать это пространство в условиях, во-первых, общего декаданса музыкального искусства как продукта композиторского творчества, а во-вторых, остановки процесса устной передачи и развития фольклорной традиции во многих странах мира.

Индустриализация, глобализация, всплеск развития средств массовой коммуникации, особенно во второй половине XX в., во многом положили конец той многовековой эпохе музыкального фольклора, когда в нем происходил казавшийся безостановочным процесс формирования жанров, национальных характеристик, когда фольклор представал явлением вечно живым, подверженным изменениям, когда устная передача исключала консервацию его образцов. В большинстве стран мира внедрение достижений современной науки и техники, сыграв неоценимую роль в общекультурном смысле, подспудно оказало разрушительное влияние на фольклор – в первую очередь, за счет упразднения *предпосылок* его создания и сохранения. Как отмечает российский культуролог А.Костина, "В современном обществе в соответствии с социокультурными изменениями народная культура естественным образом утрачивает свое значение, ее формы, приемы и механизмы функционирования имитирует массовая культура, выступающая своеобразным "постиндустриальным фольклором"<sup>1</sup>. По меткому наблюдению исследователя, "...традиционная культура в постиндустриальном обществе постепенно утрачивает способность существовать в качестве жизнеспособного феномена, обладающего культурологическими потенциями, и сохраняет свои позиции в качестве "культурного наследия"<sup>2</sup>.

---

<sup>1</sup> А. К о с т и н а, *Массовая культура как феномен постиндустриального общества*, стр. 88.

<sup>2</sup> Там же, стр. 102.

Эпоха постмодерна знаменует также и начало *постфольклорной* эпохи. Слово "постфольклорный" мы предлагаем в качестве термина, характеризующего состояние народного искусства и соприкасающегося с ним профессионального художественного творчества в нашу эпоху, когда естественное развитие фольклорной культуры в принципе остановлено, а сама она подвергнута разностороннему изучению и классификации. Отныне фольклор становится неким *étant donné*, не эволюционирующим, но вовлеченным в обширную картотеку ссылок постмодерна. Любое обращение к фольклору в художественном творчестве современных нам авторов (вне зависимости от степени искренности или, скорее, *сопереживания* заимствованному материалу) отныне начинает представлять не в качестве "обращения к животворящим истокам", столь превозносимого советским музыковедением, но вовлечением собственной (или чьей-то чужой) музыкальной генетики в комбинационную или деконструкционную игру постмодерна. Причем, уже постепенно становится заметно, как в результате этой игры шаг за шагом стирается осознание идентичности, базирующейся на особенностях языка; фольклор начинает рассматриваться в качестве огромного каталога, в котором не существует четко очерченных граней. Показателен в этом плане музыкальный проект известного американского виолончелиста Йо-Йо Ма "Silk Road", в котором собрана музыка народов всех стран, по которым пролегал Великий шелковый путь. Кстати, одним из участников этого проекта стал армянский композитор Ваче Шарафян.

Как ни парадоксально, но угасанию развития фольклорной культуры в ее эндемическом виде отчасти способствовало и профессиональное творчество. Пройдя через призму мышления композитора, фольклор утрачивал свое имманентное качество вариабельности, подвергаясь безапелляционной фиксации, как бы "канонизации". Ученый-фольклорист, записывавший образец народного творчества, пусть даже во множестве вариантов, придавал законченный облик чему-то сиюминутному, спонтанному, веками существовавшему не вопреки, а именно *благодаря* своей чистой вербальности, "безбуквенности". В свою очередь, композитор возводил в ранг неприкосновенности уже не продукт коллективного безымянного творчества, но собственное видение и представление последнего. Недаром наиболее естественная, непосредственная музыка XX в., созданная под влиянием фольклора, принадлежит перу композиторов-фольклористов (Бартока, Комитаса и т. д.), которым народная культура была знакома через личный контакт, благодаря чему в их музыке находило воплощение понимание фольклора как открытого творчества, *work in progress*, - чему, к сожалению, кладет конец наша эпоха. Вновь обратимся к труду А. Костиной: "От разрушения традиционную культуру не спасает даже реконструкция и архивация. Этническое, национальное, самобытное сегодня... как предмет особой гордости сохраняется, музеефицируется и изучается, но, вместе с тем, под влиянием стандартов презентации и репрезентации существенно... деформируется и разрушается. Эта проблема получает новое освещение в контексте рассуждений о современной реальности как гиперреальности, где подлинные вещи заменяются симулякрами"<sup>3</sup>.

Ситуация, сложившаяся в данном смысле в Армении, по сути не отличается от общемировой. Здесь также налицо процесс превращения народной музыки из живого, развивающегося организма в "конвертируемую" сумму культурных ценностей нации, подлежащую архивации и реконструкции. Этому, безусловно, способствовали те же экономические и общекультурные предпосылки, что и в других странах. Так, механизация аграрного процесса повлекла за собой лишение смысла целого пласта

<sup>3</sup> А. К о с т и н а, указ. соч., стр. 103.

крестьянской песни-речь идет о т. н. пахотных или "плужных" песнях. Как следствие, они вышли из обихода и со временем превратились в образцы, окончательно зафиксированные этнографическими сборниками и исследовательской литературой. Та же участь была уготована и другим разновидностям трудовой, бытовой и игровой песни. Десакрализация брачного ритуала, превратившая бракосочетание в гражданский акт, отменила необходимость ритуальных песен; как следствие-еще большая степень десакрализации этого акта. Как отмечает А.Пахлеванян, "Под влиянием социально-политических и общественно-экономических условий жизни нации обряд [свадьбы] претерпел существенные изменения, а вместе с ним и облик свадебной музыки. Почти полностью исчезли из быта интереснейшие песни, непосредственно связанные с таинством обряда... Это объясняется наблюдаемой повсеместно тенденцией ослабления обрядовости в современной свадебной игре и усиления роли развлекательной музыки – инструментально-танцевальной и песен-плясок"<sup>4</sup>.

Разумеется, гораздо труднее лишить смысла, скажем, колыбельную песню. Но ведь при этом, в качестве колыбельной совершенно необязательно должна выступать собственно народная песня, передаваемая от поколения к поколению или заново сочиненная по ее подобию; ее вполне в состоянии заменить, предположим, эстрадная песня, услышанная по телевидению, радио, в записи и т. д. Специфика погребальных песен-плачей также несколько иная. Они до сих пор в какой-то мере продолжают существовать, однако такие песни, являясь спонтанными и, пожалуй, самыми эмоциональными из всех типов народных песен, не подлежат ни сохранению, ни передаче – в противном случае они потеряли бы свою искренность. А.Саакян замечает: "...каждый образец современного вохба [песни-плача – А.А.] может быть строго индивидуальным, нетрадиционным... Момент импровизационности, как жанровая принадлежность, с одной стороны, степень художественности мышления индивида, его творческие возможности – с другой, исключили вохб из сферы традиционной передачи"<sup>5</sup>. Живет своей жизнью также и народно-профессиональное творчество фольклорных бардов. Однако их песни, будучи в большинстве своем авторскими, по определению лишены анонимности крестьянской песни, а кроме того, их вряд ли возможно рассматривать в качестве явления сугубо национального.

Одной из характерных черт, присущих армянской массовой музыке постфольклорной эпохи, является зарождение стиля, известного во многих странах под названием "fusion"- "сплав". Fusion-странный стиль, и его возникновение очень характерно для постмодерна. Собственно говоря, это не какой-то конкретный стиль, а общее наименование целого ряда производных стилей, основной характеристикой каждого из которых является изначальная вторичность, отсутствие специфических средств выразительности, достижение эффекта новизны лишь за счет совмещения давно известных стилей и жанров, а также, в основном, преобладание гедонистического начала над философским, низкий уровень эмоциональной вовлеченности и т. д. Для музыки fusion наиболее характерно привлечение в качестве основных составляющих "стилистического сплава" (точнее-смешения), с одной стороны, народную музыку во всех ее проявлениях (особенно речь идет о музыке стран Востока, из экзотической переродившейся в очередное клише), а с другой стороны-стилистические и жанровые элементы какого-либо из направлений неакадемической профессио-

<sup>4</sup> А. Па х л е в а н я н, *Вопросы армянской музыкальной фольклористики*, Ер., 2005, стр. 41-42.

<sup>5</sup> Там же, стр. 46.

нальной музыки: например, джаза, стиля поп, иногда даже более “академической” репетитивной техники... Очевидно, что подобный собирательный стиль мог обрести жизнеспособность лишь в нашу эпоху, когда, во-первых, схожие явления имеют место и в академическом искусстве, а во-вторых, практически полностью изжил себя принцип отмежевания элитарного от массового. Как бы то ни было, стиль fusion получил широкое распространение, причем, в основном у т. н. “средней прослойки” общества; нацеленность на среднего потребителя, отрицание элитарной герметичности искусства есть также явление, имманентное искусству нашего времени, и является одним из основных признаков преодоления авангарда. Как отмечает американский филолог и богослов Кевин Харт: “Чтобы быть авангардистом, человек должен нарушать правила, но что, если само нарушение правил стало правилом? Чтобы быть авангардистом, человек должен занять маргинальную позицию по отношению к миру искусства, но что, если сам этот мир активно стремится превознести маргинала? ...несложно признать, что с постмодернизмом идея авангарда себя исчерпала”<sup>6</sup>.

Возвращаясь к ситуации в Армении, нельзя не отметить появление и повсеместное распространение на рубеже двух тысячелетий таких комбинативных стилей, как этно-джаз, этно-поп, фольк-рок и т. д. Этому во многом способствовала, в частности, всемирная слава прекрасного исполнителя на дудуке Дживана Гаспаряна. С одной стороны, большая заслуга этого музыканта заключается в том, что он способствовал широкой популяризации армянского дудука, став своего рода мировым глашатаем армянского инструментального фольклора. Но с другой стороны, расплываясь во множестве более или менее коммерческих проектов, постепенно утрачивалась цель народного наигрыша, терялся его изначальный адресат – не только его прикладное значение, но и более глубинные характеристики и ассоциативно-символические ряды. Разумеется, положительно, что через такой массовый жанр, как, скажем, саундтрек голливудского фильма, ценности армянской музыкальной культуры доносятся до огромного количества людей во всем мире. Однако, выражаясь терминами философии постструктурализма, они тем самым перерождаются в “знаки без денотатов”, “симулякры” (Ж.Бодрийяр), предстающие виртуальными эквивалентами той культуры, глубинная связь с которой утрачивается постепенно, но бесповоротно.

Творчество Дж.Гаспаряна – пример не единичный, хотя и наиболее яркий. Среди других можно назвать Арто Тунчбойджяна и собранный им Armenian Navy Band, ряд этно-джазовых коллективов, известную рок-группу “Бамбир”, австрийский лейбл “Vigen Productions”, издающий хип-хоп музыку с африканскими вокалистами и аранжировками, где непосредственно задействованы сэмплы армянских инструментов, а также, не в последнюю очередь, этно-поп дуэт сестер Ануш и Инги Аршакян, посвятивших себя эстраднему “remake”-у народных песен.

Повсеместно сталкиваемся мы с таким новым для нашего общества явлением, как “сувениризация” не только народно-прикладного искусства, но и тех ветвей народного творчества, которые изначально не мыслились в качестве прикладных, в том числе и музыки. Недаром среди товаров, выставяемых на продажу в многочисленных сувенирных магазинах, все чаще фигурируют компакт-диски с записями либо народной музыки, либо, гораздо чаще – вышеупомянутых ее “римэйков”. Мы далеки от придания этому явлению однозначно негативного смысла. Однако, тиражируясь в многочисленных копиях, народная музыка перестает быть тем,

<sup>6</sup> К. Х а р т, *Постмодернизм, М., 2006, стр. 44.*

чем являлась изначально. Народное творчество постепенно перерождается в симуляцию народного творчества, и его созданием, а точнее, *воссозданием* руководят совершенно иные предпосылки. Так известные русские "матрешки", постепенно исчезая из непосредственного быта, в позднесоветскую эпоху стали достоянием валютных магазинов. Реалистичности народной песни приходит на смену гиперреалистичность сувенира. Любый опытный турист, придирчиво подбирающий себе сувенир, знает, что купленная им вещь должна быть некоей квинтэссенцией *genius loci*, должна вбирать в себя по возможности большее количество характеристик, присущих данной стране или местности. Неслучайно, что большим спросом у туристов, посещающих Армению, пользуются керамические изделия в "народном" духе, украшенные элементами наскальной живописи, изначально относящимися к совершенно иной эпохе, чем прототипы этих изделий. Так в одном предмете начинают искусственно сочетаться черты разных эпох и стилей, что благоприятно сказывается на его коммерческой выгоды. Гиперреальность народной музыки в постфольклорную эпоху сопоставима с гиперреальностью цифровых образов. "Переживание реальности как образа многие постмодернисты именуют гиперреальностью. Мы живем в мире образов, представляющихся более реальными, чем окружающий нас естественный мир. Птицы, показанные по цифровому телевидению имеют более интенсивную окраску, более четко очерченные детали, чем в лесу"<sup>7</sup>.

В условиях этой симуляции, постепенно приобретающей тотальный характер, творят композиторы начала 21-го столетия, в том числе и в Армении. Сегодня уже становится зримым наступление новой эпохи в отечественной музыке-эпохи, спровоцированной распадом Советской империи, но потребовавшей порядка двадцати лет для собственного осмысления и формирования. И если результаты, данные этой эпохой, не поражают яркими находками и радикальными стилистическими переломами, то причиной тому следует считать, в основном, общий характер искусства нашего времени, нацеленного не на открытие нового любой ценой, а на переработку старого. Как тонко подмечает В.Мартынов, "...постмодернизм не расширяет пространство искусства за счет ранее табуированных для искусства областей, но возвращается на табуированное для авангардизма пространство уже существующего в наличии искусства"<sup>8</sup>.

В этих новых условиях одним из особо отрадных факторов является то, что композитору перестала навязываться со стороны государства необходимость считать фольклор основной точкой отсчета и мерилем собственного творчества, поощряя любое обращение к фольклору. Поэтому композиторы, продолжая обращаться к народной музыке в наши дни, делают это, думается, уже более искренне, исходя из внутренних побуждений. Хотя, конечно, могут существовать и другие причины – например, поиск языковой индивидуальности, могущей стать серьезным фактором в привлечении интереса к творчеству данного автора на мировом рынке. Нам не хотелось бы, чтобы данное утверждение рассматривалось как упрек в меркантильности и, как следствие, неподлинности творчества. Понятие рынка трактуется нами в широком смысле – как окружающей нас реальности, в которой произведения искусства подвергаются оценке и становятся предметом потенциального торга.

Основной отличительной чертой мышления нашего времени является то, что композитор уже не *реконструирует* фольклор в собственном

<sup>7</sup> К. Х а р т, указ. соч., стр. 94.

<sup>8</sup> В. М а р т ы н о в, *Зона Opus Posth, или рождение новой реальности*, М., 2005, стр. 240.

творчестве, но скорее *симулирует* его. Симуляция фольклора проявляется в том, что фольклорные элементы не становятся базой определенного стиля, а вовлекаются в общую систему стилистических ссылок, в которой отдельные стилистические особенности мышления разных эпох существуют как бы в «невесомости», лишь временно, стохастически сталкиваясь друг с другом. При этом воссоздание фольклорных элементов приближено к реальности гораздо больше, чем во все прошлые эпохи – например, детально учитывается микрохроматика, приобретает доскональную графическую фиксацию агогическая импровизационность и т. д.; т. е. можно сказать, что фольклор в современном композиторском творчестве *гиперреализируется*, одновременно инсталлируясь в инородный контекст. Эта проблема, разумеется, заслуживает более детальной разработки и пояснения на конкретных примерах. Однако для тех, кому хорошо знакомо сегодняшнее творчество армянских композиторов (особенно наиболее передовых представителей отечественной школы), вышеупомянутые положения вряд ли покажутся спорными.

Думается, на данном этапе не совсем уместно делать какие-либо поспешные выводы, и тем более прогнозы. Впрочем, там, где речь идет о живой творческой мысли, прогнозы на проверку оказываются неуместны вообще. Поэтому нам бы хотелось, чтобы данное эссе воспринималось как попытка описать те, возможно сиюминутные и недолговечные, явления, значимость которых для развития отечественной музыкальной мысли окажется подтверждена или опровергнута лишь годы спустя. Позволим себе высказать пожелание, чтобы данная тема привлекла как можно большее количество исследователей, ибо в музыкознании объективность может быть достигнута лишь путем суммирования и сопоставления субъективных взглядов, тем более если речь идет о таких актуальных вопросах как тот, что составил предмет данного исследования.

#### ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀԵՏՖՈԼԿԼՈՐԱՅԻՆ» ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՍԱՄԻՆ

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Ա. Ավանեսով \_\_\_

«Հետֆոլկլորային» բառն ընդունելով որպես արդի ժամանակաշրջանի ժողովրդական ստեղծագործության և նրան ամնչակցվող պրոֆեսիոնալ գեղարվեստական ստեղծագործության վիճակը բնութագրող յուրօրինակ եզր՝ դիտարկվում է երաժշտական բանահյուսության զարգացման բնահուն ընթացքի խաթարման և հիմնականում բազմակողմանի ուսումնասիրման և դասակարգման ենթարկելու խնդիրը: Մասնավորապես դիտարկված է պոստմոդերն ոճական ուղղության մեջ երաժշտաբանահյուսական նյութին ցանկացած անդրադարձը՝ որպես սեփական կամ օտար գենետիկայի ընդգրկում այլազան կոմբինացիաների կամ այլակառուցիկ խաղերի մեջ: Միևնույն ժամանակ ժամանակակից հայ կոմպոզիտորական արվեստում պահպանվում է անկեղծ ու կենսատու կապվածությունը հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության հետ:

ԳՐԱԲԱՐԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Հին հայերենի նկատմամբ հետաքրքրությունը, վերջին տասնամյակներին նկատելիորեն աճելով, ընդգրկել է ավելի լայն շրջանակներ՝ ներառելով նաև հանրակրթական դպրոցը, այլև ոչ բանասիրական կրթությամբ բազմաթիվ մարդկանց, որոնք ուղղակի ցանկություն ունեն սովորել գրաբարը: Չգալի առաջընթաց կա ինչպես ուսուցման արդիական մեթոդիկայի մշակման, այնպես էլ նոր ուսումնական միջոցների, մասնավորապես նոր դասագրքերի, դասընթացների, ձեռնարկների, ուսումնաօժանդակ այլ գրականության ստեղծման և գործադրման առումով:

Մեծ և անուրանալի է Մ.Արեղյանի, Ս.Ղազարյանի, Ա. Աբրահամյանի, ապա նաև Պ.Շարաբխանյանի, Հ.Ավետիսյանի և Ռ.Ղազարյանի<sup>1</sup> վաստակը հին հայերենի դասագրքերի ստեղծման գործում, սերունդներ են նրանց կազմած դասագրքերով սովորել և սովորում գրաբարը: Վերջին երկու տասնամյակները հատկապես բերքառատ եղան հին հայերենի ուսուցմանը նվիրված նոր ուսումնամեթոդական գրականության երևան գալու առումով. իրար հետևից հրատարակ իջան Գ. Խաչատրյանի «Գրաբարի շարահյուսության ձեռնարկը» (1989), Վ.Հովհաննիսյանի «Գրաբարի ինքնուսույցը» (1999, երկրորդ տպագրությամբ՝ «Գրաբարի ձեռնարկ, 2004»), Լ.Խաչատրյանի և Գ. Թոսունյանի «Գրաբարի դասագիրքը» (2004), Է. Սկրտչյանի «Գրաբարի դասընթացը» (2008):

Ի դեպ, վերջին սերնդի այս ուսումնական ձեռնարկներին հատկանշական է մի ընդհանրական իրողություն, որը նրանց նկատելիորեն տարբերում է նախորդներից: Ի տարբերություն հին դասագրքերի, որոնցում հընթացս գրաբարի ձևաբանական կարգերի նկարագրության՝ երբեմն-երբեմն արծարծվում են նաև շարահյուսական բնույթի հարցեր, մեկնաբանություն են ստանում նաև այդ լեզվի շարահյուսական կառուցվածքի հատուկներ իրողություններ, սրանցում գրաբարի շարահյուսությունը ունի համակարգված նկարագրություն, մատուցվում է առանձին բաժիններով կամ ենթաբաժիններով, իսկ Գ. Խաչատրյանի հեղինակած ուսումնական ձեռնարկն<sup>2</sup> ամբողջապես նվիրված է գրաբարի շարահյուսությանը և վերջինիս թեև համառոտ, սակայն առայժմ միակ և հնարավորինս ամբողջական դասագիրքն է:

Այնուհանդերձ գրաբարի շարահյուսության դասավանդումը բուռն, այդ լեզվի հնչյունական-արտասանական առանձնահատկությունների ու ձևաբանական իրողությունների նկարագրման և ուսուցման արդեն կայուն ավանդույթներ ունեցող մեթոդիկայի կողքին, ուսուցման համեմատաբար երիտասարդ ոլորտ է: Հետևաբար նրա դասավանդման փորձը հաղորդելու յուրաքանչյուր արտահայտություն ինքնին կարևոր է դառնում, մասնավոր, երբ գրաբարի շարահյուսության մի շարք հարցերի դասագրքային մեկնաբանություններում աչքի առաջ ունենք երբեմն ոչ էական, երբեմն էլ նույնիսկ սկզբունքորեն տարբեր մոտեցումներ: Մինչդեռ գրաբար նախադասությունների բովանդակության և առհասարակ բնագրերի ճիշտ ընկալումը, նաև ճիշտ թարգմանությունն առավել դյուրին են դառնում, երբ դասավանդման ընթացքում լեզվական իրողություններն ստանում են հնարավորինս հստակ և ոչ հակասական բնութագրումներ: Այս առումով ընդգծված ուշադրության են արժանի, օրինակ՝ գրաբարի նախադասության գլխավոր անդամները՝ ենթական ու ստորոգյալը, որոնց տեսակների, կազմության, արտահայտության, շարադասության, համաձայնության և ոճական-արտահայտչական դրսևորումների բուռնական ուսուցման հարցերում տարակարծությունները քիչ չեն:

Մինչև շարահյուսական իրողությունների մեկտեղված ուսուցումը, որ իրականացվում է գրաբարի բուռնական ուսուցման վերջին տարում, ենթակայի վերաբերյալ առանձին տեղեկություններ սովորողներին տրվում են ձևաբանության բաժնում, մասնավոր

<sup>1</sup> Մ. Ա թ է դ յ ա ն, Գրաբարի դասագիրք, Եր., 1916: Նույնի՝ Գրաբարի քերականություն, Եր., 1936: Ս. Ղազարյան, Գրաբարի դասագիրք, Եր., 1951: Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976: Պ. Շարաբխանյան, Գրաբարի ուղեցույց, Եր., 1967: Նույնի՝ Գրաբարի դասընթաց, Եր., 1974: Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:

<sup>2</sup> Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Գրաբարի շարահյուսության ձեռնարկ, Կիրովական, 1989:

բապես, կապված պակասավոր և միադիմի եղանակիչ բայերի, ինչպես նաև որոշ բայական բաղադրյալ ժամանակաձևերի գործածության յուրահատկությունների հետ:

Գրաբարի ենթակայի ուսուցումը պիտի ներառի նրա կազմության, տեսակների, արտահայտության և ոճական գործածության հարցերը, որոնք գործնականորեն պիտի մեկնաբանվեն ու ամրապնդվեն ճիշտ ընտրված վարժություններով ու նյութին համապատասխան ընթերցանության հատվածներով:

Ենթակայի ուսուցումն սկսում ենք նախադասության կառուցման մեջ նրա՝ ստորոգյալի հետ միասին ունեցած առանցքային նշանակության ընդգծմամբ՝ նախադասություն կազմող բառերի աստիճանական բացառման մեթոդով հիմնավորելով գրաբարում ևս ենթակայի և ստորոգյալի շարահյուսական դերի կարևորությունը:

Արդի հայերենի նման՝ գրաբարում նույնպես հարկավոր է հստակորեն տարբերակել սովորական կամ բուն ենթական կողմնակից, ընդ որում, առաջինը՝ որպես նախադասության ստորոգյալին առնչակից, նրա հետ ստորոգումային կապակցություն կազմող գլխավոր անդամ, երկրորդը՝ որպես նախադասության կազմում առկա դերբայական դարձվածի գերադաս բաղադրիչի՝ դերբայի լրացում:

Սովորական ենթական գրաբարում կարող է արտահայտվել անվան ուղղական, սեռական և տրական հոլովներով, եզակի դեպքերում՝ նաև հայցականով,<sup>3</sup> ինչպես՝ *Եւ քազաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն յաղթութեամբ և բազում ավարաւ /Ազաթ./: Չմարթէր միումն երկուս սերմանս հակառակ միմեանց արկանել /Եզն./: Անդ քազաւորել նմա նոցա /Եզն./: Չկնի այսպիսեաց իրաց յաշողութեանց դադարեալ Շամիրանայ աուրս ինչ սակասս ի դաշտի միում /Խոր./: Խաղաղասէր ասեն գոլ զազգն ճենաց /Խոր./: Կողմնակի ենթական դրսևորվում է սեռականով կամ տրականով՝ Յանցանել մրրկի, եղծանի ամպարիչուն /Առակք/: Յայն տեղի հասուցին, մինչև հարցանել նմա /Եղ./: Գրաբարը չունի ուղղականով դրված կողմնակի ենթակա:*

Ինչպես սովորական, այնպես էլ կողմնակի ենթական բնութագրող հատկանիշներից մեկը նրա՝ կազմությանը պարզ կամ բաղադրյալ լինելն է: Նման տարբերակման հիմքում ընկած է ենթակայի՝ մեկ բառով կամ բառերի կապակցությանը դրսևորվելը:

Կազմությանը պարզ ենթական կարող է արտահայտվել

#### 1. ուղղական հոլովով դրված՝

ա) գոյականով՝ *Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինուսի խնամակալեաց իւրոց հայրենեացն /Խոր./: Բազում ծմերաց հայեցան սառնամանիք /Եղ./:*

բ) գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերով (ածական, թվական, դերբայ և այլն)՝ *Ճերմակաձին գինի արբցէ /Բուզ./: Եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիս /Մատթ./: Հինգն իմաստունք էին /Մատթ./: Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելովն /Խոր./: Չէրն չէին վասն չէին յաշտ առնէր /Եզն./:*

գ) դերանվամբ՝ *Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր /Եղ./: Ես աստ սովամահ կորնչիմ /Դուկ./: Սոքա երկոքեան արք պիղծք և անօրէնք էին /Բուզ./:*

2. սեռական հոլովով դրված գոյականով, դերանվամբ և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերով: Այսպիսի ենթակայի հետ ստորոգյալի գործառնություն կարող են հանդես գալ՝

ա) *եւ, գոյ կայ* պակասավոր բայերի երրորդ դեմքի ձևերը, նաև *չիք* բայը՝ «ունենալու» իմաստով, ինչպես՝ *Էր դուստր մի գեղեցիկ Անդուկայ ուրումն /Բուզ./: Կայցէ՞ ձեզ հայր կամ եղբայր /Ծննդ./:*

բ) «ներգործական սեռի անցյալ դերբայ + օժանդակ բայի միադիմի ձև» շարահյուսական կաղապարը,<sup>4</sup> ինչպես՝ *Ոչ...արարեալ է զնա Սստուծոյ /Եզն./: Լուեալ է մեր գրատաստան քառասուն զինուորացն Քրիստոսի /Եղ./: Սհա մոռացեալ իցէ մեր զամենայն նեղութիւնս և չարչարանս /ն.տ./: Աշխարհաբար քարզմանելիս սրանց ենթակաները*

<sup>3</sup> Հայցականն անորոշ դերբայի հետ (*accusatives cum infinitivo*) կառույցն ընդունված է համարել գրաբարին խորք իրողություն՝ քերականական պատճենում հունարենից և քարզմանել իբրև ուղղականաձև ենթակայով երկրորդական նախադասություն բարդ ստորադասական կառույցի կազմում, ինչպես՝ *ՉԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է /Եզն./ = Անպատշաճ է ասել, թե Աստված այնպիսի բաների արարիչ է: Չաստուած ի խաչ էլեալ ի մարդկանէ քարոզեն /Եղ./ = Քարոզում են, թե Աստված մարդկանց ձեռքով է խաչ բարձրացել:*

<sup>4</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, *նշվ. աշխ., էջ 22:*

ուղղական հուղովով են, ստորոգյալները՝ բաղադրյալ դիմավոր բայաձևեր՝ միմյանց հետ դիմային և թվային համաձայնությամբ: Ինչպես՝ *Աստված չի արարել նրան: Մենք լսել ենք Քրիստոսի քառասուն զինվորների դատաստանը: Մենք մտացել ենք* բոլոր նեղություններն ու չարչարանքները:

զ) *անորոշ դերբայն առանձին վերցրած՝ Չմերձ լինել նորա* ի տուն իմ /Խոր./: Ուսուցաներ զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչև *զարմանալ նոցա /Մատթ./: Մի՛ տեսանել նոցա* զաւեր սուրբ եկեղեցեաց /Եղ./:

դ) *անցյալ դերբայն առանձին վերցրած՝ Սակայն ստեալ Խոսարովու* զբազմութիւն զօրաց իւրոց /Ագաթ./: Եւ *տեսեալ Հայկին* զՏիտանեանն կոռ վառեալ /Խոր./: ...*ոչ կամեցեալ* հնազանդ լինել Հայկայ /ն.տ./: Վերջին երկու դեպքերում (զ և դ կետեր) դերբայ-ստորոգյալը պիտի թարգմանել դիմավոր բայաձևով, իսկ սեռականով ենթական՝ ուղղական հուղովով: Ինչպես՝ Եվ Հայկը տեսավ սպառազինված Տիտանյանին: ...Հայկը չկամեցավ հնազանդ լինել: Նա մտտեցավ իմ տանը:

ե) *միանգամից երկու բայեր. անցյալ դերբայը և դիմավոր բայաձևը:* Ընդ որում, սեռականով ենթական և՛ մեկինն է, և՛ մյուսինը: Այն առաջնահերթորեն դերբայի ենթական է (կողմակի), որովհետև գտնվում է նախադասության մաս կազմող դերբայական դարձվածի մեջ և որովհետև սեռականաձև է: Միևնույն ժամանակ այն նաև ամբողջ նախադասության ենթական է (սովորական), քանի որ դերբայից բացի առնչակցվում է նաև դիմավոր բայի հետ, որն այդ կառույցի ստորոգյալ է:

Օրինակ՝ Որում *ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ*...չու արարեալ *զնայ* յերկիրն Արարադայ /Խոր./: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամատրսն Բելայ՝ խստութեամբ *պատասխանեաց /ն.տ./:* Արդ *մեր թողեալ* զնոսա, *հարցցուք* զնոսա /Եգն./: Նման կառույցները ժամանակակից հայերեն թարգմանելիս նպատակահարմար է պահպանել դերբայական դարձվածը՝ անորոշ դերբայը դնելով գործիական հուղովով, սակայն ենթական համել դարձվածի կազմից և գործածել ուղղականով, ինչպես՝ Այժմ *մենք, թողնելով* նրանց, հարցնենք սրանց: Չայս *իմացեալ* աղեղնատրին Հայկայ՝ *յառաջ վարե՛ զինքն /Խոր./ =* Այս *իմանալով՝* աղեղնավոր Հայկն *առաջ է նետում* իրեն:

Սակայն այդպես չի կարելի թարգմանել այն գրաբարյան կառույցները, որոնցում դերբայական դարձվածի սեռականով կողմնակի ենթական և նախադասության ենթական տարբեր են, ինչպես՝ Եւ *ասացեալ* զայս *երանելոյն* չուեցին *ամենեքեան* յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց /Փարպ./: Է. Սկրտչյանն առաջարկում է թարգմանության երկու տարբերակ՝ «Եվ *երանելին* այս *ասելով՝* *ամենքը* Աղվանից աշխարհից չվեցին Հայոց երկիրը» և «*Երանելին* այս *ասաց*, և *ամենքը* Աղվանից աշխարհից չվեցին Հայոց երկիրը»:<sup>5</sup> Կարծում ենք, որ առաջին տարբերակը պետք է բացառել, մանավանդ որ Է. Սկրտչյանն ինքն էլ իրավացիորեն նկատել է, որ «այսպիսի կառուցվածքով նախադասությունն ընդունելի չէ աշխարհաբարում»:<sup>6</sup> Ասել է թե՛ նման կառույցներն աշխարհաբար թարգմանելիս դերբայական դարձվածը պետք է փոխակերպել երկկազմ նախադասության, ինչպես երկրորդ տարբերակում է:

զ) *անորոշ դերբայի նախդրավոր ձևը*, որի հետ սեռականով կողմնակի ենթական նախադասության մեջ կազմում է ժամանակի պարագայի շարահյուսական դերով հանդես եկող դերբայական դարձված: Օրինակ՝ *Յեղանել մեր* հանդէպ ամբոյսին Բելայ, դիպել ջանասցուք.../Խոր./ Եւ ի լինել *ճակատում* պատուէր տայ զօրսպետաց իւրոց /ն.տ./: Ի *քուն լինել մարդկան* եկն թշնամի նորա/Մատթ./ և այլն: Աշխարհաբար կարելի է թարգմանել երկու կերպ. կամ՝ որպես դերբայական դարձված պարզ նախադասություն կազմում (*Մարդկանց քնած պահին* եկավ նրա թշնամին), կամ՝ որպես երկրորդական նախադասություն բարդ ստորադասական կառույցի մեջ (*Երբ մարդիկ քնած էին*, եկավ նրա թշնամին):

3. Պարզ ենթական գրաբարում կարող է արտահայտվել նաև *տրական հուղովով* դրված գոյականով, դերանվամբ և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերով:

ա) Տրականով է դրվում «միադիմի բայ + անորոշ դերբայ» կառույցով արտահայտված բայական բաղադրյալ ստորոգյալի ենթական, ինչպես՝ *Չէր մարթի մարմնատրի ան-*

<sup>5</sup> Է. Մկրտչյան, *Գրաբարի դասընթաց*, Եր., 2008, էջ 153:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 152:

*մահ կալ /Եզն./*: Եւ կամ է՞ր արդեօք *հնար աղջկան* միջոց մանկամարդոյ՝ *ունել գրէմ* առն սկայի /Ազաթ./: Դերբայն աշխարհարար թարգմանում ենք դիմավոր բայածնով, իսկ տրականով ենթական՝ ուղղական հոլովով. = *Մարմնավորը չի կարող ամմահ մնալ*:  
 բ) Տրականով է դրվում նաև *դերբայական դարձվածի մեջ անորոշ դերբայի կողմնակի ենթական*, ինչպես՝ *Չորմէ ասէին... լինել սնա* և ի ցանկութիւնս մարմնոյն *չափաւոր /Խոր./*: Այնպէս մօտագոյնս մերձեմայր, մինչև *ճանաչել նմա* գերիս ի նոցանէ /Եղ./: |Հաճեցաւ Տէր *գրնակել սրբոցդ* Աստուծոյ ի տեղտօղ /Ազաթ./: Ընդ որում, դերբայական դարձվածն արդի հայերեն պետք է թարգմանել իբրև երկրորդական նախադասութիւն՝ նրա տրականով ենթական վերածելով ուղղականի, անորոշ դերբայը՝ դիմավոր բայի՝ = Որի մասին ասում էին, ... որ սա *չափավոր է եղել* նաև մարմնի ցանկութիւնների մեջ: Տերը ցանկացավ, որ *Աստծու սրբերը բնակվեն այդտեղ*:

Գրաբարի պարզ ենթակայի մասին վերը ասվածի գործնականորեն ամրապնդումը պիտի կատարել ընտրովի վարժութիւններով և ընթերցանութիւնի հաստատմանը՝ առանձնակի ուշադրութիւն դարձնելով մանավանդ որոշ գրաբարյան կառույցների՝ ժամանակակից հայերեն ճշգրիտ թարգմանութեան խնդիրներին:

Կազմութեամբ *բաղադրյալ ենթական* գրաբարում կարող է արտահայտվել՝

1. *երկու՝ իրար չլրացնող բառերի միութեամբ*: Այդպիսիք կարող են լինել՝  
 ա) *Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները բացառականի մթագնած կամ ոչ կանոնավոր ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն, մեզոյն, քեզոյն, ձեզոյն ձևերի (հաճախ նաև իսկ բառի) հետ*: Օրինակ՝ *Ես ինձէն իսկ* մտի ի կրակատունն ձեր /Եղ./: *Մեք մեզէն* լինիմք քակտիչք օրինաց մերոց /ն.տ./: *Դուք ձեզէն իսկ* քաջ գիտք /ն.տ./:  
 բ) *Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները՝ ինքն, ինքն իսկ, ինքնին, ինքնին իսկ բառերի հարադրութեամբ*, ինչպես՝ *Դու ինքն* արժանիս արարեր զմեզ արբանեկութեան/Ազաթ./: *Ես ինքն իսկ* եմ/Եղ./: *Ես ինքնին իսկ* ութայի ջանալ կատարել /Բուզ./:  
 գ) *Անձամբ անձին կապակցութեամբ՝ Անձամբ անձին* փակեցին գորումս հաւատոյ գիտութեանն /Եզն./: Քանզի *անձամբ անձին* օգնել ոչ կարէին /Յովբ./:  
 դ) *Գոյականը ինքն կամ ինքնին բառերի (հաճախ նաև իսկ բառի) հետ*, ինչպես՝ Այլ և *ինքն թագաւորն* հրամանի նորա անսայր /Եղ./: Ապա *ինքն թագաւորն* Պապ երթայր հասանէր գտանէր գեպիսկոպոսապետն Ներսէս /Բուզ./: Եւ նա ոչ գիտէ, թէ *երկիրն ինքնին* բերէ զպտուղ /Մարկ./: *Ինքնին Արտաշիր* ... կոտորեաց զամենայն ցեղ Կարենեան Պահլաւին /Խոր./:  
 ե) *Գոյականը կամ դերանունը երանգավորիչ իմաստով սպասարկու բառերի (շաղկապներ և այլն) հետ*՝ *Դև ուրեմն* հարաւ ի քեզ /Ազաթ./: *Նշանագիրքն իսկ* ... յարուցեալք դիպեցան /Կոր./: *Տղայք անգամ* յայթոնն /Փարպ./:

Վերը բերված բոլոր օրինակներում (ա,բ,գ,դ,ե կետեր) ենթակաները, շնորհիվ աստիակական իմաստ ունեցող հարադիրների, տրամաբանորեն շեշտված են (= *Մենք ինքներս* ենք մեր օրենքների խախտողները: *Հենց ես ինքս* էի... շտապում կատարել: Որովհետև *իրենք իրենց* չէին կարողանում օգնել: Ապա *Պապ թագավորն ինքն* է ... գտնում Ներսէս եպիսկոպոսապետին):

2. *բացահայտիչ-բացահայտյալ կապակցութեամբ*՝ *Եւ Մարա կին Աբրամու* ոչ ծնանէր նմա /Ծննդ./: Ապա յետ այտորիկ թագաւորեաց *Խոսրով Կոտակ՝ թռն Խոսրովու* /Բուզ./: Հրաման ետ մեծ կայսրն օգոստականն Կոստանդիանոս /Ազաթ./: *Մեք՝ մեղադրեալք* յաստուծոյ պատուհասիմք /Փարպ./:

3. *գոյականի, դերանվան կամ փոխանվան և մասնական բացառականի հարադրութեամբ*, ինչպես՝ *Հինգն ի նոցանէ* յիմարք էին /Մատթ./: *Ոմն ի միջոյ* խորհրդեանն զիսաւոր նահապետ էր Պարթևաց տէրութեանն /Ազաթ./: ... Չայնու ժամանակաւ ասպատանբեաց յարքայէն Հայոց *մի ի ծառայից* նորա:

4. *Դերբայական դարձվածով՝ Չցլու միս ուտել* դարման է մարմնոյ /Եզն./:

Գրաբարի ենթակայի ուսուցումը պետք է ավարտել նրա շարադասութեան և ստորոգյալի հետ համաձայնութեան վերաբերյալ տեղեկութիւնների հաղորդմամբ: Դրանք պիտի լինեն ընդհանուր բնույթի և ներկայացնեն կապակցութեան այլ տեսակների ամենատեսակական դրսևորումները:

Շարադասութեան տեսակետից գրաբարում ենթական ազատ է, կարող է դրվել ստորոգյալից և՛ առաջ, և՛ հետո, ինչպես՝ *Մեք* զայս ճշմարիտ հաւատս *ունիմք* ի Սուրբ

Գրոց /Ազաթ./: *Մոռացոյց* ինձ *Աստուած* զամենայն վիշտս իմ /Մննդ./: Մակայն հետադաս ենթական ավելի հաճախադեպ է: Գրա հետ միաժամանակ կան մաս դեպքեր, երբ ենթական ղիբրը մախադասութեան մեջ ակնհայտորեն, երբեմն էլ նույնիսկ բացարձակապես կայուն է: Այդպիսին է, օրինակ, ցուցական, հատկապես հարաբերական դերանուններով արտահայտված ենթական առաջադասությունը (*Մա ժառանգեցուցանէ զեղբայրս իր /Խոր./: ...որք հայիտյէին զանդարձ ամբարշտութիւն նորա/Եղ./*): Կայուն առաջադաս է ենթական մաս ավելադիր շրջմամբ գրաբարյան կառույցներում (*Տէր է որ ուսուցանէ զիմաստութիւն և զհանճար /Յովբ./*), կա՛ն սաստկական իմաստով հարադրի առկայութեամբ (*Տղայք անգամ յայթոն /Փարս./*) կա՛ն բաղադրյալ ստորոգյալի հանգույցի զեղչման դեպքում (*Մահմանք քաջաց զէնն իւրեանց: Շրթունք նորա շուշանք*) և հակառակը՝ ենթական գերազանցապես հետադաս է ասացական բայի (ասել) ավելադիր կիրառութեամբ կառույցներում (*Հարցանէր Մերուժան և ասէր /Բուզ./*) և այլն:

Ստորոգյալի հետ գրաբարի ենթականի թվային ու դիմային համաձայնությունը, իր մի քանի առանձնահատկություններով հանդերձ, ընդհանուր առմամբ կատարվում է արդի հայերենի մասն: Կարելի է առանձնակի խոսել թերևս գրաբարի բակառոթյան երևույթի մասին (*Կողոպտեցաւ մարմինը* դիոցն: *Գունդն* Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեան *զեռալ սկսան:* *Տիրեցին* աշխարհիս Հայոց *ազգն* Մասանայ Պարսկի) կամ որոշ ինքնատիպ կառույցներում և՛ թվի, և՛ դեմքի անհամաձայնության մասին (Մեր տեսեալ է: Լուեալ է ձեր) և այլն:

Ենթականի տեսակների, դրանց արտահայտման ձևերի, համաձայնության ու շարադասության ուսուցումը գրաբարի շարահյուսության բուհական դասավանդման կարևոր բաղկացուցիչներից է, և պիտի ջանալ դրան հատկացվող ժամաքանակն օգտագործել տեղին և առավելագույնս արդյունավետ:

#### Համառոտագրություններ

*Ազաթ.* - Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ.Տեր-Սկրտչյանի և Ս. Կանայանի, Երևան, 1983:

*Բուզ.* - Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987:

*Եզն.* - Եզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:

*Եղ.* - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

*Խոր.* - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ.Արեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981:

*Կոր.* - Կորին, Վարք Մաշտոցի, աշխատասիրութեամբ Մ.Արեղյանի, Երևան, 1941:

*Փարս.* - Ղազարայ Փարսեցոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1904:

*Մնացած համառոտագրությունները* (Առակք, Դուկ., Մատթ., Յովբ և այլն) վերաբերում են Սր Գրքի համապատասխան գործերին:

## ВОПРОСЫ ВУЗОВСКОГО ОБУЧЕНИЯ ГРАБАРА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Айрапетян \_\_\_

Преподавание синтаксиса грабара в филологических факультетах вузов, наряду с уже имеющимися устойчивыми традициями методики описания и преподавания звуковых-произносительных особенностей и морфологических реалий этого языка-сравнительно молодая сфера обучения, одним из важных и стержневых вопросов которого является преподавание подлежащего. В статье рассматриваются вопросы строения, видов, выражения и стилевой окраски подлежащего в грабаре, которые должны входить в процесс его обучения, также должны быть практически интерпретированы и закреплены тщательно избранными упражнениями и соответствующими текстами для чтения.

## Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ

### ՀԵՏԱԴԵՏՅԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՄԻՋԱՆՉՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՀԱՐՅԵՐ

«Երջանիկ է նա, ով ընտանիքում է երջանիկ...»

Աղետից հետո բարձրաձայն հնչեց «քանդվեց հայ ավանդական ընտանիքը» տազնապը: Հետագա քսան տարիները միտված էին մի նպատակի՝ վերաստեղծել, կայունացնել և ամբողջական դարձնել հայ ընտանիքն իր ավանդական կաղապարի մեջ, քանի որ հայի ամենամեծ մշակույթն իր ընտանիքն է:

Թեման հրատապ է, քանի որ հետադետյան ժամանակահատվածում (հետայսու՝ անցումային փուլ) ձևավորվեցին ընտանիքի նոր տիպեր և ներընտանեկան հարաբերությունների դերային տեղաշարժեր: Մեր խնդիրն էր առանձնացնել վերակազմավորված ընտանիք տիպը՝ դիտելով այն իբրև վերակազմավորվող հարաբերությունների տեսակ՝ կայուն և փոփոխվող կողմերով, միասնական արժեքային կողմնորոշումներով: Տվյալ դեպքում նկատի ունենք ընտանիքում կազմավորվող նոր հարաբերությունների բնույթի ընկալումը յուրաքանչյուր անդամի կողմից:

Ազգային սոցիալականացման գործընթացում առանձնացրել ենք անցումային փուլում առաջացած ընտանիքի մի քանի տիպեր. լրիվ կազմով, միգրացված (լրիվ կամ մասամբ), վերակազմավորված, եզակի ծնողով, որդեկորույս, երկկողմանի որբերով, որդեգիր ունեցող, խնամակալ ունեցող, հաշմանդամ ունեցող, միայնակ ծերերի, մեկ անձով, օթևանը կորցրած, տարաբնույթ աղանդների հետևող, խոցելի և այլ տիպի ընտանիքներ: Հետազոտության հիմնական նպատակն է բուռնում դասավանդվող «Ընտանիքի հոգեբանություն» առարկայի ուսումնասիրության ոլորտը և շրջանակն ընդլայնել՝ ներառելով հետադետյան ժամանակահատվածում ձևավորված ընտանիքների և վերակազմավորվող հարաբերությունների տեսակները, հատկապես հիշյալ ընտանիքներում երեխաների հոգեբանական հարմարման հիմնահարցերը: Ի դեպ, այս ամենը դիտարկել ենք ոչ թե իբրև տեղային (լոկալ), այլ ընդհանրական խնդիր, քանի որ աշխարհը շարունակ ենթակա է արտակարգ իրավիճակների և սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի, որոնց հետևանքով էլ ստեղծվում են խոցելի խմբերով ընտանիքներ:

Ընդհանուր դրույթներից ելնելով՝ կարևորել ենք հետազոտության հետևյալ խնդիրները՝

- Ուսանողներին նախապես հաղորդել տեսական գիտելիքներ ընտանիքների նոր առաջացած տիպերի մասին:
- Մշակել մեթոդական համակարգ (ընդհանուր հարցադրումներից անցնելու արտակարգ իրավիճակների հետևանքների վերլուծության):
- Որոշակիորեն նշել այն մեթոդները, թե ինչ աշխատանքներ պետք է իրականացնել հոգեբանական դժվարություններ ունեցող երեխաների և ուսանողների հետ (ինչպես դպրոցում, այնպես էլ բուռնում), որպեսզի հետագայում նրանք կարողանան իրենց փորձը կիրառել աշխատանքային գործընթացում:

Հայ ընտանիքը՝ որպես հասարակության սոցիալ-հոգեբանական ամբողջություն, զարգացման տեսակետից ինքնատիպ է՝ ըստ ազգային կայուն ավանդույթների, կրոնաժխատական պատկերացումների, սովորույթների, հավատալիքների և ինչպես սեփական, այնպես էլ տարբեր ազգերից ընդօրինակած վարքի ձևերի: Վերակազմավորված ընտանիքի մոդելը կառուցվում է ամբողջական հարաբերություններ պահպանելու, ներընտանեկան դերային կարգավիճակ հաստատելու, ավանդական փոխհարաբերությունները նոր ձևի մեջ դնելու սկզբունքով:

Ի՞նչ տազնապներ և հիմնախնդիրներ ունի այսօր աղետ տեսած հայ ընտանիքը:

Այն փոփոխությունների է ենթարկվում միգրացիայի, սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմանների և բարոյահոգեբանական տարաբնույթ գործոնների պատճառով: Նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններում փոխվել են ընտանիքի անդամների կարգավիճակը, հարաբերությունների համակարգը, արժեքային կողմնորոշումները: Հետևաբար այս ինստիտուտն անցումային փուլում հոգեբանական պաշտպանության, ինչպես նաև հիմնարար հետազոտության կարիք ունի:

Ընտանիքի ինստիտուտը էապես պայմանավորված է բնակչության կոնկրետ վարքի նորմերի առանձնահատկություններով: Անցումային այս փուլը բնութագրվում է ընտանիքի կարգավիճակի որոշակիորեն արտահայտված փոփոխություններով: Պարզել ենք, թե մերօրյա ընտանիքի տիպերում դերային ինչ տեղաշարժեր են կատարվում, բացահայտել ենք ընտանեկան ավանդույթների մեջ նկատվող փոփոխությունները՝ կապված աղետի, սոցիալ-հոգեբանական սթրեսներ ծնող այլ իրողությունների հետ:

Շիրակի, մասնավորապես Գյումրու ընտանեկան ավանդույթների մեջ անցումային փուլը պայմանավորված է հետևյալ իրողությամբ. 1988-ի աղետը մխրճվել է ընտանիքի ինստիտուտ մշտապես՝, թե՞ այն ժամանակավոր բնույթ է կրում: Ընտանիքների մի մասը հարմարվեց նոր իրապայմաններին, սակայն, ըստ էության, հայ ավանդական ընտանիքը շերտավորվեց. հեղաբեկումները, հասարակական կյանքի շրջադարձերը գերակայորեն ազդում են ընտանիքի վրա՝ փոխելով նրա խորքային նկարագիրը:

Հետազոտության հոգեվերականգնողական փուլում մենք առաջարկում ենք՝

- Նոր ընտանեկան հարաբերությունների մոդելի ստեղծում՝ հետադետայան շրջանի ընտանիքների համար կարևորելով այնպիսի հարաբերությունների վերականգնումը, որոնք օգնել են անձին մտնելու հոգեվերականգնողական գործընթացի մեջ: Անձի սովորութային կենցաղում ավանդակարգերը, տոները, ծեսերը՝ իբրև ազգապաշտպանական մեխանիզմի դրսևորման ձևեր, օժանդակում են հարմարման գործընթացին:

- Քննել վերակազմավորված ընտանիքի տիպերում յուրաքանչյուր անդամի հոգեբանական, տիպաբանական առանձնահատկությունները (խառնվածք, բնավորություն, հույզեր, զգացմունքներ, կամք, հիշողություն և այլն):

- Հստակեցնել նրանց սոցիալիզացիոնալ ընդունելի (ընդօրինակման առանձնահատկություններ, սոցիալիզացիոնալ համայնքի կորուստներ ունեցող անձանց հետ):

- Առանձնացնել անձնային և ազգային հատկանիշները: Այս փուլում նպատակահարմար են անձնային հիմնահարցերի հավասարակշռումը և իմաստավորումը:

Հոգեկարգավորման գործընթացում իրականացման համար առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով. ա) գերակշռող բազմակերպության սկզբունք (նոր զգայական պատկերների կառուցում. իրականում գոյություն չունեն զգայական փակուղիներ, հետևաբար միշտ հնարավոր է գտնել մեկ այլ բան կատարելու հնարավորություն), բ) մարդկային ցանկացած փորձի հակադրածելիության սկզբունք, գ) մարդու ներքին հնարավորությունների անսահմանափակության սկզբունք («ամեն ինչ քո մեջ է.» շնորհիվ այս սկզբունքի մենք փոխում ենք իրադրության սուբյեկտիվ պատկերացումները, հետևաբար մարդու վերաբերմունքը վերջինիս նկատմամբ), դ) դրական մտադրություններ ստեղծելու սկզբունք, հոգևոր արժեքային համակարգի առաջադրում (կրոն, մշակույթ):

Արդյունքը մարդկային հիմնախնդիրների իմաստավորման նոր մոտեցումների ձեռքբերումն է, հին հիմնահարցերի նկատմամբ նոր վերաբերմունքի մշակումը, ուրիշի վիճակը զգայական մակարդակով ապրելու, կարեկցելու ունակությունը, ինչը նպաստում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալ-հոգեբանական հասունացմանը:

Առանձնացրել ենք ընտանիքների այն հիմնային տիպերը, որոնք առավելապես կարիք ունեն սոցիալ-հոգեբանական աշխատանքի:

- Լրիվ կազմով ընտանիքներում դերային կարգավիճակը չի փոխվել, պահպանվել են ավանդական փոխհարաբերությունները, թեև ընտանիքի յուրաքանչյուր անդամ աղետված է յուրովի, քանի որ երկրաշարժն անցել է տարածքում ապրող յուրաքանչյուր անձի ներաշխարհով: Հետևաբար անհրաժեշտ է սոցիալ-հոգեբանական աշխատանքները հոգեկան հավասարակշռությունը վերականգնելու համար:

- Կորուստ ունեցող կամ վերակազմավորված ընտանիքներում պարզել ենք ներքին բարոյահոգեբանական մթնոլորտը: Այսպես՝ յուրաքանչյուրն ունեցել է իր նախկին ընտանիքը, որը կորցրել է: Ստեղծված նոր հարաբերություններում անհրաժեշտ են դերերի տեղաշարժի բացահայտում, հին կարծրատիպերի կորստից հետո նորերին հարմարվելու ձևերի առաջադրում:

Վերակազմավորված ընտանիքներում բարոյական վարքագծի ամենաբնորոշ դրսևորման ձևը ապրումակցման կամ էմպաթիայի հոգեբանական երևույթն է:

Այսպես՝ ծնող/ներ կորցրած ընտանիքներում երեխաների վարքի պարբերական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղ հասակում ծնողից զրկվելիս նրանց մեջ

առաջ են գալիս հոգեխեղումներ և կորստի բարդություններ, որոնք դժվար են փոխհատուցվում հետագա կյանքում: Այդ երեխաների հիմնախնդիրները լինում են երկրնային ինտելեկտուալ և հուզական: Ինտելեկտուալ դժվարությունների մեջ է մտնում մահվան բնույթը հասկանալու երեխայի անընդունակությունը: Հուզական ոլորտի դժվարությունների մեջ կարելի է առանձնացնել տարաբնույթ վախի հակազդեցությունները, քնի խախտումները, կայուն հոգեվիճակ դարձած մենության և կորստի զգացումները: Երեխաներն ապրում են վշտի գործընթացի հետևյալ շրջանները. ա) բողոք, երբ երեխան չի հավատում իր սիրած մարդու մահացած լինելուն և ձգտում է նրան վերադարձնել: բ) Երբ կորստյան ցավն ու մենության զգացումն արտահայտվում են նրա անկազմակերպ վարքում: գ) Երբ ավելի ուշ երեխան մտածում է վերակառուցել իր կյանքը՝ հուսալով, որ այն կարող է առանց սիրած մարդու: Վկայաբերենք բնորոշ օրինակներ\* - Հայրիկիս երագիս մեջ միշտ տեսնում եմ կենդանի, բայց գիտեմ, որ նա չկա: Տրորում եմ աչքերս ու նորից նայում. դարձյալ նա է, ժպտում ու բարի: Աչքերս պոկելու չափ տրորում եմ ու ասում.

- Իսկ բոլորը կարծում են, որ դու չկաս:

Առավոտյան, երբ արթնանում եմ ու հաստատ համոզվում, որ հայրիկս չկա, պայկիս հետ փոխում ենք մեր երազները:

- Առաջին անգամ, երբ 5-ամյա Նարեկին այցի են տարել մոր շիրմին, բոլորից թաքուն հողաթմբից մի բուռ հող է վերցրել, լցրել գրպանը՝ ասելով. «Երբ կարտես մայրիկիս, կնայես»:

- 4-ամյա Նառայի մայրը գոհվել է երկրաշարժին: Նրան ասել են, որ մայրդ Երևանում է, կգա շուտով: Նառայի սպասումը ձգվեց երկա՛ր ու երկա՛ր օրեր: Մի անգամ պատահականորեն նրան տարան Երևան: Այստեղ չգտնելով մորը՝ տարակուսած հարցրեց՝ քանի՞ Երևան կա...

- Փոքրիկի ձեռքը այրվել է եռման ջրից, անընդմեջ լաց է լինում: Հարցնում են՝ ի՞նչ անենք, որ անցնի: Ցույց է տալիս մոր նկարը և ասում.

- Նկարի մայրիկս թող համբուրի՝ կանցնի:

Նկատել ենք, որ հարազատների կորստի հետ երբեք չհաշտվող երեխաները մշտապես նկարում են գնացքներ, փոխադրամիջոցներ, որպեսզի գնան ու ետ բերեն կորցրած սիրելիներին: Հետադեպ շրջանում ծնողներ կորցրած երեխաների վարքի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու վշտի ապրման հետևյալ փուլերի գաղափարին. սկզբնական փուլում, երբ երեխան փորձում է գիտակցել սիրած մարդու չլինելը, ապա՝ երբ վերանում է սիրո առարկային կապվածության զգացումը, հաջորդ փուլում շարունակական հիշողություններ կորցրածի մասին, որն ուղեկցվում է այն վերադարձնելու ձգտմամբ, վերջին փուլում խորանում է ողջ մնացած ծնողի հետ կապվածության զգացումը:

Մեր սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության նպատակն է պարզել՝ երեխայի համար ինչ է վիշտը (անորոշ բան՝ բազմաթիվ անհայտներով, թե՞ որոշակի պատկեր ունի), ինքը որտեղ է այդ վշտի մեջ, այն իրենից դո՞ւրս է, իր մե՞ջ է, թե՞ կրում է իր ուսերին և այլն: Այս առումով առանձնակի դժվարություն է ներկայացնում երկկողմանի որբերով ընտանիքների հիմնախնդիրը: Այդ երեխաները մեկուսանում են հարազատներից, որովհետև չկան իրենց և մերձավորներին կապող օղակները, առկա են ինքնահեռացման, սոցիալական մեկուսացման փաստերը:

Ընդհանրացնելով երկկողմանի որբերի հետ տարվող աշխատանքը՝ կարելի է ընդհանրացնել՝ էականը հուզազգացմունքային և այլաբնույթ կապերի վերականգնումն է, ընտանեկան բարենպաստ մթնոլորտի վերստեղծումը, շրջապատող անձանց հետ նրանց ներդաշնակ հարաբերությունների վերագտնումը:

Ծնողներ կորցրած ընտանիքներում երեխաների հոգեբանական ինքնապաշտպանությունը իրականացվում է պաշտպանական մեխանիզմների օգնությամբ (արտամղում, ռացիոնալիզացիա, պրոյեկցիա): Արտամղումը անցանկալի մտքերի ու իմպուլսների մղումն է գիտակցության ոլորտից ենթագիտակցություն: Նման մոտիվացված մոռացումը սփուփիչ ազդեցություն է գործում երեխայի վրա:

\* Գրառումները կատարվել են հեղինակի կողմից աղետից անմիջապես հետո:

*Օտարված անձով ընտանիքներ.* անձը ընտանիքում կորցրել է նրան, ում առավել սերտորեն է կապված եղել և որին ընդօրինակել է: Աղետը երկար ժամանակ բազմաթիվ ամուսինների հարկադրեց ապրել տարբեր օբևաններում՝ իրարից հեռու: Այս դեպքում, ինչպես համոզվել ենք, օտարումն իրեն երկար սպասել չի տալիս: Այն կարող է լինել կարճատև, միակողմանի, անշրջելի, իսկ երբեմն էլ ընդհուպ հասնել ինքնօտարման:

Ինչպես օրինակ՝

- *Մ.Բ.-ի դուստրը գոհվել է երկրաշարժին: Մայրը չի ուտում այն ամենը, ինչ սիրել է աղջիկը, նույնիսկ ամուսնուն է արգելում առնչվել այն ամենին, ինչ վերաբերում է աղջկան: Կորստի բարդությոն այնքան է խորացել, որ ինքնօտարումը հանգեցրել է ինքնասպանության:*

- *Մ.Պ.-ն երկրաշարժին կորցրել է Վարդան որդուն: Երկրաշարժից հետո նոր գավակ է ունեցել: Բուժքույրը ծննդաբերության ժամանակ բղավել է.*

- *Վարդանը ծնվե՞ց...*

*Կինը բժիշկներին մոտ չի թողել, որպեսզի ինքն արյունաքամ լինի՝ ասելով.*

- *Եթե ծնվեց Վարդանը, ես գնում եմ մյուս Վարդանի մոտ...:*

Օտարման տարաբնույթ ձևերի հաղթահարումը պետք է փնտրել ընտանիքում, ստեղծել բարոյահոգեբանական բարերար մթնոլորտ, շրջապատող իրականության հետ օտարված անձի հուզագրացմունքային հարաբերությունների ապահովում: Աղետից հետո օտարված անձը ներքնապես փոխհարաբերություններում ունի կորստի բարդությոն և ընդհանրապես սոցիալականացման ենթարկվելու դժվարություններ՝ մնալով անորոշ վիճակում, առանց դիրքորոշումների: Նրա համար կրկնօրինակելու արժանի օբյեկտներ չկան (կորցրել է ծնողներին կամ սիրած էակին):

Անձի հոգեբանական օտարումն ընթանում է փուլային զարգացումով. նախնական փուլում խաթարվում են նրա հուզական հարաբերությունները շրջապատող մարդկանց հետ, այնուհետև օտարումն աստիճանաբար սկսում է կրել տարբերակված բնույթ և արտահայտվում է անձի վարքագծում, արժեքային կողմնորոշումներում, իրականության, ինչպես նաև սեփական «ես»-ի նկատմամբ վերաբերմունքում:

Մեր ուսումնասիրության մեջ հանգել ենք այն եզրակացության, որ սոցիալ-հոգեբանական աշխատանքների մեջ էականը օտարված անձի համակողմանի ճանաչումը պետք է լինի, անհատական ու համակարգային հոգեբանական մոտեցման կիրառումը: Անձի օտարման բարդությոն հաղթահարելու համար պետք է գտնել փոխհատուցման նոր ուղիներ, որոնք համապատասխան լինեն նրա հոգեկան աշխարհին:

*Միայնակ ծերերով ընտանիքներ.* Տարիքային այս խմբում անձն զգում է իր ուժերի անկումն ու թուլացումը, սրված է անպաշտպանվածության զգացումը: Գնահատման փուլ է անձի կյանքում, ընդ որում հոգեբանական արգելքների անհաղթահարելիության զգացումն ավելի խորն է, անձը՝ սահմանային իրավիճակներին մերձ: Այս պարագայում նա հակվում է ինքն իրեն՝ ներհայելով վախճանի խորհուրդը: Դիրքորոշումների, հակումների և արժեքային կողմնորոշումների մեջ փոփոխություններ են կատարվում: Միայնակ ծերերի կախվածության զգացումը շրջապատից ավելի է արտահայտվում: Անհրաժեշտ է սոցիալական բարենպաստ պայմաններ ստեղծել, նյութապես օգնել՝ որոշակիորեն պարզելով, թե այսօրինակ ընտանիքն առավելապես ինչի կարիք ունի:

*Ձոռված ազատամարտիկի ընտանիքներ.* Աղետից հետո ընտանիքները կրել և կրում են կրկնակի ստրես՝ աղետն իբրև ստրեստը և նրա՝ անձի ընկալած համապատասխան դրսևորումները մի կողմից, մյուս կողմից՝ արցախյան հիմնախնդիրն իբրև ստրեստը տվյալ ընտանիքի համար: Նմանօրինակ ընտանիքը ենթարկվում է հոգեբանական կրկնակի ճնշման, ուժեղանում են դեպրեսիաները, հոգեկան շեղումներն ու խաթարումները, ընդհուպ ընտանեկան փոխհարաբերությունների աղճատում: Ձոռված ազատամարտիկի ընտանիքում մեր կողմից հոգեբանական աշխատանք է տարվում մասնավորապես երեխաների հետ, որպեսզի նրանք հպարտությամբ գիտակցեն, որ իրենց հայրը հեղրոս է և գոհվել է հայրենիքի համար: Երեխայի ինքնագիտակցության մեջ, հակառակ կորստի շարունակական զգացման, հենց սա պետք է ամրակայել: Սոցիալական աշխատանքի առումով այստեղ առաջնահերթ պետք է լինի պայմանների բարեփոխումը, նոր բնակարանի տրամադրումը, եկեղեցու բարեմիջնորդությամբ ամենամայա նպաստների տրամադրումը, նյութապես ապահով հովանավոր գտնելը և այլն:

*Տարաբնույթ աղանդների հետևող անձանց ընտանիքներ.* Հոգեբանական բարդություններ կան այն ընտանիքներում, որտեղ առկա են կրոնական պատրաստվածության տարբեր մակարդակներ: Այսպիսի երկփեղկվածությունը մեր իրականության մեջ մասնավորապես սրվեց հետադեմության շրջանում: Փաստորեն, աղետը հոգեբանորեն բարերար հող ստեղծեց տարբեր աղանդների ներթափանցման համար: Անձի ճակատագրի բեկումը (զոհեր, կորուստներ, հաշմվածություն, միայնակ լինելու զգացում, միջանձնային հարաբերությունների խաթարում) ստիպեց մարդկանց որդեգրել այս կամ այն աղանդն իբրև սփոփանքի ձև, հոգեպաշտպանական գործոն: Տարածաշրջան ներթափանցեցին տարաբնույթ աղանդներ: Դրանց վերաբերյալ մենք անցկացրել ենք հարցախույզներ, ժողովրդագրական և ազգաբանական անկետային մի շարք հարցադրումներ՝ պարզելու համար, թե տվյալ անձն ինչ մասնագիտության տեր է, աղանդավորական ի՞նչ ուղղության մեջ է ներգրավվել, ի՞նչ կարգավիճակ ունի աղանդավորական համայնքում, երբևէ անձնագրվել և դրա գլխավոր շարժառիթը:

Կրոնական այլախոհությունը հաղթահարելու նպատակով առաջադրել ենք փոխհատուցման այլ ավելի ճշմարիտ ուղիներ, որոնք, մեր կարծիքով, անձին դուրս կբերեն մոլեռանդության աֆեկտիվ հուզավիճակից:

Ուսումնասիրության համար կիրարկել ենք հետազոտական հետևյալ մեթոդները. *Սոցիալ-հոգեբանական հարցումների մեթոդ.* Ընտանիքի և ներընտանեկան հարաբերությունների փորձը ցույց է տվել, որ նման դեպքերում անհրաժեշտ է օգտագործել տարաբնույթ մեթոդներ, որոնց շնորհիվ ստացված տվյալները կհամադրվեն, և կբարձրանա սոցիալ-հոգեբանական նյութի հավաստիության աստիճանը: Օր.՝ զանգվածային հարցումներ Շիրակի մարզում՝ օգտագործելով պատահական ընտրանքի սկզբունքը:

*Փորձագիտական հարցումների անհրաժեշտություն:*

*Ֆոկուս - խմբային հարցումներ.* Նպատակ հետապնդելով առաջարկվող հարցերի խմբային քննարկումների միջոցով առավել խորը և համակողմանի տեղեկատվություն ստանալ վերակազմավորված ընտանիքների մասին:

Ընտանիքում միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայի առաջադրումը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում ունենալու անցումային փուլում ձևավորված ընտանիքների տիպերի և նրանց հոգեբանական բնութագրերի մասին: Վերակազմավորված ընտանիքների հիմնախնդրի հետազոտման համար հարակից օգտագործել ենք հետևյալ մեթոդիկաները. անձնավորության ուսումնասիրման ստանդարտացման բազմագործոն մեթոդիկա, Ռ. Կետտելի 16 գործոնային անձնային հարցարանը և Տ. Լիբիի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկա:

Ինչ խոսք, հնարավոր չէ սեղմ հոդվածի շրջանակում ամփոփել վերակազմավորվող ընտանիքների հոգեբանական հիմնախնդիրները, այնուհանդերձ փորձեցինք ինչ-որ չափով իրազեկել հասարակությանը և տազմապ հնչեցնել այս ոլորտում աշխատող մասնագետներին՝ հարցի հրատապությունն ընդգծելու համար:

## ВОПРОСЫ МЕТОДИКИ ДИАГНОСТИКИ МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ В СЕМЬЯХ В ПЕРИОД ПОСЛЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ К. Саакян \_\_\_

В период после землетрясения 1988 года формировались новые типы семей и функциональные сдвиги внутрисемейных отношений. Нашей задачей было выделение типа пересформированной семьи, рассмотренной как тип пересформированных отношений с устойчивыми и изменчивыми сторонами, едиными ценностными ориентирами. В данном случае имеется ввиду восприятие природы формировавшихся в семье новых отношений каждого члена семьи. Предложение методики диагностики межличностных отношений даст возможность целостно представить в переходном периоде о типах и их психологических характеристиках новосформированных семей.

## Արկադի ԱՎՈՊՈՎ

### ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՄԱՍԻՆ

(նյութեր Վրաստանի պատմության պետական կենտրոնական արխիվից)

XIX դարի սկզբներին բարդ իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասում: Երկրամասի ժողովուրդները ձգտում էին թոքափել թուրքական և պարսկական տիրապետությունը: Ռուսաստանն իր հերթին ջանում էր գրավել և կայսրությանը միացնել Անդրկովկասը: Ռուսաստանի առաջխաղացմանը տարածաշրջանում առաջին հերթին հող էր նախապատրաստում 1801թ. խաղաղ ճանապարհով Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Սակայն տարածաշրջանի միացումը ռուսական կայսրությանը տեղի ունեցավ ոչ միանգամից: 1804-1813թթ. և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմների արդյունքում Արևելյան Հայաստանն ազատագրվում է պարսկական տիրապետությունից և միացվում է Ռուսաստանին: Անվերջանալի մղձավանջի մնանվող պարսկական տիրապետության երկարատև ժամանակաշրջանը փոխարինվում է ռուսական տիրապետությամբ՝ իրեն բնորոշ գծերով:

Նորանվաճ երկրամասերում Ռուսաստանը պարբերաբար վարչատարածքային բաժանումներ էր կատարում: Այսպես, արդեն 1828թ. մարտին Նիկոլայ Ա ցարի հրամանով Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի նոր գրավված տարածքներից կազմավորվում է Հայկական մարզը: 1840թ. Անդրկովկասում նոր վարչական փոփոխություններ են տեղի ունենում. ձևավորվում են 2 վարչական միավորներ՝ Վրացախմերեթական նահանգը և Կասպիական մարզը: 1844թ. Կովկասում ստեղծվում է փոխարքայություն: 1846թ. երկրամասը բաժանվում է 4 նահանգների: 1849թ. ցարի հատուկ հրամանագրով ստեղծվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին 5 գավառ՝ Երևանի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Օրդուբադի և Ալեքսանդրապոլի: Վարչական նոր բաժանումը պահպանվում է ընդհուպ մինչև ռուսական կայսրության անկումը՝ 1917թ.:

Վարչատարածքային փոփոխությունների հետ զուգընթաց՝ տարածաշրջանում 10-12 տարին մեկ անց էին կացվում կամերալ ցուցակագրումներ (մարդահամարներ):

Անդրկովկասյան տարածաշրջանում կատարված վարչատարածքային բարեփոխումները մանրամասնորեն ներկայացվել են Ա.Հայրապետյանի կողմից «Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին» աշխատության մեջ: Ինչ վերաբերում է XIX դարի ընթացքում Անդրկովկասում անցկացված մարդահամարների ուսումնասիրությանը, ապա, հաշվի առնելով վերջին տարիներին ժողովրդագրական հիմնախնդիրների շուրջ եղած հետաքրքրության աճը, 2005թ. սկսած ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից հրատարակվող «Գիտական աշխատություններ» հանդեսի VIII, IX և X համարներում հրապարակվել է մանուսկրիպտ փաստաթղթերի մի ամբողջ շարք: Շարունակելով մեր գործընկերների սկսած գործը՝ այժմ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ժողովրդագրական հիմնախնդիրներին վերաբերող նորահայտ փաստաթղթեր, որոնք, մեր կարծիքով, արժեքավոր տեղեկություններ կհաղորդեն XIX դ. 70-80-ական թվականներին Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի բնակչության ազգային ու կրոնական կազմի, ինչպես նաև հայաբնակ գյուղերի ստուգման արդյունքների վերաբերյալ: Նյութերը, որ մեր կողմից հավաքագրվում են 2008թ. ամռանը Վրաստանի Պատմության կենտրոնական պետական արխիվում, պատկանում են «Անդրկովկասի վիճակագրական կոմիտեին» (ЦГИАГ, ф.415, Закавказский Статистический комитет, оп.1, д.12,21):

Այդ կոմիտեի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ 1879թ. Ալեքսանդրապոլի գավառը զբաղեցնում էր 3381,8 քվ վերստ (3584,7 կմ<sup>2</sup>) տարածք: Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչությունը կազմում էր 19976 մարդ, որից 19129-ը՝ հայ, 171-ը՝ հույն, 65-ը՝

ռուս, 604-ը՝ թաթար, 4-ը՝ գերմանացի, 3-ը՝ հրեա:<sup>1</sup> Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թիվը հասնում էր 87039 մարդու, որից 78045-ը՝ հայ, 1433-ը՝ ռուս, 823-ը՝ հույն, 3751-ը՝ թաթար, 2987-ը՝ քուրդ:<sup>2</sup> Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 107015: 1880թ. դրությամբ Ալեքսանդրապոլ քաղաքում կային 616 շիա մահմեդականներ, որոնցից 334-ը տղամարդ էին, 282-ը՝ կին: Քաղաքում սունի մահմեդականներ չկային, իսկ գավառում սունիները կազմում էին 857 հոգի, որոնցից 465-ը՝ տղամարդ, 392-ը՝ կին: Գավառում շիա մահմեդականները 3285 հոգի էին, որոնցից 1763-ը՝ տղամարդ, 1522-ը՝ կին:<sup>3</sup>

1885թ. Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի կողմից ստուգում է անցկացվում՝ նպատակ ունենալով հաշվառել տարածաշրջանի զուտ հայկական գյուղերն իրենց բնակչությամբ և հոգևորականության և եկեղեցիների քանակը: Ստորև ներկայացվում են այդ ստուգման արդյունքները:<sup>4</sup>

Հ/հ	Բնակավայրերը	Հոգևորականների թիվը	Ծխականների թիվը	Եկեղեցու անվանումը
1	Ալեքսանդրապոլ	15	9443	Սբ Աստվածածին
		6	5614	Սբ Ամենավրդիչ
		4	2852	Սբ Նշան
		5	4264	Սբ Լուսավորիչ
2	Դահաբլի	2	530	Սբ Հովհաննես
3	Բայանդուր	1	585	Սբ Աստվածածին
4	Քյալայի	1	320	-- // --
5	Ղափի	2	800	-- // --
6	Խյի-Ղարաքիլիսա	7	1211	Սբ Ստեփանոս
7	Ճրվխան	2	430	Սբ Աստվածածին
8	Իլիսիարի	5	905	Սբ Գևորգ
9	Սվանվերդի	1	620	Սբ Աստվածածին
10	Տավշանդշաղ	2	950	Սբ Պետրոսի և Պողոսի
11	Աղին	3	690	Սբ Հակոբ
12	Ղազարապատ	1	390	-- // --
13	Բարուրի	1	500	Սբ. Աստվածածին
14	Ղեղաչ	1	107	-- // --
15	Ճիրպիլի	1	500	-- // --
16	Բոզդողան	2	730	-- // --
17	Ղզրքիլիսա	1	630	Սբ Լուսավորիչ
18	Հոռոմ	4	1029	Սբ Հռիփսիմե
19	Ղութնիդշաղ	1	200	Սբ Աստվածածին
20	Թոմարտաշ	2	650	-- // --
21	Սոնգրի	2	580	-- // --
22	Իմիլխան	2	680	-- // --
23	Թալիբ-օղի	3	412	-- // --
24	Ջանգի-թափա	1	115	-- // --
25	Մունջուխի	1	360	-- // --
26	Քեչիչքենդ	1	145	-- // --
27	Վերին Փամայ	2	180	-- // --
28	Հաջի-Խալիլ	1	307	Սբ Լուսավորիչ
29	Մահմուդջուղ	3	1060	Սբ Աստվածածին
30	Մոլլա Գյուլյա	2	1105	-- // --
31	Բողազքեսան	1	543	-- // --
32	Արմուքի	2	680	Սբ. Սարգիս

<sup>1</sup> ЦГИАГ, ф. 415, оп. 1, л. 12.

<sup>2</sup> Նույնը:

<sup>3</sup> Նույնը:

<sup>4</sup> Նույնը:

33	Սոգութի	1	212	Սը Հակոբ
34	Փիրթիքան	3	1802	Սը Թադևոս
35	Շիրվանցուղ	2	1238	Սը Աստվածածին
36	Բազարխանա	2	534	-- // --
37	Նորաշեն	3	548	-- // --
38	Կրիտրագիրման	1	575	-- // --
39	Դոլրաթ	1	680	-- // --
40	Գյուգալդար	2	255	-- // --
41	Մեծ Արիսվալի	2	800	-- // --
42	Փոքր Արիսվալի	1	500	-- // --
43	Եզանյար	2	390	-- // --
44	Փոքր Բեքանդ	3	757	-- // --
45	Դուլիջան	1	500	-- // --
46	Դասմայի	1	179	-- // --
47	Դազանչի	2	550	-- // --
48	Արթիկ	4	400	Սը Լուսավորիչ
49	Դիչաղ	2	500	Սը Սարգիս
50	Խաչաքիլիսա	1	270	Սը Գևորգ
51	Բաշգյուղ	2	500	Սը Աստվածածին
52	Մեջիթի	2	650	Սը Ստեփանոս
53	Դուգրենդ	2	780	Սը Աստվածածին
54	Մեծ Զյափանակ	3	1100	-- // --
55	Դիրաքյար	2	447	-- // --
56	Փոքր Զյափանակ	2	480	-- // --
57	Չրախի	3	1040	-- // --
58	*	1	150	-- // --
59	Հաջինազար-Դուլի	2	210	-- // --
60	Ջաջուռ	2	990	-- // --
61	Աղբիլիսա	1	420	-- // --
62	Մեծ Սարիար	1	520	Սը Խաչ
63	Արիսվալի 3-րդ	2	350	Սը Աստվածածին
64	Դոնախուն	2	790	Սը Հակոբ
65	Թոփառլի	1	630	Սը Աստվածածին
66	Դարբանդ	1	555	Սը Աստվածածին
67	Մեծ Քեթի	2	415	Սը Հակոբ
68	Փոքր Քեթի	1	510	Սը Աստվածածին
69	Օրթաքիլիսա	2	461	-- // --
70	Եսաուլ	2	1115	-- // --
71	Կապս	1	420	-- // --
72	Վերին Դանլիջա	1	990	Սը Ստեփանոս
73	Ներքին Դանլիջա	1	420	-- // --
74	Չոռլի	1	385	Սը Աստվածածին
75	Նոր Սարիար	1	310	-- // --
76	Սամուշու	-	212	Սը Հակոբ
77	Ալիխան	-	320	Սը Աստվածածին
78	Նոր Դարաքիլիսա	-	300	-- // --
79	Կեֆու	1	270	Սը Հակոբ
80	Մեծ Բաշգեղ	1	122	Սը Աստվածածին
81	Ճգխար	2	650	-- // --
82	Գյուրջի -Յոլ	1	470	-- // --
83	Թաքնայի	1	470	-- // --
84	Ջեյար Կեչուտ	1	465	-- // --
85	Իլլի Դարաքիլիսա	2	600	-- // --
86	Բանդիվան	2	555	-- // --
87	Չիֆթալի	2	407	Սը Խաչ

\* Փաստաթուղթն այստեղ անընթեռնելի է (-Ա.Ա.):

88	Նոր Ղարքիխաա	1	300	Սբ Աստվածածին
89	Բոգոխաուշ	1	350	-- // --
90	Ղարդոշ	2	547	-- // --
91	Ղալոուլի Դուզենդ	1	366	-- // --
92	Գյուլուրուլաղ	1	196	-- // --
93	Յադուրի	2	681	-- // --
94	Մեծ Ղարաքիխաա	8	2339	-- // --
95	Սամուրսալի	2	489	-- // --
96	Վարդանի	1	283	Սբ. Առաքելոց
97	Բոգիքենդ	5	1358	Սբ. Աստվածածին
98	Ղչաղ	4	699	-- // --
99	Ղարբազ	2	283	-- // --
100	Բզավդալա	2	298	-- // --
101	Համամի	12	2233	-- // --
102	Հաջիդարա	4	986	-- // --
103	Սախտակ	3	431	-- // --
104	Վարդնով	7	1421	-- // --
105	Ղաչաղան	5	572	-- // --
106	Չոթուտ	3	484	-- // --
107	Գյուլիչա	2	592	-- // --
108	Գյորան*	4	732	-- // --
109	Մեծ Բեքանդ	4	1898	-- // --
110	Նալբանդ	5	725	-- // --
111	Թափանի	1	452	-- // --
112	Ղարալ	2	180	-- // --
113	Ավդիբեկ	2	237	-- // --
114	Ղալթախի	4	1261	Սբ Ստեփանոս
115	Ղարաբոյա	3	519	Սբ Աստվածածին
116	Աղբուլաղ	3	895	-- // --
117	Քյոլոբուշ	1	295	-- // --
118	Չիգղամալ	2	640	Սբ Նշան
119	Ջարնջա	1	247	Սբ Խաչ
120	Բուդրաշեն	1	225	Սբ Լուսավորիչ
121	Էֆենդի	1	131	Սբ Աստվածածին
122	Քուրդբուլաղ	-	130	-- // --
Ընդամենը		281	93761	

**НОВЫЕ ДОКУМЕНТЫ ОБ АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ**  
(материалы из Центрального государственного исторического  
архива Грузии)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Акопов \_\_\_

Публикуемые документы предназначены и могут представить определенный интерес как для специалистов-историков, так и для широкого круга читателей. Несмотря на свои объективные недостатки (пропуски), данные документы представляют новый материал о демографическом состоянии Александропольского уезда в 70-80-х годах XIX века.

Представленные документы выбраны из фонда 415 "Закавказский статистический комитет" Центрального государственного исторического архива Грузии и относятся этнодемографическому облику Александропольского уезда а также проверке армянских селений с ведомостями и списками населенных мест.

\* Հնարավոր է՝ Գոգարան (-Ա.Ա.):

# Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՀԱՅԿԱԶՈՐԻ ՔԱՐԱՆՉԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2008 թվականի պեղումները հիմնականում ծավալվեցին երկու տեղամասերում՝

1. Սարալանջի վրա՝ I և II արհեստական հարթակների միջանկյալ հատվածում:

2. Քարանձավներից վերև՝ վերին սարահարթի հյուսիսարևելյան ելուստի տարածքում (նկ.1), որտեղ հետախուզական փոսորակներ դրվեցին:



2007 թ. պեղումների ընթացքում երկրորդ արհեստական հարթակի վրա հայտնաբերվեց լավ տաշած խոշոր քարերով կառուցված մի պատի ստորին շարքը: Պատը փլվել էր՝ ամենայն հավանականությամբ, հզոր երկրաշարժի հետևանքով և դրա վերին շարքերի քարերի մի մասը թափված էր երկրորդ արհեստական հարթակի վրա (նկ.2): Պատը զուգահեռ էր հիդրոհամակարգի սանդղահարթակին և ուղղված էր դեպի երկրորդ ջրամբարի եզրը: Դրա նշանակությունը պարզելու նպատակով պեղումներն իրականացվեցին այդ ուղղությամբ: Հողի հսկայական շերտը հեռացնելու ընթացքում հայտնաբերվեցին խոշոր փլուզման հետքեր, որ փաստված էին անկանոն թափված ավազաքարի և կոպտատաշ տուֆի խոշոր մասերով: Պեղումների ընթացքում սանդղաջրվեժի 2-րդ ջրամբարի մակարդակին քարերի հեռացման ընթացքում սկսեց բացվել մի անցք, որը լցված էր ավազաքարի խոշոր բեկորներով: Քարերի և ջրաբերուկ հողի մաքրմանը զուգընթաց աստիճանաբար սկսեց ուրվագծվել մի նոր քարանձավի մուտքի մասը: Հետագա աշխատանքների ընթացքում այստեղ բացվեց մոտ 4մ լայնքով բնական քարանձավ, որից աջ և ձախ հայտնաբերվեցին դրա հետ հարդարակցվող և 2 քարանձավներ (նկ. 3):

Չախ կողմի քարանձավը, որի մեջ լցված ջրաբերուկ հողը առաստաղից մոտ 40 սմ ցածր էր, ունի պատկառելի չափեր՝ մոտ 9մ երկարություն, որ խորանում է լանջի մեջ, և 6,5մ լայնություն: Նկատի ունենանք, որ դրանք քարանձավի միայն առաստաղի չափերն են: Քարանձավի հատակը պետք է գտնվի մոտ 2մ ավելի ցածր՝ II արհեստական հարթակի մակարդակին: Ավազաքարի մեջ գտնվող ուսումնասիրված բնական քարանձավների պատերը թեք են, և դեպի ներքև քարանձավները լայնանում են, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այս քարանձավը ավելի մեծ չափեր ունի: Քարանձավը գտնվում է հիդրոհամակարգի երկրորդ ջրհավաք ավազանի տակ, և չի բացառվում դրանց միջև գործառական կապը՝



Մյուս քարանձավը գտնվում է մուտքից աջ: Այն ամբողջապես լցված է հողով, և հարդարակցման ուղին բացել մեզ չհաջողվեց: Այս քարանձավի ճակատային մասը փակված է մոտ 4մ երկարությամբ տեսանելի պատով (նկ. 4): Պատի վերին մասերը,

<sup>1</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2007 թվականի պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. X, Գյումրի, 2007, էջ 27:

քարանձավի առաստաղի մի հատվածը փլուզված էին: Ընդամուր տպավորությունն այնպիսին է, որ այս համալիրը առաջին խոշոր երկրաշարժի առաջացրած փլուզումից հետո այլևս չի վերականգնվել: Մուտքերը չեն մաքրվել և մնացել են փակ: Այս հանգամանքը առավել կարևորում է տվյալ համալիրի հետագա ուսումնասիրությունը, որով հնարավոր կլինի պատասխանել 11-12-րդ դարերում քարանձավային համալիրների գործառական բնույթի, կենցաղի, նյութական մշակույթի մասին բազմաթիվ հարցերի: Այս քարանձավների գյուտը ցույց է տալիս, որ այս մակարդակի վրա նույնպես պետք է



լինեն բնական քարանձավներ, որոնք, ի տարբերություն վերին քարանձավների շարքի, ներկայումս տեսանելի չեն:

Պեղումների արդյունքում հայտնաբերված բազմաթիվ նյութերի մեջ կան քարից (տախտակ 1, նկ. 4), երկաթից (տախտակ 1, նկ. 6, 7, 8), ոսկորից (տախտակ 1, նկ. 2,3) աշխատանքային գործիքներ, բրոնզից (տախտակ 1, նկ. 5), ապակուց արդուզարդի առարկաներ, սովորական, կարմրափայլ և ջնարակված խեցեղեն և այլն:

Գտածոների մեջ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում մետաղադրամները: Դրանք երեքն են. երկուսը կտրված են Իլդեգիզյան Կզրլ Ասլանի (1186-1191թթ.) կողմից (տախտակ 2, նկ. 1, 2), մյուսը՝ Հուլավույան Մուլեյման խանի (1339-1346թթ.): Սա Հայկաձորի պեղումներից հայտնաբերված Անիի քաղաքային 2-րդ դրամն է (տախտակ 2, նկ. 3):

Գտածոների մեջ կա բնական չափեր ունեցող բրոնզյա ճան (տախտակ 1, նկ. 1): Այն չունի զուգահեռներ: Ամենայն հավանականությամբ ճանը խաղի համար է, սակայն հունա-հռոմեական աշխարհում դեռևս անտիկ ժամանակներից հայտնի են ճանի տեսք ունեցող բրոնզյա կշռաքարեր: Հայկաձորից հայտնաբերված ճանի քաշը 52,2 գրամ է: Այն մոտավորապես համապատասխանում է միջնադարյան Հայաստանի *ունկի* դրամակշռային միավորի կրկնակի քաշին<sup>2</sup>:

Հայտնաբերված խեցեղենի մեջ առանձին խումբ են կազմում անիական դրոշմազարդ կարասների բեկորները (տախտակ 3, նկ. 3), քափանցիկ ապակու ձուլակտորը: Վերջինիս համադրումը նախորդ տարիներին գտնված ապակու խտտան արտադրանքի նմուշների, կաթիլների և այլնի հետ թույլ է տալիս եզրակացնել, որ այստեղի ապակեգործական արհեստանոցը աշխատել է ներմուծված ապակու զանգվածով:



Գտածոների մեջ կան նաև դացիտե արտեֆակտներ, որոնք ունեն քարի դարի ծագում (տախտակ 4, նկ. 1-4):

Արշավախումբը հետախուզական պեղումներ իրականացրեց նաև վերին սարահարթի վրա, որի հարավարևելյան եզրային մասում մաքրվեց մի հատված, և բացվեց պարսպապատի մի մասը (նկ. 5): Այն որոշ ընդհատումներով ընթեռնելի է դարավանդի ամբողջ եզրագծով: Ամբոցի մուտքն ամենայն հավանականությամբ գտնվել է արևմտյան կողմում, որը ներկայումս ամբողջովին ծածկվել է սարահարթի մեկտրացիայի հետևանքով կուտակված քարերով և հողով:

<sup>2</sup> Ռ. Վ ա ր դ ա ն ն, Հայաստանի չափերն ու կշիռները, Եր., 1989, էջ 137:

Մարահարթի հարավային կողմում տարիներ առաջ տուֆի հանքի շահագործման հետևանքով բացվել և մասամբ ավերվել էր մշակութային շերտ: Կտրվածքի մեջ տեսանելի են ստորին շերտում գտնվող բնակավայրի կառույցների մնացորդներ, իսկ վերին շերտում՝ սալարկղային թաղումներ:



Ավերված շերտից հայտնաբերված նյութերը վերաբերում են անտիկ ժամանակաշրջանին: Մարահարթի հյուսիսարևելյան մասն ունի երեք կողմից կիրճով եզերված ելուստ: Այն շատ հարմար է պաշտպանական տեսակետից: Վերին սարահարթը, բացառությամբ այս ելուստի, ամբողջովին ենթարկվել է մեխորացիայի: Ըստ դիրքի և անմատչելիության՝ սարահարթի այս հատվածում պետք է լիներ պաշտպանական որևէ կառույց: Չնայած վերգետնյա նյութերի բացակայությանը՝ ելուստի տարածքում փորվեցին 2 հետախուզական փոսորակներ:

Առաջին փոսորակում մշակութային շերտի հզորությունը 2 մետրից ավելի է (նկ. 6): Վերին շերտում հայտնաբերվեց կոպտատաշ տուֆով շարված, մոտ 1,3մ բարձրությամբ մի պատ: Մրանից ներքև՝ երեք շինարարական հորիզոններ՝ փաստված երեք սալահատակներով, որոնցից ստորինը պատրաստված է կավածեփ տափանված հատակի վրա: Հետախուզական փոսորակից հայտնաբերվեց մեծ քանակությամբ բեկորային խեցեղեն: Վերին՝ պատին համապատասխանող շերտից հայտնաբերված խեցեղենի մեջ միջնադարյան բեկորների հետ խառը կան երկաթի լայն տարածման ժամանակաշրջանին բնորոշ սև, մոխրագույն, դարչնագույն խեցեղենի բեկորներ, որոնք զարդարված են ուշ ուրարտականին բնորոշ փայլանախշով, եղևնանախշով, ալիքանախշով և այլն (տախտակ 5, նկ. 3-18, 20, 21): Գտածոների մեջ կա նաև տեգի ծայրակալի վանակատե նախապատրաստուկ (տախտակ 5, նկ. 19):




Երկրորդ հետախուզական փոսորակում հայտնաբերվեց կաված հատակով, ձվածիր հատակագծով, մոտ 1,6մ երկարությամբ ու 0,9 մ լայնությամբ, միջին քարերով շարված մի կառույց (նկ. 7): Այն դատարկ էր: Հողի հետ խառնված էր որոշ քանակությամբ մոխիր: Միայն հատակին գտնվեցին մի ձձումի և մի կարասիկի բեկորներ (տախտակ 5, նկ. 1, 2): Չձումը իր ձևով կրկնում է վաղ երկաթի ժամանակաշրջանի ձձումները, սակայն և՛ նա, և՛ այդ կարասիկը դեղնավուն են, ծածկված թույլ անգորով: Հայտնաբերված երկու անոթներն ու մի քանի այլ բեկորներ խիստ ճաքճքված են, բարձր ջերմաստիճանի պատճառով՝ նաև դեֆորմացված: Դրանք արտադրական խտտան են: Ամենայն հավանականությամբ մոտակայքում կա խեցեգործական արհեստանոց: Հայտնաբերված քարաշար ձվածն փոսը եղել է խոտանի համար կառուցված աղբի հոր:



Մյուս կողմում կա խեցեգործական արհեստանոց: Հայտնաբերված քարաշար ձվածն փոսը եղել է խոտանի համար կառուցված աղբի հոր:


Տախտակ 1







Տախտակ 2




Տախտակ 3



Տախտակ 4



Տախտակ 5



Հայկաժողովրդի 2008թ. պեղումների արդյունքում երկրորդ արհեստական հարթակի մակարդակին հայտնաբերվեց քարանձավային նոր համալիր, որը մուտքերի փլուզման հետևանքով մնացել է անձեռնմխելի, և ենթադրվում է, որ ներսում պահպանվել է X-XI դարերի պատկերը: Համալիրի գյուտը վկայում է, որ այս մակարդակի վրա ևս կիրճում կան բնական քարանձավներ, որոնք այժմ տեսանելի չեն: Վերին դարվանդի պեղումներով հաստատվեց, որ այստեղ գոյություն է ունեցել հարավային կողմի բնակավայրին համաժամանակյա ամրոց, որն օգտագործվել է նաև զարգացած միջնադարում: Հետախուզական փոսորակները ցույց տվեցին, որ ամրոցի տարածքում պահպանվել է հզոր մշակութային շերտ, և որ այստեղ հետագա պեղումները խիստ հեռանկարային են:

#### РАСКОПКИ ПЕЩЕРНОГО ПРИГОРОДА АНИ 2008 г.

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Хачатрян \_\_\_

Раскопки пещерного поселения Айкадзор 2008 года велись на двух участках: 1. продолжались раскопки склона каньона между первым и вторыми искусственными террасами; 2. был проведен зондаж на верхнем плато в северо-восточной части

На склоне на уровне первой террасы был обнаружен комплекс естественных пещер. Это-первые пещеры, обнаруженные на этом уровне. Вход и верхний свод центральной пещеры были разрушены и фактически комплекс остался замураван с 12-13 вв. по наши дни. Дальнейшие раскопки этой пещеры предоставляют возможность восстановить функции этого комплекса.

Раскопками был обнаружен богатый археологический материал, в том числе и городская монета Ани местной чеканки. На верхнем плато были обнаружены остатки крепостных стен и строения в крепости. Зондирование на территории крепости выявило культурный слой 2-метровой толщины. По найденным материалам крепость относится к позднеурартскому периоду, который был использован и в развитое средневековье.

## Նաիրա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ՏԵԲՍԵՐԻ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՅՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՈՒՄ

Անգլերենի խորացված ուսուցման դասընթացում լեզվանյութի ընտրությունը և գործադրումը պահանջում են լուրջ և շարունակական աշխատանք: Նախ անհրաժեշտ է նոր բառապաշարի յուրացման հիմնական գործոնների ու պայմանների իմացություն: Բացի այդ, անգլերենի ուսուցիչները պիտի խստագույնս հաշվի առնեն շրջանառվող հայկական և արտերկրի դասագրքաշարերի, մեթոդական լրակազմերի օգտագործման, տվյալ դասընթացի խնդիրներին դրանց հարմարեցման հնարավորությունները: Այդ նպատակով առաջին հերթին կարևոր է պատկերացում կազմել ուսուցիչների մեթոդական իրազեկության մակարդակի մասին, քանի որ առանց մասնագիտական բարձր որակների անհնար է ճշտիվ ընտրել համապատասխան դասագրքեր, տեքստեր և վարժություններ: Ասեմք, որ խորացված ուսուցում իրականացնող ուսուցիչների մեթոդական իրազեկության բացահայտման նպատակով մեր առաջարկած թեստի նկատմամբ անգլերենի ուսուցիչների կողմից ակնհայտ հետաքրքրություն ցուցաբերվեց:

*Անգլերենի խորացված ուսուցումը իրականացնող ուսուցիչների մեթոդական իրազեկության բացահայտման թեստ*

1. Ի՞նչ ամսագրեր եք կարդում:

ա) «Иностранные языки в школе», բ) «Педагогика», գ) «Forum»,  
դ) Չեր տարբերակը

2. Ի՞նչ օրաթերթեր եք կարդում:

ա) «Կրթություն, բ) «Հայաստանի Հանրապետություն», գ) Չեր տարբերակը

3. Ի՞նչ համացանցային կայքեր եք այցելում:

ա) mail.ru, բ) google.ru, գ) yahoo.com, դ) yandex.com, ե) Չեր տարբերակը

4. Ի՞նչ լեզվով եք նախընտրում դիտել անգլիախոս ֆիլմերը:

ա) հայերեն, բ) ռուսերեն, գ) անգլերեն, դ) Չեր տարբերակը

5. Օգտվո՞ւմ եք միջմայրցամաքային ալեհավաքից:

ա) այո, բ) ոչ,

6. Ուսուցման ո՞ր մեթոդն եք նախընտրում:

ա) ուղիղ, բ) քերականական-թարգմանական, գ) լատենտոդական,  
դ) հաղորդակցական, ե) Չեր տարբերակը

7. Ի՞նչ դասագրքերից եք օգտվում:

ա) միայն ռուսական, բ) ռուսական և հայկական, գ) ռուսական և անգլիական,  
դ) Չեր տարբերակը,

8. Ներկայացնո՞ւմ եք Հայաստանի երկրագիտությունը:

ա) ոչ, բ) այո, գ) Չեր տարբերակը

9. Համեմատո՞ւմ եք Հայաստանի և Անգլիայի երկրագիտական իրողություններն ու իրությունները:

ա) ոչ, բ) այո, գ) Չեր տարբերակը

10. Ընթերցո՞ւմ եք անգլերեն լեզվով ամսագրեր կամ օրաթերթեր:

ա) ոչ, բ) այո, գ) Չեր տարբերակը

Հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ հարցման ենթարկված տասնհինգ ուսուցիչներից միայն հինգն են կարդում «Иностранные языки в школе», միայն երկուսը՝ «Педагогика» ամսագրերը: Սակայն վեց ուսուցիչ պարբերաբար կարդում են «Forum»-ը, ինչը խորհրդային շրջանի հետ համեմատած՝ միանգամայն նոր երևույթ է: Ինչ վերաբերում է «Չեր տարբերակի» պատասխանին, ապա մի ուսուցիչը կարդում է Yes!, ևս մեկը՝ New mag. Yes! Ասվածից կարելի է եզրահանգել, որ վիճակը բարվոք չէ: Մի կողմից կարծես թե մոռացության է մատնվել հին ու բարի ավանդույթը, երբ բոլոր ուսուցիչները պարտադիր ձևով բաժանորդագրվում էին մանկավարժամեթոդական գրականություն, մյուս կողմից՝ նրանց մեծ մասը դեռևս չի սովորել ակտիվորեն օգտվել արտերկրի և ժամանակակից հայ մանկավարժական գրականությունից:

Նույնը վերաբերում է օրաթերթերի ընթերցմանը. «Ի՞նչ օրաթերթեր եք կարդում» հարցին 11 ուսուցիչ պատասխանել են՝ «Կրթություն», 4-ը՝ «Հայաստանի Հանրապետություն»: Հուսադրող է այն, որ ուսուցիչների շրջանում «Կրթություն» շաբաթաթերթի ընթերցողների թիվն ավելի մեծ է: Մակայն հաջորդ հարցի պատասխանները ցույց են տալիս, որ անգլերենի ուսուցիչներն այնքան էլ հետաքրքրված չեն մեթոդական բնույթի խնդիրներով, քանի որ հարցման ենթարկված ուսուցիչներից 10-ը օգտվում են mail.ru կայքից՝ ամենայն հավանականությամբ հետապնդելով մասնակ կամ ուղերձ գրել-ստանալու նպատակ: Երեք ուսուցիչ օգտվում են google.ru և երկուսը՝ yahoo.com կայքերից: Դա նշանակում է, որ ուսումնամեթոդական բնույթի կայքերը նրանց այնքան էլ չեն հետաքրքրում: Միայն մի ուսուցիչ է ներկայացրել «իր» տարբերակը: Դա ascp.am, britishcouncil.am, dogpile. Com, rambler.ru կայքն է: Կարելի է հետևություն անել, որ անգլերենի ուսուցիչները պարզապես չեն օգտվում ժամանակակից հեռահաղորդակցական միջոցներից:

«Ի՞նչ լեզվով եք նախընտրում դիտել անգլիախոս ֆիլմերը» հարցին ուշագրավ պատասխան է տրվել. համարյա բոլոր ուսուցիչները նշել են, որ նախընտրում են մեծանիջված ֆիլմերը դիտել անգլերենով, և նրանցից միայն մեկն է նախապատվությունը տվել ռուսերենին: Իսկ դա նշանակում է, որ նրանք այնքան էլ անկեղծ չեն այն առումով, որ այդպիսի ֆիլմերը անգլերեն դիտելու համար համապատասխան մեթոդական և լեզվական պատրաստվածություն է անհրաժեշտ:

«Օգտվո՞ւմ եք միջմայրցամաքային ալեհավաքից» հարցն անուղղակի ձևով նպաստում է պարզելու նախորդ հարցի պատասխանների ստույգությունն ու անկեղծությունը: Այն, որ միայն 4 ուսուցիչ են օգտվում վերոնշյալ ալեհավաքից, իսկ 11-ը պարզապես չունեն այն, անուղղակիորեն վկայում է նրանց՝ անգլերեն լեզվով ֆիլմեր դիտելու ցանկության և ոչ թե իրական հնարավորությունների մասին:

«Ո՞ր մեթոդն եք նախընտրում» հարցի պատասխանների վերլուծությունը նույնպես հաստատում է այն նախնական ենթադրությունը, որ անգլերենի ուսուցիչների մեթոդական պատրաստվածության մակարդակը իրականում բարձր չէ. ա) ուղիղ-2 ուսուցիչ, բ) քերականական-թարգմանական-4, գ) լսատեսողական-7 դ) հաղորդակցական-6 և ե) Չէր տարբերակը-0: Ակնհայտ է, որ ուսուցիչների մեծ մասը շփոթում է լսատեսողական մեթոդը լսատեսողական միջոցների հետ, և կարծում ենք՝ դա է իրական պատճառը, որ 7 ուսուցիչներ նշել են լսատեսողական մեթոդը: Ավելի անկեղծ են երևի այն ուսուցիչները (4), ովքեր կողմնորոշվել են հօգուտ քերականական-թարգմանական մեթոդի, և այս ամենն այն պարագայում, երբ ժամանակակից խորացված ուսուցման ուսումնամեթոդական լրակազմերը գրված են գերազանցապես հաղորդակցական մոտեցման սկզբունքներով:

Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա նախորդ և այս («Ի՞նչ դասագրքերից եք օգտվում») հարցի պատասխանների (ռուսական դասագրքերից՝ 1 ուսուցիչ, ռուսական և հայկական դասագրքերից՝ 1-ը, ռուսական և անգլիական դասագրքերից՝ 14-ը) համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչներն անգլերենի դասերին շատ քիչ են ուշադրություն դարձնում հայրենագիտական գիտելիքների զարգացմանը և փաստորեն թույլ պատկերացում ունեն, թե ինչ ասել է հայերեն-անգլերեն քերականական, բառային, հնչյունական և մշակութային տիպաբանություն, երբ անգլերեն լեզվանյութի ուսուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով հայերենի համապատասխան լեզվամշակութային իրողությունների և երևույթների առանձնահատկությունները:

«Ներկայացնո՞ւմ եք Հայաստանի երկրագիտությունը» հարցի պատասխանները (ոչ՝ 6 ուսուցիչ, այո՝ 10-ը) ուշադրության են արժանի նաև այն տեսանկյունից, որ նախորդ հարցին պատասխանելիս ընդամենը մեկ ուսուցիչ էր նշել, որ գործածում է հայկական դասագրքեր:

Հաջորդ հարցի պատասխանները վստահություն չեն ներշնչում այն առումով, որ հայկական դասագրքերից համարյա չօգտվող ուսուցիչները (ընդ որում, բոլոր 15-ը) միաձայն նշում են, որ դասապրոցեսի ընթացքում անպայմանորեն համեմատում են Հայաստանի և Անգլիայի երկրագիտական իրողությունները:

Համեմատաբար հավաստի են թվում «Ընթերցո՞ւմ եք անգլերեն լեզվով ամսագրեր կամ օրաթերթեր» հարցի պատասխանները (ոչ՝ 1 ուսուցիչ, այո՝ 14-ը), քանի որ

հարցի մեջ հատուկ ընդգծված չէ, թե ինչ հաճախականությամբ են ուսուցիչները կարողում անգլերեն օրաթերթերը:

Կատարված վերլուծության արդյունքներն ամփոփելով անհրաժեշտ է ևս մեկ անգամ նշել, որ անգլերենի ուսուցիչների մեթոդական իրազեկության բարձրացման համար տարվող աշխատանքը պահանջում է իրականացնել համալիր միջոցառումներ: ՀՀ-ի կրթական համակարգի համար նախատեսված ուսումնամեթոդական լրակազմերի բացակայության պայմաններում առաջնահերթորեն անհրաժեշտ է լուծում տալ ՀՀ հանրակրթական դպրոցների համար նախատեսված անգլերենի, ՌԴ կրթական համակարգի համար նախատեսված խորացված, պրոֆիլային և հանրակրթական, անգլերենը որպես երկրորդ և անգլերենը որպես առաջին լեզու ներկայացնող դասագրքերի համալիր ուսումնասիրության և նրանց համապատասխան բաժինների և ենթաբաժինների հարմարեցման հարցին:

Ավագ դպրոցին անցման շրջանում հատկապես կարևորվում է շրջանառվող արտասահմանյան և հայկական անգլերենի դասընթացների օպտիմալ օգտագործման և հարմարման հիմնախնդիրը: Դրա համար համապատասխան ուսումնական գործը կազմակերպողներից և ուսուցիչներից պահանջվում է լուրջ ուշադրություն դարձնել իրենց մեթոդական պատրաստվածության վրա:

Առաջարկվում է վերանայել շրջանառվող ուսումնական միջոցները, մասնավորապես լուրջ ուշադրություն դարձնել ոչ միայն անգլերենի երկրագիտական, այլև հայրենագիտական իրազեկության խթանման խնդրին: Դրա համար անհրաժեշտ է բոլոր դասարաններում ընտրել և ուսուցել այնպիսի անգլերեն տեքստեր, որոնք տեղեկատվություն են պարունակում ոչ միայն անգլիախոս երկրների պատմության, աշխարհագրության, տնտեսության, մշակույթի, սովորույթների, լեզվաբանության, հեքիաթների, ամենատարբեր իրադարձությունների մասին, այլև Հայաստանի սոցիալ-մշակութային, տնտեսական, հասարակական քաղաքական իրողությունների և իրությանների, նաև տարածաշրջանային (կոնկրետ՝ Շիրակի մարզի, Գյումրու) ավանդույթների, պատմության, մշակույթի ու բարքերի մասին:

Անգլերենի խորացված ուսուցման լեզվանյութի ընտրության մեր մոտեցումը, որ կոչել ենք հարմարման կադապար, կարող է կիրառվել տարբեր դասագրքերի, ուսումնամեթոդական լրակազմերի նախագծման և ստեղծման ժամանակ: Հարմարման հիմնական սկզբունքներ ենք դիտել՝

- հայերենի և անգլերենի քերականական և բառային տիպականացումը, որը կարող է իրականացվել համապատասխան գույադրական վերլուծության արդյունքում,
- հայերենի հայրենագիտական իրողությունների անգլերեն լեզվով հետևողական ուսուցումը,
- հայերենի և անգլերենի երկրագիտական իրողությունների համեմատական վերլուծությունը,
- բառային, քերականական, հնչյունային փոխներթափանցման և դրական փոխանցման առանձնահատկությունների հաշվառումը:

Տեքստերն ընտրվել են՝ իրենց կրթական, ուսուցողական, ճանաչողական և դաստիարակչական գործառնությունների խստիվ հաշվառմամբ: Լեզվանյութի ընտրությունը կատարվել է հաջորդականության, մատչելիության, գիտականության, գիտակցականության, կայունության դիդակտիկական սկզբունքների կիրառմամբ: Տեքստերի հետ տարվող աշխատանքն իրականացվում է համապատասխան վարժություններով: Տարբաբաժանվել են արտասահմանյան, հնչերանգի, բառապաշարի, քերականության, ունկնդրման, մեմախոսության, երկխոսության, ընթերցանության, գրավոր խոսքի հմտությունների զարգացման վարժություններ:

Հաշվի առնելով անգլերենի ուսուցման համապատասխան մակարդակը՝ սովորողների հնչարտաբերական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով լուրջ ուշադրություն ենք դարձնում լեզվակիրների անգլերեն խոսքի մշտական և հետևողական ունկնդրման վրա:

Արտասահմանյան հմտությունների զարգացման նպատակով կարելի է առաջարկել հետևյալ վարժությունները. ունկնդրե՛ք հնչյունաշարը և առանձնացրե՛ք նշված հնչյունը, ունկնդրե՛ք նախադասությունը և ասե՛ք, թե քանի անգամ է կրկնվում տվյալ

հնչյունը, ընդգծե՞ք շեշտվող վանկը ունկնդրվող նախադասության մեջ, կարդացե՞ք տեքստը՝ վերարտադրելով հաղորդավարի ձայնի հնչերանգները և դադարները, սովորե՞ք տրված բանաստեղծությունը (շուտասելուկը, հանգախաղը)<sup>1</sup> ուշադրություն դարձնելով հնչյունների արտասանության և հնչերանգի վրա, բարձրաձայն կարդացե՞ք տեքստի հատվածը, մասնակցե՞ք առաջարկվող հնչյունական խաղին և այլն:

Նոր բառապաշարի ներմուծման, ամրապնդման և զարգացման նպատակով վարժություններն ընտրելիս հաշվի ենք առել բառերի իմաստավորման առանձնահատկությունները: Առաջարկել ենք բառերի իմաստավորման հետևյալ տեսակները.

- Բառերի և բառակապակցությունների իմաստավորումը ենթատեքստում, եթե այն հուշում է տվյալ բառի նշանակությունը:
- Լեզվաերկրագիտական բառային միավորների իմաստավորում, իրույթների և լակունանների մեկնաբանում, զննական պարագաների կիրառում:
- Տարբեր իրադրությունների և պատկերների միջոցով դարձվածաբանական միավորների, ասույթների, ասացվածքների ներմուծում:
- Հայ-ռուսերեն, ռուս-հայերեն բառարանների բառային հոդվածների համեմատությամբ բառերի իմաստավորում, իմաստների բացահայտում:
- Լեզվական կռահման կիրառմամբ (միջազգային բառեր, բառակազմական տարբեր, հնչյունանմանակում, ենթատեքստ) բառերի իմաստավորում:
- Բացառման հնարի կիրառմամբ բառերի իմաստավորում, երբ նոր բառի հետ տրվում են մի քանի արդեն յուրացված բառեր:<sup>1</sup>

Բառապաշարի ուսուցման ավելի բարձր մակարդակ է ենթադրում *տարբերակող վարժությունների* կիրառումը: Դրանք կարող են առաջադրել հետևյալ պահանջները. 1. Գտե՞ք տեքստում տվյալ թեմային վերաբերող բառեր: 2. Խմբավորե՞ք բառերն ըստ նշված հատկանիշի: 3. Դ՞ուրս գրեք տեքստից ընդհանուր արմատներ ունեցող բառերը: 4. Գտե՞ք տեքստում ընդգծված բառերի հատկանիշները: 5. Գտե՞ք ունկնդրման ընթացքում լսած բառը տեքստում 6. Դ՞ուրս գրեք տեքստից ընդհանուր հատկանիշներով բառերը (նախածանցներ, վերջածանցներ, ընդհանուր արմատ): 7. Փոխարինե՞ք նախադասության անդամներից մեկը ուրիշ բառով:

Անգլերենի խորացված ուսուցման դասընթացում մեծ դեր կարող են խաղալ *կրկնության վարժությունները*: Սրանք հիմնականում ունեն վարժանքի դեր և աշակերտներին նախապատրաստում են խոսքային ուղղվածության ավելի արդյունավետ վարժությունների կատարման: Կարելի է առանձնացնել կրկնության վարժությունների հետևյալ տեսակները. ա) Կարդացե՞ք բառը բառացուցակում: բ) Կարդալով հայերեն բառը՝ թարգմանե՞ք և արտասանե՞ք դրա անգլերեն համարժեքը: գ) Կրկնե՞ք նույն թեմային կամ իմաստին վերաբերող բառերը: դ) Կարդացե՞ք նախադասությունը և այն կրկնե՞ք ընդհանուր, հատուկ, այլընտրանքային հարցերի ձևով: ե) Կարդացե՞ք նախադասությունը՝ լրացնելով բաց թողած բառերը: զ) Կրկնե՞ք նախադասությունը՝ ձևափոխելով ընդգծված բառերը: է) Կարդացե՞ք տեքստի մեջ միայն այն նախադասությունները, որոնք պարունակում են նոր բառեր:

*Փոխարինման և կառուցման վարժություններն* իրենց բովանդակությամբ ավելի արդյունավետ են, քանի որ աշակերտները փոխարինում են տրված բառը, բառակապակցությունը, կազմում են տրված բառերով նախադասություններ, պատասխանում են հարցերի, ուղղում են սխալները և վրիպումները նշված բառերում, ավարտում են երկխոսությունը, որտեղ խոսակիցներից մեկի արտահայտությունները տրված են ամբողջությամբ, իսկ մյուսում՝ տրված են միայն խառը բառեր: Աշակերտները լրացնում են երկխոսության մեջ բաց թողնված բառերը, որոնք տրված են համապատասխան բառացանկով: Այստեղ կարևոր է այն, որ սովորողները կազմում են երկխոսություններ առաջարկվող արտահայտություններով, ընտրում են նրանց սահմանումները, վերլուծում երկխոսությունները, ուղղում են բառակազմական առկա սխալները և այլն:

Առանձնակի նշանակություն ունեն *փոխակերպական վարժությունները*.

<sup>1</sup> *Стѣ Настольная книга преподавателя иностранного языка. Справочное пособие. 6-е издание, Минск, 2000, стр. 15-16.*

ա) ընդլայնել տրված նախադասություններն ըստ օրինակի՝ օգտագործելով նոր բառեր, բ) կրճատել նախադասություններն ըստ օրինակի, գ) բառափոխել, շրջասել ունկնդրած նախադասությունը՝ կիրառելով նոր բառեր, դ) նշված բառերով կամ բառակապակցություններով լրացնել տեքստում բաց թողած տեղերը, բարդ ստորադասական նախադասությունը փոխարինել երկու պարզ նախադասություններով, ե) ուղիղ խոսքը դարձնել անուղղակի՝ փոխելով ժամանակ ցույց տվող բառաձևերը, զ) փոխարինել տեքստում ընդգծած դարձվածքային միավորները, տրված նախադասություններում հավելել դարձվածքներ, ասույթներ և ասացվածքներ, է) փոխարինել նախադասության մեջ տրված դարձվածքային միավորներն այլ դարձվածքներով, ը) շրջասել կամ փոխակերպել արտահայտությունները՝ վերածելով երկխոսության, թ) առանցքային բառերով կազմել տեքստը և պատմել այն, ժ) փոխակերպել տեքստը՝ ներկա ժամանակաձևով կիրառված բայերը գործածելով անցյալով կամ հակառակը, ժա) ներգործական կառուցվածքի դերբայական դարձվածները դարձնել կրավորական, ժբ) մենախոսությունը վերածել երկխոսության, ժգ) տեքստը ներկայացնել երկխոսության ձևով:

Նշված բառային վարժությունները բավարար հիմք կարող են հանդիսանալ խոսքի մեջ բառապաշարի ակտիվացման համար: Խոսքի մեջ *բառապաշարն ակտիվացնող վարժությունները* կարող են ունենալ և՛ նախատեքստային, և՛ տեքստային, և՛ հետտեքստային բնույթ:

1. Ունկնդրե՞ք երկխոսությունը և կազմե՞ք համանման երկխոսություն նույն թեմայով:
2. Ունկնդրե՞ք երկխոսության սկիզբը և զարգացրե՞ք խոսակցի վերջին արտահայտությունը:
3. Մենախոսության հիման վրա կազմե՞ք երկխոսություն՝ օգտագործելով խոսքային շարքումներ:
4. Կազմե՞ք ունկնդրվող պատմվածքի պլանը:
5. Մտածե՞ք պատմվածքի վերջի մասին՝ կիրառելով նոր բառեր:

ա) Կազմե՞ք երկխոսություն առանցքային բառերով:

բ) Ձուգորդե՞ք յուրաքանչյուր բառ տարբեր իրադրությունների և համատեքստերի հետ՝ տվյալ բառերով և բառակապակցություններով օրինակներ բերելով:

գ) Պատասխանե՞ք ունկնդրելով տեքստին վերաբերող հարցերին:

դ) Ունկնդրելով որոշե՞ք, թե ինչքանով է համապատասխանում տվյալ տեքստի բովանդակությունը լսաերիզի կամ տեսաերիզի, տեսաֆիլմին վերաբերող նախատեքստային հարցերին:

ե) Ընտրե՞ք այն առանցքային բառերը, որոնք կիրառելու եք տեքստը վերարտադրելու կամ պատմելու համար:

Իններորդ դասարանում կարելի է առաջարկել տեքստեր՝ ունկնդրելու համար:

Գրանք կարող են լինել.<sup>2</sup>

ա) Իրադրային, թեմատիկ տեքստեր՝ մենախոսություններ, երկխոսություններ բազմախոսություն (polylogue), հարցազրույցներ:

բ) Տեղեկատվական և գովազդային տեքստեր՝ ձայնագրված ուղեցույցներ/հրահանգներ (օրինակ՝ էլեկտրոնային հանրագիտարանների, բառարանների համար), ձայնագրած հեքիաթներ, պատմություններ, ձայնագրած տեղեկատվություն (օրինակ՝ ազարակներում, կացարանում, ինքնաթիռում և այլն), առևտրային գովազդ, կրթական ծառայությունների գովազդ, հանրահայտ հաղորդաշարերի գովազդներ:

գ) Գեղարվեստական տեքստեր՝ հատվածներ գրական երկերից (պատմվածք, պատմություն), երգեր, բանաստեղծություններ, հեքիաթներ, պատմություններ, հատվածներ հայտնի գեղարվեստական և մուլտիպլիկացիոն կինոնկարներից, գեղարվեստական ստեղծագործություններից երկխոսական հատվածներ:

դ) Հեռուստատեսային և ռադիոհաղորդումների տեքստեր կամ դրանց տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռուստատեսային և ռադիոայինների ձայնագրություններ, նորություններ, լուրեր, զվարճալի, ժամանցային ծրագրեր, հաղորդա-

<sup>2</sup> Տե՛ս Անգլերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Եր., 2007, էջ 248-251:

գրություն /ռեպորտաժ/, ասենք, դեպքի վայրից, հարցազրույցներ, երիտասարդական հաղորդումներ, եղանակի տեսություն, մշակութային, երկրագիտական հաղորդումներ:

ե) Լրագրային /էլեկտրոնային/ տեքստեր՝ նամակներ, գովազդ, հայտարարություն, տեղեկատվություն, հարցազրույց, նորություններ, լուրեր:

- Տեքստերն ընտրել ենք ոչ միայն դասագրքերից,<sup>3</sup> այլև Համացանցից (This Amazing World, This Tough World of Sports, This Unpredictable World of Science and Technology, This World of Visual History, Reality and Imagination և այլն), տարբեր երկրագիտական, հայրենագիտական տեղեկագրերից, ուղեցույցներից (Շիրակի մարզ), ՉԼՄ-ներից (հիմնականում “The Armenian Reporter” շաբաթաթերթից): Ընդ որում, հաշվի է առնված նյութի թարմությունը, այժմեականությունը և այն, որ սրված տեքստերը հետաքրքրություն են ներկայացնում հայախոս աշակերտներին:

Առաջարկվող տեքստերը վերաբերում են Հայաստանին, նրա աշխարհագրությանը, պատմությանը, մշակույթին, նրա հանրահայտ մարդկանց, Շիրակի մարզին ընդհանրապես և մասնավորաբար Գյումրի քաղաքին:

Armenia

The History of Armenia

Arts and Literature

Genocide Museum Litigation Continues to Move Forward

Armenia Celebrates its Bronze Heroes

Visit Shirak

Ashotsk Region

Have You Been to Gyumri Lately

A Word About Gyumri Market և այլն

Ի վերջո կարևոր ենք համարում նաև նշել, որ վերոհիշյալ դասագրքից վերցրած՝ տեքստերին առնչվող վարժությունները նույնպես մեր կողմից ենթարկված են փոփոխությունների: Հիմնական փոփոխությունը վերաբերում է նախևառաջ Can you Describe Russia and Russian Culture?, որը կրկնվում է բոլոր բաժիններում: Մենք առաջարկում ենք Can you Describe Armenia and Armenian Culture? խորագրով տեքստերն համապատասխան վարժություններով: Որոշակի դժվարություն է հարուցում այն, որ մենք փորձել ենք ոչ թե թարգմանական տեքստեր առաջարկել հայ արվեստի, գրականության, պատմության, նրանց հայտնի գործիչների մասին, այլ բնագրային տեքստեր, ընդ որում՝ զրված արտասահմանցի հեղինակների կողմից:

## ВЫБОР ТЕКСТОВ И УПРАЖНЕНИЙ ПРИ УГЛУБЛЕННОМ ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Н. Айрапетян \_\_\_

В углубленном обучении английскому языку выбор языкового материала-довольно серьезная и продолжительная работа. В ней немаловажную роль играет степень методического осведомления учителей, преподающих английский язык, для прояснения которого автором статьи составлен тест, проведен опрос среди учителей и анализируются результаты.

Используя новейшие методические ссылки, Интернет, англоязычные СМИ, автором предлагаются страноведческие и отечествоведческие тексты в оригинале, выбираются такие типы упражнений (произносительные, интонационные, лексические, грамматические, аудио-упражнения, монологические, диалогические, упражнения для развития устных и письменных навыков), которые способствуют эффективности в работе над текстами в углубленном обучении английскому языку.

<sup>3</sup> Տե՛ս Տաֆոնովա Վ., Կերտախանյան Ի., Սոլովևա Ե., Անգլիական լեզու-9-րդ դասարանի համար (Ս. Բարդախյան, Ս. Գյուրջյան, Ս. Արարատյան), Եր., 2004 և այլն:

*Mariam HARUTYUNYAN*

## *LEARNING FROM MEMORIES*

This paper developed from an initially brief but subsequently ongoing project involving collaborative work between two academics from the School of Health and Social Welfare at the Open University, England and the leader of a group of social work teachers and students in the city of Gyumri. The focus for the collaboration was the investigation of the possibility of developing appropriate reminiscence-based activity. The project had two main aims:

- the practical demonstration of a helpful and creative approach to working with older people.
- the identification of issues in developing skills in one- to- one and group work with older people and other service users.

While the project aims were necessarily practical they were also rooted in an extensive literature, drawing on research attesting to the contribution which a biographical approach can make to the care and support of older people, particularly those living in institutional care. There is now widespread support for the view that biographical and reminiscence-based interventions have positive outcomes, not only for older people but also for the people who work with them. Practitioners in the United Kingdom have developed a range of ways to facilitate people in talking about the past and are increasingly aware of the need to provide appropriate support to people who are troubled by their memories. Those interventions include group sessions with prompts such as objects and images, one-to-one talk, drama, exhibitions, writing and life story books.

The work in Gyumri suggested the possibility of developing work along these lines in an environment with quite specific challenges. It also brought an opportunity to review some of the assumptions attached to the literatures of both reminiscence and trauma. Given the situation which many older people in Gyumri, and possibly in Armenia generally face, the question arose to what extent it would be possible to encourage reminiscence in a context where the well-known narratives of collective community and national trauma might deny legitimacy to the telling of individual and personal stories. Further, to what extent would the status attached to old age in Gyumri enhance or hinder the aims of the project? Before we go on to outline the project and discuss its outcomes it might be helpful to provide some background to the work. As it is now well-known, Armenians have experienced successive catastrophic events, both natural and human in origin, and have a long history of disruption, dispersal, loss and destruction. People in Gyumri have perhaps experienced the most unhappy combinations of all these events. Gyumri is the original Armenian name of what had until the end of the Soviet Union been Leninakan and before that Alexandrapol. The erstwhile cultural centre and second city of Armenia, it experienced major destruction at the time of the 1988 earthquake. Fifty percent of the city was destroyed and ninety percent substantially damaged. A conservative estimate of the number of deaths gives a figure of 15000 people of the 25000 who died in the whole of Armenia. Since the earthquake, the sudden decline of the Armenian economy following the break up of the Soviet Union and a three year blockade of the country during the war with Azerbaijan compounded an already extreme situation for the people of Gyumri. These events of the late twentieth century followed the trauma of the massacres in 1915, and an earlier earthquake in 1926. Indeed one group of researchers has suggested that:

... the earthquake in Armenia has resulted in a multigenerational psychiatric calamity for the survivors. The repercussions of this event, superimposed on the psychic scars left by the 1914-15 genocide and intensified the ongoing political and economic turmoil in Armenia, may very well alter the individual and social character of the people of the region.

The Elderly House, a residential home for a mixed group of older people, disabled people and homeless people where it was planned we should work, in population and appearance, provides in miniature an immediate sense of the enormity of these difficulties. Altogether there are just under 100 men and women residents. These include disabled people who have lived in institutions since childhood, elderly refugees from Azerbaijan and western Armenia. ex-prisoners, people dispossessed by the earthquake and people whose families are unable to accommodate or care for them since the earthquake destroyed so many homes.

Though attitudes towards older people in Armenia emphasize shame and dishonor if children abandon their parents, we were told that the economic situation had led to a steady and continuing demand for places at the Elderly House. From what we had been told in advance and learned from the visit, anyone who is a resident at the Elderly House is there because of some traumatizing experience, either as an abandoned, disabled child, a displaced refugee, or an elderly survivor of the 1988 earthquake. Under such conditions it might be thought that reminiscence work could be inappropriate or unwelcome.

However,

In Armenia, old people used to be surrounded with their sons, grandchildren, relatives. At the earthquake thousands of people were killed and the number of older people increased. They live with their memory they used to have important roles in their families and nobody wants to take their opinions into account and the way of supporting people in talking about the past would be very useful to them. Added to the experience of the earthquake is the issue of political generation. Older people, we were told by some of the younger people taking part in the project, tend to want to hang on to times which are now politically discredited. If they talk about the past it is only to regret the present. In this situation what might be regarded as a normal intergenerational distancing has been exacerbated by the effects of political change and the identification of older people with a political regime which has left a mixed legacy. The stories and accounts which have been generated through these rather different approaches tend to share certain characteristics, and in this way are similar in terms of topic and time focus to those older people in societies where life has been more stable. Significant figures are parents, brothers and sisters and there are accounts of seasonal customs, courting and marriage. However there the similarity ends. For several of these childhood accounts are also punctuated with stories of bread shortages, political oppression, war and the two earthquakes of 1926 and 1988. Many of those who lived in the elderly house described institutional childhoods, problems with education and the refugee experience. The accounts are interesting and instructive on a number of grounds and perhaps point to a more optimistic and inclusive role for older people's remembering than was anticipated by some of the younger project participants. In summary we make the following observations:

- many of these older people had experienced of successive traumas in their lives yet appeared to welcome an opportunity to give an account of themselves in ways which were inclusive of both positive and negative events;
- it may be that many years after the earthquake they now feel able to shift the focus of their remembering away from collective and public memorializing in favor of more personal memories which highlight changing family and social relationships;
- by participating in reminiscence activities the younger people reported a change in their own attitudes and understanding of the older people in their midst as well as those living in the Elderly House.

Besides we would suggest that the workshops were effectively intergenerational activity which enabled those concerned to draw on a variety of resources (biographical, professional, interpersonal performance) and to share them. At the outset we had been nervous about the dangers that the workshops posed in terms of the vulnerability of the older people and re-exposure of the recent trauma that all participants had shared. But

the group seemed able to manage the resources both individually and collectively to produce an event which was positively received by everyone.

### ՍՈՎՈՐԵԼ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Մ. Հարությունյան \_\_\_

Այժմ լայն տարածում ունի այն կարծիքը, որ մարդու կենսագրության ու հիշողությունների վրա հիմնված միջամտություններն ունեն դրական արդյունք և՛ ծեր մարդկանց, և՛ նրանց հետ աշխատողների համար: Մեծ Բրիտանիայում մշակել են մի շարք միջոցներ, որոնք ծեր մարդկանց կմղեն խոսելու իրենց անցյալի մասին՝ քաջ գիտակցելով համապատասխան աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունն այն մարդկանց, ում հանգիստ չեն տալիս իրենց հիշողությունները:

Ծրագիրը Գյումրիում առաջարկեց իրականացնել մարդկանց հիշողությունների վրա հիմնված աշխատանք՝ նպատակ ունենալով հանդես բերել ծեր մարդկանց հետ աշխատելու օգտակար և ստեղծագործական մոտեցում:

**ՄԵՐ ՀԱՍՄԻԿԸ**

Չափազանց ծանր ու դժվար է լավ ընկերոջ, փայլուն մասնագետի և ակտիվ կյանքով ու կենսախնդրությամբ ճառագող մարդու մասին անցյալ ժամանակով խոսելը: Մեր Հասմիկն այդպիսին էր: Միշտ պատրաստակամ էր, անընդհատ շարժման մեջ էր նրա ստեղծագործ միտքը: Իր ուսերին առած ծանր հոգսը կարող էր մոռանալ և հասնել



ընկերներին ու ծանոթներին: Լուսավոր և առինքնող կերպար էր, այրվեց կերոնի պես, լույս տվեց շրջապատին՝ անկատար թողնելով բազում ծրագրեր ու երազանքներ:

Կյանքից շատ անժամանակ հեռացավ երաժշտագետ-ֆոլկլորագետ, ՀՀ ԳԱԱ Օիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դոցենտ Հասմիկ Պարույրի Ափինյանը:

Հ.Ափինյանը կենտրոնի հիմնադիր գիտնականներից մեկն էր, որն իր հոգևոր և մասնագիտական բոլոր կարողությունները նվիրաբերեց հայ ազգային երաժշտության և, մասնավորաբար, Օիրակի ժողովրդական և ժողովրդապարֆեսիոնալ երաժշտական

նմուշների գրառման, համակարգման և ուսումնասիրման գործին:

Ծնվել էր 1957թ., Լենինականում՝ ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո փայլուն ուսումնառություն էր ստացել Լենինականի Զ.Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնում, որտեղ նրա մասնագիտական հեռանկարի ուղղորդման գործում նշանակալի դեր է կատարել վաստակաշատ երաժիշտ-մանկավարժ, կոմպոզիտոր Ազատ Շիշյանը:

1978-1983թթ. նա ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական ֆակուլտետը՝ ուսանելով երաժշտագետ-ֆոլկլորագետ, պրոֆեսոր Մարգարիտ Բրուտյանի մասնագիտական դասարանում: Ահա այս տարիներին էր, որ Հ.Ափինյանը որպես մասնագիտական ասպարեզ ընտրեց երաժշտական ֆոլկլորագիտությունը և բուհական ավարտաճառը նվիրեց հայկական ժողովրդական ստեղծագործության բարդ երգատեսակներից մեկին՝ գրեթե չուսումնասիրված օրորոցային երգի ժանրային տիպաբանական հետազոտությանը: Ուսումնառության ավարտից հետո էլ Հ.Ափինյանը մնաց իր ուսուցչատեղի նվիրյալ սանը, և անցած ճանապարհին նրա բոլոր հաջողությունները մշտապես մնացին Մ.Բրուտյանի տեսադաշտում, արժանացան նրա դրվատանքին և ուշադրությանը:

Չնայած մայրաքաղաքում կրթությունը շարունակելու և աշխատելու լավագույն հնարավորությանը՝ Հ.Ափինյանը վերադարձավ ծննդավայր և միացավ երիտասարդ այն գիտնականներին, որոնց համախմբել էր Լենինականի «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանը մի պայծառ գաղափարի շուրջ. վերականգնել և պահպանել պատմական Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագիծն ու զերծ պահել այն ոչնչացումից ու աղավաղումներից: Ահա այս ժամանակ էր, որ Հ.Ափինյանը նվիրվեց հարազատ քաղաքի մշակութային համալիրում երաժշտաբանահյուսական և աշուղական արվեստի նմուշների գրառման և համակարգման աշխատանքներին՝ ձեռնամուխ լինելով հայ երաժշտագիտության մեջ սակավ ուսումնասիրված մի ոլորտի՝ քաղաքային ժողովրդական երաժշտության ուսումնասիրության, նրա հիմնախնդիրների արծարծման և զարգացման արդի միտումների հետազոտությանը:

Շուտով երևան եկան նրա հետևողական աշխատանքի առաջին արդյունքները. 1989թ. Լենինգրադում հրատարակվեց «Հայ երաժշտության դիսկոգրաֆիան 1916-1989թթ.» ժողովածուն, որի համահեղինակներից մեկը Հ.Ափինյանն էր:

1997թ., զինված մոտ 15 տարվա գիտական աշխատանքի հմտություններով, նա վստահորեն մուտք գործեց նորարաց ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ուր իր գործընկերների հետ նվիրվեց երաժշտաբանահյուսական գիտական ծրագրերի, Շիրակի երաժշտական արվեստի ուսումնասիրության մեթոդաբանության մշակման, տեղեկատվական արժեքավոր բազայի ստեղծման գործին:

Հ.Ափինյանի հեղինակած շուրջ երկու տասնյակ հոդվածներն ու հրապարակումները արժարժում են Շիրակի ծիսական երգերի, մարզի առանձին գյուղերի երաժշտաբանահյուսական նկարագրի, ժողովրդական կատարողական արվեստի ու նվագարանաշինության առանձնահատկությունների, օրորոցային երգերի որոշ հորինվածքային-տաղաչափական խնդիրների, Շիրակի արդի երաժշտական բանահյուսության գիտամեթոդական ուսումնասիրության կարևոր հարցեր:

Տևական աշխատանքի շնորհիվ նրան հաջողվեց ի մի բերել Շիրակում ներկայումս ստեղծագործող աշուղների ստեղծագործական կյանքի կարևոր փուլերը: Մի առանձին ոգևորությամբ ձեռնամուխ եղավ աշուղ Իգիթի ստեղծագործության՝ իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրությանը: Աշուղի կյանքին ու գործին էին նվիրված նրա մի շարք հաղորդումները միջազգային ու հանրապետական գիտական նստաշրջաններում ու պարբերականներում:

Մակայն նրա «կյանքի գործը» «Հայ օրորոցային երգը» թեմայով ատենախոսությունն էր, որին ձեռնամուխ էր եղել մեծ նվիրումով և իրականացման հաստատակամությամբ: Ցավոք հանկարծահաս մահն այն անավարտ թողեց, ինչպես անկատար մնացին նրա բազում մտահղացումներն ու երազանքները:

Հասմիկ Ափինյան մարդու և գիտնականի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա իր գործընկերների սրտում: Նա կա, ապրում է մեր կողքին, մեր հոգիներում՝ լույսի պես մաքուր ու պայծառ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի ...»

Ս. Հայրապետյան

Հ. Հարությունյան

*K.Sahakyan, R.Hovhannisyan.* THE CROSS BEHIND, THE SEVEN WOUNDS IN THE HEART. The article sums up the ethnographic picture of the city of Gyumri. The oral literary heritage is presented as a unique testimony of the worldview and people's life experience. All the ethnographic material considered seems to restore the unique environment of urban culture, the dominant part of which were the samples from epic ceremonies, traditions, customs, different legends and ethnological strata, as well as singing folklore.

*A.Mirzoyan,* ALEXANDROPOL- LENINAKAN: TOWN CONSTRUCTING VIEW. The article is about urban and architectural development the city of Gyumri during two significant historic periods – Alexandrapole and Leninakan. The influence of European/Russian values on the development of Alexandrapol urban environment and the specifics of Leninakan as an industrial city grown during the Soviet period are discussed.

*A.Hayrapetyan.* ETHNODEMOGRAFIC PICTURE OF GYUMRI – ALEXANDRAPOL IN THE 19<sup>TH</sup> CENTURY AND THE FIRST QUARTER OF THE 20<sup>TH</sup> CENTURY. By the 19<sup>th</sup> century Gyumri was a small village, with 50 households. Only in 1828-1829 increased when about 1250 the family of Western Armenians settled here becoming the core of the town of Alexandrapol. The fact that Alexandropol became a county (province) center in 1840 played a significant role in the subsequent growth of the population of the city of Gyumri-Alexandropol. As a result, by the half of the thirties of the 19<sup>th</sup> century the town became a real Armenian center of Transcaucasia, and by the end of the century – it became one of the most densely populated settlement in Yerevan province (county).

The situation changed only in the first quarter of the 20<sup>th</sup> century. Western Armenian relocation, two Turkish invasions, the Armenian-Georgian war, famine and epidemic diseases left their tragic traces on the demography of the city: the state of the population changed, the city lost a potential new force, the emigration and urbanization (resettlement of rural population in the city), won high speed. And despite the fact that Alexandropol no longer was the most densely populated settlements in the region of Eastern Armenia, it retained its deep Armenian quality.

*K.Bazeyan.* ALEXANDRAPOL TRADITIONAL FOOD AND MEAL. In the article traditional catering in Alexandropol is considered. The food, as well as the whole catering system, is among the time-honoured cultural and community traditions. In sets of the foodstuff, ways of their processing, types of dishes, traditions of food preference, organization and ritual meals the peculiarities of Alexandropol town life is reflected. Proceeding from this the article represents basic meals of the urban population, some ways of preparation, periodicity of food intake. The daily, celebratory and ritual food, and also preferred cooling and alcoholic drinks are thus allocated. Special attention is paid not only to what people eat, but also what utensils and dishes and in what way were used.

*H.Harutyunyan.* THE MUSICAL LIFE OF ALEXANDRAPOL. In the context of a dynamic urban culture of Alexandropol, music played a special, vital role. In the life of the citizens thoroughly engaged not only the unique manifestations of folklore music, but also the variety of genres of oral art tradition i.e. works by sazandar ashughs /bard/. This favorable environment threw a ground for the flourishing of a creative composer. In an urban environment cross-cultural communication developed rapidly, which helped to create mutual wealth and, what is more important, it helped to flourish concert life of the city.

Due to the traditional nature, many manifestations of Alexandropol musical life still keep their vital functions in the cultural life of modern town of Gyumri.

*L.Atanesyan.* FROM THE HISTORY OF FINE ARTS OF ALEXANDRAPOL – GYUMRI. History of Alexandropol – Gyumri fine arts in the second half of the 19th century is briefly but yet fully described in the article. The author of the article displays life and work not only of the artists living in Gyumri (G.Brutyanyan, Yu.Verzhbitskaya, E.Nazaryan, E.Sargsyan, S.Stepanyan), but also life of the ones, born in Gyumri, but living and exhibiting in other cities of the Republic (R.Atoyan, A.Melkonyan, E. and M.Aslamazyan, S.Yesayan). This article contains the pre-earthquake period.

*K.Alexanyan, M.Ghalajyan.* THE ELECTIONS OF LOCAL GOVERNMENT BODIES IN ALEXANDRAPOL ON MAY 4, 1919. At the end of 1918, after the retreat of the Turks, the authorities of Armenia initiated the formation of the bodies of local government. As a result of the

elections held on May 1919, the local government bodies of Alexandrapol were reconstructed. Three main political parties participated in the elections: the Social-Democrats, the Dashnaks and the Nationalists. The Socialist parties were represented in the general list. Nevertheless, Dashnakhututyn got the prevailing majority in the elections.

Being the first elections in the history of the Republic of Armenia, they were not perfect, and the numerous complaints prove the fact. But they were at the same time an important step to the political growth of our nation.

*G.Ayvazyan.* ALEXANDRAPOL IN THE STATE (during 1860-1870years). During the period discussed part for the town was marked with successful development which gave a chance to its inhabitants to live an active social life.

The centres of social life in Alexandrapol were schools where during this period well-known teachers gathered together displaying their best abilities. Social economic development had little effect on the lives of the inhabitants of the town but it inevitably drove them to clear understanding that Armenia's independence was now a necessity.

The church had its influence on these the government policy. The article states that the tsar government tried to hinder the spread of Armenian national liberation movement.

*H.Khachatryan.* GYUMRI: ARCHEOLOGICAL HERITAGE. Gyumri has a rich archeological heritage. The first settlements located in the south eastern (Msikombinat) and central (territory of the Botanical Gardens and the stadium as well as Cherkez (Kumayri) river gorge appeared in Early Bronze Age (36-25 c. BC)

The excavations of the settlements and the necropolises provided rich material for studying the development process of social and economical relationships, trade relations, the cult and religion, etc. In the settlements of Msikombinat and Kumayri the life continued till the antique period (6-5 c.c. BC). Despite the rich archeological material there are no finds related to Urartu culture but the only one which is a fragment of a bronze belt with a griffin image on it.

Settlements dating back to the antique period have been located in the North Western part of the town, particularly in Vardbagh and at the foot of the hill known as the Black Fortress. The excavations of nearly 100 burials of 2-5 c.c. of Vardbagh gave rich material among which are roman silver coins, variety of tools, ceramics, decoration, things made of glass, etc. The finds state of a developed rank of social and trade relations and culture.

In the middle ages life continued only in Kumayri settlement. During the excavations there have been discovered two churches one of which dates back to the 5<sup>th</sup> c. and the other to the 7<sup>th</sup> c. In the 10<sup>th</sup> c. the latter got strengthened by fortress walls. Being located in the central part of the settlement the fortress is surrounded by civil constructions and workshops. Both the written sources and the archeological data of that period state that Kumayri used to be a large settlement characterized as a town.

Variety of arms (a steel shield, a military helmet, a pole-axe, etc) as well as clay tobacco pipes of 15-17 c.c. prove the existence of life during the late middle age period.

The rich archeological heritage of Gyumri proves that life here originated approximately 5000 years ago and goes now up to our days without any interruptions.

*S.Petrosyan.* THE REFLECTION OF CORN CULTIVATION IN THE DEITY OF BARSHAM. The I-E pre-form \*bh<sub>2</sub>s- "corn", found in Nairi placename "Abarsiumi" <\*a-bars-iuni (1112BC), can also be seen in the deity name of Barsham. Arm. Բարշամ <\* Բարշ-ամ, the second component of which is a noun-forming suffix: cf. Arm. Արամ, Արգամ, Գեղամ, Պասքամ, etc. Thus, we can conclude that the deity-name of Barsham is of Indo-European-Armenian origin. According to ancient Armenian epic tales Barsham, a farmer and the God of Thunder, was the adversary of Vahagn, a shepherd and the God of the Sun.

*L.Petrosyan.* THE POLITICAL ISOLATION AND DEATH OF YERVAND THE LAST. During the reign of Yervand the Last (222-201 B.C.) the raids of the Iberians and their North Caucasian allies to the northern territories of Armenia, as well as the raids carried out by the Atropatenians and their Caspian vassal-allies to the eastern regions of the country were very often. According to Movses Khorenatsi, the last Yervandid King Yervand the last took part in a battle near Yervandavan in Shirak in 201 B.C. Here the army of King Yervand was defeated by the army of Artashes. King Yervand fled away, but he was killed in the capital Yervandashat.

*L.Eganyan.* HORSESHOE CLAY OBJECTS DISCOVERED IN ANI SUBURB. During the excavations of the cave settlement of Ani suburb near the village of Haikadzor in the tonir\* there have

been found three clay objects of arch shape looking like movable fireplaces dating back to 13th -14th c.c. The objects are of arch shape but of different execution. The two of the objects have solar round shapes painted on. One can see traces of burn on all the three objects. The archeological material, written evidences and ethnographical material bring to light the role of the objects: oven supports which come from Early Bronze Age movable ovens, were used for fire worship and home hearth up to 14th c. Starting from the 14th c. the ritual of hearth and family moved to tonir.

\*tonir - place where people bake lavash

\*lavash - national bread

**A.Gasparyan.** THE TREATMENT OF THE MAIN QUESTIONS OF THE POLITICAL, SOCIAL AND ECONOMIC SITUATION IN OTTAMAN EMPIRE BY EREMIJA KJOMURCHYAN ( the 17<sup>th</sup> century). Eremia Kjomurchian is one of the outstanding figures in Armenian historiography in the 17<sup>th</sup> the century. His work contains authentic and reliable source about social economic and political situation in Ottoman Empire in the 17<sup>th</sup> century.

The historiographer presented in a particular way, the national and religious problems and tried to elucidate after-effects taken place in lives of the conquered peoples and particularly in the economic and public life of Armenians.

The work, full of facts and Important events, hasn't lost its contemporarity and is in the focus of attention in Armenian historiography.

**V.Ghambaryan.** RELICS AS BEST SAMPLES OF ARMENIAN SILVERWARE. In the 5<sup>th</sup> millennium B.C. people in the territory of the Armenian Uplands were engaged in processing of metals. Art processing of metals (including gold and silver) in Armenia reached serious heights during ancient times. But special attention should be paid to the art of processing gold and silver in a particular way in the Middle Ages. Medieval skilful Armenian masters made church utensils, gold and silver crosses, helmets, altars, salaries, different relics.

The relics, existing in the Armenian jewelry art, despite their distinctions, can be divided in two types:

a) rectangular (or in the form of a cross)

b) right hand relics (in the form of a hand brush, etc.)

The best and ancient samples of the Armenian silver business having a Christian orientation, that reached us, are reliquaries. The oldest among them are four, which date back to the 10<sup>th</sup>-14<sup>th</sup> centuries the best known among which is reliquary "Khotakerats surb nshan".

Relics in the form of right hand are original customs of the Armenian reality. Naturally, the best known among them is right hand of St. Grigor the Illuminator.

The relics are original unique samples of the Armenian silverware which, besides, that represent a great art value and are perfect examples of Armenian Christian culture.

**S.Melkonyan.** THE WORK OF VAHAN TETYAN ON THE I VOLUME OF "POEMS". In this article the work of Vahan Teryan on the I volume of "Poems" has become the object of research. The article throws light to such important problems as that of the creative laboratory of the author, changes in the mood and spiritual world of the lyrical hero, problems of bringing artistic speech of perfection and specifying existing opinions concerning some of his poems.

**G.Mnatsakanyan.** WORDS FORMING OF PHILOSOPHICAL TERMS OF GRABAR. The study of terminological form and the devison of word forming is one of the important questions of terminology.

The analysis of word-forming of philosophical terms gives an opportunity to define their structural features, frequency of the word-forming ways in this sphere.

**H.Zakyan.** DOUBIE VOICE IN THE SYSTEM OF VERB CATEGORY IN MODERN ARMENIAN. A group of verbs, existing in Modern Armenian has preserved double voice of Old Armenian (Grabar) and this group is represented in this article. These verbs are used either infeatures of Active Voice or Neuter Voice, without changing their forms. Some of them have preserved the Old Armenian meaning, others have gained new meanings but have preserved their grammatical features.

Double voice is a phenomenon taking place in different periods of language development and is manifested in Modern Armenian too. We also touch upon those verbs which are single in Grabar but due to the new meanings can be used in the second grammatical voice too.

**A.Melkonyan.** CONTRASTIVE-COMPARATIVE ANALYSIS OF DECLENSION SYSTEMS IN ARMENIAN AND TURKISH. There hasn't been done any typological-

contrastive analysis of grammatical structures of Armenian and Turkish languages up to now. The article studies the comparative research of the declension system of the mentioned languages from the viewpoint of agglutination, which is peculiar to both of them. Though the studying languages belong to different language families (the former is an Indo-European language, the latter is Ural-Altaic), they have many declension peculiarities, as well as some essential distinctions. There are two ways of formation of declension in Armenian. The first is the method of affixation; the second is the way of vowel gradation (internal flexion). As the Turkish is exclusively agglutinative language, only affixation is specific to its structure. A necessary attention has been paid to the comparisons of declensional endings in mentioned languages. At the same time there can be observed some uniformity of case endings in Turkish as compared with Armenian.

*S.Vardanyan.* ON THE PROBLEM OF LEXICAL TRANSFORMATIONS IN THE TRANSLATIONS OF SHORT STORIES BY W. SAROYAN. The article deals with translations of short stories by W. Saroyan.

It is widely known that phonetic, grammatical and semantic structures of different languages differ greatly. These divergences come into picture in the process of translation. Sometimes it appears difficult to translate even widely used common words without thorough analyses of the macro context. Very often it becomes necessary to use lexical transformations in translation in order to decode the contextual meaning of a definite word in the source language and encode it by the target language means. The examples of lexical transformation considered in the article confirm the above mentioned assertions.

*A.Avanesov.* REMARKS "POSTFOLKLORE" OF A CENTURY ABOUT MUSICAL ART OF ARMENIA. We suggest the word "postfolklore" to be used as a term characterizing the state of folklore art and connecting with it professional oeuvre. When the natural development of folklore culture is ceased, the folklore itself is exposed to deep and detailed study. Now folklore has become a kind of "etant donne" not evaluating but included in the wide range of references of post modern period.

*S.Hayrapetyan.* ON THE PROBLEM OF TEACHING GRABAR AT UNIVERSITIES. Teaching Grabar syntax philological faculties of Universities is comparatively a young branch of teaching, alongside with traditional methods of describing and teaching phonemic pronunciation peculiarities and morphological realities of this language. One of the most important problems of teaching Grabar is that of teaching the grammatical subject. The problems of construction, kinds, expression and stylistic colouring of the grammatical subject in Grabar is considered in the article, which are to be included in the process of teaching. All this must be practically interpreted and drilled with the help of thoroughly chosen exercises and corresponding texts for reading.

*K.Sahakyan,* SOME PROBLEMS OF THE OF DIAGNOSTIC METHODOLOGY OF MULTIPERSONAL RELATIONS IN THE POST-EARTHQUAKE PERIOD.. During the period after the earthquake of 1988 new types of families and functional shifts of interfamily relations were formed. Our task was to single out the type of reformed family as a type of reformed relationships with steady and changeable sides.

We offer of a diagnostic methodology of interpersonal relations which will give a chance to fully imagine types and psychological characteristics of a newly formed families.

*A.Akopov.* NEW DOCUMENTS ABOUT ALEXANDRAPOLE PROVINCE. Published documents are of great interest for both specialist historians and wide range of readers. In spite of missings and mistakes, these documents show us rich information about demographic situation of Alexandrapole province (70<sup>s</sup> and 80<sup>s</sup> of the 19<sup>th</sup> century).

Introducing documents are chosen from central state historical archive of Georgia (415<sup>th</sup> fund "Caucasian statistic comitee") and concerned to etnodemographic situation of Alexandrapole province and the checking of Armenian villages in the 70<sup>s</sup> and 80<sup>s</sup> of the 19<sup>th</sup> century, relized by Caucasian statistic comitee.

*N.Hayrapetyan.* SELECTION OF LINGUISTIC MATERIAL DURING THE ADVANCED ENGLISH LANGUAGE TRAINING. The choice the in-depth learning of English language material is a rather serious and prolonged work, where the degree of the teacher's methodological awareness plays a crucial role. To clarify this issue, the author has made a test to properly identify the teachers' awareness. Issuing from the test a survey has been conducted which was followed by the deep analysis of the results.

Using the latest teaching, the Internet, English-speaking media, the author suggests to work on the texts of Area Study, Homeland study, the author also suggests to choose such types of exercises as intonation, vocabulary, grammar, audio exercises, monologue, dialogic, exercises that develop oral and written skills. The choice of such exercises contributes to the effectiveness of the work on texts in the in-depth study of English language.

*H. Khachatryan.* THE EXCAVATIONS OF CAVE SUBURB OF ANI IN 2008. In 2008 the excavations of the cave settlement of Haikadzor were carried out in two regions:

1. First region included the excavations of the slope of the canyon of Akhuryan river between the first and the second artificial terraces
2. There was carried out a sondage of the north-eastern parts of the plato.

On the slope of the canyon at the level of the first terrace there was discovered another natural cave complex. The entrance and the upper arch of the central cave of the complex were ruined and the complex stayed immured since 12-13 c.c. in fact. Further excavations of the caves would give a possibility to discover the functions of the complex. During the excavations rich archeological material was discovered including an Ani coin of local coining. At the plato there were discovered fortress wall ruins as well as settlement tracks. The sondage carried out in the territory of the fortress brought to light a 2 meter cultural layer. According to the finds the fortress dates back to late Urartian period which was also used during highly developed Middle Ages.

*M. Harutyunyan.* LEARNING FROM MEMORIES. There is now a widespread view that biographical and reminiscence-based interventions have positive outcomes both for older people and for the people working with them.

Practitioners in the UK have developed a range of ways to encourage people to talk about the past and are increasingly aware of the need to provide appropriate support to people who are troubled by their memories.

The project in Gyumri suggested the possibility of developing appropriate reminiscence-based work with the aim of showing helpful and creative approach to working with older people.

# Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

## Հ ն դ վ ա ծ ն ե ռ

### **Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Խաչը՝ թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս.....7

### **Աշոտ ՄԻՐՉՈՅԱՆ**

Ալեքսանդրապոլ –Լենինական. քաղաքաշինական դիմագիծ.....17

### **Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը  
XIX դարում և XX դարի առաջին քառորդին .....27

### **Կարինե ԲԱԶԵՅԱՆ**

Ալեքսանդրապոլի ավանդական ուտեստն ու հացկերույթը .....34

### **Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Երաժշտական կյանքն Ալեքսանդրապոլում .....40

### **Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ**

Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIXդ. (համքարական ծիսակարգ) .....49

### **Լատրա ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Ալեքսանդրապոլ-Լենինականի կերպարվեստի պատմությունից (1850-1988թթ.) .....55

### **Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Մեսրոպ ՂԱԼԱՉՅԱՆ**

Տեղական իշխանության մարմինների ընտրություններն  
Ալեքսանդրապոլի գավառում (1919թ. մայիսի 4) .....62

### **Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ**

Ալեքսանդրապոլը պետություն - եկեղեցի հարաբերությունների  
ուրրտում 1860-1870-ական թթ. ....66

### **Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Գյումրի. հնագիտական ժառանգություն .....74

### **Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հացագոգիների մշակության արտացոլումը Բարշամի պաշտամունքում .....81

### **Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Երվանդ Վերջինի քաղաքական մեկուսացումը և վախճանը .....90

### **Լարիսա ԵԳԱՆՅԱՆ**

Կավից պայտածն իրեր Անիի արվարձանից .....96

### **Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը  
ըստ Երեմիա Չելեբի Բյումուրճյանի (XVII դար) .....105

### **Վարդուհի ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Մասանց պահարանները որպես հայկական արձաթագործության  
լավագույն նմուշներ ..... 111

### **Մենեքերիմ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

Վ. Տերյանի աշխատանքը «Բանաստեղծությունների»  
առաջին հատորի ձեռագրի վրա .....115

### **Գրետա ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ**

Փիլիսոփայական տերմինների բառակազմական կաղապարները գրաբարում .....125

**Հրանուշ ՁԱԲՅԱՆ**  
 Կրկնաստեղծությունն արդի հայերենի բայական համակարգում .....129

**Արմեն ՄԵԼՔՈՆՅԱՆ**  
 Հայերենի և թուրքերենի հոլովական համակարգերի  
 զուգադրական քննություն .....135

**Միրանուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ**  
 Բառային փոխաձևման (տրանսֆորմացիայի) որոշ հարցեր  
 Վ. Սարոյանի պատմվածքների թարգմանություններում.....144

**Արթուր ԱՎԱՆԵՍՏՈՎ**  
 Դիտողություններ «հետֆոլկլորային» դարաշրջանի հայ  
 երաժշտական արվեստի մասին .....147

**Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
 Գրաբարի բուհական ուսուցման հարցեր .....153

**Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ**  
 Հետադետյան ընտանիքների միջանձնային հարաբերությունների  
 ախտորոշման մեթոդիկայի հարցեր.....158

**Հ ր ա պ ա ր ա կ ո մ մ ե ր և հ ա դ ո ր դ ո մ մ ե ր**

**Արկադի ԱԿՈՊՈՎ**  
 Նորահայտ փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գավառի մասին  
 (նյութեր Վրաստանի պատմության պետական կենտրոնական արխիվից) .....163

**Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
 Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2008թ. պեղումները .....167

**Նաիրա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
 Տեքստերի և վարժությունների ընտրությունը  
 անգլերենի խորացված ուսուցման դասընթացում .....175

**Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
 Սովորել հիշողություններով.....181

Լրատու.....184

Ամփոփում (անգլերեն).....186

## С о д е р ж а н и е

---

### С т а т ь и

<i>Карине СААКЯН, Роза ОГАНИСЯН</i> Крест за спиной, семь ран в сердце.....	7
<i>Ашот МИРЗОЯН</i> Александрополь-Ленинакан: градостроительный облик.....	17
<i>Армен АЙРАПЕТЯН</i> Этнографическая картина Гюмри-Александрополя XIX века и первой четверти XX века.....	27
<i>Карине БАЗЕЯН</i> Традиционная пища и трапеза Александрополя.....	34
<i>Асмик АРУТЮНЯН</i> Музыкальная жизнь Александрополя .....	40
<i>Григор АГАНЯН</i> Городские цеха Александрополя в XIX в.: (амкарский ритуал) .....	49
<i>Лаура АТАНЕСЯН</i> Из истории изобразительного искусства Александрополя-Ленинакана (1850-1988гг.).....	55
<i>Карине АЛЕКСАНИЯН, Месроп КАЛАЧЯН</i> Выборы органов самоуправления в Александрополе 4 мая 1919г. ....	62
<i>Геворг АЙВАЗЯН</i> Александрополь в сфере отношений государство-церковь в 1860-1870-их годах.....	66
<i>Амазасп ХАЧАТРЯН</i> Гюмри: археологическое наследие .....	74
<i>Саргис ПЕТРОСЯН</i> Отражение культивирования зерновых в культе Баршама.....	81
<i>Лусине ПЕТРОСЯН</i> Политическая изоляция и кончина Ерванда Последнего .....	90
<i>Лариса ЕГАНЯН</i> Подковообразные глиняные предметы из пригорода Ани .....	96
<i>Аршавир ГАСПАРЯН</i> Социально-экономическая и политическая ситуация Османской империи в XVII веке по Еремии Кеомурчяну.....	105
<i>Вардуи ГАМБАРЯН</i> Реликварии как лучшие образцы армянского серебряного дела .....	111
<i>Сенекерим МЕЛКОНЯН</i> Работа Вагана Терьяна над рукописью I тома "Стихотворений" .....	115
<i>Грета МНАЦАКАНЯН</i> Словообразовательные формы философских терминов в грабаре.....	125

<i>Грануш ЗАКЯН</i> Двухзалоговость в глагольной системе современного армянского языка.....	129
<i>Армен МЕЛКОНЯН</i> Сопоставительный анализ систем склонений существительных в армянском и турецком языках.....	135
<i>Сирануш ВАРДАНЯН</i> К вопросу о лексической трансформации в переводах рассказов В. Сарояна.....	144
<i>Артур АВАНЕСОВ</i> Заметки об армянском музыкальном искусстве постфольклорной эпохи.....	147
<i>Серго АЙРАПЕТЯН</i> Вопросы вузовского обучения габара .....	153
<i>Карине СААКЯН</i> Вопросы методики диагностики межличностных отношений в семьях в период после землетрясения .....	158

**П у б л и к а ц и и и с о о б щ е н и я**

<i>Аркадий АКОПОВ</i> Новые документы об Александропольском уезде (материалы из Центрального государственного исторического архива Грузии) .....	163
<i>Амазасп ХАЧАТРЯН</i> Раскопки пещерного пригорода Ани 2008г.....	167
<i>Наира АЙРАПЕТЯН</i> Выбор языкового материала при углубленном обучении английского языка.....	175
<i>Мариам АРУТЮНЯН</i> Учиться на основе воспоминаний.....	181
Информация.....	184
Резюме (на английском).....	186

## Contents

---

### Articles

<i>Karine SAHAKYAN, Roza HOVHANNISYAN</i> The cross behind, the seven wounds in the heart.....	7
<i>Ashot MIRZOYAN</i> Alexandrapol-Leninakan: town-constructing view.....	17
<i>Armen HAYRAPETYAN</i> Etnodemographic picture of Gyumri – Alexandrapol the 19 <sup>th</sup> century and the first quarter of the 20 <sup>th</sup> century .....	27
<i>Karine BAZEYAN</i> Alexandrapol traditional food and meal.....	34
<i>Hasmik HARUTYUNYAN</i> Musical life of Alexandrapole .....	40
<i>Grigor AGANYAN</i> Alexandrapole town-manufacturers of the 19 <sup>th</sup> century..... (Amkarian ceremony)	49
<i>Laura ATANESYAN</i> From the history of fine arts in Alexandrapol – Gyumri .....	55
<i>Karine ALEXSANYAN, Mesrop GHALACHYAN</i> The Elections of the local government bodies in Alexandrapol on May 4, 1919 .....	62
<i>Gevorg AYVAZYAN</i> Alexandrapol in the state relationship (during 1860-1870).....	66
<i>Hamazasp KHACHATRYAN</i> Gyumri: Archeological heritage .....	74
<i>Sargis PETROSYAN</i> The reflection of corn cultivation in the Deity of Barsham.....	81
<i>Lusine PETROSYAN</i> The political isolation and death of Yervand the Last .....	90
<i>Larisa YEGANYAN</i> Horseshoe clay objects Discovered in Ani .....	96
<i>Arshavir GASPARYAN</i> The socio-economic and political state of the Osman Empery according to Yeremia Cheleb Kyomurchyan /17 <sup>th</sup> century/ .....	105
<i>Varduhi GHAMBARYAN</i> Relics as best samples of the Armenian silverware .....	111
<i>Senekerim MELKONYAN</i> The work by Vahan Teryan on the 1 volume of the manuscript “Poems” .....	115
<i>Greta MNATSAKANYAN</i> Word- forming structures of philosophic terms in grabar .....	125
<i>Hranoush ZAKYAN</i> Double Voice in the system of verb category in Modern Armenian .....	129

<i>Armen MELKONYAN</i> Comparative analysis of declension systems in Armenian and Turkish .....	135
<i>Siranuysh VARDANYAN</i> On the problem of lexical transformations in the translations of the short stories by W. Saroyan.....	144
<i>Artur AVANESOV</i> Remarks on Armenian Musical art of the postfolk period .....	147
<i>Sergo HAYRAPETYAN</i> Problems of Grabar Teaching in Higher Education.....	153
<i>Karine SAHAKYAN</i> Some problems on the diagnostic methodology of mutual-personal relations in the post-earthquake families.....	158

*Publications and Reports*

<i>Arkadi AKOPOV</i> New documents about Alexandrapole province.....	163
<i>Hamazasp KHACATRYAN</i> The digs of the cave in the on the outskirts of Ani in 2008.....	167
<i>Naira HAYRAPETYAN</i> Selection of the linguistic material during the advanced English language training.....	175
<i>Mariam HARUTYUNYAN</i> Learning on the basis of memories .....	181
Scientific information.....	184
Summary (in English).....	186

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. XI. 2008

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. ВЫПУСК. XI. 2008

Shirak Centre of Armenian Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia

RESEARCH PAPERS. EDITION. XI. 2008

Շապիկի առաջին էջին՝ Ֆրագմենտ 1988-ի Աղետի գոհերին նվիրված «Հույս»  
հուշարձանից՝ տեղադրված Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի  
եկեղեցու հարևանությամբ (քանդակագործ՝ Զ. Կոչտոյան)

Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի  
Մրբագրիչներ՝ Ռ. Հովհաննիսյան, Հ. Հարությունյան

---

Պատվեր՝ N , տպաքանակ՝ 250,  
Հանձնված է շարվածքի 20. 03. 2009, ստորագրված է տպագրության 10. 04. 2009  
Շարվածքը՝ համակարգչային, 12.5 հրատ. մամուլ:  
Տպագրությունը՝ Ա/Չ Ռուբեն Ավետիսյան  
Հասցեն՝ ՀՀ, 3110, ք. Գյումրի, Գորկու 67/62